ՁԵՐ ԱՐՁԱԳԱՆՔՆ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻՆ՝
ՈՐՈՇՈՒՄ Է ՁԵՐ ԱՊԱԳԱՆ

ՎԵՐԱՆԱՅՎԱԾ ԵՎ ԹԱՐՄԱՑՎԱԾ

ԾԱԾԿՈՑԻ ՏԱԿ

ՋՈՆ ԲԻՎԵՐ

«Կործանել կրիպտոնաքարը» գրքի հանրաճանաչ հեղինակ

ԾԱԾԿՈՑԻ ՏԱԿ

ՁԵՐ ԱՐՁԱԳԱՆՔՆ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻՆ՝
ՈՐՈՇՈՒՄ Է ՁԵՐ ԱՊԱԳԱՆ

ՋՈՆ ԲԻՎԵՐ

Under Cover, Armenian, by John P. Bevere
© 2022 Messenger International
MessengerInternational.org
Originally published in English as Under Cover

Additional resources in Armenian by John and Lisa Bevere are available for free download and video streaming at **MessengerX.com** and on the **MessengerX** App

To contact the Author: JohnBevere@ymail.com

This book is a gift from Messenger International and is NOT FOR SALE

«Ծածկոցի տակ», հայերենով, Ջոն Պ. Բիվեր
© 2022թ Messenger International
MessengerInternational.org
Սկզբնապես հրատարակվել է անգլերենով, «Under Cover» վերնագրով

Հավելյալ նյութեր հայերենով հասանելի են անվճար ներբեռնման և հոսքային հեռարձակման համար **MessengerX.com** կայքում և **MessengerX** հավելվածում:

Հեղինակի հետ կապ հաստատելու համար. JohnBevere@ymail.com

Այս գիրքը նվեր է «Messenger International» ծառայության կողմից և ՎԱՃԱՌՔԻ ԵՆԹԱԿԱ ՉԷ

Տպագրված է Հայաստանում

App Store-ը Apple Inc.-ի ապրանքանիշն է, որը գրանցված է ԱՄՆ-ում և այլ երկրներում:
Google Play-ը և Google Play-ի պատկերանիշը Google LLC- ի ապրանքանիշերն են:

Գիրքն ընծայում եմ իմ առաջնեկին՝
Էդիսոն Դեյվիդ Բիվերին

«Իմաստուն որդին կուրախացնի իր հորը»:

– ԱՌԱԿԱՑ 10.1

Քո անունը նշանակում է «Սիրելի անձնավորություն,
որն արժանի է վստահության»:

Անկասկած, դու համապատասխանում ես քո անվանը
և վարվում ես համաձայն այս գրքի ցուցումների:

Թող որ դու ժառանգես Աստծո առատ օրհնություններ-
ը և խոստումները, և թող որ Նրա երեսը շարունակ
փայլի քեզ վրա:

Թող որ դու երկարատև և բարգավաճ կյանք ունենաս:

Քո մայրը և ես սիրում ենք քեզ և օրհնված ենք,

որ դու մեր որդին ես:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲԱԺԻՆ 1. ԾԱԾԿՈՑԻ ՏԱԿ. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Աստծո պաշտպանությունը 1
2. Դժվար է խթանի դեմ քացի տալ 9

ԲԱԺԻՆ 2. ԱՍՏԾՈ ԱՆՄԻՋԱԿԱՆ ԾԱԾԿՈՑԸ

3. Մեղքի սահմանումը 27
4. Անօրինության գաղտնի ուժը. 41
5. Անհնազանդության հետևանքները I 59
6. Անհնազանդության հետևանքները II. 71
7. Կախարդված 89

ԲԱԺԻՆ 3. ԱՍՏԾՈՒՑ ԿԱՐԳՎԱԾ ԾԱԾԿՈՑԸ

8. Աստված գիտի՞, թե ով է առաջնորդը 107
9. Պատվեք թագավորին 125
10. Կրկնակի պատիվ 143
11. Հնազանդություն և հպատակություն 167
12. Իսկ եթե առաջնորդը պատվիրի ինձ... 183
13. Անարդար վերաբերմունք 205
14. Ինքնահարույց դատաստան 229

15. Մեկ 251
16. Իշխանության մյուս ոլորտները 269
17. Մեծ հավատք 291
18. Ամփոփում 309

Հարցեր քննարկման համար 313

ԲԱԺԻՆ 1

ԾԱԾԿՈՑԻ ՏԱԿ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ 1

ԱՍՏԾՈ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հաճախ ոչ թե քաղցր, այլ ցավոտ խոսքերն են տալիս մեծագույն ազատությունը և պաշտպանությունը:

Ծածկոցի տակ. այս արտահայտությունը կարող է վերաբերել անթիվ իրավիճակների: Իր անմիջական իմաստով այն կարող է պատկերել փոքրիկ մանկան, որը հարմարավետ տեղավորվել է ծածկոցի ջերմության և պաշտպանության ներքո, կամ ծնողի գրկում է վտանգի ժամանակ: Քաղաքացիական իմաստով, այն կարող է պատկերել ոստիկանության կամ զինվորականների պաշտպանության ներքո գտնվող մի քաղաք: Այն կարող է պատկերել կենդանու՝ թաքնված մացառների մեջ, որջում կամ ստորգետնյա ապաստանում: Կամ՝ այն կարող է պատկերել ընտանիքի, որն ապահով պատսպարված է տանը, մինչ դրսում փոթորիկ է մոլեգնում:

Հիշում եմ, որ մանկությանս տարիներին մենք մի վայրում էինք ապրում, որտեղ հաճախակի փոթորիկներ էին լինում: Մենք նայում էինք մեր պատուհաններից կուտակվող սև ամպերին՝ հեռվից լսվող ամպրոպի ձայների ներքո: Մի քանի րոպեում փոթորիկն արդեն մեր գլխավերևում էր՝ ամբողջ սաստկությամբ: Փայլող

կայծակներին անմիջապես հաջորդում էին ճայթող ամպրոպները: Անձրևի ձայնն այնպիսին էր, ասես հազարավոր մուրճիկներ էին հարվածում մեր տանիքին: Փոթորկի պատճառով մեր տունը շատ ավելի անվտանգ և ապահով էր թվում: Այն, ինչ երևում էր պատուհաններից, թաց էր, սառն էր և ենթակա էր կայծակի մահացու հարվածի վտանգին: Իսկ ներսում մենք ապահով էինք, և մեր տանիքը վահանի պես պաշտպանում էր մեզ փոթորկի ամենաթողությունից. մենք ծածկոցի տակ էինք:

Մեկ քայլ առաջ գնանք: Մենք կարող ենք հասկանալ «ծածկոցի տակ» արտահայտությունը նաև *քողարկված* կամ *ծպտված* լինելու իմաստով: Ծպտված լինելը նշանակում է ապահով լինել՝ սեփական ինքնությունը թաքցնելու միջոցով: Ծպտված գործակալը կարող է ազատորեն տեղաշարժվել՝ առանց թշնամու կողմից բռնվելու: Նրա կառավարությունը ծածկանուն է տվել նրան, որի միջոցով նա կարող է ազատորեն գործունեություն ծավալել թշնամու տարածքում: Կարճ ասած, ինչպես էլ օգտագործենք այս արտահայտությունը՝ իր բազմաբնույթ իմաստներով, թվում է՝ դրա բոլոր իմաստները *պաշտպանություն* և *ազատություն* են ենթադրում:

Այնուամենայնիվ, ինչպե՞ս է *«ծածկոցի տակ»* հասկացությունը վերաբերում քրիստոնյաներին: Դավիթը գրում է. «Բարձրյալի ծածկոցի տակ բնակվողը Ամենակարողի շուքի տակ է հանգստանում: Ես կասեմ Տիրոջը. «Իմ ապավեն և իմ ամրոց, իմ Աստված, Որին ես հուսացած եմ»» (Սաղմ. 91.1,2): Կրկին, մենք տեսնում ենք պաշտպանություն՝ Նրա ծածկոցի տակ գտնվողների համար: Սակայն, կարդալով այս հատվածի առաջին բառերը՝ «Բարձրյալի ծածկոցի տակ բնակվողը», բացահայտում ենք ամենակարևոր հարցը. ո՞վ է գտնվում Նրա ծածկոցի տակ: Այն գիրքը, որը ձեր ձեռքում է, նվիրված է այս կարևորագույն հարցի պատասխանի որոնմանը: Կարճ պատասխանը հետևյալն է. ծածկոցի տակ է նա, ով Աստծո իշխանության ներքո է:

Ադամն ու Եվան ազատություն և պաշտպանություն էին վայելում Եդեմի պարտեզում՝ Աստծո ծածկոցի ներքո: Սակայն այն պահին, երբ նրանք անհնազանդ եղան, բացահայտեցին, թե որքան անհրաժեշտ էր իրենց այն, ինչը հոժարաբար սահեցրին իրենց մատների արանքով. նրանք «իրենց ծածկելու» կարիք

ունեին (Ծնն. 3.7, NKJV): Նրանց անհնազանդությունն Աստծո իշխանությանը՝ խլեց մարդկությունից այն բաղձալի ազատությունը և պաշտպանությունը, որը մի ժամանակ նրանց էր պատկանում:

Եկեք անկեղծ լինենք. *«իշխանություն»* բառը հաճելի չէ շատերին: Սակայն, մերժելով իշխանությունը կամ վախենալով դրանից, մենք զրկում ենք մեզ իշխանության կողմից տրվող մեծ պաշտպանությունից և առավելություններից: Մենք սարսռում ենք այդ բառից, քանի որ չենք տեսնում իշխանությունը Աստծո տեսանկյունից: Չափազանց հաճախ մեր վերաբերմունքն իշխանության հանդեպ հիշեցնում է ինձ մի պատմություն, որը տեղի ունեցավ իմ երրորդ որդու հետ:

Երբ Ալեքն առաջին դասարանում էր, նրա ուսուցչուհու վերաբերմունքը բացասական ազդեցություն թողեց նրա վրա: Այդ կինը մշտապես բարկացած էր ամբողջ դասարանի վրա. նա մռայլ էր, անվերահսկելի էր և բազմիցս բղավում ու ճչում էր աշակերտների վրա: Չափազանց հաճախ նրա պոռթկումներն ուղղված էին լինում Ալեքին, քանի որ նա ստեղծարար և աշխույժ երեխա էր, ավելի շուտ շփվող, քան լռակյաց: Նրա համար դպրոցը հրաշալի հասարակական միջավայր էր: Ինքնին հասկանալի է, որ նրա մոտեցումը դպրոցին չէր համապատասխանում այդ ուսուցչուհու անհատականությանը և անհամբեր բնավորությանը:

Շատ անգամներ կինս և ես այդ ուսուցչուհու սենյակում էինք դասերից հետո՝ խորհրդատվության համար: Մենք աշխատում էինք այդ ուսուցչուհու հետ և խրախուսում էինք Ալեքին ենթարկվել նրա կանոններին ու համագործակցել, սակայն ամբողջ այդ սթրեսային գործընթացը խանգարում էր նրան սիրել դպրոցական առարկաների համակարգված ուսուցումը:

Շուտով մենք նոր նահանգ տեղափոխվեցինք, և Ալեքը երկրորդ դասարան փոխադրվեց: Նրա նոր ուսուցչուհին լիովին տարբերվում էր նախորդից: Այդ կինը գրեթե չափից ավելի սիրալիր էր և զգայուն իր աշակերտների հանդեպ: Նա շատ հավանեց Ալեքին: Հաշվի առնելով Ալեքի բնավորությունը՝ նա, հավանաբար, սիրահարվեց այդ կնոջը, բայց չէր պատժվում գրեթե ոչնչի համար և համարյա թե չէր սովորում: Քանի որ Ալեքի ուսումն անտեսվում էր, մենք տեղափոխեցինք նրան մի հրաշալի մասնավոր

դպրոց, որտեղ շեշտադրվում էր դպրոցական առարկաների խորացված ուսուցումը:

Նա մոլորված և վիատված էր զգում իրեն այդտեղ: Նա այնպիսի երեխաների միջև էր, որոնք գերազանց սովորել էին առաջին երկու տարում: Ալեքի նոր ուսուցչուհին բարի և սիրալիր էր, բայց նաև՝ հաստատակամ: Շուտով պարզվեց, որ նա զիջում էր մյուս աշակերտներին իր առաջադիմությամբ: Կրկին, սկսվեցին հաճախակի, բայց այս անգամ արդյունավետ հանդիպումներ նրա ուսուցչուհու հետ: Լիզան և ես ավելի շատ ներգրավվեցինք նրա ուսման մեջ:

Ամբողջ ցերեկը դպրոցում լինելը և ամբողջ երեկո ծնողների վերահսկողությամբ դասեր պատրաստելը կարող է ճնշող լինել: Շատ անգամներ Ալեքը պարզապես փակվում էր: Արցունքները հոսում էին նրա աչքերից, քանի որ նրան թվում էր, թե խորտակվում էր այդ ամենի մեջ, այնինչ, իրականում, նա առաջադիմում էր:

Մի անգամ նա սաստիկ վիատվեց: Նրա եղբայրները դպրոցական երեկույթի էին գնում, որտեղ բոլորը անվաչմուշկներով սահելու էին, իսկ նա ստիպված էր տանը մնալ և կատարել անավարտ տնային աշխատանքները, որոնք թաքցրել էր իր սեղանի դարակում: Նա զրկվելու էր զվարճանքից, քանի որ նրա ուսուցչուհին ծանրաբեռնել էր նրան դասերով: Նա շարունակ լաց էր լինում: Եկել էր հոր և որդու հերթական զրույցի ժամանակը: Ես նոր էի սկսել խոսել, երբ հասկացա, թե որն էր խնդիրը: Նրան թվում էր, թե անելանելի դրության մեջ էր: Վհատությունից բխող արցունքները շարունակ հոսում էին, և նա պարզապես չէր լսում հայրիկի խոսքերը: Մի պահ երկուսս էլ լռեցինք, քանի որ այլևս ասելու ոչինչ չունեինք: Նա պարզապես գլուխը կախ լալիս էր:

Ես երբեք չեմ մոռանա այն, ինչ կատարվեց դրանից հետո: Նա ուղղեց մեջքը, ինչ-որ կերպով վերականգնեց ինքնատիրապետումը, սրբեց աչքերը և դեմքը, իսկ հետո նայեց ինձ իր խոշոր, դարչնագույն և նորովի վստահություն առած աչքերով: Ակնհայտ էր, որ նրա մտքում ինչ-որ գաղափար էր ծնվել, որը լուծելու էր իր խնդիրները և սրբելու էր իր արցունքները: Նա ուղղեց մեջքը, ծալեց ձեռքերը և լուրջ ձայնով ասաց.

- Հայրիկ, ուզում եմ մի բան ասել: Գիտեմ, որ իմ դասարանի

Ջեսիկան... նա չի հավատում բժիշկներին:

Նա վարանեց, իսկ հետո ավելացրեց.

- Հայրի՛կ, իսկ ես չեմ հավատում ուսուցիչներին:

Ես հազիվ զսպեցի ժպիտս և ծիծաղս: Նրան հաջողվեց զարմացնել ինձ այդ խոսքերով: Նա շարունակեց.

- Եթե իմ դասարանի Ջեսիկան կարող է չհավատալ բժիշկներին, ես էլ չեմ հավատա ուսուցիչներին:

Ես այլևս չկարողացա զսպել ծիծաղս: Եթե նա վիատված ասեր այդ խոսքերը, դրանք այդքան ծիծաղելի չէին հնչի: Դատելով նրա ձայնի տոնից՝ նա իսկապես կարծում էր, թե պատմում էր ինձ նոր հայտնություն, որը լուծելու էր իր բոլոր խնդիրները: Նա նույնքան լուրջ էր, որքան դատարանում վկայություն տվող մարդը:

Իհարկե, ես օգտագործեցի այդ հնարավորությունը, որպեսզի բացատրեի նրան, թե ինչ կկատարվեր, եթե նա ուսուցիչներ չունենար: Ես պատմեցի նրան, թե ինչպիսին էր կյանքն Անգոլայում՝ Աֆրիկայում, որտեղ եղել էի նախորդ տարի, որպեսզի աշխատեի սովամահ եղող փոքրիկ երեխաների համար կառուցված սննդի կայաններում: Ես պատմեցի, որ այդ երեխաները գրեթե ամեն ինչ կտային, որպեսզի Ալեքսանդրի տեղում լինեին: Նրանք առանց մտածելու կօգտվեին ուսում ստանալու հնարավորությունից, քանի որ հասկանում էին, թե որքան կարևոր է, որ մեկ օր կարողանային հոգալ իրենց ընտանիքների մասին: Իմ տևական բացատրությունից հետո նա դժկամորեն հրաժարվեց իր նորագյուտ փիլիսոփայությունից և վերադարձավ խոհանոցի սեղանի մոտ՝ իր տնային աշխատանքի կույտը հաղթահարելու համար:

Հաջորդ մի քանի շաբաթվա ընթացքում ես շարունակ մտածում էի որդուս և իմ զրույցի մասին և ակամա զուգահեռներ էի անցկացնում, թե ինչպես են ոմանք դիտարկում իշխանությունը: Չափազանց հաճախ մարդիկ տհաճ փորձառություններ են ունենում իշխանության հետ: Ոմանց առաջնորդներն անտեղի խիստ են վարվում նրանց հետ. մյուսները, ինչպես Ալեքսանդրը, վիատության պատճառով սկսում են դիտարկել իշխանությունը որպես խոչընդոտ՝ կյանքը վայելելուն և այն ամենին, ինչ լավագույնն են համարում իրենց համար, այնինչ, իրականում, նրանք ողջամիտ առաջնորդներ ունեն: Սակայն այդ տհաճ փորձառութ-

յունների արդյունքում նրանցում աննկատ մի դիրքորոշում է ձևավորվում. *«Ես չեմ հավատում իշխանությանը»* կամ, խոսելով մեծահասակների լեզվով, *«Ես չեմ ենթարկվի իշխանությանը, եթե, նախ, համաձայն չլինեմ դրան»:*

Բայց ո՞րն է Աստծո դիրքորոշումն այս ամենի վերաբերյալ: Արդյո՞ք մենք պետք է ենթարկվենք առաջնորդներին, նույնիսկ եթե նրանք անազնիվ են: Իսկ ի՞նչ, եթե նրանք օրինազանց են: Կամ պատվիրում են մեզ կատարել այն, ինչը մենք սխալ ենք համարում: Իսկ եթե նրանք պատվիրում են մեզ մեղանչե՞լ: Որտե՞ղ է սահմանը: Բացի այդ, ինչո՞ւ մենք պետք է ենթարկվենք: Դրանում կա՞ն առավելություններ: Մի՞թե մենք չենք կարող միայն Աստծո Հոգով առաջնորդվել:

Աստծո Խոսքում կան հստակ պատասխաններ այս հարցերին: Ես հավատում եմ, որ սա ամենակարևոր գրքերից մեկն է, որ Տերը հանձնարարել է ինձ գրել, քանի որ այն բացահայտում է մարդկանց ներկա դժվարությունների մեծ մասի արմատական պատճառը: Ինչի՞ պատճառով Արուսյակն ընկավ: Ինչի՞ պատճառով Ադամն ընկավ: Ապստամբության: Ինչի՞ պատճառով են շատերը շեղվում Աստծո հետ ընթացքից: Ապստամբության: Իրապես սթափեցնող է այն փաստը, որ ապստամբությունը մեծ մասամբ ոչ թե բացահայտ է, այլ՝ աննկատ:

Այս գրքում ես պատմում եմ բազմաթիվ օրինակներ իմ անձնական ձախողումներից: Ես իշխանության ծարավ ունեցող առաջնորդ չեմ, որն ուզում է իրեն ենթարկել իր ոչխարներին, աշխատակազմին և ընտանիքին: Ես հրաշալի ծառայողական թիմ և ընտանիք ունեմ: Ես տեղական եկեղեցու հովիվ չեմ: Այնպես որ, ես գրում եմ՝ որպես մի անձնավորություն, ով գործել է շատ սխալներ կամ, ավելի ճիշտ, մեղքեր: Ես ծառայել եմ երկու միջազգային ծառայություններում 1980-ական թվականներին, և իմ սխալներին վերաբերող օրինակների մեծ մասն այդ ժամանակաշրջանից է: Ամենից սթափեցնողն այն է, որ յուրաքանչյուր դեպքում ես սրտանց հավատում էի, որ ճիշտ էի, այնինչ, իրականում, սխալ էի: Ես այնքա՞ն շնորհակալ եմ մեր Տիրոջը, որ Նրա Խոսքը բացահայտեց իմ շարժառիթները:

Ես սրտանց ցանկանում եմ, որ դուք սովորեք իմ դժվարություններից և խուսափեք նույն սխալներից: Աղոթում եմ, որ, կար-

դալով իմ անմիտ արարքների մասին, դուք խրատ և աստվածային իմաստություն ստանաք և հնձեք դրանց առավելությունները: Քանի որ այն ամենը, ինչ ես հետագայում սովորեցի իմ փորձառությունից, ինչպես նաև այն ճշմարտությունները, որոնք հայտնվեցին ինձ այդ ընթացքում, հրաշալի էին և մեծ օգուտ տվեցին ինձ: Շնորհիվ ապաշխարության, ես ապահովություն և մատակարարում ստացա:

Հավատում եմ, որ նույնը կարող է կատարվել ձեզ հետ: Կարդալով աստվածաշնչյան և իմ անձնական օրինակներն այս գրքում՝ ձեր սրտում նույնպես լույս կսփռվի: Որոշ փաստեր կարող են ամրապնդել այն, ինչ դուք արդեն գիտեք, իսկ մյուսներն ազատություն կտան ձեզ: Երկու դեպքում էլ ես աղոթում եմ, որ հեզությամբ ընդունեք Նրա Խոսքը, քանի որ հենց այդպիսի սրտով եմ ես ներկայացնում այն:

Բախվելով ճշմարտությանը՝ մեր արձագանքը կարող է երկու տեսակի լինել: Մենք կարող ենք բարկանալ և պաշտպանվել, ինչպես Ադամի որդի Կայենը, և թողնել այն հայտնությունը, որն անհրաժեշտ է մեզ (տե՛ս Ծնն. 4-րդ գլուխ): Կամ՝ մենք կարող ենք խոնարհվել և կոտրվել, ինչպես Դավիթը՝ Նաթանից հանդիմանվելու ժամանակ, և թույլ տալ, որ մեր ցավն ու ապաշխարությունը բարձրացնեն մեզ աստվածապաշտ բնավորության հաջորդ մակարդակին (տե՛ս Բ Թագ. 12-րդ գլուխ): Եկեք Դավթի սիրտն ունենանք այս հարցում և մերժենք հպարտությունը, որը ձգտում է հեռացնել մեզ Աստծո կողմից որոշված մատակարարումից և պաշտպանությունից:

Սկսելով այս ընթացքը՝ հիշեք, որ հաճախ ոչ թե քաղցր, այլ ցավոտ խոսքերն են տալիս մեծագույն ազատությունը և պաշտպանությունը: Երբ երեխա էի, իմ երկրորդ դասարանի պատվաստումը ստանալուց առաջ ընկերներիցս մեկը պատմեց, որ այն շատ ցավոտ է: Լսելով դա՝ ես վճռեցի ամեն գնով խուսափել սրսկումից: Ես պայքարեցի երկու բուժքույրերի դեմ, մինչև որ նրանք հանձնվեցին: Դրանից հետո ծնողներս բացատրեցին ինձ, թե ինչ կարող էր տեղի ունենալ, եթե ես չստանայի պատվաստում տուբերկուլյոզի դեմ: Ես տեսել էի, որ քույրս մահացել էր քաղցկեղից. այնպես որ, գիտեի, որ նրանք միայն ուզում էին պաշտպանել ինձ: Ես գիտեի, որ սրսկումը ցավոտ էր լինելու, բայց այն կա-

զատեր ինձ ավելի մեծ ցավից, որը կզգայի, եթե այդ զարհուրելի և, հավանաբար, մահացու հիվանդությամբ վարակվեի: Հենց որ հասկացա դա, ինքնակամ վերադարձա՝ այդ սրսկումն ընդունելու համար:

Հիշե՛ք այս օրինակը, երբ բախվեք անհարմարավետ կամ, նույնիսկ, ցավոտ ճշմարտությունների Աստծո Խոսքից, որոնց նպատակը ձեզ «պատվաստելն» է: Իմացե՛ք, որ ձեր Երկնային Հոր ճանապարհները կատարյալ են, և այն, ինչը երբեմն կործանարար կամ ցավոտ է թվում ներկայում, իրականում որոշված է Նրանից՝ ձեր պաշտպանության, օրհնության կամ այլ մարդու փրկության համար: Երբեք մի՛ մոռացեք, որ Նրա սերը մեր հանդեպ սուրբ, կատարյալ և հավերժական է:

Մինչև մեր ընթացքը սկսելը, եկեք աղոթենք.

«Երկնային Հա՛յր, իմ սրտում ես ձգտում եմ ճշմարտությանը ավելի, քան հարմարավետությանը և հաճույքներին: Ես Քո ձեռքերի մեջ եմ հանձնում իմ սիրտը և անձը՝ իմանալով, որ Քո ճանապարհները կատարյալ են: Դու այնքան ես սիրում ինձ, որ ուղարկեցիր Նրան, Ով ամենակարևորն էր Քեզ համար՝ Քո Որդի Հիսուսին, որպեսզի Նա մահանար ինձ համար, և ես հավիտենական կյանք ունենայի: Եթե Դու այդքան սիրում ես ինձ, ուրեմն, անկասկած, ցանկանում ես կատարել Քո սկսած աշխատանքն իմ կյանքում: Այս գիրքն ընթերցելիս խնդրում եմ, որ խոսես ինձ հետ Քո Հոգով և ցույց տաս Քո ցանկալի ճանապարհներն իմ կյանքի համար: Բացի՛ր իմ աչքերը՝ տեսնելու համար, և իմ ականջները՝ Քո Խոսքը լսելու համար: Հայտնի՛ր ինձ Հիսուսին ավելի, քան երբևէ ճանաչել եմ: Ես արդեն շնորհակա՛լ եմ այն ամենի համար, ինչ պետք է անես ինձանում Քո ուղերձի միջոցով, որն այս գրքում է: Աղոթում եմ Հիսուսի անունով: Ամե՛ն»:

ԳԼՈՒԽ 2

ԴԺՎԱՐ Է ԽԹԱՆԻ ԴԵՄ ՔԱՅԻ ՏԱԼ

Դժվար է հասկանալ թագավորության սկզբունքները ժողովրդավարական մտածելակերպով:

Իմ առջև այնպիսի խոչընդոտ է, որը երևի թե անհնար է հաղթահարել առանց Աստծո շնորհքի: Ես փորձում եմ սովորեցնել իշխանության մասին այնպիսի աշխարհում, որն օրեցօր ավելի անօրեն է դառնում: Ուստի շատ բաներ, որոնք շեշտադրում եմ այս գրքում, հակառակ են կամ ընդդիմանում են մեր հասարակության մտածելակերպին: Շատ առումներով, մեր միտքը ծրագրված է այլ կերպ դիտարկել այն հիմնարար ճշմարտությունները, որոնք ուսումնասիրելու ենք: Սակայն հենց սա է սատանայի՝ մեր անձերի թշնամու մարտավարությունը: Նա հրապուրանքով ստրկության է տանում մեզ՝ պատկերելով չարիքը որպես ցանկալի և բարի, իսկ այն, ինչ ազատության և սրբության է տանում՝ որպես գերություն:

Ամեն ինչ հենց այսպես սկսվեց: Հիշե՛ք Եդեմի պարտեզը. սատանայի մարտավարությունն այնպիսի հաջողություն ունեցավ, որ այդ ժամանակից ի վեր նա չի փոխել այն: Ահա թե ինչու է Աստծո Խոսքը հրատապ զգուշացնում մեզ. «Մի՛ խաբվեք, իմ սի-

ռելի եղբայրնե՛ր» (Հակոբ. 1.16), և «Եվ մի՛ կերպարանվեք այս աշխարհի կերպարանքով, այլ նորոգվե՛ք ձեր մտքի նորոգությամբ, որ դուք քննեք, թե ինչ է Աստծո կամքը՝ բարին, հաճելին և կատարյալը» (Հռոմ. 12.2):

Կարող եմ ասել իմ փորձառությունից, որ Արևմուտքի ժողովուրդն ամենից շատ է ընդդիմանում Աստծո Խոսքը ճշմարտապես լսելուն: Այս երևույթը հիմնարար պատճառ ունի. դժվար է հասկանալ թագավորության սկզբունքները՝ ժողովրդավարական մտածելակերպով: Ժողովրդավարությունը լավ է այս աշխարհի ազգերի համար, բայց մենք պետք է հիշենք, որ Աստծո թագավորությունը հենց թագավորություն է: Այն ղեկավարվում է Թագավորի կողմից և ունի դիրքեր, կանոնադրություն և իշխանություն: Նրա թագավորության օրենքները չեն կարող չեղյալ դարձվել հասարակական կարծիքի, ընտրությունների կամ քվեարկության միջոցով, ինչպես նաև ենթարկվել դրանց ազդեցությանը: Այս օրենքները չեն փոփոխվում ըստ այն ամենի, ինչը մենք բարի ենք համարում մեզ համար: Հենց այս խորամանկ սուտն էր, որ խաբեց Եվային: Հետևաբար, ինչպես որ Սամուելը «թագավորության իրավունքն ասաց ժողովրդին և գրքի մեջ գրեց» (Ա Թագ. 10.25), այնպես էլ մենք պետք է սովորենք թագավորության սկզբունքները այսօր, քանի որ մեր հասարակությունը թագավորության գործելակերպեր չի դաստիարակում մեզանում:

Եթե փորձենք հավատացյալ լինել՝ ունենալով մեր մշակույթի պատկերացումն իշխանության մասին, մենք լավագույն դեպքում անարդյունավետ կլինենք, իսկ վատագույն դեպքում կվտանգենք մեզ: Մեր մատակարարումը և պաշտպանությունը կարող են խոչընդոտվել և նույնիսկ դադարեցվել, եթե մենք կտրվենք ճշմարիտ կյանքի Աղբյուրից: Դա կարելի է համեմատել այն բանի հետ, որ դուք բեյսբոլ եք խաղում, մինչ Աստված ֆուտբոլի առաջնություն է վարում: Դա կարելի է համեմատել այն բանի հետ, որ դուք փորձում եք որևէ էլեկտրական սարք օգտագործել՝ առանց միացնելու այն հոսանքի աղբյուրին:

Այսօր, չափազանց հաճախ, եթե համաձայն չենք իշխանության հետ, մենք կարող ենք ընդդիմանալ՝ բողոքելու միջոցով: Ի վերջո, կառավարությունը պետք է լինի «ժողովրդից, ժողովրդի կողմից և ժողովրդի համար», այնպես չէ՞: Այս և այլ ժողովրդավարական հայացքներ թափանցել են մեր քրիստոնեության մեջ

և տարել շատերին ինքնավարության մոլորեցնող ճանապարհով: Շարունակելով գնալ այս ճանապարհով՝ նրանք ոչ միայն ընդդիմանում են իշխանությանը, այլև բացահայտ հակառակվում են: Մյուսներն ավելի են արհամարհում իշխանությունը և արտահայտում են իրենց արհամարհանքը՝ լիովին անտեսելով իշխանության գոյությունը: Իրենց վարքով նրանք ցույց են տալիս, որ բացարձակապես կորցրել են Աստծո երկյուղը:

Բայց այս մոտեցումներից ոչ մեկը չի բերի այն ազատությունը, որին մենք ձգտում ենք, քանի որ Աստվածաշնչում գրված է.

«Եթե լսեն և հնազանդվեն, իրենց օրերը բարիքով կվերջացնեն, և իրենց տարիները՝ զվարճությամբ: Բայց եթե չլսեն, սրով կանցնեն և կմեռնեն՝ առանց հասկացողության» (Հոբ 36.11,12):

Խոսքն Աստծուն հնազանդվելու մասին է: Ուշադրություն դարձրեք այս հատվածում գտնվող խոստմանը. մատակարարում և պաշտպանություն՝ Նրա իշխանությանը հպատակվելու դեպքում: Նույնպես ուշադրություն դարձրեք այն վերահաս վտանգին, որը գալիս է, երբ մենք արհամարհում ենք Նրա իշխանությունը: Հակառակվելով իշխանությանը՝ մենք կորցնում ենք այն ազատությունը, որին ձգտում ենք՝ մեր անհնազանդության պատճառով: Իմ կինը հաճախ է ասում. «Հպատակության մեջ ազատություն կա, իսկ ապստամբության մեջ՝ ստրկություն»: Այս պնդումն ամփոփում է այն, ինչ կարդացինք Հոբի գրքի այս հատվածում:

Ոմանք կասեն. «Ես հնազանդվում եմ Աստծուն, բայց ոչ՝ մարդուն, եթե համաձայն չեմ նրա հետ»: Հենց սրանում է, որ մեր դաստիարակությունը և սխալ եկեղեցական մտածելակերպը կարող են սահմանափակել մեզ: Մենք չենք կարող Աստծո իշխանությանը հնազանդվելը առանձնացնել Նրա կողմից լիազորած իշխանությանը հնազանդվելուց: Ամեն իշխանություն Նրանից է բխում: Լսեք Աստվածաշնչի հորդորը.

> «Ամեն անձ թող հնազանդվի բարձր իշխանություններին, *որովհետև չկա իշխանություն, որ Աստծուց չէ,* և ներկա իշխանություններն Աստծուց են կարգված: Ուրեմն, իշխանությանը հակառակվողն Աստծո հրամանին է հակառակվում, և հակառակվողներն իրենց անձերին դատաստան կընդունեն» (Հռոմ. 13.1,2):

Այս հատվածում չափազանց շատ նյութ կա մտածելու համար, և հետագայում ավելի մանրամասն կուսումնասիրենք այն, բայց այժմ ուզում եմ միայն մի քանի մեկնաբանություն անել: Առաջինը՝ Աստված է կարգում բոլոր ներկա իշխանավորներին: Ճշմարտությունն այն է, որ ոչ ոք չի կարող օրինական իշխանության որևէ դիրք զբաղեցնել՝ առանց Աստծո իմացության: Այս գաղափարը պետք է հաստատվի մեր սրտերում: Շատերի համար դժվար է ընդունել այս ճշմարտությունը, քանի որ նրանք չար, դաժան, խիստ և անարդար առաջնորդներ են ունեցել: Այնուամենայնիվ, մենք կրկին պետք է ուշադրությամբ կարդանք այս հատվածը: Գրված է, որ *ամեն իշխանություն Աստծուց է*, ոչ թե՝ որ *ամեն իշխանություն աստվածապաշտ է:* Այս պնդումների միջև ահռելի տարբերություն կա, որին խորապես կանդրադառնանք:

Երկրորդը՝ այդ իշխանավորների դեմ ապստամբելը նշանակում է ապստամբել Տիրոջ հրամանի կամ անձամբ Աստծո դեմ, և այդպես վարվողները դատաստան են բերում իրենց վրա: Մենք պետք է հիշենք, որ այս խոսքերի հեղինակը մեր Հայրն է, ոչ թե ինչ-որ իշխանության ծարավ ունեցող առաջնորդ, քանի որ «ամբողջ Աստվածաշունչն Աստծո ոգեշնչմամբ է տրված» (Բ Տիմոթ. 3.16, NKJV): Այն, որ մարդիկ խեղաթյուրում են Աստվածաշնչի իմաստը, չի նշանակում, որ Աստված չէ դրա հեղինակը:

Նույնիսկ եթե մարդիկ պատրաստակամորեն չխոստովանեն, շատերը համարում են, որ իրենք հաշվետու են միայն Աստծուն, և ոչ՝ իշխանություններին: Այդպես մտածողները, ըստ էության, հակառակվում են Նրան, Ում Տեր են անվանում: Հիշե՛ք Հիսուսի խոսքերը Սողոսին (որը Պողոս դարձավ). «Դժվար է քեզ խթանին քացի տալ» (Գործք 9.5): Աստվածաշնչյան օրերում հողագործները խթաններ էին օգտագործում: Սովորական խթանը մոտավորապես 2.5 մետրանոց կաղնու կամ այլ ամուր փայտ ունեցող ծառի ճյուղ էր: Դրա կեղևը հանում էին և առջևի մասում սուր սեպ ամրացնում՝ վարելու ընթացքում եզներին քշելու համար: Իհարկե, եզը չէր հակառակվի այդ սուր գործիքին, որը կարող էր մեծ ցավ և վնաս պատճառել: Ուստի, Պողոսի օրերում այս ասացվածքն օգտագործվում էր այն իմաստով, որ վերադաս իշխանությանը կամ գերակշռող ուժին հակառակվելը զուր է:

Եկեք ավելի համապատասխանեցնենք սա մեր օրերին: Փո-

խարինենք «խթանը» մեխերով: Ոտքով մեխերի սուր ծայրերին հարվածելը չափազանց անխոհեմ է և սաստիկ ցավոտ է: Այն մարդիկ, որոնք հակառակվում են Աստծո իշխանությանը՝ թե՛ ուղղակիորեն, ինչպես Պողոսի դեպքում էր, թե՛ անուղղակիորեն, այսինքն՝ Նրա կողմից լիազորած իշխանությանը, կպարզեն, որ ոտքով սուր մեխերի հարվածողի դերում են հայտնվել: Շատ հաճախ դա կարտահայտվի ցավոտ փորձառությամբ և այնպիսի դասով, որը չափազանց շատերս, այդ թվում նաև ես, դառը փորձով ենք սովորում:

Փորձառություն, որը բացեց իմ աչքերը

Խոսելով ցավի մասին, հիշում եմ, որ իմ աչքերը ցավոտ կերպով բացվեցին այն իրողության համար, որ հակառակությունը լիազորած իշխանությանը՝ նշանակում է հակառակություն Աստծո իշխանությանը: Դա մեկընդմիշտ դրոշմվեց իմ ներսում՝ որպես հուշարձան ոտքով մեխերի հարվածելու հիմարությանը:

1980-ական թվականների կեսերին ինձ երիտասարդականի հովվի աշխատանք առաջարկեցին մի խոշոր միջազգային եկեղեցում: Աղոթքից և զարմանալի հաստատումից հետո ես ընդունեցի այդ առաջարկը՝ որպես Աստծո կամք:

Ես ճնշված էի զգում, քանի որ չունեի ոչ մի փորձ երիտասարդական ծառայության մեջ, սակայն հայտնվեցի Ամերիկայում ամենից արագ աճող և ամենից ազդեցիկ եկեղեցիներից մեկի աշխատակազմում: Ես սկսեցի անհագ կերպով կարդալ գրքեր և ձեռնարկներ երիտասարդական ծառայության մասին: Այդ գրքերից մեկը գրված էր Լուիզիանա նահանգում գտնվող մի եկեղեցու ավագ երիտասարդական հովվի կողմից, որն ակնառու երիտասարդական ծրագիր էր ներկայացնում: Ես խնդրեցի քարտուղարուհուս զանգել և հարցնել՝ արդյոք կարո՞ղ էի երկու օրով նրանց եկեղեցի գնալ և ծանոթանալ այդ երիտասարդական ծառայությանը: Այդ ծառայության առաջնորդները սիրով համաձայնեցին, և մենք պայմանավորվեցինք իմ այցելության օրերի վերաբերյալ:

Ժամանելուն պես ինձ անմիջապես առաջնորդեցին չորեքշաբթի երեկոյան երիտասարդական հավաքույթի: Ես ապշած էի: Նրանք սեփական երիտասարդական դահլիճ ունեին, որը 1500

մարդ էր տեղավորում, և այն գրեթե լեցուն էր: Նրանք խաղեր չէին խաղում և թեթև, փոխզիջումային ուղերձներ չէին քարոզում. նրանք քարոզում էին սրբության և զորության մասին: Ավելին, երիտասարդները ոգևորված էին, որ այդտեղ էին: Ես խիստ տպավորված էի և վստահ, որ ճիշտ ծառայություն էի ընտրել՝ ընդօրինակելու համար:

Հաջորդ օրը հանդիպեցի այդ առաջնորդներին նրանց եկեղեցում: Կրկին, ես հազիվ էի հավատում տեսածիս: Երիտասարդական ծառայությունն ուներ սեփական գրասենյակային շենքը, երկու լրիվ դրույքով աշխատող ադմինիստրատիվ օգնական և չորս լրիվ դրույքով աշխատող երիտասարդականի հովիվ: Հաջորդ երկու օրերին ես մասնակցեցի բոլոր այդ հովիվների ծառայություններին: Վիճակագրությունն ապշեցուցիչ էր: Այդ ժամանակ նրանք 1250 պատանիներ և երիտասարդներ ունեին իրենց ավագ դպրոցականների ծառայության մեջ, և այդ թիվը զարմանալիորեն աճում էր:

Այդ չորս հովիվներից յուրաքանչյուրը նույն բանն ասաց ինձ: Այդ ծառայությունը հաջողության էր հասել շնորհիվ «երեկույթների», որոնք անցկացվում էին ամեն ուրբաթ երեկոյան, քաղաքով մեկ՝ ավելի քան հարյուր վայրերում: Այդ երեկույթներն իրականում տնային խմբեր էին, որոնց նպատակը երիտասարդներին փրկության բերելն էր:

Այդ գաղափարը բավականին պարզ էր, բայց և խելամիտ էր: Չփրկված դեռահասներին եկեղեցի հրավիրելը դժվար է, բայց նրանց հեշտորեն կարելի է երեկույթի հրավիրել: Երիտասարդական ծառայության յուրաքանչյուր անդամի խրախուսում էին շաբաթվա ընթացքում ընտրել մի դեռահասի իրենց դպրոցից և ուրբաթ օրը հրավիրել երեկույթի: Այնտեղ թեթև ուտեստներ էին լինում, նրանք շփվում էին և ժամանակակից քրիստոնեական երաժշտություն լսում: Խմբի ավագը, որն ավագ դպրոցի աշակերտ էր կամ համալսարանի ուսանող, Աստվածաշնչի մասին խմբային քննարկում էր սկսում, ապա ուղղում էր զրույցը փրկության թեմային: Դրանից հետո նա հնարավորություն էր տալիս, որ ներկաները Հիսուսին նվիրեին իրենց կյանքը: Արդյունքում նորեկներից շատերը փրկվում էին: Նրանց հետ առանձին զրուցում էին՝ բացատրելով հավատացյալների շփման և եկեղեցու կարևորությունը, անուններ և կոնտակտային տվյալներ էին փոխանա-

կում և հրավիրում էին չորեքշաբթի երեկոյան երիտասարդական ծառայությանը:

Ես մասնակցեցի այդ երեկույթներից մեկին և ոգեշնչվեցի, երբ մի քանի չփրկված աշակերտներ Հիսուսին նվիրեցին իրենց կյանքը: Վերադարձա իմ եկեղեցի և պատմեցի այդ մասին օգնականիս: Աղոթքից հետո մենք առաջնորդություն զգացինք սկսելու նույն ծրագիրը մեր երիտասարդական ծառայության մեջ: Եվ մի կիրակնօրյա հավաքույթից հետո, երբ ավտոկայանատեղիում էինք, ես ոգեշնչումով պատմեցի այդ տեսիլքը իմ ավագ հովվին: Նա խրախուսեց.

- Հիանալի՛ է: Արե՛ք դա:

Ութ ամսվա պլանավորում և աշխատանք

Աղոթքի մեջ Աստված ծրագիր տվեց: Ես անմիջապես ավագների դպրոց սկսեցի՝ իմ ավագներին պատրաստելու համար: Ես հայտարարեցի այդ մասին երեքշաբթի երեկոյան՝ երիտասարդական ծառայության ժամանակ, և հուրախություն ինձ՝ հաջորդ կիրակի առավոտյան մեր երիտասարդներից յոթանասունը եկան առաջին դասին: Հաջորդ վեց ամսում շաբաթը մեկ անգամ ես սովորեցնում էի նրանց առաջնորդության սկզբունքները՝ հավատարմության, ազնվության, նվիրման, ծառայության, տեսիլքի և այլն:

Հինգ ամիս անց Տերը կրկին խոսեց սրտիս աղոթքի ժամանակ. *«Ընտրի՛ր քո ավագների դպրոցի երիտասարդներից քսանչորսին և աշակերտական դասեր անցկացրու նրանց համար: Նրանցից դու կընտրես երեկույթների առաջին ավագներին»:* Ես անմիջապես սկսեցի կրթել այդ ավագներին՝ առաջին տնային խմբերի համար:

Հաջորդ երկու ամիսների ընթացքում ես պատրաստում էի այդ ավագներին տնային խմբերի երեկույթների համար: Ես ներկայացրի երեկույթների մասին տեսիլքը երեքշաբթի երեկոյան գլխավոր երիտասարդական ծառայությանը: Իմ օգնականը և ես աշխատում էինք ավագների ձեռնարկի վրա, ինչպես նաև շատ այլ մանրուքների, որոնց թվում էին երեկույթների գտնվելու վայրերը, քաղաքի բաժանումը՝ ըստ դպրոցական շրջանների և փոստային կոդերի, նաև այն բանի, թե ինչպես էին այդ խմբերն ընդլայնվելու, և ինչպես էր կազմակերպվելու հետագա շփումը նորեկների հետ: Մենք անմնացորդ ներդրեցինք մեր ուժերն այդ

նախաձեռնության մեջ՝ առաջնորդվելով կորսվածներին հասնելու նպատակով:

Յուրաքանչյուրը ոգեշնչված էր: Այդ տեսիլքը հպվեց թե՛ ավագներին, թե՛ երիտասարդական ծառայությանը մշտապես հաճախող դեռահասներին: Նրանք արդեն քննարկում էին, թե ում էին ցանկանում առաջին հերթին հրավիրել իրենց երեկոյթներին: Մենք աղոթում էինք, որպեսզի Աստված հպվեր դեռահասների և պատանիների սրտերին, որպեսզի նրանք արձագանքեին, հասկանային, որ Հիսուսի կարիքն ունեին, և փրկվեին: Իմ օգնականը և ես պատկերացնում էինք, որ երեքշաբթի երեկոյան հավաքույթներին մեր եկեղեցու գլխավոր դահլիճը լեցուն կլիներ 2500 երիտասարդներով: Եթե ոչինչ չասեմ, մենք համակված էինք տեսիլքով և խանդավառությամբ:

Հանդիպում, որը երբեք չեմ մոռանա

Առաջին երեկոյթները սկսելուց երեք շաբաթ առաջ եկա շաբաթական հովվական հավաքույթի՝ լիովին անպատրաստ այն բանի համար, ինչ լսելու էի: Այդ հավաքույթին մեր ավագ հովիվն իր տասնմեկ հովիվներին ասաց հետևյալ խոսքերը, որոնք ապշեցրին ինձ.

- Պարոնա՛յք, Սուրբ Հոգին ցույց է տվել ինձ, որ այս եկեղեցին չպետք է տնային խմբեր ունենա: Այնպես որ, ուզում եմ, որ բոլորդ չեղարկեք փոքր խմբերի ցանկացած հավաքույթ, որոնք անցկացվում են եկեղեցու անդամների տներում:

Ես չհավատացի լսածիս: Ամենայն հավանականությամբ, դա ինչ-որ թյուրըմբռնում էր: Իմ օգնականի ապշահար հայացքը հանդիպեց իմ հայացքին. մենք փորձում էինք զսպել մեր շփոթությունը: Ես փորձեցի մխիթարել ինձ՝ մտածելով. *«Նա նկատի չունի երիտասարդական ծառայությունը... նա խոսում է մնացած հովիվների մասին»:* Ամուրիների հովիվը, տարեցների հովիվը, զույգերի հովիվը և մյուս հովիվներն ունեին տնային խմբեր, բայց դրանք չէին զարգանում և իրականում նրանց ծառայությունների ուշադրության կենտրոնում չէին: Նրանց խմբերն ավելի շուտ աջակցության համար էին, իսկ մեր խմբերը պետք է ավետարանչական լինեին: Բացի այդ, մի քանի ամիս առաջ ավտոկայանատեղիում ես զրուցել էի իմ գլխավոր հովվի հետ իմ գաղափարի

մասին, և նա ասել էր. «Արեք դա»: Այնպես որ, ես եզրակացրի, որ այդ արգելքը չպետք է վերաբերեր երիտասարդական ծառայությանը:

Ես այլևս չկարողացա համբերել.

- Ներողությո́ւն, հովի́վ: Ուզում ես ասել՝ բացի երիտասարդական ծառայությունից, ճի՞շտ է:

Նա ինձ նայեց և ասաց.

- Ջո́ն, Սուրբ Հոգին ցույց է տվել ինձ, որ այս եկեղեցին չպետք է տնային խմբեր ունենա:

Ես կրկին խոսեցի.

- Հովի́վ, հիշո՞ւմ ես, որ մի քանի ամիս առաջ Լուիզիանայում այցելեցի մի երիտասարդական ծառայության: Այդ եկեղեցու երիտասարդական ծառայության մեջ 1250 ավագ դպրոցի աշակերտներ կան: Նրանց չորս հովիվներն էլ ասացին, որ դա իրենց տնային խմբերի շնորհիվ է:

Ավագ հովիվն ինձ նայեց և ասաց.

- Ջո́ն, Սուրբ Հոգին ցույց է տվել ինձ, որ այս եկեղեցին չպետք է տնային խմբեր ունենա:

Ես կրկին խոսեցի՝ ավելի շատ լարվելով և շարունակ մտածելով. *«Նա չի հասկանում»:* Ես փորձեցի համոզել նրան.

- Հովի́վ, չփրկված երիտասարդներին դժվար է մեր եկեղեցի բերել, բայց գրեթե յուրաքանչյուր ավագ դպրոցի աշակերտի կարելի է երեկույթի հրավիրել, և այդ երեկույթը, ինչպես ես բացատրեցի քեզ մի քանի ամիս առաջ, լինելու է տնային խումբ, որի նպատակը կորսվածների փրկությունն է:

Նա կրկնեց.

- Ջո́ն, Սուրբ Հոգին ցույց է տվել ինձ, որ այս եկեղեցին չպետք է տնային խմբեր ունենա:

Զգալիորեն բորբոքվելով՝ ես ընդդիմացա.

- Բայց, հովի́վ, մենք կարող ենք լցնել մեր դահլիճը 2500 դպրոցականներով: Մենք կարող ենք փրկության բերել Ֆլորիդա նահանգի Օռլանդո քաղաքի երիտասարդությանը:

Նա կրկնեց նույն խոսքերը:

Ես գրեթե տասնհինգ րոպե վիճեցի նրա հետ: Բոլորն այդ

սրահում զգում էին լարվածությունը: Բարեբախտաբար, ինձ համար միակ բառերը, որոնք դուրս եկան հովվի բերանից, այն էին, ինչը, նրա համոզմամբ, Աստված պատվիրել էր իրեն ասել:

Ի վերջո, ես լռեցի, թեև ներքուստ եռում էի զայրույթից: Ես այլևս ոչինչ չէի լսում մինչև այդ հավաքույթի ավարտը: Միայն մտածում էի. *«Մենք ութ ամիս աշխատել ենք այս ամենի ուղղությամբ: Նա գիտեր, թե ինչ էինք մենք անում. ամիսներ առաջ ես ասել էի նրան այդ մասին: Ինչպե՞ս նա կարող է արգելել այն միջոցը, որն Աստծո թագավորության մեջ կբերի հարյուրավորների և հազարավորների: Նա կանգնեցնում է Աստծո շարժը: Ի՞նչ եմ ասելու երիտասարդներին: Ի՞նչ կմտածեն իմ ավագները: Ես ինքնաթիռով Լուիզիանա ուղևորվեցի: Գումարի և ժամանակի ինչպիսի՞ կորուստ: Հավատալ չեմ կարող, որ սա իրականում տեղի է ունենում»:* Իմ մտքերը գրեթե վերջ չունեին, և բոլորն էլ միանգամայն ճիշտ էին թվում: Ես համոզված էի, որ ճիշտ էի և Աստծո կողմից էի, իսկ իմ հովիվը ոչինչ չէր հասկանում:

Երբ այդ հավաքույթն ավարտվեց, ես դուրս թռա սենյակից: Մի ավելի տարեց և իմաստուն հովիվ փորձեց կանգնեցնել ինձ՝ իմաստություն, զգուշացումներ և մխիթարություն փոխանցելու համար, բայց ես ասացի նրան.

- Ֆրե՛դ, ես չե՛մ ուզում խոսել:

Նա տեսավ, որ դա ապարդյուն էր, և հանգիստ թողեց ինձ:

Ես մեքենայով տուն գնացի՝ ճանապարհին մտովի թվարկելով բազմաթիվ պատճառներ, ըստ որոնց մեր ավագ հովիվը սարսափելի սխալ էր գործում: Որքան ավելի էի կշռադատում նրա որոշումը, այնքան իմ բարկությունն ավելանում էր: Ես մտածում էի. *«Նա չգիտի, թե որքան արդյունավետ են այս երեկույթները, քանի որ ինձ պես լայնածավալ հետազոտություն չի կատարել: Նա պարզապես ներս մտավ և չեղարկեց ամիսներ տևող քրտնաջան աշխատանքը՝ առանց այն բավարար կերպով ուսումնասիրելու: Նա խեղդում է այն, ինչի շնորհիվ եկեղեցին և երիտասարդական ծառայությունը աճելու էին: Նա թույլ չի տալիս մարդկանց փրկվել»:* Իմ մտքերը մոտավորապես այսպիսին էին տուն վերադառնալու երկար ճանապարհին: Ես տրամաբանորեն էի մտածում. ոչինչ չէր կարող արդարացնել այն, ինչ տեղի ունեցավ այդ հավաքույթին:

Ես կանգնեցրի մեքենաս տան մոտ, բացեցի մուտքի դուռը, և կինս ողջունեց ինձ: Փոխարենը ողջունեի նրան՝ ասացի խիստ բարկացած ձայնով.

- Անհավատալի է, թե ինչ նա արեց:

Լսելով իմ ձայնի տոնը՝ նա անհանգստացած պատասխանեց.

- Ո՞վ և ի՞նչ արեց:

- Հովի՛վը: Նա չեղարկեց տնային խմբերի երեկույթները: Այն, ինչի վրա մենք աշխատում էինք վերջին ութ ամսում, մեր ամբողջ երիտասարդական ծառայության աշխատանքը: Նա չեղարկե՛ց դրանք: Կարո՞ղ ես հավատալ:

Նա նայեց ինձ և ասաց խիստ շիտակ ու լուրջ ձայնով.

- Թվում է՝ Աստված փորձում է ինչ-որ բան սովորեցնել քեզ:

Դրանից հետո նա հեռացավ միջանցքից և մեր ննջասենյակ գնաց:

Ես բարկացա նաև կնոջս վրա: Իմ պատկերացմամբ, նա չուներ իմաստություն և զուրկ էր հոգևոր ողջամտությունից: Նա նույնքան անիրազեկ էր, որքան իմ ավագ հովիվը: Ես արագ խոհանոց գնացի՝ մեր ննջասենյակի հակառակ ուղղությամբ, ոտքս աթոռին դրեցի, դուրս նայեցի պատուհանից և շարունակեցի մտածել այն մասին, թե որքան սխալ էր իմ հովիվը: Միայն թե այժմ այդ մտքերին ավելացան նոր մտքեր այն մասին, թե որքան անզգա և անխորաթափանց էր իմ կինը:

Հանդիպում Տիրոջ հետ

Մինչ պատուհանից նայում էի, Սուրբ Հոգին խոսեց իմ սրտում. *«Ջո՛ն, ո՞ւմ ծառայությունն ես դու կառուցում՝ Ի՞մը, թե՞ քոնը»:*

Ես անմիջապես պատասխանեցի. «Քո՛նը, Տե՛ր»:

Նա արագորեն արձագանքեց. *«Ո՛չ, այդպե՛ս չէ: Դու կառուցում ես քո՛նը»:*

Ես ասացի. «Տե՛ր, մենք չենք կարողանում մեր եկեղեցի բերել չփրկված դպրոցականների մեծ մասին, բայց մենք կարող ենք երեկույթների հրավիրել նրանց...», և ես ներկայացրի Նրան իմ ամբողջ մարտավարությունը և իմ դատողությունների ընթացքը, կարծես Նա չգիտեր. որքա՞ն հեշտորեն մենք կարող ենք խաբվել:

Տերը թույլ տվեց ինձ դատարկվել այդ ամենից, իսկ հետո ասաց. *«Ջո՛ն, երբ քեզ բերեցի այս եկեղեցի՝ այս մարդուն ծառայելու համար, Ես դարձրի քեզ այն ծառայության կցորդը, որը նրան եմ վստահել: Ես կանչեցի քեզ՝ լինելու նրա ձեռքերը և ոտքերը: Յուրաքանչյուր ծառայության մեջ Ես միայն մեկ մարդու եմ կարգում՝ որպես առաջնորդ»:*

Նա հիշեցրեց ինձ Մովսեսին: Աստվածաշնչում գրված է. «Մովսեսը, անշուշտ, հավատարիմ էր Աստծո ամբողջ տունը տնօրինելու մեջ» (Եբր. 3.5, AMP): Նա էր այն առաջնորդը, որին Աստված կարգել էր ամբողջ ժողովրդի վրա:

Հաջորդը՝ Նա հիշեցրեց ինձ Հակոբոսին՝ Նոր կտակարանից: Հակոբոսը Երուսաղեմի եկեղեցու առաջնորդն էր: Նա հիշեցրեց ինձ այն դեպքը, երբ թլփատությունը վիճելի հարց էր դարձել հավատացյալների համար (տե՛ս Գործք 15-րդ գլուխ): Պողոսը, Բառնաբասը, Պետրոսը, Հովհաննեսը և Երուսաղեմի եկեղեցու մյուս առաքյալներն ու երեցները միասին հավաքվեցին՝ այդ հարցը քննարկելու համար:

Հավատքի եկած փարիսեցիներից մի քանիսը, որոնք նույնպես առաջնորդներ էին, առաջինը խոսեցին: Հաջորդը Պետրոսն էր: Նրանից հետո Պողոսը և Բառնաբասը պատմեցին, թե ինչ էր Աստված անում հեթանոսների մեջ: Հենց որ նրանք ավարտեցին, Հակոբոսը ոտքի ելավ, ամփոփեց այն ամենը, ինչ ասվել էր, իսկ հետո հայտնեց իր վճիռը. «Նրա համար ես... համարում եմ...»: Որպես առաջնորդ նա որոշում կայացրեց, և բոլորը, ներառյալ՝ Պետրոսը, Պողոսը և Հովհաննեսը, հնազանդվեցին նրա որոշմանը:

Ես տեսա նույն պատկերը Աստվածաշնչում, երբ հրեշտակը բանտից ազատեց Պետրոսին: Պետրոսն ասաց Մարիամի տանը գտնվող հավատացյալներին. «Այս բանը պատմե՛ք Հակոբոսին և եղբայրներին» (Գործք 12.17): Նույնը վերաբերում էր Ղուկասին և Պողոսին: Ղուկասը գրում էր, որ երբ նրանք Երուսաղեմ եկան, «Եղբայրները մեզ ուրախությամբ ընդունեցին: Բայց հետևյալ օրը Պողոսը մեզ հետ գնաց Հակոբոսի մոտ, և բոլոր երեցները եկան» (Գործք 21.17,18): Ինչո՞ւ էին Պետրոսն ու Պողոսն առանձնացնում Հակոբոսին այս երկու դեպքերում: Ակնհայտ է, որ նրան առանձին նշում էին իր անունով, քանի որ նա առաջնորդն էր:

Հենց որ Սուրբ Հոգին հստակեցրեց սա, Նա շարունակեց.

«Ջո՛ն, երբ կանգնես Իմ ափյանի առջև՝ այն ժամանակվա համար, որտեղ Ես նշանակել էի քեզ ծառայելու այս եկեղեցում, առաջին հերթին դու հաշիվ չես տալու այն բանի համար, թե քանի երիտասարդների ես փրկության բերել Ֆլորիդայի Օռլանդո քաղաքում: Առաջին հերթին դու դատվելու ես այն բանի համար, թե որքան հավատարիմ ես եղել այն հովվին, որի ենթակայության ներքո Ես նշանակել էի քեզ»:

Այնուհետև Նա ասաց այն, ինչը ցնցեց ինձ. *«Իրականում, դու կարող ես շահել Օռլանդոյում ապրող բոլոր երիտասարդներին, սակայն կանգնել Իմ առջև և դատաստանի ենթարկվել, քանի որ չես հնազանդվել և հավատարիմ չես եղել այն հովվին, որի ենթակայության ներքո Ես նշանակել էի քեզ»:* Լսելով այդ բառերը՝ ես նորովի զգացի Տիրոջ երկյուղը: Լիովին անձնատուր լինելով Տիրոջը՝ ես դյուրաթեք դարձա Նրա ձեռքերում:

Նա շարունակեց. *«Ջո՛ն, եթե այսպես շարունակես, երիտասարդական ծառայությունն այլ ուղղությամբ կընթանա, իսկ եկեղեցին՝ այլ ուղղությամբ: Դու պառակտում կբերես եկեղեցում»:* Պառակտումը, ըստ էության, նշանակում է երկու տարբեր տեսիլք ունենալ: Ինչո՞ւ են այսօր բազմաթիվ եկեղեցիներ և ընտանիքներ պառակտվում: Նրանցում ավելի քան մեկ տեսիլք կա, ինչը նշանակում է, որ դրանցից մեկը հպատակված չէ Աստծո իշխանությանը: Աստված կարգում է որոշված մարդկանց կամ առաջնորդների, քանի որ ցանկացած կազմակերպություն, որը երկու գլուխ ունի, դատապարտված է պառակտման:

Ապաշխարության արձագանք

Ես անմիջապես ապաշխարեցի իմ ապստամբ վերաբերմունքի համար: Աղոթելուց հետո գիտեի, թե ինչ պետք է անեի: Վերցրի հեռախոսը և զանգեցի մեր ավագ հովվին: Երբ նա պատասխանեց, ես ասացի.

- Հովի՛վ, Ջոն Բիվերն է: Ես զանգել եմ՝ քեզնից ներողություն խնդրելու համար: Աստված ցույց է տվել ինձ, որ ես ապստամբել եմ քո իշխանության դեմ. ես ծանր մեղք եմ գործել: Խնդրո՛ւմ եմ, ների՛ր ինձ: Ես անմիջապես կչեղարկեմ տնային խմբերը:

Նա շատ սիրալիր էր և ներեց ինձ: Հենց որ ցած դրեցի խոսա-

փողը, լսեցի հետևյալ հարցը Սուրբ Հոգուց. *«Ինչպե՞ս ես հայտնելու այս լուրը քո քսանչորս ավագներին այս շաբաթավերջին»:*

Ես մի տեսիլք կամ պատկեր տեսա. ես եկա հավաքույթի իմ ծառայության ավագների հետ և տխուր, միապաղաղ ձայնով ասացի. «Տղանե՛ր, չեք հավատա, թե ինչ է կատարվել»: Բոլորը մտահոգված նայեցին ինձ և հարցրին՝ ի՞նչ: Ես շարունակեցի ծանր, միապաղաղ ձայնով. «Գիտեք, որ մենք ամիսներ շարունակ աշխատել ենք այս ծրագրի վրա, բայց հովիվը չեղարկել է տնային խմբերը: Մենք չենք անցկացնելու մեր ուրբաթ երեկոյան երեկույթները»: Իմ տեսիլքում ես տեսա, որ նրանք նողկանքով տրտնջում և հառաչում էին այդ որոշման պատճառով: Հստակ զգացվում էր, որ նրանք բարկացած էին ավագ հովվի վրա: Բոլորս նրա զոհերն էինք, իհարկե, ես ավելի ճիշտ էի, քան նա:

Երբ այդ տեսարանն իմ մտքում ավարտվեց, լսեցի հետևյալ հարցը Սուրբ Հոգուց. *«Դու այդպե՞ս ես վարվելու»:*

Ես պատասխանեցի. «Ո՛չ, Տե՛ր»:

Հաջորդ հավաքույթին իմ ծառայության ավագների հետ ներս մտա՝ վստահությամբ, ժպտալով և ոգեշնչմամբ խոսելով: Ես խանդավառությամբ հայտարարեցի.

- Տղանե՛ր, ես հրաշալի լուր ունեմ:

Նրանք անհամբեր ինձ նայեցին.

- Ի՞նչ:

Ես շարունակեցի.

- Աստված խնայեց մեզ՝ թույլ չտալով, որ ծնունդ տանք և կառուցենք այնպիսի բան, ինչն Իր կամքի մեջ չէ: Մեր ավագ հովիվն ասաց մեզ այս շաբաթվա հովվական հավաքույթին, որ Սուրբ Հոգին ցույց է տվել, որ այս եկեղեցին չպետք է տնային խմբեր ունենա: Այնպես որ, սկսած այս պահից, մենք չեղարկում ենք երեկույթները:

Թվում էր՝ բոլորն արտացոլեցին իմ ոգեշնչումը և միաձայն գոչեցին.

- Այո՛... շա՛տ լավ:

Ես երբեք ոչ մի խնդիր չունեցա նրանցից որևէ մեկի հետ: Ես միակը չէի, որ աճ ունեցա այդ փորձառության արդյունքում. դա տեղի ունեցավ բոլորիս հետ: Որոշ ժամանակ անց կարողացա

պատմել նրանց, թե ինչ էր տեղի ունեցել: Այդ քսանչորս երիտասարդ ավագներից շատերն այսօր լրիվ դրույքով ծառայության մեջ են, և նրանց ծառայությունը հաջողված է:

Կոտրված և փշրված սիրտ

Ետ նայելով՝ ես համոզված եմ, որ դա շրջադարձային պահ էր իմ կյանքում և ծառայության մեջ: Եթե ես չկոտրվեի, այլ համառեի իմ դատողությամբ և շարունակեի կամակորությամբ վարվել, այսօր լիովին այլ տեղում կլինեի: Իհարկե, ի վերջո ես հարկադրված կլինեի չեղարկել այդ երեկույթները, քանի որ այլ տարբերակ չէի ունենա, բայց իմ սիրտն ընդդիմացող, հպարտ և խստացած կմնար: Երբեք չմոռանաք. Աստված ցանկանում է ոչ միայն տեսանելի հնազանդություն, այլև կոտրված և փշրված սիրտ, որը ծարաված և քաղցած է Աստծո կամքին: Այս պատճառով է, որ Դավիթը գրում է.

> «Որովհետև Դու պատարագ չես ուզում: Եթե ոչ, ես
> կտայի Քեզ...
> Աստծո ընդունելի պատարագները կոտրված հոգին է.
> Կոտրված ու փշրված սիրտը
> Դու չես անարգի, ո՛վ Աստված» (Սաղմ. 51.16,17):

Մենք կարող ենք մեծ զոհերի գնալ մեր կյանքի ընթացքում, ժամեր շարունակ ծառայել, աշխատել՝ առանց վճարի, զրկել մեզ քնից, ավելի շատ մարդկանց հասնելու միջոցներ որոնել և տարբեր բաներ անել, քանի որ ծառայության մեջ կատարվող գործերի ցանկը կարող է անվերջ լինել: Նման անձնազոհ վարք ցուցաբերելով՝ մենք հեշտորեն կարող ենք մտածել, որ մեր ջանքերը հաճելի են Աստծուն: Այնուամենայնիվ, այդ ամենի հետ մեկտեղ, մեր շարժառիթները, միևնույն է, կարող են հիմնված լինել ինքնակամության վրա:

Լսե՛ք այս խոսքերը. Աստծուն հաճելի է հպատակությունը, որը դրդում է ճշմարիտ հնազանդության: Այս գրքի նպատակն է ոչ միայն ցույց տալ, թե որքան կարևոր է հպատակվել Աստծո իշխանությանը, այլև սեր և ձգտում առաջացնել Նրա իշխանությանը հնազանդվելու հանդեպ:

Ես հասկանում եմ, որ ձեր մտքում կարող են շատ անպատասխան հարցեր լինել այն վկայության մասին, որը պատմեցի այս գլխում: Գուցե հարցնեք. «Մի՞թե աղոթքի ժամանակ Աստված չպատվիրեց ձեզ անցկացնել այդ տնային խմբերը»: Կարող են լինել նաև այլ հարցեր. «Գուցե ավագ հովիվը սխալվո՞ւմ էր եկեղեցու ուղղության վերաբերյալ: Գուցե եկեղեցու համար ավելի լավ կլիներ տնային խմբեր ունենա՞լը, և նա սխալ էր, իսկ դուք՝ ճիշտ: Գուցե նա սխալ ազդեցությա՞ն էր ենթարկվել»: Այս ուսուցման ընթացքում մենք կպատասխանենք այս և այլ հարցերի:

Այնուամենայնիվ, մինչ շարունակենք խոսել լիազորած իշխանության մասին, նախ պետք է ցույց տանք, թե որքան կարևոր է հպատակվել Աստծո անմիջական իշխանությանը: Վոչման Նին գրում է.

> «Մինչև որ մարդը կարողանա հպատակվել Աստծո լիազորած իշխանությանը, նա դեռ պետք է հանդիպի անձամբ Աստծո իշխանությանը: Մեր հարաբերությունն Աստծո հետ լիովին կարգավորվում է այն բանով՝ արդյո՞ք մենք հանդիպել ենք այդ իշխանությանը: Եթե դա տեղի է ունեցել, մենք ամենուր կտեսնենք այդ իշխանությունը, և այդպիսով զսպված լինելով Աստծուց, մենք կարող ենք գործածվել Նրա կողմից» («Հոգևոր իշխանություն» [Նյու Յորք, «Christian Fellowship Publishers», 1972]):

Առաջին հերթին մենք պետք է հաստատուն հոգևոր հիմք դնենք այն մասին, թե որքան կարևոր է հպատակվել անձամբ Աստծուն: Միայն դրանից հետո կարող ենք խոսել այն մասին, թե որքան կարևոր է հպատակվել լիազորած իշխանությանը: Սա կլինի այն անկյունաքարը, որի վրա կկառուցենք ամեն ինչ:

ԲԱԺԻՆ 2

ԱՍՏԾՈ ԱՆՄԻՋԱԿԱՆ ԾԱԾԿՈՑԸ

ԳԼՈՒԽ 3

ՄԵՂՔԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ

Եկեղեցին հաճախ շեղվում է մեղքի ամենաէական սահմանումից: Մենք չենք հասկանում դրա ճշմարիտ իմաստը:

Մի պահ եկեք մի խաղ խաղանք: Ավելի հաջող տարբերակ չլինելու պատճառով, անվանենք այն հոգեբանի և այցելուի խաղ: Դուք այցելուն եք, որը հենվել է բազմոցին, իսկ ես հոգեբանն եմ և նստած եմ աթոռին՝ ձեր կողքին: Ես մի բառ եմ ասելու, իսկ դուք պետք է ասեք առաջինը, ինչ ձեր մտքով անցնի: Պատրա՞ստ եք: Ահա այդ բառը. «մեղք»: Ի՞նչ մտաբերեցիք առաջին հերթին:

Աշխարհով մեկ անթիվ հավատացյալների և առաջնորդների հետ խոսելուց հետո կարող եմ կռահել, թե ինչ անցավ ձեր մտքով: Գուցե դուք մտածեցիք շնության, պոռնկության, պղծության կամ այլ սխալ սեռական վարքագծի մասին: Շատ հաճախ ես լսում եմ հետևյալ ողբերգական պնդումը. «Նա մեղքի մեջ ընկավ»: Սովորաբար դա վերաբերում է որևէ առաջնորդի անկմանը սեռական ոլորտում: Կարիք չկա, որ այդ մասին ինձ տեղեկացնող մարդը որևէ պարզաբանում տա. ես անմիջապես հասկանում եմ, թե ինչ է նա ակնարկում: Եկեղեցական շրջանակներում այս գաղափարը կարծես թե առաջինն է, որը մարդիկ մտաբերում են՝ լսելով *«մեղք»* բառը:

Կամ՝ գուցե դուք մտաբերեցիք հարբեցողությունը կամ թմրամոլությունը: Անկասկած, հավատացյալները մեծ մեղքեր են համարում դրանք: Գուցե ձեր մտքով անցավ խաղամոլությունը, սպանությունը, գողությունը կամ կախարդությունը: Հնարավոր է, թեև ոչ նույնքան հավանական, որ դուք մեղքերի շարքում դասեցիք ատելությունը, վեճերը, նախանձը և չներումը: Կարծում եմ՝ մենք վստահաբար կարող ենք ասել, որ այս ցուցակն արդեն իսկ բավականին մեծ է:

Ամենաէական սահմանումը չհասկանալը

Այս ամենը դիտարկելուց հետո թույլ տվեք ասել հետևյալը. Ադամն անկողին չմտավ անծանոթ կնոջ հետ Եդեմի պարտեզում, և ո՛չ էլ թմրանյութի գլանակ ծխեց: Սակայն նրա մեղքն այնքան լուրջ էր, որ դրա պատճառով ամբողջ արարչագործությունը գերության և ստրկության մեջ հայտնվեց: Մենք պետք է դիտարկենք Ադամի իրավիճակը՝ մեղքը սահմանելու համար, քանի որ նրա հանցանքի բնությունը տարածվեց ամբողջ մարդկային ցեղի երակներով: Ի՞նչ նա արեց, որ այսպիսի կործանում բերեց մարդկությանը: Պարզ ասած, նա չինազանդվեց այն բանին, ինչ Աստված պատվիրել էր իրեն:

Մի պահ մտածե՛ք այս մասին: Ես չեմ ասում, որ այն ցուցակը, որը հենց նոր մեջբերեցի, մեղք չի պարունակում, այլ շեշտադրում եմ հետևյալը. եկեղեցին հաճախ շեղվում է մեղքի ամենաէական սահմանումից: Այս գլխում կտեսնենք, որ առանց այս կարևոր կապի, մենք կարող ենք հեշտորեն խաբվել:

Թույլ տվեք այլ օրինակ բերել: Ենթադրենք, ձեր ամբողջական պատկերացումը կամ գիտելիքը հիվանդության մասին այն է, որ մարդու մարմնի ջերմաստիճանը գերազանցում է 36.6 աստիճանը՝ ըստ Ցելսիուսի, ինչն ուղեկցվում է մարմնի ընդհանուր թուլությամբ, հազով, փռշտոցով և փսխումով: Յոթ տարեկանում դա իմ ամբողջական պատկերացումն էր հիվանդության մասին, երբ իմ սիրելի տասնչորսամյա քույրը քաղցկեղի ախտորոշում ստացավ: Նրան հաճախ էին բժշկի տանում: Եվ վերջապես երկու շաբաթով հիվանդանոց պառկեցրին: Մայրս բացատրում էր ինձ. «Ջո՛նի, քո քույրը շատ հիվանդ է»: Սակայն նա տաքություն չու-

ներ, չէր հազում և չէր փռշտում: Ես չէի հասկանում, թե ինչո՞ւ էին իմ ծնողները և ավագ քույրն այդքան անհանգստանում: Որոշեցի, որ նա պարզապես հոգնած էր: Ես չհասկացա նրա հիվանդության ծանրությունը, քանի որ վերլուծեցի այն ըստ իմ գիտելիքի և փորձի:

Ես այդպես էլ լրջորեն չհասկացա դա, մինչև այն օրը, երբ ինձ՝ առաջին դասարանցի երեխային, վերցրին դասասենյակից և մեքենայով տուն տարան, և ես տեսա, որ մեր հյուրասենյակում մի քահանա էր նստած մորս և հորս կողքին: Նրանք ասացին ինձ, որ քույրս մահացել է: Այդ պահին էր, որ ես հասկացա, որ նա *շատ* հիվանդ էր: Նրա հիվանդության ամիսների ընթացքում ես չէի հասկանում, թե ինչ էր իրականում տեղի ունենում, քանի որ հիվանդության իմ սահմանումը մասնակի էր: Ես սկսեցի հարցեր տալ և ավելին իմացա: Հասկացա, որ հիվանդ մարդը նա է, ով թույլ առողջություն կամ որևէ հիվանդություն ունի: Այլևս նույն կերպով չէի դիտարկում հիվանդությունը. ես հասկացա, թե ինչ էր ներառում հիվանդության իրական սահմանումը:

Մեղքի իրական սահմանումը

Նույնը վերաբերում է եկեղեցում գտնվող մարդկանցից շատերին: Չափազանց հաճախ մենք չունենք հիմքային պատկերացում այն մասին, թե իրականում ինչ է մեղքը: Մինչև շարունակելը, պետք է պարզենք, թե ինչպես է Աստծո Խոսքը սահմանում այն: Աստվածաշունչը պնդում է. «Մեղքն անօրինություն է» (Ա Հովհ. 3.4): Այս խոսքում օգտագործվող «անօրինություն» բառը թարգմանված է հունարեն *«անոմիա»* բառից: «Թայերի հունարեն բառարանն» այսպես է սահմանում այս բառը. «առանց օրենքի [լինելու] վիճակ՝ այդ մասին անիրազեկ լինելու կամ այն խախտելու պատճառով»: Պարզ ասած, անօրինությունը նշանակում է չհպատակվել Աստծո օրենքին կամ իշխանությանը: «Վայնի բառարանը» պնդում է, որ այս աստվածաշնչյան խոսքը ներկայացնում է «այս բառի [մեղքի] իրական իմաստը»: Վայնը շարունակում է. «Մեղքի այս սահմանումը ներկայացնում է դրա էական բնույթը՝ Աստծո օրենքը կամ կամքը մերժելը և այն սեփական կամքով փոխարինելը»:

Որպես այս սահմանման հաստատում, դիտարկենք Հիսուսի առակներից մեկը: Նա սեղան էր նստած մի խումբ մարդկանց հետ, որոնցից մեկն ասաց. «Երանի՜ նրան, որ Աստծո արքայությունում հաց կուտի» (Ղուկ. 14.15):

Տերն օգտագործեց այդ մարդու խոսքերը որպես հնարավորություն՝ ասելու համար, թե ով է հաց ուտելու Գառան հարսանեկան խնջույքի սեղանին: Նա սկսեց հետևյալով. «Մի մարդ մեծ ընթրիք արեց և շատերին հրավիրեց: Եվ ընթրիքի ժամանակ իր ծառային ուղարկեց, որ հրավիրվածներին ասի. «Եկե՛ք, որովհետև արդեն ամենը պատրաստ է»» (Ղուկ. 14.16,17):

Ընթրիք անող մարդը խորհրդանշում է Հորը, իսկ ծառան՝ անձամբ Հիսուսին: «Ծառա» բառի եզակի օգտագործումը հաստատում է այս մեկնությունը: Աստվածաշունչը հստակորեն պնդում է. «Շատ մասերով և շատ կերպերով Աստված առաջուց խոսելով մեր հայրերի հետ՝ մարգարեների ձեռքով, այս վերջին օրերում խոսեց մեզ հետ Որդիով» (Եբր. 1.1,2): Հիսուսը մեր Խոսնակն է: Նրանց, ովքեր քարոզում, սովորեցնում կամ գրում են Նոր կտակարանի ժամանակաշրջանում, պատվիրված է խոսել ինչպես Աստծո հրամանները կամ խոսքերը: Մենք պետք է լսենք, թե ինչ է Նա ասում մեզ, և ճշգրտորեն փոխանցենք:

Այս առակում հայտարարվում է Հոր կամքը. «Եկե՛ք, որովհետև արդեն ամենը պատրաստ է»: Այս հայտարարությունն ուղղված է նրանց, ովքեր արդեն հրավիրված են, այսինքն՝ եկեղեցում գտնվող մարդկանց, ոչ թե անհավատներին, որոնք երբեք չեն լսել Ավետարանը:

Այնուամենայնիվ, այս մարդիկ սկսում են պատճառաբանություններ անել՝ այդ կանչին ականջ չդնելու համար. «Լսի՛ր,- ասում է առաջինը,- ես մի փոքր օղի ունեմ, թմրանյութի մի քանի գլանակ և պետք է մի լավ երեկույթի գնամ, որին անպայման ուզում եմ ներկա լինել. խնդրում եմ, ների՛ր չգալու համար»:

Երկրորդն ասում է. «Ես շահել եմ բոլոր ծախսերը ներառող ուղևորություն դեպի Լաս Վեգաս: Եվ բացի այդ, հինգ հազար դոլար ունեմ՝ մարմնավաճառների վարձելու և խաղատներում խաղալու համար, ես շատ եմ ուզում գնալ. այնպես որ, ների՛ր ինձ չգալու համար»:

Երրորդն ասում է. «Ես սիրահարվել եմ իմ քարտուղարուհուն, և մենք միասին ճանապորհորդելու ենք այս շաբաթ դեպի մի հանգստավայր Հավայան կղզիներում՝ ամբողջ շաբաթը մեր սիրուն տրամադրելու համար: Խնդրում եմ, ոչինչ չասես կնոջս. նա մտածում է, որ ես գործուղման եմ լինելու: Այնպես որ, չեմ կարող գալ»:

Մի՞թե նրանք նման բաներ էին ասում: Եթե կարդաք ձեր Աստվածաշունչը, կտեսնեք, որ նրանց պատասխանները բոլորովին այլ էին: Եկեք ուսումնասիրենք յուրաքանչյուրը:

«Առաջինն ասաց. «Ագարակ առա»: Ուզում եմ մի հարց տալ, մինչև առաջ անցնելը. մի՞թե հողակտոր գնելը մեղք է: Եթե այո, մեզնից շատերը փորձանքի մեջ են: Պատասխանն է՝ ոչ: Բոլորս գիտենք դա: Կարդանք նրա ամբողջ պատասխանը. «Ագարակ առա և պետք է գնամ ու տեսնեմ: Աղաչում եմ քեզ, ինձ հրաժարված համարիր» (խոսք 18): Ինչպես նշեցի, հողակտոր գնելը մեղք չէ, բայց երբ մեր ձգտումն ունեցվածքին ավելի կարևոր է դառնում, քան Աստծո Խոսքին անմիջապես հնազանդվելը, դա համապատասխանում է մեղքի ամենաէական սահմանմանը: Այն անօրինություն է՝ անհնազանդություն Աստծո իշխանությանը:

Մյուսը չէր պատրաստվում ուղևորության՝ մոլախաղերով տարվելու և մարմնավաճառների վարձելու համար: Նա ասաց. «Հինգ լուծ եզ առա և գնում եմ, որ նրանց փորձեմ: Աղաչում եմ քեզ, ինձ հրաժարված համարիր» (խոսք 19): Մի՞թե եզներ կամ ցանկացած անհրաժեշտ սարքավորանք գնելը մեղք է: Իհարկե՝ ոչ, բայց երբ աշխատանքը կամ սեփական գործն ավելի կարևոր է դառնում, քան Աստծո կամքին անմիջապես հնազանդվելը, դա մե՛ղք է: Հիշեք՝ Ադամը միասեռ մարմնավաճառի չվարձեց Եդեմի պարտեզում. նա պարզապես չհնազանդվեց Աստծո ասածին:

Վերջինն ասաց. «Կին եմ առել և դրա համար չեմ կարող գալ» (խոսք 20): Մի՞թե ամուսնանալը մեղք է: Իհարկե՝ ոչ: Եթե այդպես լիներ, մեզնից շատերը մեծ փորձանքի մեջ կլինեին: Այնուամենայնիվ, երբ կողակցին հաճեցնելը ավելի կարևոր է դառնում, քան Աստծո կամքին հնազանդվելը, դա մեղք է: Կրկին, հիշեք Եդեմի պարտեզը: Եվան խաբվեց (տե՛ս Բ Կորնթ. 11.3), բայց Ադամի հետ այլ բան տեղի ունեցավ. «Ադամը չխաբվեց» (Ա Տիմոթ. 2.14): Աստվածաշունչն ասում է Ադամի մեղքի բնույթի մա-

սին. «Որովհետև, ինչպես որ մեկ մարդու անհնազանդությամբ շատերը մեղավորներ եղան...» (Հռոմ. 5.19): Ադամն անհնազանդ եղավ, քանի որ նրա կինն արդեն կերել էր այդ պտղից և ուզում էր, որ ինքն էլ նույնը աներ: Նա նախապատվություն տվեց իր կնոջը ավելի, քան Աստծո իշխանությանը հնազանդվելուն: Դա մեղք է: Ադամի անհնազանդության արդյունքում «շատերը մեղավորներ եղան», կամ՝ կարելի է այսպես ասել. «շատերը դարձան անօրեն և անհնազանդ Աստծո իշխանությանը»: Սա է իրական մեղքը: Այս առակում Հիսուսը ցույց տվեց, որ այդ մարդը նախապատվություն տվեց իր կնոջը ավելի, քան Աստծո խոսքին հնազանդվելուն:

Այժմ լսեք, թե ինչ ասաց Հիսուսն այն մարդկանց մասին, որոնք շատ քաղաքավարի պատճառաբանություններ արեցին, սակայն չհնազանդվեցին Աստծո կանչող ձայնին և Նրա իշխանությանը: «Որովհետև ասում եմ ձեզ, թե այն կանչված մարդկանցից ոչ մեկն Իմ ընթրիքը չի ճաշակի» (Ղուկ. 14.24): Որքա՜ն զգաստացնող է: Այդ մարդկանց թույլ չէր տրվելու ընթրել այն հարսանեկան խնջույքին, որին նրանք պատվավոր հրավերներ էին ստացել: Նրանց մուտքը Գառան հարսանեկան խնջույքին արգելվելու էր՝ ոչ թե սխալ սեռական վարքագծի, թմրանյութերի կամ ոգելից խմիչքի չարաշահման պատճառով, այլ պարզապես Աստծո Խոսքին անհնազանդ լինելու պատճառով: Ինչո՞ւ սա պետք է զարմացնի մեզ: Եթե լրջորեն մտածենք այս մասին, մի՞թե Ադամի անհնազանդությունը չէր, որ մեծագույն դատաստանը բերեց մարդկության վրա:

Հետաքրքիր է, որ այս առակում չկա որևէ հիշատակում թմրամոլների, մարմնավաճառների, կավատների, հարբեցողների և գողերի մասին, ճի՞շտ է:

Ո՛չ, սխա՛լ է:

Եթե շարունակեք կարդալ, կնկատեք, որ ծառան զեկուցեց իր տիրոջը՝ պատմելով բոլոր պատճառաբանությունները: Այդ տան տերը պատվիրեց իր ծառային. «Դուրս գնա ճանապարհները և ցանգերը և ստիպի՛ր, որ մտնեն, որ իմ տունը լցվի» (Ղուկ. 14.23): Ճանապարհների և արահետների մարդիկ խորհրդանշում են մարմնավաճառներին, կավատներին, գողերին, ավազակախմբերի անդամներին, մարդասպաններին, հարբեցողներին և այ-

լոց: Պարզվում է՝ նրանք կան այս առակում, բայց դրական իմաստով:

Տերը գիտի, որ այս վերջին օրերում այդ մարդկանցից շատերը կգիտակցեն, որ իրենց կյանքերը դատարկ են և տրտմությունից բացի ոչինչ չեն բերել իրենց, և որ իրենք հոգնել են մեխերին ոտքով հարվածելուց: Երբ նրանք լսեն Տիրոջ կանչը, կարձագանքեն ակնթարթային հնազանդությամբ: Ի հակադրություն, հրավիրվածները՝ ովքեր եկեղեցի են հաճախում, համարում են, որ աստվածապաշտ են և ապահով են Աստծո շնորհքի մեջ, բայց հնազանդվում են Աստծուն, միայն՝ երբ դա հարմար է իրենց կամ չի խանգարում իրենց օրակարգին, ծրագրերին, օրհնություններին և հաճույքներին, կհայտնվեն Ադամի հետ՝ հեռացված Աստծո փառավոր ներկայությունից:

«Կգնա՛մ, տե՛ր»

Հարսանեկան խնջույքի առակը հայտնում է մեղքի ճշմարիտ սահմանումը՝ որպես անհնազանդություն Աստծո իշխանությանը: Հիսուսը պարզորեն ցույց տվեց սա ևս մեկ առակում, որը Նա սկսեց «Ինչպե՞ս է երևում ձեզ» հարցով: Այդ բացման խոսքերով Նա փորձում էր դրդել Իր արտաքնապես արդար ունկնդիրներին ավելի խորը նայել և տեսնել ճշմարտությունը իրենց իսկ պատասխանի մեջ:

Հիսուսի առակը մի հոր մասին էր, որը երկու որդի ուներ: Հայրը գնաց իր առաջին որդու մոտ և ասաց. «Որդի՛ս, գնա՛ այսօր իմ այգում աշխատիր»:

Որդին պատասխանեց. «Չե՛մ գնա», սակայն ավելի ուշ մտափոխվեց, թողեց այն, ինչ անում էր, և աշխատեց նրա այգում:

Հայրը մոտեցավ երկրորդ որդուն և խնդրեց նրանից նույնը: Որդին պատասխանեց իր հորը. «Կգնա՛մ, տե՛ր»: Թվում է՝ նա հրաշալի որդի էր և, անկասկած, հարգանքով էր խոսում իր հոր հետ: Սակայն Հիսուսն ասաց, որ նա չգնաց:

Եվ Հիսուսը տվեց հետևյալ կարևորագույն, բայց ակնհայտ պատասխան ունեցող հարցը. «Այդ երկուսից ո՞վ կատարեց իր հոր ուզածը»:

Այն խումբը, որին Նա դիմում էր, ճիշտ պատասխանեց. «Առաջինը»:

Հիսուսն անմիջապես անցավ հարցի էությանը և ասաց. «Ճշմարի՛տ ասում եմ ձեզ, մաքսավորները և պոռնիկները ձեզնից առաջ կմտնեն Աստծո թագավորությունը» (Մատթ. 21.28-31): Ակնհայտ է, որ յուրաքանչյուր ծնող կգերադասեր, որ իր որդին ասեր. «Կգնա՛մ, տե՛ր», և ուրախությամբ գնար՝ ոչ թե միայն հնազանդվելով այդ հանձնարարությանը, այլև հոժարակամ շարժառիթ ունենալով: Այնուամենայնիվ, այս առակը ցույց տվեց այդ առաջնորդներին, որ մեղքի ամենաէական սահմանումը անհնազանդությունն է Աստծո իշխանությանը: Այն չի սահմանափակվում շնությամբ, սպանությամբ, գողությամբ և այլ բաներով:

Այդ առաջնորդները հպարտ էին և ինքնավստահ, քանի որ իրենք չէին գտնվում այն բաների ծուղակում, ինչն իրենք «ծանր մեղքեր» էին համարում: Այնուամենայնիվ, մեղքը մասնակիորեն սահմանելու պատճառով նրանք հեշտորեն խաբվել էին և մեղք էին գործում, ինչից, իրենց պնդմամբ, ջանասիրաբար խուսափում էին՝ մեղք կամ անհնազանդություն աստվածային իշխանությանը:

Իսկ «մե՞ծ մեղքերը»

Մենք կարող ենք կարդալ ամբողջ Աստվածաշունչը և շարունակ գտնել այս նույն ուղերձը: Գուցե մտածեք. *«Իսկ սո՛ւտը, հարբեցողությո՛ւնը, շնությո՛ւնը, գողությո՛ւնը, սպանությո՛ւնը: Մի՞թե դրանք մեղքեր չեն»:* Իհարկե՝ մեղքեր են: Դրանք նույնպես հակառակ են Նրա իշխանությանը: Նույն Աստված պատվիրում է մեզ թողնել սուտը և խոսել «ճշմարտությունը՝ ամեն մարդ իր ընկերոջ հետ» (Եփես. 4.24,25): Ինչ վերաբերում է հարբեցողությանը, Նա պատվիրում է. «Մի՛ հարբեք գինով» (Եփես. 5.18): Շնության վերաբերյալ Նա զգուշացնում է. «Փախե՛ք սեռական անբարոյությունից» (Ա Կորնթ. 6.18, NKJV): Իսկ գողությունը: «Նա, որ գողանում էր, թող է՛լ չգողանա» (Եփես. 4.28): Ինչ վերաբերում է սպանությանը, մեզ պատվիրված է. «Նա, որ իր եղբորն ատում է, մարդասպան է, և գիտեք, որ ամեն մարդասպան հավիտենական կյանք չունի հաստատված իրենում» (Ա Հովհ. 3.15): Նոր կտակարանը շեշտադրում է, որ այսպիսի բաներ գործող մարդիկ Աստծո թագավորությունը չեն ժառանգելու (տե՛ս Ա Կորնթ. 6.9-11, Գաղատ. 5.19,21, Հայտն. 21.8): Այնուամենայնիվ, բաց չթողնենք

մեր ուշադրությունից այն փաստը, որ ոչ միայն «մեծ» կոչվող մեղքերը, այլև ցանկացած մեղք կործանարար է:

Վերադառնանք հոգեբանի և այցելուի մեր խաղին: Բազմոցին հենված այցելուն, որը հասկանում է, թե ինչ է մեղքը, կարող է պատրաստակամորեն պատասխանել. «Անհնազանդություն աստվածային իշխանությանը»: Նա հասկանում է այդ կապը մեղքի և անօրինության միջև:

Անօրինության օրերը

Հիսուսի աշակերտները հարցրին Նրան աշխարհի վերջի մասին: Նա պատասխանեց՝ պատմելով նրանց այն իրադարձությունները, որոնք տեղի էին ունենալու, և նկարագրելով այն պայմանները, որոնք գերակշռող էին լինելու Իր Երկրորդ գալստյանը նախորդող օրերին: Այդ պայմաններից մեկը հետևյալն էր. «Եվ անօրինության շատանալու պատճառով շատերի սերը կսառչի: Բայց ով որ մինչև վերջ համբերի, նա կփրկվի» (Մատթ. 24.12,13):

Երբ հարցնում եմ եկեղեցիներում, թե արդյո՞ք սա վերաբերում է այսօրվա հասարակությանը, մարդիկ պատրաստակամորեն ձեռք են բարձրացնում և գլխով են անում. շատերը համարում են, որ մեր հասարակությունը մեղավոր է: Շատ քչերն են (եթե նման մարդիկ ընդհանրապես լինում են), որ վիճարկում են, թե արդյո՞ք այս պնդումը հենց դա է նշանակում: Այնուամենայնիվ, այս պնդումն անելով՝ Հիսուսը չէր խոսում հասարակության մասին: Նա խոսում էր եկեղեցո՛ւ մասին: Գուցե մտածեք, թե ինչպե՞ս կարող եմ նման եզրակացություն անել: Երկու հստակ պնդումներ այս երկու խոսքերում ցույց են տալիս, որ Նա նկատի ուներ եկեղեցուն, ոչ թե ընդհանուր հասարակությանը:

Առաջինը հետևյալ բանալի պնդումն է. «շատերի *սերը* կսառչի»: Այս խոսքում օգտագործվող «սեր» բառը թարգմանված է հունարեն *«ագապե»* բառից: Վ. Է. Վայնը, որը հունարենի մասնագետ էր, գրում է, որ *«ագապե» բառն* օգտագործվում է «հայտնության Հոգու կողմից... նախկինում անհայտ գաղափարներ արտահայտելու համար»: Հիշեք՝ Հիսուսն ասաց. «Նոր պատվիրան եմ տալիս ձեզ, որ իրար սիրեք [*«ագապատ»*՝ «ագապե» գոյականի բայաձևը]. ինչպես Ես ձեզ սիրեցի, որ դուք էլ իրար սիրեք»

(Հովհ. 13.34): Այս սերը նախկինում հայտնի չէր մարդկությանը. Հիսուսն էր, որ բերեց այն: Նա սահմանում է այն «Ինչպես որ Ես սիրեցի ձեզ» արտահայտությամբ: Վայնը շարունակում է. «Այս սերն արտահայտում է կատարյալ Էակի խորը և մշտական «սերը» և հետաքրքրությունը նրանց հանդեպ, որոնք բացարձակապես անարժան են»: Ըստ էության, խոսքն Աստծո անպայմանական սիրո մասին է՝ այն սիրո, որը սփռվեց մեր սրտերում Սուրբ Հոգով, որին, ինչպես Հիսուսն ասաց, «աշխարհը չի կարող ընդունել» (Հռոմեացիների 5.5, Հովհաննես 14.17): Ըստ էության, այս սերը կարող է լինել միայն նրանցում, ովքեր ընդունել են Հիսուս Քրիստոսին՝ որպես իրենց Փրկչի:

Կան այլ հունարեն բառեր, որոնք թարգմանված են «սեր» բառով Նոր կտակարանում: Այնուամենայնիվ, դրանցից յուրաքանչյուրը կարող է հեշտորեն օգտագործվել անհավատների վերաբերյալ, ինչպես և հավատացյալների: Դրանցից մեկը *«ֆիլեո»* բառն է: Այս աշխարհը, ըստ Վ. Է. Վայնի, «տարանջատվում է *«ագապոից»* այն բանով, որ *«ֆիլեոն»* ավելի շուտ նշանակում է «զգացմունքային սեր»: *«Ֆիլեոն»* երբեք չի օգտագործվում, երբ մարդկանց պատվիրվում է «սիրել» Աստծուն»: Այս բառը չի օգտագործվում բացառապես հավատացյալների վերաբերյալ, ինչպես *«ագապե» բառը:*

Հիսուսի՝ «Անօրինության շատանալու պատճառով շատերի սերը կսառչի» պնդման մեջ «սեր» բառը թարգմանված է ոչ թե հունարեն *«ֆիլեո»* բառից, այլ *«ագապե»* բառից: Հիսուսը նկատի չուներ հասարակությանը, այլ նկատի ուներ եկեղեցուն: Նա ասում էր, որ վերջին օրերում անօրինությունը շատանալու է եկեղեցում:

Մենք չենք կարող անտեսել Նրա այլ համարժեք պնդումները: Դրանցից մեկը Մատթեոսի Ավետարանում է. «Ոչ թե ամեն Ինձ «Տեր, Տեր» ասողը կմտնի Երկնքի արքայություն, այլ նա, ով կատարում է Իմ Հոր կամքը, որ Երկնքում է» (Մատթ. 7.21):

Այս պնդումն անվավեր է դարձնում մեր ընդհանուր պատկերացումը և սահմանումն այն մասին, թե ով է փրկված: Մենք սովորեցրել և հավատացել ենք, որ անհրաժեշտ է միայն դավանել «մեղավորի աղոթքը»՝ Երկնքում ձեր տեղն ապահովելու համար: Մենք անտեսել ենք կամ բոլորովին չենք շեշտադրել Նրա պատվիրան-

ները պահելու պարտավորությունը: Այս ոչ լիարժեք ավետարանական ուղերձը մոլորեցնում է շատերին՝ դրդելով նրանց թեթևորեն վերաբերվել հնազանդությանը: Հիսուսն ասաց, որ Երկնքում լինելու են այն մարդիկ, որոնք *դավանում են* և *կատարում են* Աստծո կամքը, այսինքն՝ պահում են Աստծո պատվիրանները:

Ճշմարիտ շնորհքը տրվել է, որպեսզի մենք զորություն ունենանք հնազանդվելու այն ամենին, ինչ Նա պահանջում է մեզնից: Եբրայեցիների թղթի հեղինակը լավագույնս ձևակերպում է սա. «Եկեք շնորհք ունենանք, որով կարող ենք ընդունելի կերպով ծառայել Աստծուն» (Եբր. 12.28, NKJV): Շնորհքը զորացնում է մեզ, որպեսզի ծառայենք Աստծուն ընդունելի կերպով, այսինքն՝ համաձայն Նրա կամքի:

Հիսուսը շարունակեց՝ ասելով. «Շատերը կասեն Ինձ այն օրը. «Տեր, Տեր», չէ՞ որ Քո անունով մարգարեացանք, և Քո անունով դևեր հանեցինք, և Քո անունով շատ զորություններ գործեցինք» (Մատթ. 7.22):

Այս խոսքում գրված է ոչ թե մի քանիսի, այլ շատերի մասին: Հիշո՞ւմ եք *«շատերը»* բառը նախորդ հատվածից. «Շատերի սերը կսառչի»: Այս բազմությունները կասեն Հիսուսին. «Տեր, մի՞թե մենք չէինք մարգարեացել, դևեր հանել և հրաշքներ գործել Քո անունով»: Անհավատը չի կարող դևեր հանել Հիսուսի անունով (տե՛ս Գործք 19.13-17): Կրկին, Նա նկատի ունի եկեղեցում գտնվող մարդկանց:

Այդ ժամանակ Նա կասի այդ դավանող քրիստոնյաներին. «Ինձնից դե՛ն գնացեք, ո՛վ անօրինություն գործողներ» (Մատթ. 7.23): Ուշադրություն դարձրեք, թե ինչ են նրանք գործում. *անօրինություն:* Այլ կերպ ասած, նրանք նման են այն մարդկանց, որոնց մասին գրված է հարսանեկան խնջույքի առակում, որոնք կարևորում էին իրենց նպատակները, հաճույքը և ծրագրերն ավելի, քան Տիրոջ պատվիրանները: Այսօր սա սովորական կամ բնական վարք է թվում: Պարզ ասած, նրանք չեն ապրում ըստ իրենց դավանության, այսինքն՝ չեն հնազանդվում Նրա իշխանությանը: Նրանք հնազանդվում են այն բաներին, որոնք հարմար են իրենց ծրագրերին: Նրանք չեն գիտակցում իրենց անօրինությունը: Ցավով եմ ասում, բայց այսօր չափազանց շատ դավանող քրիստոնյաներ այս վիճակում են:

Երկրորդ պատճառը, որով մենք գիտենք, որ Հիսուսը նկատի ուներ եկեղեցուն, Նրա հաջորդ պնդումն է. «Բայց ով որ մինչև վերջ համբերի, կփրկվի»: Որևէ ընթացքի վերջին հասնելու համար դուք պետք է սկսեք այն: Անհավատները դեռ պետք է սկսեն քրիստոնեական ընթացքը:

Մոլորության ցնցումը և զարհուրանքը

Երբ Հիսուսը և առաքյալները դիմում են վերջին օրերի մարդկանց, մենք գտնում ենք կրկնվող զգուշացումներ այն երևույթի դեմ, որը լավագույնս նկարագրում է նրանց ժամանակվա մթնոլորտը. խոսքը *մոլորության* մասին է: Համատարած մոլորության պատճառներից մեկը մեղքի իրական իմաստի հիմքային թյուրըմբռնումն է: Այն շատ չի տարբերվում իմ քրոջ մասին ունեցած իմ պատկերացումից: Ես ցնցված էի, երբ տուն եկա և իմացա, որ նա մահացել է, քանի որ ես երբեք չէի ընդունել այն փաստը, որ նա ծանր հիվանդ էր:

Այս կապակցությամբ ես մի վերապրում ունեցա 1980-ական թվականների ավարտին: Աղոթքի մեջ մի զգաստացնող հոգևոր տեսիլք ստացա, որը փոխեց իմ կյանքի և ծառայության ընթացքը: Ես տեսա մարդկանց բազմություն, որոնք չափազանց շատ էին՝ հաշվելու համար. երբեք նման մեծաթիվ բազմություն չէի տեսել: Նրանք հավաքված էին Երկնքի դռների մոտ՝ սպասելով մուտք գործելուն, և ակնկալում էին, որ Տերն ասեր. «Եկե՛ք, ո՛վ Իմ Հոր օրհնածներ, ժառանգե՛ք աշխարհի սկզբից ձեզ համար պատրաստված Թագավորությունը» (Մատթ. 25.36): Բայց փոխարենը նրանք լսեցին Տիրոջից. «Ինձնից դե՛ն գնացեք, ո՛վ անօրինություն գործողներ»: Ես տեսա նրանց հայացքները՝ համակված ահավոր ցնցումով, զարհուրանքով և սոսկումով: Նրանք իրապես հավատում էին, որ ժառանգելու էին Երկինքը, քանի որ դավանել էին Հիսուսի իշխանությունը և իրենց քրիստոնեական հավատքը: Այնուամենայնիվ, նրանք չէին հասկանում մեղքի իրական կամ հիմքային իմաստը: Թեև փափագում էին Երկնքին, սակայն չունեին Հոր կամքը հնազանդությամբ կատարելու ձգտում:

Աստված փնտրում է զավակների, որոնց սրտերը փափագում են հնազանդությամբ վարվել: Անկախ այն բանից, թե կյանքի որ

բնագավառին է դա վերաբերում, մենք՝ հավատացյալներս, պետք է բերկրանքով կատարենք Նրա կամքը: Իր կյանքի ավարտին, որը լի էր հաջողությամբ՝ հնազանդության շնորհիվ, և դժվարություններով՝ անհնազանդության պատճառով, Սողոմոնն իմաստուն խոսքեր ասաց, որոնք հաստատ են բոլոր ժամանակների համար. «Ամբողջ խոսքի վախճանը լսե՛ք. Աստծուց վախեցի՛ր և Նրա պատվիրանները պահի՛ր, որովհետև սա է ամեն բան մարդու համար» (Ժողով. 12.13):

Մատթեոսի 7.23-ն ամբողջությամբ հետևյալն է. «Եվ Ես այն ժամանակ պարզ կասեմ նրանց, թե՝ երբե՛ք ձեզ չեմ ճանաչել. Ինձնից դե՛ն գնացեք, ո՛վ անօրինություն գործողներ»: Ոմանք կարող են չհամաձայնել՝ ասելով, որ սա չի կարող վերաբերել հավատացյալներին, քանի որ Հիսուսն ասաց. «Երբե՛ք ձեզ չեմ ճանաչել»: Հիշեք՝ անհավատները չեն կարող դևեր հանել Հիսուսի անունով: Ինչ վերաբերում է Հիսուսի՝ «Երբե՛ք ձեզ չեմ ճանաչել» խոսքերին, կարևոր է հասկանալ, որ այս խոսքում օգտագործվող «ճանաչել» բառը թարգմանված է հունարեն *«գինոսկո»* բառից: Այս բառն օգտագործվում է՝ նկարագրելու համար սեռական հարաբերությունը տղամարդու և կնոջ միջև Նոր կտակարանում (տե՛ս Մատթ. 1.25): Այն մտերմություն է խորհրդանշում: Հիսուսն իրականում նկատի ուներ. «Ես երբե՛ք մտերմորեն չեմ ճանաչել ձեզ»: Առաջին Կորնթացիների 8.3-ում գրված է. «Բայց եթե մեկն Աստծուն սիրի, նա ճանաչված է Նրանից»: «Ճանաչված» բառն այս խոսքում թարգմանված է նույն հունարեն *«գինոսկո»* բառից: Աստված մտերմորեն ճանաչում է նրանց, ովքեր սիրում են Իրեն: Նրան սիրողներն այն մարդիկ են, որոնք հպատակվում են Նրա իշխանությանը՝ հնազանդվելով Նրա խոսքերին: Հիսուսն ասաց. «Ինձ չսիրողն Իմ խոսքերը չի պահում» (Հովհ. 14.24):

ԳԼՈՒԽ 4

ԱՆՕՐԻՆՈՒԹՅԱՆ ԳԱՂՏՆԻ ՈՒԺԸ

Ոչ թե փոխանցված, այլ հայտնված գիտելիքն է մեր լավագույն պաշտպանությունը մոլորությունից:

«Վերջին օրեր» արտահայտությունը հաճախ է հանդիպում Աստվածաշնչում: Շատ հնարավոր է, որ այս օրերը լինեն ամենից ոգեշնչող, ինչպես նաև զարհուրելի օրերը մարդկության պատմության մեջ: Ոգեշնչող, քանի որ մենք ականատես ենք լինելու Աստծո փառքի մեծագույն հայտնությանը, որը ոչ մի սերունդ դեռ չի վերապրել, և այն ուղեկցվելու է մարդկանց աներևակայելի հունձքով: Դա լինելու է փառքի և ուրախության, դատաստանի և երկյուղի ժամանակաշրջան:

Զարհուրելի, քանի որ Պողոս առաքյալը պարզորեն ասաց մեզ. «Հետին օրերում չար ժամանակներ կգան» (Բ Տիմոթ. 3.1): Այս պնդումից առաջ նա ասաց. *«Սա իմացիր...»*: Այլ կերպ ասած, ուշադրություն դարձրու այն բանին, ինչ գրում եմ. մտապահիր սա: Նա շարունակեց մանրամասնորեն ներկայացնել այս չարիքը երրորդ գլխում: Զարհուրելի ժամանակների պատճառը չեն լինելու կառավարության կամ աթեիստների հալածանքները: Չար ժամանակների պատճառը լինելու է համատարած *մոլորությունը*

եկեղեցու ներսում: Այս զգուշացումը շարունակ հնչում է ամբողջ Նոր կտակարանում:

Մոլորությունը սարսափելի բան է: Ինչո՞ւ: Քանի որ այն մոլորեցնո՞ւմ է: Խաբված մարդն ամբողջ սրտով հավատում է, որ ինքը ճիշտ է, այնինչ, իրականում, սխալ է: Ավետարաններում Հիսուսը շարունակ զգուշացնում է մոլորության դեմ: Միայն Մատթեոսի 24-րդ գլխում Նա չորս անգամ խոսեց դրանից զգուշանալու մասին: Երբ Նրա աշակերտները հարցրին Նրա վերադարձի մասին, առաջինը, ինչ Նա ասաց՝ նկարագրելով մեր ժամանակները, հետևյալն էր. «Զգո՛ւյշ կացեք, որ մեկը ձեզ չխաբի» (Մատթ. 24.4): Կարելի է հեշտորեն զգալ, թե որքան հրատապ է Նրա զգուշացումը: Նա խոսում էր լուրջ և հանդիսավոր կերպով: Նա ուզում էր, որ Իր խոսքերը դրոշմվեին նրանց սրտերին և մշտապես նրանց աչքերի առջև լինեին: Նրա խոսքերը հազարավոր տարիներ հաստատուն մնացել են, և մենք իմաստությամբ կվարվենք, եթե չանտեսենք Նրա խորհուրդը:

Երկու կարևոր հարց

Մենք պետք է երկու կարևոր հարց տանք: Առաջինը՝ ո՞րն է մոլորության արմատական պատճառը: Երկրորդը՝ ինչո՞ւ է մոլորությունը կարողանում անվերահսկելի կերպով տարածվել: Ի պատասխան առաջին հարցին, մոլորության արմատական պատճառը հենց այն է, ինչի մասին մենք խոսում էինք նախորդ գլխում՝ անհնազանդությունը աստվածային իշխանությանը, կամ՝ անօրինությունը: Աստծո Խոսքը հորդորում է մեզ.

> «Բայց Խոսքն անո՛ղ եղեք, ոչ միայն լսողներ՝ ձեր անձերը խաբելով» (Հակոբ. 1.22):

Ինչպիսի՜ սթափեցնող պնդում: Աստվածաշունչն ասում է, որ երբ մարդը *լսում է* Աստծո Խոսքը, սակայն *չի հնազանդվում,* մոլորությունը մուտք է գործում նրա սիրտը և միտքը: Նա սկսում է ապրել այն համոզմամբ, որ ինքը միանգամայն ճիշտ է, այնինչ, իրականում, մոլորված է: Նա ստով է փոխարինում ճշմարտությունը: Երբ չկա ճշմարիտ հնազանդություն Աստծո իշխանությանը, ինչը նաև ընդգրկում է Նրա Խոսքի իշխանությունը, դուռ է

բացվում աննկատ, բայց մեծ մոլորության համար:

Ինչո՞ւ է մոլորությունը խիստ տարածված լինելու վերջին օրերում: Պողոսն ասաց մեզ, որ շատերը մոլորվելու են, որովհետև «ճշմարտության սերը չընդունեցին» (Բ Թեսաղ. 2.10): Հետաքրքիր է նշել, որ մոլորությունը առաջանալու է ոչ թե ճշմարտությունը չընդունելուց, այլ ճշմարտությունը չսիրելուց: Ճշմարտությունը սիրելը նշանակում է ոչ միայն հաճույքով լսել այն, այլև սիրով հնազանդվել: Աստված ասաց մի մարգարեի.

> «Ինչ վերաբերում է քեզ, մարդո՛ւ որդի, քո ժողովրդի զավակները զրուցում են քո մասին պատերի մոտ և տների դռներում, և նրանք խոսում են քո մասին՝ յուրաքանչյուրն ասելով իր եղբորը. «Եկ գնանք և լսենք, թե որն է Տիրոջից եկող խոսքը»: Եվ նրանք գալիս են քեզ մոտ՝ որպես ժողովուրդ, նրանք նստում են քո առջև՝ որպես Իմ ժողովուրդը, և նրանք լսում են քո խոսքերը, բայց չեն կատարում, որովհետև իրենց բերանով նրանք մեծ սեր են ցույց տալիս, բայց իրենց սրտերը իրենց շահին են ձգտում» (Եզեկ. 33.30,31, NKJV):

Շատերը մեր եկեղեցիներում սիրում են լավ քարոզներ և ուսուցումներ, բայց գործնականում շարունակում են սիրել իրենց ճանապարհներն ավելի, քան Աստծո կամքը (տե՛ս Բ Տիմոթ. 3.1-4): Մենք պետք է սիրենք ճշմարտությունը ավելի, քան ցանկացած անձի կամ ցանկացած բան: Մենք պետք է եռանդուն կերպով ձգտենք Նրա կամքին ավելի, քան մեր հարմարավետությանը կամ մեր կյանքին: Այդ դեպքում մենք ուրախությամբ կհրաժարվենք մեր ցանկություններից՝ Նրա ցանկությունները կատարելու համար: Մենք կվերցնենք մեր խաչը և կհրաժարվենք մեր իրավունքներից և արտոնություններից՝ Նրա կամքը կատարելու համար: Ինչո՞ւ: Քանի որ Նա Աստված է՝ մեզ Ստեղծողը և մեր Փրկիչը, և Նրա սերը մեր հանդեպ կատարյալ է: Միայն սա է պահում մեզ մոլորությունից:

Բայց մի՞թե մենք այսպիսի նվիրում ենք տեսնում ժամանակակից հավատացյալների կյանքում: Իրականությունը մեծապես տարբերվում է դրանից: Զարմանալի է, որ Աստվածաշնչի հեղինակները շատ ավելի հստակ տեսան մեր օրերը, քան մենք ենք տեսնում:

Անօրինության գաղտնի ուժը

Գոյություն ունի ևս մեկ գործոն, որը պետք է հաշվի առնենք, որպեսզի հասկանանք, թե ինչու է անօրինությունը այդքան տարածված մեր օրերում: Աստծո Խոսքը զգուշացնում է մեզ. «Որովհետև անօրինության գաղտնի ուժն արդեն գործում է» (Բ Թեսաղ. 2.7, NIV): Այս խոսքում օգտագործվող «անօրինություն» բառը թարգմանված է նույն հունարեն *«անոմիա»* բառից, որն ուսումնասիրեցինք նախորդ գլխում: Ուշադրություն դարձրեք, որ անօրինության ետևում գաղտնի ուժ կամ զորություն կա: Դասական թարգմանությունների մեջ գրված է «անօրինության խորհուրդը»: Անօրինության խորհուրդն իր թաքնված ուժն է: Հավատացյալների դեպքում անօրինությունն արդյունավետ չէր լինի, եթե այն բացահայտ լիներ. այն արդյունավետ է միայն աննկատ և խաբուսիկ լինելու դեպքում: Ահա թե որն է դրա խորհուրդը: Քանի որ Աստված չի ցանկանում, որ մենք անտեղյակ լինենք այս խորհրդից կամ գաղտնի ուժից, Նա զգուշացնում է մեզ (տե՛ս Բ Կորնթ. 2.11):

Սատանան մոլորության վարպետ է: Մտածե՛ք այն մասին, որ նա Աստծո դեմ ապստամբության դրդեց հրեշտակների մեկ երրորդին (տե՛ս Հայտն. 12.3,4): Դա տեղի ունեցավ կատարյալ միջավայրում՝ անմիջապես մեր փառավոր Տիրոջ ներկայության մեջ: Հիսուսը զգուշացրեց, որ սատանան ոչ միայն ստախոս է, այլև ստի հայրն է (տե՛ս Հովհ. 8.44): Հիսուսը նաև զգուշացրեց, որ վերջին օրերում սատանայի մոլորությունները և ստերն այնքան ազդեցիկ են դառնալու, որ նույնիսկ ընտրյալները կարող են դրանց զոհը դառնալ (տե՛ս Մատթ. 24.24):

Ինչո՞ւ մենք պետք է զարմանանք: Եթե նա կարողացավ մոլորեցնել միլիոնավոր հրեշտակների երկնքում, մի՞թե նրա համար դժվար կլինի մոլորեցնել բազմությունների այս երկրային միջավայրում, որտեղ նա կոչվում է «օդի իշխանության իշխանը» (Եփես. 2.2): Այժմ մենք ապրում ենք հենց այն օրերում, որ Հիսուսը նկատի ուներ. այնպես որ, եկեք մանրամասնորեն ուսումնասիրենք Պողոսի եռանդագին խոսքերը Կորնթոսի եկեղեցուն.

> «Բայց վախենում եմ՝ միգուցե ինչպես օձն իր խորամանկությամբ խաբեց Եվային, այնպես էլ ձեր միտքն ապականվի» (Բ Կորնթ. 11.3):

Պողոսը համեմատեց հավատացյալների խոցելիությունը Եվային մոլորեցնելու հետ: Անկասկած, սատանայի ամենատպավորիչ ձեռքբերումներից մեկը Եվային խաբելն էր: Եվան ապրում էր կատարյալ միջավայրում՝ ազատ դիվային իշխանությունից և ազդեցությունից: Նա ապրում էր Աստծո անմիջական ներկայության մեջ, և մարմնական բնությունը չէր սահմանափակում նրան: Նա երբեք որևէ տեսակի վիրավորանք չէր ստացել, ոչ ոք չէր բռնաբարել նրան, չէր գողացել նրանից, չէր բամբասել նրա մասին, կոպտորեն չէր խոսել նրա հետ և չէր գործել շատ այլ հանցանքներ նրա դեմ, որոնք կարող են տեղի ունենալ մեր անկում ապրած աշխարհում: Նրան ապստամբության դրդեց սատանայի՝ թերևս ամենանենգ հնարներից մեկը: Սատանան դիմեց աննկատ և խորամանկ մարտավարության՝ Եվայի մտքի մաքրությունն ապականելու համար: Եթե հասկանանք այն մարտավարությունը, որը նա օգտագործեց Եվայի դեպքում, մենք կբացահայտենք նրա ամենաարդյունավետ զենքը. մենք կհասկանանք, թե ինչպես է նա փորձում մոլորեցնել մեզ, և թե ինչու են շատերն այսօր անհնազանդության մեջ ընկնում:

Հիշե՛ք, որ Եվան գայթակղվեց և անհնազանդության մեջ ընկավ, սակայն Ադամը քաջ գիտակցում էր, թե ինչ էր անում: Եկեղեցում տեսել եմ մարդկանց, որոնք խախտում են Աստծո պատվիրանները բաց աչքերով՝ լիարժեք գիտակցելով, թե ինչ են անում: Նրանք խաբված չեն: Նրանք վտանգավոր տարածք են ոտք դնում և շտապում են դեպի հոգևոր մահ (տե՛ս Հռոմ. 8.13): Այս խմբին պատկանող մարդիկ խստասիրտ են, և նրանց դժվար է հասնել: Հաջորդ խումբը, որին պատկանում է եկեղեցում գտնվող անհնազանդ մարդկանց մեծ մասը, *խաբվածներն* են: Ինչպես Եվայի դեպքում, անտեղյակությունը խոցելի է դարձրել նրանց մոլորության համար, որն անօրինության գաղտնի ուժն է:

Անտեղյակությունը մոլորության օջախ է: Աստված ասաց. «Ուստի, Իմ ժողովուրդը գերության մեջ է գնացել, որովհետև գիտելիք չունեն» (Եսայի 5.13, NKJV): Աստծո ճանապարհների և Նրա հոգևոր օրենքների հայտնված գիտելիքը պաշտպանում է մեզ թշնամու մոլորությունից: Նրա ճշմարտության լույսը բացահայտում է ցանկացած սուտ և պաշտպանում է մեզ:

Հայտնված և փոխանցված գիտելիք

Աստված դրեց մարդուն Եդեմի պարտեզում և ասաց. «Պարտեզի ամեն ծառից համարձակ կեր, բայց բարու և չարի գիտության ծառից մի՛ կեր, որովհետև նրանից կերած օրդ մահով պիտի մեռնես» (Ծննդ. 2.16,17):

Դրանից հետո Տերը ստեղծեց կնոջը տղամարդուց: Մենք կարող ենք ենթադրել, որ դա տեղի ունեցավ որոշ ժամանակ անց, քանի որ մարդը տեսել և անվանել էր բոլոր կենդանիներին և թռչուններին, մինչև որ կինը ստեղծվեց նրա կողից:

Ի տարբերություն Ադամի, կինը չէր լսել այդ պատվերն անմիջապես Աստծո բերանից: Ադամը, հավանաբար, պատմել էր այդ մասին, մինչ նրանք վայելում էին Աստծո պարտեզը: Մենք կարող ենք կռահել սա այն պատասխանից, որ կինը տվեց օձին: Ուշադրությամբ կարդացեք հետևյալ խոսքերը.

> «Եվ օձն ավելի խորամանկ էր, քան թե դաշտի բոլոր գազանները, որ Տեր Աստված ստեղծել էր: Եվ կնոջն ասաց. «Իրա՞վ Աստված ասաց, որ Պարտեզի ոչ մի ծառից չուտեք»: Եվ կինն ասաց օձին. «Պարտեզի ծառերի պտղից ուտում ենք: Բայց այն ծառի պտղից, որ պարտեզի մեջտեղն է, Աստված ասաց՝ մի՛ կերեք դրանից և դրան մի՛ դիպչեք, որ չմեռնեք»» (Ծննդ. 3.1-3):

Առաջինը՝ ուշադրություն դարձրեք, որ երբ օձը կասկածի ենթարկեց Աստծո պատվիրանը, կինը պատասխանեց՝ ասելով, թե ինչ իրենք կարող էին անել, փոխարենը ասեր, թե ինչ էր Աստված պատվիրել: Սա այնպիսի մարդու արձագանք է, որը երկրորդ ձեռքից է հրամաններ և կանոններ լսել, ոչ թե նրա, ով սրտանց ճանաչում է պատվիրանը Տվողին և Նրա շարժառիթներն ունի:

Երկրորդը՝ ուշադրություն դարձրեք, որ նրա պատասխանը տարբերվում էր Աստծո սկզբնական պատվիրանից: Նա ավելացրեց. «Աստված ասաց. «Մի՛ կերեք դրանից և դրան մի՛ դիպչեք, որ չմեռնեք»»: Աստված ոչինչ չէր ասել այդ ծառին դիպչելու մասին: Մտածե՛ք այս մասին. պատկերացրեք, որ Ադամն ու Եվան զբոսնում էին այդ հսկայական պարտեզում, որտեղ բյուրավոր ծառեր

կային, և երբ նրանք մոտեցան այդ ծառին, Ադամն ասաց. «Սիրելի՛ս, այդ ծառին չի կարելի դիպչել»: Ադամը գիտեր, թե ինչ կար Աստծո սրտում այդ պատվիրանը տալու ժամանակ, բայց Եվան չգիտեր. Ադամը փոխաբերական իմաստով ասաց դա, բայց Եվան բառացիորեն ընկալեց նրա խոսքերը: Ահա ևս մեկ օրինակ այն մասին, թե ինչ է տեղի ունենում, երբ դուք լսում եք Աստծո խոսքերն այլ մարդուց, ոչ թե՝ երբ դրանք անմիջապես Տիրոջից են հայտնվում ձեզ:

Երբ Աստված հայտնում է Իր Խոսքն Իր Հոգով, այն մեր մասն է դառնում: Սա կարող է տեղի ունենալ, երբ մենք որևէ գիրք ենք կարդում, ինչ-որ մեկի ուսուցումն ենք լսում, անձամբ կարդում ենք Աստվածաշունչը կամ հաղորդակցվում Սուրբ Հոգու հետ: Ադամի համար Աստծո պատվիրանը նույնքան իրական էր, որքան իրեն շրջապատող ամեն ինչ. դա նրա մասն էր: Այնուամենայնիվ, երբ մենք լսում ենք Աստծո պատվիրանը, բայց այն հայտնված չէ մեզ Նրա Հոգով, այն մեր մասը չի դառնում: Մեզ համար այն պարզապես օրենք է, իսկ «մեղքի [անհնազանդության] զորությունն օրենքն է» (Ա Կորնթ. 15.56):

Շատ հավանական է, որ Եվան անձամբ չէր փնտրել Աստծուն, որպեսզի իմանար Նրա կամքն այդ ծառի վերաբերյալ: Նա պարզապես ընդունել էր Ադամի ասածը որպես իրողություն: Նրա համար դա ոչ թե հայտնված գիտելիք էր, այլ՝ փոխանցված գիտելիք: Երկրորդ ձեռքից ստացված տեղեկության պատճառով նա ավելի խոցելի էր մոլորության համար: Այդ պատճառով էլ օձը թիրախավորեց նրա՛ն, ոչ թե Ադամին:

Հայտնված, ոչ թե փոխանցված գիտելիքն է մեր մեծագույն պաշտպանությունը մոլորությունից: Շատերը օրինապաշտության կապանքների մեջ են, քանի որ լսել են միայն Աստվածաշնչի գիտելիքը, հրահանգները և սահմանափակումները: Անկախ այն բանից՝ այդ ամենը ստացվել է ծնողների՞ց, հոգևոր ուսուցիչների՞ց, փոդքասթերի՞ց, սոցիալական ցանցերի՞ց, թե՞ գրքերից, նրանք, միևնույն է, պետք է անձամբ փնտրեն Աստծուն, որպեսզի իմանան, թե ինչ կա Նրա սրտում: Եվ հենց Աստծո կողմից հայտնված գիտելիքն է, որ կպաշտպանի նրանց մոլորությունից: Նրանք ունեն տառը, սակայն ոչ՝ սիրտը: Նրանք նույնիսկ կարող են ճշտորեն աստվածաշնչյան հատվածներ մեջբերել՝ գլուխներով

և խոսքերով, սակայն կորցրել են դրանցում եղող կյանքի շունչը:

Գուցե նրանք նույնիսկ խանդավառությամբ պատմեն որևէ նոր ուսուցման մասին, որը վերջերս են լսել ինչ-որ սեմինարի կամ համաժողովի ընթացքում: Այնուամենայնիվ, թվում է՝ նրանք չեն կարողանում ապրել ըստ այն սկզբունքների, որոնք մեծ ոգեշնչմամբ պատմում են: Այդ ամենը նրանց մասը չի դարձել: Նրանք կրում են այդ խոսքերը, սակայն անպտուղ են մնում և չեն կարողանում աստվածային կյանք դրսևորել: Պատմելիս հեշտորեն տրվում են Աստծո ասածին որոշ ավելացումներ անելու կամ դրանից որոշ բաներ պակասեցնելու գայթակղությանը: Նրանք հեշտորեն կարող են խաբվել, քանի որ չեն հասկանում Աստծո ճանապարհը:

Ահա մի օրինակ, որը լսել եմ անթիվ անգամներ. «Գիտես, եղբա՛յր, փողն ամեն չարիքի արմատն է»: Աստված նման բան չի ասել: Նա ասել է. «Փողի հանդեպ *սերը* ամեն տեսակի չարիքի արմատն է» (Ա Տիմոթ. 6.10, NKJV):

Եթե փողն ամեն չարիքի արմատն է, Հիսուսը ճիշտ չէր վարվում, քանի որ Նա ուներ գանձապահ և փողի քսակ: Մի անգամ մի կին օծանելիքի մի շիշ կոտրեց, որի արժեքը մեկ տարվա աշխատավարձի էր հավասար, և օծեց դրանով Հիսուսին: Հուդան, որը փող էր սիրում, բարկացավ այդ արարքի պատճառով, սակայն Տերը հանդիմանեց Հուդային և գովեց այդ կնոջը (տե՛ս Հովհ. 12.3-7):

Ո՛չ, ամեն չարիքի արմատը ոչ թե փողն է, այլ՝ սերը փողի հանդեպ, այսինքն՝ անառողջ ցանկությունը փողի հանդեպ և կախվածությունը փողից: Այս օրինապաշտական տեսանկյունը փողի հանդեպ անառողջ վերաբերմունք է ձևավորում մարդկանց մոտ, որն Աստված ոչ մի դեպքում չէր նախատեսել: Այդ իսկ պատճառով, նման մարդիկ երբեք իրապես աստվածահաճո կերպով չեն կարողանում վարվել ֆինանսների հետ: Այս անիրազեկությունը հաստատում է, որ Աստծո Խոսքը չի հայտնվել նրանց սրտում: Նրանց գիտելիքն Աստծո խոսքի մասին այլ մարդկանցից է ստացված, և նրանք հեշտորեն կարող են մոլորվել:

Այսպիսով, ինչպե՞ս հայտնված գիտելիք ստանալ. Աստծո առջև խոնարհաբար վարվելով և մեր սրտերում Աստծո երկյուղի և սիրո կրակը վառ պահելով: Աստված ասաց.

«Ես սրան եմ մտիկ տալիս՝ խոնարհին, կոտրած հոգի ունեցողին և Իմ Խոսքից դողացողին» (Եսայի 66.2):

Նրա Խոսքից դողացող մարդն անմիջապես հնազանդվում է Նրան՝ անկախ այն բանից՝ օգուտ տեսնո՞ւմ է դրանում, թե՞ ոչ: Նման մարդն իրապես երկյուղ ունի Աստծուց: Եվ Աստվածաշունչը հստակ հայտնում է. «Տիրոջ մտերմությունը նրանց հետ է, որ վախենում են Նրանից, և Իր ուխտը սովորեցնում է նրանց» (Սաղմ. 25.14):

Այժմ մենք ավելի լավ ենք հասկանում այն պնդումը, որը Սողոմոնն արեց կյանքի վերջում. «Աստծուց վախեցի՛ր և Նրա պատվիրանները պահի՛ր, որովհետև սա է ամեն բան մարդու համար» (Ժողով. 12.13): Աստված հայտնում է Իր գաղտնիքները կամ ճանապարհները նրանց, ովքեր Իր երկյուղն ունեն: Հովհաննեսը հետևյալն է ասում այս մարդկանց.

«Այս բաները գրեցի ձեզ՝ ձեզ մոլորեցնողների մասին: Եվ այն օծությունը, որ դուք Նրանից ընդունեցիք, բնակվում է ձեզանում: Եվ դուք կարիք չունեք, որ մեկը սովորեցնի ձեզ, այլ ինչպես այն օծությունը սովորեցնում է ձեզ ամեն բանի համար, ճշմարիտ էլ է և սուտ չէ: Եվ ինչպես որ Նա սովորեցրեց ձեզ, մնացե՛ք Նրանում» (Ա Հովհ. 2.26,27):

Մենք տեսնում ենք, որ Աստծո հայտնված Խոսքը պաշտպանում է մեզ մոլորությունից: Եվան խաբվեց՝ անհնազանդության մեջ ընկնելով, քանի որ նա չուներ Աստծո հայտնված գիտելիքը. նա չնկատեց օձի խոսքերի խորամանկությունը և խեղաթյուրումը:

Ինչպե՞ս օձն արեց դա

Շարունակենք և պատասխանենք հետևյալ հարցին. ինչպե՞ս օձը խաբեց կնոջը: Ո՞րն էր նրա հարձակման աննկատ հնարը: Այս հարցի պատասխանն իմանալը անչափ կարևոր է: Մտածե՛ք այս մասին. ի՞նչ կերպով նա մոլորության տարավ Եվային: Եվան ապրում էր լիովին կատարյալ միջավայրում: Նա երբեք ոչ մի տեսակի ճնշման չէր ենթարկվել իշխանություն ունեցող որևէ մար-

դու կողմից: Նա չէր ունեցել ոչ մի բացասական փորձառություն հոր, որևէ ղեկավարի կամ որևէ ծառայողի հետ: Նա ապրում էր ծաղկող պարտեզում՝ ազատ դիվային ճնշումներից: Նա միայն ճանաչում էր Աստծո բարությունը և մատակարարումը: Նա քայլել և խոսել էր Նրա ներկայության մեջ: Ուստի, ինչպես օձին հաջողվեց խաբել նրան:

Հիշեք Աստծո պատվիրանը. «Եվ Տեր Աստված պատվիրեց մարդուն՝ ասելով. «Պարտեզի ամեն ծառից համարձակ կեր, բայց բարու և չարի գիտության ծառից մի՛ կեր, որովհետև նրանից կերած օրդ մահով պիտի մեռնես»» (Ծնն. 2.16,17):

Աստծո բարությունը շնորհել էր՝ «Համարձակ կեր...», իսկ Նրա իշխանությունը սահմանափակել էր՝ «...բարու և չարի գիտության ծառից մի՛ կեր»: Աստված շեշտադրեց, որ նրանք ազատ էին ուտելու ցանկացած ծառից՝ բացի մեկից:

Սիրելը և բաշխելն Աստծո էությունն է: Նա ցանկանում էր ընկերներ ունենալ Իր պարտեզում, որոնք կորոշեին հաղորդակցվել Իր հետ և պահպանել այդ հաղորդակցությունը: Նա չէր ցանկանում ռոբոտների, որոնք զուրկ էին ազատ ընտրությունից: Նա փափագում էր զավակների՝ ստեղծված Իր պատկերով, որոնք ազատ կամք ունեն: Արգելելով նրանց ճաշակել այդ ծառից՝ Աստված Իր հետ հարաբերությունը պահպանելու կամ խզելու ընտրություն տվեց նրանց: Այդ ընտրությունն էր, որ պաշտպանելու էր նրանց մահից, և նրանք պետք է կատարեին այն իրենց կամքով: Արդյո՞ք նրանք կվստահեին և կհնազանդվեին: Առանց այդ պատվիրանի, նրանք ոչ մի ընտրություն չէին ունենա:

Ուշադրություն դարձրեք օձի խոսքերին. «Եվ օձն ավելի խորամանկ էր, քան թե դաշտի բոլոր գազանները, որ Տեր Աստված ստեղծել էր: Եվ կնոջն ասաց. «Իրա՞վ Աստված ասաց, որ Պարտեզի ոչ մի ծառից չուտեք»» (Ծնն. 3.1): Այս հարցն ավելի ժամանակակից ներկայացնելու համար, օձն ասաց. «Լսել եմ, որ Աստված ասել է, որ դուք չեք կարող ուտել ամեն ծառից: Դա ճի՞շտ է»:

Օձը սկսեց իր մարտավարությունը՝ առաջին հերթին խեղաթյուրելով Աստծո պատվիրանի շեշտադրումը: Աղավաղելով դրա իմաստը՝ նա հարցականի տակ դրեց Աստծո շարժառիթը: Նա ուզում էր տանել Եվային դատողությունների ճանապարհով, որտեղ, ի վերջո, վիճարկելու էր Աստծո բարությունը և ազնվությու-

նը: Հենց որ նա հասներ դրան, կնոջը Աստծո իշխանության դեմ տրամադրելը չափազանց հեշտ էր լինելու:

Օձն անտեսեց Աստծո առատաձեռնությունը և մատնացույց արեց Նրա կողմից որոշված բացառությանը: Նա ակնարկեց, որ այն, ինչը կարող էր բարի լինել նրանց համար, պահված էր նրանցից: Մեկ հարցով օձը խեղաթյուրեց միակ պատվիրանը, որը տրված էր պաշտպանելու համար՝ ներկայացնելով այն որպես անարդարացի զրկանք բարուց: Կարո՞ղ եք պատկերացնել նրա հեգնանքը, երբ նա հարցրեց. «Ուրեմն, Աստված ասաց, որ դուք չե՞ք կարող ուտել ամեն ծառից»: Ընդարձակ պարտեզի բոլոր ծառերից ուտելու հնարավորության փոխարեն օձը գրավեց Եվայի ուշադրությունը այն միակ արգելված ծառի վրա: Նա պատկերեց Աստծուն որպես զրկող, ոչ թե բաշխող, ինչպիսին որ Նա է:

Տիրոջը անարդար պատկերելով, օձը կարող էր հարձակում գործել Աստծո իշխանության վրա: Սատանան հիմար չէ. նա ուղղեց իր հարվածն ուղիղ Տիրոջ իշխանության հիմքին. «Արդարությունը և իրավունքը Նրա աթոռի հիմքն են» (Սաղմ. 97.2): Նրա աթոռը կամ գահը խորհրդանշում է Նրա իշխանությունը: Եթե սատանան խաբեության և աղճատման միջոցով կարողանար խեղաթյուրված ներկայացնել Աստծո արդար բնավորությունը, Նրա ստեղծագործությունը կասկածի կենթարկեր Նրա իշխանության հիմքերը:

Ի պատասխան օձի հարցին, կինն ուղղեց նրան. «Եվ կինն ասաց օձին. «Պարտեզի ծառերի պտղից ուտում ենք: Բայց այն ծառի պտղից, որ պարտեզի մեջտեղն է, Աստված ասաց՝ մի՛ կերեք նրանից և նրան մի՛ դիպչեք, որ չմեռնեք»» (Ծնն. 3.2,3):

Շատ հնարավոր է, որ նույնիսկ իր պատասխանելու ժամանակ Եվան սկսեց մտածել, թե ո՞րն էր այդ պատվիրանի պատճառը: Նրա ուշադրությունն ուղղվեց այդ ծառին: Նա հարցականի տակ դրեց Աստծո բարությունը: Պատկերացնո՞ւմ եք, թե ինչ նա կարող էր մտածել. *«Այն լավ տեսք ունի... չգիտեմ, թե ինչու մենք չենք կարող ուտել այդ ծառից: Ի՞նչ վնաս կարող է լինել: Ի՞նչ կա դրանում, որ այդքան վատ է մեզ համար»:* Նրա մեջ կասկածներ ծնվեցին Աստծո շարժառիթների վերաբերյալ, և նա բաց էր Աստծո իշխանությունը վիճարկելու համար:

Օձը որսաց Աստծո իշխանությունը, ճշմարտացիությունը և

անկեղծությունը վարկաբեկելու հնարավորությունը՝ համարձակ հերքելով Նրա Խոսքը. «Բնավ չե՛ք մեռնի, այլ՝ Աստված գիտի, թե այն օրը, որ նրանից ուտեք, ձեր աչքերը կբացվեն և Աստծո պես կլինեք՝ բարին և չարը իմացող» (Ծնն. 3.4,5):

Մոլորության վարպետը ձգտում էր կործանել Եվայի հավատարմության հիմքը՝ անամոթաբար ընդդիմանալով Աստծուն և հավաստիացնելով նրան, որ նա չէր մահանա: Նա արագորեն ավելացրեց հետևյալը իր փաստարկներին. «Մահանալու փոխարեն դուք Աստծուն ավելի նման կդառնաք: Ինքներդ կկարողանաք ընտրել բարու և չարի միջև, քանի որ իմաստուն կլինեք: Դուք այլևս ստիպված չեք լինի երկրորդ ձեռքից տեղեկություն ստանալ ամեն ինչի մասին, ո՛չ էլ կենթարկվեք անարդար պատվերների»:

Հղացած մեղքին հետևում է ստրկությունը

Եվան ցնցված և շփոթված մտածում էր. *«Ինչո՞ւ է Աստված պահում այս պտուղն ինձնից»:* Նա կրկին նայեց այդ ծառին՝ պտուղն ուսումնասիրելու համար, թեև արդեն այլ հայացքով: Նա վճռեց, որ այդ պտուղը լավ և հաճելի էր, ոչ թե վատ և վնասակար: Նա մտածեց. *«Անշուշտ, այն հրաշալի տեսք ունի՝ ուտելու համար, և ամենալավն այն է, որ այն իմաստուն կդարձնի մեզ»:*

Մտքերի այդ ընթացքը կուրացրեց նրա աչքերը այն ամենի հանդեպ, ինչ նրան շրջապատում էր: Նա մոռացավ այն առատությունը, որը տրված էր իրեն՝ կենտրոնանալով այդ մեկ ծառի վրա: Նա մտածում էր. *«Այս ծառի պտուղը բարի է մեզ համար, և Աստված պահել է մեզնից: Մենք կարող էինք ճաշակել այն ամբողջ այս ընթացքում: Ինչո՞ւ է Նա այդպես վարվել մեզ հետ: Եթե Նա ինչ-որ բարի բան է պահում, որ կա այս ծառի պտղի մեջ, ուրիշ ինչե՞ր է պահել մեզնից»:*

Քանի որ Եվան վիճարկեց Աստծո բնավորությունը, անկեղծությունը և բարությունը, և հավաստիացում ստացավ, որ իրեն ոչ մի վտանգ չէր սպառնալու իր վարքի համար, չկար այլևս ոչ մի պատճառ, թե ինչու նա պետք է հնազանդվեր Աստծո իշխանությանը այդ հարցում: Նրա ինքնակամությունը մերժեց Հոր կամքը: Եվան վերցրեց այդ պտուղը և պտտեց իր ձեռքում. ոչինչ տեղի չունեցավ: Նա կերավ այն, տվեց նաև ամուսնուն:

Այդ պտուղն ուտելուց հետո հանկարծ նրանց աչքերը բացվեցին, և նրանք ամոթի և վախի ալիք զգացին՝ հասկանալով, որ մերկ էին: Նրանց անհնազանդությունը հոգևոր մահ բերեց: Մարմինը դարձավ զորավոր ստրկատեր, որն իշխելու էր նրանց: Քանի որ նրանք վիճարկեցին Աստծո Խոսքը և ընտրեցին դատողությունների ճանապարհը՝ մոլորության հասնելով, նրանք բացեցին իրենց սրտերն անհնազանդության իշխանի համար, և նա դարձավ իրենց խավար տիրակալը:

Աստվածաշունչը հաստատում է սա. «Դուք չգիտեք, թե ում որ ձեր անձերը ծառա եք ներկայացնում՝ նրան հնազանդվելու, ծառաներ եք նրան, որին հնազանդվում եք. թե՛ մեղքին [Աստծո իշխանությանը չհնազանդվելուն]՝ դեպի մահ, և թե՛ հնազանդությանը՝ դեպի արդարություն» (Հռոմ. 6.16): Մահվան իշխանը մուտք ստացավ ոչ միայն նրանց կյանքերի մեջ, այլև օրինական դիրք ձեռք բերեց այս աշխարհում, քանի որ Աստված մարդկությանն էր տվել այս տիրույթը: Ադամը փոխանցեց այն սատանային: Պողոսն այսպես բացատրեց սա. «Ուստի, ինչպես որ մեկ մարդու միջոցով մեղքն աշխարհ մտավ, մեղքի միջոցով էլ՝ մահը, այդպես էլ մահը բոլոր մարդկանց վրա տարածվեց» (Հռոմ. 5.12):

Մինչև անհնազանդությունը, չկար ատելություն, բարկություն, աններողամտություն, վեճ, բամբասանք, կաշառակերություն, խարդախություն, դառնություն և շորթում: Չկար սեռական այլասերություն, թմրամոլություն, հարբեցողություն, սպանություն և գողություն: Չկար բռնություն կանանց և երեխաների հանդեպ: Հիվանդություն, տկարություն և աղքատություն գոյություն չունեին: Բնական աղետները, ժանտախտներն ու համաճարակներն անհայտ էին մարդկությանը: Կենդանական աշխարհն ապրում էր բացարձակ ներդաշնակության մեջ: Երկրի մթնոլորտում անդորր էր տիրում, քանի որ Աստծո կամքն իշխում էր ամբողջ ստեղծագործության վրա:

Անհնազանդությունն առաջացրեց այն զարհուրելի բարոյական խնդիրները, որոնք պատուհասում են մարդկությանը, և դրանց ցուցակն ավելանում է ու ավելի գարշելի դառնում յուրաքանչյուր նոր սերնդի հետ: Մարդկանց մեկ անհնազանդ արարքը նշանավորեց անօրինության գաղտնի ուժի սկիզբը, որի մոլորության արդյունքում մարդը կորցրեց իր աստվածային մատա-

կարարումը և պաշտպանությունը: Մարդու ապստամբությունը, որը տեղի ունեցավ սատանայի ապստամբության օրինակով, անարգել դուռ բացեց նրա տիրապետության և կործանման համար: Սատանան լիարժեքորեն օգտագործեց Աստծո պես լինելու, սակայն Նրան չհպատակվելու իր հնարավորությունը: Ստրկացնելով Աստծո ստեղծագործությունը՝ նա դրեց իր գահն այս աշխարհում (տե՛ս Եսայի 14.12-14):

Այսօր այդ հնարը նույնն է

Սատանայի գործելակերպը քիչ բանով է տարբերվում այսօր: Նա դեռ ցանկանում է խեղաթյուրված ներկայացնել Աստծո բնավորությունը, որպեսզի Նրա իշխանության դեմ տրամադրի մեզ: Հակոբոսի գիրքը պարզորեն խոսում է այս մասին. «Մի՛ խաբվեք, իմ սիրելի եղբայրնե՛ր: Ամեն բարի տուրք և ամեն կատարյալ պարգև վերևից է իջնում՝ լույսի Հորից, որի մեջ բնավ փոփոխում կամ դարձվածքի շուք չկա» (1.16,17):

Հեղինակը ցանկանում էր հավաստիանալ, որ մենք՝ հավատացյալներս, չենք պարտվի անօրինության նույն գաղտնի ուժին, որին պարտվեց Եվան: Հակոբոսը, ինչպես և Պողոսը, զգուշացրեց մեզ, որպեսզի պաշտպանի: Մենք պետք է ուշադրությամբ ականջ դնենք նրա խոսքերին և հաստատենք դրանք մեր սրտերում. գոյություն չունի ոչ մի բարի բան՝ Աստծո կամքից դուրս: Որոշ բաներ կարող են բարի թվալ, բայց եթե դրանք չեն համապատասխանում Աստծո կամքին, վստա՛հ եղեք, որ դրանցում ոչ մի բարի բան չկա մեզ համար:

Հակոբոսը կրկնեց, որ եթե հավատում եք, որ Աստծո մատակարարումից դուրս ինչ-որ բարի բան կա, դուք կարող եք խաբվել, ինչպես որ խաբվեց Եվան: Լրջորեն մտածե՛ք այն ամենի մասին, ինչ քննարկեցինք: Կարևոր չէ, թե որքան լավ է ինչ-որ բանի տեսքը կամ համը, որքան դրական զգացողություններ է դա պարգևում, որքան հարուստ, բարգավաճ, իմաստուն կամ հաջողակ դա կարող է դարձնել ձեզ. եթե դա Աստծուց չէ, ի վերջո կկանգնեցնի ձեզ մի ճանապարհի վրա, որտեղ կա մեծ տրտմություն, զղջում, իսկ վերջում՝ մահ: Մոլորությունը կարող է սահմանափակել աստվածային մատակարարումը և պաշտպանությունը

ձեր կյանքում: Ամեն բարի և կատարյալ պարգև Աստծուց է. Նա է Աղբյուրը: Ընդունեք այս ճշմարտությունը և հաստատեք այն ձեր սրտում, և արտաքին տպավորությունները չեն խաբի ձեզ: Եթե Եվան այսպես վարվեր, չէր տատանվի: Նա չէր փնտրի Աստծո մատակարարումից դուրս՝ իր ցանկությունները կատարելու համար:

Քանիսն են ամուսնանում սխալ մարդու հետ՝ սխալ պատճառներով: Հնարավոր է, որ Աստված զգուշացրել է նրանց՝ ծնողների կամ հովիվների միջոցով, խոսել է անմիջապես նրանց սրտերին, բայց նրանք թույլ են տվել, որ իրենց դատողությունը լռեցնի այդ ձայները: Գուցե նրանք միայնակ են եղել և ընկերակցության են ձգտել: Գուցե այդ մարդը հաճելի անձնավորություն է եղել, և դա նպաստել է իրենց որոշմանը: Արդյունքում նրանք նախապատվություն են տվել իրենց կամքին ավելի, քան Աստծո կամքին, և չափազանց հաճախ մեծ տառապանք են կրել:

Իհարկե, Աստված կարող է քավել մեր սխալ որոշումները: Դավթի մեղքը, որը Բերսաբեեին վերցնելն էր, հետագայում քավվեց՝ Սողոմոնի ծնունդով: Այնուամենայնիվ, նա մեծ նեղություն հնձեց իր անհնազանդության պատճառով, քանի որ թուրը երբեք չհեռացավ նրա տնից: Նա երեք որդի կորցրեց՝ նորածնի և ծաղկուն տարիքում գտնվող որդիների: Որքա՜ն ավելի լավ կլինի, եթե մենք ընտրենք հնազանդությունը:

Չափազանց հաճախ մարդիկ լքում են այն վայրերը՝ աշխատանքները, եկեղեցիները, քաղաքները, որոնցում Աստված տնկել է իրենց, քանի որ նրանք համաձայն չեն իրենց վրա կարգված իշխանության հետ: Բացի այդ, գուցե նրանց թվում է, թե իրենց կյանքը լճացած է, կամ նրանք հավատում են, որ այնտեղ, որտեղ գտնվում են, իրենց համար ապագա չկա: Շուտով ինչ-որ հնարավորություն է ընձեռնվում, ու թեև նրանք չունեն վկայություն Սուրբ Հոգուց՝ հեռանալու մասին, նրանք գնում են: Ավելին՝ հաճախ, հեռանալով, մարդիկ վնաս են հասցնում այն սրբությանը, որի մեջ Աստված կանչել է իրենց: Նրանք մտածում են. *«Ես չափազանց երկար ժամանակ անգործ եմ եղել. ես պետք է ինչ-որ բան անեմ»:* Սակայն նրանք Աստծո կամքին հակառակ են վարվում՝ ձգտելով այն ամենին, ինչը, իրենց համոզմամբ, բարի է իրենց համար: Գուցե նրանք ֆինանսական ապահովության հասնեն, սակայն

նրանց սրտերը զգալիորեն հեռանում են Տիրոջ հանդեպ սիրուց:

Ընդհանուր առմամբ, ինչո՞ւ են շատերը անհնազանդ լինում Աստծո կամքին: Նրանք հրապուրվում են բարի և հաճելի բաներով: Գուցե նրանք բարգավաճման կամ հաջողության որևէ միջոց են գտնում՝ Աստծո Խոսքի խորհրդից դուրս: Նրանք հետևում են դրան և որոշ ժամանակով զվարճություն, երջանկություն և ոգեշնչում են ստանում: Նրանք «բարիք» են գտնում այն բանում, ինչին Աստված «ոչ» է ասել: Նրանք վախենում են, որ Աստված պահում է իրենցից այս կյանքի գրավիչ և հաճելի բաները: Նրանք կարծում են, որ Նա չի հասկանում իրենց կարիքները, կամ՝ որ Նա անկարևոր է համարում իրենց ցանկությունները: Նրանք համարում են, որ Աստված անհավատարիմ է, եթե իրենց աղոթքները չեն պատասխանվում իրենց կողմից նախապես որոշված ժամանակի մեջ: Նրանք մտածում են. «Ինչո՞ւ սպասել: Ես հիմա՛ կվերցնեմ այն, ինչը բարի և հաճելի է»:

Մտածե՛ք Հիսուսի մասին

Մտածե՛ք Հիսուսի մասին: Նա անապատում էր քառասուն օր ու գիշեր՝ առանց ջրի, կերակուրի և հարմարավետության: Քաղցի պատճառով Նա սաստիկ ցավեր էր զգում որովայնում. Նա գրեթե սովամահ էր լինում: Եթե շուտով կերակուր և ջուր չստանար, կմահանար: Բայց ի՞նչը եկավ սկզբում. մատակարարո՞ւմը, թե՞ գայթակղությունը:

Այդ պահին եկավ սատանան՝ Նրանում կասկածներ ծնելու համար. «Եթե Աստծո Որդի ես, ասա՛, որ այս քարերը հաց լինեն» (Մատթ. 4.3): Թշնամին կրկին վիճարկում էր այն, ինչ Աստված որոշ ժամանակ առաջ հստակ ասել էր: Հորդանանի ափերին Հայրը բացահայտ կերպով ազդարարեց, որ Հիսուսը Նրա Որդին էր: Սատանան կրկին փորձում էր խեղաթյուրել Աստծո բնավորությունը. «Եթե Դու Աստծո Որդի ես, ինչո՞ւ է Նա այստեղ առաջնորդել Քեզ սովամահ լինելու: Ինչո՞ւ Նա չի մատակարարել Քեզ: Գուցե ժամանակն է, որ Ի՞նքդ Քեզ համար մատակարարես: Եթե շուտով սնուցում չստանաս, դու կմահանաս: Իսկ եթե չափից ուշ ստանաս, լուրջ ֆիզիկական խնդիրներ կունենաս: Օգտագործի՛ր Քո իշխանությունը՝ Ինքդ Քեզ ծառայելու համար: Այս քարերը

հա՛ց դարձրու»:

Հիսուսը հակառակվեց դրան և սպասեց Աստծո մատակարարմանը: Նա թույլ չտվեց թշնամուն խեղաթյուրել Աստծո բնավորությունը Իր մտքում: Նա գիտեր, որ Իր Հայրը հոգում էր Իր կարիքները: Նա հնազանդ մնաց Աստծո իշխանությանը՝ անկախ այն բանից, թե որքան տհաճ էր իրավիճակն այդ պահին:

Երբ Նա հակառակվեց իրավիճակն անձամբ տնօրինելու սատանայի գայթակղությանը, «սատանան թողեց Նրան, և ահա հրեշտակներ մոտ եկան և ծառայում էին Նրան» (Մատթ. 4.11): Ինչո՞ւ: Եբրայեցիների թղթի հեղինակն այսպես է նկարագրում Հիսուսին. «Նա, որ Իր մարմնի օրերում աղոթք և աղաչանք՝ սաստիկ աղաղակով և արտասուքով մատուցում էր Նրան, որ կարող էր ազատել Նրան մահից, և լսվեց Իր բարեպաշտության համար: Թեև Որդի էր, այն չարչարանքներից հնազանդությունը սովորեց» (Եբր. 5.7,8): Աստված լսեց Նրան՝ Նրա բարեպաշտության կամ աստվածավախության շնորհիվ: Նա չէր կասկածում Հոր բարության մեջ: Նույնիսկ մեծ գայթակղության և սաստիկ չարչարանքի բախվելով՝ ինչն ավելին էր, քան որևէ մեկը երբևէ վերապրել էր, Նա ընտրեց հնազանդությունը, թեև դա սաստիկ դժվարություն էր նշանակում:

Ի տարբերություն Ադամի և Եվայի արձագանքի, այս տեսակի հնազանդությունը և հպատակությունը խափանեցին թշնամու բոլոր ոտնձգությունները Հիսուսի կյանքում: Նա վկայեց. «Այս աշխարհի իշխանը գալիս է և Ինձանում ոչինչ չունի: Այլ որպեսզի աշխարհն իմանա, թե Ես սիրում եմ Հորը, և ինչպես Հայրը պատվիրեց Ինձ, այնպես եմ անում» (Հովհ. 14.30,31):

Ի տարբերություն Ադամի, Հիսուսը, Ով հաճախ վերջին Ադամն է համարվում, վարվեց կատարյալ հնազանդությամբ Իր հոր հանդեպ և կարող էր վկայել, որ սատանան ոչինչ չգտավ Իրենում: Այս պատճառով է, որ Աստվածաշունչը հորդորում է մեզ. «Ով որ ասում է, թե՝ Նրանում [Հիսուսի մեջ] եմ բնակվում, պետք է, ինչպես որ Նա գնաց, ինքն էլ այնպես գնա» (Ա Հովհ. 2.6): Նա մեր օրինակն է և նախակարապետը: Նա է, որ վճարել է գինը և լուսավորել է այն ճանապարհը, որով պետք է գնանք: Մենք այլևս սահմանված չենք առաջին Ադամի ճանապարհի և նրա անօրինության համար, այլ կանչված և զորացված ենք, որ վերջին Ադա-

մի հնազանդության ճանապարհներով գնանք:

«Ուղերձ» Աստվածաշունչը ոգեշնչումով ազդարարում է.

> «Հանե՛ք ձեր հանդերձները, վազե՛ք և երբեք մի՛ հանձնվեք [Աստծուն հնազանդվելու մեջ]: Ո՛չ մի ավելորդ հոգևոր ճարպ, ո՛չ մի մակաբուծային մեղքեր: Պահե՛ք ձեր հայացքը *Հիսուսի* վրա, Ով և՛ սկսեց, և՛ ավարտեց այն ընթացքը, որում մենք գտնվում ենք: Ուսումնասիրե՛ք, թե ինչպես Նա արեց դա: Քանի որ Նա երբեք չհեռացրեց հայացքն այնտեղից, Ուր գնում էր՝ այն բերկրալի ավարտից Աստծո մեջ և Նրա հետ, ճանապարհին Նա կարողացավ դիմանալ ցանկացած բանի՝ խաչին, ամոթին և ամեն ինչին: Եվ այժմ Նա *այդտեղ* է՝ պատվական վայրում, անմիջապես Աստծո կողքին: Երբ բացահայտեք, որ տկարանում եք ձեր հավատքի [հնազանդության] մեջ, կրկի՛ն կարդացեք այդ պատմությունը՝ կետ առ կետ, թշնամանքի այդ երկար շարանը, որը Նա այդքան դժվարությամբ անցավ: *Դա* ադրենալին կներարկի ձեր անձերի մեջ» (Եբր. 12.1-3):

Այս խոսքերն ամեն ինչ ամփոփում են: Սովորե՛ք առաջին Ադամի անկումից և ջանասիրաբար հետևե՛ք երկրորդ Ադամի հնազանդությանը:

Հաջորդ գլխում կխոսենք անհնազանդության հետևանքների մասին: Դրանք միշտ չէ, որ անմիջապես են ի հայտ գալիս, բայց անխուսափելի են: Հենց որ հստակ գիտակցեք անհնազանդությունը ձեր կյանքում, երբեք մի՛ մտածեք այն կրկին հանդուրժելու մասին:

ԳԼՈՒԽ 5

ԱՆՀՆԱԶԱՆԴՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ I

Հավատքը և հնազանդությունն անբաժանելի են, քանի որ հնազանդությունը ճշմարիտ հավատքի ապացույցն է:

Անհնազանդությունը բազում հետևանքներ ունի: Այդ հետևանքները միշտ չէ, որ անմիջապես ճանաչելի են կամ ակնհայտ, բայց ինչպես ցանված սերմերը, որոնք հունձք են տալիս, դրանք անխուսափելի են: Մեր անձերի թշնամին ձգտում է թաքցնել մեզնից գիտելիքն այս մասին՝ հուսալով, որ մենք թեթևորեն կվերաբերվենք հնազանդությանը և հեշտորեն կընկնենք իր մոլորեցնող մարտավարության ծուղակը:

Որոշ մարդիկ ենթագիտակցորեն կարծում են, թե ինչպիսին էլ լինեն իրենց անհնազանդության հետևանքները, դրանք չեն գերակշռի այն նպատակը, հանուն որի իրենք անհնազանդ են եղել: Ես զարմանում եմ, թե որքան տարածված է այս մոլորեցնող և մահացու մտածելակերպը: Սա անօրինության գաղտնի ուժի խորհուրդն է: Իմ սրտանց հույսն ու աղոթքն է, որ կարդալով հաջորդ երեք գլուխները, ձեր սրտում որոշում կայացնեք այլևս խաղ չանել անհնազանդության հետ:

Ադամի որդիները

Մենք կսկսենք՝ սովորելով Կայենից, որն Ադամի առաջնեկն է: Կայենը հողագործ էր: Նրա եղբայր Հաբելը՝ Ադամի երկրորդ որդին, հովիվ էր: Աստվածաշնչում գրված է, որ ժամանակներ անց Կայենը զոհաբերություն մատուցեց Տիրոջը երկրի պտղից, և Հաբելը զոհաբերություն մատուցեց իր հոտի առաջնածին գառներից: Գրված է. «Տերն ընդունեց Հաբելին և նրա զոհաբերությունը, բայց Նա չընդունեց Կայենին և նրա զոհաբերությունը» (Ծնն. 4.4,5, NLT):

Որպես կողմնակի նշում, այս խոսքը հերքում է այն թերի պնդումը, որն այսօր մենք հաճախ ենք լսում եկեղեցիներում. «Աստված կընդունի ձեզ՝ ինչպիսին որ կաք»: Դա ճիշտ է, բայց մենք չենք կարող վերջակետ դնել այդտեղ: Աստված, իհարկե, ընդունում է մեզ՝ ինչպիսին որ կանք, *եթե ապաշխարում ենք:* Փորձեք կիրառել այս սկզբնական մասնակի պնդումն Անանիայի և Սափիրայի վերաբերյալ: Այն չի համապատասխանի նրանց, քանի որ նրանք մահացան (տե՛ս Գործք 5.1-11):

Աստված չընդունեց Կայենի զոհաբերությունը. ավելին, Նա չընդունեց Կայենի՛ն: Այն, որ Նա չընդունեց Կայենին, չի նշանակում, որ Կայենին վիճակված էր մշտապես մերժված լինել. այնուամենայնիվ, մեր ժամանակակից աստվածաբանությունն Աստծո անպայմանական ընդունելության մասին՝ ճիշտ չէ: Իրականում, այն վտանգավոր է, քանի որ հեռացնում է մեր սրտերից ակնածալի երկյուղը Տիրոջ հանդեպ: Տիրոջ երկյուղը հսկում է մեզ և հեռացնում մեղքից (տե՛ս Ելից 20.20): Աստվածաշունչն ասում է, որ Անանիայի և Սափիրայի մահից հետո «մեծ ահ եղավ եկեղեցու վրա» (Գործք 5.11): Անհնազանդությունն այլևս աննշան հարց չէր:

Ուզում եմ մի փոքր արդիացնել Ադամի երկու որդիների պատմությունը՝ այն ավելի ընկալելի դարձնելու համար: Նրա որդիները դաստիարակվել էին մի ընտանիքում, որտեղ կանչում էին Տիրոջ անունը: Երկուսն էլ զոհաբերություն մատուցեցին Տիրոջը, ինչը խորհրդանշում էր նրանց կյանքը: Աստվածաշունչը պատվիրում է մեզ մատուցել մեր մարմինները՝ որպես կենդանի զոհ (տե՛ս Հռոմ. 12.1): Ամեն անգամ, երբ Տիրոջը զոհ է մատուցվում, այն խորհրդանշում է մեր ծառայությունը Նրան: Այնպես որ, այս

պատմությունն այն մասին չէ, որ Հաբելը ծառայում էր Աստծուն, իսկ Կայենը՝ ոչ: Այնպես չէր, որ Կայենը մշտապես խաղատներում, մերկապարի ակումբներում և բարերում էր լինում և ամեն գնով խուսափում էր եկեղեցի հաճախելուց: Մի՛ նույնացրեք Կայենին այնպիսի մարդու հետ, ով չի ուզում ոչ մի գործ ունենալ Աստծո հետ: Այսօր երկուսն էլ Աստծո հետ հարաբերություն ունեցող հավատացյալներ կհամարվեին:

Այդ երկու տղամարդիկ էլ ջանասեր էին Տիրոջը զոհ մատուցելու մեջ: Իրականում, կարելի է վստահաբար ասել, որ Կայենն ավելի ջանասեր էր, քան Հաբելը: Ես շատ քիչ բան գիտեմ հողագործության և գյուղատնտեսության մասին, բայց իմ գիտելիքը բավական է՝ հասկանալու համար, որ թեև հովվությունը ծանր աշխատանք է, հողագործությունն ավելի ծանր է: Հովիվն աշխատում է առավոտյան և ճաշից հետո, բայց, որպես կանոն, օրվա տապին նա կարող է հանգստանալ ծառի շուքի ներքո՝ սառը ըմպելիք խմելով:

Հողագործությունը ավելի շատ աշխատանք է պահանջում: Կայենի զոհաբերությունը ստացվել էր նրա ճակատի քրտինքով՝ ծանր աշխատանքով այն հողի հետ, որն Աստված անիծել էր (տես Ծնն. 3.17-19): Կայենը մաքրել էր հողը քարերից, կոճղերից և այլ անպետք բաներից: Դրանից հետո նա հերկել և մշակել էր այն: Նա ցանել էր, ջրել էր և պարարտացրել էր հողը, նաև պաշտպանել էր իր ցանքը: Նա մեծ ջանք էր գործադրել՝ իր զոհաբերությունը ստանալու համար:

Ինչո՞ւ Աստված չընդունեց Կայենին

Այնպես որ, մենք պետք է հարցնենք. ինչո՞ւ Աստված չընդունեց Կայենի զոհը, թեև Նա գիտեր, որ Կայենն ավելի ծանր աշխատանք էր կատարել: Մենք գտնում ենք պատասխանը նրա ծնողների կյանքում: Այն ամենը, ինչ Աստված ստեղծել էր Եդեմի պարտեզում, ծածկոց ուներ: Կենդանիները մորթի ունեին, ձկները՝ թեփուկներ, իսկ թռչունները՝ փետուրներ: Դուք երբեք չեք տեսնի, որ բևեռային արջը ջինսե տաբատ կրի. նա ծածկոցի կարիք չունի:

Ադամն ու Եվան բացառություն չէին: Նրանք չունեին ֆիզիկա-

կան ծածկոց կամ հագուստ. փոխարենը՝ «պսակված» էին փառքով (տես Սաղմ. 8.5): *«Պսակել»* բառը նշանակում է «շրջան գծել կամ շրջապատել»: Նրանք ծածկված էին փառքով: Այն փառքը, որն Աստված դրել էր նրանց վրա, այնքան հրաշալի էր, որ նրանց աչքերում այն ծածկում էր իրենց մարմնի մերկությունը: Այս պատճառով է, որ Աստվածաշնչում գրված է. «Եվ նրանք երկուսը մերկ էին՝ Ադամը և իր կինը, և *չէին ամաչում»* (Ծննդ. 2.25): Նրանցում ամաչկոտություն չկար: Նրանք ապրում էին Աստծո առջև և նրանց մտքով չէր անցնում հագուստ ցանկանալը, քանի որ դա անհրաժեշտ չէր:

Այդ ամենը փոխվեց այն պահին, երբ նրանք անհնազանդ եղան: Մինչև նրանց անհնազանդությունը՝ նրանցում լիովին իշխում էր իրենց հոգին, իսկ անհնազանդությունից հետո սկսեց իշխել իրենց մարմինը: Առաջին բառերը, որոնք գրված են Աստվածաշնչում այն բանից հետո, երբ նրանք կերան այդ պտուղը, հետևյալն են. «Այդ ժամանակ երկուսի աչքերը բացվեցին, և նրանք իմացան, որ մերկ են» (Ծննդ. 3.7, NKJV): Բանալի բառերն են. *«նրանք իմացան»:* Նրանք այնպիսի գիտելիք ստացան, որը նախկինում չունեին:

Բարին և չարը իմանալու սկզբունքը նշանակում է ապրել կյանքը ճշմարտության և սխալի գիտակցմամբ: Մինչև մեղանչումը, նրանց արարքներն առաջնորդվում էին ոչ թե բարին և չարը իմանալով կամ ճշմարտությունը և սխալը գիտակցելով, այլ՝ Աստծուն ճանաչելով: Նրանց շարժառիթը հնազանդությունն էր, որը սկիզբ էր առնում վստահությունից և սիրուց: Ճշմարտությունը և սխալը ոչ թե նրանց մտքում էին, այլ՝ Աստծո ձեռքում: Գրված է.

> «Աստծո գործը կատարյալ է,
> Որովհետև Նրա բոլոր ճանապարհներն իրավունք են:
> Աստված հավատարիմ է և անիրավություն չունի.
> Արդար և ուղիղ է Նա» (Երկր. Օր. 32.4):

Ադամի ու Եվայի կյանքը ներդաշնակ էր Աստծո հետ, և Աստված նրանց միակ աղբյուրն էր: Ուտելով բարու և չարի գիտության ծառի պտուղը՝ նրանք գտան բարու և չարի մասին գիտելիքի աղբյուր, որն Աստծուց դուրս էր: Մենք կարող ենք դատողության սկզբունք անվանել այն: Նրանք այլևս Աստծո առաջնորդության

կարիքը չէին զգում. նրանք ճշմարտության և սխալի գիտակցում ունեին իրենց ներսում: Այդ պատճառով էր, որ առաջին հարցը, որն Աստված տվեց նրանց մեղանչումից հետո, հետևյալն էր. «Ո՞վ ասաց քեզ» (Ծնն. 3.11, NKJV):

Երբ Աստված հարց է տալիս, Նա չի ցանկանում տեղեկություն ստանալ: Նա ուղղորդում է ձեզ դեպի այն, ինչ Ինքը ցանկանում է հաղորդել: Աստված արդեն գիտեր, որ նրանք կերել էին այդ ծառից և խոսում էին իրենց իմաստությունից: Նրանք փոխարինել էին հնազանդությունը դատողությամբ: Իրականում, Նա նկատի ուներ. «Այսպիսով, դուք արդեն ճշմարտությունը և սխալը հասկանալու աղբյուր եք գտել, որն Ինձանում չէ: Ակնհայտ է, որ դուք կերել եք բարու և չարի գիտության ծառից»:

Անմիջապես իրենց անհնազանդությունից հետո նրանք ծածկեցին իրենց մերկությունը թզի տերևներով կամ *երկրի պտղով:* Նույնիսկ այդ ծածկոցով նրանք, միևնույն է, մերկ զգացին իրենց և թաքնվեցին: Աստված հարցրեց. «Ո՞վ պատմեց քեզ, թե դու մերկ ես» (Ծնն. 3.11): Իրենց նորագյուտ ճշմարտության և սխալի գիտակցմամբ, նրանք փորձեցին անել այն, ինչ ճիշտ էին համարում, սակայն, միևնույն է, մերկ զգացին իրենց: Այդ ծածկոցն Աստծո ճանապարհը չէր: Նա ցույց տվեց մերկության համար Իր ընդունելի ծածկոցը կամ զոհաբերությունը, երբ անմեղ կենդանի սպանեց և ծածկեց Ադամին և Եվային դրա կաշվով: Դա էր Աստծո պատվիրած ճանապարհը, ոչ թե երկրի պտուղը:

Այդ ժամանակ Ադամն ու Եվան անտեղյակ էին, թե ինչ էր Աստված ցանկանում, բայց Կայենն ու Հաբելն անտեղյակ չէին: Նրանց ծնողները սովորեցրել էին, թե որն էր Աստծուն ընդունելի զոհը: Այնպես որ, երբ Կայենը բերեց *երկրի պտուղը*՝ որպես զոհաբերություն, դա կրկին անընդունելի զոհ էր: Նա ծառայում էր Աստծուն իր ուզած կերպով: Նա վարվեց ըստ նույն անեծքի (որը գործում է դատողության միջոցով և հենվում է ճշմարտության և սխալի տրամաբանության վրա), ոչ թե անարատ մանկական հնազանդությամբ, որով վարվեց իր եղբայր Հաբելը:

Իշխիր նրա վրա

Աստվածաշունչն ասում է մեզ. «Հավատքով Հաբելը Կայենից ավելի լավ պատարագ մատուցեց Աստծուն, որով վկայություն ընդունեց, թե արդար է, երբ որ Աստված նրա պատարագների վրա վկայություն տվեց, որ նրանով տակավին հիմա էլ խոսում է, թեպետև մեռել է» (Եբր. 11.4): Նոր կտակարանի այս հեղինակը հավասարեցրեց Հաբելի հնազանդությունը հավատքին: Հաջորդ գլուխներից մեկում կսովորենք, որ ճշմարիտ հավատքը հավասար է հնազանդությանը և հիմնված է հնազանդության վրա: Ճշմարիտ հավատքն արտահայտվում է հնազանդությամբ, ոչ թե ճշմարտության և սխալի գիտակցմամբ:

Հենց որ Կայենը գիտակցեց, որ իր ջանքերը և զոհաբերությունն անընդունելի էին Աստծո համար, «շատ բարկացավ և երեսը կախեց» (Ծնն. 4.5): Այսպիսին է կեղծավոր կրոնական մարդու դասական արձագանքը, երբ նրան ընդդիմանում են ճշմարտությամբ: Նա բարկանում է: Դուք կտեսնեք սա ամբողջ Աստվածաշնչում: Այս բարկության պատճառը հպարտությունն է, իսկ հպարտությունը մերժում է Աստծո կամքը և ճանապարհները՝ սեփական կամքին և ճանապարհներին հարելու համար:

Իր ողորմությամբ, Աստված փորձեց բացել Կայենի աչքերը՝ հարցնելով. *«Ինչո՞ւ ես բարկացած: Եվ ինչո՞ւ է երեսդ իջեցրած: Եթե ճիշտ վարվես, մի՞թե չես ընդունվի»* (Ծնն. 4.6,7, NKJV): Աստծո հետ ճիշտ վարվելը՝ Նրան հնազանդվելն է: Նա հնազանդություն է ցանկանում՝ զոհից ավելի: Անթիվ անգամներ Նա պատվիրում էր Իր ժողովրդին թողնել իրենց երգերը և երաժշտական գործիքները և այլևս զոհաբերություններ չբերել: Ինչո՞ւ: «Որովհետև Ես կանչեցի, և պատասխանող չկար, խոսեցի, և նրանք չլսեցին» (Եսայի 66.4): Նրանք զոհաբերում էին, սակայն չէին լսում, այսինքն՝ չէին հնազանդվում Նրա ասածին: Երկրպագության բարձրագույն ձևը հնազանդությունն է:

Իմանալով սա՝ մենք կարող ենք «հնազանդվել Ինձ» բառերը տեղադրել «ճիշտ վարվելու» փոխարեն Ծննդոց գրքի այս խոսքում՝ առանց փոխելու դրա իմաստը: Այն այսպիսին կլինի. «Կայե՛ն, ինչո՞ւ ես բարկացած: Կարիք չկա, որ այդպիսին լինես: Սովորի՛ր սրանից. եթե հնազանդվես Ինձ, ինչպես քո եղբայրը, Ես

կընդունեմ քեզ և քո զոհը, ինչպես որ ընդունեցի Հաբելին և նրա զոհը»:

Տերը զգուշացրեց. «Բայց եթե բարի չլինես [եթե չինազանդվես և համառես քո ներկա դատողությամբ], մեղքը դռան մոտ պառկած է և քեզ է փափագում, բայց դու իշխի՛ր նրա վրա» (Ծննդ. 4.7): Այս խոսքում ուշադրություն դարձրեք երկու բանի: Առաջինը՝ մեղքը (անհնազանդությունը) ցանկություն ունի: Անօրինության տիրակալը՝ սատանան, անհնազանդության ետևում կանգնած ուժն է: Ադամի միջոցով մուտք ստանալուց ի վեր նա ունի մեկ նպատակ՝ վերահսկել և տիրապետել բոլորին և ամեն ինչ: Պատկերացրեք չար գիտնականի, որն անպարունակելի քանակությամբ ռադիոակտիվ գազեր է բաց թողնում մեր մթնոլորտի մեջ: Այդ գազերն ամենուր թափանցում են, թեև այդ գիտնականն ամենուրեք չէ: Նա գործի է դնում մահացու և ազդեցիկ մի ուժ: Միակ մարդիկ, որոնք պաշտպանված կլինեն այդ գազերից, պաշտպանական հանդերձանք կրողներն են: Աստվածաշունչը հստակ ասում է. «Մենք գիտենք, որ Աստծո զավակներ ենք, և որ մեր շուրջը գտնվող աշխարհը չարի իշխանության և վերահսկողության ներքո է» (Ա Հովհ. 5.19, NLT):

Այս իրողությունը պատկերելու մեկ այլ միջոց է մեղքի ցանկությունը տիեզերական ձգողության օրենքի հետ համեմատելը: Այն հաստատուն ուժ է, որը մշտապես գործում է և ամբողջությամբ ազդում է նյութական աշխարհի վրա: Եթե քայլ անեք որևէ շենքի տանիքից, դուք կենթարկվեք դրա ազդեցությանը և կընկնեք մինչև ամենացածր կետը, այն էլ՝ մեծ թափով: Գուցե դուք չուզեք ընկնել կամ չուզեք իմանալ ո՛չ ձգողության ուժի մասին, ո՛չ էլ հավատալ դրան: Բայցևայնպես, կենթարկվեք դրա ազդեցությանը:

Եկավ մի ժամանակ, երբ գիտնականները բացահայտեցին այլ օրենք՝ ամբարձիչ ուժի օրենքը: Նրանք պարզեցին, որ ճիշտ պայմանների դեպքում ամբարձիչ ուժը գերազանցում է ձգողության ուժը: Նորարար մարդիկ ստեղծեցին ինքնաթիռը՝ ամբարձիչ ուժի հիման վրա: Երբ ինքնաթիռով թռչում եք, դուք որոշ չափով ազատ եք ձգողության օրենքից և չեք ընկնում մինչև ծանրության ամենացածր կետը: Աստվածաշունչը հայտնում է մեզ. «Որովհետև Կյանքի Հոգու օրենքը Հիսուս Քրիստոսում ազատեց ինձ

մեղքի և մահվան օրենքից» (Հռոմ. 8.2): Ինչպիսի՜ հրաշալի լուր:

Ես հաճախ եմ ինքնաթիռ նստում: Ավետարանը աշխարհով մեկ տարածելու երեսուն տարվա ընթացքում ես թռչել եմ գրեթե տասնվեց միլիոն կիլոմետր: Երբ ինքնաթիռ եմ նստում, ուրախանում եմ, որ ամբարձիչ օրենքն ազատում է ինձ ձգողության օրենքից: Այնուամենայնիվ, եթե օդաչուն որոշեր անջատել շարժիչները, կամ եթե ինքնաթիռի թևերը պոկվեին, այդ ինքնաթիռն ամբողջությամբ կենթարկվեր ձգողության օրենքի ուժին և մեծ թափով կընկներ: Մենք այլևս չէինք իշխի ձգողության օրենքին, այլ կհայտնվեինք այն բանի իշխանության ներքո, որի վրա մի ժամանակ իշխանություն էինք գործադրում:

Աստվածաշունչը շարունակում է նույն գլխում. «Ապա ուրեմն, եղբայրնե՛ր, պարտական ենք ոչ թե մարմնին՝ մարմնի պես ապրելու, որովհետև եթե մարմնավորապես ապրեք, կմեռնեք» (Հռոմ. 8.12,13): Թեև Կյանքի Հոգու օրենքն ազատում է մեզ մեղքի օրենքից, մեղքի օրենքը շարունակում է ուժի մեջ մնալ: Մենք պաշտպանված ենք այդ օրենքից կամ իշխում ենք դրա վրա՝ ճշմարիտ հավատքով կամ հնազանդությամբ, որը բխում է մեր սրտից:

Կյանքի Հոգու օրենքը նույնպես «հավատքի օրենք» է կոչվում (տե՛ս Հռոմ. 3.27): Մենք գիտենք, որ հավատքի օրենքը գերազանցում է մեղքի օրենքը: Ճշմարիտ հավատքի մասին գրված է, որ այն համապատասխան հնազանդության գործեր ունի (տե՛ս Հակոբ. 2.19-23): Հավատքը և հնազանդությունն անբաժանելի են, քանի որ հնազանդությունը վկայում է ճշմարիտ հավատքի մասին:

Հաբելն իշխեց մեղքին և մահվան օրենքին՝ հավատքով կամ Աստծուն հնազանդվելով: Ինչ վերաբերում է Կայենին, Աստված զգուշացրեց. «Մեղքի ցանկությունը քեզ է ուղղված (նույն կերպով, որով ձգողության ուժի ցանկությունը կամ ազդեցությունը ուղղված է ցանկացած նյութի). եթե հնազանդվես Ինձ, կիշխես դրան (ինչպես որ ամբարձիչ ուժն է գերազանցում ձգողությունը)»: Մենք իշխում ենք մեղքին՝ հնազանդության միջոցով:

Բաց մուտք

Երկրորդը, ինչ Աստված ասաց Կայենին, հետևյալն էր. «Եթե ճիշտ չվարվես [չհնազանդվես Ինձ], մեղքը պառկած է դռան մոտ»

(Ծննդ. 4.7, NASB)։ Ուշադրություն դարձրեք, որ Նա օգտագործեց *«դուռ»* բառը։ Յուրաքանչյուր մարդու կյանքում կա այլաբանական դուռ, որը գոյություն ունի, անկախ այն բանից՝ դուք տեղյա՞կ եք, թե՞ ոչ։ Այն խորհրդանշում է մուտքը դեպի ձեր կյանք։ Տվյալ դեպքում խոսքը մեղքի և դիվային ուժի մուտքի մասին է։ Աստված ասում է մեզ հենց սկզբից, թե ինչն է բացում մեղքի և դիվային ազդեցության դուռը, և ինչն է փակում այն։ Անհնազանդությունը բացում է այն, իսկ հնազանդությունը ամուր փակում է։

Ի՞նչ կատարվեց Կայենի հետ։ Նա համառեց իր իմաստությամբ և դատողությամբ։ Նախանձը մուտք գործեց նրա սիրտը, և դրան անմիջապես հետևեց վիրավորանքը։ Հաջորդը ատելությունն էր։ Նա սպանություն ծրագրեց և շատ չանցած զայրույթի պոռթկումով սպանեց եղբորը։ Նա թշնամացավ և կորցրեց Աստծո երկյուղը։ Նա ցույց տվեց իր վերաբերմունքն արհամարհական պատասխանով, երբ Աստված հարցրեց նրան, թե որտեղ է իր եղբայրը. «Չգիտեմ։ Մի՞թե ես եղբորս պահապանն եմ» (Ծննդ. 4.9)։ Նա ստեց Աստծուն, քանի որ շատ լավ գիտեր, թե որտեղ էր իր եղբայրը։

Յուրաքանչյուր ողջամիտ մարդ կհասկանար, որ Աստված գիտեր, թե որտեղ էր Հաբելը։ Այնուամենայնիվ, հենց սա է տեղի ունենում, երբ մարդը հետևում է իր դատողությանը և թույլ է տալիս, որ անհնազանդությունը մուտք գործի իր կյանք։ Նա կորցնում է կապը հոգևոր իրականության հետ։ Նա փորձում է ցածրացնել Աստծո պատկերը՝ իր մակարդակին և սահմանափակումներին հասցնելով, և երևակայում է, որ ինքն Աստծո պես իմաստուն է, իսկ երբեմն՝ նույնիսկ ավելի իմաստուն։ Նման մարդը ողջամիտ չէ։ Լյուցիֆերը դրա վառ օրինակն է. անօրինությունից ծնված դատողությունների պատճառով նա հավատաց, որ կարող էր գահընկեց անել Աստծուն։ Ինչպիսի՞ անմտություն։ Սակայն նա շատերին տարավ իր ճանապարհով (տե՛ս Եսայի 14.12-17)։

Եթե դուք Կայենի և Հաբելի ընկերը լինեիք և չիմանայիք տեղի ունեցածի մասին, գուցե ամբողջ այդ իրավիճակը շփոթեցներ ձեզ։ Ինչպե՞ս կարող է մի մարդ, որը սկզբում ջանասիրաբար ծառայում էր Աստծուն, աներկյուղ մարդասպան դառնալ։ Ինչպե՞ս է դա հնարավոր։ Նա բացել էր իր անձի դուռը մեղքի օրենքի համար՝ համառելով իր անհնազանդությամբ։ Դուք լսե՞լ եք «Մատդ

որ տաս, ձեռքդ էլ կպոկի» ասացվածքը: Այն կատարելապես նկարագրում է անհնազանդության օրենքը: Եթե դուք միայն մի փոքր բացեք ձեր կյանքը դրա համար, դա նման կլինի ամբարտակի վրայի ճաքի: Մյուս կողմում գտնվող ջուրն ի վերջո ամբողջ թափով ներս կհորդի:

Ես ավելի քան երեսուն տարի Ավետարանի ծառայող լինելու պատիվ եմ ունեցել: Այդ ընթացքում ականատես եմ եղել այս օրենքի ազդեցությանը անթիվ իրավիճակներում: Ես տեսել եմ մարդկանց, որոնք սկզբում կրակով լցված էին Աստծո համար: Նրանք ակտիվ էին իրենց եկեղեցում և մշտապես պատմում էին մարդկանց Հիսուսի մասին: Նրանք նման էին Կայենին, որը սկզբում ջանասեր էր: Այնուամենայնիվ, ժամանակի ընթացքում տեղի ունեցան որոշ իրադարձություններ, որոնք բացահայտեցին ինքնակամության բնագավառներ, որոնք դեռ մնացել էին նրանցում: Գուցե, ինչպես Կայենի դեպքում, դա տեղի ունեցավ Աստծո անմիջական իշխանության միջոցով, կամ էլ Նրա լիազորած իշխանության միջոցով: Բոլոր դեպքերում, թվում է՝ դա մշտապես կապ ունի իշխանության հետ:

Ես տեսել եմ, որ այդ մարդիկ հրաժարվեցին հպատակվել իրենց առաջնորդների կամքին և համառեցին իրենց ճանապարհներով: Այդ դեպքում միայն ժամանակի հարց է, թե երբ անօրինությունը կհեղեղի նրանց կյանքը: Գուցե այն չդրսևորվի սպանությամբ, բայց մեկ բան հաստատ է. այն ինչ-որ կերպով դրսևորվելու է: Հնարավոր է, որ նրանց մարմինը հայտնվի ագահության, ատելության, բարկության, վիրավորանքի, վեճերի, բամբասանքի, սեռական մեղքի կամ մարմնական բնության անթիվ այլ ստրկացնող կապանքների հեղեղում: Հաճախ այս խաբված և վիրավորված վիճակում նրանք պատկերացնում են, որ ճիշտ դիրք ունեն Աստծո առջև, իսկ բոլոր իշխանությունները ծայրահեղ են, օրինապաշտ են կամ անհաղորդ են:

Եթե այդ դեպքերը նման են Կայենի պատմությանը, այսինքն՝ եթե այդ մարդիկ ապստամբում են Աստծո անմիջական իշխանության դեմ, նրանք փոքրացնում են Աստծո պատկերը, իշխանությունը և զորությունը՝ հասցնելով դրանք ավելի վերահսկելի մակարդակի, ինչի պատճառով շարունակ ավելի աներկյուղ են դառնում: Նրանք դավանում են Նրա իշխանությունը, բայց իրա-

կանում ծառայում են այնպիսի Հիսուսի, որը ստեղծված է իրենց պատկերով: Առանց գիտակցելու, իրենց սրտում նրանք Աստծո գահից և իշխանությունից ավելի վեր են բարձրացնում իրենց դատողությունը: Բոլոր դեպքերում, նրանք կույր են իրենց ճշմարիտ վիճակի հանդեպ՝ իրենց սրտերի մոլորության պատճառով:

Եթե ասեիք Կայենին, երբ նա երիտասարդ էր, դեռևս մեղմ սիրտ ուներ և ծառայում էր Աստծուն. «Մի օր դու սպանելու ես քո եղբորը», նա կցնցվեր և արագորեն կպատասխաներ. «Անհնա՞ր է: Ես երբե՞ք չեմ անի դա»: Այնուամենայնիվ, հետագայում նա բացեց իր սիրտն անօրինության համար և կատարեց այն, ինչը նախկինում անհավատալի էր նրա համար:

Եվ մեր եկեղեցիներում, և՛ մեր եկեղեցիներից դուրս գտնվող մարդիկ մեկ օր կանգնելու են Աստծո առջև և դատվելու են իրենց անօրինության համար: Այնուամենայնիվ, եթե կարողանայիք հետևել նրանց կյանքի ընթացքին, դուք երբեք չէիք պատկերացնի, որ նրանք այդպիսի ավարտ կունենային: Նույնիսկ հիմա նրանք ոչ մի դեպքում չեն համարում, որ անօրեն են, բայց Դատաստանի օրը, երբ ճշմարտությունը հայտնվի, նրանք կզարմանան. *«Ինչպե՞ս այսքան հեռացա Աստծո ճանապարհներին հնազանդվելուց»:* Ցավալի պատասխանը լինելու է հետևյալը. նրանք չսիրեցին և չընդունեցին Նրա ծածկոցի տակ լինելու մասին ճշմարտությունը:

Մոլորության մեջ գտնվող մարդկանց համար կա մեկ հույս՝ որ Աստծո ողորմությունը կբացի նրանց աչքերը, և Նրա ճշմարտության լույսը կհեռացնի մոլորության խավար ծածկոցը: Իմ սրտի աղաղակը և այս գրքի նպատակն է պաշտպանել մարդկանց անօրինության մոլորեցնող ուժի տիրապետությունից, բացահայտել ճշմարտության լույսը նրանց համար, ովքեր արդեն դրա ծուղակում են, և դրանով իսկ ազատել նրանց: Ես քարոզել եմ այս ուղերձն աշխարհով մեկ, և երբ հարցրել եմ, թե քանիսն են անհնազանդության մեջ հայտնվել տարբեր բնագավառներում, արձագանքը չափազանց մեծ է եղել, սովորաբար՝ 50 տոկոսից ավելին: Շատերը խոստովանել են. «Ես չգիտեի, որ իմ կյանքում ապստամբություն կար, քանի դեռ այս ճշմարտությունը չէր բացահայտվել իմ սրտում»:

Ես նույնպես խոստովանում եմ, որ չեմ գրել այս գիրքը՝ որպես

մի մարդ, ով երբեք չի խաբվել անօրինության գաղտնի ուժից: Ո՛չ, ես եղել եմ դրա սարսափելի իշխանության ներքո, և Աստված՝ Իր իմաստությամբ, բացահայտել է այդ սխալմունքն իմ սրտի և վարքի մեջ: Ես պատմում եմ ձեզ այն, ինչից տեղյակ եմ և ինչից ինքս եմ ազատվել: Այնքա՜ն շնորհակալ եմ մեր թանկ Տիրոջից՝ սիրով լի ողորմության համար:

Աստված ողորմածաբար փորձում է բացել մեր աչքերը այն բնագավառների վրա, որոնցում անհնազանդ ենք: Այնուամենայնիվ, ինչպես Կայենի դեպքում, մենք չենք տեսնի ճշմարտությունը, եթե, նախ, չխոնարհվենք: Հաջորդ գլխում կդիտարկենք խոնարհության անասելի կարևոր դերը մեր ազատության մեջ, ինչպես նաև հպարտության մահացու հետևանքները:

ԳԼՈՒԽ 6

ԱՆՀՆԱԶԱՆԴՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ II

Աստծո համար մասնակի հնազանդությունը բոլորովին հնազանդություն չէ:

Իսրայելի առաջին թագավոր Սավուղի կյանքը հստակ պատկերում է, թե ինչ է տեղի ունենում, երբ մարդը սիրախաղ է անում անհնազանդության հետ: Նրա ողբերգական պատմությունը բազմաթիվ դասեր է պարունակում, որոնք վերաբերում են մեզ՝ հավատացյալներիս: Մենք կարող ենք որոշ սկզբունքներ հասկանալ այն հանդիմանական խոսքերից, որոնք Տերն ուղղեց նրան: Նրա կյանքն ուսումնասիրելով՝ մենք ավելի հստակ կըմբռնենք աստվածային իշխանությանը լիարժեք կերպով չհնազանդվելու հետևանքները: Եթե թույլ տանք, այս ըմբռնումը կամրապնդի մեզ, և նրա ձախողումը մեզ համար կվերածվի և՛ ուղեցույցի, և՛ զգուշացման: Գրված է. «...ինչ որ գրվեց, մեր սովորելու համար գրվեց» (Հռոմ. 15.4), և «այն ամենն օրինակի համար էր նրանց հանդիպում, բայց մեզ խրատի համար գրվեց, որոնց դարերի վերջը հասավ» (Ա Կորնթ. 10.11):

Մասնակի հնազանդություն

Սկսենք այն պահից, երբ Իսրայելի ավագ մարգարե Սամուելը Սավուղի մոտ գնաց՝ Աստծո բերանից ստացած հրամանով: Նա զգուշացրեց Սավուղին, որ ուշադրությամբ հետևի իր ցուցումներին. «Հիմա գնա՛ և Ամաղեկին զարկի՛ր, և նրա ամբողջ ունեցածը նզովե՛ք, և նրան չխնայես: Եվ մեռցնես՝ մարդուց մինչև կինը, և երեխայից մինչև կաթնակերը, արջառից մինչև ոչխարը, և ուղտից մինչև էշը» (Ա Թագ. 15.3): Դա ուղիղ հրաման էր, և այն շատ հստակ էր: Ամաղեկում գտնվող ամեն բան՝ թե՛ մարդիկ, թե՛ կենդանիներ, չպետք է ողջ թողնվեր: Ամեն շունչ ունեցող պետք է ոչնչացվեր:

Ուշադրություն դարձրեք Սավուղի պատասխանին: Նա չասաց. «Ես այդպես չեմ վարվի... դա չափազանց դաժան է»: Շատ հաճախ մենք սահմանափակում ենք մեր պատկերացումն ապստամբության մասին ընդամենը դրա ակնհայտ դրսևորմամբ՝ բացահայտ անհնազանդությամբ: Այնուամենայնիվ, շուտով կտեսնենք, որ դա բոլորովին այդպես չէ: Նաև այնպես չէր, որ Սավուղը համաձայնեց, իսկ հետո մտափոխվեց: Շատերը գիտեն, որ դա նույնպես անհնազանդության տեսակ է: Ո՛չ էլ Սավուղն անտեսեց դա՝ առաջնահերթ չհամարելով, և չհնազանդվեց, քանի որ մոռացավ այդ մասին: Շատերը կընդունեն, որ դա հնազանդ վարք չէ, սակայն ներողամտություն կցուցաբերեն՝ բարի մտադրություններից ելնելով: Ամենայն հավանականությամբ, բոլորը կհամաձայնեն, որ այս տարբերակները անհնազանդ վարքի օրինակներ են, բայց կրկին ուղղենք մեր ուշադրությունը Սավուղին:

Նա անմիջապես հավաքեց իր բանակը և պատրաստվեց Ամաղեկի վրա հարձակման: Ամեն ինչ գերազանց էր թվում: Նա հարձակվեց և սպանեց յուրաքանչյուր տղամարդու, կնոջ, երեխայի և կաթնակերի: Սավուղը և նրա հզոր բանակը սրի քաշեցին տասնյակ հազարավորների:

Այնուամենայնիվ, Սավուղը խնայեց Ամաղեկի թագավորին: Ինչո՞ւ: Հավանաբար, նա վարվեց ըստ այդ ժամանակվա մշակույթի: Երբ որևէ թագավոր որևէ երկիր էր նվաճում և ողջ բռնում էր դրա առաջնորդին, նա ստրկացնում էր նրան և իր պալատ էր բերում՝ որպես կենդանի հաղթանշան:

Սավուղը նույնպես սպանեց հազարավոր անասունների: Այնուամենայնիվ, նա խնայեց լավագույն ոչխարներին, գառներին և հորթերին, գիրացրած անասուններին և այն ամենը, ինչը արժեքավոր էր, և տվեց դրանք իր մարդկանց, որպեսզի զոհաբերեին Աստծուն, այսինքն՝ վարվեին «համաձայն Աստծո Խոսքի»: Պատկերացրեք, թե ինչպես էին մարդիկ դիտարկում նրա արարքները: Ոչնչացման համար նախատեսված կենդանիներին զոհաբերելով Տեր Եհովային՝ նրանք մտածում էին. *«Ինչպիսի՜ աստվածապաշտ է մեր թագավորը. նրա համար Աստված միշտ առաջին տեղում է»:*

Բայց Աստված բոլորովին այլ կերպ վերաբերվեց դրան: Նա գանգատվեց Սամուելին. «Ես մեծապես զղջում եմ, որ թագավոր եմ կարգել Սավուղին, որովհետև նա ետ դարձավ Ինձ հետևելուց և չկատարեց Իմ պատվիրանները» (Ա Թագ. 15.11, NKJV): Սավուղը սպանեց տասնյակ հազարավորների և խնայեց միայն մեկին: Նա կատարեց իրեն հրամայվածի 99 տոկոսը: Շատերս հնազանդության արարք կհամարեինք նրա արշավանքը, բայց Աստված անհնազանդություն տեսավ դրանում: Իրականում, մի քանի խոսք անց Նա *ապստամբություն* անվանեց այն՝ մարգարեի միջոցով: Այսպիսով, մենք հասկանում ենք, որ Աստծո համար մասնակի հնազանդությունը բոլորովին հնազանդություն չէ: Իրականում, գրեթե կատարյալ հնազանդությունը՝ նույնիսկ 99 տոկոսանոց հնազանդությունը, համարվում է ոչ թե հնազանդություն, այլ՝ ապստամբություն:

Որքա՜ն հաճախ ենք մենք լսում այս խոսքերը. «Ինչո՞ւ չեք տեսնում այն ամենը, ինչ ես արել եմ: Դուք կենտրոնանում եք այն փոքր բաների վրա, որոնք ես չեմ արել»: Սավուղն, անկասկած, կարող էր այդպես ասել: Գուցե դա ընդունելի է մարդկային դատողության համար, բայց դա անընդունելի է աստվածայինի համար:

Սամուելը գնաց Սավուղին հանդիպելու, և երբ Սամուելը նրա մոտ հասավ, Սավուղը խանդավառությամբ ողջունեց մարգարեին. «Տիրոջից օրհնյա՛լ լինես: Տիրոջ Խոսքը կատարեցի» (Ա Թագ. 15.13): Կարելի է զգալ նրա ձայնի ուրախությունը և վստահությունը: Ես լիովին հավատում եմ, որ Սավուղն անկեղծ էր: Նա իսկապես հավատում էր, որ կատարել էր իրեն տրված պատվերը. այնուամենայնիվ, Աստված ասաց, որ նա ապստամբել էր:

Ինչպե՞ս կարելի է բացատրել ահռելի տարբերությունը՝ նա-

խորդ երեկոյան Աստծո կողմից ասված խոսքերի և Սավուղի սրտանց համոզվածության միջև: Պատասխանը հետևյալ խոսքերում է. «Բայց Խոսքն անո՛ղ եղեք և ոչ միայն լսողներ՝ ձեր անձերը խաբելով» (Հակոբ. 1.22): Այն պահին, երբ մարդը չի հնազանդվում Աստծո Խոսքին, որը պարզորեն հայտնված է իրեն, նրա սրտին քող է իջնում, որն աղավաղում և սահմանափակում է նրա ընկալումը: Այդ քողը մոլորությունն է: Սավուղը մոլորված էր իր դատողությամբ և վստահ էր, որ ճիշտ էր վարվել, այնինչ, իրականում, նա սխալ էր: Նրա համոզմունքը հակասում էր Աստծո իրականությանը, թեև այն կարող էր ընդունելի լինել մարդկային դատողության կողմից:

Դա առաջին դեպքը չէր, երբ Սավուղը լիարժեք կերպով չէր հնազանդվել Տիրոջ Խոսքին: Սամուելը նախկինում հանդիմանել էր նրան անհնազանդության համար (տե՛ս Ա Թագ. 13.1-13): Գուցե եղել են այլ դեպքեր, որոնց մասին գրված չէ: Սավուղն անհնազանդությամբ վարվելու սովորություն ուներ: Հենց որ այդ սովորությունը ձևավորվում է, ճշմարտությունը սխալից տարբերելը ավելի ու ավելի դժվար է դառնում:

Մոլորության քողը

Հիշո՞ւմ եք, երբ առաջին անգամ մեղանչեցիք՝ փրկություն ստանալուց հետո: Ես հիշում եմ: Ինձ թվաց, թե սրտիս միջով դանակ անցավ: Որպես Աստծո զավակներ՝ բոլորիս ծանոթ է այս զգացումը: Մենք համակվում ենք Սուրբ Հոգու և մեր սրտի հանդիմանությամբ: Բայց ի՞նչ է տեղի ունենում, երբ արդարացնում ենք մեր արարքը՝ հրաժարվելով ճշմարտապես ապաշխարելուց: Երկու բան. առաջինը՝ մենք հակված ենք լինում նույն անհնազանդ արարքը կրկնելուն: Երկրորդը՝ մոլորության քողը ծածկում է մեր սրտերը՝ թուլացնելով հանդիմանության զգացումը և փոխարինելով այն դատողություններով:

Հաջորդ իրավախախտման ժամանակ մենք դանակի հարվածի սաստկություն չենք զգում, քանի որ մեր սիրտը քողով է պատված. մենք միայն անհարմարավետ կսմթոց ենք զգում: Կրկին, մենք արդարացնում ենք մեզ, և մեր սիրտը պատվում է ևս մեկ քողով, որն ավելի է խլացնում ճշմարտության աղաղակը: Հա-

ջորդ անգամ, երբ օրինազանցություն ենք անում, մենք ընդամենը հանդիմանության թեթև ծակոց ենք զգում: Եթե կրկին արդարացնում ենք մեզ, մեր սիրտը պատվում է ևս մեկ մահվան պատանով: Երբ կրկին մեղանչում ենք, քողն այնքան հաստ է, որ ոչ մի հանդիմանություն չենք զգում, այլ միայն արդարացնում ենք մեզ: Մոլորությունը թաքցրել է ճշմարտությունը մեզնից. մեր խիղճը տաղված է և անկարող է որևէ բան զգալ:

Այդ պահին հնարավոր է, որ մարդը բոլորովին կորցնի աստվածապաշտության կերպարանքը, կամ, ավելի հաճախ, գուցե նա պահպանի աստվածապաշտության կերպարանքը, բայց այնպիսի կյանք վարի, որ գրեթե չտարբերվի Աստծո հետ ուխտ չունեցող մարդկանցից: Թեև նա դավանում է քրիստոնեությունը, նա ապրում է բարու և չարի մասին իր մոլորված գիտելիքով: Նրա պատկերացումը ճշմարտության և սխալի մասին արդեն լինում է այլ աղբյուրից, ոչ թե Աստծո կենդանի Խոսքից, որը Սուրբ Հոգին փչում է նրա սրտի մեջ: Նա ապրում է իր սրտի մոլորված թելադրանքներով: Նա կարող է ապրել Աստվածաշնչի տառով, որը սպանում է (տե՛ս Բ Կորնթ. 3.6), կամ՝ ճշմարտության և սխալի մասին այս հասարակության չափանիշներով: Երկու դեպքում էլ նա կտրված է կենդանի Աստծուց: Երբ մարդն այդ վիճակում է, նրան կարելի է հասնել միայն Աստծուց ուղարկված մարգարեական ավետաբերի միջոցով:

Եռաքայլ գործընթաց

Տերը հաջորդական գործընթաց է կիրառում՝ անհնազանդ մարդուն հասնելու համար: Առաջինը՝ Նա մշտապես ձգտում է հասնել մարդուն հանդիմանության միջոցով: Բայց եթե մարդը շարունակ անհնազանդ է եղել և այնպիսի վիճակում է, որ կորցրել է կապն Աստծո սրտի և ցուցումների հետ՝ մոլորության քողի պատճառով, Աստված մարգարեական ավետաբերի է ուղարկում, ինչպես որ Սավուղի մոտ ուղարկեց Սամուելին: Մարգարեի իրական ծառայությունը մարդկանց աչքերը բացելն է, որպեսզի տեսնեն Աստծո ճանապարհները: Պարտադիր չէ, որ այդ մարդը հենց մարգարե լինի. այդ ուղերձը կարող է տրվել հովվի, ծնողի, տնօրենի, կողակցի կամ ընկերոջ միջոցով: Հակոբոսը բացատրում է. «Իմ *թանկագի՛ն եղբայրներ և քույրեր,* եթե որևէ մեկը ձեզնից մո-

լորվի ճշմարտությունից և կրկին վերադարձվի, կարող եք վստահ լինել, որ նա, ով վերադարձնում է այդպիսի մարդուն, կփրկի այդ մեղավորին մահից և շատ մեղքերի ներման պատճառ կդառնա» (5.19,20, NLT): Ուշադրություն դարձրե՛ք, որ այս ուղերձը վերաբերում էր մեղքի մեջ ապրող հավատացյալներին: Նույնպես ուշադրություն դարձրե՛ք «շատ մեղքեր» արտահայտությանը: Մոլորությունը շարունակական անհնազանդության արդյունքն է:

Երբ մարգարեական ավետաբերը (կամ՝ ավետաբերները) ուղարկվում է, սակայն մենք, միևնույն է, չենք լսում, Աստված փորձում է հասնել մեզ դատաստանի միջոցով: Պողոսը գրում է. «Որովհետև եթե մենք *դատեինք* մեզ, չէինք *դատվի»* (Ա Կորնթ. 11.31, NKJV): Թվում է՝ «դատել» բառը երկու անգամ է գրված այս խոսքում: Այնուամենայնիվ, երկու դեպքում էլ տարբեր հունարեն բառեր են օգտագործվում: Առաջին գործածությունը՝ «Որովհետև եթե մենք *դատեինք* մեզ» հատվածում, հունարեն *«դիակրինո»* բառն է, որը նշանակում է «մանրակրկիտորեն առանձնացնել» (սա տեղի է ունենում, երբ սպառիչ կերպով քննում ենք մեր անձերը, որպեսզի առանձնացնենք պիղծը արժեքավորից): Մենք կատարում ենք սա՝ խոստովանելով մեր անհնազանդությունը և ապաշխարելով: Երկրորդ գործածությունը՝ «չէինք *դատվի»* հատվածում, հունարեն *«կրինո»* բառն է, որը նշանակում է «պատժել կամ դատապարտել»: Պողոսը շարունակում է. «Բայց դատվելով [*«կրինո»*՝ պատժվելով]՝ Տիրոջից խրատվում ենք, որ աշխարհի հետ չդատապարտվենք» (խոսք 32): Աստված փափագում է առանձնացնել մեզ մեր անհնազանդությունից, որպեսզի չպատժվենք այս աշխարհի հետ (տե՛ս Մատթ. 7.20-23, Ղուկ. 12.45-48):

Այնպես որ, հարցը հետևյալն է. ինչպե՞ս է Աստված դատում կամ պատժում Իր ժողովրդին, երբ նրանք անտեսում կամ մերժում են մարգարեական զգուշացումը: Պատասխանը հետևյալն է. սովորաբար այս դատաստանը գալիս է նեղությունների, հիվանդության կամ այլ տեսակի տառապանքների ձևով: Սաղմոսերգուն հայտարարում է.

> «Մինչև տառապանք կրելը ես շեղվում էի,
> Բայց հիմա պահում եմ Քո Խոսքը...
> Ես գիտեմ, Ո՛վ Տեր, որ Քո դատավճիռներն արդար են,

Եվ որ հավատարմությամբ Դու տառապանք պատճառեցիր ինձ» (Սաղմ. 119.67,75, NKJV):

Եթե կարդանք, թե ինչ ասաց Պողոսն այս եկեղեցուն՝ այլ թարգմանությամբ, ամեն ինչ շատ պարզ կդառնա. «Ահա թե ինչու են ձեզնից շատերը տկար և հիվանդ, և ոմանք նույնիսկ մահացել են: Բայց եթե քննենք մեզ, չենք քննվի Աստծո կողմից և այս կերպով չենք դատվի» (Ա Կորնթ. 11.30,31, NLT):

Վառ օրինակ

Ես ականատես եմ եղել բազմաթիվ դեպքերի, երբ մարդիկ դատաստանի են ենթարկվել, քանի որ չեն արձագանքել Աստծո ուղղիչ գործընթացի առաջին երկու միջոցներին: Մի վառ օրինակ տեղի ունեցավ 1990-ական թվականներին, երբ քարոզում էի Տեխասում գտնվող մի երիտասարդական ճամբարում: Այդ շաբաթվա սկզբում ես մեծ հակառակություն էի զգում, քանի որ այդ երիտասարդներից շատերը կորցրել էին զգայունությունը Տիրոջ հանդեպ՝ մեղքի պատճառով: Յուրաքանչյուր ծառայությանը մի քանի երիտասարդ տղաներ և աղջիկներ առաջ էին գալիս և ապաշխարում էին մեղքերից, որոնցից մեծ մասը սեռական բնույթի էր, և փառավոր կերպով սրբվում էին Հիսուսի արյամբ: Ես խանդավառությամբ սպասում էի հաղթական ծառայության վերջին երեկոյին՝ այն ապաշխարության շնորհիվ, որը ցանվել էր ամբողջ շաբաթվա ընթացքում:

Երբ ներս մտա այդ վերջին ծառայությանը, հասկացա, որ այն չէր սկսվելու այնպես, ինչպես ակնկալում էի: Ես կրկին զգացի, որ պետք էր շտկում բերել և ապաշխարության կոչ անել: Երբ ժամանակն էր, որ քարոզեի, ես վերցրի միկրոֆոնը և սկսեցի աղոթել: Սուրբ Հոգին ցույց տվեց ինձ. *«Այս լսարանում դեռ մեկ անձնավորություն կա, որն ապստամբության մեջ է: Նրան առաջ գալու ևս մեկ հնարավորություն տուր»* (ես քարոզել էի ապստամբության մասին նախորդ ծառայությանը): Ես ապաշխարության կոչ արեցի, մի քանի երիտասարդներ մոտեցան, բայց իմ սրտում գիտեի, որ նրանցից ոչ ոք այն անձնավորությունը չէր, որին Սուրբ Հոգին նկատի ուներ: Առաջ եկողները զգայուն երիտասարդ տղաներ և

աղջիկներ էին, որոնք, հավանաբար, ուզում էին այլ խնդիրներ հաղթահարել:

Սուրբ Հոգին կրկին խոսեց իմ սրտում. «Ասա՛ այդ անձնավորությանը, որ եթե նա չարձագանքի այս երեկո, նրա կյանքում դատաստան է գալու»: Ես ասացի ճիշտ այն, ինչ Նա խոսեց իմ սրտում, և ավելի շատ երիտասարդ տղաներ և աղջիկներ առաջ եկան, բայց կրկին, ես զգացի, որ այն անձնավորությունը, որին Աստծո Հոգին նկատի ուներ, նրանց թվում չէր:

Սուրբ Հոգին կրկին խոսեց իմ սրտում. *«Ասա՛ այդ անձնավորությանը, թե ինչ դատաստան է լինելու, եթե չարձագանքի»:* Նրա ասածից տպավորվեցի և կրկին լսեցի Նրա ձայնը. *«Ասա՛ այդ անձնավորությանը, որ երեք շաբաթ անց նա ճակատագրական ավտովթարի կենթարկվի, եթե չարձագանքի այս երեկո»:*

Վախով և դողալով՝ ես հաստատակամորեն կրկնեցի այն բառերը, որոնք Նա խոսեց իմ սրտում: Ավելի շատ երիտասարդ տղաներ և աղջիկներ առաջ եկան, բայց կրկին, ես գիտեի, որ նրանցից ոչ ոք այն անձնավորությունը չէր, որին Տերը նկատի ուներ: Տերը բաց թողեց ինձ՝ թույլ տալով ծառայել առաջ եկողներին և աղոթել նրանց հետ: Ես այդպես էլ արեցի, այնուհետև սկսվեց այն ազդեցիկ ծառայությունը, որն ակնկալում էի: Տերը հպվեց շատ երիտասարդների. ոմանք ծառայության կանչ ստացան: Ոմանք բժշկվեցին և առաջնորդություն ստացան իրենց կյանքի համար: Դա այնպիսի երեկո էր, որը ոչ ոք չէր մոռանա, և գուցե երբեք էլ չմոռանար:

Մի քանի ամիս անց հեռախոսով խոսում էի այդ երիտասարդական ծառայության հովվի հետ: Նա պատմում էր, թե ինչ էր տեղի ունեցել երիտասարդների կյանքում այդ ճամբարից հետո: Նա ասաց.

- Ջո՛ն, մեր երիտասարդական ծառայության մեջ ավագ դպրոցի մի աշակերտուհի կա, ով ավելի շատ հոգս էր պատճառել մեզ, քան որևէ այլ երիտասարդ: Նա միշտ անհնազանդ էր և խնդիրներ էր ստեղծում: Իմ սրտում ես գիտեի, որ Սուրբ Հոգին հենց նրան էր դիմում այդ վերջին երեկոյան: Ես անչափ տրտմեցի, երբ նա չարձագանքեց:

Ես նույնիսկ գաղափար չունեի, թե ով էր այդ աղջիկը: Նա շարունակեց.

- Ճամբարից երեք շաբաթ անց նա ավտովթարի ենթարկվեց, ինչպես որ դու զգուշացրել էիր: Մեքենան լիովին շարքից դուրս էր եկել:

Ես ցնցվեցի. ուզում էի իմանալ, թե ինչ էր կատարվել նրա հետ: Ես գիտեի, որ Աստծո Հոգով էի խոսել, բայց հուսով էի, որ այդ անձնավորությունը կլսեր Նրա կանչը մինչև այդ ողբերգության վրա հասնելը: Նա շարունակեց.

- Աստված խնայեց նրա կյանքը: Նա ծանր վիճակում էր, բայց կազդուրվել է: Այժմ նա ամենից շատ կրակով լցված աղջիկն է մեր եկեղեցում: Նա լիովին այլ անձնավորություն է: Նրա կյանքն ամբողջովին փոխվել է:

Ես թեթևություն զգացի և ուրախացա նրա համար: Կրկի՛ն լսեք Դավթի խոսքերը. «Մինչև տառապանք կրելը ես շեղվում էի, բայց հիմա պահում եմ Քո Խոսքը»:

Այժմ, թույլ տվեք պարզաբանել հետևյալը: Աստված չէ, որ բերում է այդ բաները մեր կյանքում: Փոխարենը, Նա վերցնում է Իր պաշտպանող ձեռքը և թույլ է տալիս, որ թշնամին բերի մեզ վրա այն, ինչից հնազանդությունը կպաշտպաներ մեզ: Սաղմոսերգուն ազդարարում է.

> «Մարդիկ հեծացրիր մեր գլխի վրա,
> Կրակի և ջրի մեջ մտանք,
> Եվ Դու հանեցիր մեզ առատության տեղ» (Սաղմ. 66.12):

Եվս մեկ թարգմանության մեջ գրված է. «Դու դուրս հանեցիր մեզ՝ դեպի առատ բավականություն» (NKJV): Այդ ավտովթարը լրջորեն գրավեց այդ երիտասարդ աղջկա ուշադրությունը: Նա ապաշխարեց հիվանդանոցում և դուրս եկավ հարուստ բավականության վայր: Դա Աստծո շտկման առաջին միջոցը չէր, բայց երբ մյուսները չգործեցին, այն արդյունավետ եղավ:

Երանի՜ կարողանայի ասել, որ բոլոր նման դեպքերն այդ կերպով են ավարտվում, սակայն այդպես չի լինում: Ես մեկ այլ նման դեպք եմ հիշում: Մի երիտասարդ, որը նույնպես ապստամբության մեջ էր, զգուշացում ստացավ մի ծառայողից, որին ես ճանաչում եմ: Նա ուշադրություն չդարձրեց այդ զգուշացմանը և կարճ ժամանակ անց ճակատային ավտովթարի ենթարկվեց և տեղում

մահացավ: Ես կարող եմ անթիվ այլ վկայություններ պատմել շատերի մասին, որոնք ապաշխարել են և օրհնվել, նաև նրանց մասին, որոնց կյանքի ավարտը նման է եղել Սավուղ թագավորի կյանքի ավարտին:

Հնազանդություն և զոհ

Վերադառնանք Սավուղի պատմությանը: Սամուելը տեսավ Սավուղի մոլորությունը և անմիջապես խոսեց հարցի էության մասին՝ որպես ճշմարիտ մարգարեական ավետաբեր: Սամուելը հարցրեց. «Ապա այս ոչխարների ձայնը ի՞նչ է, որ գալիս է ականջիս, և արջառների ձայնը, որ ես լսում եմ»:

Սավուղն արագորեն պատասխանեց. «Ամաղեկացիներից բերեցին նրանց, որովհետև ժողովուրդը խնայեց լավ ոչխարներին և արջառներին, որ նրանց քո Տեր Աստծուն զոհ մատուցեն, իսկ մյուսներին փչացրինք» (Ա Թագ. 15.14,15):

Առճակատվելով ճշմարտությանը՝ նա հեռացրեց մեղադրանքն իրենից՝ ուղղելով այն ժողովրդին: «Ես ուզում էի հնազանդվել,- նկատի ուներ նա,- բայց ժողովուրդը ստիպեց ինձ»: Բռնվելով անհնազանդության մեջ՝ չապաշխարող սիրտ ունեցող մարդն ուղղում է մեղադրանքն այլ մարդկանց, այսինքն՝ պատասխանատվություն չի ստանձնում իր արարքների համար:

Ադամը մեղադրեց Աստծուն և Եվային: Եվան մեղադրեց օձին: Ադամը ճիշտ էր. Աստված էր տվել իրեն այդ կնոջը, և կինն էր տվել իրեն այդ պտուղը: Բայց ոչ ոք չհարկադրեց նրան ուտել այն: Նա կերավ իր ազատ կամքով: Այո՛, Եվան խաբվեց, բայց, միևնույն է, անհնազանդ լինելու որոշում կայացրեց:

Սավուղն էր առաջնորդում ժողովրդին. նրանք չէին առաջնորդում նրան: Նա հաշվետու էր ոչ միայն իր անհնազանդության համար, այլև՝ նրանց: Նա էր կարգված՝ առաջնորդելու և կարգադրություններ անելու համար: Առաջնորդնե՛ր, ուշադի՛ր լսեք. դուք հաշիվ եք տալու այն անհնազանդության համար, որը թույլ եք տալիս ձեր խնամքին վստահված մարդկանց կյանքում:

Հեղին՝ Իսրայելի առաջնորդը և Սամուելի վերակացուն, տեղյակ էր, որ իր որդիներն անարգում էին Աստծո կանոնները, սակայն ոչինչ չէր անում: Նա ձևականորեն հանդիմանեց նրանց,

բայց չկիրառեց իր իշխանությունը՝ նրանց հեռացնելու կամ զսպելու համար: Այդ իսկ պատճառով, Աստված վճռեց. «Եվ իրեն իմացրել եմ, որ նրա տունը պիտի դատեմ հավիտյան, որ գիտեր այն անօրինությունը, որ նրա որդիները իրենց վրա անեծք են բերում, և նա չհանդիմանեց նրանց» (Ա Թագ. 3.13): Դատվեցին ոչ միայն Հեղիի որդիները, նույնպես և Հեղին:

Հաջորդը՝ Սավուղն արդարացրեց իր անհնազանդությունը, քանի որ ոչխարները և հորթերը խնայվեցին, որպեսզի զոհաբերվեին Տիրոջը: Նա խաբված էր, եթե մտածում էր, որ անհնազանդության միջոցով կարող էր ընդունելի զոհ կամ ծառայություն մատուցել Աստծուն: Դա ապստամբության աննկատ և խաբուսիկ տեսակ է:

Հիսուսն ասաց. «Եթե մեկը կամենում է Իմ ետևից գալ, թող իր անձն ուրանա և իր խաչն առնի և Իմ ետևից գա» (Մատթ. 16.24): Ոմանք վերցնում են խաչը՝ կենտրոնանալով այն բանի վրա, որ խաչը չարչարանքներով լի և անձնազոհ կյանք է խորհրդանշում: Այնուամենայնիվ, Հիսուսի այս խոսքերում խաչը միակ կամ գլխավոր շեշտադրումը չէր: Դուք կարող եք անձնուրաց և անձնազոհ կյանք ունենալ, սակայն չկատարել Աստծո նպատակը և կամքը: Իրականում, դուք կարող եք ընտրել անձնուրացությունը և անձնազոհությունը, և միևնույն է՝ Աստծո դեմ ապստամբության մեջ լինել:

Հիսուսի այս խոսքերի շեշտադրումը *հնազանդությունն* էր: Միակ միջոցը, որով կարող ենք հնազանդվել, խաչը վերցնելն է: Քանի որ, եթե մենք չմահանանք մեր ծրագրերի և ցանկությունների համար, մեզանում, ի վերջո, Աստծո կամքի և մարդկային ցանկությունների բախում տեղի կունենա: Եթե ցած չդնենք մեր կյանքը, մենք կգտնենք այդ ցանկությունները կատարելու ինչ-որ միջոց, որը հակառակ է Նրան, և նույնիսկ աստվածաշնչյան հատվածներ կօգտագործենք, որպեսզի սատարենք դա ճիշտ այնպես, ինչպես վարվեց Սավուղը: Մենք պետք է տանք մեզ հետևյալ հարցը. «Կարելի՞ է անհնազանդությամբ ծառայել Աստծուն»: Եթե այո, սատանան գովասանք կստանար մեր «սուրբգրային» կրոնական գործերից և զոհաբերություններից, քանի որ նա է ապստամբության հիմնադիրը և տիրակալը:

Այդ պահին Սամուելը կանգնեցրեց Սավուղի դատողություն-

ները.

> «Սպասի՛ր, որ պատմեմ, ինչ որ Տերը այս գիշեր խոսեց ինձ հետ: Եվ նա նրան ասաց՝ խոսի՛ր: Եվ Սամուելն ասաց. «Ահա դու, որ քո աչքերին փոքր էիր երևում, Իսրայելի որդիների ցեղերին գլուխ եղար, և Տերը քեզ Իսրայելի վրա թագավոր օծեց: Տերը քեզ մեկ ճանապարհով ուղարկեց՝ ասելով. «Գնա՛ և այն մեղավոր ամաղեկացիներին նզովի՛ր և նրանց դեմ պատերազմի՛ր, մինչև որ նրանց բնաջինջ անես»»: Եվ ինչո՞ւ համար չլսեցիր Տիրոջ ձայնին, և ավարի վրա հարձակվելով՝ Տիրոջ առջև չարություն արիր»:

Սամուելն ասաց. «Դու, որ քո աչքերին փոքր էիր երևում, Իսրայելի որդիների ցեղերին գլուխ եղար»: Այլ կերպ ասած՝ Սավո՛ւղ, երբ նոր էիր թագավոր դարձել, դու ոչ հավակնոտ, խոնարհ և հեզ էիր: Մենք տեսնում ենք, որ նա այդպիսին էր տարիներ առաջ, երբ Սամուելն առաջին անգամ ասաց Սավուղին, որ նա թագավոր է լինելու: Չհավատալով լսածին՝ Սավուղը պատասխանեց. «Մի՞թե ես Իսրայելի ցեղերի փոքրագույնից՝ բենիամինյան չեմ, և իմ ազգատոհմը Բենիամինի ցեղի բոլոր ազգատոհմերի պզտիկը չէ: Ինչո՞ւ համար ես ինձ այդպիսի խոսք ասում» (Ա Թագ. 9.21): Սավուղը չէր տեսնում իրեն թագավորի դերում: Նա շփոթված էր այն պատճառով, որ Աստված իր պես աննշան մարդու էր ընտրել:

Ավելի ուշ, երբ Տերը որոշեց ցույց տալ նրան ամբողջ Իսրայելին, բոլոր ցեղերը կանչվեցին՝ վիճակ գցելու համար: Բոլոր ցեղերից ընտրվեց Բենիամինի ցեղը, որից ընտրվեց Սավուղի ընտանիքը, իսկ հետո՝ ինքը՝ Սավուղը: «Եվ նրան որոնեցին, բայց չգտնվեց: Եվ դարձյալ Տիրոջը հարցրին՝ արդյո՞ք այն մարդը այստեղ կգա: Եվ Տերն ասաց. «Ահա նա թաք է կացել, կարասիների մեջ է»» (Ա Թագ. 10.21,22):

Սավուղը շփոթված էր Աստծո ժողովրդին իշխելու մտքից: Նա փոքր էր իր աչքերում: Սամուելը հիշեցրեց դա նրան և ավելացրեց. «Տերը քեզ մեկ ճանապարհով ուղարկեց՝ ասելով. «Գնա՛... նզովի՛ր...»: Ինչո՞ւ ես մտածում, որ Տիրոջից ավելին գիտես: Երբ քո իմաստությունը գերազանցեց Աստծո իմաստությանը: Դու արդեն Նրա տեղն ես գրավել: Ինչ պատահեց այն խոնարհ, ոչ հա-

վակնոտ մարդուն»:

Մի՞թե մեզնից որևէ մեկը գիտի ավելին, քան Աստված: Իհարկե՝ ո՛չ: Բայց երբ մենք չենք հնազանդվում, հենց դա ենք ասում Աստծուն և մեզ շրջապատող մարդկանց: Ինչպիսի՜ անմտություն է կարծելը, որ մենք ավելի իմաստուն ենք, քան Նա, Ով նստած է փառքի գահին: Նա, Ով ոչ միայն ստեղծեց ամբողջ տիեզերքը, այլև պահում է այն: Այն Արարիչը, Ով Իր մատներով շարեց աստղերը երկնքում: Սակայն մենք մեծարում ենք մարդկային իմաստությունը՝ Նրա իմաստությունից ավելի, երբ անտեսում ենք Նրա խորհուրդը:

Ապստամբություն և կախարդություն

Սամուելն ուղիղ նայեց Սավուղին և իր մարգարեական պաշտոնին հատուկ համարձակությամբ հայտարարեց.

> «Ահա հնազանդությունը զոհից լավ է,
> *Եվ* ականջ դնելը՝ խոյերի ճարպից:
> Որովհետև ապստամբությունը՝
> կախարդության մեղքի *պես,*
> Եվ անհնազանդությունը կռապաշտության *պես* է»
> (Ա Թագ. 15.22,23):

Սամուելն ուղղակիորեն կապակցեց ապստամբությունը կախարդության հետ. «Որովհետև ապստամբությունը՝ կախարդության մեղքի *պես* [է]»: Ուշադրություն դարձրեք, որ *«պես»* բառերը շեղագրով են գրված: Աստվածաշնչի որոշ թարգմանություններում այն բառերը, որոնք չկան բնագիր տեքստում, շեղագրով են գրվում: Այդ բառերն ավելացվել են թարգմանիչների կողմից՝ պարզության համար: Այս հատվածի ճշգրիտ թարգմանությունը առանց «պես» բառերի է (*«Աստվածաշնչի միջտողային բառացի թարգմանություն»*, հտ. 2, էջ 750):

Այս պնդումը պետք է այսպես գրված լիներ. «Որովհետև ապստամբությունը կախարդություն է»: Այս կերպով այս հատվածի համատեքստն ավելի պարզ է դառնում: Այլ բան է ապստամբությունը կախարդությանը նմանեցնելը, և լիովին այլ բան է ասելը, որ այն իրականում կախարդություն է: Ակնհայտ է, որ ճշմարիտ

քրիստոնյան ոչ մի դեպքում գիտակցաբար կախարդության չի դիմի: Բայց քանիսն են դրա ազդեցության ներքո գտնվում, քանի որ մոլորված են ապստամբության պատճառով:

«Կախարդություն» բառը մեր երևակայության մեջ առաջացնում է սևազգեստ կանանց պատկեր, որոնք հմայաքներ են մրմնջում, թռչում են ցախավելով և գուշակում են ապագան բյուրեղյա գնդով՝ բաց կրակի վրա եռացող կաթսայի կողքին: Կամ, գուցե, ավելի ժամանակակից տարբերակ՝ ինչ-որ մեկը, ով կախարդում և անիծում է մարդկանց՝ ազդեցություն թողնելու համար: Եկեք թողնենք այս երկու հասկացությունները և բացահայտենք, թե ինչ կա կախարդության սրտում՝ անկախ այն բանից, թե ինչպիսի տեսք է այն ընդունում:

Այս խոսքում գրված «կախարդություն» բառը թարգմանված է եբրայերեն *«քեսեմ»* բառից, որի համարժեքներն են *«գուշակություն»*, *«կախարդություն»* և *«հմայություն»* բառերը: Այնուամենայնիվ, համաձայն մասնագետների, հայտնի չէ, թե արդյո՞ք այս բառի ճշգրիտ իմաստը վերաբերում է օկուլտիզմին, և հենց այդ պատճառով է այն թարգմանվում մի շարք բառերով *(«Հին կտակարանի աստվածաբանական աշխատանքային ձեռնարկ»*, հտ. 3, էջ 805): Կարևորությունը ոչ թե ձևն է կամ մեթոդը, այլ՝ կախարդության արդյունքը կամ նպատակը:

Կախարդությունն անմիջականորեն բացում է մարդուն դիվային տիրույթի համար: Կախարդության նպատակն է *վերահսկել* հանգամանքները, իրավիճակները և մարդկանց՝ տարբեր միջոցներով, հաճախ՝ առանց կախարդությամբ զբաղվող մարդու գիտակցման, թե ինչ է կատարվում հոգևոր իրականության մեջ: Գոյություն ունի լայն շրջանակ՝ սկսած այն մարդկանցից, որոնք լիովին անտեղյակ են, մինչև այնպիսի մարդիկ, որոնք լիարժեք գիտակցում են և տեղյակ են դրանում ներգրավված խավար ուժերից: Ըստ էության, կախարդությամբ կարելի է զբաղվել թե՛ բացարձակ անտեղյակությամբ, թե՛ լիարժեք իմացությամբ: Կախարդության նպատակը վերահսկողությունն է: Այնուամենայնիվ, վերահսկողն անխուսափելիորեն հայտնվում է վերահսկողության ներքո՝ դիվային տիրույթի հետ կապի պատճառով:

Ստրկություն՝ անհնազանդության միջոցով

Որպես նախկին երիտասարդական ծառայության հովիվ, ես հնարավորություն եմ ունեցել առնչվելու օկուլտիզմի հետ: Մեր շրջանի ավագ դպրոցներում կային շատ երիտասարդներ, որոնք տարբեր չափով տարված էին սպիրիտիզմով: Իմ երիտասարդական ծառայության ավագները մշտապես պատմում էին իրենց դասընկերների մասին, որոնք կախարդության և սատանիզմի մեջ էին ներգրավված:

Ամենահետաքրքիր սկզբունքներից մեկը, որ իմացա օկուլտային գործունեության մասին, հետևյալն է. որևէ նորեկի իրենց գիշերաժողովը (կախարդությամբ զբաղվող մարդկանց խումբ) ընդունելիս առաջնորդները խրախուսում էին թմրանյութեր ընդունել, հարբել, ապօրինի սեռական հարաբերություններ ունենալ, գողանալ և կատարել տարբեր արարքներ, որոնք հակառակ էին Աստծո և մեր երկրի օրենքներին: Ես չէի հասկանում դրա պատճառը, մինչև որ Աստված չբացեց ինձ համար այս ճշմարտությունը. «Ապստամբությունը կախարդություն է»:

Նրանց սովորեցնում են. «Որքան ավելի ապստամբեք, այնքան ավելի ուժ կստանաք», և նրանք ձգտում են ուժ ստանալ: Դա ճշմարիտ է, քանի որ ապստամբությունը կախարդություն է. որքան ավելի նրանք ապստամբեն, այնքան ավելի մեծ չափով օրինական մուտք կտրամադրեն դիվային ուժերին՝ իրենց վրա ազդելու, իրենց վերահսկելու և ուժով օժտելու համար: Ապստամբելով Աստծո կանոնների և օրենքների դեմ, ինչպես նաև Նրա կողմից լիազորած իշխանության դեմ, նրանք գիտակցաբար օրինական մուտք են տրամադրում վերահսկող դիվային տիրույթին:

Այս գաղափարն արտացոլված է մի գրքում, որը կախարդներն իրենց սատանայական աստվածաշունչն են անվանում: Մի քանի տարի առաջ, հյուրանոցային համարում մի ծառայությունից հետո, երբ հեռուստաալիքներն էի թերթում, կինս և ես մի ալիք միացրինք, որը սատանիզմի և կախարդության մասին էր: Ես պատրաստվում էի թերթել այդ ալիքը, ինչը սովորաբար իմաստուն որոշում է, քանի որ, իմ համոզմամբ, այն ամենը, ինչ մենք պետք է իմանանք հոգևոր պատերազմի մասին, պետք է բխի Աստծո Հոգուց: Այնուամենայնիվ, ես զգացի, որ պետք է մի պահ

դիտեի այն: Եթերում մի հաղորդում էր, որը քննարկում էր սատանայական աստվածաշունչը: Հաղորդավարն ասաց իրենց առաջին պատվիրանը. «Արա՝ ինչ կամենում ես»:

Դա գրավեց իմ ուշադրությունը: Ես անմիջապես մտաբերեցի աստվածաշնչյան խոսքեր: Սաղմոսերգուն հայտարարում է.

> «Ահա՛ Ես գալիս եմ.
> Գրքի տոմսում գրված է Ինձ համար.
> Քո կամքը կատարել կամեցա, ո՛վ իմ Աստված,
> Եվ Քո օրենքն իմ սրտի մեջ է» (Սաղմ. 40.7,8):

Հիսուսն ասաց Իր մասին. «Իմ կամքը չեմ որոնում, այլ՝ Ինձ ուղարկող Հոր կամքը» (Հովհ. 5.30): Ես գիտեի տարիներ տևող ուսումնասիրությունից, որ Տերը ձգտում է նրանց, ովքեր ապրում են՝ հնազանդվելով Իրեն: Հանկարծ հասկացա, որ հակառակը նույնպես ճշմարիտ է. խավարի հոգիները ձգտում են նրանց, ովքեր ապստամբության մեջ են ապրում: «Արա՝ ինչ կամենում ես» պատվիրանը Աստծո Խոսքի միանշանակ աղավաղում է, որը ճշտորեն համապատասխանում է այն ամենին, ինչ Աստված ասաց ապստամբության վերաբերյալ:

Այն մարդիկ, որոնք հոժարաբար նվիրվում են սատանային ծառայելուն, հասկանում են այս սկզբունքը, սակայն կան նաև խաբված մարդիկ: Ովքեր անիրազեկ են, շփոթում են անօրինությունը ազատության հետ: Բայց ապստամբության մեջ ազատություն չկա: Նոր կտակարանը հստակ ցույց է տալիս, թե իրականում ինչ է տեղի ունենում: Նրանք անառակության ստրուկներ են դառնում: Պետրոսը բացահայտեց այս սխալմունքը հետևյալ կերպով. «Նրանք [այն առաջնորդները, որոնք խրախուսում են անհնազանդությունը] խոստանում են ազատություն, բայց իրենք էլ մեղքի և ապականության ստրուկներ են: Որովհետև մարդն այն բանի ստրուկն է, ինչը վերահսկում է նրան» (Բ Պետրոս 2.19, NLT):

Ճշմարտությունն ակնհայտ է: Դրանում չկա ազատություն. փոխարենը, կա ստրկություն, որը դուռ է բացում դիվային ճնշումների և վերահսկողության համար: Պողոսը կրկին շեշտադրեց այս փաստը. «Չե՞ք հասկանում, որ դուք կարող եք ընտրել ձեր տիրոջը: Դուք կարող եք ընտրել մեղքը (մահվան հետ) կամ հնա-

զանդությունը (արդարացման հետ): Նա, ում ներկայացնեք ձեզ, կընդունի ձեզ և կլինի ձեր տերը, իսկ դուք կլինեք նրա ստրուկը» (Հռոմ. 6.16, TLB):

Հիսուսը շեշտադրեց այս սկզբունքը. «Ճշմարի՛տ, ճշմարի՛տ ասում եմ ձեզ, թե նա, ով մեղք է գործում, մեղքի ծառա (կամ՝ ստրուկ) է» (Հովհ. 8.34): Հիշե՛ք Կայենի անհնազանդությունն այն բանում, թե ինչ որոշեց զոհաբերել Տիրոջը: Աստված հստակ ցույց տվեց, որ նրա ընտրությունը որոշելու էր նրա կյանքի ընթացքը: Նա կարող էր պատվել Աստծո կամքը և փակել դուռը մեղքի վերահսկողության (կախարդության) համար, կամ ապստամբել և բախվել՝ առանց աստվածային պաշտպանության և զորության, այն աննկատելիորեն մոտեցող մեղքին, որը ձգտում էր տիրապետել և վերահսկել իրեն:

Սամուելը զգուշացրեց Սավուղին, ինչպես որ Աստված զգուշացրեց Կայենին: Ապստամբության պատճառով նա մի վերահսկող հոգու ազդեցության ներքո հայտնվեց, որը դրդեց նրան անել այն, ինչ նա երբեք չէր անի, եթե առողջ դատողությամբ վարվեր: Սավուղը ճշմարտապես չապաշխարեց, և Աստվածաշունչը նշում է Ա Թագավորաց 16.14-ում, որ նրա ապստամբությունից կարճ ժամանակ անց մի չար, տանջահար անող հոգի եկավ նրա կյանք և սկսեց նեղություն պատճառել: Այդ պահից ի վեր չար հոգին օրինական մուտք ուներ նրա կյանքում: Սավուղը հանգիստ չուներ, քանի որ նրա կյանքում չկար ճշմարիտ ապաշխարություն: Սավուղը բոլորովին այլ մարդ դարձավ, որը շատ էր տարբերվում այն Սավուղից, ում մենք առաջին անգամ հանդիպեցինք:

Ոչ հավակնոտ երիտասարդը, որը հնազանդվում էր իշխանություն ունեցողներին, օրինակ՝ իր հորը և Սամուել մարգարեին, և հարգանքով էր վերաբերվում աստվածային իրողություններին, վերածվեց այնպիսի անձնավորության, որը ոտնահարում էր այն ամենը, ինչը թանկ էր իր համար: Եթե Սավուղի վաղ տարիներին ասեիք նրան. «Սավո՛ւղ, կգա մի օր, երբ դու կսպանես ութսունհինգ անմեղ քահանաների՝ նրանց կանանց և երեխաների հետ, քո զայրույթի պոռթկման պահին», նա կմտածեր, որ դուք խելագար եք: Նա կասեր. «Անհնա՞ր է: Ես երբե՛ք չեմ անի դա»: Ցավալի ճշմարտությունն այն է, որ նա այդպես վարվեց (տե՛ս Ա Թագ. 22-րդ գլուխ):

Այդ չար հոգին դրդեց նրան նախանձով, բարկությամբ, ատելությամբ, վեճերով, սպանությամբ և խաբեությամբ լի կյանքի: Այն վերահսկում էր Սավուղին՝ նրա անհնազանդության միջոցով, որից նա չէր ապաշխարել: Սավուղը հետապնդում էր և փորձում սպանել Դավթին՝ Աստծո և իր ամենահավատարիմ ծառաներից մեկին: Նա համոզված էր, որ Դավիթը դավաճան էր, այնինչ, իրականում, նա Աստծո սրտի համեմատ մարդ էր: Այդ դիվային վերահսկողության արդյունքում Սավուղը միայն ճշմարտության թռուցիկ նշույլներ էր տեսնում՝ մոլորության թավ ամպերի միջով: Ճշմարտությունը դարձել էր սուտ, իսկ ստերը՝ ճշմարտություն:

Ես քանիցս տեսել եմ, թե ինչպես է սա տեղի ունենում, ոչ միայն այլ մարդկանց կյանքում, այլև՝ իմ: Հիշում եմ իմ կյանքի որոշ փուլեր, երբ խաղ էի անում անհնազանդության հետ: Ես ուզում եմ լաց լինել՝ հիշելով այն մոլորությունը, որում գտնվում էի: Այդ պահերին ես օրինապաշտ կամ սխալական էի համարում աստվածահաճո ղեկավարներին և հաճախ թշնամի էի համարում աստվածահաճո ընկերներին: Ես մոտենում էի այլ ապստամբների, ինչը միայն յուղ էր լցնում իմ անհնազանդության արդեն իսկ բորբոքված կրակի մեջ: Մենք կարծում էինք, թե ավելի մոտ էինք Տիրոջը, և համոզված էինք, որ ծառայողների «նոր սերունդ» էինք, որոնց Աստված բարձրացնում էր: Որքա՜ն ողորմած է եղել Տերը իմ հանդեպ: Թող որ ձեր աչքերը լայն բացվեն՝ այս խաբկանքը տեսնելու համար, որպեսզի ինձ պես մոլորության մեջ չհայտնվեք:

ԳԼՈՒԽ 7

ԿԱԽԱՐԴՎԱԾ

Աստծո Խոսքի լույսը բացահայտում է մոլորությունը և զանազանում է մարդկանց սրտերի մտքերը և դիտավորությունները:

Ապստամբությունը կախարդություն է: Անօրինության այս գաղտնի սկզբունքի արդյունքներն ակնհայտ են մեր հասարակությունում, և ոչ պակաս ակներև՝ մեր եկեղեցիներում, թեև դրա մուտքը եկեղեցի ավելի աննկատ է: Այս գլուխը խորապես բացահայտում է կախարդության ազդեցությունը ապստամբության մեջ գտնվող հավատացյալի կյանքում: Մենք կօգտագործենք օրինակներ Հին և Նոր կտակարաններից, ինչպես նաև մերօրյա պատմություններ, որպեսզի ուսումնասիրենք անհնազանդությունից առաջացող վերահսկողությունը:

Չգործող անեծք

Նախ՝ խոսենք Իսրայելի մասին: Իրենց անապատային ճանապարհորդության ընթացքում Աբրահամի ժառանգները բանակ դրեցին Մովաբի դաշտերում: Կարճ ժամանակ առաջ նրանք հարձակվել էին Բասանի վրա և նվաճել, իսկ մինչև այդ կործանել էին ամորհացիներին, երբ նրանք հրաժարվել էին թույլ տալ անցնել իրենց տարածքով:

Երբ իսրայելցիները բանակ դրեցին Մովաբի դաշտերում, Բաղակը և նրա ժողովուրդը՝ մովաբացիները և մադիանացիները, տագնապեցին: Նրանք վախից դողում էին: Տերը խոստացել էր իսրայելցիներին. «Իմ երկյուղը կուղարկեմ Քո առջև և կշփոթեցնեմ այն ամբողջ ժողովրդին, որոնց մեջ դու գնում ես» (Ելից 23.27): Նրանք գիտեին, որ իսրայելցիները նվաճել էին բոլոր ազգերը, որոնք ընդդիմացել էին իրենց, և հիմնովին կործանել էին ամենահզոր պետությունը՝ Եգիպտոսը:

Բաղակ թագավորը դեսպաններ ուղարկեց Բաղաամ մարգարեի մոտ՝ նրա օգնությունը խնդրելով: Նա հայտնի էր իր հոգևոր ճշգրտությամբ և խորաթափանցությամբ: Թագավորը գիտեր, որ Բաղաամի մարգարեությունները կատարվում էին: Եթե նա օրհնում էր, մարդիկ օրհնված էին լինում. եթե նա անիծում էր, մարդիկ անեծքի ներքո էին հայտնվում: Բաղակից երկու խումբ դեսպաններ ընդունելուց հետո Բաղաամը համաձայնեց թագավորի մոտ գնալ նրա իշխանների հետ, որպեսզի անիծեր Իսրայելի զավակներին: Թագավորի խոստացած հարստությունը և պատիվը հրապուրեցին նրան:

Հաջորդ օրը նրանք բարձրացան Բահաղի բարձրավանդակները, և Բաղաամը տեսավ Իսրայելի ժողովրդին: Նա կարգադրեց թագավորին յոթ զոհասեղան կանգնեցնել և զոհ պատրաստել յուրաքանչյուրի համար: Դրանից հետո Բաղաամը բացեց իր բերանը՝ Իսրայելին անիծելու, բայց փոխարենը օրհնություն հռչակեց նրանց վրա:

Ավելորդ է ասելը, որ թագավորը բարկացավ. «Ինչ ես անում ինձ. իմ թշնամիներին անիծելու համար բերի քեզ, և ահա դու բոլորովին օրհնո՞ւմ ես» (Թվոց 23.11):

Բաղաամն առաջարկեց նրան ավելի բարձր վայր տեղափոխվել՝ հուսալով, որ կկարողանար կատարել Բաղակի ուզածը: Գուցե ավելի բարձր տեղում ավելի մեծ ուժ կլիներ՝ անիծելու համար: Եվս յոթ զոհասեղան կանգնեցվեց, և նոր զոհեր մատուցվեցին: Այնուամենայնիվ, երբ Բաղաամը կրկին բացեց բերանը՝ կախարդության անեծք հռչակելու համար, փոխարենը՝ նա կրկին օրհնեց Իսրայելին:

Պատմությունը կրկնվեց: Ամեն անգամ, երբ Բաղաամը փորձում էր անիծել, նա հարկադրված օրհնում էր: Բաղաամի երկ-

որդ մարգարեության մեջ գտնում ենք հետևյալ խորիմաստ պնդումը. «Դրա համար Հակոբի դեմ կախարդություն չի լինի, և Իսրայելի դեմ՝ դյութություն» (Թվոց 23.23):

Բաղաամը հայտարարեց, որ Աստծո ժողովրդի դեմ կախարդություն կամ դյութություն չկար: Ինչպիսի՜ ոգեշնչող և ազդեցիկ խոսքեր: Այս ճշմարտությունն այսօրվա լեզվով կինչի հետևյալ կերպ. «Չկա կախարդություն, որը գործում է Աստծո ժողովրդի դեմ, և ո՛չ էլ դյութություն՝ Նրա եկեղեցու դեմ» (Թվոց 23.23, հեղինակի շրջասությունը):

Այս խոստումը պետք է խրախուսի մեզ: Վհուկներն ու կախարդները կարող են փքուն խոսքեր ասել, զառանցանքներ բարբաջել և վառել իրենց մոմերը: Նրանք կարող են կրկնել իրենց դյութությունները, հմայությունները և անեծքները, բայց չեն կարող վնասել Աստծո զավակին: Առակաց 26.2-ը հաստատում է այս ճշմարտությունը. «Ինչպես որ ճնճղուկը թրթռում և ծիծեռնակը թռչում է, այնպես էլ զուր անեծքը չի կատարվի»:

Հակադարձվող անեծք

Եվս մեկ պատմություն իմ երիտասարդական հովիվ լինելու ժամանակվանից: Մի ավագ դպրոցի աշակերտուհի, որը գլխավոր կախարդներից մեկն էր իր դպրոցում, ընդունեց Հիսուսին: Այդ աղջկա մայրը սատանային էր նվիրել նրան, երբ նա դեռ իր որովայնում էր: Դարձի գալուց հետո այդ աղջիկն իմ օգնականի հետ խոսում էր իր անցած կյանքից: Նա մի պնդում արեց, ինչը գրավեց օգնականիս ուշադրությունը: Նա ասաց.

- Մենք չենք կարող կախարդել՝ անիծելով քրիստոնյաներին:

- Ինչո՞ւ,- հարցրեց իմ օգնականը:

Նա պատասխանեց.

- Քանի որ, եթե մենք անիծեինք նրանց, այդ անեծքը մեզ կվերադառնար:

Իմ օգնականը տպավորված էր:

Ինչպես տեսնում եք, այդ աղջկա ասածը համապատասխանում է Բաղաամի խոսքերին: Իր առաջին մարգարեության մեջ նա տվեց հետևյալ հարցը. «Ինչպե՞ս անիծեմ նրան, որին Աստված

չի անիծել» (Թվոց 23.8, NKJV): Նույնիսկ եթե Բաղաամն *անիծեր* Իսրայելի զավակներին, այդ անեծքը նրան կվերադառնար: Դավիթն այսպես է նկարագրում այս սկզբունքը.

> «Թաքցրո՛ւ ինձ չարերի ծածուկ դավերից,
> Անօրինություն գործողների *ապստամբությունից,*
> Որոնք սրում են իրենց լեզուները՝ թրի պես,
> Եվ լարում են իրենց աղեղները, որպեսզի գցեն իրենց նետերը՝ դառը խոսքերը,
> Որպեսզի թաքուն գցեն անմեղի վրա» (Սաղմ. 64.2-4, NKJV):

Ապստամբները (կախարդության մեջ ներգրավված մարդիկ) անեծքներ կարձակեն, բայց դրանք չեն հանգչի արդարների վրա: Ուշադրություն դարձրեք, թե ինչ է կատարվում այն մարդկանց հետ, որոնք անեծքներ են արձակում:

> «Բայց Աստված նետ կգցի նրանց վրա.
> Հանկարծ նրանք կվիրավորվեն:
> Եվ Նա այնպես կանի, որ նրանք սայթաքեն իրենց լեզվի պատճառով» (Սաղմ. 64.7,8, NKJV):

Նրանք կսայթաքեն՝ իրենց իսկ լեզուների պատճառով: Այն խոսքերը, որ նրանք արձակում են՝ մարդկանց վնասելու համար, կպտտվեն և իրենց կվերադառնան: Դավիթն օգտագործեց մի պարզ այլաբանություն՝ այս սկզբունքը նկարագրելու համար. «Փոս փորեցին իմ առջև, և իրենք ընկան մեջը» (Սաղմ. 57.6):

Գայթակղված՝ դեպի անհնազանդություն

Բաղաամը գիտեր, որ անհնար էր անիծել իսրայելցիներին այն վիճակում, որ նրանք գտնվում էին: Նա չէր կարող անեծք արձակել նրանց վրա, թեև ցանկանում էր: Մովսեսը պատմեց այդ մասին. «...Միջագետքի Փաթուրից Բեովրի որդի Բաղաամին վարձքով բերել տվեց, որ քեզ անիծի: Բայց քո Տեր Աստված չուզեց Բաղաամին լսել, այլ քո Տեր Աստված անեծքը քեզ համար օրհնություն դարձրեց, որովհետև քո Տեր Աստված քեզ սիրեց» (Երկր. Օր. 23.4,5): Սա վերաբերում է նաև մեզ:

Խիստ զայրացած Բաղակ թագավորը գոչեց. «Ես կանչեցի քեզ, որ անիծեիր իմ թշնամիներին: Փոխարենը, դու երեք անգամ օրհնեցիր նրանց: Այժմ հեռացի՛ր այստեղից: Տո՛ւն վերադարձիր: Ես ծրագրել էի առատորեն վարձատրել քեզ, բայց Տերը քեզ ետ պահեց քո վարձատրությունից» (Թվոց 24.10,11, NLT):

Թագավորը ծրագրել էր մեծ նյութական վարձատրություն տալ և պատվավոր մարդ դարձնել Բաղաամին՝ իր մահացու թշնամուն անիծելու համար: Բայց նա, ըստ էության, ասաց. «Մոռացի՛ր քո վարձատրության մասին: Ակնհայտ է, որ քո Աստված չի ցանկանում, որ ստանաս այն: Հեռացի՛ր աչքիցս»:

Բաղաամը խնդրի բախվեց. նա շատ էր ցանկանում ստանալ այդ վարձատրությունը: Այդ վարձատրությունը նրա գալու միակ պատճառն էր, և նա կորցնում էր այն: Այդ կորստից խուսափելու համար, նա հարձակման այլ ծրագիր ներկայացրեց Բաղակ թագավորին: Թեև գիտեր, որ չէր կարող անիծել իսրայելցիներին, նա, անկասկած, հասկանում էր, թե ինչ կարելի էր անել, որպեսզի նրանք անեծք բերեին իրենց վրա:

Հասկանալով հոգևոր կապը ապստամբության և կախարդության միջև՝ Բաղաամը խորհուրդ տվեց թագավորին մովաբացի կանայք ուղարկել, որպեսզի նրանք թափանցեին Իսրայելի բանակատեղին: Նա հանձնարարեց իրենց հետ տանել իրենց կուռքերը և գայթակղեցնել իսրայելցի տղամարդկանց ապստամբելու սեռական մեղքի և Աստծո կանոնների դեմ: Նա գիտեր, որ ապստամբության պատճառով նրանք կախարդության անեծքի ներքո կհայտնվեին:

Մենք գիտենք, որ դա տեղի է ունեցել, քանի որ և՛ Մովսեսը, և՛ Հիսուսը հղում արեցին թագավորին տրված նրա խորհրդի մասին: Մովսեսը հաստատեց դա. «Ահա այդ կանայք դրդեցին Իսրայելի որդիներին՝ *Բաղաամի խորհրդով,* օրինազանցություն գործել Տիրոջ դեմ՝ Փոքովրի հարցում, և ժանտախտ եղավ Տիրոջ ժողովի մեջ» (Թվոց 31.16, NKJV): Շատ տարիներ անց Հիսուսն ասաց, որ Բաղաամը *«Բաղակին սովորեցրեց* գայթակղություն դնել Իսրայելի որդիների առջև, որ նրանք կուռքի մատաղ ուտեն և պոռնկություն անեն» (Հայտն. 2.14):

Սուրբ գիրքը նկարագրում է կախարդության այս ինքնահարույց անեծքը: Բաղաամի մարգարեություններից անմիջապես

հետո գրված է. «Եվ Իսրայելը Սատիմում բնակվեց, և ժողովուրդը սկսեց Մովաբի աղջիկների հետ պոռնկություն անել: Եվ նրանք ժողովրդին հրավիրեցին իրենց աստվածների զոհերին: Եվ ժողովուրդը կերավ և նրանց աստվածներին երկրպագություն արեց: Եվ Իսրայելը Բելփեգովրին հարեց: Տիրոջ բարկությունը Իսրայելի վրա բորբոքվեց» (Թվոց 25.1-3): Արդյունքում սաստիկ ժանտախտ բռնկվեց, որը կործանում բերեց Իսրայելի ժողովրդի մեջ:

Անհնազանդության պատճառով այն ազգը, որին անկարելի էր անիծել, ժանտախտի անեծքի ներքո հայտնվեց. «Եվ հարվածից մեռածները քսանչորս հազար հոգի էին» (Թվոց 25.9): Քսանչորս հազա՛ր: Դուք հասկանո՞ւմ եք այս խոսքերի ողբերգությունը: Այսօր, երբ ավիավթար է տեղի ունենում կամ փոթորիկ է լինում, և հարյուրավոր մարդիկ են մահանում, դա համաշխարհային նորություն է դառնում: Մենք խոսում ենք ոչ թե մի քանի հարյուր մարդու մասին, այլ՝ քսանչորս հազարի: Դա ամենամեծ մեկանգամյա կորուստն էր, որ Իսրայելը կրեց անապատում, և դա ժողովրդի ապստամբության արդյունքն էր:

Ծայրահեղ անհնազանդությունը դուռ բացեց ծայրահեղ ժանտախտի համար: Նրանց ապստամբությունը վրդովեցուցիչ էր: Մի անամոթ իսրայելցի նույնիսկ բացահայտ ի ցույց հանեց իր հետ եղող մադիանացի կնոջը Մովսեսի և Իսրայելի ամբողջ ժողովի առջև, երբ նրանք Աստծո առջև լաց էին լինում (տե՛ս Թվոց 25.6):

Ի՞նչը կանգնեցրեց ժանտախտը: Հավանաբար, դուք կռահեցիք. ծայրահեղ հնազանդությո՛ւնը:

> «Եվ Ահարոն քահանայի որդի Եղիազարի որդին՝ Փենեհեսը, տեսավ այս [այդ մարդուն, որն ի ցույց հանեց իր մադիանացի զուգընկերուհուն], ժողովի միջից վեր կացավ և ձեռքը մի գեղարդ առավ: Եվ այն իսրայելցի մարդու ետևից սենյակը մտավ և երկուսին էլ, այսինքն՝ իսրայելցի մարդուն և կնոջը, փորից խոցեց, և հարվածը Իսրայելի որդիներից դադարեց» (Թվոց 25.7,8):

Կրկին, թույլ տվեք նշել հետևյալը. Աստված ժանտախտների և հիվանդությունների հեղինակը չէ: Իսրայելի զավակները բացահայտ ապստամբեցին և հակառակվեցին Նրա իշխանությա-

նը: Այդ պատճառով Տիրոջ պաշտպանական ծածկոցը վերցվեց, և թշնամին օրինական մուտք ստացավ՝ Աստծո թույլտվությամբ: Այս պատմությունը ևս մեկ անգամ հաստատում է, որ ապստամբությունը կախարդություն է, և այն օրինական մուտք է տրամադրում վերահսկող դիվային ուժերին: Իսրայելն ազատվեց գուշակի անեծքից, սակայն կործանարար հարված ստացավ՝ անհնազանդության պատճառով:

Ո՞վ անեծքի ներքո բերեց ձեզ

Մենք դիտարկեցինք մեկ հինկտակարանյան օրինակ այն մասին, որ ապստամբությունը կախարդություն է, և նման օրինակներն ավելին են: Այժմ անցում կատարենք Նոր կտակարանին: Պողոս առաքյալը խիստ նամակ գրեց Գաղատիայի եկեղեցիներին: Այդ նամակն ուղղված չէր Գաղատիայի բնակչությանը. այն հատկապես ուղղված էր եկեղեցուն: Ուշադրությամբ կարդացեք Պողոսի պնդումը. «Ո՛վ անմիտ գաղատացիներ, ո՞վ կախարդեց ձեզ» (Գաղատ. 3.1):

Սպասեք: Պողոսն ասում էր այդ եկեղեցուն, որ նրանք կախարդության անեծքի ներքո էին: Գուցե հարցնեք. «Իսկ ես կարծում էի, թե Աստծո ժողովրդի դեմ կախարդություն և դյութություն չկա»: Դա ճիշտ է: Ոչ մի անեծք չի կարող արձակվել նրանց դեմ, ովքեր հնազանդ են: Բայց հիշեք՝ ապստամբությունը կամ անհնազանդությունը բերում է մարդուն կախարդության ներքո:

Հիշե՛ք իմ օգնականի հանդիպումն այն նախկին կախարդ աղջկա հետ, որն ազատվել էր կախարդությունից: Երբ նա տեսավ իմ օգնականի ոգևորությունը՝ ի պատասխան այն պնդման, որ նրանք չէին կարող անիծել քրիստոնյաներին, նա արագորեն ավելացրեց.

- Բայց հովի՛վ, մենք կարող էինք ազդել եկեղեցում գտնվող գաղջ [անհնազանդ] մարդկանց վրա:

Որպես հաստատում, Պողոսը գրում է. «Ո՛վ անմիտ գաղատացիներ, ո՞վ կախարդեց ձեզ, որ ճշմարտությանը չհնազանդվեք» (Գաղատ. 3.1):

Կախարդանքը վերաբերում է Աստծո Խոսքին անհնազանդ լինելուն, ոչ թե կախարդների կողմից արված որևէ դյութության:

Ինչո՞ւ: Քանի որ ապստամբությունը կախարդությունն է: Ըստ էության, Գաղատիայի եկեղեցին կախարդության անեծքի ներքո էր հայտնվել՝ անհնազանդության պատճառով:

Մինչև շարունակելը, ես պետք է պարզաբանեմ այս պնդումը: Մենք կախարդության ներքո ենք հայտնվում, երբ անհնազանդ ենք այն բաներին, որոնք Աստված պարզորեն հայտնել է մեզ, ոչ թե այն բաներին, որոնք հայտնված չեն եղել մեզ: Սա հասկանալի է դառնում, երբ շարունակում ենք կարդալ Պողոսի խոսքերը. «Ո՞վ կախարդեց ձեզ, որ չհնազանդվեք ճշմարտությանը, որոնց աչքերի առջև էր, որ Հիսուս Քրիստոսը պարզորեն պատկերվեց ձեր միջև՝ որպես խաչված» (Գաղատ. 3.1, NKJV):

Այս մասնավոր դեպքը ներկայացնում է համընդհանուր ճշմարտություն: Աստված հայտնել էր այդ եկեղեցիներին Իր շնորհքով տրվող փրկությունը՝ Պողոսի քարոզի միջոցով: Բայց շատ ժամանակ չանցած նրանք ընդունեցին այլ ուսուցիչների դատողություններ և ավանդույթներ՝ անհնազանդ դառնալով այն բանին, ինչը պարզորեն հայտնվել էր իրենց Սուրբ Հոգու կողմից: Նրանք սկսեցին սովորեցնել, որ փրկությունը ստացվում է օրենքի գործերը պահելուց, և ապրել այդ համոզմունքով: Այնուամենայնիվ, այն համընդհանուր սկզբունքը, որը մենք ուզում ենք շեշտադրել, հետևյալն է. *երբ չենք հնազանդվում այն բանին, ինչն Աստված հստակ հայտնել է մեզ, մենք հայտնվում ենք կախարդության անեծքի ազդեցության ներքո:* Ինչո՞ւ: Քանի որ ապստամբությունը կախարդություն է:

Ես տեսել եմ, որ սա տեղի է ունեցել ամբողջ եկեղեցական համայնքների, ընտանիքների և անհատների կյանքում: Ես հանդիպել եմ բազմաթիվ եկեղեցի հաճախող մարդկանց, որոնք այս կամ այն պատճառով գրեթե մշտական անհնազանդության մեջ են ապրում: Շատերը տեղյակ չեն դրա ծանրությանը, քանի որ թմրած են շնորհքի մասին միակողմանի ուսմունքով, որը փոքրացնում է հնազանդության դերը: Նրանց կյանքում մի ճգնաժամը մյուսին է հետևում: Մշտապես ինչ-որ խնդիր կամ մեղք կա, որը, թվում է, չեն կարողանում հաղթահարել: Նրանք փախչում են մի ծուղակից՝ ընկնելով մյուսը: Նրանց վիճակը շարունակ ավելի է վատթարանում: Այդ խնդիրները սպառում են նրանց ժամանակը, ուժերը և միջոցները: Ինչ-որ ոլորտում նրանք օրինական մուտք

են տրամադրել դիվային կեղեքման կամ ազդեցության համար: Նրանց անհնազանդությունը խոցելի է դարձրել նրանց:

Տեսել եմ, թե ինչպես են այդ մարդկանց ամուսնությունները տուժում, կամ՝ առավել վատ՝ ամուսնալուծությամբ ավարտվում: Մյուսները չեն ստանում առաջխաղացում աշխատավայրում, կամ՝ առավել վատ՝ կորցնում են իրենց աշխատանքը: Ոմանք տուժում են գողության, ֆինանսական ճգնաժամի կամ ինչ-որ ողբերգության պատճառով: Հիասթափված՝ նրանք տենդագին մեղավորի են փնտրում: Շատ հաճախ մեղադրում են իրենց ծնողներին, հովվին, տնօրենին, կողակցին, երեխաներին, կառավարությանը և ցանկացած մարդու, որը համաձայն չէ իրենց կարծիքին:

Նրանց կյանքում երկու չարիք է գործում, որոնք ուժ են ստանում իրարից: Առաջինը մոլորությունն է: Խավարը պարուրել է նրանց սրտերը, քանի որ նրանք չեն հնազանդվել Աստծո Խոսքին: Երկրորդ չարիքը՝ վերահսկող դիվային հոգիների խճճված թակարդն է. այդ հոգիներն իրենց ուզածի պես հարձակումներ են գործում՝ անհնազանդության պատճառով: Պողոսը խրատում է նրանց, ովքեր գործ ունեն դավանող հավատացյալների հետ, որոնք ապստամբության մեջ են. «Հակառակվողներին հանդարտությամբ խրատել, թերևս Աստված նրանց ապաշխարություն տա՝ ճշմարտությունն իմանալու համար և սատանայի որոգայթից զգաստանալու, որից նրանք որսացվել են՝ նրա կամքին ծառայելու համար» (Բ Տիմոթ. 2.25,26): Խնդիրն այն է, որ մոլորված և որսացված մարդիկ մեղադրում են ուրիշներին, որպեսզի թաքցնեն իրենց անհնազանդությունը, և դա կուրացնում է նրանց այն ամենի հանդեպ, ինչից իրենք պետք է ազատություն ստանան:

Փա՛ռք Աստծուն Նրա Խոսքի համար: Աստվածաշնչի լույսը բացահայտում է մոլորությունը և ի ցույց է հանում մարդկանց սրտերի մտքերը և խորհուրդները: Դժբախտաբար, անհնազանդության պատճառով տառապանք կրելիս մեծ մասը հրաժարվում է սովորել: Նրանք շարունակում են մնալ անհնազանդության անապատում՝ մեղադրելով բոլորին, փոխարենը սովորեն իրենց սխալ ճանապարհներից:

«Դու կարեկցանք չունես»

Ես մի պատմություն եմ հիշում, որում մի մարդ սովորեց իր սխալ ճանապարհներից: Ինձ պատիվ էր ընձեռնվել հաճախակի քարոզելու մի միջազգային ծառայությունում, որը բաղկացած էր եկեղեցուց և Աստվածաշնչյան դպրոցից: Ես սիրում և հարգում էի այդ ծառայության առաջնորդին, որն ազդեցություն էր թողել իմ կյանքում: Մեկ օր այդ առաջնորդը զանգեց ինձ և ասաց.

- Ջո՛ն, ես զանգում եմ այս ծառայության բոլոր մտերիմ ընկերներին, որպեսզի պատմեմ այն մասին, ինչ տեղի է ունենալու, որպեսզի նրանք չլսեն դա այլ աղբյուրից: Պետք է ասեմ քեզ, որ ես ամուսնալուծվում եմ իմ կնոջից: Մենք տասնութ տարի ամուսնացած ենք եղել, և թվում է՝ տարբեր մտածելակերպեր և աշխարհայացքներ ունենք: Մենք միաբան չենք, ինչպես զույգերը պետք է լինեն, և մեր նախընտրությունները շատ տարբեր են: Տարիներ շարունակ փորձել ենք բարելավել մեր վիճակը, բայց ամեն ինչ միայն ավելի է վատթարացել:

Ես չէի հավատում լսածիս: Միայն մտածում էի. «Ո՛չ, խնդրո՛ւմ եմ, չանե՛ս դա»: Ես սիրում էի այդ զույգին և այդ ծառայությունը: Ես այն աստիճան ցնցված էի, որ ոչինչ չկարողացա ասել:

Քանի որ լռում էի, այդ հովիվը շարունակեց.

- Ջո՛ն, դու գիտես, որ ես անչափ սիրում եմ Հիսուսին, և եթե սխալ եմ վարվում, Նա ցույց կտա ինձ:

Նա ևս մի քանի րոպե խոսեց այդ մասին, իսկ հետո ավարտեց հեռախոսազրույցը: Ես գրեթե ոչինչ չասացի, քանի որ դեռ փորձում էի ընդունել այդ ամենը և ցնցված էի:

Ամբողջ օրը չէի կարողանում վանել ինձնից այն, ինչ լսեցի: Ես կրկին ու կրկին հիշում էի նրա խոսքերը: Ես մտածում էի. «Սա վատ երազի է նման»: Մինչ մտքերն անհանգստացնում էին ինձ, զգացի, որ Սուրբ Հոգին պատվիրում էր զանգել այդ մարդուն և ասել ճշմարտությունը:

Հաջորդ առավոտյան զանգեցի նրան: Ես թույլ էի տվել, որ մեկ օր անցներ. այնպես որ, իմ խոսքերը չէին ընկալվի որպես հակազդեցություն լսածիս, այլ՝ որպես Հոգով առաջնորդված պատասխան: Ճանաչելով իմ ձայնը՝ այդ հովիվը հարցրեց.

- Ողջո՛ւյն, Ջո՛ն, ի՞նչ է պատահել:

Ես սկսեցի.

- Ուզում եմ մի փոքր ավելի խոսել քեզ հետ քո ամուսնալուծության մասին: Քո կինն անբարոյությո՞ւն է գործել քո հանդեպ:

- Ո՛չ,- պատասխանեց նա:

Ես ասացի.

- Այն, ինչ դու անում ես, սխալ է: Հիսուսը հստակ ասում է, որ ամուսնալուծության միակ պատճառը սեռական անհավատարմությունն է (տե՛ս Մատթ. 5.32), իսկ Մաղաքիայի գրքում գրված է, որ Աստված ատում է ամուսնալուծությունը, քանի որ այն բռնությամբ է ծածկում մեր հանդերձը (2.16): Երեկ դու ասացիր, որ սիրում ես Հիսուսին, և եթե սխալ վարվես, Նա ցույց կտա քեզ: Բայց մի՞թե Նա կարիք ունի ցույց տալ քեզ Իր կամքը, եթե արդեն պարզորեն հայտնել է այն Իր Խոսքում: Ինչպե՞ս կարող ես գիտակցաբար հակառակվել Աստծո Խոսքին: Եթե անես դա, ինչպե՞ս ես կանգնելու քո եկեղեցու առջև և քո Աստվածաշնչյան դպրոցում և ասելու մարդկանց, որ սրբությամբ ես վարվում և հակառակվում ես մեղքին: Դու նեղությունների և մոլորության դուռ ես բացում թե՛ քեզ, թե՛ քո ծառայության համար:

Այդ հովիվն ընդհատեց ինձ և խստորեն ասաց.

- Ջոն Բիվե՛ր, դու ոչինչ չգիտես իմ կյանքից, և դու կարեկցանք չունես:

Հաջորդը, ինչ ես լսեցի, կապի ընդհատման ձայնն էր: Այդ ծառայողը ցած դրեց խոսափողը: Երեսուն րոպե անց իմ գրասենյակից տեղեկացրին, որ հրավերներիցս մեկը չեղարկվել է (ես պետք է այդ եկեղեցի այցելեի երեք ամսից): Ես ասացի կնոջս.

- Գիտեի, որ նրանք կանեն դա, բայց չէի մտածում, որ այսքան շուտ:

Մեր հաղորդակցությունը լիովին խզվեց, և որոշ ժամանակ անց մեկ այլ հայտնի ծառայող, որն այդ եկեղեցում էր եղել, ասաց ինձ, որ նրանք չարախոսել էին իմ մասին: Ես մտածեցի. *«Ես միայն փորձում էի իսկական ընկեր լինել»:*

Սթափված՝ դատաստանի պատճառով

Ի զարման ինձ, յոթ ամիս անց այդ հովիվը զանգեց.

- Ջո՛ն, ուզում եմ սրտանց խոսել քեզ հետ: Գիտե՞ս, թե ինչ կատարվեց այն բանից հետո, երբ ցած դրի խոսափողը և չեղարկեցի քո հրավերը: Մեկ ամիս անց ինձ մոտ երիկամային անբավարարություն սկսվեց, և ինձ ասացին, որ իմ ողջ մնալու հավանականությունը 50 տոկոս է: Երկրորդ դիալիզից հետո սթափվեցի և ասացի ինքս ինձ. «Ինչո՞ւ եմ փորձում ամուսնալուծվել»: Ես հասկացա, որ դա կոպիտ սխալ էր: Իմ երիկամային անբավարարությունը ահազանգ էր ինձ: Ես զանգեցի կնոջս և ապաշխարեցի: Ապաշխարեցի իմ եկեղեցու և Աստվածաշնչյան դպրոցի առջև: Ես ասացի Աստվածաշնչյան դպրոցին. «Ես չեղարկել եմ Ջոն Բիվերի հրավերը, որովհետև նա ասաց ինձ, որ ամուսնալուծվելը սխալ է: Ես կզանգեմ նրան և կտեսնեմ՝ արդյո՞ք կվերադառնա»: Ջո՛ն, դու կվերադառնա՞ս:

- Իհա՛րկե,- պատասխանեցի:

Ես այնքա՜ն ոգեշնչված էի այդ առաջնորդի համար, և իմ հարգանքը նրա հանդեպ մեծապես ավելացավ: Ի հավելումն այս ամենի, նրա ապաքինումը սպասվածից ավելի արագ տեղի ունեցավ: Մեկ տարի անց գտնվեց մի երիկամ, որը կատարելապես համապատասխան էր նրան, և այդ երիկամը նվիրաբերեցին նրան: Այդ հովիվը մեկ հավաքույթ էլ բաց չթողեց. նրա ապաքինման ընթացքն ապշեցրեց բժիշկներին: Նույնպես, ապաշխարության արդյունքում այդ առաջնորդի կյանքում ավելի մեծ հոգևոր իշխանություն և ուժ եկավ: Այժմ՝ տարիներ անց, նա առաջնորդում է մարդկանց ավելի արդյունավետ կերպով, քան երբևէ անցյալում, նա պահանջված քարոզիչ է և երջանիկ ընտանիք ունի: Ամեն անգամ, երբ այդ զույգի հետ եմ, ես պարզորեն տեսնում եմ նրանց սերը միմյանց հանդեպ: Ոչ ոքի մտքով չի անցնի, որ մի քանի տարի առաջ նրանք ամուսնալուծության եզրին էին:

Հիվանդ՝ երեք ու կես ամիս

Ինձ համար հեշտ էր այդ ծառայողին չդատելը, որովհետև մի քանի տարի առաջ ես նմանատիպ փորձառություն էի ունեցել: Իմ

անհնազանդության ոլորտն իմ ամուսնությունը չէր, այլ՝ իմ ծառայությունը: Երբ նոր էինք հիմնադրել «Մեսինջեր ինտերնեյշնլ»-ը, Տերը պարզ ցուցում էր տվել մեզ՝ չընդունել ոչ մի ծառայողական առաջարկ, միայն նրա համար, որ դա նպաստավոր էր թվում, այլ հարցնել Նրա կամքը:

Մի քանի տարի անց մենք այնպիսի առաջարկ ստացանք, որը հրաշալի հնարավորություն էր թվում՝ մեր ծառայության ընդլայնման համար: Սակայն աղոթքի մեջ Աստված հստակ «ոչ» էր ասում առանձին՝ կնոջս, և առանձին՝ ինձ. մենք չպետք է ընդունեինք այդ առաջարկը: Այնուամենայնիվ, մենք համառորեն շարունակում էինք ստանալ այդ առաջարկը: Այն հրապուրեց ինձ, և ես սկսեցի լսել: Կարճ ժամանակ անց սկսեցի վիճարկել այն խոսքը, որը Տիրոջից էի ստացել իմ սրտում: Ես շփոթվեցի, և այդ առաջարկն ասես շղարշեց միտքս: Կինս փորձում էր տարհամոզել ինձ, բայց արագորեն հասկացավ, որ դա անարդյունավետ էր: Ի վերջո, ես ընդունեցի այդ առաջարկը:

Փրկություն ստանալուց հետո ես օրհնված եմ եղել այն բանով, որ գրեթե չեմ հիվանդացել և ոչ մի առողջական խնդիր չեմ ունեցել (փա́ռք Աստծուն): Ես հազվադեպ եմ հիվանդանում, և եթե դա տեղի է ունենում, ամեն ինչ անցնում է քսանչորսից երեսունվեց ժամում: Ես հավատում եմ, որ Հիսուսն աստվածային առողջություն տվեց մեզ՝ մեղքերի ներման հետ, երբ խաչի վրա մահացավ մեզ համար (տե՛ս Եսայի 53.4,5, Սաղմ. 103.2,3): Բայց այն օրը, երբ ընդունեցի այդ առաջարկը, ես հիվանդացա և չէի կազդուրվում:

Ամեն ինչ սկսվեց հարբուխից: Ես փսխեցի երկրորդ անգամ տասնինը տարեկանից հետո: Մի քանի օր հարբուխի դեմ պայքարելուց հետո վարակվեցի ինչ-որ վիրուսով: Կինս և ես քաղաքից դուրս էինք գնացել՝ մեր տարեդարձը նշելու համար, և մի քանի օր շարունակ իմ ջերմությունը 37^{0}C-ից բարձր էր, ինչի պատճառով մեր հանգիստը ձախողվեց: Այդ շաբաթավերջին ես քարոզեցի դողի ու տենդի մեջ: Տենդը շարունակվեց հաջորդ շաբաթվա ընթացքում, երբ հավաքույթներ էի անցկացնում Կանադայում: Ես քարոզում էի բարձր ջերմությամբ, վերադառնում էի իմ հյուրանոցային համարը և դողում էի՝ պառկած անկողնում,

մինչև հաջորդ ծառայությունը: Ես շատ թույլ էի զգում:

Տենդը չթողեց ինձ նաև երրորդ շաբաթվա մեջ: Մենք չէինք հասկանում, թե ինչ էր տեղի ունենում: Ես երբեք այդպես չէի հիվանդացել: Աղոթում էի և պայքարում՝ օգտագործելով Աստծո Խոսքը, բայց չէի կազդուրվում: Ես բժշկի գնացի: Նա ուժեղ հակաբիոտիկ նշանակեց, և շուտով առողջացա:

Բայց հակաբիոտիկային բուժումից մեկ շաբաթ անց սաստիկ հարբուխ սկսվեց՝ այնպիսին, որը սպառում է բոլոր ուժերը: Ես ծանր վիճակում էի. կոկորդի ցավ, ծանր շնչառություն և մյուս տհաճ ախտանշանները: Դա ձգձգվեց մի քանի շաբաթ, և ես շարունակում էի ծառայել այդ վիճակում:

Սաստիկ հարբուխից առողջանալուց հետո վնասեցի ծունկս՝ պարսպի վրա բարձրանալիս: Այդ վնասվածքն այնքան ծանր էր, որ ես շարժասայլակով էի տեղաշարժվում իմ ճանապարհորդությունների ընթացքում, իսկ հետո ևս մի քանի շաբաթ ստիպված էի ամրակապ կրել և կաղալով քայլել: Երբ դա ավարտվեց, ես վարակվեցի մեկ այլ վիրուսով: Իմ ջերմաստիճանը բարձրացավ 38-39^{0}C-ի, և կրկին, չէի կարողանում կազդուրվել: Ես ստիպված էի կրկին դեղահաբեր ընդունել՝ այդ հիվանդությունը հաղթահարելու համար: Այնպիսի տպավորություն էր, որ նույնիսկ մեկ շաբաթ չէր անցնում՝ առանց տկարության: Այդ շրջանը տևեց երեք ու կես ամիս:

Իմ հիվանդության ընթացքում կինս նույնիսկ մեկ օր չհիվանդացավ: Բացի առողջական խնդիրներից, առաջացան բազմաթիվ այլ խնդիրներ: Մի անձնավորություն թշնամացել էր ինձ հետ և չէր պատրաստվում նահանջել, քանի որ ինձնից ավելի ազդեցիկ էր: Գիտակցված անհնազանդության պատճառով ես անեծքի տակ հայտնվեցի:

Ակնթարթային թեթևություն՝ ճշմարիտ ապաշխարությունից

Չորս ամիս անցավ, և ես ընդունեցի իմ մեղքը: Այնուամենայնիվ, ես դեռ պետք է կատարեի իմ ստանձնած պարտավորությունները, և եթե Աստված հրաշքով չմիջամտեր, ես ոչ մի ելք չէի

տեսնում: Լիզան և ես բռնեցինք միմյանց ձեռքերը: Ես ապաշխարեցի և խնդրեցի Աստծո ողորմությունը: Նա դուրս հանեց մեզ այն երկարաժամկետ պարտավորությունից, որի ծուղակն էի գցել մեզ:

Մի քանի ամիս անց կինս և ես քննարկում էինք այն, ինչ տեղի էր ունեցել, և մենք կապակցեցինք իմ բոլոր հիվանդությունները իմ անհնազանդության հետ: Մենք հասկացանք՝ հենց որ ես ապաշխարեցի, իմ ամուր առողջությունը վերականգնվեց: Մյուս խնդիրները, որոնք պտտվում էին մեր գլխավերևում, լուծվեցին և անհայտացան:

Այդ ժամանակահատվածում ես պարզորեն հասկացա Հակոբոսի խոսքերը: Հաճախ էի մեջբերել դրանք. «Հակառակ կացեք սատանային, և նա կփախչի ձեզնից» (Հակոբ. 4.7): Անցյալում, երբ որևէ հարձակում էի զգում, ես եռանդուն կերպով ընդդիմանում էի խավարին Աստծո Խոսքով և մշտապես արդյունք էի տեսնում: Սակայն ամբողջ այդ ընթացքում իմ ջանքերն անարդյունավետ էին: Դուրս գալով այդ իրավիճակից՝ հասկացա, որ մեջբերում էի միայն Հակոբոսի խոսքի կեսը. «Արդ, հնազանդվե՛ք Աստծուն, հակառակ կացեք սատանային, և նա կփախչի ձեզնից» (Հակոբ. 4.7):

Մենք հակառակվում ենք սատանային՝ հնազանդությամբ հպատակվելով Աստծո իշխանությանը: Մենք կարող ենք բազմաթիվ աստվածաշնչյան հատվածներ մեջբերել, բայց եթե անհնազանդ լինենք, արդյունք չենք տեսնի:

Կարևոր պարզաբանում

Խնդրո՛ւմ եմ, հասկացե՛ք հետևյալը. ամեն անգամ, երբ ինչ-որ մեկը նեղության, հիվանդության, խնդիրների կամ դժվարությունների է բախվում, պարտադիր չէ, որ պատճառը անհնազանդությունը լինի: Շատերը տառապանք են կրում՝ հնազանդ լինելով: Դավիթն այդպիսի մարդ էր: Նա բոլորովին չէր ապստամբել: Նա ոչ մի սխալ չէր գործել՝ իր առաջնորդի զայրույթն իր վրա բերելու համար: Այնուամենայնիվ, նա վտարվեց և ստիպված էր ապրել քարանձավներում, անապատներում և տափաստաններում: Նա

տուն և հայրենիք չունեցող մարդ էր դարձել: Տարիներ շարունակ նա ապրեց վտարանդիի պես՝ նեղություններ կրելով: Ոմանք դատում էին նրան և կարծում էին, թե չարչարվում էր անհնազանդ լինելու պատճառով, սակայն զանազանություն ունեցող մարդիկ հասկանում էին, որ Աստծո ձեռքը ձևավորում էր նոր տեսակի թագավորի, և զգում էին Աստծո բարեհաճությունը նրա կյանքում: Դա ակնհայտ էր Դավթի իմաստությունից:

Աստվածաշնչում կան բազմաթիվ օրինակներ, երբ հնազանդ մարդիկ չարչարանքներ էին կրում. Հիսուսը, Հովսեփը, Աննան, Դանիելը, Երեմիան և Հոբը՝ ի թիվս այլոց: Հնազանդ մարդկանց և կախարդության ներքո գտնվող մարդկանց դժվարությունների միջև տարբերությունն այն է, որ հնազանդ մարդիկ այդ ընթացքում հոգևոր առաջընթաց են ապրում: Նրանք չեն մնում փակուղում. նրանք չեն պտտվում սարի շուրջը՝ այդպես էլ ոչ մի տեղ չհասնելով:

Կայենի դեպքն այլ էր: Նրա անհնազանդությունը մեծ տառապանքի պատճառ դարձավ: Վիրավորվելով՝ նա հրաժարվեց ապաշխարել, ինչի արդյունքում նրա կյանքում անեծք եկավ: Նա անցկացրեց իր տարիները՝ որպես աստանդական և թափառական: Նրա աննպատակ և անհույս դեգերումներն օրինակ և զգուշացում են ապագա սերունդների համար:

Ես կամփոփեմ հետևյալ պնդմամբ. մի՛ օգտագործեք վերջին երկու գլուխների ճշմարտությունները՝ այլ մարդկանց դատելու համար: Հնարավոր է, որ նրանց դժվարությունները փորձություններ լինեն, որոնցից Աստված փառք է ստանալու: Այս գլխի նպատակն է օգնել ձեզ հասկանալ, թե որքան ծանր է Աստծո իշխանությանը անհնազանդ լինելը: Եթե դուք անհնազանդության մեջ եք, կիրառե՛ք այս ճշմարտությունները, որպեսզի դատեք ձեզ և վերադառնաք կյանքի ճանապարհին:

ԲԱԺԻՆ 3

ԱՍՏԾՈՒՅ ԿԱՐԳՎԱԾ ԾԱԾԿՈՑԸ

ԳԼՈՒԽ 8

ԱՍՏՎԱԾ ԳԻՏԻ, ԹԵ ՈՎ Է ԱՌԱՋՆՈՐԴԸ

Եթե մենք սովորենք հնազանդվել Աստծուն, մեզ համար դժվար չի լինի ճանաչել Աստծո իշխանությունը այլ մարդու կյանքում:

Մենք ցույց տվեցինք, թե որքան կարևոր է հպատակվել Աստծո անմիջական իշխանությանը: Այժմ խոսենք այն մասին, որ հավասարապես կարևոր է հպատակվել Նրա լիազորած առաջնորդներին: Սկսենք մի աստվածաշնչյան հատվածից, որը դիտարկեցինք երկրորդ գլխում.

> «Ամեն անձ թող հնազանդվի (կամ՝ հպատակվի) բարձր իշխանություններին, որովհետև չկա իշխանություն, որ Աստծուց չէ, և ներկա իշխանություններն Աստծուց են կարգված: Ուրեմն իշխանությանը հակառակվողն Աստծո հրամանին է հակառակվում, և հակառակվողներն իրենց անձերին դատաստան կընդունեն» (Հռոմ. 13.1,2):

Բարձր իշխանություններ

Նախևառաջ, ովքե՞ր են «բարձր իշխանությունները»: Այս մասնավոր հատվածում Պողոսը նկատի ունի քաղաքացիական կամ

պետական իշխանությունը: Այնուամենայնիվ, այս հորդորը վերաբերում է ոչ միայն պետական առաջնորդներին, այլև ընդգրկում է լիազորած իշխանության այլ ոլորտները: Այն, ինչ մենք սովորում ենք այս հատվածից, պետք է կիրառվի լիազորած իշխանության բոլոր ոլորտների հանդեպ:

Նոր կտակարանում գրված է լիազորած իշխանության չորս հստակ ոլորտների մասին՝ քաղաքացիական կամ պետական, եկեղեցական, ընտանեկան և հասարակական: Հասարակական ասելով՝ նկատի ունեմ գործատուներին, ուսուցիչներին և տնօրեններին: Նոր կտակարանը հատուկ ցուցումներ է տալիս յուրաքանչյուր ոլորտի վերաբերյալ. այնուամենայնիվ, հաճախ այդ ցուցումներն անցնում են լիազորած իշխանության իրենց ոլորտի սահմանները և վերաբերում են լիազորած իշխանության բոլոր ոլորտներին:

Ուշադրություն դարձրեք այս հատվածի սկզբին. «Ամեն անձ թող...»: Ոչ ոք բացառություն չէ. այնպես որ, հաստատեք այս ճշմարտությունը ձեր մտքում: Սա պատվիրան է, ոչ թե առաջարկ: Տերն ակնարկներ չի անում և խորհուրդներ չի տալիս:

Նա շարունակում է. «Ամեն անձ թող հնազանդվի (կամ՝ հպատակվի) բարձր իշխանություններին...»: «Հնազանդվել» կամ «հպատակվել» բառը թարգմանված է հունարեն *«հուպոտասսո»* բառից: Այն հունարեն զինվորական տերմին է, որը նշանակում է «ռազմական պատրաստության բերել զորաբաժինները՝ առաջնորդի հրամանատարության ներքո»: Ոչ զինվորական գործածությամբ այն նշանակում է «զիջելու, համագործակցելու, պատասխանատվություն ստանձնելու, պարտավորություն կրելու կամավոր դիրքորոշում» («Թայերի Հունարեն բառարան»): Պարզ ասած, այս բառը՝ ըստ այս խոսքում իր գործածության, հորդորում է հոժարաբար հպատակեցնել մեզ իշխանություններին՝ նրանց հնազանդվելու լիակատար մտադրությամբ:

Յուրաքանչյուրը պետք է հպատակվի իշխանություններին, որովհետև Աստված է կարգել բոլոր բարձր իշխանություններին մեր կյանքում: Ամբողջ իշխանությունը սկիզբ է առնում Աստծուց: Չկա ոչ մի բացառություն: Իրականում, այս խոսքում գործածվող «կարգված» բառը թարգմանված է հունարեն *«տասսո»* բառից,

որի իմաստն է. «նշանակել, սահմանել, հաստատել»: Այս բառը ոչ մի դեպքում պատահականություն չի ենթադրում: Խոսքն անմիջական նշանակման մասին է: Քանի որ Աստված է կարգել բոլոր իշխանություններին, մենք մերժում ենք դրանց ետևում կանգնած իշխանությունը, եթե անարգում կամ հրաժարվում ենք հպատակվել նրանց: Գիտակցում ենք, թե ոչ, մենք հակառակվում ենք Աստծո հրամանին կամ կառավարմանը: Երբ հակառակվում ենք Աստծո լիազորած իշխանությանը, մենք հակառակվում ենք անձամբ Աստծուն:

Երբ մենք՝ քրիստոնյաներս, իշխանավորների հետ ենք հանդիպում, մենք պետք է տեսնենք ավելին, քան անձը կամ վարքը. մենք պետք է պատվենք դիրքը: Մենք հնազանդվում ենք իշխանավորներին, քանի որ նրանք կրում են Աստծո իշխանությունը: Անկախ այն բանից, թե տվյալ առաջնորդը կամ նրա առաջնորդական ոճը գրավիչ է մեզ համար, թե՞ ոչ, կամ՝ մեր կարծիքով, այդ մարդը պե՞տք է զբաղեցնի այդ դիրքը, թե՞ ոչ, մենք պատվում ենք նրան: Չափազանց հաճախ հավատացյալները պնդում են, որ հպատակվում են Աստծուն, սակայն անտեսում են հպատակությունը լիազորած իշխանությանը: Նրանք խաբվա՞ծ են:

Եթե մենք սովորենք հնազանդվել Աստծուն, մեզ համար դժվար չի լինի ճանաչել Աստծո իշխանությունը այլ մարդու կյանքում: Հնարավո՞ր է արդյոք, որ մենք հարկադրված լինենք ընտրել Աստծո անմիջական իշխանության և Նրա լիազորած իշխանության միջև: Այո՛, բայց ոչ այնքան հաճախ, որքան հավատացյալների մեծ մասը կարծում է: Գոյություն ունի միայն մեկ բացառություն, որի մասին մանրամասնորեն կխոսենք հաջորդ գլուխներից մեկում: Այնուամենայնիվ, խնդիրն այն է, որ շատ քրիստոնյաների կարծիքով, նրանք պետք է հնազանդվեն՝ որպես բացառություն, և ազատորեն ընտրեն իրենց կամքը՝ որպես կանոն: Նման դատողությանը հետևելով՝ մենք կարող ենք կործանման ճանապարհին կանգնել: Հետևանքները, ինչպես տեսանք նախորդ գլուխներում, ծանր են: Բացի այն, որ մենք հայտնվում ենք Աստծո դատաստանի ներքո, դիվային ուժերն օրինական մուտք են ստանում մեր կյանքում: Եթե ուզում ենք Աստծուն հնազանդ մնալ և օրհնված լինել, մենք ունենք միայն մեկ ընտրություն լիազորած իշխանության հետ հաղորդակցվելիս՝ հպատակություն և հնազանդություն:

Չար կառավարիչներն Աստծո՞ւց են կարգված

Այսպիսով, Աստվածաշունչը խրատում է մեզ, որ ամբողջ իշխանությունն Աստծուց է կարգված, և մենք պետք է արձագանքենք՝ հարգելով իշխանական դիրքը և հպատակվելով դրան: Հաճախ, երբ խոսում ենք այս մասին, մարդկանց մտքերում պարիսպներ են բարձրանում: Ամենատարածված հակադարձումը հետևյալն է. «Ես ճանաչում եմ առաջնորդների, որոնք դաժան են և բացահայտ չար են: Ինչպե՞ս կարող եք ասել ինձ, որ նրանք Աստծուց են կարգված»: Կրկին, հիշեք՝ Պողոսը գրում էր, որ ամեն իշխանություն *Աստծուց է*. նա չէր պնդում, որ ամեն իշխանություն *աստվածապաշտ է:* Իշխանությունն Աստծուց է, իսկ իշխանավորի վարքը՝ գուցե ոչ: Պատկերացնենք ամենավատ տարբերակը այնպիսի առաջնորդի, որը նման է Հիտլերին և Ստալինին (այդ երկուսին կարելի է համարել անցած դարի ամենադաժան առաջնորդները): Բոլորս կհամաձայնենք, որ այս տեսակի առաջնորդն այնքան դաժան և չար է, որքան մարդը կարող է լինել, ճի՞շտ է:

Եկեք խոսենք Եգիպտոսի տիրակալ փարավոնի մասին: Անկասկած, նա այս տեսակի առաջնորդ էր: Նրա տիրապետության ներքո Իսրայելը՝ որպես ազգ, դաժան վերաբերմունքի էր արժանանում: Նա ստրկացնում և աղքատացնում էր մարդկանց, ֆիզիկական և մտավոր բռնություն էր կիրառում, և ասես դա բավական չէր, սառնասրտորեն մահվան էր մատնում հազարավորներին: Նա հանդուգն և ամբարտավան էր, հաշվի չէր առնում մարդկային կյանքը և հաշվի չէր նստում Տիրոջ հետ: Որտեղի՞ց էր նրա իշխանությունը: Ինչպե՞ս Աստծո ժողովուրդը հայտնվեց նրա իշխանության ներքո: Արդյո՞ք դա պատահականություն էր:

Համաձայն Սուրբ գրքի, Մովսեսի միջոցով Աստված ասաց փարավոնին. «[Ես] քեզ վեր կացրի» (Ելից 9.16): Պողոսը հաստատեց սա Հռոմեացիների թղթում (9.17): Այս երկու հղումներից հասկանում ենք, որ այս պնդումը ճիշտ է և սխալ մեկնաբանված չէ. այն հաստատված է երկու մարդու վկայությամբ (տե՛ս Հովի. 8.17): Անկասկած, ոչ թե սատանան, այլ Աստված էր բարձրացրել փարավոնին և կարգել նրան իշխանական դիրքում: Այլ կերպ ասած, Աստված էր փարավոնին իշխանություն շնորհել Աբրահամի սերունդների վրա: Սա կատարելապես համապատասխանում

է «ներկա իշխանություններն Աստծուց են կարգված» պնդմանը:

Խոսենք այն մասին, թե ինչպես էր պատահել, որ Աստծո ուխտի ժողովուրդը գտնվում էր այս չար առաջնորդի իշխանության ներքո: Աստված հայտնվեց Աբրահամին, երբ նա յոթանասունհինգ տարեկան էր, և ասաց, որ Ինքը մեծ ազգ կդարձնի նրան, եթե նա հնազանդվի Իրեն: Աբրահամը հնազանդվեց, և նրա հնազանդությունն այնքան հաճեցրեց Աստծուն, որ նա «հավատքի հայր» կոչվեց (Հռոմ. 4.11,12): Ի պատասխան Աբրահամի հնազանդության, Աստված ուխտ կնքեց նրա հետ: Այդ ուխտը կնքելիս Տերն ասաց. «Հաստատ իմացի՛ր, որ քո սերունդներն օտարականներ կլինեն ոչ իրենց երկրում, և նրանց *կսպրկացնեն,* և նրանց հետ *դաժանորեն կվարվեն* չորս հարյուր տարի» (Ծննդ. 15.13, NIV):

Այլ թարգմանության մեջ (NKJV) *«դաժանորեն վարվելու»* փոխարեն գրված է *«չարչարել»* բառը: Ինչպիսի՜ ծանր խոսքեր: Եթե ես պետք է անթիվ որդիների, թոռների և թոռնուհիների նահապետ լինեի, առանձնապես չէի ոգեշնչվի, եթե իմանայի, որ իմ երեխաների, թոռների և ծոռների ժառանգությունն այդպիսին էր լինելու: Ես կառուցողական կամ մխիթարող մարգարեություն չէի անվանի դա: Մտածե՛ք այդ մասին: Մենք ապրում ենք նոր հազարամյակի առաջին դարում: Իմ սերունդներին այդպե՞ս էին վերաբերվելու մինչև մ.թ. 2400 թվականը: Ես կարող էի հեշտությամբ գայթակղվել հետևյալ մտքից. *«Սա՞ է իմ խոսքումը և օրհնությունը՝ Աստծուն հնազանդվելու համար»:* Ավելի հետաքրքիրն այն է, որ այդ խոսքն ասվեց մինչև Իսահակի ծնունդը:

Պատճառը նրանց վատ արարքնե՞րն էին

Ոմանք կարող են մտածել. «Տերը նախապես ասաց Աբրահամին այս մասին, քանի որ նրա սերունդներն անհնազանդ էին լինելու և այդ պատճառով հայտնվելու էին փարավոնի իշխանության ներքո՝ որպես պատիժ իրենց վատ արարքների, սակայն Աստված երբեք չէր ծրագրել դա նրանց համար»: Ուսումնասիրենք և պարզենք, թե արդյո՞ք այս փաստարկը ճիշտ է:

Այս փաստարկին պատասխանելու համար նախ պետք է իմանանք, թե ինչպես նրանք հայտնվեցին փարավոնի իշխանության

ներքո: Աբրահամի որդի Իսահակն աստվածավախ մարդ էր, որը հնազանդ և սուրբ կյանք էր վարում: Նա և կինը՝ Ռեբեկան, երկու որդի ունեցան. ավագը Եսավն էր, իսկ կրտսերը՝ Հակոբը: Նրանք տարբեր էին շատ առումներով: Աստված հայտնեց Իր մտքերը մինչև նրանց ծնվելը՝ ասելով. «Հակոբին սիրեցի և Եսավին ատեցի» (Հռոմ. 9.13):

Թեև Հակոբը սկզբում որոշ թերացումներ ուներ, հետագայում նա արմատական հանդիպում ունեցավ Աստծո հետ Փանուելում (տե՛ս Ծնն. 32-րդ գլուխ): Այդ հանդիպման ժամանակ նրա կյանքում հաստատվեց Աստծո օրհնության ուխտը, և նրա անունը փոխվեց՝ Հակոբից Իսրայելի, ինչը նշանակում է «Աստծո արքայազն»: Այնուհետև տեսնում ենք ուժգին նվիրում նրա կյանքում: Նա պատվիրեց իր ընտանիքին հեռանալ կռապաշտությունից և սուրբ լինել Աստծո առջև: Արդյունքում Աստծո սարսափն իջավ անհավատների վրա, երբ նրա ընտանիքը ճանապարհ ընկավ (տե՛ս Ծնն. 35-րդ գլուխ):

Իսրայելը տասներկու որդի ունեցավ: Տասնմեկերորդը՝ Հովսեփը, ատելի էր իր ավագ եղբայրների կողմից, քանի որ իրենց հայրը նախապատվություն էր տալիս նրան: Աստված երկու երազ տվեց Հովսեփին, որոնք մարգարեաբար հայտնեցին նրան, որ մեծ առաջնորդ է լինելու, և նրա եղբայրները ծառայելու են իրեն: Այդ երազներն այնքան բարկացրին նրա եղբայրներին, որ նրանք դավադրություն արին՝ Հովսեփից ազատվելու համար, և ի կատար ածեցին այն՝ Եգիպտոսում նրան վաճառելով ստրկության:

Թեև Հովսեփը միայնության և հիասթափության ծանր ժամանակներ վերապրեց, նա հավատարիմ մնաց Տիրոջը, երբ Եգիպտոսում էր: Փարավոնի պաշտոնյաներից մեկին տասը տարի ծառայելուց հետո Հովսեփն անարդարացիորեն մեղադրվեց նրա կնոջը բռնաբարելու մեջ: Նա բանտում հայտնվեց ավելի քան երկու տարով, սակայն հաստատուն և հավատարիմ մնաց: Այդ ժամանակ Տերն օգտագործեց նրան՝ մեկնելու համար փարավոնի երկու ծառաների երազները, որոնք նույնպես բանտարկվել էին: Նրանցից մեկը մահապատժի ենթարկվեց, իսկ մյուսը վերականգնվեց իր պաշտոնում, սակայն վերականգնվելուց հետո որոշ ժամանակով չհիշեց Հովսեփին, ով խնդրել էր նրան այդ մասին: Բայցևայնպես, Հովսեփը հավատարիմ մնաց:

Որոշ ժամանակ անց, երբ փարավոնն էր տագնապել մի երազի պատճառով, իր պաշտոնում վերականգնված ծառան պատմեց նրան Հովսեփի մասին: Հովսեփը կանչվեց բանտից՝ փարավոնի երազը մեկնելու համար: Մեկնությունը նախազգուշացնում էր սաստիկ սովի մասին, որը հաջորդելու էր առատության յոթ տարիներին: Աստված իմաստություն տվեց Հովսեփին, և նա ցուցումներ տվեց փարավոնին առատության տարիներին պաշարներ կուտակելու մասին: Փարավոնն այն աստիճան երկյուղած էր նրա իմաստությունից, որ անմիջապես բարձրացրեց Հովսեփին՝ դարձնելով երկրորդ կառավարիչը Եգիպտոսում, որը ենթակա էր միայն իրեն:

Հովսեփի տանը նրա աստվածապաշտ հայր Իսրայելը ոչինչ չգիտեր այն մասին, թե ինչ էր տեղի ունենալու: Աստված չէր հայտնել նրան: Մի պահ մտածե՛ք այս մասին. Աստված ցույց տվեց փարավոնին, թե ինչ էր տեղի ունենալու ապագայում, բայց թաքցրեց դա Իր ուխտի հավատարիմ ծառա Իսրայելից: Պատճառն այն էր, որ այդ իրադարձությունների միջոցով Աբրահամի բոլոր ժառանգները պետք է Եգիպտոս տեղափոխվեին: Սովի երկրորդ տարում Իսրայելը Եգիպտոս ուղարկեց իր որդիներին՝ ցորեն գնելու: Առանց դրա նրանք սովամահ կլինեին: Եգիպտոսը միակ տեղն էր, որտեղ նրանք կարող էին գնալ, քանի որ միայն Եգիպտոսն էր պատրաստված սովին և գոտևորված Աստծո իմաստությամբ: Աստված հարստացրեց այդ ազգն այն ամենի պատճառով, ինչ Նա հայտնեց փարավոնին: Նա խնամում էր Եգիպտոսը՝ բոլոր ազգերից ավելի հզոր և ազդեցիկ դարձնելով: Դա նույնպես հատուկ նպատակ էր հետապնդում:

Երբ Իսրայելի որդիները Եգիպտոս եկան, նրանք Հովսեփի առջև տարվեցին, բայց չճանաչեցին Հովսեփին: Զարմանալի չէ. ո՞ւմ մտքով կանցներ, որ ստրուկը կարող էր գահի վրա լինել: Այնուամենայնիվ, Հովսեփը ճանաչեց նրանց, և գուցե նա նույնիսկ սպասում էր նրանց, բայց գաղտնի պահեց իր ինքնությունը: Նա օրհնեց նրանց անվճար ցորենով, բայց մի պատճառ հորինեց՝ իր եղբայրներից մեկին կալանավորելու համար, որպեսզի բոլորը ստիպված լինեին վերադառնալ: Երբ նրանց պաշարներն ավարտվեցին, Իսրայելի բոլոր որդիները վերադարձան: Երբ բոլորը միասին էին, Հովսեփը բացահայտեց իր ինքնությունը:

Ճանաչելով Հովսեփին՝ նրա եղբայրները սարսափեցին. նա կարող էր վրեժ առնել իրենցից՝ իրենց դավաճանության պատճառով: Բայց, փոխարենը, Հովսեփը մխիթարեց նրանց.

> «Ես ձեր եղբայր Հովսեփն եմ, որ ինձ ծախեցիք Եգիպտոս: Եվ հիմա մի՛ վշտացեք և մի՛ նեղվեք, որ ինձ ծախեցիք այստեղ, որովհետև Աստված *ուղարկեց ինձ* ձեր առջև կյանք պահելու համար: Որովհետև երկրի վրա սովի երկրորդ տարին է այս, և տակավին հինգ տարի կա, որ վար ու ցանք և հունձք չի լինի: Եվ Աստված ինձ ձեր առջևից ուղարկեց, որ երկրի վրա ձեզ համար սերունդ պահի և ձեզ ապրեցնի մեծ ազատությամբ: *Եվ արդ, ոչ թե դուք ուղարկեցիք ինձ այստեղ, այլ՝ Աստված*» (Ծնն. 45.4-8):

Լսելով նրա պատասխանը՝ կարող եք մտածել, որ նա այնքան ժամանակ էր անցկացրել Եգիպտոսում, որ նրա պատկերացումները խեղաթյուրվել էին: Գուցե նա մոռացել էր տարիներ տևող ցավը, դավաճանությունը և միայնությունը: Վերջին հաշվով, ինչպե՞ս սիրող Աստված կարող էր այդքան տառապանքների մատնել նրան: Ինչպե՞ս Նա կարող էր թույլ տալ, որ Իսրայելի ամենից հավատարիմ և հնազանդ որդին ավելի քան տասներկու տարի տառապանք կրեր ստրկության մեջ և մեկուսի բանտախցում, այնինչ նա անմեղ էր: Ավելի երկարաժամկետ տեսանկյունից, ինչպե՞ս Աստված կարող էր տանել Իր ուխտի ժողովրդին մի երկիր, որտեղ նրանք, ի վերջո, հայտնվելու էին բոլոր ժամանակների ամենադաժան առաջնորդներից մեկի տիրապետության ներքո: Մի՞թե Հովսեփն իսկապես հավատում էր, որ Աստված ոչ միայն թույլ էր տվել, այլև ծրագրել էր այդ ամենը:

Հիշեք՝ երկու վկաների բերանից ամեն խոսք հաստատվում է: Ահա թե ինչ գրեց սաղմոսերգուն շատ տարիներ անց.

> «Եվ [Աստված] սով կանչեց երկրի վրա
> և հացի ամեն զորությունը կոտրեց:
> Նրանց առջևից մարդ ուղարկեց.
> Հովսեփը ծառայության (կամ՝ «ստրկության») մեջ ծախվեց:
> Չարչարեցին նրա ոտքերը կապանքի մեջ.

նրա անձը երկաթի մեջ մտավ:
Մինչև այն ժամանակ, որ Նրա Խոսքն եկավ (կամ՝ «կատարվեց»).
Տիրոջ Խոսքը փորձեց նրան» (Սաղմ. 105.16-19):

Պարզվում է՝ Հովսեփը մոլորված չէր իր գնահատման մեջ: Եկեք ավելի ուշադիր ուսումնասիրենք այս հատվածը: Առաջինը՝ Աստված էր, ոչ թե սատանան կամ հանգամանքները, որ ծրագրեց այդ սովը: Երկրորդը՝ ինչպես Հովսեփն ասաց, Աստված ուղարկել էր իրեն իր ընտանիքից առաջ: Ասելով, որ ինքն ուղարկվել էր Աստծուց, նա ցույց էր տալիս, որ դա ուրիշ ոչ մեկի նախաձեռնությունը չէր: Հովսեփը չէր հերքում իրականությունը. նա խոսում էր Աստծո Հոգով: Երրորդը՝ Հովսեփի բոլոր տառապանքները փորձություն կամ մաքրման ընթացք էին նրա համար: Վերջինը՝ նա չարչարվեց կապանքների և երկաթի մեջ: Այդ ժամանակվա բանտերը շատ ավելի վատն էին, քան մեր օրերում: Բայց Հովսեփն ամենից աստվածապաշտ որդին էր: Մի՞թե սա նշանակում է, որ լավ մարդիկ կարող են դաժան վերաբերմունքի արժանանալ իշխանությունների կողմից, և որ դա ո՛չ պատահականություն է, ո՛չ էլ սատանայի ծրագիրը: Մի՞թե սա նշանակում է, որ նման հանգամանքներն իրականում կարող են Աստծո ծրագիրը կամ որոշումը լինել:

Մեծ ազատությո՞ւն

Շարունակենք պատասխանել այս կարևոր հարցերին: Կրկի՛ն կարդացեք Հովսեփի խոսքերը: Հիշե՛ք, որ նա խոսում էր աստվածային ոգեշնչմամբ. «Եվ Աստված ինձ ձեր առջևից ուղարկեց, որ երկրի վրա ձեզ համար սերունդ պահի և ձեզ ապրեցնի մեծ ազատությամբ: Եվ արդ, ոչ թե դուք ուղարկեցիք ինձ այստեղ, այլ՝ Աստված» (Ծնն. 45.7,8):

Մեծ ազատությա՞մբ: Սպասե՛ք: Աբրահամի սերունդները փարավոնի իշխանության ներքո էին հայտնվել ոչ թե իրենց անհնազանդության, այլ՝ Աստծո ծրագրի պատճառով: Ի լրումն այս ամենի, Աստված նախապես գիտեր, որ Հովսեփի մահից կարճ ժամանակ անց մի փարավոն էր բարձրանալու, որը դաժանորեն էր վարվելու Իսրայելի զավակների հետ (տե՛ս Ելից 1.8-14): Տարի-

ներ առաջ Աստված ասել էր Աբրահամին, որ նրանք չորս հարյուր տարի չարչարվելու էին: Ուրեմն, սա՞ էր Տիրոջ մեծ ազատությունը: Ինչպե՞ս դա կարող էր ազատություն համարվել, երբ նրանք նման դժվարություններ կրեցին:

Գուցե ոմանք հարցնեն. «Ինչո՞ւ Աստված իմաստություն չտվեց Աբրահամի սերունդներին, որպեսզի հենց նրանք պաշարներ ունենային յոթ տարի տևող սովի ժամանակ, ոչ թե Եգիպտոսը: Այդ դեպքում Հովսեփը կխուսափեր իր բոլոր տառապանքներից»: Պատճառն ակնհայտ է. Աստված ուզում էր, որ նրանք փարավոնի իշխանության ներքո հայտնվեին: Նա էր ծրագրել դա: Գուցե ասեք. «Բայց փարավոնն ասես հին աշխարհի Հիտլերը լիներ: Նա սպանեց հազարավորների Աստծո ժողովրդից և մեծ նեղությամբ չարչարեց նրանց»: Այո՛, ճիշտ է, բայց մենք պետք է հիշենք, որ Աստծո առաջնահերթությունն այն չէ, որ մենք ստանանք այս աշխարհի հարմարավետությունը և հաճույքները. Նրա առաջնահերթությունը փրկությո՛ւնն է: Լսե՛ք Աստծո իմաստությունը, որը Նա ասաց փարավոնին. «Եվ հենց սրա համար քեզ վեր կացրի, որ Իմ զորությունը քեզնով ցույց տամ, և ամբողջ երկրի մեջ Իմ անունը պատմվի» (Ելից 9.16):

Մինչև այս իրադարձությունների շարքը, միակ մարդիկ, որոնք գիտեին Տեր Աստծո մասին, Աբրահամը, Իսահակը, Հակոբը և նրանց սերունդներն էին: Մնացյալ աշխարհը տեղյակ չէր Աբրահամի, Իսահակի և Հակոբի Աստծուց: Ահա թե ինչու, երբ Մովսեսը փարավոնի մոտ գնաց և Տիրոջ անունով հրամայեց նրան բաց թողնել Իսրայելին, փարավոնը պատասխանեց. «Տերն ո՞վ է, որ Նրա Խոսքին լսեմ և Իսրայելին թողնեմ: Տիրոջը չե՛մ ճանաչում և Իսրայելին էլ չե՛մ թողնի» (Ելից 5.2): Փարավոնը և ամբողջ Եգիպտոսը չէին ճանաչում Տիրոջը: Այնուամենայնիվ, երբ Աստված արեց Իր նշանները՝ Իր ժողովրդին ազատելու համար, ամեն ինչ փոխվեց:

Մի քանի պատուհասից հետո եգիպտացիների մի մասն ականջ դրեց Աստծո Խոսքին: Գրված է, որ մինչև կարկուտը «Փարավոնի ծառաներից ով Տիրոջ Խոսքից վախենում էր, իր ծառաներին և հոտերին տների մեջ ժողովեց» (Ելից 9.20): Շուտով նրանք աղաչում էին փարավոնին. «Արձակի՛ր այս մարդկանց, որ իրենց Տեր Աստծուն պաշտեն» (Ելից 10.7): Նույնիսկ Եգիպտոսի մոգերն

ասացին փարավոնին. «Սա Աստծո մատն է» (Ելից 8.19):

Նրանց նորահայտ գիտելիքը Եհովայի մասին շուտով բացահայտ դարձավ, քանի որ գրված է. «Մովսեսն էլ Եգիպտոսի երկրի մեջ փարավոնի ծառաների և ժողովրդի առջև շատ մեծ մարդ էր» (Ելից 11.3): Նրանք խորապես հարգում էին Աստծո այդ մարդուն, քանի որ արդեն գիտեին, թե ով էր Տերը: Եվ գրված է, որ Աբրահամի սերունդները ստացան այն ամենը, ինչ խնդրեցին Եգիպտոսի ժողովրդից՝ արծաթ, ոսկի և հագուստներ (տե՛ս Ելից 12.35,36): Ի վերջո, նույնիսկ փարավոնն ասաց. «Տերն արդար է, իսկ ես և իմ ժողովուրդը հանցավոր ենք» (Ելից 9.27): Արդյունքում ամբողջ Եգիպտոսն իմացավ, թե Ով էր կենդանի Աստված:

Ամբողջ աշխարհը ճանաչեց

Ոչ միայն Եգիպտոսը, այլև ամբողջ աշխարհը ճանաչեց Եհովային՝ որպես ճշմարիտ և կենդանի Աստծո: Այդ ճանաչողությունը՝ Նրա կողմից աշխարհի ամենահզոր պետությունը խոնարհեցնելու ուղղակի արդյունքն էր: Աստված իմաստություն տվեց այդ պետությանը Հովսեփի միջոցով, ինչի շնորհիվ այն դարձավ ամենահզորը, սակայն հետագայում պարտություն կրեց իսրայելցի ստրուկներից: Այդ պարտությունն ավելի խորը ազդեցություն թողեց դրան հետևող աշխարհի վրա, քան եթե այդ ստրուկները պարտության մատնեին որևէ աղքատ և թույլ պետության, կամ, նույնիսկ, միջին հզորություն ունեցող պետության: Աստված այնպիսի տպավորություն թողեց ամբողջ աշխարհի վրա, որ նույնիսկ Իսրայելի՝ տարիներ տևող անապատային դեգերումներից հետո ազգերը դեռ վախենում էին Իրենից և դողում էին Իսրայելի առջև:

Դրա արդյունքներն ակնհայտ էին մի ամբողջ սերունդ անց: Հեսուն՝ Մովսեսին հաջորդողը, երկու լրտեսների ուղարկեց Երիքովի զորավոր երկիր: Այդ մարդիկ հանդիպեցին Ռախաբ պոռնիկին, ով ասաց նրանց.

> «Ես գիտեմ, որ Տերն այս երկիրը ձեզ է տվել, և որ ձեր վախը մեզ վրա է ընկել, և որ ձեր պատճառով այս երկրի *բոլոր բնակիչները* հալվել են: Որովհետև մենք լսեցինք,

թե ինչպես Տերը Կարմիր ծովի ջրերը ցամաքեցրեց ձեր՝ Եգիպտոսից դուրս եկած ժամանակը... Եվ մենք լսել ենք, և մեր սրտերը հալվել են, և ձեր երեսից մեկ մարդու մեջ համարձակություն չի մնացել, *որովհետև ձեր Տեր Աստվածն Աստված է վերևում՝ երկնքի մեջ, և ներքևում՝ երկրի վրա»* (Հեսու 2.9-11):

Նա հայտարարեց, որ Տերն Աստված է, և որ իրենց երկրի «բոլոր բնակիչների» սրտերը հալվել էին: Տիրոջ անունը հայտնի էր դարձել աշխարհով մեկ:

Այս գիտելիքը ոչ միայն Աստծո փառքի համար էր, այլև՝ մարդկանց փրկության: Դրա սկզբնական պտուղները դրսևորվեցին, երբ այդ օտարազգի մարմնավաճառը և նրա ամբողջ ընտանիքը փրկվեցին: Առավել ուշագրավ է այն, որ այդ կինը Դավիթ թագավորի տատիկի մայրը դարձավ՝ մտնելով Հիսուսի ծննդաբանության մեջ: Դա տեղի չէր ունենա, եթե Աստված հայտնի չդարձներ Իր անունը աշխարհով մեկ՝ խոնարհեցնելով այն փարավոնին, որին Ինքը բարձրացրել էր՝ Իր ժողովրդին տիրապետելու համար:

Եգիպտոսից դուրս գալուց մի քանի հարյուր տարի անց դեռևս կային տեղեկություններ այն մասին, որ ազգերը վախենում էին Աստծուց: Հեղիի օրերում, որը քահանա և դատավոր էր Իսրայելում, Աստծո անունը կրկին հիշեցին այն պատճառով, թե ինչ էր Նա արել փարավոնի հանդեպ: Իսրայելը պատերազմում էր փղշտացիների հետ, և առաջին օրը Իսրայելը պարտություն կրեց: Հաջորդ օրը իսրայելցիները բերեցին Ուխտի տապանակն իրենց բանակատեղին: Նրանք հավաքվեցին, և «ամբողջ Իսրայելը մեծ ձայնով աղաղակեց, և գետինը դղրդաց» (Ա Թագ. 4.5): Փղշտացիները լսեցին այդ աղմուկը և հարցրին, թե ինչ էր այն նշանակում: Նրանք պարզեցին, որ Տիրոջ Ուխտի տապանակն իսրայելցիների բանակատեղին էր բերվել: Ահա նրանց արձագանքը.

«Եվ փղշտացիները վախեցան, որովհետև ասում էին. «Աստված [եբր.*«Էլոհիմ»*] եկել է բանակի մեջ»: Նաև ասացին. «Վա՜յ մեզ, որովհետև մինչև հիմա այսպիսի բան չէր

> եղել: Վա՜յ մեզ, այս զորավոր Աստվածների [*«Էլոհիմ»*] ձեռքից ո՞վ պիտի ազատի մեզ: Սրանք այն Աստվածներն [*«Էլոհիմ»*] են, որ Եգիպտոսին զարկեցին բոլոր հարվածներով անապատի մեջ»» (Ա Թագ. 4.7,8):

Եբրայերեն «Աստվածներ» բառն *«Էլոհիմ»*-ն է: Այս բառն օգտագործվում է Հին կտակարանում ավելի քան երկու հազար անգամ՝ նկարագրելով այն Տեր Աստծուն, Ում մենք ծառայում ենք: Այն հանդիպում է երեսուներկու անգամ միայն Ծննդոց գրքի առաջին գլխում և նկարագրում է մեր Արարիչ Աստծուն: Այդ իսկ պատճառով, այն կարելի էր ճշգրտորեն թարգմանել «Աստված» բառով՝ «Աստվածներ» բառի փոխարեն: Նույնիսկ փղշտացիները դողացին հարյուրավոր տարիներ անց. թեև նրանք չէին ծառայում Աստծուն, բայց գիտեին, թե ով էր ճշմարիտ և կենդանի Աստված:

Աստծո իմաստության խորությունը

Աստված հանկարծակիի չեկավ, երբ չար փարավոնն իշխանություն ստանձնեց. «Որովհետև չկա իշխանություն, որ Աստծուց չէ, և ներկա իշխանություններն Աստծուց են կարգված» (Հռոմ. 13.1): Երբևէ իշխող յուրաքանչյուր առաջնորդ, որն օրինական իշխանություն է ունեցել, անկախ այն բանից՝ բարի՞ է եղել, թե՞ խիստ, Աստծուց է կարգված եղել: Նա կարգված է եղել հատուկ պատճառով, և դա ոչ մի դեպքում պատահական չի եղել:

Գուցե հարցնեք. «Ինչ օգուտ կար Ստալինի և Հիտլերի պես առաջնորդներից»: Այդ հարցին պատասխանելու համար թույլ տվեք մեջբերել Պողոս առաքյալի խոսքերը.

> «Ապա ուրեմն, ում որ կամենում է, ողորմում է.
> Եվ ում կամենում է, խստացնում է...
> Ո՜վ Աստծո մեծության և իմաստության և գիտության խորությունը.
> Ինչպե՜ս անքննելի են Նրա դատաստանները,
> և անհասկանալի են Նրա ճանապարհները:
> Որովհետև ո՞վ իմացավ Տիրոջ միտքը, կամ ո՞վ եղավ Նրա խորհրդակիցը» (Հռոմ. 9.18, 11.33,34):

Նա կարող է այնպիսի բաներ անել, որոնք անըմբռնելի են մեզ համար: Մենք պետք է ընդունենք այն ամենը, ինչ Նա հարկ չի համարում բացատրել:

Կրկին, Պողոսը հարցնում է Նրա իմաստության վերաբերյալ. «Բայց դու ո՞վ ես, մա՛րդ, որ Աստծո դեմ պատասխան ես տալիս. մի՞թե ստեղծվածը կասի իր Ստեղծողին, թե՝ ինչո՞ւ այդպես արիր ինձ» (Հռոմ. 9.20): Լսե՛ք այս խոսքերը. «Ո՞վ ես դու»: Այլ կերպ ասած, մի՞թե մենք այնպիսի դիրքում ենք, որ կարող ենք բացատրություններ պահանջել Նրանից:

Աստված հայտնեց մեզ փարավոնին բարձրացնելու Իր դիտավորությունը, քանի որ Նա ցանկանում էր օրինակ, պատկերացում և հասկացողություն տալ մեզ, որպեսզի մենք վստահենք Նրա իմաստությանը և բարությանը: Այնուամենայնիվ, Նա միշտ չէ, որ հայտնում է մեզ Իր դիտավորությունը յուրաքանչյուր առաջնորդի վերաբերյալ: Նա ցանկանում է, որ մենք վստահենք Իր իմաստությանը և բարությանը:

Իր իմաստությամբ, Նա երբեք թույլ չի տալիս չարչարանք՝ առանց նպատակի: Նա մշտապես ծրագրում է Իր փրկարար նպատակների գործակիցը դարձնել այն, նույնիսկ եթե տվյալ պահին մենք չենք կարողանում տեսնել այդ նպատակները: Այնուամենայնիվ, երկարաժամկետ կամ հավիտենական հեռանկարը հայտնում է դրանք: Իր բարությամբ, Նա երբեք թույլ չի տալիս, որ մեզ վնաս հասցվի՝ հավիտենական տեսանկյունից: Գուցե վիճարկեք. «Բայց անօրեն առաջնորդների պատճառով մարդիկ ծանր, շատ ծանր վնասներ են կրել»: Դա ճշմարիտ է նյութական տեսանկյունից, սակայն Աստծո համար հոգևորը վեր է նյութականից: Հաբելի մահը զուր էր թվում, սակայն նրա արյունը մինչև հիմա խոսում է (տե՛ս Եբր. 11.4): Հազարավոր քրիստոնյաներ սպանվել են անօրեն առաջնորդների կողմից Հավատաքննության (Ինկվիզիցիայի) ժամանակ, ինչպես նաև դրան նախորդող և հաջորդող հալածանքներից, սակայն նրանց արյունը զուր չի թափվել. նրանց արյունը դեռ խոսում է:

Մենք ունենում ենք հնարավորություններ, երբ կարողանում ենք ազդեցություն թողնել առաջնորդների վրա՝ խոնարհության, հնազանդության և աղոթքների միջոցով: Երբ Աստծո ժողովուրդը

խոնարհվի, աղոթի և շրջվի իր չար ճանապարհներից, Աստված կլսի Երկնքից և կբժշկի նրանց երկիրը: Դրա օրինակներից մեկը՝ ըստ Դատավորաց գրքի, աստվածապաշտ առաջնորդներ նշանակելն է: Նոր կտակարանը հայտարարում է. «Արդ աղաչում եմ, ամենից առաջ աղոթք անել՝ խնդրվածք, աղաչանք, գոհություն՝ բոլոր մարդկանց համար, թագավորների և բոլոր իշխանավորների համար, որ խաղաղ և հանդարտ կյանք վարենք՝ ամբողջ աստվածապաշտությամբ և սրբությամբ: Որովհետև սա բարի և ընդունելի է մեր Փրկիչ Աստծո առջև» (Ա Տիմոթ. 2.1-3):

Մենք ազդեցություն ենք թողնում ներկա առաջնորդների վրա մեր աղոթքներով: Մեր աղոթքները կարող են հեռու տանող արդյունքներ ունենալ, մինչև իսկ ազդել առաջնորդներ նշանակելու և ընտրելու վրա: Այնուամենայնիվ, նույնիսկ հաշվի առնելով այս ամենը՝ կարող են բացառություններ լինել: Առաջին եկեղեցու առաքյալները և սրբերը հաճախ էին բախվում խիստ և դաժան իշխանավորների, որոնք հալածում էին նրանց: Նրանք չէին չարչարվում անաստված վարքի կամ աղոթքի բացակայության պատճառով. փոխարենը, այդ առաջնորդներն իրենց դերն ունեին Աստծո փրկարար նպատակների մեջ:

Հերովդես Ագրիպպաս Ա

Դիտարկենք նրանցից մեկին՝ Հերովդես Ագրիպպաս Առաջինին: Պաղեստինի շրջանում հռոմեացիների կողմից կարգված Հերովդես անունով մի քանի կառավարիչ կար՝ մինչև Հիսուսի ծնունդը, Նրա երկրային ծառայության ընթացքում և Նրա հարությունից հետո: Հերովդես Ագրիպպաս Առաջին թագավորն իշխանության եկավ մ.թ. 37 թվականին՝ Հիսուսի հարությունից հետո: Նա արեց դա խորամանկության և նրբանկատության միջոցով: Իր հեռատեսությամբ, նա գործի դրեց բոլոր միջոցները, որոնք կարող էին նպաստել իր առաջխաղացմանը: Գլխավոր քաղաքական հնարքն այն էր, որ Հռոմի կայսր Կալիգուլայի սպանվելուց հետո նա օգնեց Կլավդիոսին տիրանալ գահին: Կլավդիոսը վարձատրեց նրան այդ խորաթափանց քաղաքական քայլի համար՝ հաստատելով Ագրիպպասին իր դիրքում և ավելացնելով նրա թագավորությանը Հրեաստանի և Սամարիայի տարածքնե-

րը: Նա նույնքան մեծ թագավորության տիրակալ դարձավ, որքան իր պապ Հերովդես Մեծը:

Իր իշխանության ընթացքում Հերովդես Ագրիպպաս Առաջինը հարկադրված էր իր դիրքորոշումն արտահայտել հուդայականության և քրիստոնեության միջև ընթացող պայքարի վերաբերյալ: Առանց վարանելու, նա ստանձնեց քրիստոնյաների դաժան հալածիչի դերը: Մենք կարդում ենք Գործք Առաքելոց գրքում. «Այն ժամանակ Հերովդես [Ագրիպպաս Ա] թագավորը ձեռք գցեց, որ եկեղեցուց մի քանիսին չարչարի: Եվ Հակոբոսին՝ Հովհաննեսի եղբորը, սրով սպանեց: Եվ տեսնելով, որ հրեաներին հաճելի է, նրա վրա Պետրոսին էլ բռնեց» (Գործք 12.1-3): Այդ կառավարիչը դաժանորեն էր վարվում հավատացյալների հետ, քանի որ դա ծառայում էր նրա քաղաքական նպատակներին, և դրանով նա շահում էր հրեաների (քաղաքացիների մեծ մասի) բարեհաճությունը: Նա սպանեց Հակոբոսին՝ Հիսուսի երեք ամենամտերիմ առաքյալներից մեկին, և որոշեց սպանել նաև Պետրոսին:

Մենք պետք է հարցնենք. «Որտեղի՞ց էր Ագրիպպասի իշխանությունը»: Թեև թվում է՝ նա իշխանություն ստացավ իր հնարքների միջոցով, նա չհայտնվեց այդ իշխանական դիրքում՝ առանց Աստծո գիտության և նշանակման:

Պետրոսը, որը չարչարվեց Ագրիպպասի պատճառով, պատվիրեց հավատացյալներին. «Վախեցե՛ք Աստծուց, պատվե՛ք կայսրին» (Ա Պետր. 2.17, NIV): Ի՞նչ: Ինչպե՞ս պատվել այն թագավորին, որը սպանել էր Հակոբոսին: Ինչո՞ւ էր Աստված նման դաժան առաջնորդի կարգել այն երկրում, որտեղ ապրում էին Իր զավակներից շատերը, և պատվիրել նրանց, որ պատվեն նրան: Մեր պատասխանի մի մասը այս հատվածի շարունակության մեջ է. «Պետրոսը բանտում պահված էր, բայց նրա համար անդադար աղոթք էր լինում եկեղեցուց դեպի Աստված» (Գործք 12.5): Արդյունքում Աստված հրեշտակի ուղարկեց, որը հրաշքով Պետրոսին ազատեց բանտից, և նա ապահով հասավ տնային աղոթքի հավաքույթին: Եթե հավատացյալները չպատվեին թագավորին, այլ ապստամբեին Աստծո հրամանի դեմ՝ լիազորած իշխանության հարցում, նրանք չէին տեսնի Աստծո ձեռքի հրաշագործ օգնությունը:

Պետրոսին մահապատժի ենթարկելու Ագրիպպասի ծրագրե-

որը խափանվեցին՝ եկեղեցու աղոթքների և հնազանդության միջոցով: Այդ իրադարձությունը մեծապես զորացրեց հավատացյալներին: Ինչպես և փարավոնի դեպքում, Աստված հայտնեց Իր զորությունը՝ փրկարար նպատակների համար: Դրա մեծագույն վկայությունը գտնվում է հենց Աստվածաշնչում. «Եվ Աստծո Խոսքն աճում էր և շատանում» (Գործք 12.24):

Սրբերի շարունակական աղոթքները և նրանց հնազանդությունը իշխանություններին պատվելու հարցում ավելի մեծ ազդեցություն ունեցան: Շարունակելով կարդալ՝ տեսնում ենք, որ Հերովդես Ագրիպպաս Առաջին թագավորը հատուկ օր որոշեց, երբ նա դուրս եկավ ժողովրդի առջև, նստեց իր գահին՝ թագավորական հանդերձներով, և խոսք ուղղեց նրանց: «Եվ ամբոխն աղաղակում էր, թե՝ դա Աստծո ձայն է, և ոչ թե մարդու: Եվ իսկույն Տիրոջ հրեշտակը զարկեց նրան, որովհետև Աստծուն չտվեց փառքը: Եվ որդերով լցվեց, մեռավ» (Գործք 12.22,23):

Դատաստանը եկավ, բայց՝ Տիրոջ սրով, ոչ թե Աստծո ժողովրդի կողմից: Շուտով կտեսնենք, որ Աստված է առաջնորդների վրա դատաստան բերողը: Մեզ պատվիրված է աղոթել առաջնորդների համար, պատվել նրանց և հպատակվել նրանց իշխանությանը: Եթե դատաստանի կարիք կա, Աստված ասում է, որ մենք պետք է տեղ տանք դրան:

Այն, ինչ ներկայացրի այս գլխում, նույնպես հաստատվում է այլ աստվածաշնչյան իրադարձություններով, սակայն հակառակ է շատերի ուսմունքներին և պատկերացումներին եկեղեցում: Այն մարդիկ, որոնք գնահատում են իրենց հարմարավետությունը ավելի, քան Աստծո փրկարար նպատակների իրականացումը, կույր են Աստծո գործերի հանդեպ այս ոլորտում: Եկեք բաց սիրտ ունենանք՝ Աստծո իմաստությունը հասկանալու համար: Հիշեք՝ Նա մեր կողմից է, ոչ թե՝ մեր դեմ:

ԳԼՈՒԽ 9

ՊԱՏՎԵՔ ԹԱԳԱՎՈՐԻՆ

Մենք պետք է սովորենք պատվել իշխանություն ունեցող մարդկանց՝ ակնածել, հարգել, վերաբերվել հարգալից և հպատակությամբ, նաև կատարել դրան վերաբերող պարտականությունները:

Պետրոս առաքյալի վճռական հորդորը, որը հպանցիկ նշվեց նախորդ գլխում, զգալի ուշադրություն է պահանջում, հատկապես՝ մեր օրերում: Մինչև այս հատվածն առանձին դիտարկելը, ուսումնասիրենք այն՝ դրան նախորդող խոսքերի համատեքստում. «Սիրելի՛ ընկերներ, դուք օտարականներ և պանդուխտներ եք այս աշխարհում: Այնպես որ, աղաչո՛ւմ եմ ձեզ, որ անձնատուր չլինեք այն ցանկություններին, որոնք պայքարում են ձեր դեմ: Մշտապես թույլ տվեք, որ ուրիշները տեսնեն, որ դուք պատշաճ կերպով եք վարվում, նույնիսկ եթե նրանք շարունակեն մեղադրել ձեզ սխալ վարվելու մեջ» (Ա Պետր. 2.11,12, CEV): Մենք բացահայտելու ենք, որ հպատակությունն իշխանությանը այն պատշաճ վարքն է, որը նա նկատի ուներ: Այն պայքարը, որը նա նշում է, իշխանությանը անհնազանդ լինելու ապստամբ ցանկության և հնազանդության միջև է: Այնուամենայնիվ, չափազանց հաճախ մենք հակառակն ենք մտածում. մենք համարում ենք, որ չհնազանդվելու ցանկությունը մեր դաշնակիցն է, իսկ հպա-

տակությունը՝ մեր թշնամին: Ոչինչ չի կարող ավելի հեռու լինել ճշմարտությունից:

Մենք չպետք է մոռանանք այն, ինչ գրեց Պետրոսը, քանի որ, նույնիսկ երբ հպատակվում և հնազանդվում ենք, միևնույն է, մեզ կարող են մեղադրել «սխալ վարվելու» մեջ: Ես լսել եմ այսպիսի փաստարկներ. «Ի՞նչ օգուտ դրանից: Ես հպատակվում եմ, բայց ինձ մեղադրում են սխալ վարվելու մեջ»: Մարդիկ մոռացել են այն փաստը, որ իրենց հնազանդությունն ուղղված է Տիրոջը, և իրենց վարձատրությունը Նրանից է: *«Ուղերձ»* Աստվածաշունչը հրաշալիորեն ընդգծում է այս ճշմարտությունը.

> «Ծառանե՛ր [աշխատողներ, եկեղեցու անդամներ, քաղաքացիականներ և այլք], հարգալից կերպով հնազանդվե՛ք ձեր երկրային տերերին [գործատուներին, եկեղեցական առաջնորդներին, քաղաքացիական իշխանություններին և այլոց], բայց մշտապես տեսադաշտում պահեք իրական Տիրոջը՝ Քրիստոսին հնազանդվելը: Միայն մի՛ արեք այն, ինչ պարտավոր եք՝ ձեր աշխատանքը մի կերպ կատարելու համար, այլ սրտանց աշխատեք՝ որպես Քրիստոսի ծառաներ՝ կատարելով այն, ինչ Աստված է ցանկանում: Եվ աշխատեք՝ ժպիտը ձեր դեմքին, մշտապես մտապահելով, որ ով էլ հրամաններ տա ձեզ, իրականում դուք Աստծուն եք ծառայում: Լավ աշխատանքը լավ վարձատրություն կտա ձեզ Տիրոջից, անկախ այն բանից՝ դուք ստրո՞ւկ եք, թե՞ ազատ եք» (Եփես. 6.5-8, MSG):

Վերադառնանք Պետրոսի հորդորին. «Հանուն Տիրոջ, ենթարկվե՛ք [հպատակվե՛ք] այն մարդկանց, որոնք իշխանություն ունեն այս աշխարհում՝ թագավորին, որը բարձրագույն իշխանավորն է, և այն ղեկավարներին, որոնք ուղարկված են նրա կողմից» (Ա Պետր. 2.13,14, NCV): Սուրբ Հոգին հորդորում է մեզ Պետրոսի միջոցով, ինչպես որ Նա հորդորում է Պողոսի միջոցով՝ հնազանդվել բոլոր բարձր իշխանություններին: Մտապահե՛ք, որ այն թագավորը, որին նա նկատի ուներ, շատ դաժան էր, և հավատացյալները սաստիկ հալածանքներ էին կրում նրա իշխանության ներքո: Ինչպես և Պողոսը, Պետրոսը հորդորեց մեզ ընդունել այն իշխանությունը, որով Աստված օժտել է մարդուն, ոչ

թե հենց այդ մարդուն: Գուցե նա երբեք չհպատակվեր Հերովդես Ագրիպպաս Առաջինին՝ որպես մարդու, եթե չհասկանար և չճանաչեր Աստծո իշխանությունը, որով օժտված է թագավորի դիրքը: Դժվար է հպատակվել լիազորած իշխանությանը, եթե դեռ չենք ճանաչում Աստծո իշխանությունը: Եթե մենք չհասկանանք ճշմարիտ իշխանությունը, որքան ավելի փորձենք հնազանդվել, այնքան ավելի դժվար կլինի:

Պետրոսը զգուշացրեց մեզ, քանի որ նա գիտեր, որ անհնազանդությունն իրականում նպաստում է հակաքրիստոսային կամ հակաքրիստոնեական հոգիների գործունեությանը: Պատճառն այն է, որ այս ուժը «գոռոզացած է այն ամենի վրա, որ Աստված... է անվանված» (Բ Թեսաղ. 2.4)՝ ներառյալ ճշմարիտ կենդանի Աստծո ճանապարհների, մեթոդների, գործունեության և դրույթների վրա: Մենք՝ հավատացյալներս, պետք է հարց տանք մեզ. «Մենք աջակցո՞ւմ ենք, թե՞ զսպում ենք անօրինության գործունեությունը»: Եթե աջակցում ենք դրան, մենք վարվում ենք սատանայի (ապստամբության) սկզբունքներով, ոչ թե Աստծո:

Պետրոսը շարունակեց. «Ամենին պատվե՛ք, եղբայրությունը սիրե՛ք, Աստծուց վախեցե՛ք, թագավորին պատվե՛ք» (Ա Պետր. 2.17): Նա ոչ միայն հորդորեց մեզ հնազանդվել, այլև՝ պատվել իշխանություններին: «Պատիվ» բառը հունարենում *«տիմաո»* բառն է, որը նշանակում է «պատվել, պատվով վերաբերվել, պատկառել, ակնածել»: Սա նույն բառն է, որն օգտագործեց Հիսուսը, երբ ասաց. «Ես... Իմ Հորը պատվում եմ» (Հովհ. 8.49): *«Վեբսթերի բառարանը»* (1828 թվականի հրատարակություն) սահմանում է *«պատիվ»* բառը որպես «ակնածել, հարգել, վերաբերվել հարգալից և հպատակությամբ, նաև կատարել դրան վերաբերող պարտականությունները»: Թույլ տվեք կրկնել. այն թագավորը, որին Պետրոսը նկատի ուներ, սաստիկ հալածանքների էր ենթարկում իր ժամանակվա քրիստոնյաներին: Նա ոչ մի դեպքում չէր խոսում թագավորի մասին՝ որպես անհատի. նա հորդորում էր մեզ պատվել նրան՝ որպես Աստծո կողմից կարգված իշխանավորի:

Տխրալի հարցազրույց

Տարիներ առաջ հարցազրույցի մասնակցեցի մի հայտնի քրիստոնեական ռադիոկայանի ուղիղ եթերում, որը հեռարձակվում է ԱՄՆ-ի Հարավի խոշոր քաղաքներից մեկում: Մենք խոսում էինք իմ գրքերից մեկի մասին: Հարցազրույցի առաջին տասը րոպեից հետո հաղորդավարն ընդմիջում վերցրեց: Ես լսեցի մի քանի գովազդ և հայտարարություն՝ փոքր ինչ ցածր հնչողությամբ, քանի որ ընդմիջման ժամանակ եթերում չէի:

Հանկարծ ուշադրությունս գրավեց եղանակի ազգային տեսությունը ներկայացնող հաղորդավարը: Նա իրենց հարյուր հազարավոր մարդկանցից բաղկացած լսարանին ասաց, որ ԱՄՆ-ի հյուսիսային նահանգներից մեկում այնքա՛ն ցուրտ է եղել, որ նահանգապետի շուրթերը սառչել են: Նա տվեց այդ նահանգապետի անունը և ավելացրեց, որ նրա շուրթերն այնքա՛ն էին սառչել, որ նա չէր կարողանում բացել բերանը և ինչ-որ անմիտ բան ասել՝ իր սովորության համաձայն:

Ես ցնցվեցի. չէի հավատում լսածիս: Ես մտածեցի. *«Սա քրիստոնեակա՛ն կայան է: Իհարկե՝ ո՛չ»:* Ես շարունակեցի մտածել. *«Եթե սա քրիստոնեական կայան է, գուցե նրանք վերցրել են այս եղանակի տեսությունը «Ասոշիեյթիդ փրես» գործակալության աղբյուրների՞ց»:* Ես դեռ իմ լսածի տպավորության ներքո էի, երբ հաղորդավարը վերադարձավ:

Երբ մենք կրկին եթերում էինք, նա մի անորոշ հարց տվեց, որին ես պատասխանեցի՝ ասելով, որ անչափ կարևոր է Աստծո սրտի համեմատ վարվել այն ամենում, ինչ անում ենք: Միտքս դեռ խռովված էր այն բանով, ինչ լսել էի, և ես ասացի.

- Դրա լավ օրինակն այն է, ինչ հենց նոր լսեցի ընդմիջման ժամանակ:

Ես հարցրի նրան.

- Սա քրիստոնեակա՛ն կայան է:

- Այո՛,- պատասխանեց նա:

- Այդ դեպքում, գուցե այն, ինչ լսեցի, որևէ աշխարհիկ աղբյուրից էր ստացված, քանի որ այդ լուրը հաղորդողը չէր վարվում Աստծո սրտի համեմատ այն բանում, ինչ ասաց մի քանի րոպե առաջ:

- Ի՞նչ նկատի ունեք,- հարցրեց հաղորդավարը:

- Այն հայտարարությունը, որում ասվում էր նահանգապետի շուրթերը սառչելու և փակվելու մասին:

Հաղորդավարը պատասխանեց հակակրանքի երանգի իր ձայնով.

- Ես էի տալիս այդ հայտարարությունը:

Ես ասացի.

- Աստվածաշունչն ասում է, որ մենք պետք է վախենանք Աստծուց և պատվենք թագավորին ու այլ իշխանավորների:

Նա պատասխանեց ավելի հաստատուն ձայնով.

- Այո՛, բայց մի փոքր հումորի մեջ ոչ մի վատ բան չկա:

Ես արագորեն ավելացրի.

- Ո՛չ այն ոլորտներում, որոնցում Աստված պատվիրում է մեզ պատիվ ցուցաբերել: Պողոս առաքյալն ասաց. «Մի՛ չարախոսիր քո ժողովրդի իշխանից» (Գործք 23.5, NIV):

Նա որոշված ժամանակից շուտ ավարտեց հարցազրույցը՝ ասելով.

- Ջոնը և ես պարզապես տարբեր հայացքներ ունենք որոշ հարցերում:

Երբ ցած դրեցի խոսափողը, ես տրտմած էի: Արդյո՞ք այդ խոսքերը նահանգապետի մասին պատվելի, պատկառելի և ակնածելի էին: Կարող եմ խոստովանել, որ այն անձնավորությունը, որին նա հիշատակեց, միշտ չէ, որ հարգանքի արժանի վարք ունի, բայց նա նահանգապետի պաշտոնում է: Որպես քրիստոնյաներ՝ մենք պետք է պատվենք այդ իշխանական դիրքը: Քանի՞ հավատացյալների վրա ազդեցություն թողեց այդ աներկյուղ հումորը: Զարմանալի չէ, որ մենք կորցրել ենք հարգանքը մեր հասարակության բազմաթիվ տարրերի հանդեպ:

Մենք անասելիորեն հեռացել ենք հալածված Առաջին եկեղեցու վարքից: Նրանք պատվում էին իշխանությունը: Երբ մենք այս կերպով ենք վարվում և խոսում, օժանդակում ենք անօրինության խորհրդին, որը գործում է մեր օրերում: Այնուամենայնիվ, Աստվածաշունչը հայտնում է հետևյալը. «Որովհետև անօրինության խորհուրդը արդեն զորանում է, միայն թե մինչև որ մեջտեղից վեր

առնվի այժմ Խափանողը» (Բ Թեսաղ. 2.7): Նման վարքը պատերազմում է Սուրբ Հոգու խափանող կամ զսպող զորության դեմ: Դա սատանայի սկզբունքն է:

Տիրոջ երկյուղը պատիվ է ծնում

Վերադառնանք Պետրոսի՝ «Աստծուց վախեցեք, թագավորին պատվեք» խոսքերին: Աստծուց վախեցող մարդիկ նրանք են, որոնց կյանքում Տիրոջ փառքը բարձր և վեհ դիրքում է: Նրանք հանդիպել են Նրա անսահման իշխանությանը և կլանվել են դրանով: Նրանք արժևորում են այն, ինչ Նա է արժևորում, և ատում են այն, ինչ Նա է ատում: Նրանց կյանքում արմատապես հաստատված է ակնածալի երկյուղը և հարգանքը առաջնորդական դիրքեր զբաղեցնող մարդկանց հանդեպ, քանի որ Աստված է լիազորել նրանց Իր իշխանությունը:

Տիրոջ երկյուղի Հոգու բացակայությունն ակնհայտ է, երբ չունենք ակնածանք իշխանության հանդեպ: Հիշեք, թե ինչպես Եսային նկարագրեց Հիսուսին.

> «Եվ Նրա վրա կհանգչի Տիրոջ Հոգին,
> Իմաստության և հանճարի Հոգին,
> Խորհրդի և զորության Հոգին,
> Գիտության և *Տիրոջ երկյուղի* Հոգին:
> Եվ Նրա ախորժանքը Տիրոջ երկյուղն է,
> Եվ Նա *Իր աչքի տեսածի պես չի դատի,*
> Եվ ոչ՝ *Իր ականջների լսածի պես կհանդիմանի»*
> (Եսայի 11.2,3):

Հիսուսի ախորժանքը կամ բերկրանքը Տիրոջ երկյուղն է: Այն կարողություն տվեց Նրան չդատել բնական տեսողությամբ և լսողությամբ: Այդ ռադիո հաղորդավարը ցույց տվեց իր պտղով, որ ծանոթ չէր Տիրոջ երկյուղին՝ լիազորած իշխանություններին ցուցաբերվող վերաբերմունքի հարցում: Այդ նահանգապետի վարքը պատվավոր չէր, և այդ ռադիո հաղորդավարը դատեց նրան իր աչքի տեսածով և ականջի լսածով: Համաձայն այդ չափանիշների, նա կարող էր ճիշտ համարվել: Այնուամենայնիվ, եթե նա տեսներ Տիրոջ երկյուղի աչքերով, կհասկանար, որ այդ նահան-

գապետը կարգված էր իշխանական դիրքում: Պետական կառավարչին չարախոսելը ոչ մի դեպքում աստվածահաճո վարք չէ:

Հովհաննես Մկրտիչը հանդիմանեց Հերովդես անունով մի իշխանավորի վարքը, սակայն նրա մոտեցումը մեծապես տարբերվում էր ինձ հետ հարցազրույց անցկացնող հաղորդավարի մոտեցումից: Առաջինը՝ Հովհաննեսն ասաց Հերովդեսին. «Քեզ համար օրինավոր չէ, որ ունենաս նրան [քո եղբոր կնոջը]» (Մատթ. 14.4, NKJV): Նա ուղղակիորեն մատնանշեց մեղքը, սակայն անհարգալից չխոսեց նրա մասին: Երկրորդը՝ նա խոսեց Հերովդեսի հետ իր իշխանական դիրքից՝ որպես Աստծո մարգարե: Վերջինը՝ Հովհաննեսն աներկյուղ կատակներ չարեց թագավորի մասին:

Միակ աստվածապաշտ անձնավորությունը, որին կարող եք գտնել Աստվածաշնչում, որը կատակներ էր անում առաջնորդական դիրքեր զբաղեցնող մարդկանց մասին, Եղիան էր (տես Գ Թագ. 18.27): Նա ծաղրում էր Բահաղի և Աստարովթի մարգարեներին և այն աստվածներին, որոնց նրանք ներկայացնում էին: Այդ մարդիկ, որոնց իշխանությունը իրական չէր, այլ կեղծ էր, խավարի մեջ էին առաջնորդում բազմաթիվ իսրայելցիների: Նրանց դիրքը կարգված չէր Աստծո կողմից: Նրանք արժանի չէին պատվի և հնազանդության: Այն մարդիկ, որոնք օկուլտային կազմակերպություններ են ղեկավարում, չպետք է հպատակություն և հնազանդություն ստանան:

Վերադառնալով իրապես կարգված իշխանությանը, *դժվար է* պատվել և հնազանդվել նրանց, երբ մենք չենք տեսնում իշխանությունը՝ Տիրոջ երկյուղով լուսավորված աչքերով: Միևնույն ժամանակ, լսե՛ք, թե ինչ է ասում Աստվածաշունչը. «Նա [Աստված] հատկապես խիստ է նրանց հանդեպ, ովքեր հետևում են իրենց չար, կրքով լի ցանկություններին, և ովքեր *արհամարհում են իշխանությունը:* Այս մարդիկ հպարտ և ամբարտավան են և համարձակվում են ծաղրել նույնիսկ փառավորներին՝ առանց մի փոքր դողալու» (Բ Պետր. 2.10, NLT): Իսկապես զգաստացնող փաստն այն է, որ և՛ Պետրոսը, և՛ Հուդան նկատի ունեին եկեղեցական միջավայրում գտնվող մարդկանց (տես Հուդա 12, Բ Պետր. 2.13-15):

Այս գրքի սկզբում ես զգուշացրի, որ ոմանց համար դժվար կլինի ընդունել այս ճշմարտությունը, քանի որ չափազանց հա-

ճախ մենք դիտարկում ենք Աստծո թագավորությունը ժողովրդավարական տեսանկյունից: Սա է պատճառը, որ Աստվածաշունչը պատվիրում է մեզ նորոգել մեր միտքը (տե՛ս Եփես. 4.23): Եթե այդ ռադիո հաղորդավարի մտածելակերպը եզակի երևույթ լիներ, ես, հավանաբար, չէի հիշատակի այն: Այնուամենայնիվ, այս մտածելակերպը տարածված է եկեղեցում: Ես բացահայտեցի սա Բիլ Քլինթոնի նախագահության ժամանակ:

Երկու սխալի արդյունքում երբեք ճիշտ չի ստացվում

1992 թվականին, երբ ընտրվեց նախագահ Քլինթոնը, ես երեք օր շարունակ ընկճված էի, մինչև որ Աստված հանդիմանեց ինձ: Նա միանշանակ ցույց տվեց, որ ոչ ոք իշխանության չի գալիս՝ առանց Իր գիտության, և որ իշխանություն ունեցող մարդիկ Իր կողմից են կարգված: Ստանալով այդ հայտնությունը՝ ես սկսեցի կենտրոնանալ նրան շնորհված իշխանության վրա, ոչ թե նրա անձնական կյանքի: Երբ այդպես վարվեցի, իմ սրտում ճշմարիտ սեր հայտնվեց այդ առաջնորդի հանդեպ, նաև ջերմեռանդ ցանկություն, որ նա ազատվեր մոլորությունից և ճշմարտությամբ վարվեր:

Հավատում եմ, որ նույն զգացումը կար Հովհաննես Մկրտչի սրտում՝ Հերովդեսի հանդեպ: Թեև նա կտրուկ խոսեց, սակայն, անկասկած, Աստծո սրտի համեմատ էր վերաբերվում այդ մեղավոր առաջնորդին: Նույն զգացումի պատճառով է, որ Երեմիան լաց էր լինում այն մարդկանց համար, որոնց հետ սաստկությամբ էր խոսում: Կան այնպիսի մարդիկ, որոնք խոսում են օրինապաշտությամբ և ատելությամբ լցված սրտից, և այնպիսիք, որոնք խոսում են Տիրոջ խրատող խոսքը՝ կարեկցանքով վառվող սրտից:

Տիրոջը բարկացնում են մարդիկ, որոնք «սխալներ են գտնում»՝ ելնելով ինքնաարդարացի դատողություններից: Ես ականատես եմ եղել այս երևույթին՝ ընդդեմ նախագահ Քլինթոնի, բազմաթիվ եկեղեցիներում: Մինչև շարունակելը, թույլ տվեք ասել, որ ես չէի քվեարկել նախագահ Քլինթոնի օգտին ոչ մի ընտրության ժամանակ, և տրտմում եմ այս երկրի վրա նրա թողած վարքի ազդեցության պատճառով:

1992 թվականին, իմ ճանապարհորդությունների ընթացքում, ինձ հաճախ էին խորհուրդ տալիս դիտել մի ուլտրապահպանողական մեկնաբանի: Թվում էր՝ նա շատ բան ուներ ասելու մեր երկրի լիբերալ առաջնորդների մասին, հատկապես՝ նախագահի և նրա կնոջ: Ամեն շաբաթ ինձ պատմում էին նրա մասին տարբեր քաղաքներում: Այդ նախանձահույզներն ասում էին ինձ. «Դու պետք է լսես նրան: Նա ճշտորեն ներկայացնում է իրավիճակը Վաշինգտոնում»: Վստահելով այդ մարդկանց՝ մտածեցի. *«Պետք է գտնեմ այդ մարդու հաղորդումները և լսեմ»:* Ես հեռուստացույց հաճախակի չեմ դիտում, այնպես որ, գրեթե ինն ամիս անցավ, մինչև որ, ի վերջո, դիտեցի այդ մարդու հաղորդումներից մեկը:

Ես հյուրանոցային համար վերադարձա Կալիֆոռնիայում անցկացրած մի հավաքույթից հետո, միացրի հեռուստացույցը, և նա եթերում էր: Նա շատ զվարճալի էր և աչքի ընկնող փողկապ էր կրում: Նա սկսեց խոսել նախագահ Քլինթոնի մասին: Ես կռահեցի. *«Ահա այն մարդը, որի մասին բոլորը պատմում էին ինձ»:* Ես ոգեշնչված էի, որ վերջապես լսելու էի այդ հայտնի անձնավորությանը: Նստեցի՝ պատրաստվելով դիտել նրան և լսել, թե ինչ էր ասելու:

Քսան րոպե շարունակ լսում էի, թե ինչպես էր նա խստորեն քննադատում նախագահին և անհարգալից խոսում նրա մասին: Նրա կատակները ծիծաղելի էին, իսկ խոսքերը՝ սրամիտ, բայց ամբողջ այդ ընթացքում ես ասես սրտխառնոց զգայի: Մտածում էի. *«Ի՞նչ է կատարվում: Այն ամենը, ինչ նա ասում է, ճիշտ է: Նա ճշտորեն ներկայացնում է մեր նախագահի լիբերալ աշխարհայացքը»:* Ես հարցրի. «Տեր, ո՞րն է այս անհարմարավետ զգացումի պատճառն իմ սրտում»:

> Սուրբ Հոգին անմիջապես պատասխանեց. *«Քո ժողովրդի իշխանին չհայհոյես»* (Գործք 23.5):

Ես անմիջապես հիշեցի ևս մեկ աստվածաշնչյան հատված. «Արդ, աղաչո՛ւմ եմ, ամենից առաջ աղոթք անել՝ խնդրվածք, աղաչանք, գոհություն՝ բոլոր մարդկանց համար, թագավորների և բոլոր իշխանավորների համար, որ խաղաղ և հանդարտ կյանք վարենք՝ ամբողջ աստվածապաշտությամբ և սրբությամբ: Որով-

հետև սա բարի և ընդունելի է մեր Փրկիչ Աստծո առջև» (Ա Տիմոթ. 2.1-3): Այս հատվածն ասես սթափեցրեց ինձ: Աստված պատվիրել է մեզ պատվել իշխանավորներին, նաև աղոթել, բարեխոսել և գոհանալ նրանց համար: Նա նույնպես պատվիրել է մեզ չխոսել նրանց դեմ: Նա չի պատվիրել մեզ քննադատել նրանց, պայքարել նրանց դեմ և ծաղրել: Թեև այդ հեռուստատեսային մեկնաբանի ներկայացրած տեղեկությունը մեծ մասամբ ճիշտ էր, երկու սխալի արդյունքում երբեք ճիշտ չի ստացվում:

Ես այնքան բարկացած չէի այդ մարդու պատճառով, որքան այն հավատացյալների, որոնք ոգեշնչվում էին նրա խոսքերից: Կարծում եմ՝ այդ մեկնաբանից չարժեր ավելին սպասել: Սակայն իմ մտքում չէր տեղավորվում, թե ինչպես էին հավատացյալներն աջակցում նրան և տարածում նրա խոսքերը: Ինչպե՞ս էին նրանք «պատվում թագավորին»: Աստված ասել է մեզ, թե ինչ անեն՝ որպես քրիստոնյաներ. աղոթել, բարեխոսել և գոհանալ: Պողոսն ասաց, որ աստվածային դատաստանը վրա կհասնի ոչ միայն նրանց, ովքեր վարվում են անօրինության բազմաթիվ դրսևորումների մեջ, այլև նրանց, ովքեր «գործողներին էլ կամակից են լինում» (Հռոմ. 1.32):

Ինչ օրենքներով ենք մենք ապրում

Ես սկսեցի քարոզել Միացյալ Նահանգներով մեկ այն մասին, թե ինչ կատարվեց ինձ հետ այդ հյուրանոցային համարում: Շատերը տեսան լույսը և ապաշխարեցին: Մյուսները խիստ բարկացան ինձ վրա: Նրանք հակադարձում էին՝ ասելով, որ այդ մեկնաբանը պաշտպանում էր արդար կյանքը և խոսքի ազատությունը, որը տրված էր մեր կառավարության կողմից: Սա ճշմարիտ է. այնուամենայնիվ, մենք ունենք պատվիրաններ, որոնք գերազանցում են նման վարքագիծը: Մենք ապրում ենք ժողովրդավարակա՞ն օրենքներով, թե՞ Աստծո թագավորության օրենքներով: Նույնիսկ եթե մեր պետությունը թույլատրում է ալկոհոլի, և որոշ նահանգներում նաև մարիխուանայի օգտագործումը, մի՞թե մենք՝ հավատացյալներս, պետք է չարաշահենք ոգելից խմիչքները և ազատորեն մարիխուանա ծխենք:

Մենք ավելի բարձր օրենք ունենք: Մի անհավատ Հռոմում

գրում էր առաջին դարի քրիստոնյաների մասին. «Նրանք անցկացնում են իրենց օրերն այս երկրի վրա, բայց Երկնքի քաղաքացիներ են: Նրանք հնազանդվում են ընդունված օրենքներին և միևնույն ժամանակ գերազանցում են այդ օրենքներն իրենց կյանքով» («Նամակ Դիոգնետոսին», գլուխ 5):

Ինչ օգուտ կա չարախոսություն լսելուց: Ինչ պտուղ է այն բերում: Միթե ավելի արդյունավետ չի լինի օգտագործել այն ժամանակը, որը ծախսվում է այդ մարդուն դիտելու և նրա խոսքերը տարածելու վրա, որպեսզի բարեխոսենք մեր ազգային առաջնորդների համար: Միթե Աստված չասաց, թե որն է հնազանդ վարքի արդյունքը. «...որ խաղաղ և հանդարտ կյանք վարենք՝ ամբողջ աստվածապաշտությամբ և սրբությամբ»:

Ես ճանաչում եմ մի ծառայողի, որը հանդիպեց նախագահ Քլինթոնին և ասաց. «Յուրաքանչյուր առաջնորդ, ով օրինականացնում է անմեղ երեխաների սպանությունը, կկրի Աստծո դատաստանը և կվառվի դժոխքում»: Այդ ծառայողը վարվեց ճիշտ այնպես, ինչպես Հովհաննես Մկրտիչը՝ Հերովդեսի հանդեպ: Աստծո այդ ավետաբերը խոսեց իր սրտից, որը լի էր արդար ցասումով, նաև ճշմարիտ սիրով՝ չծնված երեխաների և այդ նախագահի հանդեպ: Այդ ծառայողը հարգանքով վերաբերվեց նրա նախագահական պաշտոնին և միաժամանակ խոսեց ճշմարտությունը: Այդպիսի մարդը ոչ մի դեպքում չէր ծաղրի նախագահին: Երբ թե՛ տղամարդիկ, թե՛ կանայք լսում են հեռուստատեսային մեկնաբանների, որոնք խստորեն քննադատում են պետական առաջնորդներին, մենք կորցնում ենք այն, ինչ կա Աստծո սրտում: Զրպարտությանը ականջ դնելը հավիտենական պտուղ չի բերի:

Սիրտ՝ իշխանությանը պատվելու համար

Իշխանությանը պատվելու մեր սրտի դրդապատճառը պետք է դրսևորվի մեր վարքով, քանի որ մենք պատվում ենք այն, ինչ Տերն է նշանակել, կարգել: Պողոսը հորդորում է մեզ.

> «Որովհետև կառավարիչներից պետք է վախենան ոչ թե նրանք, ովքեր բարին են գործում, այլ նրանք, ովքեր չարն

են գործում: Ուզո՞ւմ ես առանց վախի լինել իշխանավորներից: Այդ դեպքում, բարի՛ն գործիր, և նրանք կգովեն քեզ, որովհետև նրանք *Աստծո ծառաներն* են, որոնք աշխատում են քո իսկ օգտի համար: Բայց եթե դու չարը գործես, վախեցի՛ր նրանցից, որովհետև նրանց պատժելու ուժն իրական է: Նրանք *Աստծո ծառաներն* են և բերում են Աստծո պատիժը նրանց վրա, ովքեր չարն են գործում: Սրա համար դուք պետք է հնազանդվեք իշխանություններին՝ ոչ թե պարզապես Աստծո պատժի պատճառով, այլ՝ որպես խղճի հարց: Նաև սրա համար է, որ դուք հարկեր եք վճարում, քանի որ իշխանություններն *աշխատում են Աստծո համար*, երբ կատարում են իրենց պարտականությունները: Այդ դեպքում, վճարեք՝ ինչ որ պարտք եք նրանց. վճարե՛ք նրանց ձեր անձնական և գույքային հարկերը և հարգանք ու պատիվ ցուցաբերե՛ք նրանց հանդեպ» (Հռոմ. 13.3-7, GNT, շեղագիրը հեղինակինն է):

Ես մարզվում էի մեր տեղական մարզասրահում և զրույցի բռնվեցի մի տղամարդու և կնոջ հետ, որոնք արտակարգ մարզական վիճակում էին: Մենք տասը րոպե զրուցում էինք, երբ իմացա, որ նրանք Կոլորադո Սփրինգսի ոստիկանության աշխատակիցներ էին: Եվ անմիջապես ասացի.

- Ես անսահմանորեն հարգում եմ երկուսիդ, քանի որ Աստվածաշունչն ասում է, որ դուք *Աստծո ծառաներն* եք:

Այդ տղամարդու դեմքը զարմանք և հիացմունք արտահայտեց, և նա ոգեշնչմամբ պատասխանեց.

- Դու ճի՞շտ ես ասում: Աստվածաշունչն ասում է, որ ես Աստծո ծառա՞ եմ:

Ես դրականորեն պատասխանեցի՝ ցույց տալով նրան վերևում բերված աստվածաշնչյան խոսքերը:

Նա ասաց.

- Ես կդաջեմ այդ խոսքերն իմ մեջքին:

Երկու շաբաթ անց հանդիպեցի նրան մարզասրահում: Նա բարձրացրեց շապիկը, և ես տեսա, որ նա դաջել էր վերևում բերված աստվածաշնչյան խոսքերն իր մեջքին: Դա խորը հայտնություն էր նրա համար:

Այս ճշմարտությունն անկարելի է չափից ավելի շեշտադրել մեր օրերում: Աստված անվանեց իշխանություն ունեցող մարդկանց Իր «ծառաները», և նրանք արժանի են պատշաճ պատիվ և հարգանք ստանալուն: Այս պատիվը վառվում է իմ սրտում ամեն անգամ, երբ տեսնում եմ ոստիկանի, հրշեջի, քաղաքապետի, քաղաքային խորհրդի անդամի, նահանգապետի, նահանգային օրենսդրի, դատավորի, կոնգրեսականի կամ կառավարական որևէ ճյուղի այլ ներկայացուցչի: Ես զգում եմ, որ իմ ներսից հարգանք է բխում, երբ գնում եմ քաղաքային, նահանգային կամ դաշնային պետական գրասենյակներ: Ես ընկերներ ունեմ, որոնք սենատորներ են, և երբ տեսնում եմ նրանց, միշտ ողջունում եմ՝ «Սենատոր» անվանելով, ոչ թե նրանց անունով: Ես ուզում եմ իմ հարգանքը ցուցաբերել այն դիրքի հանդեպ, որն Աստված շնորհել է նրանց: Նրանք Աստծո ծառաներն են, որոնց գործը Նրա ժողովրդին ծառայելն է:

Ավելին՝ ուշադրություն դարձրեք վերևում գտնվող աստվածաշնչյան հատվածին, որ իշխանություններն «աշխատում են Աստծո համար», երբ կատարում են իրենց պարտականությունները: Մտածեք այս մասին հետևյալ կերպով. եթե մեքենա եք վարում և ժամում քսան կիլոմետրով գերազանցում եք արագության թույլատրված սահմանաչափը, և հանկարծ կարմիր լուսային ազդանշան եք տեսնում ձեր հետահայաց հայելիներում, մի՛ աղոթեք սատանայի դեմ: Ոստիկանությունը չի աշխատում սատանայի համար. այն աշխատում է Աստծո՛ համար: Փոխարենը աղոթե՛ք, որ ողորմություն ստանաք:

Ես մի քանի անգամ տուգանք եմ ստացել արագությունը գերազանցելու պատճառով և ամեն անգամ ասել եմ ոստիկանին՝ տուգանքը ստանալուց հետո. «Պարո՛ն, ես սխալ էի, և ուզում եմ ձեզ շնորհակալություն հայտնել՝ ձեր աշխատանքը կատարելու և մեր քաղաքին ծառայելու համար: Խնդրում եմ, ներե՛ք ինձ այս խախտման համար»: Դուք պետք է տեսնեիք նրանց դեմքի արտահայտությունը: Մի անգամ մի սպայի վերաբերմունքը լիովին փոխվեց: Սկզբում նա խիստ էր, բայց հետո փափկեց՝ տեսնելով իմ հարգանքն իր իշխանության հանդեպ: Մի պահ ես նույնիսկ մտածեցի, որ հնարավոր է՝ նա ետ վերցնի տուգանքը, թեև իմ նպատակը դա չէր:

Ես մի ընկեր ունեմ, ով հովիվ է այն նահանգում, որի նահանգապետի մասին իմ հիշատակած ռադիո հաղորդավարն անհարգալից էր խոսել: Նա աղոթում էր իր քաղաքի համար և հարցնում էր Աստծուց, թե ինչպես լուրջ փոփոխություն բերի: Այդ ժամանակ նրա եկեղեցում սակավաթիվ հավատացյալներ կային: Աստված դրեց նրա սրտում պատվել իր քաղաքի պետական իշխանավորներին: Շարունակելով աղոթել՝ նա հասկացավ, թե ինչ էր պետք անել: Նա և օգնականները որոշեցին իմանալ իրենց քաղաքի ամենամեծ կարիքների մասին: Նրանք իմացան, որ հրշեջ ծառայությանը այնպիսի դիմակներ էին հարկավոր, որոնք թույլ են տալիս հրշեջներին տեսնել մարդկանց ծխի միջով, սակայն դրանք ընդգրկված չէին այդ տարվա բյուջեի մեջ: Մեկ այդպիսի դիմակը 25.000 դոլար արժեր: Նրանց եկեղեցու քանակի համեմատ դա մեծ գումար էր:

Այդ հովիվը կիսվեց այդ տեսիլքով իր եկեղեցու անդամների հետ, և մեկ զոհաբերությամբ նրանք հավաքեցին ճիշտ այն գումարը, որն անհրաժեշտ էր իրենց: Նա և օգնականները նվիրեցին այդ չեկն իրենց քաղաքին: Այդ հովիվը պատմում էր ինձ.

- Ջո՛ն, դու կզարմանայիր, եթե տեսնեիր, թե ինչպիսի ազդեցություն դա թողեց մեր քաղաքի պաշտոնյաների վրա: Նրանք հավատալ չէին կարող, որ ինչ-որ եկեղեցի կարող էր այդպիսի նվիրատվություն կատարել: Նրանք սովորել էին, որ մարդիկ իրենց դժգոհությունն էին արտահայտում կառավարությանը կարիքների պատճառով, ոչ թե առատաձեռնորեն օգնում էին նրանց:

Այդ ժամանակից ի վեր այդ եկեղեցին աննախադեպ աճ է ունեցել: Երբ այդ եկեղեցին նոր շենքի բացման արարողություն կատարեց, քաղաքի պաշտոնյաներից շատերը մասնակցեցին, և ոմանք սկսեցին եկեղեցի հաճախել: Համեմատե՛ք այս հովվի պտուղն այդ ռադիո հաղորդավարի պտղի հետ:

Ես լսել եմ բազմաթիվ հավատացյալների, որոնք տրտնջում են իրենց հարկերի պատճառով: Եկեղեցիներում հանդիպել եմ մարդկանց, որոնք հարկերից խուսափելու միջոցներ են հայտնաբերել: Նրանք պնդում են, որ դա իրենց սահմանադրական իրավունքն է: Ես ասում եմ նրանց. «Այն հորդորը, որը դուք ունեք Աստծուց, գերազանցում է ձեր ենթադրյալ սահմանադրական իրավունքը: Աստված պատվիրում է վճարել հարկերը»: Դրանից հետո հարցնում եմ նրանց. «Ո՞վ է վճարում այն ճանապարհ-

ների համար, որոնցով դուք վարում եք ձեր մեքենաները: Ո՞վ է վճարում ոստիկաններին, հրշեջներին և օրենսդիրներին, որոնք պաշտպանում են ձեզ»: Եղել են հաշվապահներ, որոնք պատմել են ինձ, որ հավատացյալները կեղծարարության են դիմում՝ պակասեցնելով իրենց հարկերը: Դա ցավալի է: Ես ասել եմ մեր հաշվապահներին. «Ես չեմ ուզում երկիմաստ ձևակերպումներ: Ես չեմ ուզում հնարավորինս կրճատել հարկերը»: Հարկեր վճարելը հնարավորություն է՝ հատուցելու մեր կառավարությանը, որը ծառայում է մեզ: Մեզնից չեն կարող գողանալ, եթե որոշենք, որ բաշխելու ենք: Երբ ենք մենք՝ հավատացյալներս, բերկրանքով ընդունելու այս ճշմարտությունը:

Եթե Քրիստոսի մարմինը պահեր այս ճշմարտությունը, մենք ավելի արդյունավետ կերպով կվկայեինք մեր երկրին և այս աշխարհին: Մենք պետք է սովորենք պատվել՝ ակնածել, հարգել, վերաբերվել հարգալից և հպատակությամբ, նաև կատարել դրան վերաբերող պարտականությունները: Այսպես վարվելով՝ մենք պատվում ենք մեր երկնային Հորը: Պատվելով թագավորին՝ մենք ցույց ենք տալիս, որ Տիրոջից երկյուղ ունենք:

Նույնը՝ իշխանության բոլոր ոլորտներում

Ինչպես նշեցի նախորդ գլխում, թագավորին պատվելու մասին պատվիրանը ուղղակիորեն վերաբերում է պետական իշխանությանը, սակայն այս սկզբունքը նույնպես տարածվում է լիազորած իշխանության մյուս ոլորտների վրա: Ուշադրություն դարձրեք պատվի մասին հղումներին հետևյալ խոսքերում: Ընտանիքի վերաբերյալ Աստված ասաց. «Պատվի՛ր քո հորը և մորը» (Եփես. 6.2): Կրկին, Նա պատվիրեց. «Թող կինը հետևի, որ հարգանքով վերաբերվի իր ամուսնուն» (Եփես. 5.33, NKJV): Հասարակական իշխանության վերաբերյալ գրված է. «Նրանք, որ ծառայության լծի տակ են, թող իրենց տերերին ամեն պատվի արժանի համարեն, որ Աստծո անունը և վարդապետությունը չհայհոյվի» (Ա Տիմոթ. 6.1): Եվ եկեղեցական իշխանության վերաբերյալ մենք ունենք հետևյալ պատվերը. «Լավ վերակացություն անող երեցները թող երկպատիկ պատվի արժանի լինեն, մանավանդ նրանք, որ խոսքով և վարդապետությամբ են աշխատում» (Ա Տիմոթ. 5.17):

Երեսուն տարուց ավելի լինելով ծառայության մեջ՝ չափազանց հաճախ եմ տեսել երիտասարդների, որոնք անհարգալից են խոսել իրենց ծնողների հետ: Այդ երիտասարդները չունեին հարգանք, էլ ինչ խոսք՝ պատվի մասին: Երբեմն ես անմիջապես խրատում էի նրանց, երբ նրանց ծնողները չէին անում դա: Եթե նրանք հասկանային, որ այդպես վարվելով իրականում վնաս էին հասցնում իրենց, չէին համարձակվի անել դա: Աստված ասում է. «Անիծված է այն մարդը, որն անարգում է իր հորը կամ իր մորը: Եվ ամբողջ ժողովուրդն ասի՝ ամե՛ն» (Երկր. Օր. 27.16, NIV): Այն անեծքը, որի մասին խոսեցինք նախորդ գլուխներից մեկում, գալիս է իրենց ծնողներին անարգող մարդկանց կյանքում:

Մյուս կողմից, Աստված մեծ օրհնություններ է խոստանում նրանց, ովքեր պատվում են իրենց ծնողներին. «Պատվի՛ր քո հորը և մորը. սա է առաջին պատվիրանը խոստումով, որ քեզ լավ լինի և երկար ապրես երկրի վրա» (Եփես. 6.2,3):

Իրականում, Աստված խոստանում է երեխային երկու հստակ օրհնություն՝ իր ծնողներին պատվելու համար: Առաջինը՝ նրա կյանքը բարեհաջող ընթացք է ունենալու: Այն մարդը, որը չի պատվում իր ծնողներին, չի կարող համոզված լինել, որ իր կյանքի ընթացքը բարեհաջող է լինելու: Նա անեծքի ներքո է (ես կպատմեմ իմ վկայությունն այս մասին հաջորդ գլուխներից մեկում):

Երկրորդ խոստումը երկար կյանքն է: Ինչպիսի՜ առավելություն՝ ձեր ծնողներին պատվելու համար: Գուցե մտածեք. *«Սպասե՛ք, ես ճանաչում եմ մարդկանց, որոնք պատվել են իրենց ծնողներին, սակայն երիտասարդ տարիքում են մահացել»:* Ես հաստատ գիտեմ հետևյալը. Աստծո Խոսքն ասում է, որ սա առաջին պատվիրանն է՝ խոստումով: Մենք խնդիրներ ենք ունենում, երբ թույլ ենք տալիս, որ այն, ինչ տեսնում ենք մեր շուրջը, հերքի Աստծո խոստումները: Մտածե՛ք այս մասին. մեր Հայրը խոստանում է կատարյալ ազատություն վախից՝ այն մարդկանց, որոնք պատկանում են Իրեն: Նա ասում է. «Արդարությամբ պիտի հաստատվես. հեռացի՛ր բռնությունից, որովհետև չես վախենալու» (Եսայի 54.14): Այնուամենայնիվ, բազմաթիվ թանկ քրիստոնյաներ վախի մեջ են ապրում: Եթե Աստծո խոստումներն ինքնաշխատ են գործում, ինչո՞ւ են բազմաթիվ քրիստոնյաներ տառապում վախից: Այս հարցի պատասխանը հետևյալն է. Աստծո խոստումներն ըն-

դունվում են աղոթքի միջոցով և նվաճվում են հավատքի բարի պատերազմով:

Աբրահամի որդի Իսահակը լավ օրինակ է: Աստված խոստում տվեց Աբրահամին՝ Իսահակի վերաբերյալ. «Ես Իմ ուխտը կհաստատեմ նրա հետ՝ հավիտենական ուխտ նրանից հետո նրա սերնդի համար» (Ծնն. 17.19): Աստված էր, որ ազդարարեց այդ խոստումը, սակայն, երբ Իսահակն ամուսնացավ Ռեբեկայի հետ, նրանք պարզեցին, որ Ռեբեկան՝ նրա միակ կինը, ամուլ էր: Իրավիճակն ավելի բարդացնելու համար, Իսահակը չէր ընտրել այդ կնոջը. Սուրբ Հոգին էր ընտրել նրան: Գուցե հարցնեք. «Դուք նկատի ունեք, որ Աստված հատուկ ամուլ կնո՞ջ էր ընտրել»: Այո՛: Այդ խոստումն ինքնաշխատ չէր. նրանք պետք է տիրանային դրան: Ահա թե ինչ է ասում Աստվածաշունչը. «Եվ Իսահակն աղաչեց Տիրոջն իր կնոջ համար, որ ամուլ էր, և Տերը լսեց նրա աղաչանքը, և նրա կինը՝ Ռեբեկան, հղացավ» (Ծնն. 25.21):

Իսահակը պետք է պայքարեր, որպեսզի ստանար իր խոստումը՝ Տիրոջն աղաղակելով: Նա աղոթեց Աստծո կամքի համաձայն և պատասխան ստացավ: Աստվածաշունչը խրախուսում է մեզ. «Եվ սա է այն համարձակությունը, որ ունենք դեպի Նա, թե ինչ որ Նրա կամքի պես խնդրում ենք, լսում է մեզ: Եվ եթե գիտենք, թե լսում է մեզ, ինչ որ խնդրում ենք, գիտենք, որ առնում ենք մեր խնդրանքները, որ խնդրեցինք Նրանից» (Ա Հովի. 5.14,15): Աստված հստակ հայտնել է Իր կամքն Իր ուխտի միջոցով: Եթե մենք խոստում ունենք Նրանից, գիտենք, որ կարող ենք աղոթել Նրա կամքի համաձայն:

Պատվելով ձեր ծնողներին՝ դուք կարող եք հենվել Աստծո ուխտի այս երկու խոստումների վրա՝ աղոթքի միջոցով, և բարեհաջող, երկար ու պտղաբեր կյանք ստանալ: Հիմնեք ձեր հավատքը Աստծո ուխտի վրա, ոչ թե այլ մարդկանց կյանքերի:

Գուցե դուք անվստահ եք, քանի որ չեք պատվել ձեր ծնողներին: Դուք կարող եք ապաշխարել: Աղոթքով մոտեցեք Աստծուն, գնացեք անձամբ ձեր ծնողների մոտ և խնդրեք նրանց ներել ձեզ: Սկսեք պատվել նրանց և հավատացեք, որ Նրա ուխտի խոստումները կգործեն ձեր կյանքում:

Նույն այս սկզբունքները վերաբերում են տնօրեններին, գործատուներին, ուսուցիչներին և այլ հասարակական իշխանութ-

յունների: Եթե պատվենք նրանց, մեր կյանքը բարեհաջող ընթացք կունենա, և մենք կստանանք մեր վարձատրությունը Տիրոջից: Պողոսը կարգադրում է աշխատողներին. «Եվ այն, ինչ որ անեք, սրտա՛նց արեք՝ ինչպես Տիրոջը, և ոչ թե մարդկանց, գիտենալով, որ Տիրոջից կառնեք ժառանգության հատուցում, որովհետև Տեր Քրիստոսին եք ծառայում: Բայց անիրավը հատուցում կստանա իր արած անիրավության համար. աչառություն չկա» (Կողոս. 3.23-25):

Հաջորդ գլխում կդիտարկենք այն մեծ առավելությունները, որոնք շնորհվում են, երբ մենք ընդունում ենք Նրա ծառայողներին եկեղեցում և պատշաճ պատիվ ենք տալիս նրանց: Մենք նույնպես կտեսնենք, թե ինչ ենք բաց թողնում, երբ չենք ընդունում այն մարդկանց, որոնց Աստված ուղարկում է մեզ մոտ:

ԳԼՈՒԽ 10

ԿՐԿՆԱԿԻ ՊԱՏԻՎ

Հաճախ Աստված ուղարկում է մեզ այն, ինչի կարիքը ունենք՝ այնպիսի փաթեթավորմամբ, որը չենք ցանկանում:

Հարգանք և պատիվ ցուցաբերեք նրանց, որոնց արժան է (տե՛ս Հռոմ. 13.7, NKJV): Այս գլխում կտեսնենք գլխավոր պատճառներից մեկը, թե ինչու է Աստված պատվիրում մեզ պատվել իշխանություններին: Նա անում է դա մեր օգտի համար, ոչ թե՝ նրանց: Ոգեշնչող է նշելը, որ Աստծո Խոսքի այս պատվիրանը պահելը օրհնություն է բերում: Մենք նման մի օրինակ ենք տեսնում Ա Թագավորաց գրքում:

Վիրավորանք, որը վերածվեց օրհնության

Այն օրերում, երբ Իսրայելը կառավարում էին դատավորները, Աննա անունով մի ամուլ կին կար: Նա ամուսնացած էր Եղկանա անունով մի մարդու հետ, որը նաև երկրորդ կին էր վերցրել՝ Փենանա անունով: Աննան դժբախտ էր, քանի որ նրա մրցակցուհին վշտացնում էր նրան՝ նրա ամլության պատճառով: Ավելի քան հավանական է, որ Աննայի ամլությունն էր դրդել Եղկանային երկրորդ կին վերցնել: Աննան սիրված էր, և նա լցնում էր իր ամուսնու սիրտը, բայց Փենանան լցնում էր նրա տունը: Ամեն

տարի այդ ընտանիքը Սելով էր գնում՝ երկրպագության համար: Այդտեղ Փենանան լաց լինելու աստիճան սաստիկ վշտացնում էր Աննային, նույնիսկ նրա ամուսինը չէր կարողանում մխիթարել նրան:

Մի անգամ, երբ նրանք Սելովում էին, նա լիովին վիատվեց: Խորը վշտից Աննան լաց եղավ Տիրոջ առջև և ուխտ արեց. «Եթե զավակ տաս ինձ, ես կնվիրեմ նրան Քեզ՝ նրա կյանքի բոլոր օրերում» (հեղինակի շրջասությունը):

Մինչ նա աղոթում էր, Հեղին՝ Իսրայելի քահանայապետը և դատավորը, հետևում էր նրան. «Աննան իր սրտից խոսում էր, միայն նրա շրթունքներն էին շարժվում, բայց ձայնը չէր լսվում: Դրա համար Հեղին նրան արբած կարծեց: Եվ Հեղին նրան ասաց. «Մինչև ե՞րբ պիտի արբածություն անես: Գինովությունդ թո՛ղ»» (Ա Թագ. 1.13,14):

Ինչպիսի՜ վիրավորանք: Նա ոչ միայն անզգա էր այդ կնոջ ցավի հանդեպ, այլև այն աստիճան հոգևորապես թմրած էր, որ կարծեց, թե Աննայի սաստիկ տրտմության պատճառն արբեցությունից առաջացած ընդարմածությունն էր: Այդ կինը հեռացել էր իր մշտական հակառակորդից, որպեսզի մխիթարություն գտներ Տիրոջ ներկայության մեջ, սակայն անբարո կին կոչվեց իր երկրի բարձրագույն հոգևոր առաջնորդի կողմից: Ամեն տարի նա դատարկաձեռն էր Սելով գնում՝ առանց երեխայի, որին նա կարող էր Տիրոջ առջև բերել: Ամեն տարի նա զգում էր իրեն շրջապատող մարդկանց հայացքները, սևեռած նայվածքները, շշնջոցները և ծաղրը:

Ինչպե՞ս դուք կարծագանքեիք, եթե ձեր հովիվը մեղադրեր ձեզ չար անձնավորություն լինելու մեջ ձեր կյանքի ամենածանր պահին: Գուցե մտածեիք. *«Այս մարդը գլխավոր հովիվն է: Մի՞թե նա չի հասկանում, որ ես ծոմ եմ պահում և աղաղակում եմ Աստծուն: Ինչպիսի՜ մարմնավոր և անզգա մարդ է նա: Սա վերջին անգամն է, որ ես պաշտամունքի եմ գալիս այստեղ»:*

Այս մտքերը հեշտորեն կվերածվեին բարկացած խոսքերի.

- Դու Աստծո մարդ ես անվանում քեզ և չե՞ս հասկանում, երբ ինչ-որ մեկը տրտմած է: Դու չե՞ս հասկանում, երբ ինչ-որ մեկը խորը աղոթքի մեջ է: Ինչպիսի՜ հովիվ ես դու: Ինչպիսի՜ եկեղեցի է

սա: Բավական է: Ես այլ եկեղեցի կգտնեմ, որի հովիվը զգայուն կլինի թե՛ իմ կյանքի, թե՛ աստվածային իրողությունների հանդեպ:

Այսօր նման արձագանքն անսովոր չէր լինի մեր եկեղեցիներում: Եթե այս խոսքերն անամոթաբար չասվեին ուղիղ հովվի երեսին, ապա կպատմվեին նրա թիկունքում՝ եկեղեցու անդամներին:

Բայց ահա թե ինչ պատասխանեց Աննան, երբ սաստիկ վիրավորանք ստացավ. «Ո՛չ, իմ տե՛ր,- պատասխանեց նա,- ես հարբած չե՛մ: Այլ անչափ տրտմած եմ, և ես բացում եմ իմ սիրտը Տիրոջը: Խնդրում եմ, մի՛ կարծիր, թե ես անբարո կին եմ: Որովհետև ես աղոթում էի մեծ տրտմությունից և վշտից» (խոսքեր 15,16, NLT): Նա արձագանքեց հարգանքով և պատվով: Թեև Հեղիի արարքը և գնահատականը բոլորովին արժանի չէին դրան, նա պատվեց նրա իշխանական դիրքը: Նա նույնիսկ հավաստիացրեց նրան, որ ինքն անբարո կին չէր:

Իրականում, այդ պահին անպարկեշտ վարք ունեցողը հենց Հեղին էր, և նրան դատաստան էր սպասում: Աննայի ուշադրությունն ուղղված էր ոչ թե նրա վարքին, այլ՝ իր վարքին: Աննան այնպիսի կին էր, որը ճշմարտապես Տիրոջ երկյուղն ուներ: Եթե այդ առաջնորդն ինչ-որ սխալ բան էր արել, Աստված կզբաղվեր դրանով: Որքա՜ն մենք կարիք ունենք նման ճշմարիտ հպատակության և խոնարհության այսօր:

Նրա պատասխանն Աննային փոխվեց.

> ««Եթե այդպես է,- ասաց Հեղին,- մի՛ վհատվիր: Թող Իսրայելի Աստված շնորհի այն, ինչ դու խնդրել ես Նրանից»: «Շնորհակա՛լ եմ, տե՛ր»,- բացականչեց նա: Եվ վերադարձավ, կրկին սկսեց ուտել, և նա այլևս տխուր չէր» (խոսքեր 17,18, NLT):

Նա անշեղորեն հպատակված մնաց Հեղիին. Աննան պատվեց նրան՝ որպես Աստծո մարդու, և նույնիսկ շնորհակալություն հայտնեց նրա օրհնության խոսքի համար:

Ահա թե ինչ տեղի ունեցավ. «Եվ նրանք առավոտ կանուխ վեր կացան և Տիրոջ առջև երկրպագություն արին և ետ դարձան Ռամա և գնացին իրենց տուն: Եվ Եղկանան մոտեցավ իր Աննա կնո-

ջը, և Տերը նրան հիշեց: Եվ եղավ, որ տարին դառնալիս Աննան հղացավ և մի տղա ծնեց» (Ա Թագ. 1.19,20):

Աստված գործածեց մարմնավոր և անզգա քահանայի՝ նրա միջոցով խոստում տալու համար: Իրականում, կարճ ժամանակ անց Աստված հաստատակամորեն ազդարարեց. «Ես... երդում արի Հեղիի տան համար, որ Հեղիի տան անօրինությանը զոհերով և ընծաներով հավիտյան քավություն չլինի» (Ա Թագ. 3.14): Ոչ ոք չէր ուզի նման խոսքեր լսել Աստծուց իր և իր ընտանիքի մասին: Աստված, Ով ողորմած և բարի է, սակայն նաև արդար է, ասաց Հեղիի և նրա ընտանիքի մասին նաև հետևյալ խոսքերը. «Գալիս է ժամանակը, երբ Ես վերջ կդնեմ քո ընտանիքին, և այն այլևս չի ծառայի Ինձ՝ Իմ քահանաների պաշտոնում: Քո ընտանիքի բոլոր անդամներն իրենց ժամանակից շուտ կմահանան: Նրանցից ոչ ոք մինչև խորը ծերություն չի ապրի: Դու նախանձով կհետևես, թե ինչպես եմ Ես բարգավաճում տեղալու Իսրայելի ժողովրդի վրա» (Ա Թագ. 2.31,32, NLT): Անկասկած, այդ մարդն աստվածապաշտ հոգևոր առաջնորդ չէր:

Փակ արգանդը բացվեց, և խավարից կյանք ծագեց: Հաջորդ տարի Աննայի գրկում փոքրիկ Սամուելն էր: Այդ տղան, որն ընծայվել էր Աստծուն, մինչև որ նրա մայրը հղացել էր նրան, արթնություն էր բերելու Իսրայելին: Այն, ինչ Աննան տարիներ շարունակ փափագում էր և ինչի համար աղոթում էր, չշնորհվեց նրան, մինչև որ նա չպատվեց անզգա քահանային, որը վիրավորեց իրեն: Տեղի ունեցածը գրեթե առնչություն չուներ Հեղիի վարքի հետ, այլ, մեծ մասամբ, Աննայի կողմից ճշմարիտ պատիվ ցուցաբերելու և Հեղիի իշխանությանը հպատակվելու:

Ո՞վ է դատավորը

Կա մի զարմանալի սկզբունք, որը քաղում ենք այս պատմությունից: Երբ Աստված տալիս է Իր իշխանությունը որևէ անձնավորության, մենք կարող ենք ընդունել նրա միջոցով, ինչպիսին էլ որ լինի նրա մասնավոր կամ անձնական վարքը, եթե տեսնենք ավելին և պատվենք նրան՝ որպես Աստծուց ուղարկված մարդու: Հիսուսը պարզորեն ցույց տվեց, որ շատերն ընդունելու են անբարո ծառայողներից, ինչպես և Աննան: Նա ասաց. «Շատերը կա-

սեն Ինձ այն օրը. «Տեր, Տեր», չէ՞ որ Քո անունով մարգարեացանք և Քո անունով դևեր հանեցինք և Քո անունով շատ զորություններ գործեցինք: Եվ Ես այն ժամանակ պարզ կասեմ նրանց, թե՝ երբեք ձեզ չեմ ճանաչել. Ինձնից դե՛ն գնացեք, ո՛վ անօրինություն գործողներ» (Մատթ. 7.22,23):

Երբ կարդում ենք այս խոսքը, չափազանց հաճախ կենտրոնանում ենք «շատերը» բառի վրա, որոնք հրաշագործություններ արեցին Հիսուսի անունով, սակայն մերժվեցին Նրա կողմից: Սա իսկապես որ լուրջ և սթափեցնող է. այնուամենայնիվ, դիտարկենք մյուս կողմը: Կային մարդիկ, որոնք ճշմարիտ ծառայություն ստացան այդ անօրինություն գործողներից: Պատճառն այն էր, որ նրանք հպվեցին Աստծուն այդ մարդկանց միջոցով, ինչպես Աննան: Այդ մարդիկ, որոնց մասին Հիսուսը խոսում էր, նման են Հեղիին, որի տունն Աստված հավիտյան դատեց:

Ես գրել եմ այս գիրքը ոչ թե անօրեն առաջնորդների, այլ իշխանության ներքո գտնվող մարդկանց համար: Աստվածաշունչը կասկած չի թողնում այն հարցում, որ կան թե՛ անօրեն, թե՛ աստվածապաշտ առաջնորդներ: Եթե իշխանության ներքո գտնվող մարդիկ իրենց վրա վերցնեն դատաստանի լուծը, նշանակում է՝ նրանք դադարել են հպատակվել կարգված իշխանությանը և գոռոզացել են՝ իրենց առաջնորդների դատավորները դառնալով: Նրանց սրտերը հպարտացել են՝ բարձրանալով այն մարդկանցից, որոնց Աստված իրենց վրա է կարգել: Նրանք վեր են դասել իրենց Աստծո հրամանից և խորհրդից: Ըստ էության, այդպիսի մարդիկ անգիտակցաբար ասում են Աստծուն. «Դու ճիշտ չես դատում. այնպես որ, ես ինքս կտնօրինեմ իրավիճակը»:

Աննան ընդունեց Հեղիի իշխանությունը և պատվեց այն: Հեղին դատեց և վիրավորեց Աննային, բայց Աննան պատվեց նրան: Եթե Աննան ապրեր աչքի տեսածով և ականջի լսածով, գուցե նա դատեր Հեղիի վարքը՝ համարելով այն վիճարկելի: Այնուամենայնիվ, Աննան ապրում էր ոչ թե բնական դատողությամբ, այլ Տիրոջ երկյուղով և աստվածային իշխանությամբ: Նա վստահեց Աստծուն, Ով արդար է դատում:

Աննան գիտեր այն, ինչ Հիսուսը հետագայում հաստատեց. «Ճշմարի՛տ, ճշմարի՛տ ասում եմ ձեզ. ով որ ընդունի Նրան, որ Ես կուղարկեմ, Ինձ է ընդունում, և Ինձ ընդունողն Ինձ Ուղարկողին

է ընդունում» (Հովհ. 13.20): Մի՛ մոռացեք, որ Հիսուսն օժտեց Հուդային զորությամբ և ուղարկեց հրաշքներ գործելու և դևեր հանելու, սակայն Նա գիտեր, որ ի վերջո Հուդայի անօրինությունը բացահայտվելու էր. «Չէ՞ որ ես ձեզ՝ տասներկուսիդ ընտրեցի, և ձեզնից մեկը սատանա է» (Հովհ. 6.71): Հիսուսը ճանաչում էր նրան՝ շնորհիվ Տիրոջ երկյուղի մեջ գտնվող զանազանության, մինչև որ նրա մեղքն ակնհայտ դարձավ: Հուդան հրաշքներ գործեց և վերադարձավ՝ ուրախանալով մյուսների հետ, որ դևերը հնազանդվում էին իրեն Հիսուսի անունով (տես Մարկ. 6.7-13, Ղուկ. 10.17): Մարդիկ ծառայություն ստացա՞ն Հուդայի ձեռքերից՝ նույն ձեռքերից, որոնք գողանում էին ծառայողական քսակից: Իհա՛րկե:

Երբ հեռանալ

Թույլ տվեք մի անչափ կարևոր պնդում անել: Երբ հայտնի է դառնում, որ եկեղեցու որևէ առաջնորդ բացահայտ անօրինության կամ մեղքի մեջ է, մենք չպետք է շարունակենք խմել աղտոտված աղբյուրից: Մեզ միանշանակ պատվիրված է հեռանալ: Եթե առաջնորդը շնության, համասեռամոլության, դրամաշորթության, գողության, հերձվածության կամ այլ մեղքի մեջ է, որի մասին դուք գիտեք, կամ, որը բացահայտվել է բոլորի առջև, և նա չի ապաշխարում, հեռացե՛ք նրա ծառայությունից: Աստվածաշունչը հստակ խոսում է այս մասին: Մենք չպետք է նույնիսկ հաց կիսենք նման մարդու հետ (տես Ա Կորնթ. 5.9-11): Ինչ վերաբերում է Հեղիին, պարզ չէ, թե արդյո՞ք Աննան լիովին տեղյակ էր Հեղիի և նրա որդիների անօրեն վարքից: Եվ ավելի քան հավանական է, որ Հուդայից ընդունող մարդիկ տեղյակ չէին, որ նա գող էր և դավաճան:

Խոսելով եկեղեցու առաջնորդների մասին՝ Պողոսն ասաց. «Որոշ մարդկանց մեղքերը նկատելի են (լիովին ակնհայտ են բոլորի համար). դրանք նրանցից առաջ դատաստանի [դատական ատյանի] են գնում և նախապես ազդարարում են նրանց դատավճիռը. բայց մյուսների մեղքերը հետագայում են երևում [հետևելով հանցագործին դեպի արդարադատությունը և ի հայտ գալով այդտեղ]» (Ա Տիմոթ. 5.24, AMP):

Իմաստն այն է, որ եթե առաջնորդի կյանքում անօրինություն

կա, և Աստծո դատաստանը դեռ ակնհայտ չէ, այն կգա՝ կամ այս կյանքում, կամ գալիքում: Կարիք չկա, որ դատեք կամ բացահայտեք այնպիսի բան, որում համոզված չեք: Շատերը վարվում են կասկածամտությունից ելնելով, և չափազանց հաճախ նրանց գնահատականը ճիշտ չի լինում, և նրանք վնաս են հասցնում թե՛ իրենց, թե՛ իրենց կողքիններին: Նրանք թույլ են տալիս իրենց ասել այն, ինչում իրենք սխալմամբ կասկածում են մարդկանց: Նրանք արդարացնում են իրենց կարծիքները՝ դրանք հոգևոր զանազանություն անվանելով: Նրանց պատճառով այլ մարդկանց համար դժվար է դառնում ընդունել կարգված առաջնորդներից, և շատերը բաց են թողնում այն, ինչ Աստված ցանկանում էր տալ իրենց: Ահա թե ինչու է Աստված զգուշացնում. «Երեցի հանդեպ մեղադրանք մի՛ ընդունիր, եթե այն առաջադրված չէ երկու կամ երեք վկաներով» (Ա Տիմոթ. 5.19, NIV): Վկան նա է, ով կարող է ներկայացնել ապացույցներ, ոչ թե ասեկոսեներ:

Աստված դատում է ամեն ինչ իր ժամանակին, և եթե Նա համարում է, որ ժամանակն է կամ անհրաժեշտ է բացահայտել որևէ առաջնորդի սխալմունքը, որից նա չի ապաշխարում, դուք անպայման կիմանաք այդ մասին, և դա կլինի այդ մարդու իշխանությունից հեռանալու ժամանակը: Պողոսը հայտարարեց. «Եթե առաջնորդներից որևէ մեկը շարունակ մեղանչի, նա պետք է հանդիմանվի ամբողջ խմբի առջև՝ որպես զգուշացում մյուսներին» (Ա Տիմոթ. 5.20, CEV): Զգուշացումը հետևյալն է. մի՛ մասնակցեք նրանց մեղքերին և հեռացե՛ք նրանց իշխանությունից, եթե նրանք ճշմարտապես չեն ապաշխարել:

Մի ժամանակ ես գտնվում էի մի առաջնորդի ծառայության մեջ, որը հետագայում բացահայտ մեղքի մեջ ընկավ: Ես այնտեղ չէի, երբ դա կատարվեց, քանի որ մենք արդեն այլ նահանգ էինք տեղափոխվել, որտեղ ես ծառայում էի որպես երիտասարդականի հովիվ: Մեր տեղափոխությունից երկու տարի անց նա կանգնեց իր եկեղեցական համայնքի առջև և ասաց, որ ամուսնալուծվում է կնոջից, քանի որ այլևս չի ցանկանում ապրել նրա հետ: Կարճ ժամանակ անց նա հայտարարեց, որ պատրաստվում է ամուսնանալ ավելի երիտասարդ կնոջ հետ: Նրա կինը որևէ սեռական մեղք չէր գործել. այդ ծառայողը պարզապես ուզում էր մյուս կնոջ հետ ապրել:

Այդ պահին հազարավոր մարդիկ հեռացան այդ եկեղեցուց: Նրանց արձագանքը ողջամիտ էր: Մնացողները հայտնվեցին վտանգավոր գոտում, քանի որ այդ եկեղեցու վարդապետությունը և ուսմունքները սկսեցին շարունակ խեղաթյուրվել՝ այդ ծառայողի և նրա նոր կնոջ նպատակներին ծառայելու համար: Ես ճանաչում եմ շատերին, որոնք հեռացան և բարգավաճեցին, քանի որ հրաժարվեցին խոսել այդ հովվի դեմ: Նրանք, ովքեր սկսեցին մեղադրել նրան, վնաս կրեցին:

Տարիներ անց մեր ընտանիքը մեկ այլ հայտնի եկեղեցի էր հաճախում: Մեր հովիվն ապրում էր բացահայտ մեղքի մեջ, բայց Աստված որոշ ժամանակ չէր բացահայտում դա: Ես մի կարևոր կողմնակի նշում կանեմ. Աստված երկայնամիտ է: Նա հուսով էր, որ այդ առաջնորդը կթողներ իր գիտակցված մեղքը: Աստված սիրում է այդ առաջնորդին. այնպես որ, Նա ժամանակ էր շնորհել նրան՝ ապաշխարելու համար: Ի վերջո, Աստծո համբերությունը սպառվեց, և մեր հովվի մեղքը բացահայտվեց: Նա մի համասեռամոլ մարմնավաճառի էր այցելում, ինչպես նաև ապօրինի թմրանյութեր էր օգտագործում: Այդ լուրը կործանարար ազդեցություն թողեց և մեծ տարածում գտավ, քանի որ նա Ավետարանական եկեղեցիների ազգային միության ղեկավարներից մեկն էր՝ մի միության, որտեղ մոտավորապես հիսուն հազար եկեղեցի կար:

Այնուամենայնիվ, այս ողբերգությունը շատ ավելի տարբերվող ավարտ ունեցավ, քան նախորդը: Այդ համազգային եկեղեցական միության մյուս երեցները, որոնք չորս այլ եկեղեցիների հովիվներ էին, արագորեն օգնության հասան այդ եկեղեցուն և հարկադրեցին հովվին ներողության և հրաժարականի նամակ գրել: Եկեղեցու անդամները պաշտպանված զգացին իրենց. այնպես որ, նրանց մեծ մասը մնաց: Եկեղեցին նոր հովիվ ունեցավ և, ի վերջո, աճեց՝ դառնալով ավելի մեծաթիվ, քան երբևէ եղել էր նախորդ հովվի ծառայության ներքո:

Իմ ծառայության ավելի քան երեսունհինգ տարում ականատես եմ եղել այդպիսի չափազանց շատ ողբերգական դեպքերի: Խիստ կարևոր է, որ անկում ապրած առաջնորդների ներքո գտնվող մարդիկ աստվածապաշտ կերպով արձագանքեն: Դավիթը պատշաճ վարքի օրինակ էր: Նույնիսկ երբ նա վտարվեց

դևերից չարչարվող թագավորի մոտից, նա պատվեց Սավուղին մինչև նրա մահվան օրը: Դավիթը հասկանում էր, որ Սավուղը Տիրոջ օծված ծառան էր: Մինչև օրս ես ջանում եմ պատվել այդ երկու ծառայողներին, թեև տրտմում եմ նրանց որոշումներից բխող հետևանքների պատճառով, և նրանց ողբերգական անկումը ցավեցնում է սիրտս: Թեև պատվում եմ երկուսին էլ, ես այլևս չեմ կարող անվտանգ համարել նրանց ուսմունքները և ծառայությունը, քանի որ առաջինը հրաժարվեց վերականգնում ստանալ, իսկ երկրորդը խափանեց իր վերականգնումը կես ճանապարհին:

Նախկինում ես առատորեն ընդունում էի երկուսից էլ: Հետագայում պարզեցի, որ նրանց անօրեն վարքագիծը սկսվել էր այն ժամանակվանից, երբ դեռ ընդունում էի նրանց ուսմունքները: Երկուսի դեպքում էլ անորոշ նշույլներ կային, բայց ոչինչ պարզ կամ ակնհայտ չէր: Աստված հանդիմանել էր ինձ քննադատող վերաբերմունքի համար, երբ ծառայում էի իմ առաջին հովվի իշխանության ներքո (ես կպատմեմ այդ մասին հաջորդ գլխում). գուցե Աստված դեռ փորձում էր հասնե՞լ այդ մարդուն: Այդ պահին դա իմ գործը չէր: Աստված կարգել էր ինձ նրա իշխանության ներքո, և իմ գործը չէր դատելը, թե արդյո՞ք նա արժանի էր, որ ես ընդունեի նրանից: Ինչպես որ Աննան ընդունեց Հեղիից, այդ ժամանակ շատերն էին ընդունում այդ մարդուց:

Հոգևոր իշխանության կարգը

Վերադառնանք Հիսուսի խոսքերին և դիտարկենք դրանք՝ նկատի ունենալով աստվածապաշտ առաջնորդների, ոչ թե Հեղիի պես մարդկանց: Կարդացե՛ք Նրա խոսքերը Մատթեոսի գրքում.

> «Ով որ ձեզ ընդունում է, Ինձ է ընդունում, և ով որ Ինձ ընդունում է, Ինձ Ուղարկողին է ընդունում: Ով որ մարգարեի է ընդունում՝ մարգարեի անունով, նա մարգարեի վարձք կառնի: Եվ ով որ արդարի է ընդունում՝ արդարի անունով, արդարի վարձք կառնի: Եվ ով որ այս փոքրերից մեկին միայն մի աման սառը ջուր խմեցնի՝ աշակերտի անունով, ճշմարիտ ասում եմ ձեզ, նա չի կորցնի իր վարձքը» (Մատթ. 10.40-42):

Նա խոսում է երկու իրողության մասին այս հատվածում: Նախևառաջ, գոյություն ունի իշխանության կարգ, որը սկսվում է Հորից: Հայրն է, որ ուղարկեց Հիսուսին և տվեց ամբողջ իշխանությունը Նրան: Հիսուսի խոսքերով՝ «Ամեն իշխանություն Ինձ տրվեց երկնքում և երկրում» (Մատթ. 28.18): Հիսուսը եկեղեցու Գլուխն է, և կգա այն օրը, երբ Նա կրկին կհանձնի Թագավորությունը Իր Հորը՝ այն բանից հետո, երբ ամեն ապստամբություն Իր ոտքերի տակ դրվի (տե՛ս Ա Կորնթ. 15.24-26):

Հաջորդն այս իշխանության կարգի մեջ մարգարեն է: Մարգարեները սկզբնապես նկարագրվում են Աստվածաշնչում որպես Տիրոջ խոսնակներ (տե՛ս Ելից 4.16, 7.1): Սա վերաբերում է ծառայության այն հինգ պարգևներին, որոնք Նա շնորհեց եկեղեցուն, երբ մեռելներից հարություն առավ (տե՛ս Եփես. 4.8-13՝ եկեղեցու խոսնակներին): Երբ ծառայության պարգև ենք ստանում, մենք ընդունում ենք Տիրոջից այդ պաշտոնի լիազորած իշխանությունը:

Այնուհետև Նա խոսեց արդարների մասին և ընդգրկեց նաև փոքրերին: Ես տեսել եմ անհավատների, որոնք օրհնվել են, քանի որ ինչ-որ բարի բան են արել նույնիսկ բոլորովին վերջերս դարձի եկած նորահավատների համար: Թեև այդ անհավատները չէին ծառայում Տիրոջը, նրանք հարգանք ցուցաբերեցին այդ մարդկանց Տիրոջը: Սրբերին ընդունելով և նրանց օրհնելով՝ մենք, վերջին հաշվով, ընդունում և օրհնում ենք Հորը: Աշակերտները, որոնց թվում են նաև փոքրերը, հպատակվում են եկեղեցու հինգ ծառայողական պարգևների իշխանությանը՝ Հիսուսի առաջնորդության ներքո: Այդ չփրկված մարդիկ ստացել էին Քրիստոսի մեջ մանուկների օրհնությունը, որովհետև փոքրագույնը Աստծո թագավորության մեջ ունի շատ ավելի մեծ հոգևոր իշխանություն, քան կորսվածները: Հիսուսի այս խոսքերից տեսնում ենք հաստատված իշխանության կարգը:

Հոգևոր իշխանությունն ընդունելու վարձատրությունը

Երկրորդ իրողությունը, որը փոխանցվում է մեզ այս խոսքերում, այն է, որ ընդունելով այդ ծառայողներին՝ որպես Աստծուց ուղարկված մարդկանց, մենք համապատասխան վարձատրութ-

յուն ենք ստանում: Դիտարկենք այս սկզբունքի մի օրինակ Հիսուսի ծառայությունից:

Մի քաղաքի բնակիչների համար հատկապես դժվար էր ընդունել Հիսուսից, թեև նրանք քարոզում էին Մեսիայի մասին և գիտեին Սուրբ գրքերից, որ եկել էր Նրա գալստյան ժամանակը: Հիսուսն ասաց նրանց. «Մի մարգարե անարգ չէ, բայց միայն իր հայրենիքի և իր ազգականների և իր տան մեջ: Եվ *չէր կարողանում* այնտեղ *ոչ մի* զորություն անել, բայց միայն մի քանի հիվանդի վրա ձեռք դրեց և բժշկեց» (Մարկ. 6.4,5):

Մենք ընդունում ենք որևէ մարդու՝ որպես Աստծուց ուղարկված, երբ պատվում ենք նրա դիրքը կամ պաշտոնը: Աստված ասաց ժողովրդին Մովսեսի միջոցով. «Քեզ պես մի մարգարեի վեր կկացնեմ նրանց համար իրենց եղբայրների միջից» (Երկր. Օր. 18.18): Բայց նրանք չպատվեցին Հիսուսին՝ որպես Հորից եկած Խոսնակի կամ Մեսիայի:

Ինչո՞ւ նրանք չընդունեցին Հիսուսին: Քանի որ Նա չեկավ այնպես, ինչպես նրանք ցանկանում էին: Այդ մարդկանց սպասումները շատ էին տարբերվում այն բանից, թե ինչպիսին էր Նա: Նրանք կարդացել էին Եսայու մարգարեության մեջ.

> «Որովհետև մեզ մի Մանուկ ծնվեց,
> մեզ մի Որդի տրվեց,
> և իշխանությունը կլինի Նրա ուսերի վրա...
> Նրա իշխանությանը և խաղաղությանը վերջ չի լինի:
> Նա կթագավորի Դավթի գահին
> և նրա թագավորության վրա» (9.6,7, NIV):

Նրանք սպասում էին նվաճող թագավորի, որը կազատեր իրենց Հռոմի հպատակությունից և կհաստատեր Իր թագավորությունը Երուսաղեմում: Բայց, փոխարենը, Նա եկավ որպես հյուսնի Որդի՝ ձկնորսների, նախկին մարմնավաճառների և հարկահավաքների ուղեկցությամբ: Նրանք ասացին միմյանց. «Մենք չենք ցանկանում և չենք սպասում այսպիսի Մեսիայի»:

Նույնպես ուշադրություն դարձրեք, որ Հիսուսը «չէր կարողանում» որևէ հրաշք գործել: Գրված չէ. «Նա չէր ցանկանում», ինչը կվերաբերեր Նրա կամքին: Գրված է. «Չէր կարողանում», ինչը

նշանակում է, որ ինչ-որ բան խոչընդոտում էր Նրան: Մտածեք այս մասին: Աստծո Որդին, Ով անսահման լցված էր Աստծո Հոգով, խոչընդոտի էր բախվել: Ինչո՞ւ: Պատասխանը երկակի է: Նա չեկավ այնպես, ինչպես նրանք ցանկանում էին. այդ պատճառով, նրանք չընդունեցին կամ չպատվեցին Նրան և չափազանց հասարակ վերաբերվեցին Նրան: Լսե՛ք նրանց խոսքերը.

> «[Նա] սկսեց ժողովարանի մեջ սովորեցնել: Եվ շատերը, լսելով, զարմանում էին և ասում. «*Սրան որտեղի՞ց է այս բաները, կամ՝ սա ի՞նչ իմաստություն է, որ տրված է սրան, որ այսպիսի զորություններ էլ են լինում սրա ձեռքով: Չէ՞ որ սա է հյուսնը՝ Մարիամի Որդին, Հակոբի, և Հովսեսի, և Հուդայի, և Սիմոնի եղբայրը, և չէ՞ որ դրա քույրերը այստեղ մեզ մոտ են»:* Եվ Նրա վրա գայթակղվում էին: Հիսուսն էլ նրանց ասաց. «Մի մարգարե անարգ չէ, բայց միայն իր հայրենիքի և իր ազգականների և իր տան մեջ»» (Մարկ. 6.2-4):

Որտե՞ղ է մարգարեն առանց պատվի: Շատ հաճախ՝ իր տանը և յուրայինների միջև: Դավիթն այսպիսի իրավիճակի բախվեց, երբ տուն եկավ՝ իր ընտանիքին օրհնելու համար: Նրա հաղթանակը տոնում էին փողոցներում, բայց նա անարգվեց իր հարկի տակ: Մեղքողը բաց թողեց այն օրհնությունը, որն Աստված նախորոշել էր նրա համար: Դավիթն իր տունն օրհնելու իշխանություն ուներ: Որքա՜ն ավելի Հիսուսը յուրայիններին օրհնելու իշխանություն ուներ: Թեև Նա սահմանափակ չէր օրհնելու Իր զորությամբ, Նա շատ քիչ բան կարողացավ անել նրանց համար (տե՛ս Բ Թագ. 6-րդ գլուխ):

Միայն նրանք, ում սրտերը քաղցած, սովորելու ունակ և խոնարհ էին Աստծո հանդեպ, կարող էին տեսնել Աստծո ձեռքը Հիսուսի վրա և ընդունել Նրանից: Նա այն Թուրն էր, որը բաժանեց Իր ժողովրդին՝ առանձնացնելով նրանց (որոնց սրտերը ճշմարտապես ձգտում էին Աստծուն), նրանցից, որոնք ընդամենը աստվածապաշտության կերպարանք ունեին, բայց կուրացած էին իրենց անհնազանդ սրտերի պատճառով: Ինչպես Սիմեոնն ասաց Մարիամին՝ Նրա մորը. «Այս մանկանը վիճակված է շատերի անկման ու վերելքի պատճառ դառնալ Իսրայելում և լինել նշան, որին հակառակ կխոսեն, որպեսզի շատ սրտերի մտքերը

հայտնվեն: Նաև մի թուր կխոցի քո անձը» (Ղուկ. 2.34,35, NIV):

Հովհաննես 1.11,12-ը պատկերում է այս երկու առանձին խմբերը. «Իրենների մեջ եկավ, և Իրենները Նրան չընդունեցին: Բայց որոնք որ Նրան ընդունեցին, իշխանություն տվեց նրանց Աստծո որդիներ լինելու»: Այս հատվածում մի հիմնարար ճշմարտություն կա, որը վերաբերում է բոլորիս: *Հաճախ Աստված ուղարկում է մեզ այն, ինչի կարիքը ունենք՝ այնպիսի փաթեթավորմամբ, որը չենք ցանկանում:* Դա ցույց է տալիս մեր սրտի իրական վիճակը՝ բացահայտելով՝ արդյո՞ք մենք հպատակվում ենք Նրա իշխանությանը, թե՞ ընդդիմանում ենք դրան: Հիսուսն ասաց. «Ո՛չ Ինձ գիտեք, և ո՛չ Իմ Հորը. եթե Ինձ գիտենայիք, Իմ Հորն էլ կգիտենայիք» (Հովհ. 8.19): Նրանք, ովքեր ճանաչում են Հորը, ճանաչում են Նրա իշխանությունը, որը գործում է Նրա կողմից ուղարկված մարդկանց կյանքում: Սա մի իրողություն է, որը կարիք չկա բացատրել, սովորեցնել կամ ապացուցել:

Այսպիսով պարզ է դառնում, թե ինչու որևէ ծառայող կարող է Աֆրիկա գնալ և ականատես լինել, որ կույր աչքերը բացվում են, անդամալույծները քայլում են և խուլերը լսում են, իսկ հետո Ամերիկա գալ և տեսնել միայն մի քանի գլխացավի և մեջքի թեթև ցավի բժշկություն: Ես կարող եմ անթիվ օրինակներ բերել: Աֆրիկայում ցանկացած ծառայող՝ թե՛ տղամարդ, թե՛ կին, ընդունվում է որպես Աստծուց ուղարկված մարդ՝ անկախ նրա արտաքին տեսքից կամ փաթեթավորումից: Քանի որ ծառայողը նման ընդունելություն և պատիվ է ստանում, թանկագին աֆրիկացիներն օրհնվում են Աստծո զորությամբ և ներկայությամբ: Ամերիկայում, եթե փաթեթավորումը ճշտորեն չի համապատասխանում սպասվածին, մարդիկ պատիվ չեն ցուցաբերում: Արդյունքն ուղիղ համեմատական է: Որ չափով ընդունեք և պատվեք ավետաբերին՝ որպես Աստծուց ուղարկված մարդու, այն չափով էլ կընդունեք Աստծուց՝ այդ մարդու միջոցով: Անպատվություն ցուցաբերեք, և դա էլ կստանաք: Մեծ պատիվ տվեք, և պատիվը կլինի ձեր բաժինը:

Կլինե՞ս իմ ընկերը

Երբ երիտասարդական ծառայության հովիվ էի, մի հետաքրքիր միջադեպ եմ հիշում տասնհինգամյա մի պատանու հետ, որին Թիմ կանվանեմ: Թիմը եղել էր այդ եկեղեցու նախկին երիտա-

սարդականի հովվի խմբում, մինչև որ ես միացա այդ ծառայությանը: Այդ հովիվը կառուցել էր երիտասարդական ծառայությունը զվարճանքների, քաղաքից դուրս ժամանցի և սպորտային միջոցառումների շուրջ: Երիտասարդների կյանքում խնդիրներ էին սկսվել, որոնց թվում էին անհնազանդությունն ընտանիքում, դեռահաս աղջիկների հղիություններ և այլ բարոյական խնդիրներ: Որոշ ժամանակ անց այդ եկեղեցու ավագ հովիվը հարկադրված էր հեռացնել նրան ծառայությունից, ինչից հետո նա այդ եկեղեցի հրավիրեց ինձ: Նախկին երիտասարդականի հովիվն իր եկեղեցին հիմնեց այդ եկեղեցուց մի քանի կիլոմետր հեռու՝ երիտասարդների մի փոքր խմբի հետ: Թիմն այն պատանիների թվում էր, որոնք չհեռացան նրա հետ:

Թեև երիտասարդների մեծ մասը մնացել էր, ես պետք է նոր հիմք դնեի: Տերը կարգադրեց ինձ տրամադրել առաջին վեց ամիսները միայն քարոզելուն, աղոթելուն և երկրպագելուն: Այդ ամիսներին ես ընդհանրապես ոչ մի միջոցառում չծրագրեցի: Ավելորդ է ասելը, որ ես այն փաթեթավորումն էի, որը շատերը չէին սպասում: Արդյունքում Տիրոջ թուրն անցավ այդ ծառայության միջով: Ոմանք հեռացան, մի քանիսը մնացին՝ հետաքրքրասիրությունից ելնելով, իսկ մյուսները խանդավառությամբ արձագանքեցին. նրանցից շատերն այսօր ծառայողներ են:

Ես մոտավորապես չորս ամիս էր՝ երիտասարդականի հովիվ էի, և մի երեկո՝ ծառայությունից հետո, զրուցեցի Թիմի հետ: Նա անկեղծորեն հարցրեց.

- Հովիվ Ջո՛ն, դու կլինե՞ս իմ ընկերը: Իմ նախկին երիտասարդականի հովիվն իմ ընկերն էր:

Ես չէի համապատասխանում նրա ցանկալի փաթեթավորմանը:

Ես թեթևորեն չվերաբերվեցի նրա հարցին և ներքուստ դիմեցի Տիրոջը՝ հասկանալու համար, թե ինչ պատասխանեմ նրան: Եվ շատ արագ ստացա պատասխանը՝ հարցի տեսքով.

- Թի՛մ, Հիսուսն ասաց. «Ով որ մարգարեի է ընդունում՝ մարգարեի անունով, նա մարգարեի վարձք կառնի» (Մատթ. 10.41): Սա վերաբերում է նաև երիտասարդականի հովվին: Եթե ընդունես հովվին՝ հովվի անունով, դու հովվի վարձատրություն կստանաս:

Ես շարունակեցի.

- Թիմ, դու շատ ընկերներ ունես, այնպես չէ՞:

- Այո՛,- պատասխանեց նա:

- Բայց դու միայն մեկ երիտասարդականի հովվիվ ունես, ճի՞շտ է:

- Այո՛,- պատասխանեց նա:

- Ինչ ես ուզում,- հարցրի ես:- Ընկերո՞ջ վարձատրություն, թե՞ երիտասարդականի հովվի վարձատրություն: Քանի որ ինչ կերպով ընդունես ինձ, այն կերպով էլ կվարձատրվես Աստծուց:

Այնպիսի տպավորություն էր, որ նրա ներսում լույս վառվեց: Ես տեսա նրա աչքերի փայլը՝ հայտնության շնորհիվ, և նա արագորեն պատասխանեց.

- Ես երիտասարդականի հովվի վարձատրություն եմ ուզում: Ես հասկացա, թե ինչ նկատի ունես:

Դրանից հետո նա լրջորեն ներգրավվեց ծառայության մեջ: Մի քանի տարի անց նրա ընտանիքը այլ քաղաք տեղափոխվեց, բայց նա հանդիպում էր ինձ ամեն անգամ, երբ նրա քաղաքում էի լինում:

Իմ փորձառությունը

Ես մի ամբողջ գիրք եմ գրել միայն այս թեմայով. այն կոչվում է *«Պատվի վարձքը»:* Իմ սիրտը ցավում է, երբ տեսնում եմ, որ մարդիկ չեն կարողանում ընդունել Աստծուց, քանի որ պատվով չեն ընդունում Նրա ծառաներին: Որպես ծառայող, ես անթիվ անգամներ ականատես եմ եղել այս երևույթին: Այն մարդիկ, որոնց ամենից դժվար է հասնելը, Աստծո ծառաներին սովորականի պես վերաբերվողներն են: Նման մարդկանց հաճախ կարելի է հանդիպել Ամերիկայի Միացյալ Նահանգների եկեղեցիներում և քրիստոնեական ուսումնական հաստատություններում: Նրանք արդեն թմրության աստիճան հագեցած են իրենց այցելող բազմաթիվ ծառայություններից բաղկացած հյուրասիրության սեղանից, և ես ընդամենը հերթական ճաշատեսակն եմ նրանց տրամադրության տակ եղած ուտեստների երկար շարքում:

Ամենայն հավանականությամբ, այն մարդիկ, որոնց ամենից հեշտ է քարոզելը, բանակում ծառայող զինվորականներն են,

որոնք պատկերացում ունեն իշխանության մասին: Հաջորդը բանտարկյալներն են կամ զարգացող երկրներում ապրող մարդիկ, քանի որ նրանց կյանքում հուսահատություն և քաղց կա: Աստված խոսեց Եզեկիելի հետ՝ ասելով մոտավորապես նույնը.

> «Դու չես ուղարկվում դժվարիմաց խոսքով և ծանրալեզու ժողովրդի մոտ, այլ՝ Իսրայելի տան մոտ... Անկասկած, եթե Ես ուղարկեի քեզ նրանց մոտ, նրանք կլսեին քեզ: Բայց Իսրայելի տունը չի կամենում լսել քեզ, քանի որ նրանք չեն կամենում լսել Ինձ, որովհետև Իսրայելի ամբողջ տունը խստացած և համառ է» (Եզեկ. 3.5-7, NIV):

Իսրայելի համար Եզեկիելը հերթական մարգարեն էր, միայն թե նա ավելի խիստ էր, քան մյուսները, որոնք քարոզում էին այն, ինչ նրանք ուզում էին լսել: Այնպես որ, նրանք չընդունեցին նրան:

Մեկ օր Աստված շփոթեցրեց ինձ՝ ասելով հետևյալը. *«Ես այնպիսի վայրեր եմ ուղարկելու քեզ, որտեղ քեզ չեն ընդունելու»:*

Ես ասացի. «Սպասի՛ր: Դու ուղարկելու ես ինձ այնպիսի վայրեր, որտեղ մարդիկ չեն ընդունելու այն, ինչ ես պետք է ասեմ, և մինչև ինձ ուղարկելը Դու արդեն իմանալու ես այդ մասին: Ինչո՞ւ»:

Տերը պատասխանեց. *«Նրանք երբեք չեն կարողանա ասել, որ Ես հնարավորություն չտվեցի իրենց»:*

Ես գնացել եմ նման վայրեր և մտածել եմ. *«Ինչո՞ւ են նրանք հրավիրել ինձ: Քանի որ այնպես են վարվում, ասես չեն ուզում, որ այստեղ լինեմ»:* Այլ դեպքերում ես այնպիսի վայրեր եմ գնացել, որտեղ, սկսած օդանավակայանում ինձ դիմավորելուց՝ մինչև այն պահը, երբ կրկին օդանավակայան են ուղեկցել, ինձ ոգեշնչմամբ են ընդունել, սիրալիրությամբ և պատվով են վերաբերվել՝ ծառայություններից և՛ առաջ, և՛ հետո: Իմ հյուրանոցային համարում ինձ գեղեցիկ զամբյուղ էր սպասում՝ լի մրգերով և թեթև խորտիկներով, և ինձ շարունակ հարցնում էին. «Դուք ինչ-որ բանի կարիք ունե՞ք»: Ես հաճախ մաշված սկավառակի պես էի զգում ինձ, քանի որ շարունակ ասում էի. «Ամեն ինչ լավ է: Ամեն ինչ լավ է»: Ետ նայելով՝ տեսնում եմ, որ մեծագույն վկայությունները մարդկանց կյանքերում կամ եկեղեցիներում տեղի ունեցած փոփոխությունների մասին եղել են հենց այդ վայրերից: Սկզբում ես անհարմա-

ռավետ էի զգում, երբ ինձ այդքան լավ էին վերաբերվում, կամ՝ երբ մարդիկ ծափահարում էին՝ ինձ ներկայացնելու ժամանակ: Ես մտածում էի. *«Ես ձեզնից յուրաքանչյուրի պես եմ: Այդպես մի՛ արեք»:* Բայց շուտով հասկացա, որ այդ ամենը ինձ չէր ուղղված:

Աստիճանաբար Աստված ցույց տվեց. *«Թո՛ւյլ տուր նրանց պատվել քեզ՝ հանուն իրենց, ոչ թե հանուն քեզ»:* Ես սկսեցի հեշտորեն ընդունել դա, երբ հասկացա, որ նրանք պատվում էին ոչ թե ինձ, այլ Աստծո պարգևն իմ կյանքում: Նրանց դրական արձագանքը բացում էր նրանց սրտերը՝ ընդունելու Հիսուսից այն, ինչ Նա ցանկանում էր տալ նրանց իմ միջոցով՝ որպես Իր անոթի: Հպարտանալու փոխարեն, իմ ներսում խոնարհության շարունակ խորացող զգացում ձևավորվեց: Ես գիտեի, որ դա Նրա ընտրությունն էր, ոչ թե իմ կարողությունը: Ես ուղղորդում էի այդ մարդկանց պատիվը Նրան՝ անմիջապես գիտակցելով իմ կախվածությունը Նրանից: Այն մարդիկ, որոնք պատիվ էին տալիս, հեշտորեն էին ընդունում. այն մարդկանց, ովքեր այդպես չէին վարվում, ավելի դժվար էր հասնելը:

Կրկնակի պատիվ

Պողոսը կարգադրում է. «Լավ վերակացություն անող երեցները թող երկպատիկ պատվի արժանի լինեն, մանավանդ նրանք, որ խոսքով և վարդապետությամբ են աշխատում» (Ա Տիմոթ. 5.17): Պողոսն ասաց «կրկնակի պատիվ»: Այլ կերպ ասած, երկու անգամ ավելի, քան այն պատիվը, որ դուք կտաք աշխարհիկ իշխանություն ունեցող որևէ անձնավորության:

Եթե կարդաք այս խոսքը համատեքստով, այն նաև նկատի ունի ծառայողներին ֆինանսապես պատիվ ցուցաբերելը: Նա շարունակում է. «Մշակն արժանի է իր վարձքին» (խոսք 18): «Ընդլայնված Աստվածաշունչը» ոչ երկիմաստ կերպով ի հայտ է բերում այս սկզբունքը. «Թող այն երեցները, որոնք լավ են կատարում իրենց պաշտոնի պարտականությունները, համարվեն կրկնակի արժանի պատվին [և պատշաճ ֆինանսական աջակցության], հատկապես նրանք, ովքեր հավատարմորեն գործում են քարոզելու և սովորեցնելու մեջ: Որովհետև Սուրբ գիրքն ասում է... Մշակն արժանի է իր վարձքին» (Ա Տիմոթ. 5.17, AMP): «Նոր

կենդանի թարգմանության» մեջ գրված է. «Երեցները, որոնք լավ են կատարում իրենց աշխատանքը, պետք է հարգանք ստանան և լավ վճարվեն»:

Այս սկզբունքն անսխալաբար գործում է: Եթե եկեղեցին հոգում է իրենց ծառայող հովիվների և առաջնորդների մասին, գործարարները և եկեղեցու մյուս անդամները օրհնվում են: Նրանք վայելում են երկնային տնտեսությունը: Բայց ես պարզել եմ, որ եթե նրանք ժլատ են, որպես կանոն, նրանք բողոքում են գողության, պակասության կամ այս աշխարհի տնտեսության վատ պայմաններից:

Ես հասկանում եմ, որ այս ճշմարտությունը չարաշահվել է, հատկապես՝ Արևմուտքի ծառայողների կողմից: Ես տրտմում եմ, երբ ծառայողները մշտապես փողի և նյութականի մասին են խոսում: Թեև նրանց խոսքերի մեջ որոշ չափով ճշմարտություն կա, նրանք կորցրել են այն, ինչ Աստծո սրտում է, և ընտրել են վարձկանների ճանապարհը: Այդպես էին ապրում փարիսեցիները: Նրանք դրդել են շատերին ետ կանգնել պատվի աստվածաշնչյան սկզբունքներից, քանի որ մարդիկ տեսել են նրանց չարաշահումները: Այնուամենայնիվ, այդ սկզբունքները թողնելը վնաս է հասցնում նրանց խնամքի ներքո գտնվող մարդկանց, որոնք կարիք ունեն, որ այս ճշմարտությունը ողջամիտ կերպով ներկայացվի իրենց:

Ես տեսա այս վնասը շրջիկ քարոզիչ դառնալու առաջին տարում՝ 1990 թվականին: Ես հյուրընկալվել էի մի փոքր եկեղեցում, որի անդամների թիվը հարյուրից մի քիչ ավելի էր: Հավաքույթները լավ էին ընթանում, և եկեղեցու անդամները հրաշալի մարդիկ էին: Մենք այդ հովվի և նրա կնոջ տանն էինք ապրում և հասկացանք, որ նրանց ապրուստը սուղ էր: Այդ հովվի կինը լրիվ դրույքով ուղեկցորդուհի էր աշխատում մի ավիաընկերությունում և չէր կարողանում ծառայել մարդկանց այնպես, ինչպես ցանկանում էր: Նա չէր ցանկանում թողնել այդ աշխատանքը և եկեղեցուց աշխատավարձ ստանալ, քանի որ, նրա կարծիքով, եկեղեցու համար դա չափազանց ծանր կլիներ: Ես վաղուց էի ճանաչում նրանց: Այդ հովիվը և ես նախկինում աշխատում էինք այն եկեղեցիներից մեկում, որն արդեն հիշատակել եմ: Մեր հովիվը չափազանց շատ էր սովորեցնում ֆինանսների և զոհաբերութ-

յունների մասին: Երկուսս էլ զգուշավոր էինք և չէինք ցանկանում կրկնել դա, և առանց հասկանալու՝ հակառակ ծայրահեղության մեջ էինք հայտնվել: Այնուամենայնիվ, Աստված սովորեցնում էր ինձ, որ երկու ծայրահեղություններն էլ օգտակար չէին: Նա ցանկանում էր, որ ես ավելի հավասարակշռված դառնայի:

Հավաքույթները սկսվեցին կիրակի առավոտյան և շարունակվեցին մինչև չորեքշաբթի երեկոյան: Առաջին երեք հավաքույթները լավ անցան, բայց թվում էր՝ ինչ-որ բան ետ էր պահում այդ եկեղեցուն: Երեքշաբթի ամբողջ օրվա ընթացքում Տերը խոսում էր իմ սրտին այդ հովվի մասին և այն մասին, թե ինչպես էր այդ եկեղեցին տնօրինում ֆինանսները: Ես չէի կարողանում փարատել այդ մտքերը, սակայն չգիտեի, թե ինչ կարող էի անել դրա վերաբերյալ:

Անմիջապես հավաքույթից առաջ այդ հովիվն ասաց ինձ, որ ուզում է՝ ինքս զոհաբերություն հավաքեմ մեր ծառայության համար: Նա բառացիորեն ասաց հետևյալը, երբ ամբիոնի մոտ հրավիրեց ինձ. «Ես ազատություն եմ տալիս քեզ զոհաբերության հարցում»:

Ես հիացած էի: Հասկացա, որ Աստված էր բացել այդ դուռը, որպեսզի կարողանայի անել այն, ինչ Նա ցույց էր տվել ինձ: Այդ երեկո ես քարոզեցի այն, ինչի մասին գրում եմ այս ենթավերնագրում: Մենք կարդացինք այստեղ մեջբերված հատվածը Տիմոթեոսի Առաջին թղթից, և ես ասացի, որ նրանք պատշաճ ֆինանսական հոգատարություն չէին ցուցաբերում իրենց հովվի և նրա կնոջ հանդեպ: Ես պարզ ասացի եկեղեցուն, որ ժամանակն էր, որ իրենց հովվի կինը դադարեր երեք կամ չորս օրը մեկ թռիչքների մասնակցել՝ իր ընտանիքի ծախսերը հոգալու համար: Ես կիսվեցի այն մասին, որ իրենց հովիվն ազատություն էր տվել ինձ զոհաբերության հարցում, բայց ասացի, որ մենք զոհաբերություն չենք հավաքելու մեր ծառայության համար: Մենք ցանկանում ենք, որ այդ օրվա զոհաբերությունը տրվի իրենց հովվին և նրա կնոջը: Մարդիկ իսկապես ոգեշնչվեցին իրենց հովվին օրհնելու այդ հնարավորությունից և արձագանքեցին դրան: Այդ երեկո հավաքված զոհաբերությունն այդ եկեղեցում երբևէ հավաքված ամենամեծ զոհաբերության եռապատիկն էր: Այդ հովվի կինը լաց էր լինում, իսկ նա ապշած էր:

Դուք կզարմանայիք, եթե ես գրեի բոլոր այն ճեղքումների մասին, որոնք տեղի ունեցան հաջորդ քսանչորս ժամում: Մի զույգ տասը հազար դոլարի չեկ ստացավ հաջորդ օրը. մեկ այլ զույգ մի ծրար գտավ իրենց դռան առջևից, որում տասնհինգ հազար դոլար էր: Դա միայն սկիզբն էր: Մինչև հաջորդ կիրակի առավոտյան մարդիկ այնքան շատ և զարմանալի վկայություններ ունեին, որ այդ հովիվը չհասցրեց քարոզել: Ամբողջ ծառայությունը բաղկացած էր վկայություններից այն մասին, թե ինչ ֆինանսական հրաշքներ էր Աստված գործել նրանց ձեռնարկություններում և անձնական կյանքում: Հետագայում այդ հովիվն ուղարկեց ինձ այդ չծրագրված ծառայության ձայնագրությունը:

Այդ եկեղեցին մեծ աճ ունեցավ հաջորդ երկու տարում: Նրանք նոր շենք գնեցին՝ ավագ դպրոցի մի ամբողջ կրթական համալիր, վերանորոգեցին այն, և եկեղեցու անդամների թիվն արագորեն աճեց: Մինչ այդ նրանք մի քանի տարի շարունակ գրեթե հարյուր անդամ ունեին: Այս և անթիվ այլ օրինակներ սովորեցրին ինձ, որ Աստված ցանկանում է, որ պատվենք մեր միջև գտնվող մարդկանց, որոնք ծառայում են մեզ:

Այժմ՝ գրեթե երեսուն տարի ճանապարհորդելուց հետո, կարող եմ ասել, որ երբեք բացառություն չեմ տեսել այս աստվածաշնչյան ճշմարտությունից: Ես բազմաթիվ եկեղեցիներ եմ այցելել, որոնք չափավոր են վճարում իրենց հովիվներին: Նրանք այսպես են մտածում. *«Մենք կարող ենք ավելին անել միսիոներական գործունեության և ավետարանչության համար, եթե լավ չվճարենք մեր հովիվներին»:* Այս խմբի եկեղեցիները տարեկան հարյուր հազարավոր դոլարներ են նվիրաբերում միսիոներական գործունեությանը:

Հյուրընկալվել եմ նաև բազմաթիվ եկեղեցիներում, որոնք լավ են վճարում իրենց հովիվներին: Այս խմբի եկեղեցիները տարեկան միլիոնավոր դոլարներ են նվիրաբերում ավետարանչական և միսիոներական գործունեությանը: Այսպիսով, հռետորական հարց է ծագում. ո՞վ է ավելին անում ավետարանչական և միսիոներական գործունեության համար: Պատասխանը պարզ է՝ այն եկեղեցիները, որոնք լավ են վճարում իրենց հովիվներին: Ինչո՞ւ է այդպես: Պատճառն այն է, որ այս խմբի եկեղեցիները հնազանդվում են Աստծո Խոսքին, մինչդեռ մյուս խմբի եկեղեցիները

համոզված են, որ իրենց իմաստությունն Աստծո իմաստությունից ավելին է:

Ես եղել եմ զարգացող երկրներում և գրեթե լաց եմ եղել այն պատճառով, թե ինչպես էին տեղի եկեղեցիները վերաբերվում ինձ: Նրանցից ստացած զոհաբերությունները կարող են փոքր համարվել՝ ըստ ամերիկյան չափանիշների, քանի որ ես ստացել եմ շատ ավելի մեծ զոհաբերություններ Ամերիկայում գտնվող որոշ անտարբեր եկեղեցիներից: Այնուամենայնիվ, ամենից շատ ինձ հպվում էր այդ երախտապարտ մարդկանց ընծայի հիմքում եղած սերը: Նրանց արարքը չէր տարբերվում այն այրի կնոջ արարքից, որը, Հիսուսի խոսքերով, տվեց ավելին, քան մյուսները, թեև նրա նվիրատվության չափն ամենափոքրն էր: Նա պատվեց Աստծուն իր ընծայով: Այդ թանկ սրբերը պատվում և արժևորում են այն ծառայողներին, որոնց Աստված ուղարկում է: Թույլ տվեք, որ սա թափանցի ձեր սիրտը: Ձգտե՛ք պատվել ձեր միջև գտնվող տղամարդկանց և կանանց, որոնք ծառայում են ձեզ Աստծո Խոսքով:

Առաջնորդների կողմից կարգվածները

Կրկի՛ն կարդանք Հիսուսի խոսքերը. «Ճշմարի՛տ, ճշմարի՛տ ասում եմ ձեզ. ով որ ընդունի նրան, որ Ես կուղարկեմ, Ինձ է ընդունում» (Հովհ. 13.20): Մատթեոսի Ավետարանում Հիսուսը բացատրում է իշխանության կարգը. Հայրն ուղարկեց Հիսուսին, և Հիսուսն ուղարկում է ծառայության հինգ պարգևներին: Ընդունելով Նրա կողմից կարգված ծառայողներին՝ մենք ընդունում ենք Նրան, և ընդունելով Նրան, մենք ընդունում ենք Հորը:

Իշխանության կարգը չի ավարտվում ծառայության հինգ պարգևներով: Այն շարունակվում է՝ այն մարդկանցով, որոնք կարգված են այդ ծառայողների կողմից: Երբեք չեմ մոռանա, թե մեկ անգամ մի եկեղեցու կիրակնօրյա հավաքույթի ժամանակ ինչ ասացի: Այդ եկեղեցին լավ հովիվ ուներ: Նա կիրառում էր իր իշխանությունը՝ մարդկանց պաշտպանելու համար, և մարդիկ հարգում էին նրան: Այնուամենայնիվ, այդ հարգանքը չէր տարածվում եկեղեցու մյուս աշխատողների և մշակների վրա: Ես նկատեցի եկեղեցու անդամների, որոնք չէին պատվում նրա կողմից կարգված մարդկանց, օրինակ՝ այն ծառայողներին, որոնք հետևում

էին կարգուկանոնին եկեղեցու ներսում և ավտոկայանատեղիում, ողջունում էին այցելուներին, ինչպես նաև վարչական գծով օգնականներին և հովվի օգնականներին:

Այդ հավաքույթին ես մարգարեական օծությամբ էի ծառայում: Երբ այդ կերպով եմ ծառայում, շատ հաճախ ասում եմ որոշ բաներ և գիտակցում եմ իմ ասածը միայն դա լսելու պահին: Ես մատնացույց արեցի այդ ծառայողներից մեկին և ասացի. «Ինչպես որ դուք վերաբերվում եք այս մարդուն, այնպես էլ վերաբերվում եք ձեր հովվին: Ձեր վերաբերմունքը նրա հանդեպ ցույց է տալիս ձեր վերաբերմունքը Հիսուսի հանդեպ»:

Դուք պետք է տեսնեիք այդ եկեղեցու անդամներից մի քանիսի աչքերը: Հայտնության լույսը տարածվեց՝ բացահայտելով նրանց վերաբերմունքը: Այդ եկեղեցին առողջ էր, և մարդիկ ուրախությամբ ընդունեցին այդ ուղղումը: Այդ խոսքերը ծառայեցին նաև ինձ: Երբ ծառայում եմ որևէ եկեղեցում կամ այցելում եմ այն եկեղեցու հավաքույթներին, որի անդամն եմ հանդիսանում, ես պատիվ եմ տալիս ծառայության մեջ ներգրավված մարդկանց: Նրանք կարգված են հովվի կողմից, որը կարգված է Հիսուսից, որը կարգված է Հորից: Մենք պետք է տեսնենք Աստծո իշխանությունը այն մարդկանց կյանքերում, որոնց մենք հանդիպում ենք:

Այս սկզբունքի գերազանց աստվածաշնչյան օրինակ է Նեեմանի պատմությունը, որն ասորական բանակի հրամանատար էր: Նա բորոտ էր և բուժվելու ոչ մի հույս չուներ: Նրա ծառաներից մեկը՝ մի հրեա աղջիկ, ասաց նրան, որ Իսրայելում մի մարգարե կար, որը կարող էր բժշկել նրան՝ Իսրայելի Տեր Աստծո զորությամբ:

Ասորեստանի թագավորը թույլտվություն տվեց Նեեմանին և ուղարկեց Իսրայելի թագավորի մոտ, որն, իր հերթին, ուղարկեց նրան Եղիսեի տուն. «Եվ Նեեմանը գնաց իր ձիերով ու կառքով և կանգնեց Եղիսեի տան դռան մոտ: Եվ Եղիսեն պատգամավոր ուղարկեց նրա մոտ՝ ասելով. «Գնա՛ և յոթ անգամ լվացվի՛ր Հորդանանում, և մարմինդ քեզ մոտ կդառնա, և կմաքրվես»» (Դ Թագ. 5.9,10):

Լսելով դա՝ Նեեմանը բարկացած ասաց. «Ահա ես կարծում էի, թե անպատճառ ինձ մոտ դուրս կգա և կկանգնի ու իր Տեր Աստծո անունը կկանչի և ձեռքը կդնի այն տեղի վրա և այն ժամանակ բորոտությունը կբժշկի» (խոսք 11):

Իր սխալ սպասման պատճառով Նեեմանը քիչ էր մնում մերժեր այն, ինչ Աստված կամենում էր շնորհել իրեն: Նա ուրախությամբ կընդուներ Եղիսեին, եթե նա դուրս գար իր մոտ, բայց ոչ՝ հասարակ ծառայի կամ պատգամավորի: Չէ՞ որ Նեեմանը կարևոր մարդ էր: Նա վիրավորվեց՝ անմիջապես Եղիսեի հետ չխոսելու պատճառով: Այնուամենայնիվ, որպես հրամանատար, նա պետք է հասկանար լիազորած իշխանության սկզբունքը: Բարի լուրն այն է, որ նրա ծառան տարհամոզեց նրան: Նեեմանը գնաց Հորդանան գետը, յոթ անգամ լվացվեց և կատարելապես առողջացավ: Տեղի ունեցավ ճիշտ այն, ինչ ասաց Եղիսեի պատգամավոր-ծառան: Չէ՞ որ նա Աստծո մարդու իշխանության ներքո էր:

Ես տրտմում եմ՝ լսելով այնպիսի եկեղեցիների մասին, որոնց անդամների մի մասը չի մասնակցում հավաքույթներին ամեն անգամ, երբ իրենց հովիվը եկեղեցում չէ: Այդ մարդիկ ցույց են տալիս, որ չեն հասկանում ճշմարիտ իշխանությունը: Եթե մարդկանց սրտերը ճիշտ դիրքում լինեն, նրանք նույն կերպով կընդունեն իրենց հովվի օգնականից կամ որևէ շրջիկ ծառայողից, քանի որ իրենց հովիվն է կարգել նրանցից յուրաքանչյուրին: Այդ դեպքում իրենց հովիվը Հիսուսի պես է վարվել: Եթե մենք հասկանանք Աստծո թագավորության իշխանությունը, կգիտակցենք, որ դրանում չկա անհատների մրցակցություն: Այս իշխանությունը բխում է Հիսուսից և շնորհվում է մարդուն:

Որպես հավատացյալներ՝ մենք պետք է պատվենք քաղաքացիական առաջնորդներին, գործատուներին, ուսուցիչներին և այլ կարգված մարդկանց: Մենք պետք է պատվենք նրանց, ովքեր իշխանություն ունեն ընտանիքում, և եթե անենք դա, մեզ վարձատրություն է խոստացված: Եվ վերջինը, եկեք կրկնակի պատիվ տանք եկեղեցու ծառայողներին, հատկապես՝ ովքեր ծառայում են մեզ վարդապետությամբ և Աստծո Խոսքով:

ԳԼՈՒԽ 11

ՀՆԱԶԱՆԴՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՊԱՏԱԿՈՒԹՅՈՒՆ

Մենք կարող ենք հնազանդ լինել, սակայն հպատակված չլինել:

Հպատակությունը, ամենայն հավանականությամբ, ամենաշատ թյուրըմբռնումներն է առաջացնում հավատացյալների միջև: Հաջորդ երեք գլուխներում կանդրադառնանք դժվարին հարցերի: Վերջին երեսունհինգ տարում, երբ սովորեցրել եմ ծածկոցի տակ լինելու մասին, ես շարունակ այսպիսի հարցեր եմ լսել.

- Արդյո՞ք հնազանդությունն անպայմանական է:
- Ի՞նչ անեմ, եթե համաձայն չեմ իմ առաջնորդի որոշումներին:
- Ի՞նչ անել, եթե առաջնորդը սխալ որոշումներ է կայացնում:
- Ի՞նչ անել, եթե առաջնորդը հանձնարարում է սխալ վարվել:
- Ինչպե՞ս որոշել սահմանը:

Սրանք գերազանց հարցեր են, որոնք պետք է պատասխանված լինեն, եթե պատրաստվում ենք վստահությամբ հպատակվել իշխանությանը: Որպես սկիզբ, կարդանք Եբրայեցիների թղթից.

«Հնազանդվե՛ք նրանց, ովքեր իշխանություն ունեն ձեզ վրա, և հպատակվե՛ք, որովհետև նրանք հսկում են ձեր անձերը՝ որպես մարդիկ, որոնք պետք է հաշիվ տան: Թույլ տվեք նրանց անել դա ուրախությամբ, և ոչ թե տրտմությամբ, որովհետև դա անօգուտ կլինի ձեզ համար» (Եբր. 13.17, NKJV, շեղագիրը հեղինակինն է):

Հեղինակը հստակորեն հորդորում է երկու բան անել. (1) հնազանդվել մեզ վրա իշխանություն ունեցողներին և (2) հպատակվել մեզ վրա իշխանություն ունեցողներին: Սրանք տարբեր ցուցումներ են, և այստեղ է, որ շատերը շփոթվում են: Մենք կարող ենք հնազանդ լինել, սակայն հպատակված չլինել: Այս պնդումը բացատրելու համար, թույլ տվեք մի օրինակ բերել իմ կյանքից:

Ես կերակուր չեմ ստանում

Ինչպես նշեցի նախորդ գլուխներից մեկում, երբ քսանն անց էի, ես աշխատում էի Միացյալ Նահանգների հարավում գտնվող մի խոշոր եկեղեցում՝ ինժեներական ոլորտում ունեցած կարճատև կարիերայից հետո: Ես չորս ու կես տարի ծառայեցի այդտեղ՝ որպես հովվի անձնական օգնական: Ես օգնում էի մի հովվի և նրա կնոջը անձնական գործերում և հոգում էի նրանց երեխաների մասին:

Դա հրաշալի աշխատանք էր՝ սովորելու համար, և առաջին տարում հաճախ էի զգացված լինում այն պատճառով, որ Աստված թույլ էր տվել ինձ ծառայել այդ դիրքում Իր թագավորության մեջ: Հիշում եմ, որ մտածում էի. *«Ես ինքս պետք է վճարեմ Աստծուն այն բանի համար, որ Նա թույլ է տվել ինձ այս պաշտոնում լինել»:* Ես հստակորեն հիշում եմ, որ մեկ անգամ, երբ մթերք էի գնում նրանց ընտանիքի համար, ես նստեցի հանրախանութի ավտոկայանատեղիում և պարզապես լաց էի լինում: Մեր եկեղեցին ավելի քան ութ հազար անդամ ուներ: Ինչո՞ւ էի ես ստացել այս մեծ արտոնությունը: Այդ մեղրամսի շրջանը տևեց գրեթե մեկ տարի, մինչև որ մարեց՝ սկզբում աստիճանաբար, իսկ հետո սրընթաց անկման վերածվելով:

Որքան ավելի էի մոտենում, այնքան ավելի շատ թերություններ էի տեսնում: Իմ աշխատանքի նոր լինելը և իմ ոգեշնչումն

այլևս չէին ծառայում որպես քող: Ինձ համար դժվար էր անտեսել որոշ բաներ, որոնք նկատում էի: Շատ չանցած, այդ ամենը սկսեց ճնշել ինձ: Հաճախ համաձայն չէի այն բանին, թե ինչպես էր ղեկավարվում եկեղեցու աշխատանքը, ինչպես էին լուծվում խնդիրները և ինչպես էին կայացվում որոշումները:

Ես լսում էի որոշ դիտողություններ, որոնք ոչնչով չէին տարբերվում ամերիկյան խոշոր ընկերություններում հնչող սուր նկատողություններից: Եթե դրանք ուղղված էին եկեղեցու աշխատողներին, ես գիտեի, որ ժամանակի հարց էր, մինչև որ նրանք կհեռացվեին աշխատանքից կամ հարկադրված կլինեին անձամբ հեռանալ: Չափազանց հաճախ նրանք փոխարինվում էին այնպիսի մարդկանցով, որոնց ես շողոքորթող և խաբեբա էի համարում: Այդ նորեկներից շատերը, թվում էր, ճանապարհ էին հարթում իրենց համար դեպի ղեկավարող կամ այլ կարևոր պաշտոններ: Այնպիսի տպավորություն էր, որ իմ հովվին ավելի հաճելի էր հաղորդակցվել նրանց հետ, քան աստվածապաշտ մարդկանց հետ: Նա ծիծաղում էր նրանց անպատշաճ կատակների վրա, սակայն անտարբեր և ցրված էր թվում անկեղծ հավատացյալների հետ շփվելիս: Ես ապշած էի նրա վարքից, և շուտով քննադատորեն տրամադրվեցի:

Կային նաև այլ անհամապատասխանություններ, և ես կենտրոնացա այդ ամենի վրա: Այդ եկեղեցին միջազգային ծառայություն էր իրականացնում, և այն շատ հայտնի էր Միացյալ Նահանգներում: Դրա բոլոր ծրագրերը պահանջում էին բազմաթիվ մարդկային ջանքեր և ֆինանսներ՝ ամբողջ աշխատանքն ապահովելու համար: Մենք ավելի քան 250 աշխատող ունեինք, և եկեղեցուն պատկանող ամեն ինչ գերժամանակակից էր: Եկեղեցին խորհրդատուների էր ներգրավում, որոնք օգնում էին գումարներ հանգանակել ներկա ծրագրերի և ապագա գաղափարների համար: Ես պատասխանատու էի նրանց հյուրընկալելու համար: Երբ ես միայն նրանց հետ էի, լսում էի, թե ինչպես էին քննարկում իրենց հանդիպումներն իմ հովվի հետ: Ես հարցնում էի մտքումս. *«Սա շահույթ հետապնդող ձեռնարկությո՞ւն է, թե՞ ծառայություն»:* Որքան ավելի էի լսում նրանց, այնքան ավելի էի մտածում. *«Այս ամենը խաբուսիկ է: Այս մարդիկ իսկապե՞ս հոգում են մարդկանց մասին, թե՞ աշխատում են միայն փողի համար: Ինչո՞ւ է իմ հովիվն*

այսպիսի մարդկանցով շրջապատում իրեն»:

Ամբողջ այդ ընթացքում ես շրջապատված էի ընկերներով, որոնք ինձ պես քննադատորեն էին տրամադրված: Ես լավ եմ հիշում մի դեպք, երբ կինս և ես ընթրում էինք մեր աշխատակիցներից մեկի և նրա կնոջ հետ՝ նրանց տանը: Ես և այդ աշխատակիցը հաշվետու էինք անմիջապես հովվին: Մենք խոսում էինք այն մասին, որ այլևս ոչինչ չէինք ստանում մեր եկեղեցու ուղերձներից: Հիշում եմ, որ ասացի. «Վերջին վեց ամսում ես ոչինչ չեմ ստացել մեր եկեղեցու ամբիոնից ինչող ուսուցումներից»: Բոլորս համաձայնեցինք՝ բացի իմ կնոջից, որը լուռ էր:

Նրանք շարունակ կրկնում էին. «Մենք այլևս *կերակուր չենք ստանում»:* Մենք համաձայնեցինք, որ մեր ժամանակն այդ եկեղեցում ավարտին էր մոտենում: Մեզ թվում էր, թե լուրջ հոգևոր մոտեցում էինք ցուցաբերում այդ հարցին, և համոզված էինք, որ Աստված պատրաստվում էր ուղարկել մեզ՝ կատարելու այն ծառայությունները, որոնք որոշել էր մեզ համար: Մեզանում վստահ զգացում կար, որ մոտենում էր մեր պաշտոնները թողնելու օրերը, և մենք առաջխաղացման եզրին էինք:

Խնդիրն իմ մեջ էր

Մի քանի օր անց, երբ աղոթում էի, Աստված Իր ողորմությամբ հիշեցրեց ինձ այն, ինչ քննարկում էինք այդ զույգի տանը: «Ես կերակուր չեմ ստանում» պնդումը չէր արվել միայն այդ երեկո. ես հաճախ էի ասում կնոջս ճիշտ նույն խոսքերը նախորդ վեց ամսում՝ յուրաքանչյուր ծառայության ժամանակ, երբ լսում էինք մեր հովվի ուսուցումները: Մինչ մտածում էի այն մասին, որ ես հոգևոր սովի մեջ էի՝ *կերակուր չստանալու* պատճառով, Սուրբ Հոգին հստակորեն ասաց. *«Խնդիրը քո հովվի մեջ չէ. խնդիրը քո՛ մեջ է»:*

Ես ապշեցի և գրեթե չհավատացի լսածիս. մի՞թե Աստված նման բան կասեր ինձ: Անցյալում, երբ նման ուղղումներ էի ստանում, հաճախ մի պահ վարանում էի և մտածում, թե արդյո՞ք ճիշտ էի լսել: Ես հարցրի իմ մտքում. *«Աստվա՛ծ, Դու համոզվա՛ծ ես, որ ճիշտ մարդու ես դիմում»:* (Որքան ավելի ենք հասունանում, այնքան ավելի հազվադեպ ենք տալիս այս հարցը, քանի որ մենք

սկսում ենք հասկանալ, թե որքան քիչ բան *իրականում* գիտենք, և թե որքան աճելու կարիք ունենք):

Ես բարձրաձայն հարցրի. «Ո՞րն է իմ խնդիրը»:

Տերը պատասխանեց. *«Դու շարունակ խոսում ես կերակուր չսպանալու մասին: Եսայու գրքում գրված է. «Եթե հոժարեք և լսեք, երկրի բարիքը կուտեք: Բայց եթե մերժեք և ապստամբեք, սուրը պիտի ձեզ ուտի»»* (1.19,20):

Ես քաջատեղյակ էի այդ խոսքին և ընդդիմացա. «Ես շատ հնազանդ եմ եղել»:

Բայց Սուրբ Հոգին առարկեց. *«Դու հնազանդվում ես այն ամենին, ինչ քեզ պատվիրում են այս ծառայության մեջ, բայց Ես չասացի՝ եթե լսեք, երկրի բարիքը կուտեք: Ես ասացի՝ եթե* հոժարեք *և լսեք... Հոժարությունը կապ ունի քո վերաբերմունքի հետ, իսկ քո վերաբերմունքից փոխած հոտ է գալիս»:*

Դրանից հետո Նա հիշեցրեց ինձ, որ երբ ավագ դպրոցում էի և դեռ վերստին ծնված չէի, իմ սիրելի հեռուստահաղորդումը չորեքշաբթի երեկոյան ցուցադրվող *«Բարեկա»* բազմասերիանոց կինոնկարն էր, որը Նյու Ջերսի նահանգի Նյուարկ քաղաքում ապրող մի խուզարկու ոստիկանի մասին էր: Աղբը տանելու օրը հինգշաբթին էր, և այն վերցնում էին վաղ առավոտյան: Աղբն ամբողջությամբ պետք է տնից դուրս տարվեր նախորդ երեկոյան, և դա իմ պարտականությունն էր, քանի որ ես միակ տղան էի մեր ընտանիքում: Ամեն շաբաթ մայրս գալիս էր հերթական սերիայի կիզակետին՝ հենց այն պահին, երբ Բարետան կարևորագույն տեղեկություն էր ստանում, որպեսզի բացահայտեր հերթական հանցագործությունը, և հարցնում էր.

- Որդի՛ս, դու արդեն դո՞ւրս ես տարել աղբը:

- Դեռ ոչ,- պատասխանում էի:

Մայրս ասում էր.

- Այդ դեպքում, հենց հիմա վե՛ր կաց և դո՛ւրս տար աղբը:

- Այո՛, մայրի՛կ,- պատասխանում էի ես և գնում էի:

Եթե ինչ-որ մեկը հետևեր իմ վարքին, կասեր, որ ես հնազանդ էի, և ճիշտ կլիներ, ինչպես նաև կկարծեր, որ ես *հոժար* էի: Սակայն ներքուստ ես դառնորեն տրտնջում էի. «Հավատս չի գալիս,

որ նա միշտ պատվիրում է ինձ անել դա հենց իմ սիրելի հեռուստասերիալի ժամանակ: Ինչո՞ւ նա չի կարող տասը րոպե սպասել, մինչև որ այն ավարտվի»:

Սուրբ Հոգին ասաց. *«Դու հնազանդ էիր և նույնիսկ* հոժար *էիր թվում, սակայն հոժար չէիր: Քո վերաբերմունքը քո մոր հանդեպ ճիշտ չէր: Դու կերակուր չես ստանում (չես ուտում Իմ թագավորության բարիքը) այս եկեղեցում, քանի որ թեև հնազանդ ես, սակայն հոժար չես»:*

Ես հասկացա, որ իմ վերաբերմունքն իմ հովվի հանդեպ այնպիսի վիճակի էր հասցրել ինձ, որ ես չէի ստանում Աստծուց և վտանգավոր ուղղությամբ էի ընթանում: Եբրայեցիների 13.17-ն ավարտվում է հետևյալ խոսքերով. «Որովհետև դա անօգուտ կլինի ձեզ համար»:

Իմ աչքերը բացվեցին: Ես անմիջապես ապաշխարեցի: Հաջորդ կիրակի այցելեցի նույն եկեղեցի, նստեցի նույն նստարանին և լսեցի նույն հովվին, որը սովորեցնում էր նույն քարոզաշարից: Բայց այդ առավոտ ամեն ինչ այլ էր: Երկինքը բացվեց, և ես ապշած էի այն հայտնությունից, որն Աստված տվեց ինձ՝ իմ հովվի ուսմունքի միջոցով: Ես գրեթե արտասվում էի՝ մտածելով, թե ինչ էի բաց թողել նախորդ վեց ամսում, քանի որ սխալ վերաբերմունք էի ունեցել այն առաջնորդի հանդեպ, որի ներքո Աստված կարգել էր ինձ: Իմ հոգևոր ընթացքը բարեհաջող չէր վերջին վեց ամսում, քանի որ ես քննադատորեն և դժկամորեն էի վերաբերվում իմ հովվին և եկեղեցու աշխատանքի ղեկավարմանը:

Երբ չենք հպատակվում մեր լիազորած առաջնորդներին, մենք հակառակվում ենք Աստծո իշխանությանը, քանի որ նրանք Աստծուց են կարգված: Աստված ցանկանում է, որ մենք ազատորեն վայելենք այն խնջույքի սեղանը, որն Ինքը պատրաստում է մեզ համար, և օգուտ ստանանք դրանից՝ այն առաջնորդների միջոցով, որոնց ներքո Նա կարգել է մեզ:

Հնազանդությունը առնչվում է այն *գործողություններին*, որոնցով մենք արձագանքում ենք իշխանությանը: Հպատակությունը առնչվում է մեր *վերաբերմունքին* իշխանության հանդեպ: Աստված նայում է և՛ մեր տեսանելի գործողություններին, և՛ մեր սրտի ծածուկ վերաբերմունքին: Դավիթն ասաց հետևյալը իր որդի Սողոմոնին, երբ փոխանցում էր նրան իր գահը. «Իսկ դո՛ւ, իմ որդի՛

Սողոմոն, ճանաչի՛ր քո հոր Աստծուն և ծառայի՛ր Նրան հավատարիմ սրտով և *հոժար մտքով*, որովհետև Տերը քննում է բոլոր սրտերը և հասկանում է *մտքերի բոլոր դիտավորությունները»* (Ա Մնաց. 28.9, NKJV):

Այս պատճառով, Եբրայեցիների թղթի հեղինակը հորդորեց մեզ ոչ միայն հնազանդվել մեզ վրա կարգված մարդկանց, այլև հպատակվել նրանց: Երբ Պողոսն ասաց. «Ամեն անձ թող հնազանդվի (կամ՝ հպատակվի) բարձր իշխանություններին», նա միավորեց հնազանդությունը հոժար վերաբերմունքի հետ:

Հպատակված, բայց ոչ՝ հնազանդ

Ուսումնասիրենք Եբրայեցիների թղթի հեղինակի խոսքերը՝ այլ թարգմանությամբ. «Հնազանդվե՛ք ձեր առաջնորդներին և հպատակվե՛ք նրանց իշխանությանը» (NIV): Ես օրինակ բերեցի այն մասին, որ մենք կարող ենք հնազանդ լինել, սակայն հպատակված չլինել: Այնուամենայնիվ, կարող է տեղի ունենալ ճիշտ հակառակը: Մենք կարող ենք հպատակված վերաբերմունք ունենալ, սակայն հնազանդ չլինել: Այս դիրքորոշման դիպուկ օրինակ է Հիսուսի առակը երկու որդիների մասին, որը քննարկեցինք երրորդ գլխում: Որդիներից մեկը հպատակված վերաբերմունք ուներ. «Այո՛, տե՛ր, ես կգնամ և կաշխատեմ քո այգում», սակայն նա չհնազանդվեց: Հիսուսը պարզորեն ասաց, որ նա չկատարեց իր հոր կամքը, թեև հրաշալի վերաբերմունք ուներ և մտովի համաձայն էր իր հոր խնդրանքին:

Այսօր եկեղեցիներում հաճախ սա է տեղի ունենում: Մենք հրաշալի մտադրություններ ունենք, գլխով ենք անում, ժպտում ենք և համաձայնում ենք առաջնորդների հետ. «Ես կանե՛մ դա»: Իսկ հետո ոչինչ չենք անում, քանի որ դա կարևոր չէ մեզ համար: Ինձ դուր է գալիս անվանել սա «սիրալիր ապստամբություն»: Մի՛ խաբվեք. սիրալիր ապստամբությունը նույնքան մահացու է, որքան բացահայտ ապստամբությունը՝ բացասական վերաբերմունքով: Երկուսն էլ պատվի չեն արժանանում Աստծո թագավորության մեջ:

Հիսուսի ուշագրավ խոսքերը՝ ուղղված եկեղեցիներին Հայտնության գրքում, հաստատում են սա: Նա ողջունեց յուրաքանչ-

յուր եկեղեցուն «Գիտեմ քո գործերը» խոսքերով (տես Հայտն. 2-3 գլուխներ): Այդ եկեղեցիները բարի մտադրություններ ունեին. դրանցից մեկն իրեն *կենդանի* էր անվանում, սակայն Հիսուսն ասաց, որ իրենց անհնազանդ վարքի պատճառով նրանք *մահացած* են: Հիշեք՝ Նա է, որ «ամեն մեկին իր գործի պես հատուցում կտա» (Հռոմ. 2.6): Բարի մտադրությունները հաշվի չեն առնվի Աստծո դատաստանի առջև: Հաշվի կառնվի միայն ճշմարիտ հավատքը, որը վկայվում է հնազանդության համապատասխան գործերով:

Որտեղ է սահմանը

Կրկին, Աստծո պատվիրանը հետևյալն է. «Հնազանդվեք ձեր առաջնորդներին և հպատակվեք նրանց իշխանությանը»: Ինչպես արդեն նշել էի, մարդիկ հաճախ են հարցնում ինձ՝ միանգամայն անկեղծ. «Որտեղ է սահմանը: Արդյո՞ք Աստված ակնկալում է, որ հնազանդվենք իշխանություններին՝ անկան այն բանից, թե ինչ են նրանք պատվիրում մեզ: Ի՞նչ պետք է անեմ, եթե ինձ հանձնարարեն այնպիսի բան անել, ինչը մեղք է»: Աստվածաշունչը սովորեցնում է անպայմանական հպատակություն իշխանությանը, բայց ոչ՝ անպայմանական հնազանդություն: Հիշեք՝ հպատակությունը առնչվում է վերաբերմունքին, իսկ հնազանդությունը՝ մեզ պատվիրածը կատարելուն:

Միակ բացառությունը, որն ուզում եմ շեշտադրել, և որի դեպքում մենք չպետք է հնազանդվենք իշխանություններին, այն է, երբ նրանք պատվիրում են մեզ այնպիսի բան անել, ինչն ուղղակիորեն հակասում է Աստծո պատվերներին Իր Խոսքում: Այլ կերպ ասած՝ մենք ազատ ենք չհնազանդվելու համար, միայն երբ առաջնորդները պատվիրում են մեզ մեղք գործել: Այնուամենայնիվ, նույնիսկ այդ դեպքերում մենք պետք է խոնարհ և հպատակված վերաբերմունք ունենանք:

Բաբելոնի թագավոր Նաբուգոդոնոսորը դաժան բռնակալ էր. նա կործանեց Իսրայելի զավակներից շատերին նրանց հայրենիքում: Սակայն Աստված «Իմ ծառան» անվանեց նրան (տես Երեմ. 25.9, 27.5-7)՝ կրկին հաստատելով, որ Ինքը միակն է, որ իշխանություն է տալիս մարդուն: Այդ թագավորը գերեց Աստծո

ժողովրդի մնացորդին և Բաբելոն տարավ նրանց: Նրանց թվում էին Դանիելը, Սեդրաքը, Միսաքը և Աբեդնագովը:

Այդ թագավորը հրաման արձակեց, ըստ որի բոլոր ժողովուրդները պետք է խոնարհվեին մի ոսկե արձանի առջև և երկրպագեին, հենց որ լսեին երաժշտական գործիքների ձայնը: Ըստ այդ հրամանի, հրաժարվողները պատժվելու էին. նրանք նետվելու էին կրակի հնոցը: Այդ հրեա մարդիկ վախենում էին Աստծուց ավելի, քան հնոցից, և չհնազանդվեցին այդ հրամանին, քանի որ այն ուղղակիորեն հակասում էր երկրորդ պատվիրանին, որն Աստված տվել էր Մովսեսի միջոցով, և որը գրված է Տորայում: Նրանք չհնազանդվեցին մարդու հրամանին և հնազանդվեցին Աստծո հրամանին:

Միայն ժամանակի հարց էր, մինչև որ նրանց անհնազանդությունը գրավեց Նաբուգոդոնոսոր թագավորի ուշադրությունը: Նա բարկացավ Սեդրաքի, Միսաքի և Աբեդնագովի վրա և հրամայեց իր առջև բերել նրանց՝ հարցաքննելու համար: Ահա թե ինչ պատասխանեցին. «Ո՛վ Նաբուգոդոնոսոր, մենք կարիք չունենք պաշտպանվելու քո առջև: Եթե գցվենք վառվող հնոցը, այն Աստված, Ում ծառայում ենք, կարող է փրկել մեզ: Նա կփրկի մեզ քո իշխանությունից, Ձերդ Մեծություն: Բայց նույնիսկ եթե Նա չանի դա, ուզում ենք պարզ ասել քեզ, Ձերդ Մեծություն, որ մենք երբեք չենք ծառայի քո աստվածներին և չենք երկրպագի այն ոսկե արձանին, որին դու կանգնեցրել ես» (Դանիել 3.16-18, NLT):

Նրանք հաստատուն կանգնեցին՝ հնազանդվելով Աստծո պատվիրանին, սակայն պատվով խոսեցին թագավորի հետ: Նրանք «Ձերդ Մեծություն» անվանեցին նրան: Նրանք չասացին. «Սրիկա՛, մենք երբե՛ք չենք կատարի քո ասածը»: Նման անհարգալից կերպով խոսելը ապստամբություն կլիներ: Մենք պարտավոր ենք հպատակվել իշխանությանը, նույնիսկ երբ պետք է չհնազանդվենք իշխանավորի հրամանին:

Մենք տեսնում ենք միևնույն սկզբունքը ամուսնացած կանանց ուղղված Պետրոսի ցուցման մեջ. «Կանա՛յք, նույն կերպով, հպատակվե՛ք ձեր ամուսիններին, որպեսզի, եթե նրանցից որևէ մեկը չհավատա խոսքին, նրանք շահվեն՝ առանց խոսքերի, իրենց կանանց վարքով, երբ տեսնեն ձեր կյանքերի սրբությունը և *ակնածանքը»* (Ա Պետր. 3.1,2, NIV): Կինը պետք է հնազանդվի (տես

Տիտոս 2.5), ինչպես նաև պատվի իր ամուսնուն՝ հպատակվող վերաբերմունքով: Պետրոսը կրկին անցկացրեց զուգահեռը վարքի և հպատակության միջև: Այս առաքինություններին ավելանում է սրբությամբ և ակնածանքով բնութագրվող կենսաոճը: Կնոջը հորդորվում է ունենալ ակնածալի վերաբերմունք իր ամուսնու իշխանական դիրքի հանդեպ, նույնիսկ եթե նա հավատացյալ չէ: Նրանից չի պահանջվում անպայմանականորեն հնազանդվել, եթե նրա ամուսինը խնդրում է նրան մեղք գործել, բայց նա կանչված է, որ անպայմանականորեն հպատակվի իր ամուսնուն և պատվի նրա իշխանական դիրքը:

Որպես օրինակ, պատկերացրեք, որ մի հավատացյալ կին հեռախոսազանգի է պատասխանում, իսկ նրա ամուսինը չի ցանկանում խոսել զանգողի հետ և հանձնարարում է նրան.

- Ասա՛, որ ես տանը չեմ:

Կնոջ պատշաճ պատասխանը կլինի հետևյալը.

- Սիրելի՛ս, ես չեմ ստելու: Ուզո՞ւմ ես, որ ասեմ նրան, որ դու ինքդ կզանգես, կամ՝ որ հիմա չես ուզում խոսել:

Նա շարունակում է ակնածանքով վերաբերվել իր ամուսնու իշխանությանը, սակայն չի հնազանդվում նրա ստելու խնդրանքին:

Պետրոսը շարունակում է.

> «Ձեր գեղեցկությունը չպետք է բխի ձեր արտաքին զարդարանքից, ինչպիսիք են հյուսած մազերը և ոսկե զարդեր ու գեղեցիկ հագուստ կրելը: Փոխարենը, այն պետք է լինի ձեր ներսից՝ հեզ և հանդարտ հոգու անթառամ գեղեցկությունը, որը մեծ արժեք ունի Աստծո առջև: Որովհետև այս կերպով է, որ անցյալի սուրբ կանայք, որոնք իրենց հույսն Աստծո վրա էին դնում, գեղեցկացնում էին իրենց: Նրանք հպատակվում էին իրենց ամուսիններին, ինչպես Սառան, որը հնազանդվեց Աբրահամին և որպես տեր անվանեց նրան: Դուք նրա դուստրերն եք, եթե ճիշտ եք վարվում և տեղի չեք տալիս վախին» (Ա Պետր. 3.3-6, NIV):

Սառայի երկյուղածությունն ակնհայտ էր այն բանով, որ նա պատվում էր Աբրահամին՝ որպես իր տիրոջ, և հնազանդվում էր: Աբրահամին տիրոջ պես պատվելը արտացոլում էր նրա հպա-

տակվող վերաբերմունքը, իսկ նրա հնազանդությունը ցույց էր տալիս, որ նա տեղի չէր տալիս վախին: Վախը սոսկալի ստրկատեր է: Այն հեգնանքով ասում է. «Ես չեմ կարող վստահել Աստծուն՝ հպատակվելով իմ ամուսնուն կամ ցանկացած իշխանության: Ես ինքս պետք է պաշտպանեմ ինձ»: Եկեք հիշենք, որ Աստված է պատվիրել մեզ հպատակվել, ոչ թե ինչ-որ իշխանության ծարավ ունեցող տղամարդ: Մենք ստանում ենք Նրա պաշտպանությունը, երբ հնազանդվում ենք Նրան:

Պատվիրանի խեղաթյուրում

Ես տրտմել եմ՝ լսելով պատմություններ կանանց մասին, որոնք ընդունել են անպայմանական հպատակության պատվիրանը և կիրառել են այն՝ անպայմանական հնազանդության հետ մեկտեղ: Ես լսել եմ սաստիկ խեղաթյուրված դեպքեր, օրինակ՝ երբ ամուսինները պահանջել են իրենց կանանցից մեծահասակների համար նախատեսված պիղծ տեսանյութեր դիտել՝ սեռական գրգռվածության համար, իսկ կանայք տեղի են տվել, քանի որ մտածել են, որ չունեն աստվածաշնչյան հիմք՝ դրան հակառակվելու համար: Ես գիտեմ այնպիսի ամուսինների մասին, որոնք պահանջել են իրենց կանանցից անազնիվ կերպով վարվել՝ իրենց օգտի համար, և կանայք արել են դա: Ես լսել եմ դեպքեր, երբ ամուսիններն արգելել են իրենց կանանց եկեղեցական հավաքույթների հաճախել, և կանայք դադարել են եկեղեցի հաճախել: Նման ցուցումների չպետք է հնազանդվել, քանի որ դրանք հակասում են Աստվածաշնչին:

Եկեք շարունակենք: Ես գիտեմ այնպիսի դեպքեր, երբ ամուսինները ծեծում էին իրենց երեխաներին կամ կանանց, իսկ կանայք թաքցնում էին այդ բռնությունը: Այլ դեպքերում երեխաները սեռական բռնության էին ենթարկվում, իսկ կանայք ոչինչ չէին անում: Նման դեպքերը խախտում են աստվածային իշխանության բոլոր դրույթները: Այսպիսի իրավիճակներում գտնվող կանայք պետք է հասկանան, որ Աստված ոչ մի դեպքում չի կամենում, որ իրենք դիտորդի դերում մնան և ոչինչ չանեն: Եթե ամուսնու վարքը սպառնում է ընտանիքի անդամների կյանքին, կինը պետք է հեռանա նրանից՝ հեռացնելով նաև երեխաներին, և չվերադառնա, քանի դեռ համոզված չէ, որ նա լիովին ապաշխարել է:

Նույնիսկ Դավիթը, ով ուժեղ, պատերազմող մարդ էր, չմնաց պալատում, երբ Սավուղը սկսեց նիզակներ նետել նրա վրա: Նա հեռացավ և ապրեց անապատում, բայց երբեք չկորցրեց իր երկյուղած վերաբերմունքը Սավուղի իշխանության հանդեպ: Դավթի հպատակությունը Սավուղի իշխանությանը չդադարեց, թեև նա փախավ Սավուղից և սպասում էր կա՛մ ճշմարիտ ապաշխարության, կա՛մ Աստծո արդար դատաստանին:

Աստված օրինում է նրանց, ովքեր հրաժարվում են հնազանդվել մեղանչելու հրամաններին

Կան այլ դեպքեր, երբ մարդիկ չէին հնազանդվում իշխանությանը: Փարավոնը հրամայեց հրեա մանկաբարձներին, որ սպանեն հրեա կանանց նորածին տղա երեխաներին: Այնուամենայնիվ, Աստվածաշնչում գրված է. «Բայց մանկաբարձները Աստծուց վախեցան և չարեցին՝ ինչպես ասել էր նրանց Եգիպտոսի թագավորը, այլ՝ արուներին ողջ էին թողնում» (Ելից 1.17): Աստծուն այնքան հաճելի էր նրանց արարքը, որ Աստվածաշնչում գրված է. «Եվ եղավ, որ մանկաբարձներն Աստծուց վախենում էին, և Նա նրանց համար տներ շինեց» (խոսք 21): Տերը վարձատրեց նրանց, քանի որ նրանք չհնազանդվեցին թագավորի մեղանչելու հրամանին:

Սինեդրիոնը հրամայեց աշակերտներին, «որ ամենևին չխոսեն, և ո՛չ էլ սովորեցնեն Հիսուսի անունով: Բայց Պետրոսը և Հովհաննեսը պատասխանեցին նրանց և ասացին. «Եթե արժան է Աստծո առջև, որ ձեզ ավելի ականջ դնենք, քան թե Աստծուն, դո՛ւք դատեք: Որովհետև մենք չենք կարող այն, որ տեսանք և լսեցինք, չխոսել»» (Գործք 4.18-20): Ինչպե՞ս նրանք կարող էին հնազանդվել այդ առաջնորդներին, երբ Հիսուսն արդեն պատվիրել էր նրանց. «Գնացե՛ք ամբողջ աշխարհով, Ավետարանը քարոզե՛ք ամեն արարածի» (Մարկ. 16.15): Նրանք չէին կարող: Սինեդրիոնը հրամայեց աշակերտներին այնպիսի բան անել, ինչը հակառակ էր Հիսուսի հրամանին. այնպես որ, նրանք հարգալից կերպով հրաժարվեցին: Ահա թե ինչ է Աստվածաշունչը գրում նրանց որոշման արդյունքի մասին. «Եվ առաքյալները մեծ զորությամբ վկայություն էին տալիս Տեր Հիսուսի հարության համար, և մեծ

շնորհք կար նրանց ամենի վրա» (Գործք 4.33): Նրանց երկյուղն Աստծուց՝ մեծ օրհնություն և զորություն բերեց:

Այնուամենայնիվ, մենք տեսնում ենք աշակերտների ակնածալի կամ հպատակվող վերաբերմունքը Պողոսի պատասխանի մեջ, որն ուղղված էր նույն Սինեդրիոնին: Երբ Պողոսը նրանց առջև բերվեց, նրա պաշտպանության առաջին խոսքերը հետևյալն էին. «Ես բոլորովին բարի խղճմտանքով վարվել եմ Աստծո առջև մինչև այսօր» (Գործք 23.1): Լսելով այս խոսքերը՝ քահանայապետ Անանիան հրամայեց Պողոսի մոտ կանգնողներին հարվածել նրա բերանին: Պողոսը պատասխանեց. «Աստված պիտի քեզ զարկի, ծեփած պատ»: Դրանից հետո գրված է. «Եվ նրա մոտ կանգնածներն ասացին. «Աստծո քահանայապետի՞ն ես հայհոյանք տալիս»: Եվ Պողոսը ասաց. «Եղբայրնե՛ր, ես չգիտեի, որ քահանայապետ է, որովհետև գրված է, թե՝ քո ժողովրդի իշխանին չհայհոյես»» (Գործք 23.4,5):

Լսելով, որ Անանիան իշխանություն ունեցող մարդ էր, Պողոսն ապաշխարեց իր վերաբերմունքի և խոսքերի համար: Աշակերտները չէին հնազանդվում Աստվածաշնչին հակասող հրամաններին, բայց նրանք հպատակվող վերաբերմունք ունեին, քանի որ գիտեին. «Ներկա իշխանություններն Աստծուց են կարգված»:

Բարձրագույն օրենքին հնազանդվելու Դանիելի որոշումը

Դանիելի օրերում մի օրենք ընդունվեց, որ ցանկացած մարդ, ով ինչ-որ բան խնդրեր որևէ աստծուց կամ մարդուց՝ բացի թագավորից, առյուծների գուբը կգցվեր: Այդ օրենքը նախաձեռնել էին նախանձով լցված նախարարները, որպեսզի կործանեին Դանիելին: Այդ անօրեն կառավարիչները խորամանկությամբ դրդեցին Դարեհ թագավորին ստորագրել այդ օրենքը: Դանիելը նույնիսկ չմտածեց այդ օրենքին հնազանդվելու մասին. նա որոշեց հնազանդվել Աստծուն: Նա հետևեց սաղմոսերգուի ծրագրին. «Երեկոյան, առավոտյան և կեսօրին ես կաղոթեմ և բարձրաձայն կաղաղակեմ, և Նա կլսի իմ ձայնը» (Սաղմ. 55.17, NKJV):

Կարդացե՛ք, թե ինչ արեց Դանիելը. «Եվ երբ որ Դանիելն իմացավ, թե հրովարտակը ստորագրվեց, գնաց իր տունը, և իր պա-

տուհանները բաց էին վերնատանը դեպի Երուսաղեմ, և օրը երեք անգամ նա ծնկի էր գալիս և աղոթք էր անում և գովաբանում էր իր Աստծուն, ըստ որում նա սրանից առաջ այսպես էր անում» (Դանիել 6.10):

Թագավորին զեկուցեցին Դանիելի անհնազանդության մասին՝ պարտադրելով նրան առյուծների գուբը գցել Դանիելին: Այնուամենայնիվ, Դանիելի հպատակությունը երբեք չսասանվեց, նույնիսկ անարդարության դեպքում: Աստված ազատեց նրան և փակեց սոված առյուծների բերանները, մինչ նա ապահով քնած էր: Երբ թագավորը տեսավ, թե ինչ տեղի ունեցավ, նա հրամայեց կատաղի առյուծների գուբը գցել Դանիելի դեմ դավ նյութող մարդկանց, և նրանք հոշոտվեցին:

Ոչ միշտ՝ հաճելի արդյունք

Աստված ազատեց այս սրբերին, բայց միշտ չէ, որ այդպես է լինում: Եբրայեցիների թղթում գրված է.

> «Ուրիշներն էլ խիստ չարչարվեցին՝ ազատությունը չընդունելով, որ լավագույն հարությանը հասնեն: Մյուսներն էլ նախատինքների և ծեծերի, կապանքների և բանտի փորձը առան: Քարկոծվեցին, սղոցվեցին, փորձանքի մեջ ընկան, սրով սպանված մեռան, ոչխարի մորթերով և այծի կաշիներով ման եկան՝ կարոտություն քաշելով, նեղված, չարչարված, որ աշխարհը նրանց արժանի չէր» (11.35-38):

Այդ տղամարդիկ և կանայք դաժան և անարդար վերաբերմունք ստացան առաջնորդներից:

Տերտուղիանոսը, որն Առաջին եկեղեցու ուսուցիչներից էր և ապրում էր մ.թ. 140 թվականից մինչև 230 թվականը, հիշեցրեց հռոմեացի առաջնորդներին և քաղաքացիներին, որ իրենց հալածանքը միայն ամրապնդեց քրիստոնեությունը: Նա գրեց. «Որքան ավելի եք կոտորում մեզ, այնքան ավելի ենք մենք շատանում: Քրիստոնյաների արյունը սերմ է» (Ջատագովություն, գլուխ 50):

Թույլ տվեք կրկնել այն անհայտ հռոմեացու խոսքերը, որը նկարագրեց հալածված հավատացյալներին.

«Նրանք ապրում են իրենց երկրներում՝ որպես պանդուխտներ: Նրանք մարմնում են, բայց չեն ապրում մարմնի թելադրանքով: Նրանք անցկացնում են իրենց օրերն այս երկրի վրա, բայց երկնքի քաղաքացիներ են: Նրանք հնազանդվում են ընդունված օրենքներին և միևնույն ժամանակ գերազանցում են այդ օրենքներն իրենց կյանքով: Նրանց ատողները չեն կարող որևէ կերպով պատճառաբանել իրենց ատելությունը» («Նամակ Դիոգնետոսին», գլուխ 5):

Նրանք հնազանդվում և հպատակվում էին, սակայն գերազանցում էին հասարակ հնազանդությունը՝ իրենց ակնածալի և հպատակվող վերաբերմունքով: Կրկին, ինչպես տեսնում ենք Պետրոսի հորդորում, այդ հավատացյալների արձագանքն անարդար առաջնորդների հանդեպ շփոթեցնում էր նրանց և շահում էր ոմանց Տիրոջ համար:

Ոչ մի անորոշություն

Թե՛ պետական, թե՛ ընտանեկան, թե՛ եկեղեցական, թե՛ հասարակական իշխանության դեպքում Աստված հորդորում է մեզ հպատակվել՝ մեր վերաբերմունքով, և հնազանդվել՝ գործերով, քանի դեռ իշխանավորները չեն պատվիրում այն, ինչը *բացահայտ* մեղք է՝ ըստ Աստվածաշնչի: Թույլ տվեք շեշտադրել *բացահայտ* բառը: Մեր կողմից նշված դեպքերում հավատացյալները չէին հնազանդվում, երբ նրանց պատվիրում էին ուրանալ Քրիստոսին, սպանել, երկրպագել այլ աստվածների կամ ուղղակիորեն ոտնահարել Հիսուսի պատվիրաններից մեկը: Այդ հարցերում չկար ոչ մի անորոշություն կամ տարակարծություն:

Ահա անորոշ իրավիճակի մի օրինակ, որը լսել եմ ծառայողական աշխատակազմերում գտնվող մարդկանցից. «Իմ հովիվը պատվիրել է ինձ խորհրդակցություններ չանցկացնել մարդկանց հետ և չաղոթել նրանց համար աշխատանքային ժամերին, բայց դա Աստծո սերը չէ, իսկ սիրո մեջ չվարվելը մեղք է. այնպես որ, ես պետք է անեմ դա»: Սա իշխանության ներքո գտնվող մարդկանց անձնական կարծիքն ու մեկնաբանությունն է: Նրանց հովիվը չի խնդրում նրանց խախտել Աստծո Խոսքը: Ավելին՝ նրանք վճարվում են մեքենագրման, փաստաթղթերի հետ աշխատանքի,

տվյալների մշակման կամ այլ գործերի համար, ոչ թե աղոթքի:

Քանի որ այդ մարդիկ չեն ենթարկվում, ըստ էության, գողանում են իրենց հովվից: Եթե նրանք իսկապես սրտանց ուզում են աղոթել մարդկանց համար, պետք է թույլտվություն խնդրեն հովվից, որ կանչեն աղոթքի կարիք ունեցող մարդկանց այլ ժամերի՝ աշխատանքային ժամերից հետո: Եթե հովիվը, միևնույն է, հավանություն չի տալիս այդ գաղափարին, գուցե նա կարծում է, որ այդ աշխատակիցները չունեն համապատասխան պատրաստվածություն, որպեսզի խորհրդատվություն անցկացնեն այն մարդկանց հետ, որոնք զանգել են իրենց եկեղեցի՝ օգնություն ստանալու համար: Եթե այդ հովիվը սխալ որոշում է կայացրել, նա հաշիվ կտա Աստծո առջև, բայց դա տարակարծության իրավունք չի ընձեռնում նրա ենթակայության ներքո գտնվող մարդկանց: Սա պարզապես հարյուրավոր օրինակներից մեկն է, բայց սկզբունքը նույնն է. մենք պետք է անհնազանդ լինենք առաջնորդներին միայն այն դեպքում, երբ նրանց պատվերը բացահայտ կերպով խախտում է Աստծո գրված Խոսքը:

Գուցե դուք այլ հարցեր տաք. «Իսկ ի՞նչ անեմ, եթե իմ առաջնորդն այնպիսի բան է պատվիրում, ինչին համաձայն չեմ: Ի՞նչ անեմ, եթե իմ առաջնորդը պատվիրում է ինձ բացահայտ անմտություն գործեմ: Ի՞նչ անեմ, եթե իմ առաջնորդը պատվիրում է ինձ այն ամենի հակառակը, ինչ ստացել եմ աղոթքի մեջ»: Հաջորդ գլխում սուրբգրային պատասխաններ կտամ այս հարցերին:

ԳԼՈՒԽ 12

ԻՍԿ ԵԹԵ ԱՌԱՋՆՈՐԴԸ ՊԱՏՎԻՐԻ ԻՆՁ...

Մեր նպատակն է հայտնություն ստանալ իշխանության մասին, այսինքն՝ հայտնություն անձամբ Աստծո մասին, քանի որ Նա և Նրա իշխանությունն անբաժանելի են:

Բոլորս ենք հանդիպել մարդկանց, որոնք դժգոհ են իրենց առաջնորդներից: Նրանք բողոքում են ոչ արդյունավետ մեթոդների և ոչ իմաստուն որոշումների համար, նաև՝ որ այդ առաջնորդները բացասաբար են ազդել իրենց կյանքի վրա: Նրանք տրտնջում են, որ առաջնորդները խոստումներ են տալիս, սակայն իրենք դեռ սպասում են դրանց իրականացմանը: Նրանց թվում է, թե ամեն ինչ հետընթաց է ապրում: Նրանք համոզված են, որ իրենց հովիվն ինչ-որ բան չի հասկացել, և եզրակացնում են, որ նրա իշխանությունն անջատ է Աստծո իշխանությունից: Նման դատողությունը դուռ է բացում տրտունջի համար, ինչն, ի վերջո, դրսևորվում է անհնազանդ վարքով: Միայն ժամանակի հարց է, թե երբ նրանք սիրախաղ կսկսեն մոլորության հետ, կհրապուրվեն դրանով և կհեռանան այն իշխանությունից, որն Աստված կարգել է իրենց վրա՝ իրենց աճի և պաշտպանության համար:

Մենք ավելի լավ վիճակում էինք՝ առանց քեզ

Իսրայելի զավակները նույն կերպով վարվեցին: Կար ժամանակ, երբ նրանք համարում էին, որ Մովսեսի առաջնորդությունն անարդյունավետ էր և նույնիսկ կործանարար էր իրենց համար: Այնուամենայնիվ, սկզբում այդպես չէր: Երբ Մովսեսը վերադարձավ իր անապատային տարաբնակությունից, հանդիպեց Իսրայելի առաջնորդներին, մինչև փարավոնին հանդիպելը: Նա պատմեց, որ Տերն ուղարկել էր իրեն՝ ազատելու նրանց և տանելու «այն երկրից մի լավ ու լայնարձակ երկիր՝ մի կաթ ու մեղր բխող երկիր» (Ելից 3.8): Լսելով այս հրաշալի լուրը՝ նրանք հավատացին Մովսեսին և երկրպագեցին Աստծուն: Ուրախության զգացումը համակեց նրանց, քանի որ նրանք տեսնում էին Աստծո խոստացած առաջնորդին, որն ազատելու էր իրենց ստրկությունից:

Մովսեսը հեռացավ այդ ժողովից, գնաց փարավոնի մոտ և ճշտորեն ազդարարեց այն ուղերձը, որն Աստված տվել էր նրան սարի վրա. «Այսպես է ասում Իսրայելի Տեր Աստվածը. Իմ ժողովրդին թո՛ղ տուր...» (Ելից 5.1):

«Փարավոնը պատասխանեց. «Ո՞վ է Տերը, որ ես պետք է հնազանդվեմ Նրա ձայնին և թողնեմ Իսրայելը: Ես չեմ ճանաչում Տիրոջը, ո՛չ էլ կթողնեմ Իսրայելը: Ինչո՞ւ ես հեռացնում ժողովրդին իրենց աշխատանքից»: Եվ նույն օրը փարավոնն ավելացրեց նրանց նեղությունը: Նա բարկացած հայտարարեց ստրուկների վերակացուներին. «Ավելի՛ շատ աշխատանքով ծանրաբեռնեք նրանց: Թող նրանք քրտնե՛ն»» (խոսքեր 2-9, փոփոխված «Նոր միջազգային թարգմանությունից»):

Իսրայելցիներին այլևս հարդ չէր տրվելու՝ աղյուսների արդեն իսկ ճնշող թվաքանակի համար, որը նրանք հարկադրված էին պատրաստել ամեն օր: Նրանք ստիպված էին լինելու հարդ հավաքել գիշերը և աշխատել ցերեկը: Աղյուսների թիվը չէր պակասելու, թեև նրանց այլևս հարդ չէր տրվելու:

«Իսրայելցիները ցրվեցին Եգիպտոսով մեկ՝ հարդ որոնելու: Ստրուկների գործավարները դաժանորեն էին վարվում նրանց հետ: Սպառնալով իրենց մտրակներով՝ նրանք խստորեն պատվիրում էին. «Ապահովե՛ք աղյուսների ձեր օրական չափաբաժինը՝ ինչպես նախկինում»»:

Նրանք ծեծում էին իսրայելցի վերակացուներին, որոնք հսկում էին աշխատանքային խմբերը՝ պահանջելով. «Ինչո՞ւ չապահովեցիք ձեր օրական չափաբաժինը երեկ և այսօր»:

Իսրայելցի վերակացուները գնացին փարավոնի մոտ և աղաչեցին. «Խնդրո՛ւմ ենք, այսպես մի՛ վարվիր մեզ հետ: Մենք հարդ չենք ստանում, բայց մեզնից, միևնույն է, պահանջում են պատրաստել նույնքան աղյուս, որքան նախկինում: Մեզ ծեծում են այնպիսի բանի համար, ինչում մենք մեղավոր չենք: Քո ստրուկների գործավարներն են մեղավոր նման անխոհեմ պահանջներ ներկայացնելու համար»:

Բայց փարավոնը պատասխանեց. «Դուք պարզապես ծո՛յլ եք: Ակնհայտ է, որ ձեր աշխատանքը բավական չէ: Եթե այն բավական լիներ, դուք չէիք ասի. «Թո՛ւյլ տուր, որ գնանք և զոհեր մատուցենք Տիրոջը: Այժմ, վերադարձե՛ք ձեր աշխատանքին: Ձեզ հարդ չի՛ տրվելու, բայց դուք պետք է ապահովեք աղյուսների մշտական չափաբաժինը»»:

Քանի որ փարավոնը չմեղմացրեց իր պահանջները, իսրայելցի վերակացուները հասկացան, որ լուրջ խնդրի էին բախվել: Հեռանալով փարավոնի սրահից՝ նրանք հանդիպեցին Մովսեսին և Ահարոնին, որոնք դրսում սպասում էին նրանց. *«Թող Տերը դատի ձեզ*, որ այս փորձանքի մեջ գցեցիք մեզ փարավոնի և նրա պաշտոնյաների առջև: Դուք առիթ տվեցիք նրանց, որ սպանեն մեզ» (Ելից 5.13-21, փոփոխված «Նոր միջազգային թարգմանությունից»):

Այժմ իսրայելցիները բարկացան Մովսեսի առաջնորդության պատճառով. նրա քարոզները և ցուցումները նեղություններ և դժվարություններ պատճառեցին իրենց: Նրանք սկսեցին առանձնացնել Մովսեսի իշխանությունը Աստծո իշխանությունից, ինչի ապացույցն այն է, որ նրանք Աստծո դատաստանը կանչեցին Մովսեսի վրա:

Մեղավորը Մովսեսն էր. եթե նա հանգիստ թողներ իրենց, փարավոնն այդքան դաժանաբար չէր վարվի: Նրանք չէին հասկանում, որ Աստված էր կազմակերպում բոլոր այդ իրադարձությունները, ոչ թե ինչ-որ շփոթված կամ անխոհեմ առաջնորդ: Ոչինչ տեղի չէր ունեցել՝ նրա գլխավոր ծրագրից և կանխագիտությունից դուրս: Տերը պատվիրեց Մովսեսին խոսել փարավոնի հետ:

Աստված էր, որ խստացրել էր փարավոնի սիրտը, ոչ թե սատանան կամ Մովսեսը: Սա ակնհայտ է, քանի որ մի քանի հատվածներում գրված է. «Տերը կարծրացրեց փարավոնի սիրտը, և նա չարձակեց Իսրայելի որդիներին իր երկրից» (Ելից. 11.10, նաև կարդացե՛ք Ելից 9.12, 10.1,20,27): Որքան ավելի էր խստանում փարավոնի սիրտը, այնքան ավելի ծանր էր դառնում Աբրահամի սերունդների կյանքը:

Մեծ տառապանքներից և պատուհասներից հետո իսրայելցիներն ազատվեցին Եգիպտոսից, սակայն նրանք սկսեցին դեգերել անծայրածիր անապատում: Մնալով առանց ջրի և սննդի սպառվող պաշարներով՝ նրանք կրկին հարցրին. մի՞թե Մովսեսը չխոստացավ իրենց ազատություն և առատություն՝ «մի լավ ու լայնարձակ երկիր, մի կաթ ու մեղր բխող երկիր»: Նրանք լայնարձակ տեղում էին, բայց այն լավ երկրի ճիշտ հակառակն էր. այդտեղ նույնիսկ կաթ ու մեղրի հետք չկար: Մի՞թե սա էր նրա պատկերացումն ազատության և մատակարարման մասին: Նա իրականո՞ւմ Աստծուց էր ուղարկված:

Երեք օր տևող պակասությունից հետո Մովսեսը Մեռա կոչվող մի վայր առաջնորդեց նրանց, որտեղ նրանք ջուր գտան: Մարդիկ մտածեցին. *«Լավ, հավանաբար, ամեն ինչ սկսվում է կարգավորվել»:* Այնուամենայնիվ, շուտով նրանք պարզեցին, որ այդ ջուրը պիտանի չէր խմելու համար: Նրանց հավատը չէր գալիս, և հետևորդների շարքերում անհավատությունից դրդված իրարանցում սկսվեց: Նրանք սկսեցին տրտնջալ Մովսեսից և ավելի սուր կերպով քննադատել: Դժգոհությունն անարգել տարածվեց քաղցկեղի պես, և վարակեց ամբողջ ժողովրդին: Գուցե Մովսեսի գիտելիքը բավական էր միայն ժողովրդին Եգիպտոսից հանելու համար, բայց ոչ՝ Խոստման երկիր տանելու համար:

Ժողովուրդը բողոքում էր Մովսեսին և Ահարոնին. «Երանի՜ թե Տիրոջ ձեռքով մեռած լինեինք Եգիպտոսի երկրում, երբ որ մսի կաթսաների մոտ նստած էինք և կուշտ հաց էինք ուտում, որովհետև մեզ այս անապատը հանեցիք, որ ամբողջ այս ժողովքը սովածությունից մեռցնեք» (Ելից 16.3):

Նրանք արդեն հոգնել էին ամեն ինչից: Մովսեսի առաջնորդական հմտություններն անարդյունավետ էին թվում շատ առումներով: Մի՞թե նրանց կյանքն ավելի լավ չէր այն ժամանակ, երբ նա

դեռ առաջնորդ չէր դարձել: Եգիպտոսում նրանք միայն սաստիկ ճնշումների և դժվարությունների էին բախվում՝ նրա ուղերձների և առաջնորդության պատճառով: Նրանք չգիտեին՝ դա երբևէ ավարտվելո՞ւ էր: Նրանք ազատվեցին մի նեղությունից, սակայն հայտնվեցին մյուսի մեջ: Նրանց առաջնորդը կաթ ու մեղր բխող երկիր խոստացավ իրենց, բայց նրանք միայն տեսնում էին անապատի չորացած հողը, օձերի և կարիճների: Հավանաբար, Մովսեսն ինչ-որ տեղում շրջադարձ էր բաց թողել, կամ, գուցե, նա նենգամիտ էր: Փարավոնը գոնե կերակրում էր իրենց: Թվում է՝ Մովսեսը մտադրվել էր չարչարել և սովամահ անել իրենց: Եգիպտոսում կյանքն ավելի՞ լավ էր: Նրանց տրտունջն այն աստիճանի հասավ, որ միմյանց ասացին. «Եկե՛ք մի զորագլուխ ընտրենք և Եգիպտոս դառնանք» (Թվոց 14.4):

Բայց ահա թե ինչ ասաց Մովսեսն այն մարդկանց, որոնք հոգնել էին Աստծուց կարգված առաջնորդից. «... Տերը լսել է Իր դեմ ձեր արած տրտունջը: Եվ մենք ո՞վ ենք: Ձեր տրտունջը մեզ դեմ չէ, այլ՝ Տիրոջ դեմ» (Ելից 16.8):

Այդ տղամարդիկ և կանայք կարծում էին, թե իրենց անհնազանդությունն ուղղված էր Մովսեսի դեմ և որևէ կապ չուներ Աստծո հետ: Նրանք կարծում էին, թե կարող էին տարանջատել Մովսեսին՝ Աստծուց: Հնազանդության սկզբունքով վարվելու փոխարեն նրանք ապրում էին իրենց դատողությամբ: Այն մարդիկ, որոնք վարվում են իրենց սահմանափակ դատողությամբ՝ հիմնվելով տեսանելի երևույթների և հանգամանքների վրա, հիմարության ճանապարհին են հայտնվում: Նրանք չեն կատարում իրենց կոչումը, մինչդեռ այն մարդիկ, որոնք ճանաչում են իշխանությունը և հնազանդվում են, մուտք են գործում խոստումների մեջ, ինչպես Հեսուն և Քաղեբը:

Իսկ եթե ես զանազանո՞ւմ եմ

Գուցե մտածեք, որ դուք ավելի իմաստուն կգտնվեիք, քան Իսրայելի զավակները, որոնք դատում էին՝ հիմնվելով իրենց առաջնորդի որոշումների անմիջական տեսանելի արդյունքների վրա: Գուցե պատկերացնեք, որ դուք ավելի հոգևոր կլինեիք, ինչպես Հեսուն էր: Դուք կզանազանեիք, որ Մովսեսը ճիշտ էր, և ոչ մի

դեպքում Իսրայելի զավակների պես չէիք արձագանքի. դուք Հեսուի կողքին կլինեիք:

Գուցե այդպես է, բայց մենք պետք է զգույշ լինենք նման ենթադրություններ անելիս: Փարիսեցիները համառորեն պնդում էին. «Եթե մենք ապրեինք մեր նախահայրերի օրերում, չէինք մասնակցի նրանց գործերին» (Մատթեոս 23.30, NIV), սակայն Հիսուսն ասաց, որ նրանք ունեին նույն հոգին, ինչ իրենց նախահայրերը: Մշտապես հեշտ է տարբերակել ճիշտն ու սխալը, երբ տեսնում ենք իրավիճակն ամբողջությամբ, և այդ մասին արդեն գրքեր են գրվել: Հեսուն առանձնանում էր մյուսներից ոչ թե իր զանազանելու, այլ ճշմարիտ իշխանությունը ճանաչելու և դրան հպատակվելու կարողությամբ: Դա էր ճշմարիտ զանազանության աղբյուրը:

Ես լսում եմ անհավանության երանգներ շատերի ձայներում: Նրանք պնդում են, թե զանազանելու կարողություն ունեն, սակայն նրանց սրտերն անհնազանդ են: Նույնիսկ այս պահին, երբ գրում եմ այս գիրքը, մի նամակ եմ ստացել մոտավորապես քսանչորս ժամ առաջ և պետք է պատասխանեմ մի մարդու, որը «հնազանդվելու է, քանի դեռ համաձայն է» և «զանազանելու կարողություն» ունի: Այսպես մտածող մարդիկ սխալմամբ հավատում են, որ իրենց դիրքորոշումը ճշմարիտ հպատակությունից խուսափելու միջոց է:

Ո՞վ կարգեց նրան այդ դիրքում

Գուցե հարցնեք. «Իսկ եթե ես զանազանեմ, որ իմ ղեկավարը ճիշտ որոշում չի կայացնո՞ւմ: Պե՞տք է այդ դեպքում հնազանդվեմ նրան՝ իմանալով, որ նրան անհաջողություն է սպասում»: Ետ նայելով իմ ծառայողական տարիներին՝ հիշում եմ, որ հաճախ էի հուսահատություն զգում՝ մտածելով. «Նրանք սխալ որոշում են կայացնում: Նրանք չեն հետևում Աստծուն: Նրանք բացասական ազդեցության ներքո են գտնվում: Ես չե՞մ կարող հպատակվել դրան»: Այնուամենայնիվ, շատ հաճախ պատճառն իմ չկոտրված սիրտն էր, որը դրսևորում էր իր անկախությունը:

Իմ հովվի ադմինիստրատիվ օգնականի պաշտոնում մեկ տարի ծառայելուց հետո ես վիճարկում էի նրա որոշումների մեծ մա-

սը: Ես տեսնում էի նրա ցուցումները, քանի որ դրանք հայտնվում էին իմ սեղանին, մինչև բաժինների ղեկավարներին փոխանցվելը: Անթիվ անգամներ կարծում էի, թե նրա որոշումներն իմաստուն չէին, և սրտումս տրտնջում էի դրանց դեմ: Մի անգամ Հոգին խոսեց ինձ հետ. *«Ուզում եմ մի հարց տալ քեզ»:*

Ես սովորել եմ իմ փորձից, որ երբ Աստված հարց է տալիս, Նա պատրաստվում է բացահայտել իմ գիտելիքի թերացումները: Ես պատասխանեցի. «Լսո՛ւմ եմ, Տեր»:

«Ես քե՞զ եմ կարգել հովվի պաշտոնում, թե՞ նրան»:

Ես պատասխանեցի. «Դու նրան ես կարգել այդ պաշտոնում»:

Տերն անմիջապես ասաց. *«Ճիշտ է: Ուրեմն, Ես ցույց կտամ նրան այնպիսի բաներ, որոնք քեզ ցույց տալու կարիք չունեմ, և շատ անգամներ Ես միտումնավոր կթաքցնեմ քեզնից նրա որոշման հիմքում գտնվող իմաստությունը, որպեսզի տեսնեմ, թե արդյո՞ք դու կհետևես նրան, ինչպես որ նա է հետևում Ինձ»:*

Սովորաբար ամիսներ անց իմ հովվի որոշումների հիմքում եղած իմաստությունն ի հայտ էր գալիս: Ես տեսնում էի այդ իմաստությունը. հանկարծ բացահայտում էի այն և հասկանում էի ևս մեկ անգամ, որ մոլորվել էի իմ դատողությամբ, քանի որ հնազանդության սկզբունքից վեր էի բարձրացրել այն: Սա է, որ պառակտումներ է առաջացնում եկեղեցիներում, ընտանիքներում և ձեռնարկություններում: Աստված չի սահմանափակել մեր հնազանդությունն իշխանությանը այն դեպքերով, երբ մենք հասկանում ենք նրանց իմաստությունը, համաձայնում ենք նրանց հետ, կամ՝ երբ մեզ հաճելի են նրանց խոսքերը: Նա պարզապես ասում է. «Հնազանդվի՛ր»:

Ավելի ուշ Տերը խոսեց սրտիս. *«Ջո՛ն, եթե Ես նախատեսեի, որ յուրաքանչյուր հավատացյալ ամբողջ տեղեկությունը, իմաստությունը և առաջնորդությունը, որն անհրաժեշտ է իրեն, ստանալու է միայն աղոթքի և Ինձ հետ հաղորդակցվելու միջոցով, եկեղեցում Ես ոչ մի դեպքում չէի կարգի առաջնորդների: Եկեղեցում ես կարգել եմ առաջնորդների՝ այն լիակատար մտադրությամբ, որ Իմ զավակները չեն կարող ստանալ այն ամենը, ինչի կարիքն ունեն, միայն իրենց աղոթքի կյանքից. նրանք պետք է սովորեն ճանաչել և լսել Իմ ձայնը նաև իրենց առաջնորդների միջոցով»:*

Մեր գործը չէ, որ եզրահանգումներ անենք առաջնորդի որոշումների մասին կամ նույնիսկ դատենք դրանց արդյունքները, երբ ամեն ինչ ավարտված լինի: Այդ ամենը Նրա գործն է, Ով կարգել է տվյալ անձնավորությանը: Եթե Իսրայելցիներին թույլատրված լիներ դատել Մովսեսի որոշումները, ոչ ոք ուշադրություն չէր դարձնի նրա ցուցումներին, և ժողովուրդը Եգիպտոս կվերադառնար:

Թե՛ առաջնորդները, թե՛ մենք դատաստանի ենք ենթարկվելու: Առաջնորդները դատաստանի են ենթարկվելու իրենց որոշումների համար, և նրանց դատաստանն ավելի խիստ է լինելու, քան մերը: Ահա թե ինչու Հիսուսն ասաց. «Այն ամենին, որ շատ տրվեց, նրանից շատ կուզվի, և ում որ շատ պահ տրվեց, նրանից ավելին կպահանջեն» (Ղուկ. 12.48): Եվ Հակոբոսը նույնպես զգուշացրեց. «Սիրելի՛ եղբայրներ և քույրեր, ձեզնից շատերը չէ, որ պետք է ուսուցիչներ դառնան եկեղեցում, որովհետև մենք, որ սովորեցնում ենք, ավելի մեծ խստությամբ կդատվենք Աստծուց» (3.1, NLT):

Ինչ վերաբերում է մեզ, մենք կդատվենք մեր հպատակության համեմատ, որովհետև իշխանությունն Աստծուց է: Լիազորած իշխանությանը հակառակվելը նշանակում է հակառակվել Աստծո իշխանությանը: Մենք չպետք է ձգտենք նախապես զանազանել՝ արդյոք առաջնորդները ճիշտ են, թե՞ սխալ: Ո՛չ էլ պետք է դատենք նրանց որոշումների մասին՝ կատարվելուց հետո: Դա մեր բեռը չէ, այլ՝ Աստծունը. միայն Նա՛ գիտի սրտերը, և միայն Նա՛ կարող է փոխել դրանք՝ ըստ Իր ցանկության:

Առաջնորդի սիրտն Աստծո ձեռքում է

Վերադառնալով 2-րդ գլխի վկայությանը, երբ իմ հովիվը հայտարարեց եկեղեցում տնային խմբերը չեղարկելու մասին, ես ոչ միայն համոզված էի, որ նա սխալ էր, այլև համոզված էի, որ ինչ-որ մեկն ազդեցություն էր թողել նրա վրա՝ այդ որոշումն ինձ հակառակ կայացնելու համար: Կար ևս մեկ գործոն՝ կապված մեր եկեղեցու առաջնորդական թիմի հետ, որը ես չհիշատակեցի. խոսքը մեր գրասենյակի ղեկավարի մասին է: Նա չէր սիրում ինձ և միջոցներ էր ձեռնարկում՝ ինձ աշխատանքից հեռացնելու համար:

Իր ծրագիրն իրականացնելու համար, նա բաժանության պատ էր կառուցել իմ և ավագ հովվի միջև՝ յուրաքանչյուրիս մյուսի մասին վատ լուրեր փոխանցելով, որոնց մեծ մասը բացահայտ սուտ էր: Միաժամանակ, նա լուրեր էր տարածում ամբողջ աշխատակազմում, որոնք հատկապես ինձ էին թիրախավորում: Մյուս աշխատողներն ասում էին իմ կնոջը, որը նույնպես մեր աշխատակազմից էր. «Ինչո՞ւ նա բացահայտ չի ասում, որ այս ամենն ուղղված է ամուսնուդ դեմ»: Ես գիտեի, թե ինչ էր նա անում, բայց անկարող էի որևէ բան փոխել:

Երբ ավագ հովիվը չեղարկեց տնային խմբերը, ես համարեցի, որ դա հերթական հարձակումն էր իմ դեմ՝ հիմնված այն ստերի և կասկածանքների վրա, որոնք մեր գրասենյակի ղեկավարը սերմանել էր: Ես համոզված էի, որ ճշտորեն էի «զանազանում»: Առավել ևս արդարացված էի զգում ինձ և չէի ցանկանում տեղի տալ ավագ հովվի իշխանությանը: Համաձայն իմ դատողության՝ նրան մոլորության մեջ էին գցել, և նա սխալ որոշում էր կայացնում: Մի՞թե Աստված կցանկանար, որ ութ ամիս տևող քրտնաջան աշխատանքը, որը կարող էր ծառայել շատերի փրկությանը, ի չիք դառնար: Այս ամենի պատճառով էր, որ այդ հանդիպման ընթացքում ես քսան րոպե շարունակ աննահանջ կերպով հարցեր էի տալիս ավագ հովվին: Ես հեռացա՝ կարծելով, թե ճիշտ եմ և արդարացված, բայց երբ տուն հասա, հանդիմանություն ստացա Սուրբ Հոգուց: Այդ պահին խորապես գիտակցեցի հետևյալը. ես գործ ունեի ոչ թե մարդու իշխանության, այլ՝ Աստծո իշխանության հետ:

Այդ դեպքից կարճ ժամանակ անց Տերը մի խոսք բոցավառեց իմ սրտում: Այն օգնեց ինձ պարզորեն հասկանալ նմանատիպ իրավիճակները և առաջնորդություն տվեց այն դժվարին իրավիճակում, որտեղ ես էի:

> «Թագավորների սիրտը ջրի վտակների պես է Տիրոջ ձեռքում. դեպի ուր որ էլ ուզի, կդարձնի» (Առակ. 21.1):

Թագավորը խորհրդանշում է ձեզ վրա իշխանություն ունեցող մարդու: Անկախ այն բանից՝ նա առաքինի՞ է, թե՞ խիստ, նրա սիրտը Տիրոջ ձեռքում է: Այս խոսքում գրված չէ. «Բարի թագավորի սիրտը Տիրոջ ձեռքում է»: Կարևոր չէ, թե ինչպիսի ազդեցության

է նա ենթարկվում. նրա սիրտը, միևնույն է, Տիրոջ ձեռքում է: Գրված չէ. «Քանի դեռ թագավորը բացասական ազդեցության չի ենթարկվել, Տերը կարող է ուղղորդել նրա սիրտը»:

Ինչ անենք, եթե գիտենք, որ որոշումը սխալ է

Ինչ անենք, եթե մենք ոչ թե զանազանում ենք, այլ համոզված ենք, որ մեր ղեկավարը սխալ որոշում է կայացնում: Ինչ անենք, եթե հստակ ապացույց ունենք, որ մեր ղեկավարն առաջնորդվել է սխալ տեղեկությամբ: Կարո՞ղ ենք միջոցներ ձեռնարկել: Կարո՞ղ ենք ինչ-որ բան անել՝ մեր ղեկավարին օգնելու համար: Պատասխանն է՝ այո՛:

Եսթերը նման իրավիճակի լավ օրինակ է: Աբրահամի զավակները գերության մեջ էին պարսկական տիրապետության ներքո: Նենգ Համանը չար ծրագիր կազմեց. նա ազդեց Պարսից թագավոր Ասվերոսի վրա՝ դրդելով նրան հրաման ստորագրել բոլոր հրեաներին սպանելու մասին: Թագավորն անձամբ օր որոշեց դրա համար:

Եսթեր թագուհին Աբրահամի սերնդից էր, սակայն նա չէր պատմել այդ մասին՝ իր ազգական Մուրթքեի հորդորով: Այնուամենայնիվ, Մուրթքեն Եսթերի մոտ գնաց և խնդրեց նրան բարեխոսել թագավորի առջև իր ժողովրդի համար: Եսթերը հասկացավ, որ իր համար դա կարող էր մահ նշանակել. նա կարող էր ամեն ինչ կորցնել այդ պատճառով. նա թագուհի էր, և ոչ ոք չէր կարող իմանալ նրա գաղտնիքը:

Եսթերը որոշեց դիմել թագավորին: Եռօրյա ծոմապահությունից հետո նա գնաց Ասվերոս թագավորի ներքին սրահը, և Աստված դրդեց թագավորին բարեհաճորեն նայել նրան: Թագավորը հարցրեց նրա խնդրանքի մասին, և Եսթերը խնդրեց, որ թագավորը գար այն խնջույքին, որն ինքը պատրաստել էր նրա և Համանի համար: Թագավորը համաձայնեց և Համանի հետ միացավ նրա ճաշկերույթին:

Ավելի ուշ այդ երեկոյան թագավորը չկարողացավ քնել: Նա պատվիրեց իր ծառաներին ժամանակագրական մատյաններ ընթերցել իր համար: Այդ ընթերցումներից նա հիշեց, որ հրեա Մուրթքեն փրկել էր իր կյանքը, սակայն այդպես էլ չէր վարձատր-

վել: Թագավորը մտածում էր այն մասին, թե ինչպես պատվեր նրան, և խորհուրդ հարցրեց Համանից: Համանը սխալմամբ կարծեց, թե թագավորն իրեն նկատի ուներ, և այդ անհայտ մարդուն պատվելու հնարամիտ միջոց առաջարկեց: Թագավորն ասաց, որ այդ մարդը Մուրթքեն էր, և հրամայեց Համանին իր ասած կերպով պատվել նրան, ինչը մեծ տհաճություն պատճառեց Համանին: Աստված արդեն գործում էր՝ պատրաստելով թագավորի սիրտն այն խոսքերի համար, որոնք Եսթերն ասելու էր հաջորդ օրվա խնջույքին:

Երբ թագավորը և Համանը եկան Եսթերի երկրորդ խնջույքին, թագավորը կրկին հարցրեց նրա խնդրանքի մասին.

> «Եթե ես հաճելի եմ Ձերդ Մեծությանը, և եթե թագավորը ցանկանում է շնորհել ինձ իմ խնդրանքը, իմ աղաչանքն է, որ իմ կյանքը և իմ ժողովրդի կյանքը խնայվեն: Որովհետև իմ ժողովուրդը և ես վաճառվել ենք նրանց, ովքեր կարող են սպանել, մորթել և ոչնչացնել մեզ: Եթե մենք միայն վաճառվեինք որպես ստրուկներ, ես կարող էի լուռ մնալ, քանի որ դա չափազանց աննշան հարց կլիներ՝ թագավորին անհանգստացնելու համար» (Եսթեր 7.3,4, NLT):

Անհրաժեշտ է երկու բան նշել: Առաջինը՝ ակնհայտ էր, որ թագավորը զարհուրելի և չմտածված որոշում էր կայացրել, սակայն Եսթերը, միևնույն է, հարգանքով խոսեց նրա հետ՝ շարունակելով հպատակությամբ վերաբերվել նրան: Երկրորդը՝ նա փոխանցեց իր իմաստությունը մեծ խոնարհությամբ և ներկայացրեց այն թագավորի օգտի համար, ոչ թե իր: Նա խնդրանք ներկայացրեց, սակայն թույլ տվեց, որ թագավորը կայացներ վերջնական որոշումը: Նա չասաց. «Հիմա՛ր ամուսին, դու մարդասպանի ես լսել: Չե՞ս հասկանում, թե որքա՞ն բան կկորցնես քո տված հրամանով»: Նա հուսացած էր մեկ բանի՝ որ Աստված կդարձներ նրա սիրտը: Տերն իսկապես որ կործանեց այդ խորհուրդը, և թագավորը կախաղան հանեց նենգ Համանին: Հրեա ժողովուրդը փրկվեց կոտորածից:

Եսթերը հստակ ապացույցներ ուներ, ոչ թե միայն զանազանելու կարողություն, որ իր առաջնորդը տեղյակ չէր իրական փաս-

տերից: Նա խոնարհությամբ մոտեցավ նրան և այնպես ներկայացրեց իր խնդրանքը, ասես միայն թագավորն էր կարող որոշում կայացնել այդ մասին: Նա պարզապես վստահեց Սուրբ Հոգու զորությանը՝ իր տիրոջ սիրտն ուղղորդելու հարցում:

Բոլոր փաստերը չունենալը

Մենք տեսնում ենք Աստվածաշնչում ոչ միայն այնպիսի դեպքեր, երբ առաջնորդը սխալ ազդեցության է ենթարկվում, այլև՝ երբ առաջնորդը որոշում է կայացնում՝ չիմանալով բոլոր փաստերը կամ չլսելով գործի ամբողջ էությունը: Դավթի և Սավուղ թագավորի պատմությունը դրա օրինակներից մեկն է: Փղշտացի հսկան քառասուն օր շարունակ արհամարհում էր Աստծո զորքերին: Նա կոչ էր անում Իսրայելին ուղարկել մեկ մարտիկի՝ մենամարտելու համար, և որոշել պատերազմի արդյունքն այդ մեկ մենամարտով: Դավիթը տեսավ, որ բոլոր զինվորները սարսափած էին և անկարող էին արձագանքել այդ հսկայի սպառնալիքներին: Աստված դրեց նրա սրտում ընդունել այդ մարտակոչը: Սակայն Սավուղ թագավորը, նայելով նրան, ասաց. «Ո՛չ մի դեպքում: Դու ընդամենը երեխա ես, և եթե պարտվես, բոլորս այս բանակի ծառաները կդառնանք» (հեղինակի շրջասությունը):

Լսելով այդ մասին՝ Դավիթը ոչ թե վիճեց, այլ խոնարհաբար դիմեց նրան.

> «Եվ Դավիթն ասաց Սավուղին. «Ծառադ իր հոր ոչխարները արածեցնում էր, և առյուծը կամ արջը գալիս էր և հոտերից ոչխար էր տանում: Ես նրա ետևից գնում էի, նրան զարկում և նրա բերանից ազատում էի: Եվ երբ որ նա վեր էր կենում ինձ վրա, մորուքից բռնում էի, զարկում և մեռցնում: Ծառադ առյուծ էլ է մեռցրել, արջ էլ: Եվ այս անթլփատ փղշտացին էլ թող նրանցից մեկի պես լինի, որովհետև կենդանի Աստծո զորքերին նախատեց»: Եվ Դավիթն ասաց. «Տերը, որ առյուծի և արջի ձեռքից ինձ ազատեց, այս փղշտացու ձեռքից էլ կազատի»: Եվ Սավուղը Դավթին ասաց. «Գնա՛, և Տերը քեզ հետ լինի»» (Ա Թագ. 17.34-37):

Նա հարգալից կերպով ներկայացրեց այս տեղեկությունը

նրան, ով իշխանություն ուներ: Նա ներկայացրեց այն, ինչը, իր իմանալով, թագավորը չգիտեր՝ իր սկզբնական որոշումը կայացնելիս: Դրանից հետո Դավիթը վստահեց Աստծո կարողությանը՝ իր առաջնորդի սիրտը դարձնելու համար: Նա վստահեց, որ այն, ինչ Աստված դրել էր իր սրտում, կկատարվեր՝ թագավորի որոշմամբ: Խոնարհ և հպատակված մնալով՝ նա թույլ տվեց Աստծուն գործուն կերպով ներգրավված լինել: Տերը դարձրեց Սավուղի սիրտը, և նա ասաց. «Գնա՛, և Տերը քեզ հետ լինի» (Ա Թագ. 17.37):

Ճշմարիտ բարեխոսություն

Եվս մեկ սուրբգրային օրինակ առաջնորդին խնդրելու մասին այն բանից հետո, երբ նա արդեն որոշում է կայացրել, Աբիգեայի պատմությունն է: Աբիգեան ամուսնացած էր մի խիստ և չար հարուստի հետ, որի անունը Նաբաղ էր: Դավիթը պարենի կարիք ուներ, քանի որ Սավուղը շարունակում էր սպառնալ նրա կյանքին, և նա խնդրանք ուղարկեց Նաբաղին պարեն տրամադրելու մասին. նա գիտեր, որ դա տոնական շրջան էր, և Նաբաղն առատություն ուներ: Նախկինում ինքը պաշտպանել էր Նաբաղի ծառաներին և երբեք ոչինչ չէր խլել նրանից:

Նաբաղը ոչ միայն մերժեց Դավթի խնդրանքը, այլև վիրավորեց նրան: Նաբաղի արարքը սաստիկ բարկացրեց Դավթին, և նա հավաքեց իր չորս հարյուր զինվորներին՝ վրեժ առնելու համար: Նա որոշեց կործանել Նաբաղին և նրա ամբողջ ունեցվածքը:

Լուրն այդ մասին հասավ Աբիգեային՝ Նաբաղի կնոջը, և նա շտապ նվեր պատրաստեց՝ հաց, գինի, միս, ցորեն, չամիչ և թուզ: Նա գնաց Դավթի գալու ճանապարհով՝ նրա և նրա զինվորների հարձակումը կանխելու համար: Նրանց տեսնելուն պես, նա իջավ ավանակից, երեսնիվայր ընկավ Դավթի առջև և աղաչանք արեց.

> «Ո՛վ տեր իմ, հանցանքն ինձ վրա լինի: Բայց հրաման տուր, որ աղախինդ քո առջև խոսի, և քո աղախնի խոսքերը լսի՛ր: Աղաչում եմ, որ իմ տերը այս չար մարդ Նաբաղի մասին իր սրտի մեջ մի բան չդնի: Որովհետև ինչպես որ անունն է,

այնպես էլ ինքն է: Նրա անունը Նաբաղ է, և անզգամությունն իր հետ է: Բայց ես՝ քո աղախինը, իմ տիրոջ ուղարկած երիտասարդներին չտեսա: Եվ հիմա, ո՛վ տեր իմ, Տերը կենդանի է, և քո անձն էլ կենդանի է, որ Տերը քեզ չթողեց, որ արյան մեջ մտնես և քո վրեժը քո ձեռքով առնես: Եվ հիմա քո թշնամիներն ու իմ տիրոջը վատություն ուզողները Նաբաղի պես լինեն: Եվ հիմա այս ընծան, որ քո աղախինը բերեց իմ տիրոջը, թող իմ տիրոջ ետևից եկող երիտասարդներին տրվի: Աղաչո՛ւմ եմ, քո աղախնի հանցանքը ների՛ր: Որովհետև Տերը իմ տիրոջ համար անպատճառ հաստատ տուն պիտի շինի, որովհետև իմ տերը Տիրոջ պատերազմները պատերազմեց, և քո օրերում քեզ վրա մի չարություն չգտնվեց... Եվ երբ որ Տերը իմ տիրոջը բարություն անի, այն ժամանակ քո աղախնին հիշես» (Ա Թագ. 25.24-31):

Թույլ տվեք կետ առ կետ ցույց տալ այն ամենը, ինչ այս կինն արեց իր ամուսնու, իր տանը ապրող բոլոր մարդկանց և Դավթի համար.

1. Նա դիմեց Դավթին մեծ հարգանքով՝ շարունակ ներկայացնելով իրեն որպես նրա աղախինը:
2. Նա առատաձեռն նվեր բերեց Դավթի և նրա զինվորների համար՝ ցույց տալով իր հոգատարությունը նրանց բարօրության մասին:
3. Նա բարեխոսեց իր տան համար՝ իր վրա վերցնելով տեղի ունեցածի պատասխանատվությունը: Իրականում, նա անվանեց տեղի ունեցածն իր «հանցանքը»:
4. Նա վախով ու դողով ցույց տվեց Դավթին, որ նման արյունահեղություն գործելը մեղք կլինի նրա համար:
5. Նա հիշեցրեց Դավթին, որ Աստված էր, որ վրեժխնդիր էր լինում նրա համար և կատարում էր նրան տված խոստումները:
6. Նա խնդրեց Դավթին հիշել իրեն, երբ առաջխաղացում ունենար:

Գուցե հարցնեք. «Ինչ կերպով այս կինը պատվեց իր ամուսնուն»: Նա փրկեց նրան մահից: Նրա ամուսինը մեղանչել էր այդ

զինվորների և Տիրոջ օծյալի դեմ: Նրա վարքն արդարացնելը կնշանակեր ավելի դրդել Դավթին վրիժառության: Նա կբորբոքեր կրակը և կմոտեցներ իր ամուսնու կործանումը: Ինչ օգուտ մակերեսորեն պատվելուց, որն ավարտվելու էր նրա ամուսնու մահով:

Եթե նա իրականում անարգեր Նաբաղին, կասեր. «Ես կհեռանամ այստեղից, և թող իմ ամուսինը ստանա այն, ինչին արժանի է, քանի որ նա ստոր է»: Կամ՝ նա կգնար Դավթի մոտ և կասեր. «Ես որևէ կապ չունեմ այս ամենի հետ: Ես կտայի քեզ այն, ինչ հարկավոր էր: Երբ լսեցի, թե ինչ էր արել իմ անխոհեմ ամուսինը, ես կերակուր բերեցի քեզ և քո զինվորներին, բայց դու պետք է սպանես նրան, ինչպես որոշել ես, որովհետև նա ստոր և սրիկա է: Նա արժանի է այն ամենին, ինչ որ կանես նրան»: Նա կանարգեր իր ամուսնուն, եթե այսպես վարվեր:

Բարեխոսությունն ինչ-որ մեկի համար չի նշանակում, որ դուք անտեսում եք նրա հանցանքը: Ընդհակառակը, դուք ընդունում եք այն: Եվ դուք կանգնում եք այդ մարդու և դատաստանի միջև: Ըստ էության, դուք ասում եք. «Գիտեմ, որ նա արժանի է դատաստանի, բայց ես ողորմություն եմ խնդրում: Ես ինձ վրա կվերցնեմ նրա արարքը և կներկայանամ նրա փոխարեն»:

Աբիգեան հենց այսպես վարվեց: Դավիթը գալիս էր՝ դատաստան բերելու, իսկ Աբիգեան եկավ՝ ողորմություն խնդրելու: Նրա խոսքերը հետևյալն էին. «Աղաչում եմ, քո աղախնի հանցանքը ներիր»:

Նա այսպես խոսեց, որպեսզի թույլ չտար Դավթին մեղք գործել՝ ինքն իր համար վրեժ լուծելով: Աստծո Խոսքը պատվիրում է. «Վրեժ չառնես և քո ժողովրդի որդիներից ոխ չպահես» (Ղևտ. 19.18): Նա ողորմություն էր խնդրում՝ խրամատում կանգնելով, և նա ձգտում էր արդարության՝ Դավթի համար:

Աբիգեան չէր բամբասում իր հարևանների կամ ընկերուհիների մոտ. «Ես սրիկայի հետ եմ ամուսնացել: Նա ամենավատ մարդն է, որին ճանաչում եմ»: Ո՛չ էլ պատմում էր Դավթին իր ամուսնու մասին քինախնդրությամբ, բարկությամբ, խորշանքով, անարգանքով կամ վրիժառությամբ: Նա ձայն էր բարձրացնում՝ կյանքեր փրկելու համար: Ահա և նրա բարեխոսության արդյունքը.

«Եվ Դավիթն ասաց Աբիգեային. «Օրհնյա՛լ լինի Իսրայելի Տեր Աստվածը, որ այսօր քեզ ուղարկեց ինձ դիմավորելու: Եվ օրհնյալ է քո խոհեմությունը, և օրհնյալ ես դու, որ այսօր ինձ արգելեցիր արյան մեջ մտնելուց, և որ իմ ձեռքն ինձ օգներ: Բայց կենդանի է Իսրայելի Տեր Աստվածը, որ ինձ արգելեց քեզ չարություն անելուց, որ եթե դու շուտով չգայիր և առջևս չելնեիր, մինչև վաղն առավոտ Նաբաղի մեկ արու մարդ չէր մնա»: Եվ Դավիթը նրա ձեռքից առավ՝ ինչ որ բերել էր նրա համար, և նրան ասաց. «Խաղաղությամբ տունդ գնա՛. ահա՛ խոսքդ լսեցի և քո խնդրանքն ընդունեցի»» (Ա Թագ. 25.32-35):

Երբ Աբիգեան տուն վերադարձավ, նրա ամուսինը մեծ խնջույք էր անում: Նա նույնիսկ գաղափար չուներ, թե ինչից էր խուսափել: Աբիգեան որոշեց ոչինչ չասել նրան այդ երեկո: Հաջորդ առավոտյան Աբիգեան պատմեց, թե ինչպես էր փրկել նրա կյանքը: Երբ Նաբաղը լսեց այդ մասին, նրա սիրտը քար դարձավ: Տասն օր անց Տերը սպանեց Նաբաղին: Ոչ թե Դավթի կամ Աբիգեայի ձեռքը վրեժ առավ այդ չար մարդուց, այլ՝ Աստծո ձեռքը:

Հանուն առաջնորդի

Մովսեսը հայտնվեց այնպիսի վիճակում, որ հարկադրված էր վիճարկել իր Առաջնորդի՝ Աստծո որոշումները: Դա տեղի ունեցավ ավելի քան մեկ անգամ: Դիտարկենք առաջին դեպքը: Իսրայելը մեղանչեց. ժողովուրդը ոսկե հորթ ձուլեց և երկրպագեց: Աստված սաստիկ բարկացավ: Նա ասաց Մովսեսին, որ սպանելու է բոլորին և մի ազգ է ստեղծելու Մովսեսից: Լսե՛ք Մովսեսի աղաչանքը.

> «Եվ Մովսեսն իր Տեր Աստծո առջև աղաչեց և ասաց. «Ո՛վ Տեր, ինչո՞ւ Քո բարկությունը բորբոքվի Քո ժողովրդի վրա, որ Եգիպտոսի երկրից հանեցիր մեծ զորությամբ և զորավոր ձեռքով: Ինչո՞ւ համար եգիպտացիները խոսեն և ասեն, թե՝ չարության համար հանեց նրանց, որ սարերում մեռցնի և երկրի երեսից փչացնի: Դարձի՛ր Քո սաստիկ բարկությունից, և ե՛տ առ այս չարիքը Քո ժողովրդի վրայից: Հիշի՛ր քո ծառաներ Աբրահամին, Իսահակին և Իսրայելին, որոնց Դու երդում արեցիր Քո Անձով և ասացիր՝ ձեր սերունդը

երկնքի աստղերի պես պիտի շատացնեմ, և ամբողջ այս երկիրը, որի մասին խոսեցի, ձեր սերնդին պիտի տամ, ու պիտի ժառանգեն հավիտյան»» (Ելից 32.11-13):

Անհրաժեշտ է նշել մի քանի բան: Առաջինը՝ Մովսեսը խոսեց կատարյալ հպատակությամբ, նաև ահով ու դողով: Երկրորդը՝ Մովսեսը ջերմեռանդորեն աղաչեց կամ խնդրեց Աստծուն. նա ոչ մի դեպքում չհրամայեց: Երրորդը՝ նախևառաջ, Նա խոսեց՝ ելնելով Աստծո շահերից, ոչ թե ժողովրդի: Ըստ էության, Մովսեսն ասաց հետևյալը. «Ինչ կլինի Քո համբավին, որը հաստատելու համար Դու չորս հարյուր տարի գործեցիր: Այժմ Քո անունը հայտնի է աշխարհով մեկ, բայց Դու կարատավորես այն, եթե չկարողանաս ավարտել Քո սկսած գործը»: Քանի որ Մովսեսն արեց դա առաջին հերթին Տիրոջ համար, նա կարող էր վիճարկել Տիրոջ որոշումը: Նրա շարժառիթի հիմքում ոչ թե ինքն էր, այլ՝ ուրիշները:

Մենք պետք է հարցնենք մեզ, մինչև առաջնորդին որևէ խնդրանք ուղղելը. «Առաջին հերթին, ո՞ւմ համար եմ ես ներկայացնում այս խնդրանքը»: Նույնիսկ երբ Մովսեսը հիշեցրեց Աստծուն այն խոստումը, որը տվել էր Աբրահամին, նա, միևնույն է, արեց դա առաջին հերթին Տիրոջ համար: Նա հիշեցրեց Աստծուն Նրա Խոսքի կարևորության մասին: Մովսեսը ճիշտ շեշտադրում ուներ, քանի որ նրա սիրտը ճիշտ դիրքում էր: Նա Աստծո ծառան էր և առաջին հերթին մտածում էր Աստծո մասին, մինչև իր կամ Իսրայելի զավակների մասին մտածելը: Աստծո պատասխանը հետևյալն էր. «Եվ Տերը ետ առավ այն չարիքը, որ ասել էր, թե Իր ժողովրդին պիտի աներ» (Ելից 32.14):

Աստված մտափոխվեց: Նրա որոշումը ետ առնվեց: Ես ուզում եմ մեկ այլ կարևոր պնդում անել: Մովսեսը կարող էր խոսել Աստծո հետ անմիջականորեն, քանի որ նա քանիցս ապացուցել էր իր հավատարմությունը: Եթե վերագրենք այս սկզբունքը մեր օրերին, գոյություն ունի «Մեսինջեր ինտերնեյշնլ» ծառայության թիմ, որը տարիներ շարունակ հավատարմորեն ծառայել է Լիզային և ինձ: Նրանք ավելի մեծ բարեհաճություն ունեն մեր առջև և կարող են ավելի արագ ստանալ մեզնից իրենց խնդրանքները, քան մարդիկ, որոնք նոր են սկսել աշխատել մեզ հետ: Դուք պետք է վաստակեք ձեր առաջնորդի կյանքում խոսելու իրավունքը: Դուք կարող եք անել դա՝ նվիրված, անկեղծ և հավատարիմ լինելով: Ամեն մեկը

չէ, որ կարող է այս կերպով խոսել առաջնորդի կյանքում:

Եվս մեկ կարևոր պնդում. Մովսեսը չխոսեց Աստծո որոշման մասին այլ մարդկանց հետ. նա խոսեց Աստծո հետ Նրա որոշման մասին: Տերը շարունակ բարկանում էր Իսրայելի զավակների վրա, քանի որ նրանք անդադար դժգոհում էին՝ խոսելով միմյանց հետ այն մասին, որ համաձայն չէին Նրա ճանապարհների հետ: Սա նաև տրտունջ է կոչվում, և Աստված ատում է այն: Այս վարքագիծը խիստ վտանգավոր է, և դրանից ամեն գնով պետք է խուսափել: Երբ մենք դժգոհում ենք՝ խոսելով միմյանց հետ, և տրտնջում ենք այն որոշումներից, որոնք կայացրել են մեր ղեկավարները, մենք անհամերաշխություն և ապստամբություն ենք ցանում: Հաջորդ գլուխներից մեկում կտեսնենք, որ դա մշտապես դատաստան է բերում:

Ես պայմանավորվածություն ունեմ իմ աշխատողների հետ: Եթե որևէ որոշում եմ կայացնում, որը, նրանց համոզմամբ, անիրազեկ է, նրանք կարող են դիմել ինձ մեկ անգամ, իսկ եթե ի հայտ գան նոր փաստեր, որոնք կարող են օգնել այդ հարցում, կարող են կրկին դիմել ինձ: Երբ նրանք դիմում են, կարևոր է, որ լրջորեն ձևակերպեն իրենց ասելիքը և այնպես ներկայացնեն, որ այն հասկանալի լինի ինձ: Ես հաճախ եմ փոխել իմ որոշումները, երբ նոր տեղեկություն եմ ստացել: Այնուամենայնիվ, եթե իմ աշխատողները դիմում են ինձ, իսկ ես վճռում եմ անփոփոխ թողնել իմ սկզբնական որոշումը, մենք շարունակում ենք համերաշխ աշխատել: Եթե մենք միաբան շարունակենք մեր աշխատանքը, և պարզվի, որ ես սխալ եմ եղել, Աստված կպաշտպանի մեզ: Նա կպաշտպանի թե՛ ինձ, թե՛ նրանց, ովքեր իմ ենթակայության ներքո են, եթե մենք անկեղծ սրտով ենք վարվել: Դավիթն ասաց. «Թող անարատությունն ու ուղղությունը պահեն ինձ, որովհետև Քեզ եմ սպասում» (Սաղմ. 25.21):

Ինչ անել, եթե Աստված այլ բան է ցույց տվել

Հաջորդ հարցը կարող է լինել. «Ինչ անեմ, եթե իմ ղեկավարի խոսքերը հակառակ են այն ցուցումներին, որոնք ես, իմ համոզմամբ, ստացել եմ աղոթքի մեջ»: Սա լավ հարց է, որին մենք

պետք է անդրադառնանք: Պատասխանելու համար, թույլ տվեք վերադառնալ այն օրինակին, որը բերեցի երկրորդ գլխում: Մինչև մեր «երեկույթների» ծրագիրը սկսելը, աղոթքի մեջ ջանասիրաբար փնտրում էի Տիրոջը և համոզված էի, որ Նա էր հանձնարարել ինձ անել դա: Մինչև օրս ես լիովին համոզված եմ, որ Նա էր պատվիրել ինձ իրականացնել այդ տնային խմբերի ծրագիրը, քանի որ, ինչպես պարզվեց, ամբողջ այդ ժամանակահատվածում Աստված ստուգում էր ինձ՝ տեսնելու համար, թե արդյո՞ք կինազանդվեի այն առաջնորդին, որին Նա կարգել էր ինձ վրա:

Աստվածաշունչը լի է օրինակներով այն մասին, որ Աստված փորձում է Իր ժողովրդին: Երբ Աստված պատվիրեց Աբրահամին զոհաբերել Իսահակին՝ նրան ողջակեզ անելով, Աստվածաշունչը հատուկ նշում է, որ «Աստված փորձեց Աբրահամին» (Ծնն. 22.1): Տերը ոչ մի դեպքում չէր նախատեսել, որ Աբրահամը սպաներ իր որդուն, սակայն Նա թույլ տվեց, որ Աբրահամը երեք օրվա ճանապարհ գնար դեպի սարը, և չկանգնեցրեց նրան, քանի դեռ չէր բարձրացրել իր դանակը: Աստված տեսավ Աբրահամի անսասան հավատարմությունը՝ նրա հնազանդությամբ դրդված արարքներում: Արդյո՞ք Նա այսօր տեսնում է նույնը մեր կյանքում:

Պողոս առաքյալն իր առաջին նամակում մի հանձնարարություն տվեց Կորնթոսի եկեղեցուն, իսկ հետո փոխեց այն երկրորդում: Հենց որ փոխեց իր հանձնարարությունը այդ եկեղեցուն, մի ակնառու պնդում արեց.

> «Որովհետև սա էր ձեզ գրելու իմ նպատակը՝ ստուգել ձեր վերաբերմունքը և տեսնել, թե արդյո՞ք կանցնեիք այդ ստուգումը, արդյո՞ք հնազանդ կլինեիք և լիովին պատրաստակամ կլինեիք [հետևելու իմ պատվերներին] ամեն ինչում» (Բ Կորնթ. 2.9, AMP):

Պողոսը տվեց նրանց այդ հանձնարարությունները մեկ նպատակով՝ տեսնելու համար, թե արդյո՞ք նրանք կինազանդվեին իր իշխանությանը: Ես շատ իմաստուն ընկեր ունեմ, որը տարիներ շարունակ հովիվ է եղել: Նա պատմում էր ինձ, որ բացահայտում է անհնազանդությունը իր աշխատողների միջև՝ նրանց անիմաստ թվացող հրահանգներ տալով: Նա ասաց.

- Ջո՛ն, կարճ ժամանակ անց ես լսում եմ ապստամբների տրտունջն ու գանգատները: Ես լուծում եմ այդ խնդիրը, այնուհետև փոխում եմ իմ հանձնարարությունները՝ սովորական աշխատանքային ընթացքի անցնելով:

Պողոսը հանձնարարություն տվեց՝ տեսնելու համար, թե արդյո՞ք նրանք կհետևեին իր պատվերներին *ամեն ինչում:* Բանալին այս պնդման մեջ *«ամեն ինչումն»* է: Նրա հանձնարարությունը դժվար էր, և դա նույնպես հատուկ նպատակ էր հետապնդում: Այդ նպատակը հետևյալն էր. եթե կատարեին այդ հանձնարարությունը, նրանք կկատարեին ցանկացած այլ հանձնարարություն:

Աստված հենց այդպես վարվեց Աբրահամի հետ: Նա գտավ ամենադժվար բանը, որում Աբրահամը կարող էր հպատակվել. նա պետք է հրաժարվեր այն բանից, ինչն ամենաթանկն էր իր կյանքում՝ այն խոստումից, որին նա սպասել էր քսանհինգ տարի: Դա Աբրահամի նախաձեռնությունը չէր. Աստված էր տվել նրան այդ խոստումը՝ աղոթքի մեջ: Աբրահամի համար ավելի հեշտ կլիներ իր անձը դնել այդ զոհասեղանին, բայց Աստված ցանկանում էր ամենակարևորը: Եթե Աբրահամը հնազանդվեր այդ հարցում, նա կհնազանդվեր ամեն ինչում:

Իմ ավագ հովիվը հանձնարարեց ինձ թողնել այն, ինչն ամենադժվարն էր ինձ համար: Ես ամիսներ շարունակ աշխատել էի այդ ծրագրի վրա, և բոլորը գիտեին այդ մասին: Իմ ընկալմամբ, դա խոստում էր այն մասին, որ կորսվածներն Աստծո թագավորություն էին գալու: Դա հաջողված երիտասարդական ծառայություն ունենալու իմ ցուցանիշն էր: Իմ համբավը խաղաքարտին էր դրված, քանի որ ես ասել էի բոլորին, որ դա Աստծո կամքն էր: Եվ լսել էի մարդկանցից, որ պետք է աղոթքով շարունակեի կատարել այդ ծրագիրը: Ես չգիտեի, որ դա ստուգում էր, և հաճախ Աստծո ստուգումներն անճանաչելի են մինչև ավարտվելը, քանի որ դրանք մշտապես բացահայտում են, թե ինչ կա մեր սրտում:

Հնարավոր է, որ իմ երեկույթները շատերին բերեին Աստծո թագավորության մեջ, բայց Աստված ավելի մտահոգված է Իր իշխանությունը մեր սրտերում հաստատելով, քան Իր աշխատանքը կատարելու մեր մեթոդներով: Նա Աստված է. Նա շատ այլ թարմ գաղափարներ ունի՝ կորսվածներին հասնելու համար: Բայց կա

մի անփոխարինելի բան՝ մարդու սրտի հպատակությունը, քանի որ առանց դրա մարդը չի կարող մուտք գործել Աստծո թագավորություն: Ոչինչ չի կարող փոխարինել հպատակված սրտին:

Մենք պետք է դրոշմենք մեր սրտերում մի շատ կարևոր և դժվարին սկզբունք: Երբ Աստված լիազորում է Իր իշխանությունը մարդկանց, Նա չի ոտնահարում այն: Միակ բացառությունն այն է, երբ առաջնորդն ուղղակիորեն խախտում է Աստծո գրված Խոսքը կամ օրենքները: Աստված չի անտեսում այն լիազորած իշխանությունը, որն Ինքն է կարգել: Մենք չենք կարող շրջանցել լիազորած իշխանությունը և հայտարարել, որ ենթակա ենք միայն Աստծո իշխանությանը: Մովսեսը խոսեց այս սկզբունքի մասին Իսրայելի ցեղերի իշխանների հետ:

> «Ահա թե ինչ է պատվիրում Տերը... «Երբ երիտասարդ կինը, որը դեռ ապրում է իր հոր տանը, ուխտ անի Տիրոջը կամ պարտավորեցնի իրեն որևէ երդմամբ, և նրա հայրը լսի նրա ուխտի կամ երդման մասին, բայց ոչինչ չասի, նրա բոլոր ուխտերը և յուրաքանչյուր երդում, որով նա պարտավորեցրել է իրեն, կմնան: *Բայց եթե նրա հայրն արգելի նրան, երբ լսի այդ մասին, նրա ուխտերից ոչ մեկը և ոչ մի երդում, որով նա պարտավորեցրել է իրեն, չի մնա. Տերը թողություն կտա նրան, որովհետև նրա հայրն արգելել է նրան»*»» (Թվոց 30.1-5, NIV):

Մովսեսը շարունակեց խոսել այս սկզբունքի մասին՝ կիրառելով այն ամուսնացած կնոջ և նրա ամուսնու վերաբերյալ: Աստված՝ գերագույն կամ անմիջական իշխանությունը, հաստատում է այն, ինչին լիազորած իշխանությունը համաձայնել է: Նա նույնպես չեղարկում է այն, ինչը լիազորած իշխանությունը չեղարկել է: Տերը հարգանքով է վերաբերվում Իր լիազորած իշխանությանը: Քանի որ երիտասարդ կինն իր հոր իշխանության ներքո է, և ամուսնացած կինն իր ամուսնու իշխանության ներքո է, Աստված գործ կունենա հոր կամ ամուսնու հետ, բայց թողություն կտա այդ կանանց:

Այս սկզբունքը կարելի է տեսնել ամբողջ Սուրբ գրքում՝ ոչ միայն ընտանիքում, այլև լիազորած իշխանության մյուս ոլորտնե-

րում: Կրկին, ուզում եմ շեշտադրել, որ կա բացառություն՝ երբ իշխանությունը Աստծո պատվիրաններին ուղղակիորեն հակասող բան է հանձնարարում մեզ: Ես տրտմում եմ, երբ լսում եմ ծառայության մեջ գտնվող մարդկանցից. «Իմ հովիվը հանձնարարեց ինձ այսինչ բանն անել, բայց նա չի լսում Աստծուց: Այնպես որ, ես կանեմ նրա ասածը, բայց՝ զարտուղի միջոցներ օգտագործելով»: Կարևոր չէ, թե ձեր համոզմամբ, ինչ եք լսել աղոթքի մեջ. դուք ապստամբում եք Աստծո իշխանության դեմ, եթե ձեր գործողությունները հակառակ են ձեր կյանքում կարգված առաջնորդների ցուցումներին:

Ես կարող էի անթիվ օրինակներ բերել այս մասին: Այնուամենայնիվ, բացահայտել եմ, որ երբ հայտնության գիտելիքը վառվում է մեր սրտերում, շատ հարցեր պատասխանվում են, և բազմաթիվ խնդիրներ լուծվում են: Այս գիրքը չի կարող օրինակների և բացատրությունների սպառիչ ձեռնարկ լինել: Մեր նպատակն է հայտնություն ստանալ իշխանության մասին, այսինքն՝ հայտնություն անձամբ Աստծո մասին, քանի որ Նա և Նրա իշխանությունը անբաժանելի են: Ինչպես որ խրախուսեցի ձեզ ներածության մեջ, այս գիրքն ընթերցելիս ջանասիրաբար փնտրեք Աստծուն և խնդրեք բոցավառել աստվածապաշտ հպատակության սկզբունքը ձեր սրտում: Հակառակ դեպքում, դուք ավելի շատ հարցեր կունենաք, քան՝ երբ նոր սկսեցիք ընթերցել գիրքը:

Հաջորդ գլխում կխոսենք այն մասին, թե ինչպես վարվել անարդար վերաբերմունքի դեպքում և ինչպես արձագանքել այն առաջնորդներին, որոնք խստորեն են վարվում մեզ հետ: Մենք կտեսնենք, որ Աստված փառավոր ծրագիր ունի մեզ համար այդ իրավիճակներում:

ԳԼՈՒԽ 13

ԱՆԱՐԴԱՐ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ

Կոտրված լինելը չի նշանակում թույլ լինել: Այլ նշանակում է հպատակված լինել իշխանությանը:

Մեր Հայր Աստված ունի մի հստակ նպատակ, որը ցանկանում է իրականացնել յուրաքանչյուրի կյանքում: Թույլ տվեք զգուշացնել ձեզ. գուցե այն հաճելի, ընդունված և անցավ չէ, բայց լավագույնն է մեզ համար: Նա ցանկանում է կոտրել մեզ: Աստվածաշունչը պարզորեն խոսում է այս մասին.

«Որովհետև Դու պատարագ չես ուզում. եթե ոչ, ես
կտայի Քեզ:
Եվ ողջակեզներին չես հավանում:
Աստծո ընդունելի պատարագները կոտրված հոգին է.
կոտրված ու փշրված սիրտը
Դու չես անարգի, ո՛վ Աստված» (Սաղմ. 51.16,17):

«Տերը մոտիկ է սրտով կոտրվածներին
Եվ փրկում է հոգով փշրվածներին» (Սաղմ. 34.18):

Տիրոջ հետ մտերմության նախապայմանը կոտրված սիրտն է: Թեև կոտրման գործընթացը հաճելի չէ, Նրա ներկայությու-

նը մտերմորեն ճանաչելը գերակշռում է այդ գործընթացի հետ առնչվող դժվարությունները: Դավիթը սովորեց դա երիտասարդ տարիքում: Նրա սաղմոսների միջոցով դուք կարող եք տեսնել Դավթի կոտրված սիրտը և դրա արդյունքները: Մենք հասնում ենք այս վիճակին ոչ թե անձնազոհ կյանքի կամ զոհաբերությունների միջոցով, այլ՝ հնազանդության:

Կոտրվածությունը վերաբերում է իշխանությանը

Թույլ տվեք պատկերել սա մի օրինակով: Մարտական ձին հարմար չէ ծառայության համար, քանի դեռ նրա կամքը կոտրված չէ: Թեև նա կարող է ավելի ուժեղ, արագ և օժտված լինել, քան ախոռում կանգնած մյուս ձիերը, նա չի կարող ծառայել, քանի դեռ չի կոտրվել: Նա ախոռում կմնա, մինչ ավելի պակաս օժտված ձիերը պատերազմի կգնան: Կոտրված լինելը չի նշանակում թույլ լինել, այլ՝ հպատակված լինել իշխանությանը:

Մարտական ձիու պարագայում, նրա տերը հեծյալն է: Եթե ձին բարեհաջող կերպով կոտրվում և վարժվում է, նրան կարելի է վստահել ցանկացած իրավիճակում: Կռվի ամենաթեժ պահին, երբ սլանում են փամփուշտները կամ նետերը, նա ետ չի քաշվի: Երբ լսվեն թրերի և կացինների շաչյունները, նա չի նահանջի: Երբ բարձրանան հրացանները և կրակեն թնդանոթները, նա չի շեղվի իր տիրոջ կամքից: Նա հաստատուն կերպով հպատակված կմնա իր տիրոջը՝ անկախ այն բանից, թե ով է նա: Նա կշրջանցի իրեն պաշտպանելու կամ իր շահը որոնելու ցանկացած փորձ, որպեսզի կատարի իր հեծյալի հրամանները:

Այս կոտրման գործընթացը եզակի ձևով է կատարվում յուրաքանչյուրի կյանքում՝ Անձամբ Տիրոջ կարգադրությամբ: Նա Միակն է, որ գիտի, թե երբ է այդ գործընթացը լիովին ավարտված, և երբ եք դուք պատրաստ այն ծառայության համար, որը Նա ցանկանում է կատարել ձեր միջոցով: Յուրաքանչյուր նոր մակարդակի համար անհրաժեշտ է կոտրման ևս մեկ շրջան:

Ես լավ եմ հիշում այն գործընթացները, որոնցով անցնում էի: Չափազանց հաճախ էի կարծում, թե արդեն պատրաստ էի և պիտանի էի ծառայության հաջորդ փուլի համար՝ շատ ավելի վաղ, քան իրականում այդպես էր: Ես վստահաբար հայտարարում էի.

«Ես լիովին հպատակված եմ Քո իշխանությանը: Ես գիտեմ, որ պատրաստ եմ այն ծառայության համար, որին Դու կանչել ես»: Այնուամենայնիվ, իմ շուրջը գտնվող հասուն հավատացյալները գիտեին, որ ես շատ հեռու էի կոտրված լինելուց: Եվ, իհարկե, ես ևս մեկ շրջան էի անցնում, որտեղ ոտքերով հրում էի, գալարվում էի և պայքարում էի իմ իրավունքների համար:

Ինչ անել խիստ առաջնորդների դեպքում

Ինչպես ձիերի դեպքում, մեր կոտրման գործընթացն առնչվում է իշխանության հանդեպ մեր արձագանքին: Աստված հարմարեցնում է այս գերազանց գործընթացը յուրաքանչյուրիս, և դրանում մշտապես ներգրավված է ինչ-որ տեսակի իշխանություն:

> «Ուրեմն, հպատակվե՛ք ամեն մարդկային կարգի՝ Տիրոջ համար... Ծառանե՛ր, հպատակվե՛ք ձեր տերերին ամեն վախով, ոչ միայն բարիներին և հեզերին, այլև խստերին» (Ա Պետր. 2.13,18, NKJV):

Դիտարկենք սա ժամանակակից տեսանկյունից: Ծառաներին կարելի է անվանել աշխատողներ, աշակերտներ, եկեղեցու անդամներ կամ քաղաքացիականներ: Տերերը կարող են լինել գործատուները, ուսուցիչները, մարզիչները, եկեղեցական կամ պետական առաջնորդները: Մենք մեծ մասամբ բարի և հեզ ղեկավարներ ենք ունեցել և սիրել ենք նրանց: Նրանց հեշտ էր հպատակվելը: Այնուամենայնիվ, Աստված պատվիրում է մեզ հպատակվել ոչ միայն բարիներին և հեզերին, այլև խստերին:

«Խիստ» բառը թարգմանված է հունարեն *«սկոլիոս»* բառից: «Թայերի հունարեն բառարանը» սահմանում է այս բառը որպես «անազնիվ, այլասերված, չար, անարդար և այլն»: «Վայնի բառարանը» սահմանում է այս բառը որպես «բռնակալ կամ անարդար տերերին վերաբերող»: Մի՞թե Տերը պատվիրում է մեզ հպատակվել նման առաջնորդների:

Դիտարկենք մի քանի այլ թարգմանություններ: «Նոր դար թարգմանության» մեջ գրված է. «Ոչ միայն նրանց, որոնք լավ և բարի են, այլև նրանց, որոնք խարդախ են» (NCV): «Ժամանակակից անգլերեն թարգմանությունը» գրում է. «Այսպե՛ս վարվեք, ոչ

միայն նրանց հանդեպ, որոնք բարի և հոգատար են, այլև նրանց հանդեպ, որոնք դաժան են» (CEV): «Նոր ամերիկյան ստանդարտ Աստվածաշնչում» գրված է. «Ոչ միայն նրանց, ովքեր բարի և հեզ են, այլև նրանց, որոնք անողջամիտ են» (NASB): Մենք չենք կարող անտեսել այս պատվիրանը. այնպես որ, փորձենք հասկանալ դրա հիմքում գտնվող Աստծո իմաստությունը:

Իրականում, Պետրոսի խոսքերը ավելի անհարմարավետ են դառնում, մինչև որ մենք թեթևություն ենք տեսնում դրանցում: Նա շարունակում է. «Դուք հաճելի եք Աստծուն, երբ, հանուն ձեր խղճի, համբերատար կերպով *անարդար վերաբերմունք* եք կրում» (Ա Պետր. 2.19, NLT):

Մի պահ կանգ առեք և մտածեք այն մասին, ինչ հենց նոր կարդացիք: Բոլորս ենք ցանկանում հաճեցնել Աստծուն. դա յուրաքանչյուրի ձգտումն է, ով ճշմարտապես Նրա որդին կամ դուստրն է: Ինչն է հաճելի մեր Հորը. երբ մեր հանդեպ անարդար են վարվում, իսկ մենք ճիշտ կերպով ենք արձագանքում:

Ես հիշում եմ մի դեպք, որը տեղի ունեցավ իմ կնոջ և իմ ավագ որդիներից մեկի հետ: Նրան թվաց, թե իր եղբայրը ստացավ ավելին, քան ինքը, և որ այդ վերաբերմունքն անարդար էր: Նա բողոքեց.

- Մայրիկ, սա անարդա՛ր է:

- Որդի՛ս, կյանքն է անարդար,- հանգիստ պատասխանեց կինս:

Նա այնպես նայեց նրան, ասես ասում էր. «Ինչպե՞ս կարող ես նման բան ասել: Դու իմ մա՛յրն ես»:

Լիզան հարցրեց.

- Իսկ արդա՞ր էր, որ Հիսուսը կրեց մեր պատիժը և մահացավ խաչի վրա, թեև Նա ոչ մի վատ բան չէր արել:

Որդուս աչքերից երևաց, որ նա հասկացավ կնոջս խոսքերի իմաստությունը, և նա լռեց:

Քրիստոսի անձնական օրինակը

Պետրոսը շարունակեց. «Որովհետև *դուք* հենց այդ բանի մեջ *կանչվեցիք»:* Ամեն անգամ, երբ սովորեցնում եմ այս խոսքը, ես

սովորաբար խնդրում եմ մարդկանց ինձ նայել և խանդավառությամբ ասում եմ. «Բոլորդ ասեք՝ սա՛ է իմ կոչումը»: Մենք միշտ խոսում ենք մեր կյանքի կոչման մասին: Սա մեր կոչումներից մեկն է: Ահա թե ինչ է ասում Պետրոսը. «Որովհետև հենց սրան էիք դուք կանչված [սա անբաժանելի է ձեր կոչումից]: Որովհետև Քրիստոսն էլ չարչարվեց ձեզ համար՝ թողնելով ձեզ [Իր անձնական] օրինակը, որպեսզի դուք Նրա հետքերով գնաք» (Ա Պետր. 2.21, AMPC):

Ինչպե՞ս Նա չարչարվեց: Պետրոսը բացատրեց նախորդ խոսքում. Նա չարչարվեց լիազորած իշխանություն ունեցող մարդկանց անարդար վերաբերմունքի պատճառով: Երբեմն Աստված այնպիսի իրավիճակներով է անցկացնում, որոնցում մենք անողջամիտ վերաբերմունք ենք ստանում առաջնորդներից, ինչպես որ արեց Դավթի, Հովսեփի, Դանիելի, Պողոս առաքյալի և մյուսների կյանքում: Մեր կոչումը ճիշտ կերպով արձագանքելն է, և Հիսուսը թողեց մեզ Իր անձնական օրինակը՝ ցույց տալով, թե ինչպես անել դա:

Գուցե այս պահին հարցնեք. «Ի՞նչ բարի արդյունք կարող է լինել առաջնորդների խիստ վերաբերմունքին դիմանալուց»: Այս գաղափարը հակառակվում է մեր բնական մտքին, քանի որ դրա տրամաբանությունն անհեթեթ է թվում: Այնուամենայնիվ, Աստծո իմաստությունը հպատակված սիրտ է ձևավորում անարդար վերաբերմունքի միջոցով՝ երեք կերպերով: Առաջինը՝ այն տեղ է տալիս Աստծո արդար դատաստանի համար: Երկրորդը՝ այն զարգացնում է մեզանում Քրիստոսի բնավորությունը: Երրորդը՝ մեր հպատակությունը նման վերաբերմունքի դեպքում փառավորում է Աստծուն:

Պողոսն օգտագործեց հետևյալ նախաբանը, մինչև խոսելը բարձր իշխանություններին հնազանդվելու մասին. «Ձեր անձերի համար վրեժխնդրություն մի՛ արեք, սիրելինե՛ր: Այլ բարկության տեղ տվեք, որովհետև գրված է. «Վրեժխնդրությունն Ի՛մն է. Ես հատուցումը կտամ,- ասում է Տերը»» (Հռոմ. 12.19): Պաշտպանությունը, շտկումը, արդարացումը կամ ցանկացած այլ պատշաճ արձագանք պետք է գա Աստծո ձեռքից, ոչ թե մարդուց: Այն մարդը, որն արդարացնում է իրեն, չունի Քրիստոսի խոնարհությունը:

Ոչ ոք այս աշխարհում չունի ավելի մեծ իշխանություն, քան Հիսուսը, սակայն Նա ոչ մի անգամ չպաշտպանեց Իրեն իշխանութ-

յունների առջև: Անդրադառնանք հենց այն դեպքին, որը նկատի ուներ Պետրոսը՝ Հիսուսի դատավարությանը. «Եվ գլխավոր քահանաները մեղադրում էին Նրան շատ բաներում, բայց Նա ոչինչ չէր պատասխանում» (Մարկ. 15.3, NKJV):

Պատկերացրեք մի դատարան, բայց ոչ թե հասարակ դատարան, այլ՝ երկրի գերագույն դատարանը: Այն ամենը, ինչ վկաներն ասում էին այդտեղ, պաշտոնապես օգտագործվում էր Հիսուսի դեմ: Վկայող մարդիկ Նրա երկրի կրոնական և քաղաքական առաջնորդներն էին: Նրանք ազդեցիկ մարդիկ էին, և նրանց խոսքերը մեծ կշիռ ունեին, սակայն նրանց ասածի մեջ նույնիսկ ճշմարտության նշույլ չկար: Նրանք բացահայտ ստեր էին խոսում, սակայն Հիսուսը լուռ էր Իրեն մեղադրողների առջև և չէր պաշտպանում Իրեն: «Եվ Պիղատոսը դարձյալ հարցրեց Նրան և ասաց. «Ոչ մի պատասխան չե՞ս տալիս: Տես՝ որքա՜ն են վկայում Քեզ դեմ»: Բայց Հիսուսը դարձյալ ոչինչ չպատասխանեց, մինչև որ Պիղատոսը զարմացավ» (Մարկ. 15.4,5):

Պիղատոսը նստած էր՝ որպես դատավոր այդ երկրի բարձրագույն ատյանում: Անթիվ անգամներ նա տեսել էր դատավարության ենթարկվող մարդկանց, որոնք հուսահատորեն պաշտպանում էին իրենց՝ դատավճռից խուսափելու համար: Դատապարտվելու դեպքում նրանց սպասում էր բանտարկություն, աքսոր կամ մահապատիժ: Չկար ավելի բարձր ատյան՝ բողոքարկելու համար: Նա երբեք չէր տեսել, որ մեղադրյալը լուռ լիներ: Պիղատոսը գիտեր, որ այդ առաջնորդները դատավարության էին բերել Հիսուսին՝ նախանձից ելնելով, և նրանք պահանջում էին ամենածանր պատիժը՝ մահը՝ խաչելության միջոցով: Նա նույնպես գիտեր, որ Հիսուսն այնպիսին չէր, ինչպես որ այդ մարդիկ ներկայացնում էին Նրան: Այնուամենայնիվ, Հիսուսը հրաժարվում էր պաշտպանել Իրեն. Նրա վարքը և ինքնատիրապետումը զարմացրին այդ կառավարչին:

Ինչո՞ւ Հիսուսը չպաշտպանեց Իրեն: Քանի որ Նա ցանկանում էր մնալ Իր Հոր դատաստանի ներքո, և այդպիսով՝ Նրա պաշտպանության ներքո: Պետրոսն ասաց. «Վիրավորանք ստանալիս Նա նույնով չպատասխանեց, ո՛չ էլ վրեժով սպառնաց, երբ չարչարվում էր: Նա թողեց Իր գործն Աստծո ձեռքերի մեջ, որը միշտ արդար է դատում» (Ա Պետր. 2.23, NLT):

Երբ հրաժարվում ենք պաշտպանել մեզ, հայտնվում ենք Աստծո շնորհքի և դատաստանի ծածկոցի ներքո: Չկա ավելի ապահով վայր. «Ո՞վ է, որ Աստծո ընտրվածների դեմ մեղադիր լինի. Աստված է, որ արդարացնում է» (Հռոմ. 8.33):

Ի հակադրություն, մարդիկ, որոնք պաշտպանում են իրենց, հայտնվում են իրենց մեղադրողների իրավասության ներքո՝ զրկվելով աստվածային միջամտությունից: Ես մի դեպք եմ հիշում, երբ պաշտպանեցի ինձ ղեկավարներիցս մեկի մեղադրանքներից: Դրանից հետո Աստված մի կարճ տեսիլք ցույց տվեց իմ սրտում: Ես տեսա, որ Տերը կանգնած էր իմ կողքին՝ ձեռքերը մեջքի ետևում: Նա չէր տալիս այն օգնությունը, որն անհրաժեշտ էր ինձ: Հենց որ դադարեցի արդարացնել ինձ, Նա սկսեց գործել հօգուտ ինձ:

Հիսուսը երբեք տեսադաշտից չկորցրեց Իր գերագույն Դատավորին, նույնիսկ երբ կանգնած էր լիազորած իշխանության առջև: Հիշեք՝ թագավորի սիրտն Աստծո ձեռքում է: Քանի որ Նա չփորձեց պաշտպանել Իրեն, ամբողջ այդ ընթացքում Նա մնաց Աստծո պաշտպանության ներքո: Այն պահին, երբ արդարացնում և պաշտպանում եք ձեզ, դուք մեղադրող մարդուն դարձնում եք ձեր դատավորը: Դուք զրկվում եք պաշտպանության հոգևոր իրավունքից, քանի որ այդ մարդը հոգևոր առավելություն է ստանում ձեր կյանքում, երբ դուք պատասխանում եք նրա քննադատությանը: Նրա ազդեցությունը մեծանում է ձեր ինքնապաշտպանության պատճառով: Փորձելով ապացուցել ձեր անմեղությունը, դուք հանձնվում եք ձեզ մեղադրողի ողորմությանը: Այս պատճառով Հիսուսը հորդորում է մեզ.

> «Քո ոսոխի հետ շուտով միաբանվի՛ր, քանի որ նրա հետ ճանապարհի վրա ես, որ միգուցե ոսոխը քեզ դատավորին մատնի, և դատավորը քեզ մատնի դահճին, և բանտը գցվես: Ճշմարիտ ասում եմ քեզ՝ դուրս չես գա այնտեղից, մինչև որ վերջին նաքարակիտը չվճարես» (Մատթ. 5.25,26):

Համաձայն այս առակի, դուք հարկադրված կլինեք վճարել այն, ինչ կպահանջի մեղադրողը՝ որպես հատուցում: Որքան մեծ լինի նրա մեղադրանքը ձեր դեմ, այնքան քիչ ողորմություն նա

կցուցաբերի: Նա կպահանջի ձեր պարտքը՝ մինչև վերջին լուման, անկախ այն բանից՝ արդա՞ր է համարում դա, թե՞ ոչ:

Մանկական հավատք

Երբ մեր ավագ որդի Էդիսոնը երրորդ դասարանում էր, ճաշի ժամանակ պատմեց Լիզային և ինձ մի խնդրի մասին, որին բախվել էր դպրոցում: Նա համարում էր, որ իր ուսուցիչներից մեկը բացասաբար էր տրամադրված իր հանդեպ: Էդիսոնը զգում էր, որ դուր չէր գալիս իր ուսուցչին, և որ իր ուսուցիչը մեղադրում էր իրեն ամեն անգամ, երբ դասարանի երեխաները զրուցում էին կամ անկարգություններ անում: Դա տևեց որոշ ժամանակ, և մի անգամ այդ ուսուցիչը գրավոր նկատողություն ուղարկեց մեր տուն, որտեղ նշված էր, որ Էդիսոնը հատուկ զգուշացում էր ստացել վատ վարքի համար: Էդիսոնը շատ բարեխիղճ էր և չափազանց ծանր ընդունեց այդ նկատողությունը: Նա պատմեց մեզ իր հիասթափության և վախերի մասին, փղձկաց և սկսեց լաց լինել:

Մենք հավաստիացրինք նրան, որ համոզված էինք նրա անկեղծության մեջ, և խնդրեցինք մանրամասնորեն պատմել կատարվածը: Էդիսոնը հառաչանքով պատասխանեց.

- Նա մեղադրում է ինձ ամեն ինչի համար: Նույնիսկ եթե մեկից ավելի երեխաներ են անկարգություն անում, նա միայն ինձ է մեղադրում: Նա մեղադրում է ինձ այնպիսի բաների համար, որոնք ես չեմ արել: Օրինակ, այսօր կողքիս սեղանին նստած երկու տղաները ծիծաղում էին, իսկ ես լուռ էի: Ուսուցիչը շրջվեց և բղավեց ինձ վրա:

Նրա շրթունքը դողաց այդ անարդարության պատճառով: Ինչնամյա երեխայի համար դա անհույս ճգնաժամ էր:

Էդիսոնի մյուս ուսուցիչների խոսքերով, նրա վարքը գերազանց էր: Այնպես որ, մենք գիտեինք, որ դա մեկուսի իրավիճակ էր: Մինչ Լիզան փորձում էր մխիթարել նրան, ես հետաքրքրվեցի.

- Ի՞նչ ասացիր նրան այսօր, երբ նա նկատողություն արեց քեզ:

Էդիսոնը պատասխանեց կրակոտ աչքերով.

- Ես ասացի. «Ես չէի խոսում: Խոսում էին մյուս երկու տղաները:

Ես հարցրի.

- Դու սովորաբար այդպե՞ս ես արձագանքում, երբ նա նկատողություն է անում քեզ:

Էդիսոնը պատասխանեց.

- Այո՛, եթե գիտեմ, որ ես ոչինչ չեմ արել:

Ես նայեցի նրան.

- Որդի՛ս, ահա թե որն է խնդիրը: Դու արդարացնում ես քեզ քո վերադասի առջև, և երբ դու ես պաշտպանում քեզ, Աստված չի պաշտպանում քեզ:

Ես ցույց տվեցի նրան այս գլխում ներկայացված աստվածաշնչյան հատվածները: Որպեսզի օգնեի ավելի լավ հասկանալ այս սկզբունքը, ես պատմեցի նրան այն փորձության մասին, որին ենթարկվել էի մեր եկեղեցու գրասենյակի ղեկավարի կողմից, որի մասին գրեցի նախորդ գլխում:

Ղեկավար, որի նպատակը վնասելն էր

Այդ մարդու որդին մեր երիտասարդական ծառայության մեջ էր: Ես քարոզում էի ազդեցիկ քարոզներ սրբության, աղոթքի և Հիսուսի իշխանության մասին: Շատ երիտասարդներ փոխվում էին: Մի անգամ այդ տղան մոտեցավ կնոջս՝ արցունքն աչքերին, և հարցրեց, թե՝ հնարավո՞ր է մաքուր և սուրբ կյանք վարել այն դեպքում, երբ բազմաթիվ անօրինություններ ես տեսնում տանը: Նա կիսվեց որոշ մանրամասներով, ինչն օգնեց ինձ հասկանալ, թե ինչու էր նրա հայրն ընդդիմանում ինձ:

Մի քանի ամիս անց չորս տարբեր երիտասարդներ ասացին, որ անչափ տխուր էին, քանի որ ինձ պետք է հեռացնեին աշխատանքից: Ես հասկացա, որ այդ մարդու որդին էր տարածել այդ լուրը. նա ասաց, որ լսել էր դա իր հորից:

Ես գնացի նրա հոր մոտ, և նա ընդունեց դա, բայց մեղադրեց ավագ հովվին՝ ասելով, որ ինձ աշխատանքից հեռացնելը նրա մտադրությունն էր: Շաբաթներ էին անցնում, և իրավիճակը թեժանում էր: Իմ ընտանիքը մշտական ճնշման ներքո էր. մենք չգիտեինք՝ ես մնալո՞ւ էի, թե՞ հեռացվելու էի: Մենք տուն էինք գնել, իմ կինը հղի էր, մենք ո՛չ փող ունեինք, ո՛չ աշխատանք: Ես չէի

ուզում ռեզյումեներ ուղարկել: Հավատում էի, որ Աստված էր բերել ինձ, և ես մնում էի՝ առանց այլընտրանքային ծրագրի: Կինս նյարդայնանում և անհանգստանում էր. նա խրախուսում էր ինձ, որ ինչ-որ բան անեի.

- Սիրելի՛ս, ես գիտեմ, որ նրանք հեռացնելու են քեզ աշխատանքից: Բոլորն են ասում ինձ այդ մասին:

Նա ճիշտ էր: Ավագ հովիվն, ի վերջո, համաձայնեց հեռացնել ինձ աշխատանքից: Նա հայտարարեց կիրակի առավոտյան ծառայությանը, որ երիտասարդական ծառայության մեջ լուրջ փոփոխություններ էին տեղի ունենալու: Ես դեռ չէի խոսել նրա հետ: Հաջորդ օրը պետք է հանդիպեի նրան և այդ ղեկավարին: Աստված պատվիրեց ինձ, որ չպաշտպանեի ինձ:

Հաջորդ օրը, երբ ավագ հովվի աշխատասենյակ մտա, նա մենակ էր և ասաց.

- Ջո՛ն, Աստված է ուղարկել քեզ այստեղ: Ես չեմ հեռացնի քեզ աշխատանքից:

Նա մտափոխվել էր: Ես թեթևություն զգացի. վերջին պահին Աստված պաշտպանել էր ինձ: Հովիվը շարունակեց.

- Ինչո՞ւ է մեր գրասենյակի ղեկավարն ուզում հեռացնել քեզ աշխատանքից:

Ես պատասխանեցի, որ չգիտեմ: Եվ նրա խնդրանքով համաձայնեցի ամեն ինչ անել՝ խաղաղություն հաստատելու համար:

Այդ հանդիպումից կարճ ժամանակ անց գրավոր ապացույցներ ստացա այդ ղեկավարի կայացրած որոշումներից մեկի մասին, որը բացահայտում էր նրա շարժառիթները: Ես պատրաստ էի ցույց տալ դա ավագ հովվին: Ուզում էի, որ նա տեսներ, թե ինչ էր կատարվում իր թիկունքում: Ես քառասունհինգ րոպե շարունակ ետուառաջ էի քայլում տանը՝ աղոթելով և փորձելով հաղթահարել իմ ներսի անհարմարավետ զգացումը: Ես շարունակ պնդում էի. «Աստվա՛ծ, այս մարդն անազնիվ է եղել: Նրան պետք է բացահայտել: Նա կործանարար ուժ է այս ծառայության մեջ: Ես պետք է պատմեմ ավագ հովվին, թե իրականում ով է նա»: Ես շարունակեցի արդարացնել նրան բացահայտելու իմ մտադրությունը. «Այն ամենը, ինչ ասելու եմ, հիմնված է գրավոր փաստերի վրա, ոչ թե զգացմունքների: Եթե ոչ ոք չկանգնեցնի նրան, նրա

անօրեն վարքը կտարածվի ամբողջ եկեղեցով»:

Ի վերջո, ես հուսահատորեն ասացի. «Աստվա՛ծ, Դու չես ուզում, որ բացահայտեմ նրան, այնպես չէ՞»: Երբ ասացի դա, Աստծո խաղաղությունը հեղեղվեց սրտիս մեջ: Ես զարմանքով տարուբերեցի գլուխս: Գիտեի, որ Աստված չէր ուզում, որ որևէ բան անեի. այնպես որ, դեն նետեցի այդ գրավոր ապացույցը: Հետագայում, երբ կարողացա անաչառ կերպով դիտարկել այդ իրավիճակը, ես հասկացա, որ իրականում ուզում էի պաշտպանել ինձ և վրեժ լուծել ավելի, քան պաշտպանել այլ մարդկանց: Ես համոզել էի ինձ, որ իմ շարժառիթներն անեսասեր էին: Իմ տեղեկությունը ճիշտ էր, բայց իմ շարժառիթներն անմաքուր էին:

Որոշ ժամանակ անցավ, և մեկ օր, երբ աղոթում էի եկեղեցու տարածքում՝ աշխատանքային ժամերից առաջ, այդ մարդը եկավ իր մեքենայով: Աստված պատվիրեց ինձ գնալ և խոնարհեցնել անձս: Ես անմիջապես սկսեցի պաշտպանվել. «Ո՛չ, Տե՛ր. նա՛ պետք է ինձ մոտ գա: Նա՛ է բոլոր խնդիրների պատճառը»: Ես շարունակեցի աղոթել, բայց Աստված լուռ էր: Քսան րոպե անց Տերը կրկին պնդեց, որ անմիջապես նրա մոտ գնամ և խոնարհեցնեմ ինձ: Ես գիտեի, որ Աստված էր: Զանգեցի այդ մարդուն և գնացի նրա աշխատասենյակ: Այնուամենայնիվ, իմ ասելիքը և խոսելաոճը լիովին տարբերվում էին այն ժամանակվանից, երբ Աստված դեռ աշխատանք չէր կատարել ինձ հետ: Ամենայն անկեղծությամբ խնդրեցի նրան ներել ինձ: Ասացի, որ քննադատել և դատել եմ նրան: Նա փափկեց, և մենք մի փոքր զրուցեցինք: Այդ օրվանից նրա հարձակումներն իմ դեմ դադարեցին:

Վեց ամիս անց, երբ ես քաղաքում չէի, բոլոր սխալները, որոնք այդ մարդը գործել էր, հայտնի դարձան ավագ հովվին: Այն, ինչ նա արել էր, շատ ավելի վատ էր, քան իմ իմացածը: Նրան անմիջապես հեռացրին աշխատանքից: Դատաստանը եկավ, բայց ոչ՝ իմ ձեռքով: Նրա հետ կատարվեց ճիշտ այն, ինչ նա փորձում էր անել ինձ հետ: Այնուամենայնիվ, երբ դա տեղի ունեցավ, ես չուրախացա: Ես տրտմեցի նրա և նրա ընտանիքի համար: Հասկանում էի նրա ցավը. նրա պատճառով ես ինքս էի անցել նույն բանով: Քանի որ ներել էի նրան վեց ամիս առաջ, ես սիրում էի նրան և չէի կամենում, որ այդպիսի իրավիճակում լիներ:

Ես հաճախեցի այդ եկեղեցի ևս տասնմեկ տարի, և ինձ հա-

ճախ էին խնդրում ծառայություններ անցկացնել: Այն ամոթը, որն այդ մարդը բերեց իմ անվանը, հեռացավ և փոխարինվեց պատվով: Ես ետ եմ նայում և գիտակցում եմ, որ հոգևորապես աճեցի այդ նեղության ընթացքում, և հետագայում Աստված առաջխաղացում տվեց ինձ այն մարդկանց առջև, որոնք բազմաթիվ սուտ լուրեր էին լսել իմ մասին: Ինչպես որ Հայրը շատ բարձրացրեց Հիսուսին՝ Նրա հնազանդության և Իրեն չպաշտպանելու պատրաստակամության շնորհիվ, այնպես էլ Նա պատվում է Իր զավակներին, որոնք հետևում են այն օրինակին, որը Հիսուսը թողել է մեզ:

Տարվա աշակերտը

Այս գլխում ներկայացված աստվածաշնչյան հատվածները Էդիսոնին ցույց տալուց և այս պատմությունը նրան պատմելուց հետո ասացի.

- Որդի՛ս, ի՞նքդ որոշիր: Դու կարող ես շարունակել պաշտպանել քեզ և լինել քո ուսուցչի դատաստանի ներքո, կամ կարող ես գիտակցել, որ աստվածապաշտ կերպով չես արձագանքել նրա մեղադրանքներին: Այդ դեպքում, դու կարող ես գնալ քո ուսուցչի մոտ, խոնարհեցնել քեզ և ներողություն խնդրել նրա իշխանության հանդեպ անհարգալից լինելու համար, և Աստված կմիջամտի:

Էդիսոնը հարցրեց.

- Իսկ ի՞նչ անեմ, եթե ինձ մեղադրեն այնպիսի բանի համար, ինչը ես չեմ արել:

- Թո՛ւյլ տուր, որ Աստված պաշտպանի քեզ: Դու հասնե՞լ ես հաջողության՝ ինքդ քեզ պաշտպանելով:

- Ո՛չ,- պատասխանեց Էդիսոնը:- Ուզում եմ, որ Աստվա՛ծ պաշտպանի ինձ:

Հաջորդ օրը նա գնաց իր ուսուցչի մոտ և խոնարհեցրեց իրեն: Նա խնդրեց ուսուցչին ներել իրեն՝ նրա իշխանությանը հակառակվելու համար, երբ ինքը նկատողություններ էր ստանում:

Ուսուցիչը ներեց նրան, և հաջորդ շաբաթ նա դարձավ շաբաթվա լավագույն աշակերտը իր դասարանում: Էդիսոնն այլևս

ոչ մի խնդիր չունեցավ: Նա ավարտեց այդ ուսումնական տարին՝ ստանալով տարվա աշակերտի պատվավոր կոչումն իր ուսուցչից դպրոցական ավարտական միջոցառմանը:

Եթե իննամյա երեխան կարող է խոնարհեցնել իրեն և ապացուցել, որ Աստծո Խոսքը գործում է ճգնաժամային իրավիճակում, որքա՜ն ավելի մենք պետք է այդպես վարվենք: Կարծում եմ՝ այս պատճառով Հիսուսն ասաց. «Արդ, ով որ իր անձը այս երեխայի նման խոնարհեցնի, նա է մեծ Երկնքի արքայության մեջ» (Մատթ. 18.4):

Դավթի հանդիպումն անողջամիտ առաջնորդի հետ

Էդիսոնը սովորեց այն, ինչ սովորել էր Հեսսեի որդի Դավիթը: Աստված արդար Դատավոր է, և եթե մենք հանձնենք Նրա ձեռքերի մեջ իշխանության անարդար վերաբերմունքը, Նա մշտապես արդարությամբ կդատի: Խոսելով Դավթի մասին, մենք պետք է հիշենք, որ Աստված էր, ոչ թե սատանան, որ կարգել էր Դավթին Սավուղ անունով անողջամիտ, իսկ հետագայում՝ դաժան առաջնորդի ներքո:

Ամեն ինչ սկսվեց նույնիսկ մինչև նրանց հանդիպումը, երբ Սամուելը՝ Իսրայելի ավագ մարգարեն, օծեց Դավթին՝ որպես Աստծո ժողովրդի հաջորդ թագավոր: Դավիթը պետք է որ խանդավառությամբ համակված լիներ և մտածեր. *«Սա այն մարդն է, որն օծել է ներկայիս թագավորին: Ես թագավո՛ր եմ լինելու»:*

Սավուղն անհնազանդ էր եղել Աստծուն և չարչարվում էր մի չար հոգուց: Նա թեթևություն էր զգում միայն՝ երբ ինչ-որ մեկը տավիղ էր նվագում: Նրա ծառաները փնտրեցին մի երիտասարդի, որը կարող էր նրա մոտ լինել և ծառայել: Թագավորի ծառաներից մեկն առաջարկեց Հեսսեի որդի Դավթին: Սավուղ թագավորը մարդ ուղարկեց Դավթի ետևից՝ պահանջելով, որ նա պալատ գար և ծառայեր իրեն: Դավիթը, հավանաբար, մտածեց. *«Աստված արդեն իսկ իրականացնում է մարգարեի միջոցով տրված Իր խոստումը»:* Նա ասաց ինքն իրեն. *«Երևի թե, սա իմ սկզբնական պաշտոնն է»:*

Որոշ ժամանակ անց նրան խնդրեցին սնունդ տանել իր ավագ եղբայրներին, որոնք պատերազմում էին փղշտացիների դեմ: Մարտի դաշտ հասնելուն պես նա տեսավ փղշտացի հսկա Գո-

ղիաթին, որը ծաղրում էր Աստծո բանակը, և իմացավ, որ դա տեղի էր ունենում արդեն քառասուն օր: Նա պարզեց, որ թագավորն առաջարկել էր իր դստեր ձեռքը այն տղամարդուն, ով պարտության կմատներ այդ հսկային: Դավիթը գնաց թագավորի առջև և կռվելու թույլտվություն խնդրեց: Նա սպանեց Գողիաթին և շահեց Սավուղի դստերը: Նա շահեց Սավուղի բարեհաճությունը և նշանվեց՝ թագավորի փեսան դառնալու համար:

Հոնվաթանը՝ Սավուղի ավագ որդին, հավիտենական ընկերության ուխտ կնքեց Դավթի հետ: Այն ամենում, ինչ Սավուղը պատվիրում էր Դավթին, Աստծո ձեռքը նրա վրա էր, և նա հաջողվում էր: Թագավորը խնդրեց նրան նստել իր սեղանին՝ իր որդիների հետ: Ամեն ինչ լավ էր ընթանում, և Դավիթը ոգևորված էր: Նա ապրում էր պալատում, նստում էր թագավորի սեղանին, ամուսնացած էր թագավորի դստեր հետ, Հոնվաթանի ընկերն էր և հաջողակ էր իր բոլոր ռազմական արշավներում: Նա նույնիսկ շահել էր ժողովրդի բարեհաճությունը: Նրա ստացած մարգարեությունը կատարվում էր նրա աչքերի առջև: Սավուղը բարձրացրեց նրան իր մյուս ծառաներից ավելի և իր զինակիրը դարձրեց: Դավթի համար Սավուղը հոր պես էր, և Դավիթը համոզված էր, որ Սավուղը կխրատեր և կսովորեցներ իրեն, և մեկ օր մեծ պատվով իր գահին կնստեցներ: Դավիթը ցնծում էր Աստծո բարության և հավատարմության համար:

Կտրուկ փոփոխություն

Բայց մի օր ամեն ինչ փոխվեց: Սավուղն ու Դավիթը վերադառնում էին հերթական մարտից՝ կողք կողքի, և Իսրայելի բոլոր քաղաքներից կանայք էին դուրս գալիս՝ պարելով և երգելով. «Սավուղը սպանեց իր հազարներին, իսկ Դավիթը՝ իր բյուրավորներին»: Դա սաստիկ բարկացրեց Սավուղին, և այդ օրվանից նա անարգեց Դավթին: Սավուղը սկսեց նիզակներ նետել Դավթի վրա և գաղտնաբար որոշեց սպանել նրան: Աստվածաշնչում գրված է, որ Սավուղն ատում էր Դավթին, որովհետև գիտեր, որ Աստված նրա հետ էր: Սավուղը նույնպես գիտեր, որ Աստված հեռացել էր իրենից: Դավիթը հարկադրված էր փախչել՝ կյանքը փրկելու համար: Քանի որ Դավիթը գնալու տեղ չուներ, նա անապատ փախավ: «Ինչ է կատարվում,- մտածում էր Դավիթը,- խոս-

տումն իրականանում էր, բայց հանկարծ ամեն ինչ սասանվեց: Այն մարդը, որն իմ ուսուցիչն ու առաջնորդն էր, փորձում է սպանել ինձ: Ի՞նչ կարող եմ անել: Սավուղն Աստծո օծյալ ծառան է: Եթե նա հակառակ է ինձ, ի՞նչ հնարավորություններ ես ունեմ: Նա թագավորն է, Աստծո մարդը, որը կարգված է Աստծո ժողովրդի վրա: Ինչո՞ւ է Աստված թույլ տալիս սա»:

Սավուղն Իսրայելի երեք հազար լավագույն զինվորների հետ սկսեց հալածել Դավթին՝ անապատից՝ անապատ, քարանձավից՝ քարանձավ, մեկ մտադրությամբ, որը նրան կործանելն էր: Այդ ընթացքում խոստումն ընդամենը շուք էր, քանի որ Դավիթը փախչում էր՝ կյանքը փրկելու համար: Դավիթն այլևս չէր ապրում պալատում և չէր կերակրվում թագավորի սեղանից: Նրա բնակությունը խոնավ քարանձավներն էին, և նա սնվում էր անապատի գազանների կերակուրի մնացորդներով: Նա այլևս չէր ձիավարում թագավորի կողքին, այլ հալածվում էր այն մարդկանցից, որոնք մի ժամանակ իր զինակիցներն էին: Չկար տաք անկողին, ծառաներ, որոնք կսպասարկեին նրան, չկային հաճոյախոսություններ արքունիքում: Նրա կինը տրվեց ուրիշին:

Ինչպե՞ս կարող էր այն առաջնորդը, որի ներքո Աստված կարգել էր նրան, այդպես վարվել: Դավիթը, ամենայն հավանականությամբ, պայքարում էր բարկության, հիասթափության և հուսալքության մտքերի դեմ. *«Ինչո՞ւ Աստված ոչինչ չի անում այս իրավիճակում: Նա հոգո՞ւմ է իմ մասին: Ի՞նչ կատարվեց Նրա խոստումների հետ: Ինչո՞ւ է Նա կարգել նման դաժան մարդու՝ Իր ուխտի ժողովրդին առաջնորդելու համար»:*

Սավուղն այն աստիճան էր մտադրվել ամեն գնով սպանել այդ երիտասարդին, որ նրա խելագարությունն ավելանում էր: Նոբ քաղաքում կային քահանաներ, որոնք կացարան և կերակուր տրամադրեցին Դավթին և տվեցին նրան Գողիաթի թուրը: Նրանք ոչինչ չգիտեին այն մասին, որ Դավիթը փախչում էր Սավուղից, և մտածեցին, որ նա թագավորի կողմից առաքելության էր ուղարկվել: Նրանք հարցրին Տիրոջը Դավթի համար և ճանապարհ դրին:

Երբ Սավուղն իմացավ այդ մասին, սաստիկ բարկացավ: Նա սպանեց Տիրոջ ութսունհինգ անմեղ քահանաների և սրի բերանը քաշեց ամբողջ Նոբ քաղաքը՝ յուրաքանչյուր տղամարդու,

կնոջ, երեխայի, նորածնի և կենդանու: Նա կատարեց այդ անմեղ մարդկանց դեմ այն դատաստանը, որը պետք է կատարեր ամաղեկացիների դեմ: Գրեթե անհնար էր դարձել տրամաբանորեն հասկանալ, թե ինչու էր Աստված ընտրել նման առաջնորդի: Նա մարդասպան էր: Ինչպե՞ս Աստված կարող էր Իր Հոգին դնել այդպիսի մարդու վրա:

Շատերն ասում են, որ Սավուղը ժողովրդի ընտրությունն էր, իսկ Դավիթը՝ Աստծո: Այս մոլորեցնող գաղափարը սովորեցնում են մարդիկ, որոնք չեն պատկերացնում, որ Աստված կարող է խիստ մարդու կարգել առաջնորդի դիրքում: Ճիշտ է, որ ժողովուրդն ուզեց թագավոր ունենալ. այնուամենայնիվ, Աստված ընտրեց և՛ Սավուղին, և՛ Դավթին: Աստված ասաց. «[Ես] Սավուղին թագավոր եմ արել» (Ա Թագ. 15.11):

Մի անգամ Սավուղն իմացավ, որ Դավիթը Ենգադդիի անապատում է, և ճանապարհ ընկավ երեք հազար զինվորի հետ: Ճանապարհին նրանք հանգիստ առան մի քարանձավում, որտեղ Դավիթը թաքնված էր: Այն բանից հետո, երբ Սավուղը և նրա զինվորները հանեցին իրենց հանդերձները՝ լոգանք ընդունելու համար, Դավթի զինվորները դրդեցին նրան. «Ահա՛ սա այն օրն է, որի համար Տերը քեզ ասել է, թե՝ ահա քո թշնամին քո ձեռքը կմատնեմ, և քո աչքերին հաճո երևացածն արա՛ նրան»:

Դավիթն աննկատ մոտեցավ և կտրեց Սավուղի հանդերձի ծայրը: Այդ անելուց հետո նա խղճի խայթ զգաց. «Եվ իր մարդկանց ասաց. «Աստված չանի, որ Տիրոջ օծյալին՝ իմ տիրոջը, այս բանն անեմ, որ իմ ձեռքը նրա վրա մեկնեմ, որովհետև նա Տիրոջ օծյալն է»: Եվ Դավիթն այս խոսքերով իր մարդկանց զսպեց և նրանց չթողեց, որ Սավուղի վրա հարձակվեն: Եվ Սավուղը քարայրից դուրս եկավ և իր ճանապարհը գնաց» (Ա Թագ. 24.4-8): Ինչ վերաբերում է նրա խղճին, «Ջեյմս թագավորի թարգմանության» մեջ գրված է, որ «Դավթի սիրտը զարկեց նրան» (KJV): Նրա սիրտը դեռ զգայուն էր այն առաջնորդի հանդեպ, որն այդքան նեղություններ էր պատճառել իրեն: Նա ակնհայտորեն հակառակվել էր բարկության, վախի և հիասթափության մասին մտքերին և լռեցրել էր դրանք:

Քանի որ Դավիթն արդեն կտրել էր թագավորի հանդերձի ծայրը, որոշեց օգտագործել դա, որպեսզի ապացուցեր իր անմե-

ղությունը Սավուղին: Դավիթը հեռվից մինչև գետին խոնարհվեց և գոչեց Սավուղին. «Տե՛ս, հա՛յր իմ, տե՛ս՝ քո վերարկուի ծայրն իմ ձեռքում է... Հասկացի՛ր և տե՛ս, որ իմ ձեռքում *չարություն և անօրինություն* չկա, և քեզ դեմ մի հանցանք չեմ արել, բայց դու ուզում ես իմ անձը մեռցնել» (Ա Թագ. 24.12):

Դավիթը մտահոգված էր այն բանով, որ Սավուղի համոզմամբ, ինքն ապստամբ և չար էր: Դավիթը, հավանաբար, քննում էր իր սիրտը. «Որտե՞ղ եմ ես սխալվել: Ինչո՞ւ Սավուղի սիրտն այդքան արագ իմ դեմ տրամադրվեց»: Ահա թե ինչու նա գոչեց. «Եվ ասացին, որ քեզ մեռցնեմ... Եվ ես քո վերարկուի ծայրը կտրելով՝ քեզ չմեռցրի: Հասկացի՛ր և տե՛ս, որ իմ ձեռքում չարություն և անօրինություն չկա»: Նա չէր հավատում, որ Սավուղն ինքն էր այդպես տրամադրվել իր դեմ: Հավանաբար, ինչ-որ մեկը թշնամություն էր սերմանել Սավուղի սրտում իր դեմ. այնպես որ, Դավիթն ուզում էր իր հավատարմությունն ապացուցել Սավուղին: Նա մտածում էր, որ եթե դա հաջողվեր իրեն, Սավուղը կվերականգներ իր նախկին դիրքը, բարությամբ կվարվեր իր հանդեպ, և մարգարեությունը կիրականանար:

Հոր կամ առաջնորդի կողմից մերժված մարդիկ հակված են մեղադրելու իրենց ամեն ինչում: Նրանք տանջալի մտքերի գերության մեջ են. *«Ի՞նչ սխալ գործեցի»,* կամ՝ *«Գուցե իմ սիրտը մաքո՞ւր չէր»:* Նրանք բեռ են կրում իրենց ներսում. մշտապես փորձում են ապացուցել իրենց անմեղությունը իրենց առաջնորդներին: Նրանք համոզված են, որ եթե միայն կարողանային ցույց տալ, թե որքան հավատարիմ են իրենց առաջնորդին, և թե որքան են արժևորում նրան, ընդունված կդառնային: Բայց որքան ավելի են փորձում, այնքան ավելի մերժված են զգում իրենց:

Սավուղը խոստովանեց Դավթի բարությունը, երբ տեսավ, որ Դավիթը կարող էր սպանել իրեն, սակայն չարեց դա: Եվ թագավորը հեռացավ իր զինվորների հետ: Դավիթը, հավանաբար, մտածում էր. *«Թագավորը կվերականգնի ինձ: Այժմ մարգարեությունը կիրականանա: Անկասկած, նա տեսավ իմ սիրտը, և հիմա ավելի լավ կվերաբերվի ինձ: Նա բարի և հոգատար առաջնորդ կլինի»:* Որքա՞ն հեռու էին այդ մտքերն իրականությունից:

Նա մտադրվել է կործանել ինձ

Կարճ ժամանակ անց Սավուղին տեղեկացրին, որ Դավիթը Եքեղայի բլուրների մոտ էր: Սավուղը կրկին գնաց նրա հետևից՝ նույն երեք հազար զինվորի հետ: Կրկին, Սավուղն ուզում էր կործանել Դավթին: Համոզված եմ, որ Սավուղի շարունակվող հետապնդումը վիատեցրեց Դավթին: Նա հասկացավ, որ պատճառը որևէ թյուրըմբռնում կամ ինչ-որ մեկի սադրանքը չէր, այլ՝ Սավուղը մտադրվել էր խլել իր կյանքը:

Սավուղը գիտեր, որ Դավիթն ապստամբ չէր և չար մտադրություն չուներ, բայց, միևնույն է, հետապնդում էր նրան: Դավիթը հասկացավ, որ այն, ինչի հանդեպ ինքը հույս ուներ ամբողջ այդ ընթացքում, ճիշտ չէր, և ինքը գործ ուներ անօրեն առաջնորդի հետ: Ինչպե՞ս Աստված կարող էր տալ Իր օծությունը նման մարդու:

Դավիթը և Աբեսսան, որը Հովաբի կրտսեր եղբայրն էր և արյան ծարավ երիտասարդ, ծածուկ գնացին Սավուղի բանակատեղին: Աստված խորը քուն էր բերել բոլորի վրա այդ բանակում: Այդ երկուսը աննկատ թափանցեցին բանակի միջով՝ հասնելով այնտեղ, որտեղ պառկած էր Սավուղը: Աբեսսան աղաչեց Դավթին. «Աստված այսօր քո թշնամուն քո ձեռքը մատնեց: Եվ հիմա թո՛ղ տուր, որ նիզակով մեկ անգամից գետինը զարկեմ նրան և չկրկնեմ» (Ա Թագ. 26.8):

Աբեսսան բազմաթիվ հիմնավոր պատճառներ ուներ, համաձայն որոնց Դավիթը պետք է հրամայեր իրեն զարկել Սավուղին: Առաջինը և ամենակարևորը՝ Սավուղը սառնասրտորեն սպանեց ութսունհինգ անմեղ քահանաների, նաև նրանց կանանց և երեխաներին: Իրենց երկիրը վտանգված էր նման մարդու առաջնորդության ներքո: Այսօր շատերը նման կերպով են մտածում, հատկապես՝ եկեղեցական առաջնորդների մասին: Միայն թե այդ առաջնորդները չեն գործել գեթ մեկ բան, ինչը նույնիսկ մոտ կլիներ Սավուղի անօրեն արարքներին:

Երկրորդը՝ Աստված օծել էր Դավթին որպես Իսրայելի հաջորդ թագավոր՝ Սամուելի խոսքով: Ժամանակն էր, որ Դավիթը պահանջե՛ր իր ժառանգությունը: Մի՞թե նա ուզում էր մահանալ և այդպես էլ չկատարել այդ մարգարեությունը: Ես հաճախ եմ լսել

այս դատողությունը եկեղեցական աշխատակազմերում գտնվող հիասթափված մարդկանցից:

Երրորդը՝ մի՞թե Սավուղը երեք հազարից բաղկացած բանակով դուրս չէր եկել՝ Դավթին և իր զինվորներին սպանելու համար: Դավիթը կա՛մ սպանելու էր նրան, կա՛մ սպանվելու էր նրանից: Անկասկած, դա ինքնապաշտպանություն էր: Աբեսսան գիտեր, որ ցանկացած դատարան կարդարացներ իրենց արարքը: Իհարկե, այս տրամաբանությունը նույնիսկ չէր վիճարկվի մեր օրերում. մենք առանց մտածելու կընդունեինք այն:

Չորրորդը՝ չէ՞ որ Աստված էր այնպիսի խորը քուն բերել ամբողջ բանակի վրա, որ նրանք կարողացան հասնել անմիջապես Սավուղի մոտ, որպեսզի կատարեին Նրա կամքը՝ ազատեին իրենց երկիրը նման անօրեն առաջնորդից: Նրանք հնարավորություն ունեին, որը գուցե այլևս չընձեռնվեր. ժամանակն էր վերցնել մարգարեության իրականացումը: Քանի՞ եկեղեցական խորհուրդներ և աշխատակազմեր են այսպես մտածել, երբ իրենց առաջնորդը թուլացած վիճակում է եղել: Նրանք մտածել են. *«Աստված է հասցրել նրան այս վիճակին, և հիմա մենք կարող ենք հեռացնել նրան առաջնորդի դիրքից»:* Այս մտածելակերպը միայն բացահայտում է նրանց անհնազանդ սրտերը:

Բոլոր այդ պատճառները համոզիչ էին թվում: Դրանք տրամաբանական էին թվում, և Դավթին խրախուսում էր իր հավատարիմ եղբայրներից մեկը: Այնպես որ, եթե Դավթի սրտում թեկուզ մի փոքր ապստամբություն լիներ, գուցե նա թույլ տար, որ իր օգնականը թրով սպաներ Սավուղին և լիովին արդարացված զգար: Այնուամենայնիվ, լսե՛ք Դավթի պատասխանը. «Բայց Դավիթն Աբեսսային ասաց. «Մի՛ մեռցրու նրան, որովհետև Տիրոջ օծյալին ո՞վ կարող է ձեռք մեկնել և անպարտ լինել»» (Ա Թագ. 26.9): Մեր օրերում այս խոսքը կհնչեր հետևյալ կերպ. «Մի՛ դիպչիր նրան՝ խոսքով կամ որևէ արարքով, որովհետև ո՞վ կարող է դուրս գալ իր առաջնորդի դեմ և անմեղ լինել»:

Դավիթը չէր պատրաստվում սպանել Սավուղին, թեև Սավուղը սպանել էր անմեղ մարդկանց և իրեն նույնպես ուզում էր սպանել: Դավիթը չէր պատրաստվում անձամբ վրեժ լուծել իր համար. նա հանձնել էր դա Աստծուն: Ավելի հեշտ կլիներ վերջ տալ այդ ամենին հենց այդտեղ. այդպես ավելի հեշտ կլիներ թե՛ Դավթի, թե՛

Իսրայելի ժողովրդի համար: Նա գիտեր, որ ամբողջ ազգը նման էր ոչխարների, որոնք չունեին ճշմարիտ հովիվ: Նա գիտեր, որ այդ անօրեն մարդը շահագործում էր ժողովրդին՝ իր եսասիրական նպատակների համար: Դժվար էր չպաշտպանել իրեն, բայց, հավանաբար, ավելի դժվար էր չազատել իր սիրելի ժողովրդին խելագար թագավորից:

Դավիթը կայացրեց այդ որոշումը՝ գիտակցելով, որ Սավուղի միակ մխիթարությունն իր կործանումն էր: Դավիթն ապացուցեց իր սրտի մաքրությունը, երբ առաջին անգամ խնայեց Սավուղին: Այնուամենայնիվ, նա կրկին որոշեց չդիպչել նրան: Սավուղն իր առաջնորդն էր և Աստծո օծյալ ծառան. այնպես որ, Դավիթը հանձնեց Սավուղին Աստծո դատաստանին: Դավիթն իմաստությամբ վարվեց, թեև նրա որոշումը հակառակ էր ընդունված մարդկային պատկերացումներին:

Գուցե հարցնեք. «Ո՞ւմ Աստված օգտագործեց՝ Իր ծառա Սավուղին դատելու համար»: Պատասխանն է՝ փղշտացիներին: Շատ հաճախ Տերն օգտագործում է չփրկված մարդկանց կամ այս աշխարհի հաստատությունները, որպեսզի դատաստան բերի եկեղեցում Իր կողմից կարգված առաջնորդների վրա: Սավուղն իր որդիների հետ ընկավ մարտի դաշտում: Այնուամենայնիվ, երբ այդ մասին լուրը հասավ Դավթին, նա չուրախացավ. նա սգաց:

Դավիթը մահապատժի ենթարկեց այն մարդուն, ով ասաց, թե սպանել էր Սավուղին, թեև նա չէր արել դա: Այդ մարդը հուսով էր, որ այդ լուրը կշահեր Դավթի բարեհաճությունը, սակայն տեղի ունեցավ ճիշտ հակառակը: Դավիթն արձագանքեց. «Դու մահանում ես՝ ինքդ քեզ դատապարտելով, քանի որ դու ինքդ խոստովանեցիր, որ սպանեցիր Տիրոջ օծյալին» (Բ Թագ. 1.16, NLT):

Դավիթը սիրո երգ գրեց Սավուղի և նրա որդիների պատվին, որպեսզի Հուդայի մարդիկ երգեին: Նա պատվիրեց մարդկանց չհայտարարել այդ մասին փղշտացիների քաղաքներում, որպեսզի թշնամին չուրախանար: Նա հռչակեց, որ անձրև ու հունձք չի լինելու այն վայրում, որտեղ սպանվեց Սավուղը: Նա կոչ արեց ամբողջ Իսրայելին լաց լինել Սավուղի համար: Այդ ամենը չէր բխում այնպիսի մարդու սրտից, ով այլևս չէր պատվում իր առաջնորդին: Ո՛չ, նման մարդը կասեր. «Նա ստացավ այն, ինչին արժանի էր»:

Դավիթն արեց ավելին: Նա չսպանեց Սավուղի ընտանիքի ողջ մնացած անդամներին. փոխարենը՝ բարություն ցուցաբերեց նրանց հանդեպ: Նա հողատարածքներ և կերակուր տվեց նրանց, իսկ նրա ժառանգներից մեկին տեղ շնորհեց թագավորի սեղանի շուրջ: Մի՞թե դա նման է այնպիսի մարդու, ով ուրախ է իր առաջնորդի կրած դատաստանի պատճառով: Ապստամբ սիրտ ունեցողներն ուրախանում են, երբ իրենց առաջնորդներն ընկնում են: Նրանք մտածում են. «Այդ մարդիկ ստացան այն, ինչին արժանի էին»: Սովորաբար, նրանք նպաստում են իրենց առաջնորդների անկմանը՝ կա՛մ զրպարտանքով, կա՛մ վիրավորական խոսքերով, որպեսզի ավելի սաստկացնեն նրանց պատիժը: Նրանց սիրտն այնպիսին չէ, ինչպիսին Դավթի սիրտն էր. նրանց սիրտն Աստծո սրտի համեմատ չէ:

Որոշված՝ օրհնության համար

Մենք մշտապես պետք է հիշենք, որ Աստված թույլ է տալիս մեզ անարդար վերաբերմունք կրել իշխանության կողմից, որպեսզի ի վերջո բարիք անի մեզ: Նա օգտագործում է դա՝ մեր կյանքում օրհնություն բերելու համար: Պետրոսը շարունակում է իր հորդորը. «Չար մի՛ հատուցեք չարի փոխարեն, կամ վիրավորանք՝ վիրավորանքի փոխարեն, այլ՝ օրհնություն, որովհետև *սրա համար եք դուք կանչված,* որ *օրհնություն ժառանգեք»* (Ա Պետր. 3.9, NIV):

Գուցե այդ օրհնությունը բաղկացած չլինի նյութական բաներից, թեև շատ անգամներ կարող է այդպես լինել. փոխարենը, այն տրվում է ավելի կարևոր բնագավառներում, օրինակ՝ քրիստոսանման բնավորության, Աստծո թագավորության մեջ առաջխաղացման, իշխանության ավելի մեծ մակարդակի կամ հավիտենական վարձատրությունների: Երբ մենք հպատակվում ենք Աստծո իշխանությանը, ոչինչ չի կարող վնասել մեր հոգևոր բարեկեցությանը: Պետրոսը պարզորեն բացատրում է սա՝ հարցնելով. «Եվ ո՞վ է նա, որ չարչարի ձեզ, եթե դուք բարուն հետևող լինեք» (Ա Պետր. 3.13): Այս պնդման համատեքստը Հիսուսի անձնական օրինակին հետևելն է:

Խոսելով քրիստոսանման բնավորության մասին՝ Պետրո-

սը հորդորում է. «Որովհետև Քրիստոսն էլ մեկ անգամ մեղքերի համար չարչարվեց՝ այն Արդարն անարդարների վրա... Արդ, Քրիստոս, որ մարմնով մեզ համար չարչարվեց, դուք էլ նույն մտքով զինվորվեք, որ մարմնով չարչարվողը մեղքից դադարեց» (Ա Պետր. 3.18, 4.1):

Պետրոսը կարգադրում է մեզ զինվել այնպիսի չարչարանքների համար, որոնք նման են Քրիստոսի կրած չարչարանքներին, ինչը, նրա թղթի համատեքստում, անարդար վերաբերմունքն է իշխանությունների կողմից: Կարո՞ղ եք պատկերացնել զինվորականների, որոնք կռվի են գնում՝ առանց զենքի. առանց հրացանների, փամփուշտների և դանակների՝ առանց որևէ բանի: Որքա՜ն զավեշտական է: Այնուամենայնիվ, շատ հավատացյալներ զինված չեն անողջամիտ վերաբերմունք կրելու համար: Հարձակման ենթարկվելիս նրանք շփոթվում, տարակուսում և զարմանում են: Նրանք արձագանքում են իրենց դատողությամբ, փոխարենը հետևեն իշխանությանը պատշաճ կերպով վերաբերվելու սկզբունքներին, որոնք Աստծո Խոսքը սովորեցնում է:

Թույլ տվեք մեկ այլ օրինակ բերել զինված լինելու մասին: Օդաչուների ուսուցման գլխավոր փուլերից մեկը թռիչքի սիմուլյատորների օգտագործումն է: Այդ սիմուլյատորների միջոցով օդաչուները հայտնվում են գրեթե յուրաքանչյուր արտակարգ իրավիճակում, որին կարող են բախվել իրական թռիչքի ժամանակ: Այդ ապահով միջավայրում նրանք հղկում են իրենց հակազդման հմտությունները, մինչև որ սովորում են բարեհաջող հաղթահարել դրանք: Այդ պատրաստությունը զինում է նրանց արտակարգ իրավիճակների համար: Եթե ինչ-որ բան կատարվի իրական թռիչքի ընթացքում, օդաչուները խուճապի չեն մատնվի. նրանք կհակազդեն իրենց ստացած սպառիչ գիտելիքներով: Նույնիսկ եթե ուղևորները խուճապի մատնվեն, շփոթվեն և դադարեն վերահսկել իրենց, օդաչուները հանդարտ կմնան և լիովին կվերահսկեն իրավիճակը: Քննիչները, որոնք ստուգում են վթարներից հետո հայտնաբերված սև արկղերի լսաժապավենների ձայնագրությունները, զարմանում են օդաչուների հանդարտության համար: Սովորաբար, նրանց ձայնի մեջ բոլորովին խուճապ չկա, մինչև իսկ բախման պահը. նրանք զինվա՜ծ են:

Այս գիրքը կարող է ծառայել որպես թռիչքի ուսուցման ձեռ-

նարկ: Այս ուղերձում գտնվող Աստծո Խոսքը զինում կամ պատրաստում է մեզ իշխանության հետ կապված տարատեսակ իրավիճակների համար, որոնք կարող են տեղի ունենալ մեր կյանքում: Եթե ճիշտ արձագանքեք, դուք օրհնություն կստանաք: Պետրոսն ասում է մեզ, որ Քրիստոսի չարչարանքի օրինակին հետևող մարդիկ դադարել են մեղք գործել: Ինչպիսի՜ խոսքեր: Այլ կերպ ասած, իշխանություններից անարդար վերաբերմունքը պատշաճ կերպով կրող մարդիկ հոգևոր հասունության են հասնում:

Մենք ավելի մեծ խոստում ունենք: Պողոսը հավաստիացնում է.

> «Սա ճշմարիտ ասացվածք է.
> եթե մենք մահանանք Նրա հետ,
> մենք նաև կապրենք Նրա հետ:
> Եթե մենք դիմանանք նեղությանը,
> մենք կթագավորենք Նրա հետ»:
> (Բ Տիմոթ. 2.11,12, NLT)

Քրիստոսի չարչարանքների նման չարչարանքներ կրող մարդիկ հոգևոր իշխանության խոստում ունեն: Որքան մեծ է այն դժվարությունը, որը դուք կրում եք, այնքան մեծ է այն իշխանությունը, որն Աստված վստահում է ձեզ: Կրկին, ինչպես տեսնում եք, երբ գործ ունեք անողջամիտ առաջնորդի հետ, Աստված պատրաստվում է օրհնություն բերել ձեր կյանքում: Բայց արդյո՞ք դուք ճիշտ կարձագանքեք՝ այդ օրհնությունը ստանալու համար, թե՞ դառնացած և վրդովված կլինեք. դո՛ւք եք որոշում. ընտրե՛ք հաղթողի ճանապարհը, որը կյանք է:

ԳԼՈՒԽ 14

ԻՆՔՆԱՀԱՐՈՒՅՑ ԴԱՏԱՍՏԱՆ

Իշխանության հանդեպ պատիվ ցուցաբերող մարդիկ մեծ իշխանություն են ստանում և հարգանք են վայելում:

Ամեն մեկը չէ, որ Դավթի պես է արձագանքում իշխանությանը: Չափազանց հաճախ մեզ դուր է գալիս տեսնել թերացումներ մեր առաջնորդների մեջ, և մենք օգտագործում ենք դա որպես պատրվակ՝ անզուսպ կերպով վարվելու համար: Բայց մեր արձագանքն այլ մարդկանց մեղքերին, հատկապես՝ ովքեր առաջնորդներ են, մեր հոգևոր հասունության մեծագույն ցուցիչներից մեկն է: Այնպես որ, Աստված հաճախ է օգտագործում մեր ղեկավարների ձախողումները և սխալները՝ մեր սրտերի ճշմարիտ վիճակը բացահայտելու համար: Դա տեղի ունեցավ Նոյի որդիներից մեկի կյանքում:

Ճիշտ, բայց սխալ

Ջրհեղեղից հետո Նոյը հողագործությամբ զբաղվեց և խաղողի այգի տնկեց: Մի օր՝ չափազանց շատ գինի խմելուց հետո, նա իր վրանը գնաց և հարբած լինելու պատճառով, հանեց հագուստները և մերկ վիճակում քնեց:

Քամը՝ նրա կրտսեր որդին, մտավ այն վրանը, որտեղ պառկած էր Նոյը, տեսավ նրա մերկ մարմինը, դուրս եկավ և պատմեց այդ մասին իր երկու եղբայրներին՝ Սեմին և Հաբեթին: Նա միայն պատմեց իր «ընտանիքին»: Գուցե ասաց. «Տղանե՛ր, հայրը ուշագնացության չափ հարբած է և լիովին մերկ է»: Կամ, գուցե, ավելի վատ՝ նա առաջարկեց իր եղբայրներին տեսնել իրենց հոգևոր առաջնորդին մերկ վիճակում:

Երբ Սեմը և Հաբեթը լսեցին այդ մասին, մի հանդերձ վերցրին, իրենց ուսերից վեր պահեցին, ետ-ետ քայլելով և այլ կողմ նայելով մտան այդ վրանը և ծածկեցին իրենց հոր մերկությունը: Երբ Նոյը զարթնեց իր արբեցությունից, իմացավ, թե ինչ էր արել Քամը: Ահա թե ինչ հայտարարեց Նոյը.

> «Եվ նա անիծեց Քանանի՝ Քամի որդիների ժառանգներին.
> «Անե՛ծք քանանացիների վրա:
> Թող նրանք Սեմի և Հաբեթի սերունդների ծառաներից ամենացածրերը լինեն»:
> Եվ հետո Նոյն ասաց.
> «Թո՛ղ Սեմն օրհնված լինի իմ Տեր Աստծո կողմից, և թո՛ղ Քանանը նրա ծառան լինի:
> Թո՛ղ Աստված լայնացնի Հաբեթի տարածքը, և թո՛ղ նա բաժնեկցի Սեմի առատությանը, և թո՛ղ Քանանը նրա ծառան լինի»» (Ծնն. 9.25-27, NLT):

Ավելի վաղ այս գրքում խոսեցինք Աստծո իշխանությանը անհնազանդ լինելու հետևանքների մասին: Ովքեր միտումնավոր ապստամբում են, անեծքի ներքո են հայտնվում: Քամը դառը փորձով սովորեց այս ճշմարտությունը: Նա անարգեց Նոյին՝ դրանով իսկ արհամարհելով Աստծո լիազորած իշխանությունը Նոյի կյանքում, ինչի պատճառով նրա սերունդներն անեծքի ներքո հայտնվեցին: Հետաքրքիր է, որ Քամի անօրինությունները ծանր հետևանքներ առաջացրին նրա կյանքում, այնինչ, ոչինչ գրված չէ Նոյի արբեցությունից բխող հետևանքների մասին:

Նոյի բարոյական ձախողումը փորձություն դարձավ նրա երեք որդիների համար և ցույց տվեց, թե ինչ կար յուրաքանչյուրի սրտում: Նրանցից մեկն ապստամբ և անմիտ էր, իսկ երկուսը

պատվող և ողորմած էին: Հարբելով՝ Նոյը լավ օրինակ չթողեց, սակայն նրա վարքով պետք է զբաղվեր Աստված, ոչ թե նրա իշխանության ներքո գտնվողները: Երկու որդիները հասկացան սա և շարունակեցին պատվել նրան: Մեկը որոշեց անձամբ զբաղվել այդ հարցով՝ անարգելով և ամաչեցնելով իր հորը, և բերեց իր վրա այն անեծքը, որը, իր կարծիքով, նախատեսված էր իր հոր համար:

Սեմը և Հաբեթը նույնիսկ չնայեցին իրենց հոր ձախողմանը: Նրանք չէին ուզում տեսնել կամ թույլ տալ մյուսներին (իրենց կանանց և երեխաներին) տեսնել նրա վիճակը. այնպես որ, նրանք ծածկեցին նրան: Քանի որ նրանք երկյուղածություն ունեին իրենց հոր դիրքի հանդեպ, պաշտպանեցին նրա դիրքը և իրենց սրտերը: Քամը, ընդհակառակը, ծաղրեց և վարկաբեկեց իր հորը՝ փորձելով վարկաբեկել նրա իշխելու կարողությունը: Նա օգտագործեց այդ արարքը որպես պատրվակ, որ անհնազանդ լիներ իր հորը, երբ կամենար: Այսպիսին է յուրաքանչյուրը, ում սրտում անհնազանդություն կա: Նման մարդուն թվում է, թե իշխանությունը վարկաբեկելու դեպքում ինքը կարող է այլևս չհպատակվել դրան: Իր սրտում նա անզուսպ է դառնում:

Աստծո «փառքի սրահում» (Եբր. 11-րդ գլուխ) Աստված պարծենում է Նոյի հավատքով և հնազանդությամբ, սակայն մենք չենք գտնում այդտեղ Քամի անունը: Մի՞թե Քամը ճիշտ չէր: Մի՞թե Նոյը հարբած և մերկ չէր: Այո՛, *Քամը հարյուր տոկոսով ճիշտ էր իր խոսքերում, սակայն նա սկզբունքորեն սխալ էր:* Նրա արարքը կարելի է արդարացնել դատողության միջոցով. նա միայն պատմեց իր տեսածը, և նա միայն «ճիշտն էր խոսում»: Այնուամենայնիվ, հնազանդության և երկյուղածության սկզբունքներն այլ են: Սեմը և Հաբեթը պատվեցին իրենց հորը և օրհնություն ստացան:

Շատերը, Քամի պես, ճիշտ են այն ամենում, ինչ ասում են իրենց առաջնորդների մասին, սակայն նրանք սխալ են՝ ըստ Աստծո չափանիշների: Նրանք անարգանքով են վերաբերվել իրենց առաջնորդին և կորցրել են իրենց օրհնությունը: Նրանք ապրում են իրենց անմիտ մտածելակերպով և դատողությամբ: Նրանց սիրտը նման չէ Դավթի, Սեմի և Հաբեթի սրտերին: Սավուղի վերջնական անկումից հետո Դավիթը սգաց և հռչակեց.

«Մի՛ պատմեք Գեթի մեջ.
Ավետիս մի՛ տվեք Ասկաղոնի ճանապարհներում.
Միգուցե ուրախանան Փղշտացիների աղջիկները,
Միգուցե հրճվեն անթլփատների աղջիկները...
Սավուղն ու Հոնաթանը,
Շատ սիրելի և հաճելի իրենց կենդանության ժամանակ,
Իրենց մահվան ժամանակ էլ իրարից չբաժանվեցին.
Արծիվներից ավելի թեթևաշարժ
Եվ առյուծներից ավելի զորավոր:
Իսրայելի աղջիկնե՛ր, լացե՛ք Սավուղի համար,
Որ ձեզ վայելուչ կարմիրներ էր հագցնում,
Եվ ձեր հանդերձների վրա ոսկի զարդեր էր դնում»
(Բ Թագ. 1.20,23,24):

Դավիթը տասնչորս տարի շարունակ սաստիկ նեղություններ էր կրել իր առաջնորդի պատճառով: Բնական դատողությունը և մարմնավոր միտքը կդրդեին նրան ուրախանալ և հաղթանակ տոնել: Բայց կրկին, Դավիթն ապացուցեց, որ ապրում էր իշխանության սկզբունքներով, և իր օրինակով ցույց տվեց այդ սկզբունքները իր իշխանության ներքո գտնվող բոլոր մարդկանց: Արդյունքում նա մեծ առաջնորդ դարձավ Աստծո թագավորության մեջ: Իշխանության հանդեպ պատիվ ունեցող մարդիկ մեծ իշխանություն են ստանում և հարգանք են վայելում: Նրանք գրավել են Աստծո օրհնությունը: Իշխանությունը վատաբանող կամ ցածր գնահատող մարդիկ անարգանքի հունձք են պատրաստում իրենց համար և դատաստան են բերում իրենց վրա:

Ինքնահարույց դատաստան

Կրկին կարդանք լիազորած իշխանությանը վերաբերող մեր հիմքային աստվածաշնչյան հատվածը.

«Ամեն անձ թող հնազանդվի բարձր իշխանություններին, *որովհետև չկա իշխանություն, որ Աստծուց չէ,* և ներկա իշխանություններն Աստծուց են կարգված: Ուրեմն իշխանությանը հակառակվողն Աստծո հրամանին է հակառակվում,

և հակառակվողներն իրենց անձերին դատաստան կընդունեն» (Հռոմ. 13.1,2):

Իշխանությանը հակառակվող մարդկանց կյանքում դատաստան է գալիս: Իշխանությանը դիպչելով՝ Աստծուն եք դիպչում: Մինչև մեր ծառայությունը հիմնադրելը, ես աշխատել եմ երկու միջազգային ծառայություններում: Տեսել եմ, որ դատաստանը հետևողականորեն գալիս է իշխանությանը հակառակվելու արդյունքում: Այն արտահայտվում է տարբեր կերպերով, բայց մշտապես գալիս է: Դա հատկապես ակնհայտ էր դառնում մարդկանց աշխատանքից ազատելու դեպքում: Անկախ այն բանից, թե որքան անխոհեմ էր նրանց առաջնորդը, կամ որքան անհեթեթ էին հանգամանքները, եթե նրանք քննադատում կամ վատաբանում էին այդ առաջնորդին, եթե նրանք դառնանում էին, ի վերջո մեծ դժվարությունների մեջ էին հայտնվում: Ոմանք խնդիրներ էին ունենում ֆինանսական բնագավառում, մյուսները՝ աշխատանքի կամ առողջական բնագավառում, ուրիշները՝ երեխաների հետ կամ ամուսնության մեջ: Այդ խնդիրների ցանկը երկար է, բայց անսովոր դժվարությունների թելն անցնում էր յուրաքանչյուրի կյանքով, ով չէր պատվում իր հոգևոր վերակացուներին:

Ես տեսել եմ շատերին, որոնց հանդեպ սխալ են վարվել՝ նրանց աշխատանքից հեռացնելով, սակայն նրանք բարյացակամ վերաբերմունք են պահպանել: Նրանք հրաժարվել են խոսել իրենց նախկին գործատուների դեմ կամ լսել նրանց, ովքեր անում էին դա: Փոխարենը, նրանք օրհնում և պատվում էին այդ մարդկանց, երբ ինչ-որ մեկը հիշատակում էր նրանց: Նրանք գիտեին, որ Աստված էր իրենց Աղբյուրը, և Նա կմատակարարեր իրենց, հոգ կտաներ իրենց մասին, նաև առաջխաղացում կտար: Ես տեսնում էի, որ նրանք այնպիսի պաշտոններ էին զբաղեցնում, որոնք ավելի լավն էին, քան այն, ինչ նրանք ունեին մեր ծառայության մեջ: Ես հանդիպել եմ նրանցից մի քանիսին տարիներ անց, և նրանց կյանքը դեռևս օրհնված էր:

Ինչպե՞ս բարյացակամ վերաբերմունք պահպանել: Հիսուսն ասաց մեզ դրա գաղտնիքը. «Բայց Ես ասում եմ ձեզ՝ սիրե՛ք ձեր թշնամիներին, օրհնե՛ք ձեզ անիծողներին, բարի՛ արեք ձեզ ատողներին և աղո՛թք արեք ձեզ չարչարողների և ձեզ հալածողների

համար» (Մատթ. 5.44): Նա ասաց, որ պետք է աղոթենք մեզ չարչարողների կամ շահագործողների համար: Երբ անենք դա, մեր սիրտը կբժշկվի և չի քննադատի ու չի դառնանա:

Օժտվածություն և իշխանություն

Ես սովորել եմ այս սկզբունքն Աստվածաշնչից և տեսել եմ դրա հաստատումը կյանքի տարբեր իրավիճակներում. իշխանության դեմ խոսող մարդիկ անխուսափելիորեն դատաստան են բերում իրենց վրա: Դիտարկենք Մարիամին և Ահարոնին. «Մինչ նրանք Ասերովթում էին, Մարիամը և Ահարոնը քննադատեցին Մովսեսին, քանի որ նա ամուսնացել էր եթովպացի կնոջ հետ» (Թվոց 12.1, NLT):

Առաջինը՝ եկեք խոսենք այն մասին, թե ովքեր էին Մարիամը և Ահարոնը: Մարիամը Մովսեսի քույրն էր: Թույլ տվեք նշել նաև, որ Մարիամը նրա ավագ քույրն էր: Աստված կանչել էր նրան որպես մարգարեուհի (տե՛ս Ելից 15.20): Ահարոնը Մովսեսի ավագ եղբայրն էր, ինչպես նաև ժողովրդի քահանայապետը: Այսպիսով, խոսքը երկու մարդկանց մասին է, որոնք ակնառու առաջնորդական դիրքեր և մեծ համբավ ունեին:

Նրանք քննադատում էին Մովսեսին եթովպացի կնոջ հետ ամուսնանալու համար: Եթովպիան, որը գտնվում է Աֆրիկայի հյուսիս-արևելյան հատվածում, պատմաբաններից շատերի կարծիքով հինավուրց Քուշ երկիրն է: Այդ կինը Աբրահամի ժառանգը չէր. նա դուրս էր Աբրահամի ուխտից:

Մարիամը և Ահարոնը համոզված էին, որ Մովսեսը մեղանչել էր, կամ, լավագույն դեպքում, անհաջող որոշում էր կայացրել՝ ամուսնանալով Աֆրիկայի այդ դստեր հետ: Արդյո՞ք նրանց կարծիքը ճիշտ էր: Եթե հետևենք օրենքի տառին, թվում է՝ այդպես է: Աստված հայտնել էր Իր ցանկությունն այն մասին, որ Իսրայելի զավակներն ամուսնանային իրար միջև: Նա զգուշացրել էր, որ օտարերկրյա կանայք կհեռացնեին նրանց սրտերը դեպի օտար աստվածները: Այս պատվերը տրված էր Երկրորդ Օրինաց գրքում: Մովսեսի ամուսնությունն օտարերկրացի կնոջ հետ հակասություն էր թվում: Հավանաբար, նրանք մտածում էին, որ նա չափազանց տեսանելի և ազդեցիկ անձնավորություն էր՝ այդպես վարվելու համար:

Որպես նշում, մեր միակ պատվերն այսօր այն է, որ չմիանանք անհավատներին նույն լծի ներքո: Հարցն այլևս բնական ծագումնաբանությունը չէ, այլ՝ հոգևորը (տե՛ս Գաղատ. 3.28): Ըստ Նոր կտակարանի, ամուսնությունը տարբեր ազգերի միջև լիովին թույլատրելի է:

Այսպիսով, Մարիամը և Ահարոնը ճիշտ էին իրենց գնահատման մեջ, սակայն նույնքան սխալ էին, որքան Քամը: Մովսեսը նրանց առաջնորդն էր: Նրանց կողմից Մովսեսին քննադատելը և դատապարտելը անընդունելի էր: Քանի որ նրանք Մովսեսի ավագ եղբայրը և քույրն էին, նրանք կարող էին քննարկել դա նրա հետ՝ որպես ընտանեկան հարց, բայց իրար հետ բամբասելը կամ նրա վարքը ժողովրդի մեջ քննարկելը միանշանակ՝ մեղք էր:

Ի՞նչը դրդեց նրանց խոսել իրենց առաջնորդի դեմ: Պատասխանը հաջորդ խոսքում է. «Նրանք ասացին. «Մի՞թե Տերը միայն Մովսեսի միջոցով է խոսել: Չէ՞ որ Նա նաև մեր միջոցով է խոսել»: Բայց Տերը լսեց նրանց» (Թվոց 12.2, NLT):

Աստված խոսե՛լ էր նրանց միջոցով: Իհա՛րկե: Աստված անվանեց Ահարոնին Մովսեսի խոսնակը կամ մարգարեն: Մարիամը գործածվեց՝ մի մարգարեական սաղմոսի ծնունդ տալու համար, որը մինչև օրս գտնվում է Աստվածաշնչում: Անկասկած, նրանք հոգևոր պարգևներ ունեին: Այնուամենայնիվ, նրանց սխալը իրենց հոգևոր պարգևները կամ կարողությունները իշխանությունից վեր դասելն էր: Նրանց դատողությունը հետևյալն էր. քանի որ Մովսեսը մեղանչել էր, իսկ իրենք՝ ոչ, և քանի որ իրենք բոլորն էլ ուշագրավ կերպով գործածվել էին Տիրոջ կողմից, Մովսեսն այլևս չէր կարող իրենց առաջնորդը համարվել: Նրանք բարձրացրին իրենց հոգևոր պարգևները այն իշխանությունից, որն Աստված կարգել էր իրենց կյանքում:

Ինչ վերաբերում է այս սկզբունքի կիրառությանը Նոր կտակարանում, Պողոսը գրում է. «Պարգևները զանազան են, բայց Հոգին նույնն է» (Ա Կորնթ. 12.4): Այս և այլ սուրբգրային հատվածներ ցույց են տալիս, որ պարգևների վերակացուն Սուրբ Հոգին է: Այդ պարգևների թվում են առաջնորդելու և սովորեցնելու կարողությունը, բաշխելու շնորհքը, բժշկությունների, հոգիների զանազանության և հրաշագործության պարգևները (տե՛ս Ա Կորնթ. 12.7-10, Հռոմ. 12.6-8):

Պողոսը շարունակում է. «...Եվ պաշտոնները զանազան են, բայց Տերը նույնն է» (Ա Կորնթ. 12.4,5): «Պաշտոններ» բառը թարգմանված է հունարեն *«դիակոնիա»* բառից: Համաձայն «Թայերի բառարանի», այս բառն օգտագործվում է՝ նկարագրելու համար «առաքյալների նաև մարգարեների, ավետարանիչների, երեցների և այլոց պաշտոնն ու դրա կառավարումը»: Պարզ ասած, այս բառն օգտագործվում է՝ նկարագրելու համար հոգևոր իշխանության հինգ ծառայությունները կամ պաշտոնները եկեղեցում: Այս խոսքից հասկանում ենք, որ Տեր Հիսուսն է ղեկավարում այս պաշտոնները: Այս ճշմարտությունը հաստատվում է մեկ այլ հատվածում: Պողոսը գրում է այն մասին, որ երբ Հիսուսը հարություն առավ մեռելներից, «Նա մի քանիսին տվեց առաքյալներ լինելու, մի քանիսին՝ մարգարեներ, մի քանիսին՝ ավետարանիչներ, մի քանիսին՝ հովիվներ և վարդապետներ, սուրբերի կատարելության համար, պաշտոնի գործի համար, Քրիստոսի մարմնի շինության համար» (Եփես. 4.11,12):

Աստծո թագավորության իշխանությունը փոխանցվում է այս պաշտոնների միջոցով, ոչ թե պարգևների, ինչպես որ Հայրը տվեց ամեն իշխանությունը Հիսուսին՝ Նրա հարությունից հետո (տես Մատթ. 28.18): Հիսուսն Իր հերթին կարգեց ծառայության հինգ պարգևները, ինչպես նշված է Եփեսացիների թղթի վերոբերյալ հատվածում: Նշանակում է՝ Նրա իշխանությունը փոխանցվում է կարգված պաշտոնների միջոցով: Մենք պետք է մտապահենք այն փաստը, որ որևէ անձնավորություն կարող է լինել ավելի օժտված, քան իր հովիվը, սակայն հովիվը, որն իշխանության ներկայացուցիչ է՝ ըստ իր պաշտոնի, վեր է այդ օժտված մարդուց:

Ես կարող էի բազմաթիվ օրինակներ բերել այն ողբերգական հետևանքներից, որոնք տեղի են ունենում, երբ պարգևներ ունեցող մարդիկ բարձրանում են սեփական աչքերում: Ահա այդ օրինակներից մեկը. մի հովվի օգնական, որն անչափ օժտված էր քարոզելու և սովորեցնելու մեջ: Նրա դասերը, որոնք անցկացվում էին միայն կանգնելու տեղեր ունեցող սրահում, միշտ լեփ-լեցուն էին, քանի որ Աստծո պարգևը նրա կյանքում ակնհայտ էր: Շաբաթը մեկ անգամ նա աղոթքի հավաքույթ էր անցկացնում, և շատերն էին հաճախում այդ հավաքույթներին:

Որքան հայտնի էր նա դառնում, այնքան ավելի ազատորեն էր սկսում քննադատել եկեղեցում հաստատված կանոնները և անձամբ ավագ հովվին: Նա ասում էր, որ ավագ հովվի կանոնները սահմանափակում էին Սուրբ Հոգու շարժը, և կիսվում էր այդ գաղափարով իրեն շրջապատող մարդկանց հետ: Նրա քննադատական վերաբերմունքը փոխանցվեց ավագ հովվի ևս մեկ օգնականի: Որոշ ժամանակ անց նրանք սկսեցին միասին անցկացնել այդ ծառայողին վստահված աղոթքի երեկոյան հավաքույթները: Մի երեկո՝ աղոթքի հավաքույթի ժամանակ, ավագ հովիվն աննկատ եկեղեցու դահլիճ մտավ և, նստելով դահլիճի ետնամասում, տեսավ, որ իր երկու օգնականներն անցկացնում էին այդ ծառայությունը այնպես, ինչպես որ նա արգելել էր նրանց: Փոխարենը բարեխոսեին եկեղեցու, քաղաքի և կորսվածների համար, նրանք առաջնորդում էին մարդկանց այլ տեսակի աղոթքների մեջ և հանդիմանում էին նրանց, եթե, իրենց կարծիքով, մարդիկ ճշտորեն չէին հետևում իրենց ցուցումներին: Ներկաները շփոթված էին:

Երկուսն էլ օժտված ծառայողներ էին, սակայն հպատակված չէին եկեղեցու իշխանությանը: Նրանց հանցանքի լրջությունը քողարկվում էր այն փաստով, որ Տերն օգտագործում էր իրենց՝ Իր ժողովրդին քարոզելու և ծառայելու համար:

Հպատակություն՝ դատաստանի միջոցով

> «Եվ Մովսեսն ավելի խոնարհ էր, քան ցանկացած մարդ երկրի վրա: Եվ անմիջապես Տերը դիմեց Մովսեսին, Ահարոնին և Մարիամին. «Երեքդ էլ դուրս եկեք խորանից»: Եվ երեքն էլ դուրս եկան» (Թվոց 12.3,4, NLT):

Այս հատվածում տեսնում ենք այն պահանջներից մեկը, որ Աստված ներկայացնում է Իր առաջնորդների բնավորության վերաբերյալ. խոնարհությունը: Մովսեսն ամենախոնարհ մարդն էր երկրի վրա: Բայց Մարիամը և Ահարոնն այդպես չէին նկարագրում նրան: Նրանց կարծիքը Մովսեսի մասին ավելի շուտ հետևյալն էր. *«Նա իր չափն անցնում է»:*

Տերը դուրս կանչեց խորանից երեքին էլ: Այլ թարգմանությունը

ների մեջ օգտագործվում է *«հանկարծակի»* բառը՝ *«անմիջապես»* բառի փոխարեն: Հաճախ դատաստանը գալիս է՝ առանց զգուշացման: Երբ երեքով դուրս էին գալիս, շատ հնարավոր է, որ Մարիամը գլխով էր անում Ահարոնին. «Պատրաստվի՛ր: Մովսեսը սխալ գործեց՝ օտարերկրացի կնոջ հետ ամուսնանալով: Աստված քեզ է առաջնորդ դարձնելու, որովհետև քո վարքն օրինակելի է եղել»: Նման տեսակի դատողություններ առաջանում են, երբ մենք բաց ենք լինում մոլորության համար՝ հակառակվելով իշխանությանը:

Իհարկե, իրականում լիովին այլ բան տեղի ունեցավ: Աստված պատվիրեց Ահարոնին և Մարիամին առաջ գալ: Նա հիշեցրեց նրանց, որ Ինքը վստահել էր Մովսեսին Իր ամբողջ տունը, և որ Ինքը խոսում էր նրա հետ երես առ երես կամ անմիջականորեն, ոչ թե առակներով: Դրանից հետո Աստված տվեց հետևյալ հարցը. «Դուք չպե՞տք է վախենայիք նրան քննադատելուց» (խոսք 8, NLT): Երբ քննադատում ենք առաջնորդներին, մենք մատնում ենք Տիրոջ երկյուղի բացակայությունը մեզանում: Լսե՛ք, թե ինչ տեղի ունեցավ. «Տերը սաստիկ բարկացած էր նրանց վրա, և Նա հեռացավ: Երբ ամպը շարժվեց խորանի վերևից, հանկարծ Մարիամը ձյան պես սպիտակ դարձավ՝ բորոտության պատճառով» (Թվոց 12.9,10, NLT):

Հակառակվելով իշխանությանը՝ մենք դատաստան ենք բերում մեզ վրա: Այդ դատաստանը կարող է ընդգրկել Աստծո ներկայության հեռանալը՝ որևէ տեսակի դժբախտության հետ մեկտեղ: Վերադառնալով այն երկու հովիվներին, որոնց մասին քիչ առաջ պատմեցի, կարճ ժամանակ անց երկուսն էլ հեռացան այդ եկեղեցուց: Նրանցից մեկին հեռացրին աշխատանքից, իսկ մյուսն ինքն աշխատանքից դուրս եկավ, մինչև որ իրեն կհեռացնեին: Նրանցից մեկն անմիջապես իր եկեղեցին հիմնեց, բայց նրա մշտական խնդիրը փոքրաթիվ եկեղեցական համայնքն էր, որն այդպես էլ հարյուր անդամից ավելի չդարձավ: Երբ նա հովվի օգնական էր, նրա հոգևոր խնամքի ներքո ավելի քան վեց հարյուր մարդ կար: Նրա հեռանալուց կարճ ժամանակ անց նրա ընտանիքում ողբերգություն տեղի ունեցավ:

Մյուս օգնականը հեռացավ այդ քաղաքից և որոշակի հաջողություն ունեցավ ծառայության մեջ՝ կարճ ժամանակով: Նրա

եկեղեցին աճեց՝ մի քանի հարյուր անդամի հասնելով, սակայն նա մեկուսացված էր զգում իրեն և գրեթե ոչ ոքի չէր վստահում: Ավելի քան քսան տարի անց նրա եկեղեցում բազմաթիվ պառակտումներ եղան, և նրա առաջնորդական ոճը մեծ շփոթություն առաջացրեց իր բնակավայրում: Ի վերջո, նա հեռացավ այդ քաղաքից: Տարիներ առաջ նա ամենից ոգեշնչող և պահանջված քարոզիչն էր մեր մեծ եկեղեցում. շատերը հավատում էին, որ նա զգալի ազդեցություն էր թողնելու մեր երկրում: Ողբերգական է, որ, ամենայն հավանականությամբ, նրա համառությունը տարավ նրան կյանքի այլ ճանապարհով:

Հենց որ դատաստանը եկավ, Ահարոնը անմիջապես ապաշխարության աղաղակ բարձրացրեց իր և Մարիամի համար: Աստված ներեց նրանց, սակայն, Աստծո հրամանով, Մարիամը պետք է յոթ օրով մեկուսացվեր ժողովրդից: Կան շատ հարցեր այն մասին, թե ինչու Մարիամը հարված ստացավ, իսկ Ահարոնը՝ ոչ: Պատճառներից մեկը կարող է լինել այն, որ Մարիամն ավելի սաստիկ էր նախատել Մովսեսին, քան Ահարոնը: Ինչ պատճառ էլ լինի, այս միջադեպը ցույց է տալիս, թե որքան լրջորեն է Աստված դիտարկում այս հարցը:

Իշխանությանը հակառակվելու պատճառով եկած դատաստանը շատ հաճախ սովորելու և աճելու հնարավորություն է: Այն կրելուց հետո մարդիկ, որոնք ապաշխարում են, հաճախ եկեղեցու ամենահավատարիմ անդամներն են դառնում: Հակառակությունը միշտ չէ, որ բխում է չար սրտից. հաճախ դրա պատճառն անտեղյակությունն է: Հենց որ մարդը գիտակցում է դա, անմիջապես ապաշխարում է: Երբեմն դա կարող է որոշ ժամանակ պահանջել, քանի որ ոմանք ավելի դիմացկուն են այն ցավին, որն առաջանում է խթանին քացի տալուց:

Անկասկած, Մարիամը երբեք չմոռացավ իր նվաստացումը: Նա չկրկնեց և սխալ վարք չդրսևորեց, քանի որ այլևս անհնազանդ չէր: Այնուամենայնիվ, ոչ բոլորը թողեցին իրենց հակառակությունը՝ Մարիամի և Ահարոնի պես, և ո՛չ էլ սովորեցին նրանց օրինակից: Հետագայում այլ մարդիկ ժողովրդից ապստամբեցին Աստծուց կարգված իշխանության դեմ: Նրանք չապաշխարեցին և հավիտենական դատաստանի արժանացան:

Ինչո՞ւ եք ձեզ բարձրացնում

Երեք մարդ ժողովրդի միջից՝ Կորխը, որը Ղևիի ցեղից էր, Դաթանը և Աբիրոնը, որոնք երկուսն էլ Ռուբենի ցեղից էին, հավաքեցին ժողովրդի 250 առաջնորդների՝ ակնառու մարդկանց, Մովսեսի և Ահարոնի դեմ և ասացին. «Էլ բավակա՛ն է ձեզ, որովհետև ամբողջ ժողովքը՝ ամենքն էլ սուրբ են, և Տերը նրանց մեջ է: Եվ ինչո՞ւ եք ձեզ բարձրացնում Տիրոջ ժողովրդի վրա» (Թվոց 16.3):

Ավելի պարզ բառերով՝ Մովսեսի և Ահարոնի իշխանության ներքո գտնվող մարդիկ ասացին. «Լսե՛ք, ինչո՞ւ եք ձեզ բարձրացնում մեզնից՝ որպես մեր առաջնորդներ: Բոլորս Աստծո ժողովուրդն ենք, և մենք կարող ենք հնազանդվել Նրան՝ առանց ձեր հրամանների»: Դուք անպայման լսած կլինեք այս ուղերձը: Եթե ոչ նույն բառերով, ապա հաճախ այն ներկայացվում է վարքով կամ ավելի մեղմ ձևակերպմամբ, սակայն դրա ետևում, միևնույն է, նույն հոգին է: Գուցե լսած կլինեք. «Բոլորս հավասար ենք», կամ՝ «Բոլորս եղբայրներ և քույրեր ենք», կամ՝ «Բոլորս ստացել ենք Սուրբ Հոգուն. ինչո՞ւ մենք պետք է հպատակվենք նրանց առաջնորդությանը»: Նման մարդիկ համոզված են, որ իրենք կարող են լսել Տիրոջը նույն կերպով, ինչպես ցանկացած մարդ:

Տասնամյակներ առաջ եկեղեցու ներսում մի շարժում էր սկսվել, որը կոչվում էր «Աշակերտական շարժում», և 1970-ական թվականներին այն ծայրահեղության մեջ հայտնվեց: Այդ շարժման ներսում հպատակությունն առաջնորդներին հավասարակշռությունից դուրս էր եկել: Մարդիկ հարցնում էին հովիվներին արձակուրդի գնալու, մեքենա կամ այլ արժեքավոր իր գնելու, կամ ինչ-որ մեկի հետ ամուսնանալու մասին: Ես չեմ եղել այդ շարժման մեջ. այնպես որ, ճշտորեն չգիտեմ, թե որքան ծայրահեղ էր այն դարձել: Այնուամենայնիվ, դրանում ներգրավված մարդկանցից ոմանք ասում էին, որ այն դադարել էր սուրբգրային լինելուց:

Այս շարժումը և այլ չարաշահումներ առաջնորդների կողմից հակադարձ միտման պատճառ դարձան: Քանի որ հոգևոր իշխանությունը չարաշահվել էր, մարդիկ որոշեցին անարգել այն: Դրա հետևանքը ծայրահեղ ազատամիտ դիրքորոշում ունեցող մարդիկ էին, ինչպես նաև հոգևոր թափառաշրջիկներ, որոնք տեղափոխվում էին եկեղեցուց՝ եկեղեցի և համաժողովից՝ համաժո-

ղով: Նրանք անցկացնում էին սեփական աղոթքի հավաքույթներ և հիմնում էին սեփական եկեղեցիներ, քանի որ չէին կարողանում բավականաչափ կատարյալ հովիվ գտնել՝ նրան հպատակվելու համար: Այս մտածելակերպը նպաստեց անօրինության գաղտնի ուժին, որի խորհուրդը, ինչպես Պողոսը զգուշացնում էր, զորանալու է մեր օրերում:

Այն մարդիկ, որոնք դուրս եկան Մովսեսի դեմ, եղել էին փարավոնի դաժան իշխանության ներքո: Դրանից հետո եկավ Մովսեսը և մուտք գործեց նրանց կյանք: Այնուամենայնիվ, նրա իշխանությունը նույնպես ծայրահեղական էր թվում, բայց՝ այլ իմաստով: Երբեմն նա պատճառում էր նրանց ավելի մեծ դժվարություններ, քան այն, ինչ նրանք տեսել էին փարավոնի ժամանակ: Հավանաբար, նրանք այսպես էին մտածում. իրենք արդեն դուրս էին եկել Եգիպտոսից, փարավոնն այլևս չէր իշխում իրենց, Մովսեսը կատարել էր իր նպատակը, և այժմ յուրաքանչյուրը պատասխանատու էր իր համար: Այդ մարդիկ հոգնել էին իշխանությունից: Թող յուրաքանչյուրն իր հայեցողությամբ վարվեր: Չէ՞ որ բոլորն էլ Աստծո ժողովուրդն էին, իսկ առաջնորդները միայն դժվարություններ էին պատճառում իրենց: Այնպես որ, նրանցից մի քանիսը միաբանվեցին և հակառակվեցին Մովսեսին:

Ես հաճախ եմ տեսել սա՝ որպես շրջիկ քարոզիչ: Գործարար մարդիկ, բարեխոսական աղոթքախմբերը, եկեղեցական խորհրդի անդամները կամ այլ խմբեր եկեղեցիներում միաբան հակառակվում են հովիվներին: Նրանք պնդում են, որ իրենցից յուրաքանչյուրը լսում է Աստծուց, իսկ իրենց հովիվը հոգևորապես անհեռատես է: Եթե միայն նրանք իմանային, թե ինչ հոգուց են:

Հոգևոր իշխանությունը կարգվում է

Ինչպես արդեն նշել եմ, չափազանց հաճախ Արևմուտքի բնակիչները դժվարանում են հասկանալ թագավորության սկզբունքները: Մենք ապրում ենք ազատ ձեռնարկատիրական հնարավորություններ ունեցող ժողովրդավարական հասարակությունում, որը մեծապես տարբերվում է թագավորությունից: Թագավորությունն ունի թագավոր՝ ժառանգական իրավունքով, ինչպես նաև կարգված առաջնորդներ: Ժողովրդավարության դեպքում մար-

դիկ են ընտրում իրենց կառավարիչներին: Այս ազատ ձեռնարկատիրական համակարգում նախաձեռնող մարդիկ, որոնք ունեն փող, կարողություններ, ազդեցություն և տաղանդներ, հեշտորեն կարող են իշխանության հասնել: Բայց այդպես չէ Աստծո թագավորության մեջ, որում առաջնորդները կարգվում են:

Հիսուսն է կարգում ծառայողական պաշտոնները: Ոչ ոք չի կարող որևէ մարդու կարգել այդ իշխանական դիրքերում՝ բացի Տիրոջից, և Նա անում է դա Աստծո Հոգով: Երբ մենք ենթադրում ենք, որ որևէ իշխանական դիրք ունենք՝ առանց Աստծո նշանակման, մենք բարձրացնում ենք մեզ: Սա վերաբերում է նաև այն մարդկանց, ովքեր կանչված են, բայց դեռևս կարգված չեն: Պողոսը զգուշացնում է. «Որովհետև Աստծո շնորհքով, որ ինձ տրված է, ասում եմ ձեր մեջ ամենին՝ բան չմտածել նրանից ավելի, քան թե արժան է մտածել» (Հռոմ. 12.3):

Եբրայեցիների թղթի հեղինակը հաստատում է հոգևոր իշխանության դիրքերին չհավակնելու կարևորությունը. «Եվ ոչ թե մեկն իր անձի համար պատիվը առնում է, այլ նա, որ Աստծուց կանչված է, ինչպես Ահարոնը: Այսպես էլ Քրիստոսը, ոչ թե Ինքն Իր Անձը փառավորեց, որ Քահանայապետ լինի...» (Եբր. 5.4,5): Նույնիսկ Հիսուսը չհավակնեց Իր իշխանական դիրքին. Հա՛յրը կարգեց Նրան:

Ահա թե ինչպես է Պողոսը նկարագրում իրեն. «Պողոս՝ Հիսուս Քրիստոսի ծառա, կանչված՝ առաքյալ լինելու, առանձնացված՝ Աստծո Ավետարանի համար» (Հռոմ. 1.1, NKJV): Նա օգտագործեց *«կանչված»* և *«առանձնացված»* բառերը: *«Առանձնացված»* ասելով՝ նա նկատի ուներ իր կարգված լինելը: Պողոսը կանչված էր որպես առաքյալ աշխարհի հիմնադրումից առաջ, թեև նա չկարգվեց այդ պաշտոնին փրկվելու պահին: Նա ստուգման շրջան անցավ, որում հպատակվեց Անտիոքի եկեղեցու առաջնորդներին: Այդ ստուգումը տարիներ տևեց, և իր փորձից նա գրեց հետևյալ ցուցումն առաջնորդների համար. «Եվ սրանք առաջ թող փորձվեն և հետո այն պաշտոնը մտնեն, եթե անարատ լինեն» (Ա Տիմոթ. 3.10):

Պողոսի կյանքը սուրբգրային օրինաչափություն հաստատեց մեր օրերի համար: Հենց որ Պողոսն անցավ հավատարմության ստուգումն օգնության ծառայության մեջ, նա առաջխաղա-

ցում ստացավ՝ ուսուցչի պաշտոն ստանձնելով (տես Բ Տիմոթ. 1.11, Գործք 13.1): Աստվածաշնչում տեսնում ենք Տիրոջից տրված պաշտոնների և ծառայողական դիրքերի աստվածային հերթականությունը. «Եվ ոմանց դրեց Աստված եկեղեցում. սկզբում՝ առաքյալներին, երկրորդ՝ մարգարեներին, երրորդ՝ վարդապետներին, հետո... օգնություններ...» (Ա Կորնթ. 12.28):

Պողոսը փորձվելու էր ոչ միայն օգնության ծառայության մեջ, այլև ուսուցչի պաշտոնում: Կրկին տեսնում ենք այն օրինաչափությունը, ըստ որի Աստված առանձնացնում է Իր ծառայողներին ավելի բարձր պաշտոնի համար, երբ Պողոսն առաջխաղացում ստացավ՝ ուսուցչից առաքյալ դառնալով: «Եվ Անտիոքում՝ այնտեղի եկեղեցու մեջ, կային մի քանի մարգարեներ և վարդապետներ՝ Բառնաբասը և Նիգեր ասված Շմավոնը, և Ղուկիոս Կյուրենացին, և Հերովդես չորրորդապետի սննդակից Մանայենը, և Սողոսը» (Գործք 13.1): Սողոսը, որը հետագայում Պողոս կոչվեց, թվարկված է Անտիոքի եկեղեցու ուսուցիչների և մարգարեների մեջ: Մենք գիտենք Ա Տիմոթեոս 2.11-ից, որ նա մարգարեներից մեկը չէր, այլ ուսուցիչ էր: Շարունակելով կարդալ՝ տեսնում ենք. «Երբ նրանք ծառայում էին Տիրոջը և ծոմ էին պահում, Սուրբ Հոգին ասաց. «Այժմ առանձնացրե՛ք Ինձ համար Բառնաբասին և Սողոսին՝ այն գործի համար, որի համար Ես կանչել եմ նրանց»» (Գործք 13.2, NKJV):

Սուրբ Հոգին խոսեց. «Այժմ առանձնացրե՛ք Ինձ համար»: Ժամանակը եկել էր: Դա պետք է արվեր ոչ թե մեկ շաբաթ առաջ կամ հետո, այլ՝ հենց այդ պահին: Եվ Տերն էր որոշել և՛ ժամանակը, և՛ այն մարդկանց, որոնց պետք էր առանձնացնել: Տարիներ շարունակ Պողոսը գիտեր, որ իր կյանքում առաքելական կանչ կար: Դա հայտնվել էր նրան Դամասկոսի ճանապարհին տեղի ունեցած հանդիպումից երեք օր անց (տես Գործք 9.15): Այժմ Հիսուսն առանձնացրեց այն անձնավորությանը, որին Ինքը տարիներ առաջ կանչել էր: Պողոսը հավատարմորեն ծառայել էր՝ չփորձելով ապահովել սեփական առաջխաղացումը:

Տերը գործածեց այն եկեղեցու հաստատված առաջնորդներին, որտեղ Պողոսը հավատարմորեն ծառայել էր, որոնք էլ նույն կերպով էին կարգվել: Շարունակում ենք կարդալ. «Այն ժամանակ ծոմ պահեցին և աղոթք արին, նրանց վրա ձեռք դրին, արձակե-

ցին: Եվ նրանք էլ, Սուրբ Հոգուց ուղարկված... գնացին...» (Գործք 13.3,4):

Ուշադրություն դարձրեք, որ նրանց «արձակեցին»: Պողոսին և Բառնաբասին արձակեցին կամ ուղարկեցին այդ եկեղեցու հաստատված առաջնորդները: Եվ կարդացեք հաջորդ խոսքը. «Եվ... Սուրբ Հոգուց ուղարկված»: Հիսուսը կարգեց և առանձնացրեց Պողոսին և Բառնաբասին Սուրբ Հոգով՝ հաստատված առաջնորդների միջոցով: Իմաստն այն է, որ Հիսուսը կատարեց դա՝ օգտագործելով իշխանության պատշաճ կարգը:

Հիսուսը չգործածեց Անտիոքի եկեղեցու մարգարեական բարեխոսական աղոթքախումբը, ոչ էլ ուղարկեց Պողոսին և Բառնաբասին որևէ մարգարեական հավաքույթի, որը տեղի էր ունենում այլ քաղաքում կամ իրենց քաղաքի մյուս մասում գտնվող այլ եկեղեցում, որին Պողոսը ենթակա չէր: Նա չգործածեց հոգևոր պարգևներ ունեցող որևէ անհատի իրենց եկեղեցում՝ այդ մարդկանց առաջնորդական դիրքում հաստատելու համար:

Տերը գործածեց այն առաջնորդներին, որոնց Ինքը հաստատել էր Անտիոքի եկեղեցում: Ահա թե ինչու է Աստված զգուշացնում. «Մի՛ շտապիր ոչ ոքի ձեռնադրել» (Ա Տիմոթ. 5.22, NKJV): Առաջնորդները հետևում են եկեղեցում ծառայող մարդկանց հավատարմությանը. այնպես որ, երբ Աստված խոսում է նրանց սրտում՝ որևէ մարդու կարգելու վերաբերյալ, նրանք վստահ են, որ դա Տիրոջ նշանակումն է: Սա այն միջոցն է, որով Տերը առաջնորդական դիրքերի է կարգում մարդկանց Նոր կտակարանի եկեղեցում:

Վաղաժամ՝ կոչման մեջ

Մովսեսը կանչված էր և գիտեր այդ մասին երիտասարդ տարիքից:

> «Եվ երբ որ նրա քառասուն տարեկան ժամանակը լրացավ, նրա սրտի մեջ ընկավ, որ իր եղբայրներին՝ Իսրայելի որդիներին, այցելություն անի: Եվ երբ որ տեսավ, որ նրանցից մեկը զրկված էր, պաշտպանեց և այն զրկվածի վրեժն առավ՝ եգիպտացուն սպանելով: Կարծում էր, թե նրա եղ-

> բայրները կիմանան, որ Աստված նրա ձեռքով փրկություն պիտի տա նրանց, բայց նրանք չիմացան: Եվ հետևյալ օրը երևաց նրանց, որ կռիվ էին անում, և հորդորեց նրանց դեպի խաղաղություն՝ ասելով. «Մարդի՛կ, դուք եղբայրներ եք, ինչո՞ւ եք իրար զրկում»: Բայց նա, որ ընկերոջը զրկում էր, մերժեց նրան և ասաց. «Քեզ ո՞վ կանգնեցրեց մեզ վրա իշխան և դատավոր»» (Գործք 7.23-27):

Այն մարդիկ, որոնց նա պետք է առաջնորդեր, չճանաչեցին նրա իշխանությունը: Նրանցից մեկը կրկնեց գրեթե նույն խոսքերը, որոնք հետագայում ասացին Կորխը, Դաթանը և Աբիրոնը. «Քեզ ո՞վ կանգնեցրեց մեզ վրա իշխան և դատավոր»: Սակայն նա որևէ կերպով չպատժվեց դրա համար, քանի որ Մովսեսը դեռևս կարգված չէր: Թեև կանչն արդեն նրա սրտում էր, Աստծո իշխանությունը դեռևս նրա կյանքում չէր:

Ես հավատում եմ, որ անապատում մարդիկ չափազանց սաստիկ կերպով էին ընդդիմանում Մովսեսին, քանի որ նրանք տեսնում էին Աստծո իշխանությունը նրա կյանքում, բայց այն իրենց դուր չէր գալիս: Դա ավելի է բացատրում Աստծո խոսքերը, երբ Նա ասաց, որ մարդիկ իրականում հակառակվում էին Իրեն, ոչ թե Մովսեսին: Չափազանց հաճախ նույնը տեղի է ունենում նաև այսօր: Ովքեր ճշմարտապես Աստծո իշխանությունն ունեն, հաճախ ամենից շատ են հակառակությունների բախվում, քանի որ իրականում մարդիկ հակառակվում են աստվածային իշխանությանը:

Ինքնանշանակում՝ խաբուսիկ և վտանգավոր

Երբ Կորխը, Դաթանը և Աբիրոնը հակառակվեցին Մովսեսին, նա, անկասկած, կարգված էր, և նրա իշխանությունն ակնհայտ էր բոլորի համար: Իսկ նրանք ինքնանշանակ, հպարտ մարդիկ էին: Նրանց դատողությունը ապստամբության խաբուսիկ և վտանգավոր ձև էր: Այն խաբուսիկ էր այն իմաստով, որ նրանք հավատում էին, որ իրենց ապստամբությամբ Աստծուն էին ծառայում: Այդ 250 առաջնորդները համոզել էին իրենց, որ իրենք ընդամենը հակառակվում էին Մովսեսի և Ահարոնի դեմ. նրանցում նույնիսկ կասկածի նշույլ չկար, որ իրենց հակառակությունն

ուղղված էր Աստծուն, քանի որ նրանք ցանկանում էին ծառայել Նրան: Ինչ-որ պահի նրանք անտեսեցին այն փաստը, որ Աստծո իշխանությունը Մովսեսի կյանքում էր, ինչն էլ դրդեց նրանց ապստամբել նրա դեմ: Դա վտանգավոր բան է, քանի որ հաճախ նման վարքը մեծագույն դատաստանի է արժանանում: Այն նման է լյուցիֆերի անկմանը:

Այդ մարդկանց խոսքերը լսելուն պես Մովսեսը ճանաչեց նրանց ետևում գտնվող հոգին և երեսնիվայր ընկավ: Նա չվիճեց նրանց հետ: Աստծուց կարգված մարդիկ Նրա սիրտն ունեն, և նրանք չեն պայքարում՝ իրենց դիրքը հաստատելու համար: Մովսեսը մտերմորեն ճանաչում էր Աստծուն և այդ պատճառով գիտեր, որ Նա կհաստատեր Իր կողմից կարգված իշխանությունը: Մովսեսն ասաց.

> «Փո՞քր բան է երևում ձեզ, որ Իսրայելի Աստվածը, ձեզ Իրեն մոտեցնելու համար, Իսրայելի ժողովքից բաժանեց ձեզ, որ Տիրոջ խորանի պաշտոնը անեք և ժողովքի առջև կանգնեք՝ նրանց սպասավորություն անելու համար: Եվ քեզ, և՛ քեզ հետ քո բոլոր եղբայրներին՝ Ղևիի որդիներին Իրեն մոտեցրեց, և դուք քահանայությունն էլ եք ուզում: Ուրեմն դու և քո ամբողջ ժողովքը Տիրոջ դեմ եք ժողովվել» (Թվոց 16.9-11):

Նրանք ուզում էին ավելին, քան իրենց լիազորվել էր, և այնպես ստացվեց, որ իրենց համար անսպասելի կերպով նրանք Տիրոջ դեմ հավաքվեցին: Նրանք ձգտում էին իշխանության այնպիսի մակարդակի, որն Աստված չէր տվել իրենց: Մովսեսը կրկնեց նրանց համար. «Դուք շատ բան եք ձեզ վրա վերցնում, ո՛վ Ղևիի որդիներ» (Թվոց 16.7, NKJV):

Հենց որ պարզ դարձավ, որ նրանք չէին թողնելու իրենց համառությունը, Տերը կարգադրեց Մովսեսին.

> «Պատվիրի՛ր ամբողջ ժողովրդին հեռանալ Կորխի, Դաթանի և Աբիրոնի վրանների մոտից»:

Մովսեսը վեր կացավ և շտապեց դեպի Դաթանի և Աբիրոնի վրանները՝ Իսրայելի հպատակված առաջնորդների ուղեկցությամբ:

- Շտապե՛ք,- ասաց նա ժողովրդին,- հեռացե՛ք այս չար մարդկանց վրանների մոտից և նրանց պատկանող որևէ բանի մի՛ դիպչեք, այլապես կկործանվեք՝ նրանց մեղքերի պատիժը կրելով:

Եվ ամբողջ ժողովուրդը հեռացավ Կորխի, Դաթանի և Աբիրոնի վրանների մոտից: Այդ ժամանակ Դաթանը և Աբիրոնը դուրս եկան և կանգնեցին իրենց վրանների մուտքերի մոտ՝ իրենց կանանց, երեխաների և մանուկների հետ:

Եվ Մովսեսն ասաց.

- Այսպես կիմանաք, որ Տերն է ուղարկել ինձ՝ կատարելու այն ամենը, ինչ արել եմ, քանի որ ես ինձնից չեմ արել դրանք: Եթե այս մարդիկ մահանան բնական մահով, նշանակում է՝ Տերը չի ուղարկել ինձ: Բայց եթե Տերը մի հրաշք անի, և գետինը բացվի և կուլ տա նրանց և նրանց ամբողջ ունեցվածքը, և նրանք ողջ-ողջ գերեզմանը իջնեն, դուք կիմանաք, որ այս մարդիկ անարգել են Տիրոջը:

Հազիվ էր նա վերջացրել այդ խոսքերը, երբ գետինը հանկարծ ճեղքվեց նրանց ոտքերի տակ: Երկիրը բացվեց և կուլ տվեց այդ մարդկանց՝ նրանց ընտանիքի անդամների և հետևորդների հետ մեկտեղ, որոնք կանգնած էին նրանց հետ, նաև այն ամենին, ինչ նրանց էր պատկանում: Եվ նրանք ողջ-ողջ գերեզմանը իջան՝ իրենց ամբողջ ունեցվածքով: Երկիրը փակվեց նրանց վրա, և բոլորը վերացան: Իսրայելի ամբողջ ժողովուրդը փախավ, քանի որ նրանք լսեցին նրանց ճիչերը և վախեցան, որ երկիրն իրենց էլ կուլ կտա: Դրանից հետո Տիրոջից կրակ դուրս եկավ և այրեց այն 250 մարդկանց, որոնք խունկ էին մատուցում (տե՛ս Թվոց 16.24-35, NLT):

Այդ մարդկանց ծանր դատաստանը երկու սթափեցնող փաստ է հայտնում մեզ: Առաջինը՝ նրանք իսկապես հավատում էին, որ դեռ ծառայում էին Աստծուն, այնինչ, իրականում, հակառակվում էին Նրան: Երկրորդը՝ Նոր կտակարանում Հուդան զգուշացրեց, որ վերջին օրերում եկեղեցում կլինեն նման մարդիկ, որոնք «իշխանությանը կպահանջեն՝ իրենց անուրջների հիման վրա, անբարո կյանք կվարեն, կարհամարհեն իշխանությունը և կծաղրեն փառավորների զորությունը» (խոսք 8, NLT): Հուդան ավելացրեց. «Որքա՜ն սարսափելի կլինի նրանց համար: Քանի որ նրանք

հետևում են...Կորխի չար օրինակին, նրանք կկործանվեն՝ իրենց ապստամբության պատճառով» (խոսք 11, NLT):

Ապստամբությունը վարակիչ է

Թվոց գրքի այս գլխում ներկայացված է ապստամբության երկու առանձին դեպք: Առաջինը Կորխի, Դաթանի և Աբիրոնի ապստամբությունն է՝ 250 այլ առաջնորդների հետ: Երկրորդը տեղի ունեցավ հաջորդ օրը, երբ ամբողջ ժողովուրդը դուրս եկավ Մովսեսի և Ահարոնի դեմ: Նրանք տրտնջում էին նրանց դեմ՝ ասելով. «Դուք Տիրոջ ժողովրդին մեռցրիք» (Թվոց 16.41): Հասկանալի է, որ նրանք ցնցված էին նախորդ օրը տեղի ունեցածից, սակայն նրանք սխալմամբ ուղղեցին իրենց բարկությունը և մեղադրանքները Մովսեսին: Այդ մարդկանց ապստամբությունն այնքան համոզիչ ազդեցություն ուներ, որ նույնիսկ ականատես լինելով, որ երկիրը կուլ տվեց այդ բախտագյուտներին, ժողովուրդը չհասկացավ, որ նրանց ապստամբությունը մահացու վտանգավոր էր: Սա սթափեցնող է, և ես տեսել եմ նման ուժգին ազդեցություն ունեցող դեպքեր մեր օրերում:

Երբ ժողովուրդը դուրս եկավ Մովսեսի և Ահարոնի դեմ, Աստված այնպես բարկացավ, որ ուզեց կործանել բոլորին: Այնուամենայնիվ, Մովսեսը և Ահարոնը բարեխոսեցին ժողովրդի համար: Արդյունքում ազգը փրկվեց, սակայն Տիրոջ կողմից ժանտախտ սկսվեց, որը սպանեց 14.700 մարդու: Դա անհամեմատ ավելի շատ էր նախորդ օրվա մահացածների թվից:

Աստծո ժողովո՛ւրդ, թույլ տվեք զգուշացնել ձեզ. ապստամբությունը վարակիչ և մահացու է: Աստվածաշնչում գրված չէ, որ Աստված *չի հավանում* դա: Աստվածաշունչը պարզորեն ցույց է տալիս, որ Աստված *ատում է* դա: Նրա վերաբերմունքը ապստամբությանը շատ ավելի խիստ է *անհավանությունից:* Լյուցիֆերին չխնդրեցին հեռանալ երկնքից, երբ նա ապստամբեց. նրան վայր գցեցին երկնքից՝ այնքան արագ, որքան կայծակն ամպերից երկիր է հասնում (տե՛ս Ղուկ. 10.18): Շփումն ապստամբ մարդու հետ՝ հավասար է մահ ցանկանալուն: Այս պատճառով, Պողոսի վերջին հորդորական խոսքերը Հռոմի եկեղեցուն հետևյալն էին.

«Հորդորում եմ ձեզ, եղբայրներ, որ զգուշանաք նրանցից, որոնք պառակտումներ են առաջացնում և խոչընդոտներ են դնում ձեր ճանապարհին, որոնք հակառակ են այն ուսմունքին, որ դուք սովորեցիք: Հեռու մնացեք նրանցից: Որովհետև այսպիսի մարդիկ չեն ծառայում մեր Տեր Քրիստոսին, այլ՝ իրենց ախորժակին: Հրապուրիչ խոսքերով և շողոքորթությամբ նրանք մոլորեցնում են միամիտ մարդկանց մտքերը» (Հռոմ. 16.17,18, NIV):

Նրա վերջին խոսքերը նաև իմ վերջին խոսքերն են այս գլխում: Ես գիտակցում եմ, որ գուցե այս ուղերձը չոգեշնչի ձեզ, բայց կարող է փրկել ձեր կյանքը: Հիշեք՝ սա ճշմարտության պատվաստում է: Այն հաճելի չէ, բայց այս ուղերձի պաշտպանությունը մեծապես գերազանցում է ցանկացած անհարմարավետություն, որը մենք կարող ենք կրել այն կիրառելիս: Ես աղոթում եմ, որ տեսնեք Աստծո սերն այս ուղերձի մեջ: Նա տալիս է Իր զգուշացումները՝ ձեր պաշտպանության համար:

ԳԼՈՒԽ 15

ՄԵԿ

Իշխանությունը բերում է միաբանություն, որը գրավում է Աստծո փառքը:

Կա՞մ արդյոք ավելի մեծ նպատակ և օգուտ աստվածային իշխանության ներքո ապրելուց, քան այն ամենը, ինչ քննարկեցինք մինչև այս պահը: Պատասխանն է՝ անկասկած, այո՛: Այդ նպատակը Աստծո թագավորության արդյունավետ տարածումն է:

Հիսուսը նպատակ որոշեց եկեղեցու համար, որը *մեկ լինելն է:* Այս նպատակին հասնելու մեջ մեծ օգուտ կա: Նա աղոթում էր.

> «Բայց ոչ թե միայն նրանց համար եմ աղաչում, այլ նրանց համար էլ, որ նրանց խոսքով կհավատան Ինձ: Որ ամենը մեկ լինեն, ինչպես Դու, Հա՛յր, Ինձանում, և Ես՝ Քեզանում, որ նրանք էլ Մեզանում մեկ լինեն, որ աշխարհը հավատա, թե Դու ուղարկեցիր Ինձ: Եվ Ես այն փառքը, որ Ինձ տվեցիր, նրանց տվեցի, որ մեկ լինեն, ինչպես Մենք էլ մեկ ենք» (Հովհ. 17.20-22):

Մեզ համար *փառք* է պահված, բայց այն սերտորեն կապակցված է մեկ լինելու հետ: *Փառքն* այն բառը չէ, որը հաճախակի

ենք օգտագործում խոսքի մեջ: *«Մերիամ-Վեբսթեր»* առցանց բառարանը սահմանում է այն որպես «մեծ գեղեցկություն և շուք. վեհություն»: Հունարեն *«դոքսա»* բառը նմանատիպ սահմանում ունի: Այնուամենայնիվ, *«Աստվածաշնչի բառերի ուսումնասիրության ամբողջական բառարանը»* ընդգրկում է նաև «Աստծո փառքը և այն, թե ով է Նա՝ ըստ էության»:

«Դոքսա» բառի համարժեքը Հին կտակարանում եբրայերեն *«կաբոդ»* բառն է. դրա մեկբառանի սահմանումների թվում են շուքը, հարստությունը, կարողությունը, առատությունը, պատիվը, վեհությունը և կշիռը: Պարզապես մի պահ կանգ առեք և մտածեք այս բառի մեծության վերաբերյալ: Երբ Աստվածաշունչը խոսում է *Աստծո փառքի* մասին, նկատի ունի Նրա վեհաշուք լինելը, Նրա անըմբռնելի հարստությունը, Նրա ամենակարողությունը, Նրա ինքնության առատությունը, Նրա բարձր պատիվը և Նրա Անձի մեծությունը: Վերջին բառն այս ցուցակում՝ *կշիռը*, ցույց է տալիս, որ այս հատկանիշները սահմանափակ չեն, այլ առկա են լիարժեքորեն: Պարզ ասած, փառքն *Աստծո մեծության կշիռն* է:

Հիսուսն Աստված է՝ հայտնված որպես մարդ: Մենք միշտ պետք է հիշենք Նրա կարևոր խոսքերը. «Ինձ տեսնողը Հորը տեսավ» (Հովհ. 14.9): Հովհաննես առաքյալը հայտարարեց հենց սկզբից, որ Խոսքն Աստված էր: Այնուհետև Նա գրեց. «Խոսքը մարմին դարձավ և բնակվեց մեր մեջ, և մենք տեսանք Նրա *փառքը»* (Հովհ. 1.14, NKJV): Նրա փառքն արտահայտվեց բազմապիսի ձևերով, բայց հատկապես՝ Նրա զորությամբ: Այն անթիվ հատվածներից մեկը, որոնք պատկերում են սա, Հովհաննես 2.11-ն է. «Նշանների սկիզբը Հիսուսն այս արեց Գալիլեայի Կանայում և Իր *փառքը* հայտնեց»: Նա հայտնեց Աստծո մեծության կշիռը, երբ այս երկրի վրա էր:

Մինչև հեռանալը, Նա հանձնարարական տվեց մեզ. «Ինչպես Իմ Հայրն Ինձ ուղարկեց, Ես էլ ձեզ եմ ուղարկում» (Հովհ. 20.21): Այս մեծ հանձնարարականը կատարելու համար Հիսուսն աղոթեց, որ *Իր մեծության կշիռը* նրանց վրա լինի: Ինչպես արդեն նշեցինք, այս խոստումը սերտորեն կապակցված է այն բանի հետ, որ մենք միաբան լինենք կամ մեկ լինենք: Մեզ պատվիրված է. «Տես՝ ինչքան բարի և ինչքան ցանկալի է, որ եղբայրներն իրար հետ մեկտեղ բնակվեն... Տերն այնտեղ *պատրաստեց*

օրհնություն» (Սաղմ. 133.1-3): Չկա ավելի մեծ օրհնություն, քան Նրա փառքի մեջ լինելը՝ Նրա ներկայության լիությունը վերապրելը: Դա հնարավոր չէ պառակտված եկեղեցու դեպքում, սակայն հնարավոր է միաբան եկեղեցու դեպքում:

Կատարյալ օրինակ

Առաջին եկեղեցին փայլուն կերպով պատկերում է այս ճշմարտությունը: Հիսուսը Երկինք համբարձվեց, և Նրա հավատարիմ հետևորդները հնազանդվեցին Վերնատանը մնալու Նրա հրամանին (տե՛ս Գործք 1.4): Հարությունից հետո քառասուն օրվա ընթացքում Հիսուսը հայտնվեց ամենաքիչը 500 տղամարդկանց և կանանց (տե՛ս Ա Կորնթ. 15.6), սակայն տասն օր անց Երուսաղեմում միայն 120-ն էին մնացել. որտե՞ղ էին մյուս հարյուրավորները: Մենք չգիտենք նրանց գտնվելու վայրը, բայց հաստատ գիտենք, որ նրանք հնազանդ չէին Հոր խոստմանը սպասելու Հիսուսի հրամանին:

Վերնատանը գտնվող տղամարդիկ և կանայք միաբանված էին Աստծո Խոսքի իշխանության ներքո, այսինքն՝ Նրա անմիջական իշխանության: Ինչպե՞ս էին նրանք արձագանքելու Նրա կողմից կարգված առաջնորդին:

Մինչև հեռանալը Հիսուսը լիազորեց Պետրոսին՝ առաջնորդելու Իր հետևորդներին: Պետրոսն առանձնանում էր մյուս աշակերտներից: Նա Աստծո ճանապարհները ճանաչելու մեծ քաղց ուներ, նա ստացել էր այնպիսի իմաստություն, որը մյուսները չունեին, և ազդեցություն ուներ մյուս աշակերտների վրա: Նրա կյանքում, անկասկած, առաջնորդի պարգև կար: Այնուամենայնիվ, հաճախ նա հանկարծական մղումով էր վարվում և ներդաշնակ չէր Աստծո կամքի հետ: Երբ նա համարձակ պնդեց, որ Հիսուսը Քրիստոսն է՝ կենդանի Աստծո Որդին, Հիսուսը գովեց նրա իմաստությունը և հայտարարեց, որ Պետրոսը երանելի է, քանի որ այդ ճշմարտությունն Աստծուց էր հայտնվել նրան: Այնուամենայնիվ, մի քանի ակնթարթ անց Հիսուսը «դարձավ, ասաց Պետրոսին. «Հե՛տիս գնա, սատանա՛, դու գայթակղություն ես Ինձ, որովհետև դու միտք չես անում Աստծո, այլ՝ մարդկանց բաները»» (Մատթ. 16.23):

Մեկ այլ դեպքում Պետրոսը քայլեց ջրի վրայով, մինչ մյուս աշակերտները նավի մեջ էին և միայն դիտում էին: Նա կրկին առաջատար էր: Այնուամենայնիվ, մի քանի վայրկյան անց, մինչև մյուսները կկարողանային հետևել նրա օրինակին և ոտք դնել ջրի վրա, Պետրոսը սուզվեց ջրի մեջ: Հիսուսը ցավով ասաց. «Թերահավա՛ծ, ինչո՞ւ երկմտեցիր» (Մատթ. 14.31):

Եվս մեկ դեպքում Պետրոսը՝ Հովհաննեսի և Հակոբոսի հետ, ընտրվեց, որպեսզի ուղեկցեր Հիսուսին սար բարձրանալիս: Տեղ հասնելուց հետո Հիսուսն այլակերպվեց. Նրա երեսը փայլեց արեգակի պես, և Նրա հագուստը փայլուն սպիտակ դարձավ: Մովսեսն ու Եղիան երևացին և խոսեցին Հիսուսի հետ: Ինչպիսի՜ արտոնություն էր, ինչպիսի՜ պատիվ էր այդ երեքի համար նման բացառիկ իրադարձությանը ականատես լինելը: Սակայն մինչև դրա ավարտվելը, Պետրոսն առաջարկեց երեք տաղավար պատրաստել, որոնցից երկուսը Եղիայի և Մովսեսի համար էին լինելու: Կրկին, նա առաջատար էր, բայց ներդաշնակ չէր Աստծո հետ, նույնիսկ մեծ փառքի մթնոլորտում:

Պետրոսի մեծագույն ձախողումը՝ Քրիստոսին ուրանալը, թարմ էր այդ հետևորդների հիշողության մեջ: Հարությունից հետո՝ գերեզմանի մոտ, հրեշտակը ստիպված էր առանձին նշել Պետրոսին, երբ պատվեր տվեց այդտեղ եկած երեք կանանց. «Բայց գնացե՛ք, Նրա աշակերտներին և Պետրոսին ասեք, թե Նա ձեզնից առաջ կգնա Գալիլեա: Այնտեղ կտեսնեք Նրան» (Մարկ. 16.7): Ամենայն հավանականությամբ, այդ կանայք, ինչպես նաև աշակերտներից շատերը կարծում էին, թե Պետրոսը հանձնվել էր:

Այսպիսով, հարցը հետևյալն էր. արդյո՞ք այդ նոր եկեղեցու անդամները կկարողանային հպատակվել և հնազանդվել մի մարդու, որը նման անկայուն ընթացք էր ունեցել: Նրա հանկարծական մղումով վարքը, նրա մտածողությունը, դատողությունը և որոշումներ կայացնելու ունակությունը անթերի չէին եղել, այլ հաճախ ենթակա էին եղել սխալների: Նա լավագույն թեկնածուն չէր եկեղեցին անհանգիստ ժամանակներում առաջնորդելու համար:

Մտապահելով սա՝ դիտարկենք Պետրոսի առաջին որոշումը նոր հիմնադրված եկեղեցու առաջնորդի պաշտոնում: Մի քանի օր անց նա մի մարգարեական խոսք գտավ Սաղմոսների գրքում, որն ուղղակիորեն վերաբերում էր Հիսուսի մատնությանը Հուդա-

յի կողմից: Պետրոսը կարդաց այն Վերնատանը գտնվող փոքրիկ համայնքին. «Այս մասին գրված է Սաղմոսների գրքում, որտեղ ասվում է. *«Թող մեկ այլ մարդ զբաղեցնի նրա պաշտոնը»*» (Գործք 1.20, NLT): Պետրոսը կրկին տեսավ այն, ինչ մյուսները չէին տեսնում, բայց արդյո՞ք նա ճիշտ կվարվեր իր տեսածի հետ:

Այն, ինչ կկարդաք, կարող եք դիտարկել որպես ենթադրություն, բայց հուսով եմ՝ ես կներկայացնեմ բավականաչափ հաստատող աստվածաշնչյան հատվածներ, որպեսզի վավերացնեմ ասելիքս: Ես համոզված եմ, որ իր հաջորդ որոշումը կայացնելիս Պետրոսը կրկին ներդաշնակ չէր Աստծո հետ: Նա առաջարկեց բոլոր տղամարդկանց, որոնք իրենց հետ էին հենց սկզբից, շրջան կազմել, որպեսզի «վիճակ գցեին» և տեսնեին, թե ում էր Աստված ընտրելու՝ Հուդայի դիրքը զբաղեցնելու համար:

Ոչ մի տեղ Նոր կտակարանում չեք տեսնի, որ Աստված ընտրեր առաքյալի «վիճակ գցելով» կամ վիճակահանության համակարգով: Հիսուսը երեք ու կես տարի ցույց տվեց Իր աշակերտներին Աստծո ճանապարհները և օրինակ թողեց նրանց: Մինչև առաջին 12 առաքյալներին ընտրելը՝ Նա աղոթեց ամբողջ գիշեր և լսեց Աստծուց (տե՛ս Ղուկաս 6.12,13): Լավագույն տարբերակը կլիներ, եթե Պետրոսը հետևեր Հիսուսի օրինակին: Նույնպես, այն փաստը, որ մի քանի տարի անց Անտիոքի մարգարեները և ուսուցիչները հետևեցին Հիսուսի օրինակին՝ ծոմ պահելով և աղոթելով, մինչև Պողոսին առաքելական ծառայության համար առանձնացնելը (տե՛ս Գործք 13.1-4), ևս մեկ հաստատում է այն մասին, որ Պետրոսը հապճեպ որոշում էր կայացրել:

Վերնատանը գտնվող 120 մարդիկ գտան երկու թեկնածուի՝ Հուստոսին և Մատաթիային: Մենք տեսնում ենք Պետրոսի որոշման պտուղը. Մատաթիան շահեց այդ վիճակահանությունը և համարվեց առաքյալների հետ (տե՛ս Գործք 1.23-26): Այնուամենայնիվ, դուք այլևս չեք գտնի նրա անունը Նոր կտակարանում: Ինչո՞ւ: Քանի որ Աստծո ընտրությունը՝ Հուդային փոխարինելու համար, Սողոսն էր (կամ՝ Պողոսը), ոչ թե Մատաթիան: Ահա թե ինչու է Պողոսը գրում.

> «Նրան [Հիսուսին] տեսավ Հակոբոսը, իսկ հետո՝ բոլոր առաքյալները: Վերջինը, ասես ես սխալ ժամանակ ծնված

> լինեի, նույնպես տեսա Նրան: Որովհետև ես փոքրագույնն եմ բոլոր առաքյալներից» (Ա Կորնթացիների 15.7-9, NLT):

Պողոսն ասաց իր մասին, որ ինքն ասես *սխալ ժամանակ ծնված լիներ*. այլ կերպ ասած, նա, հավանաբար, չափազանց երիտասարդ էր՝ առաջին տասներկու առաքյալների թվում լինելու համար: Ուսումնասիրելով՝ ես գտա տարբեր կարծիքներ այն մասին, թե երբ էր Պողոսը ծնվել. կան տարբեր աղբյուրներ, և բոլորն էլ տատանվում են մինչև 14 տարով: Այնպես որ, հետևենք Նոր կտակարանին, որպեսզի պատկերացում կազմենք նրա տարիքի մասին: Համաձայն պատմական տվյալների մեծ մասի, Ստեփաննոսի նահատակությունը տեղի ունեցավ Հիսուսի հարությունից չորս տարի անց: Ստեփաննոսի քարկոծման ժամանակ Սուրբ գիրքն անվանում է Սողոսին (Պողոսին) «երիտասարդ» (տե՛ս Գործք 7.57): Համաձայն «Հունարեն-անգլերեն բառարանի», այն հունարեն բառը, որը թարգմանված է «երիտասարդ» բառով, նշանակում է սեռական հասունացման շրջանը նոր անցած անձնավորություն: Կարելի է վստահաբար ենթադրել, որ Պողոսը չափազանց երիտասարդ էր՝ առաջին առաքյալների թվում լինելու համար:

Ես լիովին համոզված եմ, որ Պողոսն Աստծո ընտրությունն էր: Առաքելական պտուղը և իշխանությունը նրա կյանքում ակնհայտ էին՝ ի տարբերություն Մատաթիայի: Հիմնական ասելիքս հետևյալն է: Իմ համոզմամբ, Պետրոսը՝ որպես առաջնորդ, հանկարծական մղումով մի որոշում կայացրեց, որը ներդաշնակ չէր Աստծո ծրագրին: Եթե նա այդպիսի որոշում կայացներ մեր ժամանակակից եկեղեցում, մեզ մոտ, ամենայն հավանականությամբ, եկեղեցական պառակտում կսկսվեր: Առաքյալներին վիճակահանությամբ ընտրելուն դեմ եղողները կհեռանային, իսկ առաքյալներին վիճակահանությամբ ընտրելու կողմնակիցները կմնային: Այնուամենայնիվ, ահա թե ինչ է գրված Սուրբ գրքում անմիջապես այս դեպքից հետո.

> «Եվ երբ որ Պենտեկոստեի օրերը լրացան, ամենքը միաբան մեկտեղ էին» (Գործք 2.1):

«Միաբան» բառը հունարենում *«հոմոթումադոն»* բառն է:

«Աստվածաշնչի բառերի ուսումնասիրության ամբողջական բառարանը» սահմանում է այս բառը որպես «մեկ՝ մտքով, միասնական համաձայնությամբ, միաբան, բոլորը միասին»: Ինչպես տեսնում եք, այս սահմանման մեջ չկա մի բան, ինչը ենթադրում է բաժանություն՝ թե՛ մտքով, թե՛ վարքով: Նրանք միաբան էին՝ նպատակով, մտքով, սրտով և հոգով:

Ինչ տեղի ունեցավ այդ խորը միաբանության արդյունքում: Աստված իջեցրեց Իր փառքն այդ 120 մարդու վրա, որոնք մեկ էին սրտով, մտքով և գործերով, ոչ թե այն 380 մարդու, որոնք այլուր էին: Երուսաղեմ քաղաքն այլևս նույնը չէր լինի՝ Աստծո փառքի պատճառով, որը Քրիստոսի այդ հետևորդների վրա էր:

Վերնատանը գտնվող տղամարդիկ և կանայք անվարան հնազանդվեցին Պետրոսի ցուցմանը երկու պատճառով: Առաջինը՝ առաքյալին վիճակահանությամբ ընտրելը մեղք չէր, թեև, ամենայն հավանականությամբ, դա ներդաշնակ չէր Աստծո ծրագրի հետ: Եվ երկրորդը՝ նրանք լիարժեք կերպով հպատակված էին Աստծո կողմից կարգված առաջնորդին:

Կրկին հաստատվում է աստվածաշնչյան ճշմարտությունն այն մասին, որ Աստծո անմիջական իշխանությունը կապակցված է Նրա լիազորած իշխանության հետ: Կան մարդիկ, որոնք ասում են. «Ես հպատակված եմ Աստծուն», սակայն, միևնույն ժամանակ, հակառակվում են Նրա կողմից կարգված առաջնորդներին: Նրանք խաբված են: Եթե ճշմարտապես հպատակված ենք Աստծուն, մենք կհպատակվենք մեր առաջնորդներին՝ երկու պատճառով: Առաջինը՝ Նրա անմիջական իշխանությունը պատվիրում է հպատակվել մեզ վրա կարգված առաջնորդներին: Երկրորդը՝ մենք հպատակվում ենք մեր առաջնորդներին, քանի որ գիտակցում ենք, որ Աստծո իշխանությունը նրանց վրա է: Այնպես որ, եթե կարգված առաջնորդները չեն պատվիրում մեզ մեղանչել, նրանց հնազանդվելը և՛ աստվածահաճո է, և՛ օգտակար է: Այդ վարքը դուռ է բացում Աստծո հայտնված փառքի համար, և դրա շնորհիվ Նրա թագավորությունն արագորեն տարածվում է:

Դառը իրականություն

Մենք պետք է տանք հետևյալ բարդ հարցերը.

- Արդյո՞ք մենք խափանել ենք Աստծո փառքի դրսևորումը՝ եկեղեցու առաջնորդներին չհպատակվելու պատճառով:
- Արդյո՞ք մեր հպատակությունը կախված է մեր համաձայնությունից:
- Արդյո՞ք մենք նպաստել ենք պառակտումների:

Համոզված եմ, որ վերնատանը կային աշակերտներ, որոնք չէին վարվի այնպես, ինչպես Պետրոսը: Անկասկած, կարելի էր ավելի իմաստուն որոշում կայացնել. հետևել Հիսուսի օրինակին, նախ՝ փնտրելով Աստծուն, մինչև ներկաներից որևէ մեկին ընտրելը: Դա ավելի իմաստուն քայլ կլիներ, քան խնդիրը հարկադրաբար լուծելը՝ վիճակ գցելով և առաքելական ծառայության նշանակելով այնպիսի մարդու, որը կանչված չէր Աստծուց այդ դիրքը ստանձնելու համար:

Թեև կար ավելի լավ միջոց՝ այդ հարցը կարգավորելու համար, այդտեղ գտնվող մարդիկ տեսնում էին ավելի բարձր ճանապարհ, որը հետևյալն էր. *մեկ* մնալ՝ ընդունելով իրենց առաջնորդի մարտավարությունը: Յուրաքանչյուրն այնպես գործեց, ասես դա *իր գաղափարն* էր: Որքա՞ն հաճախ ենք մենք պառակտվում մեր ծառայողական մեթոդների շուրջ ունեցած անլուրջ կամ աննշան անհամաձայնությունների պատճառով: Կամ՝ այնպիսի վարդապետական համոզմունքների, որոնք չպետք է պառակտեն մեզ, օրինակ՝ Հիսուսը կվերադառնա Մեծ պատուհասից առա՞ջ, կեսի՞ց, թե՞ դրանից հետո: Մեզ դուր չի գալիս այն, որ մեր հովիվը կոստյումի փոխարեն ջինս է կրում: Մեզ դուր չեն գալիս ծխի և լույսի սարքերը, որոնք օգտագործվում են հատուկ էֆեկտների համար փառաբանության ժամանակ: Հովիվը շատ երկար է քարոզում կամ բավականաչափ երկար չի քարոզում: Մենք չափազանց երկար չաղոթեցինք, կամ չաղոթեցինք որևէ հարցի վերաբերյալ: Անկեղծ ասած, անվերջ կարելի է նման օրինակներ բերել: Ասելիքս այն է, որ ցավալի է տեսնելը, թե որքան հեշտորեն ենք մենք պառակտվում: Այնուամենայնիվ, գոյություն ունի մի տագնապալի ճշմարտություն. բոլոր պառակտումները չէ, որ հեշտո-

րեն ճանաչելի են: Նոր կտակարանը հաճախ է պատվիրում միաբան լինել ոչ միայն գործով, այլև այլ կերպերով: Ահա ընդամենը մի քանի օրինակ.

> «Ապա լցրե՛ք իմ ուրախությունը, որ *նույն միտքն ունենաք*՝ նույն սերն ունենալով, *միաշունչ միևնույնը խորհե՛ք»* (Փիլիպեցիների 2.2):

> «Ուրա՛խ եղեք, կատարյա՛լ եղեք, մխիթարվե՛ք, *միաբա՛ն եղեք* և խաղաղությո՛ւն արեք, և սիրո և խաղաղության Աստված ձեզ հետ լինի» (Բ Կորնթացիների 13.11):

> «Միայն թող որ ձեր վարքն արժանի լինի Քրիստոսի Ավետարանին... որ դուք հաստատ կանգնած եք *մեկ հոգով*, մեկ մտքով՝ միասին պայքարելով Ավետարանի հավատքի համար» (Փիլիպեցիների 1.27, NKJV):

Պառակտումը չի սահմանափակվում միայն հակառակ խոսքերով կամ գործողություններով. այն ավելի խորն է և ազդում է մտքի, սրտի և հոգու վրա: Մենք կարող ենք արտաքուստ միաբան լինել, բայց պառակտված լինել մեր դրդապատճառներով և մտքերով: Մայրս և հայրս տարիներ շարունակ ապրում էին Ֆլորիդայի Հարավային Ափում գտնվող Վերո Բիչ քաղաքում: Վերո Բիչից մոտավորապես 20 կիլոմետր հեռու կա մի վայր, որը կոչվում է Սեբաստիանի խորշ: Այն հայտնի է տեղացիներին իր ուժգին ստորջրյա հոսանքներով: Ստորջրյա հոսանքը մի երևույթ է, որը տեսանելի չէ անզեն աչքին: Օվկիանոսի վերին շերտի ջուրը, թվում է, հոսում է մեկ ուղղությամբ՝ ներդաշնակ մոտենալով լողափին: Սակայն ներքևում գտնվող ջուրն արագորեն հոսում է հակառակ ուղղությամբ: Այս հակառակ հոսանքը քաշում է իր զոհերին և տանում է դեպի բաց ծով՝ հաճախ խլելով նրանց կյանքը:

Արդյո՞ք մեր եկեղեցիներում կան ստորջրյա հոսանքներ, որոնք թույլ չեն տալիս, որ Աստծո փառքը դրսևորվի: Աշակերտների միաբանության շնորհիվ էր, որ ամբողջ Երուսաղեմը լսեց Հիսուսի հարության լուրը. Նրա ներկայությունը և զորությունը հայտնվեցին աներևակայելի ձևով: Մտածե՛ք այն մասին, որ այդ ժամանակ չկար հեռուստատեսություն, ռադիո և ոչ մի տեսակի

սոցիալական ցանցեր՝ այդ հավաքույթները գովազդելու համար, սակայն հազարավոր մարդիկ փրկվում էին այդ չհայտարարված հանպատրաստի հավաքույթներին:

Ահա մի սթափեցնող հարց: Քանի՞սը մեզնից կկանգնեն Հիսուսի ատյանի առջև՝ ցնցված և հանկարծակիի եկած այն ամենից, ինչ Նա կհայտնի: Արդյո՞ք Նա ցույց կտա մեզ՝ Իր արքայական այտերից հոսող արցունքներով, թե ինչ կերպով ենք մենք խոչընդոտել Սուրբ Հոգու աշխատանքը մեր բնակավայրերում: Արդյո՞ք կպարզվի, որ մեր պառակտումը դարձավ այն ստորջրյա հոսանքը, որը թույլ չտվեց բազմություններին փրկություն ստանալ: Մենք համաձայն չէինք մեր առաջնորդների հետ՝ սրտով, մտքով կամ գործով: Այո՛, գուցե մենք ճիշտ էինք, գուցե կային գործելու ավելի արդյունավետ, նույնիսկ ավելի սուրբգրային մարտավարություններ կամ միջոցներ, բայց ի՞նչն է ավելի լավ՝ լինել ճի՞շտ, թե՞ լինել Աստծո փառքի մեջ: Լինել ճի՞շտ, թե՞ տեսնել բազմությունների մուտքն Աստծո թագավորություն:

Տարբեր մեթոդներ

Գաղտնիք չէ, որ առաջնորդները կարող են ներդաշնակ չլինել աստվածային ծրագրերի և մարտավարությունների հետ: Ես սարսռում և հառաչում եմ՝ գրելով այս մասին, քանի որ մտաբերում եմ բազմաթիվ դեպքեր, երբ ինքս անհաջող որոշումներ եմ կայացրել՝ որպես առաջնորդ: Այնուամենայնիվ, զարմանալի է, թե ինչպես Աստված կարող է կատարել Իր նպատակները, հատկապես երբ միաբան ենք: Մենք չպետք է թեթևորեն վերաբերվենք այս ճշմարտությանը կամ անփույթ լինենք Նրա կամքը փնտրելու մեջ. ընդհակառակը, այն պետք է մխիթարություն լինի ինձ պես ծառայողների համար, որոնք սխալներ են գործել:

Այժմ ուզում եմ խոսել մեկ այլ իրողության մասին, որը կարող է խոչընդոտել մեզ միաբան լինելուց՝ անհիրազեկությունը այն մասին, որ եկեղեցում գոյություն ունեն տարբեր գործելակերպեր: Այլ կերպ ասած, կան տարբեր միջոցներ, որոնցով կարելի է իրականացնել նույն նպատակը՝ Աստծո թագավորության տարածումը: Պողոսը գրում է Կորնթոսի եկեղեցուն, որ եկեղեցում գոյություն ունեն տարբեր պարգևներ և պաշտոններ, բայց հետո շարունա-

կում է. «Գոյություն ունեն *բազմաթիվ տարատեսակ գործելակերպեր* [գործունեություն՝ ինչ-որ արդյունքի հասնելու համար], բայց նույն Աստված է, որ ոգեշնչում է *և* զորացնում է այդ ամենը բոլորի մեջ» (Ա Կորնթ. 12.6, AMP): Գոյություն ունեն *բազմաթիվ տարատեսակ գործելակերպեր*, ինչը նշանակում է, որ տարբեր ծառայություններ արդյունավետ գործում են Աստծո թագավորության մեջ՝ տարբեր մեթոդներ կիրառելով:

Պողոս առաքյալը հաճախ էր զինվորական բառապաշար օգտագործում՝ եկեղեցուն ցուցումներ տալու համար: Դա միայն այլաբանություն չէ. մենք իրականում Աստծո բանակի զինվորներն ենք այս երկրի վրա: Ես կհետևեմ նրա օրինակին, որպեսզի բացատրեմ ծառայությունների տարբեր գործելակերպերը: Միացյալ Նահանգների զինված ուժերը բաղկացած են տարբեր ստորաբաժանումներից՝ բանակը, ռազմածովային, օդային և ծովահետևակային ուժերը նաև առափնյա պաշտպանությունը: Այս ստորաբաժանումներն իրականացնում են իրենց նպատակները և պարտականությունները տարբեր ընթացակարգերով: Հաճախ յուրաքանչյուր ստորաբաժանման մեթոդները կիրառելի են միայն իր համար: Այնուամենայնիվ, նրանք ունեն միևնույն նպատակը, որն է՝ մեր երկիրը պաշտպանելը և մեր երկրին ծառայելը:

Օդային ուժերի վարժարանի կադետը հատուկ կրթվելու է որպես Միացյալ Նահանգների օդային ուժերի զինվոր: Ուսուցման մեջ մեծ շեշտադրում է արվելու օդային տակտիկական գործողությունների վրա, քանի որ այդ ստորաբաժանման զորքերը հիմնականում գործում են օդում: Եթե այդ կադետին տեղափոխեն բանակ, նա կրկին ուսուցման կարիք կունենա: Իհարկե, կան անթիվ հիմքային մեթոդներ, որոնք համընկնում են այդ երկու ստորաբաժանումներում: Այնուամենայնիվ, բանակը մեծապես տարբերվում է օդային ուժերից, քանի որ այն հիմնականում գործում է ցամաքում, և օդային ուժերի նախկին անդամը ստիպված կլինի սովորել բազմաթիվ նոր գործառնական մանևրներ և ռազմավարություններ:

Մտապահելով այս օրինակը՝ կարդանք Կորնթոսի եկեղեցուն ուղղված Պողոսի խոսքերը.

«Ուրեմն, աղաչում եմ ձեզ, ինձ նմանող եղեք» (Ա Կորնթ. 4.16):

Պողոսը հորդորում էր այս եկեղեցուն նմանակել իրեն: Նա չգրեց. «Ինձ նմանող եղեք, ինչպես ես էլ՝ Քրիստոսին». նա գրեց այդ խոսքերն ավելի ուշ (տես Ա Կորնթ. 11.1): Բայց կա պատճառ, թե ինչու նա չնշեց դա այս հատվածում: Այս խոսքի շարունակությունը պարզաբանում է դա.

«Ուրեմն, աղաչում եմ ձեզ, ինձ նմանող եղեք: Նրա համար Տիմոթեոսին ուղարկեցի ձեզ մոտ, որ իմ սիրելի և հավատարիմ որդին է Տիրոջով, որ ձեզ հիշեցնի իմ ճանապարհները, որ Քրիստոսում են, ինչպես ամեն տեղ բոլոր եկեղեցիներում սովորեցնում եմ» (Ա Կորնթ. 4.16,17):

Նա հորդորում էր այդ եկեղեցուն (որն ինքն էր հիմնադրել) նմանակել իրեն, իսկ հետո ասաց. «Այս պատճառով ես ուղարկեցի Տիմոթեոսին»: Ինչո՞ւ նա ուղարկեց Տիմոթեոսին. որ նա հիշեցներ կորնթացիներին *Պողոսի ճանապարհները Քրիստոսում:* Ուշադրություն դարձրեք, որ նա չգրեց. «Տիմոթեոսը կհիշեցնի ձեզ Հակոբոսի ճանապարհները Քրիստոսում»: Հակոբոսն առաքյա՞լ էր եկեղեցում: Իհարկե՝ այո՛: Նա աստվածապա՞շտ առաջնորդ էր: Իհարկե՝ այո՛: Հակոբոսն առաքյալ էր ավելի երկա՞ր ժամանակ, քան Պողոսը: Կրկին՝ այո՛: Նրա ճանապարհները, մեթոդները և գործելակերպերը տարբերվո՞ւմ էին Պողոսի ճանապարհներից, մեթոդներից և գործելակերպերից: Կրկին՝ այո՛: Իսկ Պողոսի հրահանգն անվավե՞ր էր դարձնում Հակոբոսի ճանապարհները Քրիստոսում: Ո՛չ մի դեպքում: Այնուամենայնիվ, Հակոբոսի ճանապարհները հարմար չէին Կորնթոսի եկեղեցու համար, որին Պողոսն էր ծնունդ տվել: Սա նման է այն իրողությանը, որ *օդային ուժերի մեթոդներից* շատերը չեն գործում ռազմածովային զորքերում: Այդ մեթոդների մեջ կան որոշ ընդհանրություններ, բայց մեծ մասամբ տարբերվում են:

Շարունակենք խոսել այս մասին: Պողոսը չասաց, որ Տիմոթեոսը կսովորեցնի այդ եկեղեցուն «Պետրոս առաքյալի ճանապարհները» Քրիստոսում կամ «Հուդա առաքյալի ճանապարհները» Քրիստոսում, ո՛չ էլ «Հովհաննես առաքյալի ճանապարհները»

Քրիստոսում, և այլն: Ո՛չ: Պողոսը ծնունդ էր տվել իր առաջնորդական մշակույթին այդ եկեղեցում և շարունակում էր հաստատել այն: Նրա մեթոդները տարբերվում էին մյուս առաքյալների մեթոդներից, բայց դրանք համապատասխանում էին Քրիստոսի հիմնարար ուսմունքներին: Առաջին եկեղեցու բոլոր առաջնորդները նույն հիմնարար հավատքը և ուսմունքներն ունեին: Բայց յուրաքանչյուրը տարբեր մեթոդներ էր կիրառում, որպեսզի իրագործեր բոլոր ազգերն աշակերտելու նպատակը:

Մտածե՛ք այս իրողության վերաբերյալ՝ այն եկեղեցու օրինակով, որին պատկանում եք: Ենթադրենք, ձեր եկեղեցու ավագ հովիվները Ջիմ և Լիզա Սմիթերն են: Նրանք և նրանց առաջնորդական թիմը Աստծո շնորհքով հասցրել են եկեղեցին հազար հինգ հարյուր անդամի և հաստատել են իրենց ճանապարհները՝ իրենց մշակույթը և մեթոդները, որոնք եզակի են իրենց առաջնորդական ոճի համար: Ձեր եկեղեցու պտղաբերությունն ուշագրավ կերպով ազդել է ձեր բնակավայրի վրա: Ձեր եկեղեցին տեղական ճանաչում ունի, և դրանով իր ազդեցությունն ավարտվում է:

Այնուամենայնիվ, ենթադրենք, որ կա մի շատ հայտնի եկեղեցի մեկ այլ վայրում, որը համաշխարհային ճանաչում ունի: Այդ եկեղեցու ավագ հովիվներիը Դագ և Հիթեր Ջոնսերն են: Նրանք նոր միտումներ են սահմանում և առաջնորդում են ծառայողական նոր, թարմ մարտավարություններով: Նրանք ազդեցություն ունեն ավելի շատ մարդկանց վրա, քան ձեր հովիվները: Ո՞ւմ ճանապարհներին եք հետևելու, Ջոնսերի՞, թե՞ Սմիթերի (ձեր հովիվների): Գուցե գայթակղվեք հետևել այդ հայտնի համաշխարհային ճանաչում ունեցող հովիվների ճանապարհներին և փորձեք համոզել ձեր առաջնորդներին ընդունել նրանց մեթոդները: Սակայն դուք, ինչպես և Կորնթոսի եկեղեցին, պետք է ձգտեք ճանաչել ձեր առաջնորդների ճանապարհները և հետևել դրանց՝ հանուն միաբանության և փառքի: Իրականությունն այն է, որ ձեր առաջնորդները ոչ թե Ջոնսերն են, այլ Սմիթերը:

Ընդհանուր հայացք

Ավելի քան երեսուն տարի ճանապարհորդում եմ աշխարհով մեկ: Ես արտոնված եմ եղել ծառայելու հազարից ավելի համա-

ժողովներին և եկեղեցիներում ԱՄՆ-ի քառասունինը նահանգներում և ավելի քան վաթսուն այլ երկրներում: Ես արտոնված եմ եղել տեսնելու տարատեսակ գործելակերպեր մեծաթիվ եկեղեցական շրջանակներում: Երբ որևէ եկեղեցի հրավիրում է ինձ, իմ գլխավոր նպատակներից մեկը՝ որպես հյուր, այդ եկեղեցու մշակույթը հասկանալն է:

Եթե դուք իմ տուն գայիք՝ որպես հյուր, ցուցումներ չէիք տա այն մասին, թե ինչպես վարեմ իմ տան գործերը: Դուք կհետևեիք իմ տան կարգերին: Եթե հյուր լինեիք, չէիք որոշի, թե ո՞ր ժամին է ընթրիքը մատուցվում: Փոխարենը, կհարցնեիք. «Ժամը քանիսի՞ն է ընթրիքը»: Դուք ներկա կլինեիք ընթրիքի ժամին և շնորհակալությամբ կընդունեիք այն, ինչ այդ տան տերերը կհյուրասիրեին ձեզ:

Որպես հյուր, ես հարցնում եմ ինձ հյուրընկալող առաջնորդին. «Ինչպե՞ս են ձեզ մոտ հագնվում քարոզելիս», և փորձում եմ համապատասխանել նրա նախընտրությանը: Հիշում եմ, որ մի համաժողովի էի գնում, և իմ պայուսակում ջինսե տաբատ և ամենօրյա վերնաշապիկ կար՝ ծառայություններին հագնելու համար: Օդանավակայանում մեր թիմին դիմավորեցին սմոքինգ կրող չորս տղամարդիկ՝ երկու լիմուզինով, որ տանեին մեզ հյուրանոց, իսկ հետո՝ ծառայության: Եթե ես ավագ հովիվ լինեի, այլ կերպ կդիմավորեի իմ հյուրերին: Ես կուղարկեի իմ որդիներից կամ մեր թիմի վստահելի անդամներից մեկին՝ ամենօրյա հագուստով և մեկ կամ երկու հարմարավետ մաքուր մեքենայով՝ հյուրերին դիմավորելու համար: Բայց դա իմ եկեղեցական համաժողովը չէր: Կարելի էր հեշտորեն նկատել, որ արտաքնապես պատիվ ցուցաբերելը անչափ կարևոր էր այդ եկեղեցում: Ես անմիջապես հասկացա, որ այն հագուստը, որը որոշել էի կրել այդ ծառայությանը, վիրավորական կլիներ նրանց մշակույթի և գործելակերպի համար. այնպես որ, իսկույն միջոցներ ձեռնարկեցի՝ համապատասխան կոստյում գնելու համար:

Որպես հյուր, ես հարցնում եմ. «Որքա՞ն ժամանակ եք ուզում, որ քարոզեմ»: Ես հարգանքով ընդունում եմ ինձ տրված պատասխանը և ծառայում եմ ինձ հատկացված ժամանակի սահմաններում: Այնուամենայնիվ, միշտ չէր, որ այդպես էի վարվում: Ավելի քան տասնհինգ տարի շարունակ ես ամեն տարի քարո-

զել եմ իմ հերոսներից մեկի՝ Թոմի Բարնետի եկեղեցում (նրա եկեղեցին հայտնի էր «Ֆինիքս Ֆըրսթ Էսեմբլի» անունով, բայց այժմ այն կոչվում է «Ֆինիքս Դրիմ Սենթր», և ավագ հովիվը նրա որդի Լյուքն է)։ Առաջին անգամ, երբ անցկացնում էի նրա եկեղեցու կիրակի առավոտյան ծառայությունը, նա քառասուն րոպե տրամադրեց ինձ՝ քարոզելու և ծառայելու համար։ Նա ասաց, որ ամբիոնի մոտից հաշվարկային ժամացույց է երևում, որը կօգնի հետևել ինձ հատկացված ժամանակին։ Ես տասը րոպեով գերազանցեցի այդ ժամանակը։

Ծառայությունից հետո նա շտապելով դուրս գնաց՝ առանց ինձ նույնիսկ մեկ բառ ասելու։ Ես գիտեի, որ նա բարկացած էր։ Ամբողջ օրվա ընթացքում ներսումս պայքար էր՝ իմ արարքի պատճառով։ Երեկոյան ծառայությունից առաջ, երբ մենք մենակ էինք նրա գրասենյակում, ես հարցրի, թե արդյո՞ք առավոտյան նա վրդովված էր իմ պատճառով։

- Այո՛,- պատասխանեց նա։

- Պատճառն այն էր, որ ես չափազանց երկա՞ր քարոզեցի,- հարցրի ես։

- Այո՛,- ասաց նա։ Մի պահ դադարից հետո շարունակեց.- Ջո՛ն, դու ինձ դուր ես գալիս, և ես կասեմ քեզ, թե ինչու վրդովվեցի։ Մեզ մոտ բազմաթիվ մարդիկ աշխատում են ըստ ժամանակացույցի։ Մեր մանկական ծառայողները ծրագրված դասաժամ են անցկացնում՝ հետևելով մեր գլխավոր ծառայության ժամանակացույցին։ Երբ տասը րոպեով ուշացնում ես ծառայությունը, ամեն ինչ խառնաշփոթի է վերածվում։ Դրսում ավելի քան երեսուն ավտոբուս կա, որոնք պետք է վերադարձնեն մարդկանց իրենց անապահով թաղամասերը, և սպասում են միացրած շարժիչներով։ Ի՞նչ պետք է անեն նրանք։

Նա այլ պատճառներ ավելացրեց այդ ցուցակին և ամփոփեց՝ ասելով.

- Դու հարգանքով չվերաբերվեցիր մեր հաստատված կարգին, միայն որովհետև ուզում էիր տասը րոպե ավելի քարոզել։

Ես սիրով խրատ ստացա և դաս քաղեցի այդ սխալից։

Որպես հյուր, ես հարցնում եմ առաջնորդին. «Երբ փրկության կոչ եք անում, դուք խնդրում եք մարդկանց առա՞ջ գալ, ոտքի՞ ել-

նել, թե՞ միայն ձեռք բարձրացնել»: Ես ուշադրությամբ լսում եմ ավագ հովվի պատասխանը և կրկին հետևում եմ այդ եկեղեցու մշակույթին: Հաստատ համոզված եմ, որ մարդը կարող է ճշմարտապես փրկվել այդ տարբերակներից յուրաքանչյուրի դեպքում:

Սա պարզապես օրինակ է այն մասին, թե ինչպիսի հարցեր եմ տալիս: Երբեմն, երբ իմ գործելակերպը տարբերվում է որևէ եկեղեցու մշակույթից, սակայն ինձ թվում է, թե այն ավելի արդյունավետ կլինի, ես հարցնում եմ ավագ հովվին, թե արդյո՞ք նա թույլ կտա ինձ մի փոքր այլ կերպ վարել ծառայությունը: Ծառայողները մշտապես գնահատանքով են վերաբերվում իմ հարցերին և պատրաստակամորեն թույլտվություն են տալիս ինձ:

Ես կարող եմ բազմաթիվ այլ օրինակներ բերել, բայց համոզված եմ՝ դուք արդեն հասկացաք, որ, ընդհանուր առմամբ, իմ նպատակն է հետևել այն մեթոդին, որն առաջնորդը հաստատել է նրա «ճանապարհներին Քրիստոսում»: Այնուամենայնիվ, եթե առաջնորդն ասեր ինձ. «Մենք չենք հավատում փրկության կանչին, քանի որ մենք հավատում ենք, որ Հիսուսը Աստծուն տանող ճանապարհներից *մեկն* է: Մենք հավատում ենք, որ գոյություն ունեն բազմաթիվ ճանապարհներ դեպի հավիտենական կյանքը», ես կհրաժարվեի հետևել նրա ճանապարհին, քանի որ այդ դեպքում գործ չէինք ունենա որևէ ծառայողական մեթոդի հետ. դա կնշանակեր, որ այդ առաջնորդը հակառակ է քրիստոնեության հիմնարար ճշմարտություններից մեկին:

Այն տարիների ընթացքում, երբ դիտարկում էի Քրիստոսի մարմինը ավելի շատ ընդհանուր կերպով, ականատես էի լինում հաճախակի ողբերգությունների, որոնց պատճառն այս հասարակ ճշմարտությունը չիմանալն էր: Ես տեսնում էի մարդկանց, որոնք հաճախում էին առաջնորդական կամ աստվածաշնչյան դպրոցներ, որոնց մշակույթը լիովին տարբերվում էր իրենց եկեղեցիների մշակույթից: Հաճախ այդ դպրոցները կապ ունեին որևէ խոշոր եկեղեցու հետ, որն էլ թելադրում էր դրանց մշակույթը: Եվ այդ ուսանողները կրում էին այդ խոշոր եկեղեցու գործելակերպի ազդեցությունը՝ թե՛ դպրոցում, թե՛ շաբաթավերջի ծառայություններին:

Ավարտելուց հետո նրանք եռանդով լի վերադառնում էին իրենց եկեղեցիները և սկսում էին ջանքեր գործադրել՝ իրենց

եկեղեցու մշակույթը փոխելու համար: Հնարավոր է՝ նրանք ճիշտ էին այն բանում, որ իրենց սովորած ճանապարհներն ավելի գործածական և արդյունավետ էին, սակայն չափազանց համառելու դեպքում նրանք հեշտորեն կարող են ստորջրյա հոսանք դառնալ: Եթե նրանց առաջարկած մեթոդները չեն ընդունվում, լավագույն լուծումն այն կլինի, որ նրանք աղոթեն և հարցնեն Աստծուց՝ արդյո՞ք իրենք պետք է հեռանան եկեղեցուց, թե՞ սրտանց հնազանդվեն իրենց առաջնորդի մեթոդներին:

Երբ դեռ երիտասարդականի հովիվ էի, ծառայության տարբեր գործելակերպերի, ձևերի և մեթոդների մասին անիրազեկ լինելը ստիպեց ինձ վճռականորեն հակառակվել իմ հովվին: Ես գնացել էի Լուիզիանայում գտնվող այդ եկեղեցի և տեսել էի մի գործելակերպ, որն անչափ արդյունավետ էր: Ես այնքան հրապուրվեցի նրանց հաջողությամբ, որ ավելի խորը չմտածեցի և չհարցրի, թե արդյո՞ք այդ գործելակերպը համապատասխանում էր մեր եկեղեցուն: Ետ նայելով՝ հասկանում եմ, որ այն չէր համապատասխանում իմ հովվի «ճանապարհներին՝ Քրիստոսում»: Լուիզիանայում գտնվող այդ եկեղեցու առաջնորդը շատ էր տարբերվում իմ ավագ հովվից: Երկուսն էլ մեծ համաշխարհային ազդեցություն ունեին, երկուսն էլ արդյունավետ էին, երկուսն էլ բազմություններ էին առաջնորդում Աստծո թագավորության մեջ, բայց նրանք տարբեր էին իրենց գործելակերպերով:

Մեր հասարակությունը շատ ավելի շարժական է, քան ցանկացած այլ ժամանակ պատմության մեջ: Հավանական է, որ կյանքի ընթացքում շատերս փոխելու ենք մեր եկեղեցին առնվազն մեկ կամ, նույնիսկ, մի քանի անգամ: Անչափ կարևոր է, որ գալով նոր եկեղեցական համայնք՝ մենք ճանաչենք տեղի մշակույթը: Մենք պետք է նպատակաուղղված անենք դա: Որքան ավելի արագ կարողանանք հարմարվել նրանց *ճանապարհներին Քրիստոսում,* այնքան ավելի ուժեղ կդառնանք՝ և՛ որպես անհատ, և՛ որպես ընդհանուր մարմնի անդամ:

ԳԼՈՒԽ 16

ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՄՅՈՒՍ ՈԼՈՐՏՆԵՐԸ

Եթե մենք ճշմարտապես փրկված ենք և ձգտում ենք կատարել Աստծո կամքը, մենք կճանաչենք օրինական իշխանությունը եկեղեցում:

Նախորդ գլուխներում հիմնականում կենտրոնացել էինք եկեղեցական և քաղաքացիական իշխանությունների վրա: Սակայն, ինչպես արդեն նշեցի, դրանց առնչվող սկզբունքները մեծ մասամբ ընդգրկում են իշխանության բոլոր ոլորտները: Այս գլխում կքննարկենք հատուկ ցուցումներ Աստծո Խոսքից իշխանության մյուս ոլորտների վերաբերյալ, հատկապես՝ ընտանիքի: Այդ ցուցումների մեծ մասը վերաբերում է միայն իշխանության առանձին ոլորտների. այնպես որ, դրանց մասին պետք է առանձին խոսել: Այս գլխի նյութով հեշտորեն կարելի էր առանձին գիրք գրել: Այնուամենայնիվ, եթե հետևենք այն սկզբունքներին, որոնք արդեն սովորել ենք, մենք կարող ենք ընդլայնել դրանց կիրառությունը նաև այս գլխում քննարկվող ոլորտներում, և այդ գիրքը կգրվի մեր սրտում: Այս գլխում կդիտարկենք նաև որոշ ընդհանուր ցուցումներ, որոնք բավականաչափ ծավալուն չեն՝ դրանց մասին առանձին գիրք գրելու համար: Սա է պատճառը, որ ես անվանել եմ այս գլուխը «Իշխանության մյուս ոլորտները»:

Ընտանիք

Ընտանիքը գոյություն ուներ եկեղեցուց, կառավարությունից և հասարակական իշխանությունից առաջ: Դրա գործառույթն ամենակարևորն է, քանի որ դրանից է կախված մյուս երեքի բարօրությունը: Նույնիսկ եթե լիազորած իշխանության մյուս ոլորտներում թերացումներ լինեն, ընտանիքը կարող է ուժեղ լինել՝ դրանցից անկախ: Այնուամենայնիվ, եթե ընտանիքը խաթարված լինի, դա չի կարող չազդել մյուս ոլորտների վրա: Իշխանությունը ընտանիքում կարևորագույն հիմք է մյուս ոլորտների համար:

Սուրբ գիրքն աստվածային կարգուկանոն է հաստատում ընտանիքում.

> «Երեխանե՛ր, հնազանդվե՛ք ձեր ծնողներին ամեն ինչում, որովհետև սա հաճելի է Տիրոջը» (Կողոս. 3.20, NKJV):

> «Որովհետև ամուսինը կնոջ գլուխն է, ինչպես Քրիստոսն էլ եկեղեցու գլուխն է... Ուրեմն, ինչպես որ եկեղեցին հպատակված է Քրիստոսին, այնպես էլ թող կանայք հնազանդ լինեն իրենց ամուսիններին ամեն ինչում» (Եփես. 5.23,24, NKJV):

Այս պատվիրանները, որոնք նույնպես կարելի է գտնել Հին կտակարանում, ներկայացնում են Աստծո կողմից սահմանված իշխանության կառուցվածքն ընտանիքում: Երեխաները պետք է հնազանդվեն իրենց ծնողներին ամեն ինչում, և սա ընդգրկում է կյանքի *յուրաքանչյուր* ոլորտը: Այս պատվերը կիրառելի չէ, միայն երբ ծնողները պատվիրում են երեխաներին այն, ինչ հակառակ է Աստծո Խոսքին, օրինակ՝ հանդուրժել սեռական ոտնձգություններ ծնողի կողմից, ստել, գողանալ, ընտրություն կատարել ծնողների միջև և այլ նման արարքներ:

Այս բացառության մի դիպուկ օրինակ տեղի ունեցավ իմ ընտանիքում: Ես նվիրեցի իմ կյանքը Հիսուս Քրիստոսին, երբ մեքենաշինություն էի ուսումնասիրում «Փերդյու» համալսարանում: Կարճ ժամանակ անց հասկացա, որ կանչված էի Ավետարանը քարոզելու համար: Ես տուն գնացի արձակուրդներից մեկի ժա-

մանակ և ասացի ծնողներիս, որոնք նվիրյալ կաթոլիկներ էին, որ իմ մեքենաշինական կրթությունն ավարտելուց հետո Աստվածաշնչյան դպրոց եմ գնալու: Այդ լուրը բարկացրեց նրանց. նրանք կարծեցին, թե իմ որոշումը հետադիմական էր և հանկարծական մղումով էր կայացրած: Իրականում, մայրս ասաց.

- Դու պետք է իմ դիակի վրայով անցնես՝ Աստվածաշնչյան դպրոց գնալու համար:

Ես խոնարհությամբ և հարգանքով պատասխանեցի մորս.

- Մայրի՛կ, ես սիրում եմ քեզ և շնորհակալ եմ այն ամենի համար, ինչ արել ես ինձ համար, բայց ես պետք է հնազանդվեմ Աստծուն:

Այս խոսքերը բոլորովին չմխիթարեցին և չհաճեցրին նրան, այլ՝ ավելի բարկացրին:

Հիսուսն ասաց մեզ. «Ով որ հորը կամ մորը Ինձնից ավելի է սիրում, նա Ինձ արժանի չէ, և ով որ որդուն կամ աղջկան Ինձնից ավելի է սիրում, նա Ինձ արժանի չէ» (Մատթ. 10.37): Հաստատված այս խոսքերով և Ավետարանների շատ այլ նման հատվածներով, ես գիտեի, որ պետք է ընտրություն կատարեի. կա՛մ իմ մայրն ու հայրը, որոնց անչափ սիրում էի, կա՛մ Հիսուսի կանչը՝ Իրեն ծառայելու համար: Ես անվարան էի իմ որոշման մեջ:

Մի քանի տարի մեր հարաբերությունները շատ լարված էին: Ես շարունակում էի սիրել և հարգել իմ ծնողներին ավելի, քան անցյալում, քանի որ այժմ ես Աստծո շնորհքն ունեի: Ժամանակն անցնում էր, և նրանք տեսնում էին Հիսուսի աշխատանքի պտուղն իմ կյանքում, և տասնութ տարի անց, երբ հայրս յոթանասունինը տարեկան դարձավ, ես արտոնություն ունեցա աղոթելու իմ երկու ծնողների հետ, և նրանք ընդունեցին Հիսուսին՝ որպես Տեր: Այնուհետև նրանք կարդում էին մեր գրքերը, դիտում էին մեր տեսանյութերը և առաջարկում էին դրանք իրենց ընկերներին: Մեր հարաբերությունները բարելավվեցին:

Հիսուսը նման իրավիճակի էր բախվել: Ինչ վերաբերում է Նրա հնազանդությանը Իր ծնողներին, գրված է. «Նա գնաց նրանց հետ և Նազարեթ եկավ և [սովորության համաձայն] հնազանդ էր նրանց» (Ղուկ. 2.51, AMP): Այնուամենայնիվ, երբ Նրա ծառայությունը սկսվեց, թուրը սկսեց խոցել և բացահայտել նրանց սրտերն

ու մտքերը, ինչպես որ Սիմեոնը մարգարեացել էր, երբ Հիսուսը դեռ նորածին էր: Հիսուսի արմատական ուղերձները անհարմարավետության զգացում և բարկություն էին առաջացնում շատերի մոտ, որոնց թվում նաև Նրա ընտանիքն էր: Նրանց զգացումները բորբոքվեցին այն աստիճան, որ Նրա մայրն ընդդիմացավ Նրան.

> «Եվ երբ նրանք, որ Նրանն էին (Նրա ընտանիքի անդամները), լսեցին դա, գնացին՝ Նրան ուժով բռնելու համար, որովհետև նրանք շարունակ ասում էին. «Նա խելագարվել է (Իրեն կորցրել է, գժվել է)»... Եվ Նրա մայրը և Նրա եղբայրները եկան և դրսում կանգնելով՝ խոսք փոխանցեցին՝ կանչելով Նրան: Եվ բազմությունը Նրա շուրջն էր նստած, և ասացին. «Քո մայրը և Քո եղբայրները և Քո քույրերը դրսում են, Քեզ են հարցնում»: Եվ Նա պատասխանեց. «Ո՞վ է Իմ մայրը և Իմ եղբայրները»: Եվ նայելով նրանց, ովքեր Իր շուրջն էին նստած, ասաց. «Ահա՛: Ահա՛, Իմ մայրը և Իմ եղբայրները. որովհետև ով կատարում է այն բաները, ինչ Աստված է կամենում, Իմ եղբայրը և քույրը և մայրն է»» (Մարկ. 3.21,31-35, AMP):

Նա հնազանդ էր Իր ծնողներին ամեն բանում, մինչև այն պահը, երբ նրանք կամեցան, որ Նա հակառակվեր Իր Հոր հրամանին: Բարի լուրն այն է, որ մի քանի տարի անց Նրա ընտանիքը Վերնատանն էր, և նրանք ընդունեցին Սուրբ Հոգու թափումը: Ինչ-որ պահի նրանք Տիրոջ հետևորդները դարձան:

Ինձ համար լավ չէր

Թողնենք բացառությունը և վերադառնանք կանոնին: Երեխաներին տրված պատվիրանը ծնողներին պատվելու մասին առաջինն է, որը երկու խոստում ունի. *նրանց համար լավ կլինի,* և նրանք *երկար կյանք կունենան* (տե՛ս Եփես. 6.2,3, Կողոս. 3.20):

Ես դառը փորձով սովորեցի այս պատվիրանին չհնազանդվելու հետևանքները: «Փերդյու» համալսարանն ավարտելուց հետո աշխատանքի ընդունվեցի «Ռոքվել Ինտերնեյշնլ» ընկերությունում: Ես սկսեցի հաճախել մի եկեղեցի, որի մասին արդեն գրել եմ այս գրքում: Իմ երկրորդ ծառայությունից հետո ես ճաշելու

գնացի իմ հասակակից մի քանի հավատացյալների հետ: Ես ծանոթացա ամուրիների ծառայության ավագներից մեկի հետ: Նա բնակարան չուներ, իսկ ես նոր էի տեղափոխվում այդ քաղաք: Մի փոքր զրուցելուց հետո մենք մտածեցինք, որ հրաշալի կլիներ երկուսով մեկ բնակարան վարձել: Ես ոգեշնչվեցի, քանի որ շատ գումար կխնայեի. ես նոր էի ավարտել համալսարանը և բոլորովին գումար չունեի:

Հաջորդ օրը զանգեցի հորս և պատմեցի այդ հրաշալի լուրը: Ես կարծում էի, թե նա կկիսեր իմ ոգեշնչումը՝ ամսական մի քանի հարյուր դոլար խնայելու պատճառով: Բայց դա տեղի չունեցավ: Փոխարենը՝ նա ասաց.

- Որդի՛ս, ինձ դուր չի գալիս դա: Այդպես մի՛ վարվիր: Դու չես ճանաչում այդ մարդուն:

Ես փորձեցի համոզել նրան՝ պատմելով, թե որքան նվիրված էր այդ առաջնորդը ամուրիների ծառայությանը, բայց հայրս ետ չկանգնեց իր խորհրդից:

Ցած դնելով խոսափողը՝ ես որոշեցի, որ հայրս չէր հասկանում այդ բաները, քանի որ նա հավատացյալ չէր: Ի վերջո, այդ մարդը կարևոր առաջնորդական դիրք ուներ: Ես անտեսեցի հորս խոսքերը, և հաջորդ օրը միասին մի բնակարան գտանք և ստորագրեցինք վարձակալության պայմանագիրը: Երբ գնացինք բեռնատար վարձելու, իմ նոր սենյակակիցը խնդրեց, որ ես վճարեի, քանի որ նա մոռացել էր իր չեկային գրքույկը: Երբ գնացինք բնակարանի կանխավճարը տալու, նա նույն կերպով վարվեց: Այդ վարքը շարունակվեց, և արդյունքում ես ամբողջությամբ վճարեցի առաջին երկու ամսվա վարձակալության գումարը երկուսիս համար, նաև բնակարանի կենցաղային սպասարկման ծախսերը և նրա բազմաթիվ միջքաղաքային հեռախոսազանգերից գոյացած պարտքերը (այդ ժամանակ դրանք բավականին թանկ արժեին):

Մի քանի անգամ ես տվեցի նրան իմ մեքենան, քանի որ նա մեքենա չուներ: Ամեն անգամ նա վերադարձնում էր մեքենան վաղ առավոտյան, և դրանից սիգարետի ծխի սարսափելի հոտ էր գալիս: Նա արդարանում էր՝ ասելով, որ կարիքավոր մարդկանց էր օգնում: Մի առավոտ ես մեծ փոս ընկած տեղ տեսա իմ մեքենայի կողային հատվածում: Ես սաստիկ բարկացա, բայց ցույց

չտվեցի: Մեկ օր ես դուրս եկա իմ ննջասենյակից գիշերվա ժամը 4:00-ին և տեսա լիովին անծանոթ տղայի հյուրասենյակում, որի ձեռքին թիթեղյա տարայով գարեջուր և սիգարետներ էին: Նա այնպես նայեց ինձ, ասես ես էի նրա տուն ներխուժել:

Ես տառապում էի իմ իսկ տանը. այնուամենայնիվ, նորահավատ լինելով՝ մտածում էի. *«Ես պեպք է սիրով վարվեմ: Ես չեմ բարկանա և չեմ դատի»:* Եվ անտեսում էի այդ խնդիրները: Դրանք ընդամենը մի քանիսն էին այն առօրյա խնդիրներից, որոնց բախվում էի այդ անձնավորության պատճառով:

Մի քանի շաբաթյա տառապանքից հետո իմացա, որ իմ սենյակակիցը գործող համասեռամոլ էր: Ես պահանջեցի, որ նա անմիջապես հեռանար, բայց նա չէր ցանկանում: Ես վճարում էի ամեն ինչի համար, իսկ նա մեղքի մեջ էր ապրում: Մոտավորապես նույն ժամանակ ամուրիների հովիվը իմացավ այդ մասին և հեռացրեց նրան ծառայությունից: Ես այն մարդկանց թվում էի, որոնք վերջինը իմացան նրա այլասերված կենսաոճի մասին: Իմ անհնազանդությունը կուրացրել էր իմ աչքերը, և ես չէի կարողանում զանազանել:

Հորս խորհուրդն անտեսելու պատճառով ես կորցրի հարյուրավոր դոլարներ, ինչպես նաև իմ խաղաղությունը: Ես զգացմունքորեն սպառված էի, և այդ երկու ամիսն ամենածանրն էին իմ ամբողջ կյանքում: Երբ այդ ամենն ավարտվեց, ես աղաղակեցի Աստծուն. «Տե՛ր, ինչո՞ւ դա տեղի ունեցավ: Ես հավատում էի Քեզ՝ առաջնորդության համար»:

Տերը ցույց տվեց, որ Նա տվել էր ինձ առաջնորդություն, բայց ես հրաժարվել էի: Ես ապշած հարցրի. «Ինչպե՞ս էիր Դու առաջնորդություն տվել ինձ»:

Նա պատասխանեց. *«Քո հոր միջոցով, բայց դու չլսեցիր»:*

«Բայց իմ հայրը վերստին ծնված չէ»,- պնդեցի ես:

Տերը հիշեցրեց ինձ, որ Իր Խոսքում գրված չէ. «Երեխանե՛ր, հնազանդվե՛ք ձեր ծնողներին, *միայն* եթե նրանք վերստին ծնված են»: Նա բացատրեց. *«Դու Իմ զավակն ես. այնպես որ, Ես դնում եմ Իմ իմաստությունը և խրատը քո ծնողների սրտում՝ քեզ առաջնորդելու և պաշտպանելու համար»:*

Ես արագորեն պատասխանեցի. «Բայց հիմա ես ինքնուրույն

եմ ապրում: Իմ հայրն ավելի քան 1500 կիլոմետր հեռու է ինձնից, և նա չի վճարում իմ հաշիվները»:

Նա ասաց. *«Այն, որ դու ես վճարում քո հաշիվները, և որ քո ծնողներն ավելի քան 1500 կիլոմետր հեռու են քեզնից, դեռ չի նշանակում, որ նրանց հնազանդվելու Իմ պատվիրանն այլևս կիրառելի չէ»:* Նրա պատվիրանը խոստանում է, որ մեզ համար լավ կլինի, եթե պահենք այն, և ես կարող եմ վկայել, որ այդ ժամանակ ինձ համար լավ *չէր:*

Նա ցույց տվեց ինձ, թե որ պահից է մարդն ազատվում իր հոր և մոր իշխանությունից: Հենց սկզբում Աստված պատվիրեց. «Սրա համար մարդը կթողնի իր հորը և իր մորը և կհարի իր կնոջը, և մեկ մարմին կլինեն» (Ծնն. 2.24):

Վերջին ցուցումը, որը ծնողը տալիս է իր երեխային, նրա ապագա ամուսնուն կամ կնոջն օրհնելն է: Որպես կողմնակի նշում, Լիզան ասաց ինձ, որ զարմացել էր, երբ նրա հայրը տվել է ինձ իր օրհնությունը՝ նրա հետ ամուսնանալու համար: Ես հարցրի, թե ո՞րն էր պատճառը, և նա ասաց. «Հայրս ասաց ինձ, որ դու դուր չես եկել նրան, որովհետև քրիստոնյա ես»: Այդ դեպքը ծառայեց որպես հաստատություն, որ թագավորի (մեզ վրա իշխանություն ունեցող մարդկանց) սիրտն Աստծո ձեռքում է:

Վերադառնալով Աստծո պատվիրանին՝ Նրա Խոսքը շեշտադրում է, որ երբ տղամարդը և կինը ամուսնական միություն են կազմում, իշխանության նոր կարգ է հաստատվում: Աստված չի նշում, որ կինը կթողնի իր ծնողներին, այն պատճառով, որ նա չի հաստատում նոր ընտանիքի կարգը. տղամարդն է ստանձնում իշխանությունը նոր ընտանիքում:

Հենց որ երեխաներն ամուսնանում են, նրանք այլևս չունեն իրենց ծնողներին հնազանդվելու հրաման, բայց նրանք պետք է շարունակեն պատվել նրանց: Հիշում եմ, որ մեկ անգամ հարցրի իմ ծնողներին, թե ինչո՞ւ նրանք խորհուրդ չտվեցին կնոջս և ինձ, թեև գիտեին, որ մենք խնդիրների էինք բախվելու: Նրանք պարզապես պատասխանեցին. «Դուք խորհուրդ չէիք հարցրել մեզնից»: Նրանց վարքն իսկապես աստվածահաճո էր: Ես տեսել եմ ծնողների, որոնք միջամտում են՝ խորհուրդներ տալով, ինչպես որ նրանք վարվում էին մինչև իրենց երեխաների ամուսնությունը: Նրանց միջև վիրավորանք և թյուրըմբռնում է առաջանում, քանի

որ նրանք բաց չեն թողել իրենց երեխաներին՝ համաձայն Աստծո Խոսքի խրատի:

Հատուկ զգուշացումներ երեխաների համար

Մի քանի տարի երիտասարդականի հովիվ ծառայելուց հետո տեսա այն վտանգավոր ճանապարհը, որի վրա շատ երիտասարդներ ոտք են դնում: Ես կուզեի Աստծո Խոսքից հատուկ խորհուրդներ տալ ծնողներին պատվելու կարևորության մասին: Ես անում եմ սա՝ հուսալով, որ այս տողերը կարդացող յուրաքանչյուր երիտասարդ կխուսափի այն թթխմորից, որն այս մեղքը տարածում է երիտասարդների միջև, քանի որ այն վարակիչ և մահացու է: Աստվածաշունչն ազդարարում է. «Անիծյա՛լ է իր հորը կամ մորը անարգողը: Եվ ամբողջ ժողովուրդն ասի՝ «ամե՛ն»» (Երկր. Օր. 27.16):

Իմ գրասեղանի դիմաց նստած էր մի միայնակ մայր՝ իր դեռահաս որդու հետ: Զրույցի ընթացքում այդ երիտասարդը շարունակ արհամարհանքով էր խոսում իր մոր հետ, ասես նա անմիտ և ստորադաս անձ էր: Ես արդեն մի քանի անգամ շտկել էի նրան: Մեր խորհրդատվության ավարտին, ի զարման ինձ, հանկարծ ասացի.

- Երիտասա՛րդ, եթե չապաշխարես քո մոր հանդեպ ունեցած վերաբերմունքից և վարքից, դու բանտում կհայտնվես:

Ես նույնքան ցնցված էի իմ բառերից, որքան նրանք: Այդ երիտասարդը դավանող քրիստոնյա էր և մեր երիտասարդական ծառայության անդամ էր: Ինչպե՞ս դա կարող էր տեղի ունենալ:

Գրեթե վեց տարի անց (ես այլևս երիտասարդականի հովիվ չէի, այլ այդ քաղաք էի գնացել՝ ծառայելու համար) այդ տղայի մայրը մոտեցավ ինձ կիրակի առավոտյան ծառայությունից հետո և ասաց.

- Հովիվ Ջո՛ն, հիշո՞ւմ եք, որ ասացիք որդուս, որ եթե նա չփոխվի, բանտում կհայտնվի: Նա արդեն երկու տարի է՝ բանտում է:

Ես գրեթե մոռացել էի դա, բայց հիշեցի, երբ նա ասաց այդ մասին: Ես մտածեցի. *«Ինչո՞ւ է այս կինը ոգևորությամբ պատմում ինձ այդ մասին»:* Ես իմացա դրա պատճառը: Նա շարունակեց.

- Հիմա նա կրակով լցված քրիստոնյա է: Վկայում է մյուս բանտարկյալներին և բանտային ծառայության անդամ է դարձել: Նա կարդում է ձեր գրքերը և սրտանց ընդունում է:

Ես երկյուղով լցվեցի, երբ իմացա, որ Աստծո դատաստանը լիովին փոխեց ամեն ինչ այդ երիտասարդի կյանքում: Ավելի լավ կլիներ, եթե նա ստիպված չլիներ սովորել այդ նեղությունից, այլ լսեր այն խոսքերը, որոնք տարիներ առաջ ասվեցին նրան: Բայց կարևորն այն էր, որ այժմ նրա սրտում ձգտում կար Աստծո հանդեպ:

Մենք կարող ենք տեսնել, թե որքան լուրջ խնդիր է երեխաների կողմից ֆիզիկական կամ խոսքային բռնություն գործադրելը իրենց ծնողների հանդեպ՝ այն բանով, թե ինչպես էին դրան վերաբերվում Հին կտակարանում. «Իր հորը կամ մորը զարկողը անպատճառ պիտի մեռցվի» (Ելից 21.15) և «Իր հորը կամ մորը անիծողը անպատճառ պիտի մեռցվի» (Ելից 21.17): Եվ Հիսուսը մեջբերում էր Հին կտակարանի պատվիրանները, երբ ասաց. «Որովհետև Աստված պատվիրեց. «Պատվի՛ր քո հորը և մորը» և «Իր հորը կամ մորը բամբասողը մահով մեռնի»» (Մատթ. 15.4,5, NKJV):

Մովսեսը ցուցումներ տվեց այն մասին, թե ինչպես վարվել ապստամբ զավակի հետ.

> «Եթե մի մարդ մի անզգամ և անհնազանդ տղա ունենա, ով իր հոր և մոր խոսքին չի լսում, և երբ որ նրան խրատում են, նրանց մտիկ չի անում, այն ժամանակ նրա հայրը և մայրը նրան բռնեն և դուրս տանեն քաղաքի ծերերի մոտ և նրա բնակված տեղի դուռը: Եվ քաղաքի ծերերին ասեն. «Մեր այս տղան անզգամ և անհնազանդ է, մեր ձայնին չի լսում, լափող և լակող է»: Այն ժամանակ նրա քաղաքի բոլոր մարդիկ քարերով քարկոծեն նրան, որ մեռնի, և չարությունը քո միջից վերացնես: Եվ ամբողջ Իսրայելը լսի և վախենա» (Երկր. Օր. 21.18-21):

Եթե այս խոսքերը կիրառվեին մեր օրերում, մեր եկեղեցիներում երիտասարդներին մահապատժի ենթարկելը պարբերական բնույթ կկրեր: Թեև այս պատիժն այլևս գոյություն չունի, մենք,

միևնույն է, տեսնում ենք, որ Աստծո վերաբերմունքն ապստամբ վարքի հանդեպ շատ հստակ և խիստ է: Այն չի փոխվել, միայն որովհետև փոխվել է դատավճռի ձևը: Մենք չպետք է թույլ տանք, որ մեր սրտերում ապստամբություն լինի, քանի որ այն կործանարար է:

Ես զգուշացրել եմ իմ երեխաներին, որ հեռու մնան ցանկացած տեսակի ապստամբությունից: Ապստամբության ամենից խաբուսիկ և աննկատ ձևը տրտունջն է: Այն արհամարհում է իշխանությունը՝ ակամայից ասելով. «Ինձ դուր չի գալիս այն, թե ինչպես ես առաջնորդում ինձ, և քո փոխարեն ես այլ կերպ կանեի»: Սա վիրավորական է առաջնորդի համար: Դուք հասկանո՞ւմ եք, թե ինչու տրտունջը նպաստեց, որ Իսրայելի զավակները չմտնեին Խոստման երկիր: Նրանց տրտունջը ցույց էր տալիս նրանց անարգանքն Աստծո հանդեպ, թեև այն ուղղված էր Մովսեսին: Ըստ էության, նրանք ասում էին Աստծուն, որ Նա ճիշտ չէր վարվում, և որ իրենք այլ կերպ կանեին ամեն ինչ:

Մեր ծնողներին պատվելով՝ մենք երկար և բարեհաջող կյանքի հրաշալի խոստում ենք ստանում: Ավելի լավ է ընտրել կյանքը, քան դատաստանը: Այս ճշմարտությունը պետք է հաստատվի մեր սրտերում:

Ամուսնություն

Ուշադրություն դարձնենք աստվածային կարգին ամուսնության մեջ: Աստվածաշունչը պատվիրում է, որ կանայք հնազանդվեն իրենց ամուսիններին «ամեն բանում» (Եփես. 5.24, NKJV): Այս պատվիրանը վերաբերում է ոչ միայն հոգևոր հարցերին, այլև կյանքի մյուս ոլորտներին: Պողոսը շեշտադրեց. «իրենց ամուսիններին»: Այլ տղամարդիկ իշխանություն չունեն ամուսնացած կնոջ կյանքում, միայն նրա ամուսինը: Հովիվն իշխանություն ունի ամուսնացած կնոջ կյանքում՝ եկեղեցական և հոգևոր հարցերում, տնօրենն իշխանություն ունի նրա աշխատանքի մեջ, ոչ թե ընտանեկան հարցերում, և պետական համակարգն իշխանություն ունի քաղաքացիական հարցերում: Այնուամենայնիվ, ինչ վերաբերում է ընտանիքին, կնոջ առաջնորդը ամուսինն է:

1980-ական թվականներին կինս և ես մի սխալական ուսմունք

ընդունեցինք, ըստ որի Նոր կտակարանը գրված էր շովինիստ տղամարդկանց կողմից, և մենք չպետք է հարեինք իշխանության մասին ցուցումներին, որոնք վերաբերում էին ամուսնուն և կնոջը: Մեզ սովորեցնում էին, որ Հիսուսը հավասար փրկություն էր շնորհել բոլորին: Անկասկած, այս պնդումը ճիշտ է, բայց փրկությունը չեղյալ չի դարձնում իշխանությունը: Տարիներ շարունակ մեր ընտանիքում խաղաղություն չկար: Մեր միջև մշտական պայքար էր իշխանության համար:

Տարիներ տևող խառնաշփոթից հետո մի անգամ ասացի կնոջս.

- Աստված դարձրել է ինձ այս ընտանիքի գլուխը, և ես առաջնորդելու եմ այն, անկախ նրանից՝ դու հետևելո՞ւ ես ինձ, թե՞ ոչ:

Իմ կյանքում դրական փոփոխություն սկսվեց, իսկ կնոջս կյանքում՝ ոչ: Տերը ցույց տվեց ինձ, որ, լինելով առաջնորդ, ես ոչ մի դեպքում չպետք է հարկադրեի իմ ենթականերին հետևել ինձ: Հիսուսն այդպես չի վարվում մեզ հետ: Եթե մեր իշխանության ներքո գտնվող մարդիկ չեն հետևում մեզ, նրանք տուժում են այդ պատճառով:

Ես աստվածային հանգստի և խաղաղության մեջ մտա: Այնուամենայնիվ, Լիզան շարունակում էր իր ուսերին կրել ընտանիքի բոլոր խնդիրները: Նա համոզված էր, որ ես անպատասխանատու առաջնորդ էի: Ես երիտասարդ էի և շատ թերացումներ ունեի. այնպես որ, նրա մտահոգություններն արդարացի էին թվում՝ նախկինում իմ գործած սխալների պատճառով: Երբեմն նրա վախերն այնքան սաստիկ էին դառնում, որ նա արթնացնում էր ինձ կեսգիշերին, որպեսզի հիշեցներ, որ ես չէի կրում իմ բեռը մեր ընտանիքում, իսկ նա անում էր իր պարտականություններից ավելին: Ես պարզապես առաջարկում էի հանձնել բոլոր հոգսերն Աստծուն և կրկին քնում էի, մինչ նա պառկում էր՝ չկարողանալով քնել, զարհուրելով վատագույնից:

Լիզայի բեռն ավելանում էր: Հոգսերը շարունակ տանջում էին նրան: Նրա միտքը երբեք հանդարտ չէր լինում. այն մշտապես խճճված էր՝ փորձելով պատկերացնել յուրաքանչյուր հնարավոր ճգնաժամ, որին մեր ընտանիքը կարող էր բախվել:

Կարճ ժամանակ անց այն ճնշումը, որը նա զգում էր, գրեթե

անտանելի դարձավ: Նա ստիպված էր երկարատև ցնցուղ կամ լոգանք ընդունել՝ այն թեթևացնելու համար: Մի գիշեր՝ հերթական ցնցուղն ընդունելիս, երբ նա տրտնջում էր իմ մասին, Աստված խոսում է նրա հետ. *«Լիզա, քո կարծիքով՝ Ջոնը լավ առաջնորդ է»:*

Նա արագորեն պատասխանում է. «Ո՛չ, ես այդպես չեմ կարծում: Ես չեմ վստահում նրան»:

«Լիզա, դու չպետք է վստահես Ջոնին,- պատասխանեց Նա,- դու պետք է վստահես միայն Ինձ: Քեզ թվում է, թե Ջոնը չի կարող արդյունավետ կերպով ղեկավարել այս ընտանիքը: Դու կարծում ես, թե կարող ես ավելի լավ անել դա: Այն լարվածությունը և անհանգստությունը, որ դու զգում ես, ընտանիքի գլուխը լինելու ծանրությունն ու ճնշումն են: Քեզ համար դա բեռ է, իսկ քո ամուսնու համար՝ պատմուճան. հանի՛ր դա քո վրայից»:

Լիզան անմիջապես հասկացավ: Աստված էր, ոչ թե իշխանատենչ մի տղամարդ, որ պատվիրում էր նրան հպատակվել իր ամուսնուն: Մեր ընտանիքն առաջնորդելը ճնշող էր նրա համար, քանի որ այդ դիրքը նրան չէր պատկանում: Աստված թույլ էր տվել նրան զգալ պատասխանատվության բեռը՝ առանց այն կրելու օծության կամ շնորհքի, որը Նա տալիս է ամուսնուն: Նա դուրս եկավ լոգարանից՝ լաց լինելով և ներողություն խնդրելով: Նա մտավ այն հանգստի և խաղաղության մեջ, որոնց մեջ ես մի քանի ամիս առաջ էի մտել, և մեր ընտանիքն առաջին անգամ տարիների ընթացքում ճշմարիտ ներդաշնակություն վերապրեց:

Սուրբ Հոգու աշխատանքը նրա հետ այդ գիշեր օգնեց հասկանալ, որ Աստված չէր պատվիրում հպատակվել, միայն երբ նա համաձայն է կամ՝ երբ նրան դուր է գալիս այն, ինչ իր ամուսինն ընտրում կամ որոշում է: Նա հասկացավ, որ եթե հնազանդ լիներ Աստծո պատվերին, կստանար Աստծո պաշտպանությունը: Արդյո՞ք ես սխալներ գործեցի դրանից հետո: Անկասկած: Շա՛տ սխալներ: Այնուամենայնիվ, Աստված պաշտպանում էր Լիզային իմ սխալների ժամանակ և խաղաղություն էր տալիս: Երբ նա հպատակված է, նա վայելում է Աստծո պաշտպանությունը՝ ան-

կախ այն բանից, թե ինչ ոչ իմաստուն որոշումներ է կայացնում նրա ամուսինը:

Անողջամիտ կամ չփրկված ամուսիններ

Կանանց տրված պատվերը իրենց ամուսիններին հնազանդվելու մասին՝ չի վերաբերում միայն հավատացյալ ամուսիններ ունեցողներին: Պետրոսն ասաց. «Կանա՛յք, նույն կերպով, հպատակվե՛ք ձեր ամուսիններին, որպեսզի, եթե նրանցից որևէ մեկը չհավատա Խոսքին, նրանք շահվեն՝ առանց խոսքերի, իրենց կանանց վարքով» (Ա Պետր. 3.1, NIV):

Նախ՝ ուսումնասիրենք «Կանա՛յք, նույն կերպով...» խոսքերը: Պետրոսը հենց նոր էր ավարտել քննարկումն իշխանության անարդար վերաբերմունքը կրելու մասին (այս մասին մանրամասնորեն խոսեցինք 13-րդ գլխում): Բայց դրանից անմիջապես հետո նա նմանատիպ ցուցումներ տվեց կանանց՝ իրենց ամուսինների վերաբերյալ: Եթե միավորենք այս հատվածները, կստացվի հետևյալը.

> «Դուք, որ ստրուկներ եք, պետք է ընդունեք ձեր տերերի իշխանությունը: Կատարե՛ք այն, ինչ նրանք պատվիրում են ձեզ, ոչ միայն՝ եթե նրանք բարի և ողջամիտ են, այլև՝ նույնիսկ երբ նրանք խիստ են: Որովհետև դուք հաճելի եք Աստծուն, երբ, հանուն ձեր խղճի, համբերատար կերպով անարդար վերաբերմունք եք կրում... Նույն կերպով, դուք՝ կանայք, պետք է ընդունեք ձեր ամուսինների իշխանությունը, նույնիսկ նրանց, որոնք հրաժարվում են ընդունել Բարի լուրը» (Ա Պետր. 2.18,19, 3.1, NLT):

Ցավալի է, բայց փաստ է. ես հանդիպել եմ որոշ «հավատացյալ» ամուսինների, որոնք ավելի խիստ են՝ որպես ընտանիքի առաջնորդ, քան անհավատները: Այնուամենայնիվ, որպես կանոն, այն ամուսինները, որոնց ամենից դժվար է հպատակվել, չփրկված մարդիկ են: Կրկին, ուզում եմ շեշտադրել, որ եթե ամուսինը պատվիրում է իր կնոջը Աստծո Խոսքին հակառակ վարվել, կինը չպետք է հնազանդվի նրա հրահանգին, սակայն պետք է հպատակված վերաբերմունք ունենա:

Պետրոսը շարունակում է՝ ցույց տալով, որ այս հպատակված վերաբերմունքը ամենից ազդեցիկ վկայությունն է ամուսնու համար, նույնիսկ ավելի ազդեցիկ, քան քարոզվող խոսքը: Ես ճանաչում եմ մի կնոջ, որի ամուսինը հավատացյալ չէր: Տարիներ շարունակ այդ կինը քարոզում էր նրան: Նա դնում էր ավետարանչական գրքույկներ նրա աշխատասեղանին, Աստվածաշնչեր՝ նրա մահճակալի կողքի պահարանին և իրենց տան այլ հատվածներում (որտեղ նրա ամուսինը սիրում էր հանգստանալ), և քրիստոնեական ամսագրեր՝ նրա սուրճի սեղանին: Նա այնպիսի զույգերի էր հրավիրում իրենց տուն, որոնց ամուսիններն ազդեցիկ հավատացյալներ էին, քանի որ հույս ուներ, որ նրանք կվկայեին իր ամուսնուն:

Մի անգամ Աստված խոսեց նրա հետ. *«Որքա՞ն ժամանակ ես խոչընդոտելու ամուսնուդ փրկությունը»:*

Ցնցված՝ նա հարցրեց. «Մի՞թե ես խոչընդոտում եմ իմ ամուսնու փրկությունը: Ինչպե՞ս»:

Տերը ցույց տվեց այդ կնոջը, որ քարոզելով իր ամուսնուն և փորձելով ազդել հանգամանքների վրա, նա չէր կատարում այն, ինչ Աստված պատվիրել էր իրեն: Նա ցույց տվեց այդ կնոջը վերևում բերված հատվածը Պետրոսի Առաջին թղթից և կարգադրեց. *«Հեռացրո՛ւ ավետարանչական գրքույկները, ամսագրերը և Աստվածաշնչերը և դադարի՛ր ընթրիքի հրավիրել քո կողմից որոշված զույգերի»:*

Նա ասաց ինձ.

- Ջո՛ն, ես պարզապես սկսեցի սիրել և հպատակվել նրան, և մի քանի ամիս անց իմ ամուսինը նվիրեց իր կյանքը Հիսուսին:

Ես հյուրընկալվել եմ նրանց տանը և գիտեմ, որ նրա ամուսինն անչափ սիրում է Տիրոջը:

Եթե մենք պարզապես հավատայինք, վստահեինք և հնազանդվեինք այն ամենին, ինչ ասում է Աստծո Խոսքը, կտեսնեինք հրաշքներ մեր ընտանիքներում և կվայելեինք այն խաղաղությունը, որն ամեն մտքից վեր է: Ես չեմ կարող չափից ավելի շեշտադրել այն փաստը, որ Աստված է տվել այս պատվերները, ոչ թե վերահսկող, շահագործող և իշխանատենչ առաջնորդները: Նա տվել է դրանք մեր մատակարարման և պաշտպանութ-

յան համար, և մենք կդիտարկենք մի քանիսը հաջորդ գլխում: Նույնիսկ երբ դժվարություններ ենք կրում, կարող ենք վստահել Նրա խոստմանը. «Որովհետև Ես գիտեմ այն խորհուրդները, որ խորհում եմ ձեր մասին,- ասում է Տերը,- խաղաղության խորհուրդները, և ոչ թե չարության, որ ձեզ տամ ապագան և հույսը» (Երեմ. 29.11):

Հասարակական իշխանություն

Մենք հստակ ցուցումներ ունենք Նոր կտակարանում աշխատանքի և ուսման վերաբերյալ: Պողոսը խրատում է.

> «[Պատվիրի՛ր] ծառաներին հնազանդ լինել իրենց տերերին, հաճեցնող լինել և ամեն կերպով գոհացնել նրանց: [Զգուշացրո՛ւ նրանց], որ չառարկեն կամ չհակասեն, ո՛չ էլ գողանան՝ փոքր արժեք ունեցող բաներ վերցնելով, այլ մշտապես ցույց տան իրենց՝ որպես ճշմարտապես հուսալի, և լիովին վստահելի, և հավատարիմ, որպեսզի ամեն ինչում նրանք զարդարանք լինեն այն ուսմունքին, [որը] Աստծո՝ մեր Փրկչի մասին է և Նրա կողմից է, և արժանահավատ դարձնեն այն» (Տիտոս 2.9,10, AMP):

Ես ուրախություն եմ ապրել, երբ անհավատ մարդիկ, որոնք ընկերությունների տնօրեններ կամ սեփականատերեր են, պատմել են ինձ, որ տեսել են Հիսուսին իրենց աշխատողների կյանքում, ոչ թե՝ որովհետև նրանք քարոզել են, այլ՝ որովհետև արտահայտել են Նրա բնավորությունը դժվարին իրավիճակներում և իրենց աշխատանքային էթիկայի մեջ: Նրանք ասել են ինձ. «Նրանք երբեք չեն վիճում, չեն տրտնջում և չեն հակաճառում ինձ», կամ՝ «Նրանք ավելի շատ են աշխատում, քան իմ մյուս աշխատողները», կամ՝ «Նրանք իմ աշխատողներից ամենաազնիվ և ամենավստահելի մարդիկ են»: Այս մարդիկ բաց են, երբ քարոզում եմ նրանց Հիսուսի մասին՝ իրենց աշխատողների վկայության շնորհիվ:

Այնուամենայնիվ, ես բախվել եմ նաև հակառակ պատկերին: Ես նստած էի մի մարդու կողքին ինքնաթիռում, որը մի խոշոր քաղաքում, մեծությամբ երկրորդ տաքսի ծառայության սեփակա-

նատերն էր: Մենք հաճելիորեն զրուցում էինք, մինչև որ նա իմացավ, որ ես ծառայող եմ: Մի պահ նա լռեց, իսկ հետո դադարեց նույնքան ազատորեն խոսել ինձ հետ: Քանի որ ես արդեն դրական տպավորություն էի թողել նրա վրա, հեշտորեն կարողացա հարցնել, թե ինչու նրա վերաբերմունքը փոխվեց:

Նա ասաց.

- Լա՛վ, ես կպատմեմ քեզ: Իմ ընկերությունում մի կին էր աշխատում: Նա այդ «վերստին ծնված քրիստոնյաներից» էր: Նա քարոզում էր բոլորին գրասենյակում՝ խոչընդոտելով թե՛ իր, թե՛ մյուսների արդյունավետությունը: Երբ նա հեռացավ իմ ընկերությունից, որոշ իրեր տարավ իր հետ, որոնք իրեն չէին պատկանում, և թողեց ինձ ութ հազար դոլարի պարտք, որը գոյացել էր Գերմանիայում ապրող իր որդու հետ միջազգային հեռախոսազրույցներից:

Ես խիստ տրտմեցի: Յուրաքանչյուրը այդ գրասենյակում կդժվարանար լսել Աստծո Խոսքը՝ այդ կնոջ անհնազանդությունից և գողությունից հետո: Այս պատճառով, Պողոսն ասում է. «[Զգուշացրո՛ւ նրանց], որ չառարկեն կամ չհակասեն, ո՛չ էլ գողանան՝ փոքր արժեք ունեցող բաներ վերցնելով, այլ մշտապես ցույց տան իրենց՝ որպես ճշմարտապես հուսալի, և լիովին վստահելի, և հավատարիմ»: Երբ մենք հպատակվում ենք, քրտնաջան աշխատում և հնազանդվում ենք մեր աշխատավայրերի և ուսումնական հաստատությունների օրենքներին և կանոններին, մենք դառնում ենք մեր Տեր Հիսուս Քրիստոսի շնորհքի վկաները:

Պողոսը գրում է մեկ այլ հատվածում.

> «Ծառանե՛ր, հնազանդվե՛ք ամեն ինչում նրանց, որոնք ձեր երկրային տերերն են, ոչ միայն՝ երբ նրանց աչքերը ձեզ վրա են՝ մարդկանց հաճեցնողների պես, այլև պարզությամբ [ձեր ամբողջ սրտով]՝ Տիրոջ հանդեպ ձեր ակնածանքի շնորհիվ և որպես Նրա հանդեպ ունեցած նվիրման անկեղծ դրսևորում: Ինչ առաջադրանք էլ ունենաք, սրտա՛նց աշխատեք դրա վրա (ձեր անձից), ինչպես [այնպիսի բան, որն արվում է] Տիրոջ համար, և ոչ թե մարդկանց» (Կողոս. 3.22,23, AMP):

Ուշադրություն դարձրեք «հնազանդվե՛ք ամեն ինչում» արտահայտությանը: Կարևոր չէ, թե որքան անողջամիտ է թվում ձեր տնօրենը կամ ուսուցիչը: Ձեր հնազանդությունը նրան՝ իրականում ձեր հնազանդությունն է Տիրոջը:

Պողոսը շարունակում է. «Իմանալով [ամենայն համոզվածությամբ], որ Տիրոջից է [և ոչ թե մարդկանցից], որ դուք կստանաք այն ժառանգությունը, որը ձեր [իրական] վարձատրությունն է: [Նա, Ում] դուք իրականում ծառայում եք, Տեր Քրիստոսն [Մեսիան] է» (Կողոս. 3.24, AMP): Եթե այդ կինը իմանար, որ իրականում Տիրոջից էր գողանում, նա ոչ մի դեպքում չէր անի դա: Նա զուրկ էր հասկացողությունից, ինչպես նաև Տիրոջ երկյուղից:

Պողոսն ավելացնում է հաջորդ խոսքում. «Բայց նա, որ սխալ է վարվում, հատուցում կստանա այն ամենի համար, ինչ արել է, և աչառություն չկա» (խոսք 25, NKJV): Ինձ դուր է գալիս, թե ինչպես է *«Ուղերձ»* Աստվածաշունչը վերծանում այս խոսքը. «Խոժոռադեմ ծառան, որն անորակ աշխատանք է կատարում, պատասխանատվության կենթարկվի: Քրիստոնյա լինելը արդարացում չէ վատ աշխատանքի համար» (MSG):

Ամենայն հավանականությամբ, այդ կինը պատասխանատվության չի ենթարկվի այդ տաքսի ծառայության սեփականատիրոջ կողմից, և ո՛չ էլ քաղաքացիական իշխանության կողմից. փոխարենը, նա պատասխանատվության կենթարկվի Տիրոջ կողմից և կկանչվի հաշիվ տալու Քրիստոսի ատյանին: «Դրա համար էլ ջանք ենք անում, որ թե՛ մնանք, և թե՛ դուրս գանք, հաճո լինենք Նրան: Որովհետև մենք՝ ամենս, պետք է հայտնի լինենք Քրիստոսի ատյանի առջև, որ ամեն մեկն ընդունի իր մարմնով՝ ինչ որ գործեց՝ թե՛ բարի, և թե՛ չար» (Բ Կորնթ. 5.9,10):

Ընդհանուր հարցեր

Շատերն ասում են, որ չեն պատրաստվում հնազանդվել այն առաջնորդներին, որոնք չեն ապրում այնպես, ինչպես քարոզում են: Սակայն արդյո՞ք այս մտածելակերպը բխում է հնազանդությունից, թե՞ բնական դատողությունից: Գրված է. «Այդ ժամանակ Հիսուսն ասաց բազմությանը և Իր աշակերտներին. «Դպիրները և փարիսեցիները նստած են Մովսեսի [իշխանության] աթոռին:

Այնպես որ, պահեք և կատարեք այն ամենը, ինչ նրանք ասում են ձեզ, բայց մի՛ արեք այն, ինչ նրանք են անում, որովհետև նրանք քարոզում են, բայց չեն կատարում»» (Մատթ. 23.1-3, AMP):

Հիսուսը պատվիրեց հպատակվել նույնիսկ վատ առաջնորդներին, որոնք չէին ապրում ըստ իրենց քարոզների: Նա ուղղեց մարդկանց ուշադրությունը այդ մարդկանց կյանքում եղած իշխանությանը, ոչ թե նրանց անձնական կյանքին: Վոչման Նին գրում է.

> «Ինչպիսի՜ ռիսկի է Աստված դիմել՝ իշխանություններ հիմնելով: Ինչպիսի՜ կորուստ Աստված կկրի, եթե լիազորած իշխանությունները, որոնց Նա հիմնում է, ոչ պատշաճ կերպով ներկայացնեն Նրան: Այնուամենայնիվ, Աստված անվեհեր կարգել է ներկա իշխանությունները: Մեզ համար շատ ավելի հեշտ է իշխանություններին առանց վախի հնազանդվելը, քան Աստծո համար՝ դրանք հիմնելը: Այդ դեպքում, մի՞թե մենք չենք կարող հնազանդվել նրանց՝ առանց վատ կանխազգացման, քանի որ Աստված Ինքը չվախեցավ իշխանություն վստահել մարդկանց: Ինչպես որ Աստված համարձակ կերպով կարգեց իշխանությունները, այնպես էլ եկեք խիզախորեն հնազանդվենք դրանց: Եթե ինչ-որ սխալ տեղի ունենա, դա կլինի ոչ թե մեր, այլ՝ իշխանությունների մեղավորությունը, քանի որ Տերը հայտարարում է. «Ամեն անձ թո՛ղ հնազանդվի բարձր իշխանություններին»:

Հնազանդի գործը միայն հնազանդվելն է. Տերը պատասխանատվության չի ենթարկի մեզ սխալմամբ հնազանդվելու համար. փոխարենը, պատասխանատվության կենթարկի լիազորած առաջնորդին՝ նրա սխալ արարքի համար: Անհնազանդությունը, այնուամենայնիվ, ապստամբություն է, և դրա համար իշխանության ներքո գտնվող մարդն է, որ պետք է հաշիվ տա Աստծուն» (Հռոմ. 13.1): *(«Հոգևոր իշխանություն»*, էջեր 69-71):

Այս խոսքերը գրել է մի մարդ, ով անարդար վերաբերմունքի է արժանացել իշխանության կողմից: 1930-40-ական թվականներին նա օգնել է տեղական եկեղեցիներ հիմնել Չինաստանում՝ լիովին անկախ օտարերկրյա միսիոներական կազմակերպութ-

յուններից, և կարևոր դեր է կատարել շատերին Աստծո թագավորության մեջ բերելու գործում: Նրա գործունեությունը սաստիկ զայրացնում էր պետական գործիչներին, և նրան ձերբակալեցին 1952 թվականին՝ մեղավոր ճանաչելով բազմաթիվ կեղծ մեղադրանքներով: Նա բանտարկվեց մինչև իր մահը՝ 1972 թվականը: Այնուամենայնիվ, նրա ակնածալի երկյուղը Տիրոջ հանդեպ վկայություն էր շատերի համար բանտում, և շատերը փրկվեցին նրա վկայության միջոցով: Նրա աշխատությունները դեռ խոսում են բազմաթիվ մարդկանց հետ շատ տարիներ անց:

Ճանաչել իշխանությունը

Ամբողջ այս ուղերձի ընթացքում խոսել եմ այն մասին, թե ինչպես ճանաչել կարգված իշխանությունը: Այնուամենայնիվ, ամփոփելով այս գլուխը, նպատակահարմար կլինի ամրապնդել այն, ինչ արդեն ասվել է:

Պետական և հասարակական ոլորտներում օրինական իշխանությունը ճանաչելը դժվար չէ: Գրված է. «Հպատակվե՛ք յուրաքանչյուր մարդկային հաստատությանը և իշխանությանը՝ հանուն Տիրոջ» (Ա Պետր. 2.13): Պետական պաշտոնյաները նրանք են, որոնք ստանձնել են իրենց պաշտոնը՝ երդման արարողություն անցնելով, կամ աշխատանքի են ընդունվել՝ որպես կառավարության աշխատողներ: Բացի այդ, կան ընկերությունների ղեկավարներ, ուսուցիչներ կամ կրթական հաստատությունների տնօրեններ, և մենք գիտենք, որ նրանց իշխանությունը վավերական է:

Իշխանությունը ընտանիքում հեշտ է ճանաչել: Երբ կինը և տղամարդն ամուսնանում են, կինը հայտնվում է այդ տղամարդու իշխանության, պաշտպանության և մատակարարման ներքո: Երբ ընտանիքում երեխա է ծնվում, ծնողները իշխանություն ունեն նրա կյանքում: Եթե երեխան որդեգրվում է, նա պետք է պատվի իր ծնողներին այնպես, ասես նրանք իր կենսաբանական ծնողներն են: Մանկատանը կամ խնամատարության ներքո գտնվող երեխան պետք է հարգանքով վերաբերվի այդ հաստատության ղեկավարներին՝ որպես իր կյանքում իշխանություն ունեցող մարդկանց:

Օրինական իշխանությունը զանազանելը մի փոքր ավելի բարդ է եկեղեցում: Աստվածաշունչը զգուշացնում է սուտ առաքյալների, մարգարեների և առաջնորդների մասին եկեղեցու ներսում. մենք չպետք է հպատակվենք նրանց: Ինչպես որ Պողոսն է ասում. «Որոնց մի ժամ էլ ականջ չդրինք՝ հնազանդ լինելու համար» (Գաղատ. 2.5): Սուտ առաջնորդները կարող են ի հայտ գալ երկու ձևով: Առաջինը՝ նրանք սովորեցնում են այնպիսի վարդապետություններ, որոնք չեն համապատասխանում Աստվածաշնչին: Պողոսի այս խոսքի համատեքստում նա գրում է. «Բայց եթե մենք էլ, կամ երկնքից մի հրեշտակ ավետարանի ձեզ նրանից ուրիշ, քան թե որ մենք ավետարանեցինք ձեզ, նզովված լինի» (Գաղատ. 1.8): Ահա թե ինչու Պողոսը չէր պատրաստվում պատվել այդ առաջնորդներին իր հպատակությամբ:

Երկրորդը՝ սուտ առաջնորդները բարձրանում են եկեղեցու ներսում՝ իրենք իրենց նշանակելով: Աստծո նշանակումը նախաձեռնվում է Սուրբ Հոգուց և հաստատվում է իշխանություն ունեցող առաջնորդների կողմից, որոնք հետևել են այդ թեկնածուի կյանքին: Հին կտակարանում այս գործընթացը պատկերվում է Հեսուի ձեռնադրությամբ: Աստված ասաց Մովսեսին.

> «Վերցրո՛ւ Նավեի որդի Հեսուին, որի ներսում Հոգին կա, և դի՛ր քո ձեռքերը նրա վրա: Ներկայացրո՛ւ նրան Եղիազար քահանային ամբողջ ժողովրդի առջև և հրապարակավ հանձնարարի՛ր նրան ժողովրդին առաջնորդելու պատասխանատվությունը: Փոխանցի՛ր քո իշխանությունը նրան, որպեսզի Իսրայելի ամբողջ ժողովուրդը հնազանդվի նրան» (Թվոց. 27.18-20, NLT):

Աստված ընտրեց Հեսուին, բայց հաստատեց Իր ընտրությունը կարգված առաջնորդների՝ Մովսեսի և Եղիազարի միջոցով: Այդ մարդիկ տարիներով հետևում էին Հեսուի կյանքին: Այս օրինաչափությունը կարելի է տեսնել նաև Նոր կտակարանում (տե՛ս Գործք 13.1-4):

Պողոսը հաստատում է. «Որովհետև ոչ թե իր անձը հանձնարարողն է ընտիր, այլ նա, որին Տերն է հանձնարարում» (Բ Կորնթ. 10.18): Ինքնանշանակ առաջնորդին հպատակվելը վտանգավոր

քայլ է: Աստված մշտապես կհաստատի իր նշանակումն այն եկեղեցու առջև, որտեղ թեկնածուները հավատարմորեն ծառայել են: Հիսուսը հանդիմանեց Թիվատիրի հավատացյալներին Հեզաբել անունով ինքնանշանակ մարգարեուհու ուսմունքներին և կեղծ իշխանությանը հպատակվելու համար (Հայտն. 2.20-25): Ես առանձին գիրք եմ գրել այն մասին, թե ինչպես ճանաչել ինքնանշանակ ծառայողներին, որը կոչվում է *«Այսպե՞ս է ասում Տերը»:* Այս գիրքը լավ հղում է այս ենթավերնագրի նյութին. այն հոգևոր իշխանության չարաշահման, ինչպես նաև կեղծման մասին է:

Եթե մենք ճշմարտապես փրկված ենք և ձգտում ենք կատարել Աստծո կամքը, կճանաչենք օրինական իշխանությունը եկեղեցում: Հիսուսն ասաց. «Եթե մեկը կամենում է Նրա կամքն անել, նա կիմանա այս վարդապետության համար, թե արդյոք Աստծո՞ւց է, կամ՝ եթե Ես Իմ անձից եմ խոսում» (Հովի. 7.17): Բանալին հետևյալն է. «Եթե մեկը կամենում է Նրա կամքն անել»: Երբ մեր սիրտն Աստծուն է ձգտում, Նա զանազանելու կարողություն է տալիս մեզ՝ Սուրբ Հոգով: Ինչպես Հովհաննեսը հաստատեց. «Եվ դուք օծություն ունեք այն Սուրբից և ամեն բան գիտեք» (Ա Հովի. 2.20):

Վոչման Նին գրում է. «Եթե մենք իսկապես սովորեինք հնազանդվել Աստծուն, առանց դժվարության կճանաչեինք, թե ում վրա է հանգչում Աստծո իշխանությունը» (*«Հոգևոր իշխանություն»*, էջ 62): Աստծուն ճանաչելը նշանակում է ճանաչել իշխանությունը, քանի որ Նա և Նրա իշխանությունն անբաժանելի են:

Աստված վարձատրում է նրանց, ովքեր ջանասիրաբար փնտրում և հնազանդվում են Իրեն: Հաջորդ գլխում կտեսնենք իշխանությանը հպատակվելու բազմաթիվ և հրաշալի օգուտներից մի քանիսը:

ԳԼՈՒԽ 17

ՄԵԾ ՀԱՎԱՏՔ

Որքան մեծ է մեր հպատակության մակարդակը, այնքան մեծ է մեր հավատքը:

Վերջին գլխում կխոսենք այս «պատվաստումն» ընդունելու առավելությունների մասին, այսինքն՝ այն ահռելի վարձատրությունների և օրհնությունների, որոնք տրվում են ծածկոցի տակ մտնող բոլոր մարդկանց: Կարելի է բազմաթիվ գրքեր գրել միայն այս առավելությունների մասին: Թեև մենք կդիտարկենք միայն մի քանիսը, դուք կբացահայտեք ավելին՝ ձեր անձնական ուսումնասիրության և Քրիստոսի մեջ ունեցած փորձառության միջոցով:

Տե՛ր, ավելացրո՛ւ մեր հավատքը

Մի քանի տարի առաջ մեր գրասենյակ գնացի առավոտյան ժամը 5:30-ին՝ աղոթելու, ինչպես արդեն բավականին ժամանակ անում էի: Այնուամենայնիվ, մինչև իմ աղոթքը սկսելը, լսեցի Սուրբ Հոգու ցուցումը. *«Բացի՛ր Ղուկասի 17-րդ գլուխը և կարդա՛ 5-րդ խոսքից»:*

Ես ոգեշնչված բացեցի այդ հատվածը, որին լավ ծանոթ էի: Անցյալում նույնիսկ ուղերձներ էի քարոզել այդ հատվածի հիման վրա, բայց դա չզսպեց իմ խանդավառությունը: Ես գիտեի իմ

անցյալի փորձից, որ եթե Նա պատվիրում է ինձ որոշ հատվածներ կարդալ, ուրեմն պետք է սովորեմ այն, ինչը նախկինում չեմ նկատել: Դիտարկենք այն:

«Եվ առաքյալներն ասացին Տիրոջը. «Մեր հավատքն ավելացրո՛ւ»» (Ղուկ. 17.5):

Մինչև առաջ անցնելը՝ քննարկելու համար այն, ինչ Նա ցույց տվեց ինձ այդ առավոտ, թույլ տվեք նշել, թե ինչու այդ մարդիկ խնդրեցին ավելացնել իրենց հավատքը: Արդյո՞ք քիչ առաջ Հիսուսը հարություն էր տվել մահացած մարդու: Թե՞ քիչ առաջ Նա հինգ հազար մարդու էր կերակրել մի քանի հացով և ձկով: Գուցե քիչ առաջ Նա փոթորկվող ծո՞վ էր հանդարտեցրել Խոսքով: Պատասխանն է՝ ո՛չ, ո՛չ, ո՛չ: Քիչ առաջ Հիսուսն ասել էր նրանց. «Զգո՛ւյշ կացեք ձեր անձերի համար: Եթե քո եղբայրը մեղանչի քեզ դեմ, հանդիմանի՛ր նրան, և եթե ապաշխարի, ների՛ր նրան: Եվ եթե օրը յոթ անգամ քեզ դեմ մեղանչի և յոթ անգամ քեզ մոտ դառնա և ասի՝ ապաշխարում եմ, ների՛ր նրան» (խոսք 3,4):

Ուշագրավ և զորավոր հրաշքները չդրդեցին նրանց խնդրել, որ իրենց հավատքն ավելանար: Պատճառը պարզ պատվիրանն էր իրենց հանդեպ մեղանչողներին ներելու մասին: Այդ մարդիկ օրենքի ներքո էին ապրում և սովոր էին արձագանքել վիրավորանքին այնպիսի դիրքորոշմամբ, որն ասում է. «աչք՝ աչքի դեմ, և ատամ՝ ատամի դեմ»: Հիսուսն ուղղորդում էր նրանց այնպիսի ընթացքի մեջ, որը լիովին անողջամիտ էր թվում: Աստծո բնավորությամբ վարվելու պատվիրանը լիովին հակառակ էր նրանց պատկերացմանը: Ինչպե՞ս նրանք կարող էին հնազանդվել նման վեհ պատվիրանի: Նրանց պատասխանն էր. «Մեր հավատքն ավելացրո՛ւ»: Նրանք գիտեին, որ հնազանդությունը և հավատքն ուղղակիորեն կապակցված են, և այդ օրը ես տեսնելու էի դա լիովին նոր լույսի ներքո:

Լսելով նրանց աղաղակն ավելի մեծ հավատքի համար՝ Հիսուսը պատմեց այս առակը. «Եթե մանանեխի հատի չափ հավատք ունենայիք, այս թզենուն կասեիք՝ պոկվի՛ր և ծովի մեջ տնկվի՛ր, և նա կհնազանդվեր ձեզ» (խոսք 6): Ես կարծում էի, թե հասկանում էի նրա խոսքերը: Ես սովորեցնում էի այս մասին և ծանոթ

էի Աստծո հավատքն ունենալու մասին Հիսուսի ուսմունքին, նաև այն մասին, որ եթե մենք հրամայենք սարին պոկվել և ծովն ընկնել՝ առանց կասկածելու մեր սրտերում, մենք կունենանք այն, ինչ ասում ենք (տե՛ս Մարկ. 11.22-24): Նույնը այստեղ էր. միայն թե Նա բերում էր թզենու օրինակը՝ սարի փոխարեն:

Այս խոսքերը նաև պատկերում են, որ հավատքը տրված է յուրաքանչյուր հավատացյալի՝ մանանեխի սերմի պես: Այն գործում է ըստ Աստծո թագավորության ցանքի և հունձքի սկզբունքի. «Այսպես է Աստծո արքայությունը, որպես թե մի մարդ սերմ գցեր հողի մեջ» (Մարկ. 4.26): Երբ մենք փրկվեցինք, մեզ հավատքի չափ տրվեց (Հռոմ. 12.3): Այս հավատքը սերմի տեսքով է, և մենք պատասխանատու ենք այն մշակելու և աճեցնելու համար: Ինչպե՞ս է այն աճում: Պատասխանը ստորև է:

Ծառայի ճաշելու ճիշտ ժամանակը

Ես ուշադրությամբ շարունակեցի կարդալ, քանի որ հաջորդ չորս խոսքերը միշտ շփոթեցնում էին ինձ: Ես բացահայտելու էի, որ Հիսուսը պարզապես հավատքն ավելացնելու բանաձևեր չէր տալիս Իր աշակերտներին: Նա պատրաստվում էր ուղղորդել նրանց այնպիսի կենսաոճի, որն անմիջապես առնչվում է իշխանությանը հնազանդվելուն: Լսե՛ք այս առակը.

> «Բայց ձեզնից ո՞վ է նա, որ մի հողագործ կամ մի հովիվ ծառա ունենա, որ երբ հանդից գա, տուն մտնի, շուտով ասի նրան, թե՝ ե՛կ, սեղան նստի՛ր: Այլ չի՞ ասի նրան, թե՝ պատրաստի՛ր՝ ինչ որ իրիկունը պիտի ուտեմ, և գոտիդ կապի՛ր, ինձ ծառայի՛ր, մինչև որ ուտեմ և խմեմ, և հետո դու էլ կուտես և կխմես: Մի՞թե այն ծառայից շնորհակալ կլինի, որ այն բոլոր իրեն հրամայվածներն արեց: Չե՛մ կարծում» (Ղուկ. 17.7-9):

Ես մշտապես հարց էի տալիս, թե ինչու Տերն ակնհայտորեն փոխեց թեման: Նա ծառեր արմատախիլ անող հավատքից անցում կատարեց ծառայի պարտականություններին: Ես չէի հասկանում դա, բայց այդ առավոտ հասկանալու էի:

Կրկին, դանդաղորեն կարդալով այս խոսքերը, ես ձգտում էի

լսել Նրա ձայնը իմ սրտում՝ Նրա ոգեշնչումը ստանալու համար: Հանկարծ լսեցի. *«Ո՞րն է քո դաշտը մշակող ծառայի հիմնական նպատակը: Ո՞րն է հոտերն արածեցնող ծառայի հիմնական նպատակը: Ո՞րն է վերջնական արդյունքը»:*

Ես մի պահ մտածեցի և հանկարծ հասկացա. որպեսզի սեղանին կերակուր լինի: Ես հասկացա, թե ինչ նկատի ուներ Հիսուսը: Եթե ծառայի աշխատանքի վերջնական արդյունքը կերակուրն է իր գործատուի սեղանին, ինչո՞ւ ծառան պետք է ուտի մինչև իր տիրոջը կերակուր մատուցելը: Մի՞թե նա չպետք է նախ՝ ավարտի իր աշխատանքը: Իհա՛րկե: Անավարտ աշխատանքը կարող է նույնքան վատ լինել, որքան չսկսված աշխատանքը: Ինչո՞ւ է պետք հերկել ձեր դաշտերը, եթե չեք ուտելու դրա արդյունքից: Ինչո՞ւ է պետք արածեցնել ձեր հոտերը, եթե բուրդ, միս և կաթ չեք ստանալու:

Հենց որ հասկացա սա, կարդացի Հիսուսի հաջորդ պնդումը. «Այնպես էլ դուք, երբ որ բոլոր ձեզ հրամայված բաներն անեք, ասե՛ք, թե՝ մենք անպիտան ծառաներ ենք, որովհետև այն ենք արել, ինչ որ պարտական էինք անելու» (Ղուկ. 17.10):

Այս օրինակով Նա մատնացույց արեց մեզ: Երբ կարդում էի այս հատվածը, *«բոլոր... հրամայված բաները»* խոսքն ասես դուրս թռավ էջից: Հիսուսը զուգահեռներ անցկացրեց այդ ծառայի կողմից իր տիրոջը հնազանդվելու և մեր կողմից Աստծուն հնազանդվելու միջև: Դրանով իսկ Նա երեք կարևոր պնդում արեց հավատքն ավելացնելու մասին.

1. Գոյություն ունի անմիջական կապ հավատքի և իշխանությանը հնազանդվելու միջև:
2. Հավատքն ավելանում է, միայն երբ մենք ավարտում ենք այն, ինչ հրամայված է մեզ:
3. Անչափ կարևոր է, որ մենք ճշմարիտ խոնարհություն ունենանք:

Քննարկենք այս պնդումներից յուրաքանչյուրը՝ համաձայն Աստվածաշնչի.

Կապ՝ հավատքի և իշխանությանը հնազանդվելու միջև
Առաջին պնդումը՝ անմիջական կապը հավատքի և հնա-

զանդության միջև, կարելի է տեսնել այն ավետարանական պատմության մեջ, որտեղ մի զինվորական հանդիպեց Հիսուսին: Հիսուսը Կափառնայում եկավ, և մի հռոմեացի զինվորական, որը հարյուրապետի պաշտոն ուներ, գտավ Նրան և Նրա մոտ եկավ: Նա աղաչեց Հիսուսին բժշկել իր ծառային, որը կաթվածի էր ենթարկվել և տանջվում էր: Հիսուսն ասաց. «Ես կգամ, կբժշկեմ նրան» (Մատթ. 8.7):

Հարյուրապետը պատասխանեց. «Տե՛ր, ես արժանի չեմ, որ իմ հարկի տակ մտնես, այլ միայն մի խո՛սք ասա, և իմ ծառան կբժշկվի» (Մատթ. 8.8): Հիսուսը կամենում էր և պատրաստ էր այդ մարդու տուն գնալ, բայց այդ զինվորականը անարժան զգաց իրեն և աղաչեց, որ Հիսուսը չաներ դա: Նա խնդրեց Հիսուսին հրամայել Նրա կանգնած տեղից, որպեսզի իր ծառան բժշկվեր: Այդ հարյուրապետն այսպես պատճառաբանեց իր ասածը. «Որովհետև ես էլ իշխանության տակ լինող մարդ եմ և իմ ձեռքի տակ զինվորներ ունեմ և ասում եմ սրան՝ գնա՛, և գնում է, և ուրիշին՝ ե՛կ, և գալիս է: Եվ ծառային՝ այս բա՛նն արա, և անում է» (Մատթ. 8.9):

Եկեք խոսենք նրա պաշտոնի մասին: Հռոմեական լեգեոնում վեց հազար զինվոր կար: Այդ լեգեոնում կային վաթսուն հարյուրապետներ, որոնք ենթակա էին լեգեոնի հրամանատարին: Յուրաքանչյուր հարյուրապետի ենթակայության ներքո հարյուր զինվոր կար:

Այդ հռոմեացի սպան ասաց Հիսուսին, որ ինքը վայելում էր իր զինվորների հարգանքը և հպատակությունը, քանի որ ինքը հպատակված էր իր հրամանատարին: Այնպես որ, նա վայելում էր իր հրամանատարի աջակցությունը, որն իր հերթին վայելում էր Հռոմի աջակցությունը: Պարզ ասած, նա նկատի ուներ. «Ես իշխանության ներքո եմ և այդ պատճառով իշխանություն ունեմ: Այնպես որ, հերիք է, որ խոսք ասեմ, և իմ ենթականերն անմիջապես կարձագանքեն իմ հրամաններին»:

Նա ասաց. «Որովհետև ես *էլ*..»: Նա գիտակցում էր, որ Հիսուսն Աստծո Ծառան էր և Նրա թագավորության իշխանության ներքո էր գտնվում: Այդ պատճառով, այդ զինվորականը գիտեր, որ Հիսուսն իշխանություն ուներ հոգևոր աշխարհի երկնային

տիրույթում, ինչպես որ ինքն իշխանություն ուներ զինվորական ոլորտում: Նա հասկանում էր, որ անհրաժեշտ էր միայն Նրա հրամանը, և տկարությունը հարկադրված կլիներ հնազանդվել՝ ճիշտ այնպես, ինչպես իր իշխանության ներքո գտնվող զինվորներն էին արագ հնազանդվում, երբ ինքը հրաման էր տալիս:

Ինչպե՞ս արձագանքեց Հիսուսը: «Երբ որ Հիսուսը լսեց, զարմացավ և ասաց ետևից եկողներին. «Ճշմարի՛տ ասում եմ ձեզ՝ Իսրայելի մեջ էլ այսպիսի հավատք չգտա»» (Մատթ. 8.10):

Մեծագույն հավատքը, որին Հիսուսը հանդիպեց ավելի քան երեսուներեք տարվա կյանքի ընթացքում այս երկրի վրա, Հովհաննես Մկրտչի կամ Իր մայր Մարիամի հավատքը չէր: Այն չէր պատկանում Իսրայելի զավակներից որևէ մեկին, որոնք բժշկություններ և հրաշքներ ստացան: Այն չէր պատկանում տասներկու աշակերտներից որևէ մեկին: Այն պատկանում էր Հռոմի մի քաղաքացու՝ զինվորականի, որն Իսրայելի զավթիչների թվում էր: Ինչի՞ շնորհիվ նա մեծ հավատք ուներ: *Նա հասկանում էր իշխանությանը հպատակվելու սկզբունքը և վարվում էր դրան համաձայն:*

Ահա թե ինչ նկատի ուներ Հիսուսը մեծ հավատքի մասին Իր առակով: Մեր ունեցած իշխանությունը ուղիղ համեմատական է մեր կողմից իշխանությանը հպատակվելուն: *Որքան մեծ է մեր հպատակության մակարդակը, այնքան մեծ է մեր հավատքը:* Այժմ, կապակցենք սա այն բանի հետ, ինչ Հիսուսն ասաց Իր աշակերտներին, որոնք ցանկանում էին ավելի մեծ հավատք ունենալ. «Եթե մանանեխի հատի չափ հավատք ունենայիք, այս թզենուն կասեիք՝ պոկվի՛ր և ծովի մեջ տնկվի՛ր, և նա կհնազանդվեր ձեզ» (Ղուկ. 17.6): Հիսուսն ասաց՝ դուք միայն պետք է խոսք ասեք, և այդ ծառը կհնազանդվի ձեզ: Ո՞ւմ կհնազանդվի թզենին. ով «բոլոր իրեն հրամայվածներն արեց» (Ղուկ. 17.9):

Հնազանդություն՝ մինչև վերջ

Երկրորդ կարևոր պնդումը, որը Հիսուսն արեց, այն է, որ հավատքն ավելանում է, երբ մենք ավարտում ենք այն, ինչ մեզ հրամայված է: Նա ասաց. «Այնպես էլ դուք, երբ որ *բոլոր ձեզ հրամայված* բաներն անեք...»: Ծառան պարտավոր է ամբողջովին

կատարել իր տիրոջ կամքը, ոչ թե ընդամենը մի մասը կամ որոշ ընտրովի բաներ: Չափազանց հաճախ մենք առաջադրանքներ ենք ստանձնում, որոնք այդպես էլ չենք ավարտում, քանի որ կորցնում ենք հետաքրքրությունը դրանց հանդեպ, կամ դրանց հետ կապված ջանքերը և չարչարանքը չափազանց ծանր են դառնում: Ճշմարիտ և հավատարիմ ծառան ավարտում է իր առաջադրանքը՝ անկախ դժվարություններից կամ խոչընդոտներից: Նա աշխատում է դաշտերում, բերում է իր աշխատանքի պտուղն իր տիրոջը և պատրաստում է նրա կերակուրը: Նրա գործողությունները ճշմարիտ հնազանդություն են խորհրդանշում:

Աբրահամը կոչվում է մեր հավատքի հայրը (տես Հռոմ. 4.11,12): Աբրահամն անզավակ էր: Աստված հայտնվեց նրան, երբ նա յոթանասունհինգ տարեկան էր, և խոստացավ, որ նա որդի է ունենալու, որի միջոցով շատ ազգերի հայր է դառնալու: Տարիներ տևող սպասումից և հնազանդությունից հետո Աբրահամը ստացավ խոստացված որդուն, երբ հարյուր տարեկան էր:

Աստված թույլ տվեց Աբրահամին մտերմանալ Իսահակի հետ: Հենց որ նրանց սերը միմյանց հանդեպ ուժգնացավ, Աստված փորձեց նրան՝ պատվիրելով Մորիայի երկիր տանել Իսահակին և սպանել՝ զոհաբերելու միջոցով: Աստվածաշնչում գրված է. «Եվ Աբրահամն առավոտ կանուխ վեր կացավ» (Ծնն. 22.3): Ուշադրություն դարձրեք, որ նա անմիջապես հնազանդվեց: Ոմանք վարանում են օրերով, շաբաթներով, ամիսներով, երբեմն, նույնիսկ, տարիներով՝ մտածելով այն մասին, թե արդյո՞ք արժե հնազանդվել Աստծուն: Նրանք սուրբ երկյուղ չունեն, և այդ պատճառով էլ մեծ հավատք չունեն: Հենց որ հասկանում ենք, որ Աստված է խոսել, մենք պետք է անմիջապես արձագանքենք: Այնուամենայնիվ, եթե խոսքը կյանքում տեղի ունեցող խոշոր փոփոխության մասին է, մենք պետք է իմաստուն լինենք և հաստատություն ստանանք այն առաջնորդներից, որոնք կարգված են մեզ վրա:

Աբրահամից երեք օր պահանջվեց Մորիա հասնելու համար: Այդ եռօրյա ճանապարհը ժամանակ տվեց նրան՝ ամեն ինչ կշռադատելու համար: Եթե նա ցանկանար վերադառնալ, կաներ դա այդ ընթացքում, բայց չվերադարձավ: Աբրահամը շարունակեց իր ճանապարհը, մինչև որ հասավ սարի գագաթը և կապեց իր միակ որդուն այն զոհասեղանի վրա, որը միասին էին կառուցել:

Նա բարձրացրեց իր դանակը՝ Իսահակին սպանելու համար, երբ Տիրոջ հրեշտակը կանգնեցրեց նրան. «Ձեռքդ տղային մի՛ դիպցրու և նրան որևէ բան մի՛ արա, որովհետև հիմա իմացա, որ դու Աստծուց վախենում ես» (Ծնն. 22.12):

Աբրահամը հնազանդվեց մինչև վերջ: Նա կանգ չառավ կեսից, թեև պետք է հրաժարվեր ամենակարևոր բանից իր կյանքում՝ իր Իսահակից, իր ժառանգից, իր հույսից, Աստծուց իրեն տրված խոստումից: Իսահակի մահը կխորհրդանշեր իր կյանքից հրաժարվելը: Աբրահամն ապացուցեց, որ իր ձգտումը հնազանդությանը՝ ավելին էր, քան ցանկությունը խոստումների հանդեպ: Մենք նույնպես պետք է ունենանք այս վճռականությունը մեր սրտում: *Տեր, բարձրացրո՛ւ այսպիսի տղամարդկանց և կանանց սերունդ այսօր:*

Արդյունքում Աստված խոսեց.

> «Եվ ասաց. «Ինձնով երդում եմ անում,- ասում է Տերը,- որովհետև դու այս բանն արիր և քո մեկ հատիկ որդուն չխնայեցիր, քեզ օրհնելով կօրհնեմ, և քո սերունդը երկնքի աստղերի և ծովեզերքում լինող ավազի պես շատացնելով կշատացնեմ, և քո սերունդը իր թշնամիների դուռը կժառանգի: Եվ երկրի բոլոր ազգերը քո սերնդով կօրհնվեն, նրա համար, որ Իմ ձայնին ականջ դրիր»» (Ծնն. 22.16-18):

Ահա թե ինչ խոստացվեց Աբրահամին, ինչպես նաև նրա սերունդներին, մինչև վերջ հնազանդվելու շնորհիվ. «Քո սերունդը իր թշնամիների դուռը կժառանգի»: Ձեր կարծիքով, ինչո՞ւ Հիսուսն ասաց, որ դժոխքի դռները չեն հաղթի եկեղեցին: Հայր Աբրահամի հնազանդությունը դուռ բացեց, որ Հիսուսը տար այս խոստումը եկեղեցուն: Նրա հավատքը կամ հնազանդությունը դեռևս խոսում է:

Այժմ ուշադրությամբ կարդացե՛ք, թե ինչ է հայտնում Եբրայեցիների թղթի հեղինակն Աբրահամի հնազանդության մասին.

> «Եվ փափագում ենք, որ ձեզնից ամեն մեկը նույն ջանքը ցույց տա, որ հույսը հաստատ մնա *մինչև վերջ:* Որ հիվանդամիտ չլինեք, այլ *նմանող լինեք հավատքով և եր-*

կայնամտությամբ խոստումները ժառանգողներին: Որովհետև երբ որ Աստված խոստումը տվեց Աբրահամին, այն պատճառով որ ուրիշ ավելի մեծը չուներ, որ նրանով երդում աներ, Իր անձով երդում արեց և ասաց. «Այո՛, օրհնելով կօրհնեմ քեզ, և շատացնելով կշատացնեմ քեզ»: Եվ այսպես երկայնամիտ լինելով՝ հասավ խոստմանը» (Եբր. 6.11-15):

Աբրահամը ջանասեր էր: Նա հնազանդվեց մինչև վերջ. նա համբերատար և երկայնամիտ էր: Համեմատե՛ք նրա հնազանդության քայլերը Սավուղ թագավորի վարքի հետ, որը քննարկեցինք նախորդ գլուխներից մեկում: Սավուղը ջանասիրաբար պատերազմի գնաց և կատարեց իրեն տրված հրամանի 99 տոկոսը: Նա խնայեց միայն լավագույններին, որոնց թիվն աննշան էր՝ մտածելով, որ դա Տիրոջ համար էր: Իմաստն այն է, որ նա չավարտեց այն, ինչ Տերը հրամայել էր իրեն: Արտաքուստ նա մոտ էր ավարտին, սակայն նրա անհնազանդությունը թանկ նստեց նրա վրա. նա հասավ «Տիրոջ սեղանին» ուտելիք դնելուն, սակայն նրա սրտի շարժառիթները հայտնվեցին այն բանով, որ նա մինչև վերջ չկատարեց իր առաջադրանքը: Նա վերածեց այդ հրամանը իր համար շահավետ մի բանի, փոխարենը պատվեր Նրան, Ում ծառայում էր:

Որքա՜ն մարդիկ Սավուղի պես խանդավառությամբ են սկսում, իսկ հետո, երբ անհարմարավետ և դժվարին իրավիճակների են բախվում կամ արդյունքներն իրենց սպասվածի պես արագ չեն ստացվում, նրանք դադարում են հնազանդվել: Մյուսները համարում են, որ օգուտ կստանան, եթե միայն մի փոքր շեղվեն իշխանության կողմից տրված ցուցումներից: Նրանք շարունակ արդարանում են կրոնական մտադրություններով և դատողությամբ, ինչպես Սավուղը, երբ խնայեց լավագույն ոչխարներին, որպեսզի զոհաբերեր Աստծուն այն ոչխարներին, որոնց, համաձայն Տիրոջ հրամանի, պետք էր ոչնչացնել: Եթե հնազանդությունը լիարժեք չէ, հավատքը չի ավելանա, այլ՝ կպակասի:

Աբրահամը ստացավ խոստումները ճշմարիտ հավատքի և համբերության միջոցով, ինչն այլ կերպ կարելի է անվանել՝ «հնազանդություն մինչև վերջ»: Նրա հավատքը և հնազանդությունն

անբաժանելի էին, ինչպես որ Հակոբոսը պարզորեն նշեց (այս հատվածում ես փոխարինելու եմ *«գործեր»* բառը *«հնազանդ գործեր»* բառակապակցությամբ).

«Բայց կամենո՞ւմ ես գիտենալ, ո՛վ դատարկ մարդ, որ հավատքն առանց *հնազանդ գործերի* մեռած է: Չէ՞ որ մեր հայր Աբրահամը *հնազանդ գործերով* արդարացավ՝ իր որդի Իսահակին պատարագ անելով սեղանի վրա: Տեսնո՞ւմ ես, որ հավատքը նրա *հնազանդ գործերի* հետ միասին գործեց, և այն *հնազանդ գործերով* հավատքը կատարյալ եղավ: Եվ կատարվեց Գրքի խոսքը, որ ասում է. «Եվ Աբրահամը հավատաց Աստծուն, և արդարություն համարվեց նրա համար, և Աստծո բարեկամ կոչվեց»: Արդ, տեսնո՞ւմ եք, որ մարդը *հնազանդ գործերով* է արդարանում, և ոչ միայն հավատքով... Որովհետև, ինչպես որ մարմինն առանց հոգու մեռած է, այնպես և հավատքն առանց *հնազանդ գործերի* մեռած է» (2.20-24,26):

Վերջին խոսքում հավատքը և հնազանդ գործերը համեմատվում են մարդու մարմնի և հոգու հետ: Հակոբոսի բերած օրինակով դուք տեսնում եք, որ հավատքը համեմատվում է ֆիզիկական մարմնի հետ, իսկ հնազանդ գործերը նմանեցվում են մարդու հոգուն: Այս երկուսը պետք է միասին լինեն՝ այս աշխարհում արտահայտվելու համար: Եթե հոգին առանձնանա մարմնից, մարմինը կմահանա: Հենց որ հոգին առանձնանա, մարմինը անկարելի կլինի բարձրացնել, մինչև որ հոգին չվերադառնա, ինչպես Ղազարոսի դեպքում: Այսպիսով, Հակոբոսը ցույց տվեց իր բերած օրինակով, որ հավատքը լիովին կախված է հնազանդ գործերից: Ահա թե ինչու նա ասաց. «Ցո՛ւյց տուր ինձ քո հավատքը առանց քո *հնազանդ գործերի*, իսկ ես ցույց կտամ քեզ իմ հավատքը իմ *հնազանդ գործերով»* (Հակոբ. 2.18, NKJV):

Հավատքը ճշմարիտ չէ՝ առանց հնազանդության. նույնիսկ չկասկածեք սրանում: Աստվածաշունչը պարզորեն հայտնում է, որ *«հնազանդ գործերով* հավատքը կատարյալ եղավ»:

Առաքյալներն աղաղակեցին. «Տե՛ր, մեր հավատքն ավելացրո՛ւ»: Հիսուսը մինչև վերջ խոսեց հնազանդությամբ գործելու մասին: Թանկագի՛ն հավատացյալներ, այժմ հասկանո՞ւմ եք, թե ինչու գրքի սկզբում ես խոսեցի այս ուղերձի հրատապության և կարևորության մասին: Բոլորս պետք է ուշադրություն դարձնենք

այս խոսքերին մեր օրերում, երբ անօրինությունը շատանում է:

Գուցե ասեք. «Ես կարծում էի, թե հավատքը գալիս է լսելուց և հավատալուց»: Այո՛, ճիշտ է, բայց հավատքի վկայությունը այն գործերն են, որոնք ուղեկցում են մեր դավանությունը: Ահա թե ինչու է գրված, որ եթե լսենք խոսքը, բայց չինազանդվենք, մենք խաբված ենք: Այդ դեպքում մեր հավատքն իրական չէ, այլ կեղծ է:

Մեծ խիզախություն՝ հավատքի մեջ

Կրկին տեսնում ենք այս ճշմարտությունը, երբ Պողոս առաքյալը նկարագրում է եկեղեցում ծառայող մարդկանց. «Մինչև որ նրանք սարկավագներ նշանակվեն, նրանց պետք է այլ պարտականություններ տրվի եկեղեցում՝ որպես նրանց բնավորության և կարողության ստուգում: Եթե նրանք հաջողվեն, կարող են ծառայել որպես սարկավագներ» (Ա Տիմոթ. 3.10, NLT): Սարկավագն առաջնորդ չէ. նա այլ անձնավորության հանձնարարությունները կատարող է: Վ. Է. Վայնը գրում է, որ հունարենում *«սարկավագ»* բառը գլխավորապես *«ծառա»* է նշանակում: Նա շարունակում է՝ ասելով, որ այն ցույց է տալիս ինչ-որ մեկի իշխանության ներքո գտնվող մարդու: Պողոսն ասում է մեզ, որ երբ սարկավագները հավատարմորեն ծառայում են, նրանց հնազանդությունը հետևյալ հնարավորությունն է ընձեռնում նրանց. «Որովհետև պաշտոնը լավ կատարողներն իրենց անձերի համար բարի աստիճան են շահում և շատ համարձակություն այն հավատքում, որ Քրիստոս Հիսուսում է» (Ա Տիմոթ. 3.13):

Այն ծառաները, որոնց Հիսուսը նկարագրում է այս գլխի սկզբում գտնվող առակում, երկու խոստում ունեն. (1) բարի համբավ, որն ընդգրկում է նաև հոգևոր առաջխաղացումներ (տես Սաղմ. 75.7), նաև (2) մեծ հավատք՝ նրանց համար, ովքեր լիարժեք կերպով հնազանդվում են: Հավատքը և հնազանդ գործերն անբաժանելի և փոխկապակցված են Աստվածաշնչում: Ամբողջ Աստվածաշնչում կան բազմաթիվ նման օրինակներ.

- Հաբելի հավատքը երևաց նրա հնազանդությամբ, և նրա վկայությունը դեռ խոսում է հազարավոր տարիներ անց (տես Եբր. 11.4):
- Ենովքի հավատքը, որն արտահայտվեց հնազանդությամբ,

օգնեց նրան Աստծո հետ վարվել, իսկ հետո հափշտակվել՝ խուսափելով մահից:

- Նոյի հավատքը վկայվեց նրա հնազանդությամբ. նրա ընտանիքը փրկություն ստացավ, և նա դատապարտեց մեղքով լիովին համակված աշխարհը:
- Աբրահամի հավատքը, որն ապացուցվեց նրա հնազանդությամբ, բազում ազգերի հայր դարձրեց նրան:
- Հովսեփի հավատքը, որը դրսևորվեց նրա հնազանդությամբ, փրկություն բերեց նրա ընտանիքին:
- Հեսուի և Քաղեբի հավատքը՝ նրանց հնազանդության միջոցով, ժառանգություն տվեց նրանց Խոստման երկրում: Հեսուն հավատարմորեն ծառայեց Մովսեսին և դարձավ նրա իրավահաջորդը: Նա առաջնորդեց երիտասարդ սերնդին դեպի կաթ ու մեղր բխող Խոստման երկիր:
- Ռախաբը, որը մարմնավաճառ էր, «գործերով արդարացավ, երբ որ լրտեսներին իր մոտ առավ և ուրիշ ճանապարհով արձակեց» (Հակոբ. 2.25): Նրա հնազանդությունը փրկեց իր ամբողջ ընտանիքը: Դա վկայություն էր այն մասին, որ նա ճշմարիտ հավատք ուներ:
- Աննայի հնազանդությունը և հպատակությունը այն քահանային, որը վիրավորեց իրեն, բացեցին այն արգանդը, որն արթնություն բերեց իր ժողովրդին:
- Դավիթը հնազանդ եղավ և չհարձակվեց իր առաջնորդի վրա, ինչի շնորհիվ նա մեծ թագավոր դարձավ, որը վարվում էր Աստծո սրտի համեմատ, ոչ թե Սավուղի կարգերով:
- Դանիելի, Սեդրաքի, Միսաքի և Աբեդնագովի հնազանդությունը մեծ բարեհաճություն շնորհեց իրենց Աստծո և թագավորի առջև:

«Եվ էլ ի՞նչ ասեմ, որ ժամանակս բավական չէ, որ պատմեմ Գեդեոնի, Բարակի, Սամսոնի, Հեփթայեի... և Սամուելի և ուրիշ մարգարեների մասին, որոնք հավատքով թագավորությունների հաղթեցին, արդարություն գործեցին, խոստումներ ստացան, առյուծների բերաններ խցկեցին, կրակի զորություն անցկացրին, սրի բերանից պրծան, տկարութ-

> յունից զորացան, պատերազմի մեջ զորավոր եղան, օտարների բանակները փախցրին: Կանայք իրենց մեռելներն ընդունեցին հարությունից: Ուրիշներն էլ խիստ չարչարվեցին՝ ազատությունը չընդունելով, որ լավագույն հարությանը հասնեն: Մյուսներն էլ նախատինքների և ծեծերի, կապանքների և բանտի փորձը առան, քարկոծվեցին, սղոցվեցին, փորձանքի մեջ ընկան, սրով սպանված մեռան, ոչխարի մորթերով և այծի կաշիներով ման եկան՝ կարոտություն քաշելով, նեղված, չարչարված, որ աշխարհը նրանց արժանի չէր: Անապատներում մոլորվեցին (կամ՝ դեգերեցին), և սարերում, և այրերում, և երկրի խոռոչներում: Եվ սրանք ամենը հավատքով վկայություն առան» (Եբր. 11.32-39):

Եբրայեցիների թղթի հեղինակը միախառնեց հավատքը և հնազանդ գործերը: Դրանք անբաժանելի են: Եթե հավատքը տրված է միայն հրաշքներ ստանալու համար, ինչո՞ւ նա պետք է ավելացներ նաև այն մարդկանց, որոնք դեգերեցին անապատներում և սարերում, նեղություններ կրեցին և չարչարվեցին: Այդ տղամարդիկ և կանայք բարեհաջող ավարտեցին իրենց ընթացքը. նրանք հնազանդվեցին մինչև վերջ: Սա է ճշմարիտ հավատքը:

Եթե ցանկանում եք մեծ հավատք ունենալ, մինչև վերջ հնազանդվե՛ք Աստծո՝ թե՛ անմիջական, թե՛ լիազորած իշխանությանը: Ձեր հավատքն ուղիղ համեմատական է ձեր հնազանդությանը:

Խոնարհության պաշտպանությունը

Վերջին պնդումը, որը Հիսուսն արեց՝ խրատելով Իր աշակերտներին, ճշմարիտ խոնարհություն ունենալն էր: Նա ասաց. «Այնպես էլ դուք, երբ որ բոլոր ձեզ հրամայված բաներն անեք, ասեք, թե՝ *մենք անպիտան ծառաներ ենք, որովհետև այն ենք արել, ինչ որ պարտական էինք անելու*»: Երբ այսպիսի դիրքորոշում ունենք, մենք այնպիսի դիրքում ենք, որ կարող ենք Տիրոջից վարձատրություն ստանալ: Իրենց բարձրացնող մարդիկ կխոնարհվեն: Այնուամենայնիվ, Տերը բարձրացնում է նրանց, ովքեր աննշան են իրենց աչքերում: Հակոբոսը հորդորում է. «Խոնարհվե՛ք Տիրոջ առջև, և Նա կբարձրացնի ձեզ» (4.10):

Սրտով խոնարհ մնալը նշանակում է այնպիսի դիրքում լինել,

որ կարողանաք վարձատրություն ստանալ ձեր հնազանդության համար: Ձեր հնազանդությամբ հպարտանալը կարող է անկման տանել, նույնիսկ եթե դուք հնազանդ եք եղել: Այս վերաբերմունքը կարող է կործանել այն ամենը, ինչ դուք հավատարմորեն պահել եք: Դուք կարող եք հետևել այս գրքում գտնվող Աստծո Խոսքի խորհրդին, սակայն հպարտության պատճառով կորցնել այն, ինչ ձեռք եք բերել ձեր հնազանդությամբ:

Լյուցիֆերն օծված էր: Նա կատարելության կնիքն էր՝ լցված իմաստությամբ և կատարյալ գեղեցկությամբ: Նա կարգված էր Աստծո կողմից և բնակվում էր Աստծո սուրբ սարի վրա: Նա կատարյալ էր իր ճանապարհներում, մինչև որ նրանում հպարտություն գտնվեց: Դրանից հետո նա վայր գցվեց երկնքից՝ այնքան արագ, որքան կայծակը երկնքից երկիր է հասնում: Պողոսը խրատում է, որ իշխանական դիրքի կարգվող մարդը ոչ մի դեպքում չլինի «նորահավատ, որ չգոռոզանա և սատանայի դատաստանն ընկնի» (Ա Տիմոթ. 3.6):

Պողոսը շատ բաներ իրականացրեց՝ հնազանդվելով Աստծո կանչին: Բայց տարիների ընթացքում խոնարհությունը նրա կյանքում շարունակ ավելանում էր: Մ.թ. 56 թվականին նա նամակ գրեց մի եկեղեցու, որը հիմնել էր մի նոր տարածքում՝ Կորնթոսում, իր կատարած չորս խոշոր միսիոներական ճանապարհորդություններից երրորդի ժամանակ: Մինչև նրա մահը դեռ տասը կամ տասնմեկ տարի էր մնացել, և նա մեծ փորձ ուներ Հիսուսին ծառայելու մեջ: Այնուամենայնիվ, լսե՛ք նրա խոսքերը. «Որովհետև ես առաքյալների հետինն եմ, որ արժանի չեմ առաքյալ կոչվելու» (Ա Կորնթ. 15.9):

Դուք լսո՞ւմ եք խոնարհությունը նրա խոսքերում: Նա նույնիսկ չէր համարում, որ արժանի էր առաքյալի կոչմանը: Ուզում եմ նշել հետևյալը. սա կեղծ խոնարհություն չէ: Կեղծ խոնարհությունը գիտի, թե ինչպես քաղաքականորեն կոռեկտ բառեր օգտագործել՝ խոնարհ *թվալու* համար, սակայն զուրկ է սրտի և մտքի հեզությունից: Դա խաբուսիկ և ոչ ճիշտ է: Բայց, գրելով Աստծո Խոսքը Սուրբ Հոգու ոգեշնչման ներքո, մարդը չի կարող սուտ խոսել: Այնպես որ, ասելով, որ ինքն ամենացածրն էր բոլոր առաքյալներից, Պողոսը քաղաքականորեն կոռեկտ բառեր չէր օգտագործում: Նա ճշմարիտ խոնարհություն էր արտահայտում:

Այժմ կարդացեք Պողոսի հաջորդ պնդումը. «Նրանց ամենից ավելի աշխատեցի, սակայն ոչ թե ես, այլ Աստծո շնորհքը, որ ինձ հետ է» (Ա Կորնթ. 15.10): «Ես ավելի շատ աշխատեցի, քան մյուս առաքյալները». սպասեք, մի՞թե Պողոսը պարծենում էր: Այս մեկնաբանությունն ամբարտավան է թվում, սակայն այդպիսին չէ: Այն նախորդում է Պողոսի հերթական պնդմանը Աստծուց կախված լինելու մասին: Նա ավելացրեց իր ինքնագնահատականին՝ փոքրագույնը առաքյալներից, այն խոստովանությունը, որ այն ամենը, ինչ ինքն արել էր, կատարվել էր միայն Աստծո շնորհքով: Նա լիովին գիտակցում էր, որ իր բոլոր հոգևոր ձեռքբերումները բխում էին այն կարողությունից, որն Աստված տվել էր իրեն:

Պողոսի նկարագրությունն իր մասին՝ որպես «փոքրագույնը առաքյալներից», դժվար է ընկալել: Նրա օրերում և եկեղեցու պատմության ամբողջ ընթացքում նա համարվել է մեծագույն առաքյալներից մեկը: Այժմ կարդանք, թե ինչ ասաց Պողոսը մ.թ. 62 թվականին՝ իր մահվանից չորս-հինգ տարի առաջ: Կորնթացիների Առաջին նամակին հաջորդող տարիներին նա իրագործեց ավելին, քան իր կյանքի որևէ փուլում: Նա այսպես նկարագրեց իրեն. «Ինձ՝ ամեն սուրբերի հետինիս, տրվեց այս շնորհքը, որ հեթանոսների մեջ ավետարանեմ Քրիստոսի անքննելի հարստությունը» (Եփես. 3.8):

Տարիներ առաջ նա անվանեց իրեն փոքրագույնը առաքյալներից, իսկ այս հատվածում ասաց, որ ինքն ավելի ցածր է, քան փոքրագույնը բոլոր սուրբերից: Ի՞նչ: Եթե ինչ-որ մեկը կարող էր պարծենալ իր քրիստոնեական կյանքով և առաջնորդական ձեռքբերումներով, անկասկած, Պողոսն էր: Այնուամենայնիվ, որքան ավելի էր նա ծառայում Տիրոջը, այնքան ավելի փոքր էր համարում իրեն: Նրա խոնարհությունը աստիճանական աճ ուներ: Գուցե սա՞ է պատճառը, որ Աստծո շնորհքը նրա կյանքում համաչափ ավելանում էր տարիների ընթացքում: Գուցե սա՞ է պատճառը, որ Աստված այնքան մտերմորեն էր հայտնում Պողոսին Իր ճանապարհները, որ դա նույնիսկ շփոթեցնում էր Պետրոս առաքյալին (տես Բ Պետր. 3.15,16): Սաղմոսերգուն հայտարարեց. «Նա... սովորեցնում է հեզահոգիներին Իր ճանապարհը» (Սաղմ. 25.9): Այս բացատրության լույսի ներքո, գուցե դա՞ էր պատճառը, որ Մովսեսը շատ լավ գիտեր Աստծո ճանապարհները, քանի որ Աստված

նկարագրում է նրան որպես «շատ հեզ... երկրի վրա եղած բոլոր մարդկանցից ավելի» (Թվոց 12.3): Գուցե երկուսն էլ գիտեին Աստծո հանդեպ մեծ հավատք ունենալու գաղտնիքը, որը քչերն են բացահայտել:

Կյանքի վերջում Պողոսը երկու նամակ ուղարկեց Տիմոթեոսին՝ մոտավորապես մ.թ. 64-66 թվականներին, և դրանցում այսպես նկարագրեց իրեն. «Ճշմարիտ է այս խոսքը և ամեն ընդունելության արժանի, որ Քրիստոս Հիսուսն աշխարհ եկավ մեղավորներին փրկելու, որոնցից առաջինը ես եմ» (Ա Տիմոթ. 1.15): Նա անվանեց իրեն «առաջին մեղավորը»: Ուշադրություն դարձրեք, որ նա չասաց. «Ես առաջին մեղավորն էի»:

Ո՛չ, նույնիսկ տարիներ տևող մեծ ձեռքբերումներից հետո նա չպնդեց. «Ես եմ կատարել այս ամենը, և իմ մեծ ծառայությունը պետք է գնահատանքի արժանանա»: Ո՛չ էլ նա պարծեցավ. «Ես մեծ աշխատանք եմ կատարել և արժանի եմ ճշմարիտ առաքյալին վայել հարգանքի»: Նա նույնիսկ չգրեց. «Ես հետինն եմ առաքյալներից», ինչպես տարիներ առաջ, և ո՛չ էլ՝ «Ես հետինն եմ բոլոր սուրբերից»: Նա հայտարարեց. «Ես առաջինն եմ բոլոր մեղավորներից»: Թեև նա հասկանում էր, որ Քրիստոսում ինքն Աստծո արդարությունն էր (տե՛ս Բ Կորնթ. 5.21), նա երբեք չէր անտեսում Աստծո շնորհքը և ողորմությունը: Իրականում, տարիների ընթացքում նա առավել կախված էր դառնում Աստծո շնորհքից: Նրա վերաբերմունքը շարունակ պատկերում էր հետևյալը. «Ես անպիտան ծառա եմ, որովհետև այն եմ արել, ինչ որ պարտական էի անելու»:

Սա օգնում է մեզ հասկանալ մեկ այլ պնդում, որը Պողոսն արեց կյանքի ավարտին. «Եղբայրնե՛ր, ես իմ անձը չեմ համարում, որ հասած լինեմ, բայց մեկ բան կա. ետևի բաները մոռանալով՝ դեպի առջևի լինողներն եմ նկրտում: Հետևում եմ դեպի նպատակը՝ Աստծո վերին կոչման մրցանակին Քրիստոս Հիսուսում» (Փիլիպ. 3.13,14): Դուք զգո՞ւմ եք այս խոսքերում եղած խոնարհությունը. «Ես դեռ չեմ հասել, և ես մտովի մոռանում եմ իմ բոլոր ձեռքբերումները»: Նա հայտարարեց, որ իր ձեռքբերումները ոչինչ էին՝ Քրիստոս Հիսուսին լիարժեք կերպով ճանաչելու իր ձգտման համեմատ: Հիշեք՝ Աստված հայտնում է Իրեն խոնարհներին: Պողոսն ասաց. «Ես նկրտում եմ դեպի նպատակը», ինչը նշանակում

է, որ նա հակառակություն և ընդդիմություն էր զգում: Մեր վերին կոչման մեծագույն հակառակորդներից մեկը *հպարտությունն* է:

Ուսումնասիրելով Հիսուսի կյանքը՝ պարզում ենք, որ Նա փառք չէր ընդունում, այլ ուղղում էր փառքն Իր Հորը: Նա նույնիսկ պատվիրում էր այն մարդկանց, որոնց բժշկում էր, չհանրայնացնել կատարվածը, այլ՝ փառքը տալ Աստծուն:

Մի հարուստ երիտասարդ իշխան «Բարի ուսուցիչ» անվանեց Հիսուսին: Այնուամենայնիվ, Հիսուսն արագ պատասխանեց՝ ասելով, որ ոչ ոք բարի չէ՝ Աստծուց բացի: Մի՞թե Նա Աստծո Որդին չէր: Մի՞թե Նա բարի չէր: Իհա՛րկե: Այնուամենայնիվ, Նա մարդկանցից փառք չէր ընդունում: Նա կամենում էր փառք ստանալ միայն Իր Հորից: Սակայն կար մի առաքինություն, որով Նա պարծենում էր՝ խոնարհությունը: Նա ասաց. «Ձեզ վրա առեք Իմ լուծը և Ինձնից սովորե՛ք, որովհետև Ես հեզ եմ և *սրտով խոնարհ*, և ձեր անձերի համար հանգստություն կգտնեք» (Մատթ. 11.29):

Աստծո սերն է ծնունդ տալիս ճշմարիտ խոնարհությանը: Գրված է, որ սերը «ինքնագով և սնապարծ չէ, իրեն ամբարտավան [կամ հպարտ] ցույց չի տալիս» (Ա Կորնթ. 13.4, AMP): Հպարտությունը իրենն է փնտրում. սերն իրենը չի փնտրում: Հպարտությունը անարգում է հնազանդությունը, երբ այն չի նպաստում իր ծրագրերի իրականացմանը. սերը ձգտում է Նրա փառքին, Ում ծառայում է: Մենք հնազանդվում ենք, քանի որ սիրում ենք: Մենք ուզում ենք հաջողվել, քանի որ ուզում ենք, որ Նա պատիվ ստանա: Մենք փափագում ենք, որ Նա փառավորվի: Գուցե այս պատճառով Պողոսն ասաց. «Եթե ամեն հավատքն ունենամ, մինչև սարերն էլ տեղափոխելու, բայց սեր չունեմ, ոչինչ եմ» (Ա Կորնթ. 13.2):

Կատարե՛ք ձեր կոչումը

Մենք կանչված ենք, որ պտուղ բերենք և հաղթող լինենք մեր Աստծո համար: Միայն երբ Նրա ճանապարհներով ենք վարվում, մենք կարող ենք ճշմարտապես պատիվ բերել Նրա սքանչելի անվանը: Աղոթում եմ, որ դուք դիտարկեք այս ուղերձը և՛ ձեր բարօրության, և՛ Նրա փառքի համար: Նրա Խոսքը պահելը կարող է անմիտ թվալ մեր դատողությանը, բայց մի՞թե Նա չասաց. «Աստված հաճեց, որ քարոզության հիմարությամբ ապրեցնի հավատացյալ-

ներին» (Ա Կորնթ. 1.21): Մյուս կողմից, գրված է. «Որովհետև Աստծո հիմարությունն ավելի իմաստուն է, քան մարդկանց իմաստությունը» (Ա Կորնթ. 1.25, NIV): Հիշեք, որ մենք «հերքում ենք փաստարկներ և տեսություններ և *դատողություններ* և ամեն հպարտ և ամբարտավան բան, որը բարձրացնում է իրեն Աստծո մասին [ճշմարիտ] գիտելիքի դեմ, և մենք գերում ենք ամեն միտք և մտադրություն՝ *հնազանդեցնելով* Քրիստոսին» (Բ Կորնթ. 10.5, AMP):

Այն դատողությունը, որը հակասում է հնազանդությանը, հպարտությամբ է լցված: Այն ընդդիմանում է Աստծո խորհրդին: Այն չի ընդունում Աստծո Խոսքը՝ որպես վերջնական հեղինակություն: Ինչպես տեսանք այս գրքի ամբողջ ընթացքում, այն վտանգավոր է: Աստված կունենա այնպիսի ժողովուրդ այս օրերում, որը կվարվի մեծ հավատքով, իշխանությամբ և խիզախությամբ: Նրանք այնպիսի մարդիկ կլինեն, որոնց մասին Պողոսը գրում է. «Եվ պատրաստ ենք վրեժ առնելու ամեն անհնազանդության համար, երբ որ ձեր հնազանդությունը կատարյալ լինի» (Բ Կորնթ. 10.6, NIV):

Ժամանակը կարճ է. այնպես որ, մենք պետք է արդյունավետ լինենք: Հնազանդությունն օգնում է մեզ արդյունավետ մնալ: Երբ նոր էի վերստին ծնվել, ես շատ գործուն էի, բայց հնազանդ չէի: Ես արդյունավետ չէի, իսկ երբեմն նույնիսկ վնաս էի հասցնում: Որքան ավելի էի հոգևորապես աճում, այնքան ավելի էի հասկանում, որ թեև իմ ջանքերը հնազանդության մեջ, թվում էր, արագ արդյունքներ չէին տալիս, ի վերջո պարզվում էր, որ դրանք արդյունավետ էին:

Աստծո մեջ ձեր կոչումը ձեր առջևում է: Ընտրելով հնազանդությունը՝ դուք ընտրում եք ձեր կոչումը կատարելը: Ոչինչ և ոչ ոք չի կարող կանգնեցնել ձեզ: Տարիներ շարունակ կյանքն անհույս էր թվում Դավթի համար, նաև Հովսեփի, Մովսեսի, Հեսուի, Աննայի, Նոյի, Եսթերի և մյուս նահապետների համար: Բայց հիշեք՝ գոյություն ունի փառքի սրահ նրանց համար, ովքեր կատարեցին իրենց կոչումը, և այստեղ թվարկվածներին դա հաջողվեց: Այս վերջին օրերում Աստված փնտրում է տղամարդկանց և կանանց՝ նահապետների այս ցուցակում ավելացնելու համար, որոնք պատիվ կստանան Քրիստոսի ատյանի առջև: Ես աղոթում եմ, որ մենք լինենք այն մարդկանց թվում, ովքեր կկատարեն մեր հրաշալի Տիրոջը փառք բերելու հանձնարարականը:

ԳԼՈՒԽ 18

ԱՄՓՈՓՈՒՄ

Այն պտուղը, որը մենք ուտում ենք՝ բնակվելով Նրա ծածկոցի տակ, տանում է մեզ Նրա խնջույքի մեջ: Այդտեղ է, որ մենք բաժնեկցում ենք Նրա առատությանը:

Մենք սկսեցինք այս գիրքը առաջին ամուսնացած զույգի ողբերգական որոշումից: Այդ ամուսինը և կինը դուրս եկան Ամենակարողի ծածկոցի տակից և գտան ճշմարտության և սխալի աղբյուր՝ Աստծո հովանուց դուրս: Նրանք արհամարհեցին Նրա իշխանությունը, բայց մենք պետք է սովորենք նրանց ձախողումից, ինչպես և շատերի ձախողումներից՝ նրանցից հետո, և մենք կարող ենք անել դա:

Եկեք ավարտենք հակառակ կողմով՝ վարձատրությամբ այն մարդկանց համար, որոնք Ամենակարողի հովանու տակ են մնում:

> «Ինչպես խնձորենին է անտառի ծառերի մեջ, այնպես է իմ սիրեկանը տղաների մեջ: Նրա հովանին հավանեցի և նստեցի, և նրա պտուղը քաղցր է իմ քիմքին: Ինձ տարավ խնջույքի տունը, և նրա դրոշն ինձ վրա սեր է» (Երգ երգոց 2.3,4):

Նրա հովանին կյանքի ծառն է: Դրա պտղի քաղցրությունը մնայուն է: Այն պտուղը, որն Ադամն ու Եվան կերան, բարի էր

թվում՝ դատողության աչքերով, բայց, ի վերջո, այն մահ բերեց: Այն պտուղը, որը մենք ուտում ենք՝ բնակվելով Նրա ծածկոցի ներքո, տանում է մեզ Նրա խնջույքի մեջ: Այդտեղ է, որ մենք բաժնեկցում ենք Նրա առատությանը:

Շատ հավանական է, որ այս գիրքն ընթերցելիս ցավոտ հանդիմանություն զգացիք: Ցավը միշտ չէ, որ վատ է. այս դեպքում, այն երկու բան է մատնանշում: Առաջինը՝ ցույց է տալիս, որ ձեր խիղճը խստացած չէ և զգայուն է Սուրբ Հոգու հանդեպ: Երկրորդը՝ գոյություն ունի ելք, որն ապաշխարություն է կոչվում: Կա հիմնարար տարբերություն հանդիմանության և դատապարտության միջև: Երկուսն էլ ցավոտ են, բայց մեկից ելք կա, իսկ մյուսից՝ ոչ: Ապաշխարությունը պարզապես նշանակում է սրտի փոփոխություն, որի արդյունքը մտքի և գործողությունների փոփոխությունն է: Ըստ էության, դուք ասում եք. «Տեր, ես իմ ձևով եմ ապրել և տեսել եմ իմ ունայնությունը. այժմ որոշում եմ կայացնում հպատակվել Քո ճանապարհներին»: Ապաշխարությունը որոշում է՝ թողնել դատողության ճանապարհը, որը ծնվել է բարու և չարի գիտության ծառից, և վերադառնալ հնազանդությանը:

Աղոթքի և մտորման միջոցով բացեք ձեր սիրտը և թույլ տվեք Սուրբ հոգուն մատնացույց անել ձեր կյանքի այն ոլորտները, որոնցում անհնազանդություն կա: Եթե անհրաժեշտ է, վերադարձեք այս գրքի այն գլուխներին, որոնք հատկապես ձեզ են վերաբերում: Թույլ տվեք, որ Աստծո Խոսքը ստուգի ձեր կյանքը: Նրա Խոսքի լույսը բացահայտում է այն ոլորտները, որոնցում անհնազանդություն կա: Այդ ոլորտները կարող են վերաբերել Աստծո թե՛ անմիջական, թե՛ լիազորած իշխանությանը: Ցուցակ կազմեք՝ գրի առնելով դրանք առանձին թղթի վրա: Հենց որ անեք, եկեք միասին աղոթենք՝ ներում և վերականգնում ստանալու համար:

«Երկնային Հայր, Հիսուսի անունով, ներիր ինձ՝ չհնազանդվելու և չենթարկվելու համար: Ես ապրել եմ իմ դատողությամբ և արդյունքում ապստամբել եմ հետևյալ բնագավառներում.

(ըստ ձեր ցուցակի, խոստովանեք յուրաքանչյուր բնագավառը, որում մեղանչել եք Նրա իշխանության դեմ. ընդգրկեք Աստծո և՛ անմիջական, և՛ լիազորած իշխանության ոլորտները):

Ես ապաշխարում եմ այս բնագավառներից յուրաքանչյուրի համար, որոնք վերաբերում են իմ մտքին և վարքին: Ես խնդրում եմ, որ ներես ինձ և մաքրես իմ Տեր Հիսուսի արյամբ:

Ես որոշում եմ կայացնում հպատակվել Քո իշխանությանը՝ դրանով իսկ հպատակվելով այն ընտանեկան, պետական, եկեղեցական և հասարակական իշխանություններին, որոնք կարգել ես իմ կյանքում: Տո՛ւր ինձ Քո շնորհքը, որպեսզի ոչ միայն ցանկանամ Քո բարի կամքը, այլև կատարեմ այն: Ես խնդրում եմ այնպիսի սիրտ, որը բերկրանքով է վերաբերվում հպատակությանը և հնազանդությանը: Ես ընծայում եմ իմ կյանքը իմ Տեր Հիսուս Քրիստոսին և թողնում եմ ամեն տեսակի ապստամբություն: Ինչ կերպով էլ, որ Դու կանչել ես ինձ փառավորելու Քո անունը, ես հոժարաբար հպատակվում եմ: Ամե՛ն»:

Հնարավորության դեպքում անձամբ գնացեք այն ղեկավարող դիրք ունեցող մարդկանց մոտ, որոնց դուք թվարկել եք, կամ նամակ գրեք նրանց և ներողություն խնդրեք: Այժմ մեղադրանքներ ուղղելու կամ ձեր իրավացիությունը պնդելու ժամանակը չէ. սա հնարավորություն է, որ ցանկացած բարդ իրավիճակում պատասխանատվություն ստանձնեք տեղի ունեցածի ձեր բաժնի համար:

Շնորհակալությո՛ւն, որ ընտրում եք այն ճանապարհը, որը լիովին հակառակ է այս աշխարհի ընթացքին: Մեր հնազանդությամբ արագացնում ենք մեր հրաշալի Թագավորի նպատակների իրականացումը: Ձեր հնազանդության վարձատրությունը մեծ է լինելու:

«Եվ Նրան, որ կարող է անարատ պահել ձեզ և անկեղծ կանգնեցնել Իր փառքի առջև անբիծ ցնծությամբ՝ այն մեկ իմաստուն Աստծուն և մեր Փրկչին, փառք և մեծություն, զորություն և իշխանություն և՛ հիմա, և՛ բոլոր հավիտյաններում: Ամե՛ն»:

– Հուդա 24,25

Հիշե՛ք.

Մնացե՛ք **ծածկոցի տակ**:

ՀԱՐՑԵՐ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ

Եթե դուք ընթերցում եք այս գիրքը՝ *«Ծածկոցի տակ»* վիդեո դասերի հետ միասին (ինչը հրաշալի գաղափար է), առաջարկում եմ դիտել յուրաքանչյուր շաբաթվա վիդեո դասը և քննարկել ներկայացված հարցերը ձեր փոքր խմբում: Վիդեո դասերը զուգահեռաբար ուսուցանում և ընդլայնում են այս գրքում ներկայացված գլխավոր թեմաները. այնպես որ, բոլոր մասնակիցների համար գերազանց տարբերակ է և՛ դասերը դիտելը, և՛ գիրքն ընթերցելը:

Այս ամենը ձեզ համար է:

Դաս 1

Ընդգրկում է 1-ին և 2-րդ գլուխների թեմաները

1. Լսելով «իշխանություն» բառը՝ ո՞րն է ձեր սկզբնական արձագանքը: Դուք զուգորդում եք այն որևէ դրական երևույթի հետ, օրինակ՝ փոթորկից պաշտպանված լինելու, թե՞ համարում եք, որ այն բացասական երևույթ է, օրինակ՝ այնպիսի ղեկավար, որը կործանում է ձեր կյանքը:
2. Դուք հիշո՞ւմ եք այնպիսի դեպքեր, երբ բացասական հետևանքների եք բախվել՝ «ծածկոցի տակ» չլինելու պատճառով:
3. Դժվար է հասկանալ թագավորության սկզբունքները ժողովրդավարական մտածելակերպով: Դուք դիտարկե՞լ եք իշ-

խանության աստվածային կառուցվածքը ժողովրդավարական զտիչով, և եթե այո, ինչ կերպերով եք արել դա: Արդյո՞ք դա ազդել է այն բանի վրա, թե ինչպես եք հաղորդակցվում ձեր առաջնորդների հետ:

4. Ինչ վերաբերում է փոքր խմբերով կազմակերպվող երեկույթներին, Աստված ցույց տվեց ինձ, որ իմ դժկամությունը՝ իմ հովվի առաջնորդությանը հետևելու հարցում, ապստամբություն էր: Այս ախտանշանը զարմացրե՞ց ձեզ: Մինչև այս դասը դուք կարդարացնե՞ք նման դիրքորոշումը:

Դաս 2

Ընդգրկում է 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ և 7-րդ գլուխների թեմաները

1. Այս դասի սկզբում խնդրեցի լսարանին ասել առաջին իսկ մտքով անցած բառերը, երբ լսում են *«մեղք»* բառը: Ինչ մտաբերեցիք՝ լսելով այս հարցը: Արդյո՞ք ձեր պատկերացումը փոխվեց և ինչ կերպով:
2. Դուք երբևէ դասե՞լ եք հետևյալ ոլորտներից մեկը՝ ունեցվածքը, աշխատանքը, փոխհարաբերությունները այն բանից վեր, ինչ Աստված պատվիրել է ձեզ: Ինչ է տեղի ունեցել, երբ առաջնահերթություն եք տվել որևէ մեկին՝ գերադասելով դա Աստծուն հնազանդվելուց:
3. Մասնակի հնազանդությունը հնազանդություն չէ, այլ՝ ապստամբություն: Պատմե՛ք որևէ դեպք, երբ դուք մինչև վերջ հնազանդվել եք: Իսկ հետո պատմե՛ք մեկ այլ դեպք, երբ միայն մասնակիորեն եք հնազանդվել: Ո՞րն էր այդ իրավիճակների զգալի տարբերությունը, և ինչպիսի՞ ազդեցություն թողեցին ձեր կյանքում:
4. Աստվածաշունչն ասում է, որ ապստամբությունը կախարդություն է (տե՛ս Ա Թագ. 15.23): Ո՞րն է կախարդության վերջնական նպատակը: Այս ճշմարտությունն ազդո՞ւմ է այն բանի վրա, թե ինչպես եք դիտարկում ապստամբությունը: Այն փոխո՞ւմ է ձեր կարծիքն ապստամբության մասին, և ինչ կերպով:
5. Առաջին պատվիրանը «Սատանայական Աստվածաշնչում»

հետևյալն է. «Արա՝ ինչ կամենում ես»: Սա հակառակ է այն օրինակին, որը Հիսուսը թողեց մեզ՝ ասելով. «Իմ կամքը չեմ որոնում, այլ՝ Ինձ ուղարկող Հոր կամքը» (Հովհ. 5.30): Կարո՞ղ եք թվարկել որոշ բաներ, որոնք արել եք՝ ձեր կամքն Աստծո կամքից վեր դասելով: Ի՞նչ է տեղի ունեցել արդյունքում: Ի՞նչ կարող եք անել, որպեսզի գործուն կերպով փնտրեք ձեր Հոր կամքը և հնազանդվեք ավելի շատ, քան ձեր կամքին:

Դաս 3

Ընդգրկում է 8-րդ, 9-րդ և 10-րդ գլուխների թեմաները

1. Հռոմեացիների 13.1,2-ում տեսնում ենք, որ հակառակվելով կարգված իշխանությանը, մենք հակառակվում ենք Աստծո հրամանին: Ինչպե՞ս դուք կարձագանքեիք, եթե Հիսուսը խնդրեր ձեզ ինչ-որ բան անել աշխատանքային, ընտանեկան կամ հասարակական միջավայրում: Իսկ ի՞նչ կլիներ, եթե նույն բանը խնդրեր ձեր տնօրենը, ձեր մարզիչը, որևէ ոստիկան կամ իշխանություն ունեցող այլ անձ: Արդյո՞ք կարձագանքեիք նրանց այնպես, ինչպես կարձագանքեիք Հիսուսին:
2. Աստվածաշնչում գրված է. «Ամեն անձ թող հնազանդվի (կամ՝ հպատակվի) բարձր իշխանություններին» (Հռոմ. 13.1,2): «Հնազանդվել» կամ «հպատակվել» բառը թարգմանված է մի հունարեն բառից, որն ունի և՛ զինվորական, և՛ ոչ զինվորական իմաստ: Ոչ զինվորական իմաստով այն նշանակում է հոժարաբար և կամավոր հպատակեցնել մեզ իշխանություններին: Ինչպե՞ս է այս պատվերն Աստվածաշնչից փոխում ձեր վերաբերմունքը ձեզ վրա կարգված ղեկավարների հանդեպ:
3. Ես դժվարին կացության մեջ էի հայտնվել 1992 թվականի ընտրություններից հետո: Սաստիկ ընկճվել էի, և Տերը պետք է հիշեցներ ինձ, որ Ինքը հանկարծակիի չի գալիս այն պատճառով, թե ով է պաշտոններ զբաղեցնում: Երբևէ պատահե՞լ է, որ քաղաքական իրադարձությունները հիասթափություն առաջացնեն: Իմ պատմությունը որևէ կերպով

փոխե՞ց այն վերաբերմունքը, որը դուք ունեք մեր ընտրված պաշտոնյաների հանդեպ:

4. Եսայի 1.19-ում ասվում է, որ եթե մենք հոժար ենք և հնազանդ, կուտենք երկրի բարիքը: Դուք կարող եք հնազանդ լինել, բայց ոչ՝ հոժար, կամ հոժար լինել, բայց ոչ՝ հնազանդ: Պատմե՛ք որևէ դեպք, երբ դժկամորեն եք հնազանդվել: Հակադրե՛ք դա այլ դեպքի հետ, երբ դուք և՛ հոժար էիք, և՛ հնազանդ:
5. Աստվածաշունչը սովորեցնում է անպայմանական հպատակություն, բայց ոչ՝ անպայմանական հնազանդություն: Մենք չպետք է հնազանդվենք մեր առաջնորդներին, եթե նրանք պատվիրում են մեզ այնպիսի բան անել, ինչը հակառակ է Աստծո Խոսքին: Արդյո՞ք որևէ առաջնորդ երբևէ խնդրել է ձեզ այնպիսի բան անել, ինչը հակասել է Աստծո Խոսքին: Ինչպե՞ս եք դուք վարվել: Ի՞նչ է կատարվել արդյունքում:

Դաս 4

Ընդգրկում է 11-րդ և 12-րդ գլուխների թեմաները

1. Աստվածաշունչն ասում է, որ պետական իշխանավորներն Աստծո ծառաներն են: Ո՞րն է պատշաճ վերաբերմունքն Աստծո ծառայի հանդեպ: Ինչպե՞ս եք դուք վերաբերվում ձեր պետական առաջնորդներին:
2. Սատանան անում է ամեն ինչ՝ մեզ մեղադրելու համար, իսկ Հիսուսը բարեխոսում է մեզ համար: Երբ խոսքը պետական առաջնորդների մասին է, դուք մեղադրո՞ղ եք, թե՞ բարեխոս: Դուք ծիծաղո՞ւմ եք, երբ պետական առաջնորդների մասին անեկդոտներ են պատմում: Ձեր սիրտը տրտմո՞ւմ է, երբ ինչ-որ մեկը սոցիալական ցանցերում չարախոսում է որևէ պետական առաջնորդի մասին:
3. Մենք պետք է հարգանքով վերաբերվենք և հպատակվենք մեր հասարակական առաջնորդներին՝ տնօրեններին, ուսուցիչներին, մարզիչներին և իշխանություն ունեցող այլ անձանց, ասես նրանք ներկայացնում են Աստծուն: Պատկերացրեք, թե ինչ կլիներ, եթե դուք Հիսուսի մոտ աշխատեիք: Դուք ժամանակի՞ն աշխատանքի կգայիք: Դուք անո-

րակ կերպով կկատարեիք ձեր նախագծերը: Արդյոք այս պատկերացումը փոխում է ձեր վերաբերմունքը ձեր հասարակական առաջնորդների հանդեպ և ինչ կերպով:

4. Սուրբ գրքում պարզորեն ներկայացված է ընտանիքի իշխանական կառուցվածքը: Ձեր կարծիքով, ինչը թույլ չի տալիս մեզ ընդունել Աստծո կողմից սահմանված իշխանական կառուցվածքն ընտանիքում: Արդյոք Աստծուն վստահելը կարևոր դեր է կատարում առողջ ընտանեկան կյանք ստեղծելու համար և ինչ կերպով:

Դաս 5

Ընդգրկում է 13-րդ և 14-րդ գլուխների թեմաները

1. Աստվածաշունչն ասում է, որ Հիսուսն անձամբ կարգեց առաջնորդական պաշտոններ եկեղեցում (տե՛ս Եփես. 4.11,12): Դուք միջամտո՞ւմ եք այնպիսի հարցերում, որոնք առնչություն չունեն ձեր պարտականությունների հետ: Ձեր կարծիքով, ինչպե՞ս է Հիսուսը վերաբերվում այն առաջնորդներին, որոնց կարգել է Իր եկեղեցում:
2. Աննան տարիներ շարունակ աղոթում էր երեխա ունենալու համար: Ձեր կարծիքով, ինչո՞ւ Աստված պատասխանեց նրա աղոթքին, երբ նա պատվեց այն առաջնորդին, ով անարգել էր իրեն:
3. Երբ չարախոսում ենք որևէ առաջնորդի մասին, մենք թողնում ենք Աստծո իմաստությունը և, հետևաբար, դուրս ենք գալիս Նրա պաշտպանությունից: Մենք տեսնում ենք այս ճշմարտությունը Մարիամի, Ահարոնի և Մովսեսի պատմության մեջ, երբ Մարիամն անարդարացիորեն քննադատեց Մովսեսին՝ եթովպացի կնոջ հետ ամուսնանալու համար: Ձեր կյանքում եղե՞լ է որևէ դժվարություն՝ Աստծո իմաստությունից և պաշտպանությունից դուրս գալու պատճառով:
4. Դուք երբևէ եղե՞լ եք այնպիսի իրավիճակում, որ ձեր առաջնորդի որոշումը իմաստուն չի թվացել: Գուցե ձեր առաջնորդը կարևոր տեղեկություն չի ունեցել: Ի՞նչ տեղի ունեցավ արդյունքում: Դուք հավատո՞ւմ եք, որ կարող էիք այլ կերպ վարվել այդ իրավիճակում: Ի՞նչ սովորեցիք այդ իրավիճակից:

5. Դավիթը պատվով և հպատակությամբ էր վերաբերվում Սավուղին, թեև Սավուղը խելագարվել էր և փորձում էր սպանել նրան: Աստված մատակարարում էր, խաղաղություն էր տալիս և պաշտպանում էր Դավթին այդ դժվարին փուլում: Կարո՞ղ եք նույնպիսի վերաբերմունք ձևավորել ձեր ներսում, այսինքն՝ պատվով և հպատակությամբ արձագանքել ձեր առաջնորդներին:

Դաս 6

Ընդգրկում է 15-րդ, 16-րդ, 17-րդ և 18-րդ գլուխների թեմաները

1. Գոյություն ունի փառք՝ պահված եկեղեցու համար, երբ մենք մեկ ենք դառնում: Հիսուսը հայտնեց Աստծո փառքը, երբ այս երկրի վրա էր: Ինչի՞ մասին եք մտածում՝ լսելով *«փառք»* բառը: Դուք հավատո՞ւմ եք, որ կարելի է վերապրել Աստծո ներկայությունն ավելի մեծ չափով:
2. Երբ Պենտեկոստեի օրը եկավ, Վերնատանը գտնվող 120 մարդիկ միաբան էին: Նրանք մեկ էին մտքով, սրտով և հոգով: Ի՞նչ կլիներ, եթե այդ միաբանությունը լիներ մեր եկեղեցիներում այսօր:
3. Ամերիկայի Միացյալ Նահանգների զինված ուժերը բաղկացած են հինգ ստորաբաժանումներից. դրանք մեկ զինված ուժերի կազմում են, սակայն տարբեր գործառույթներ ունեն: Եկեղեցում նույնպես կան տարբեր գործառույթներ: Մենք պետք է գործենք այն բաժնում, որում Աստված կարգել է մեզ: Արդյո՞ք սա փոխում է ձեր կարծիքն այն եկեղեցու մասին, որը ներկայումս հաճախում եք, և ի՞նչ կերպով: Ի՞նչ կարող եք այլ կերպ անել, որպեսզի ներգրավվեք ձեր եկեղեցական համայնքի տեսիլքի մեջ:
4. Պատկերացրեք, թե ինչպիսի ազդեցություն կթողնեինք բնակավայրերի, տարածաշրջանների և ազգերի վրա, եթե Աստծո ժողովուրդն ընդուներ Նրա ծրագիրը միաբանության մասին: Կարո՞ղ եք արդյոք ավելի սերտ միաբանություն ձևավորել ձեր ընկերների շրջանակում, ձեր եկեղեցում և ձեր բնակավայրում, և ինչպե՞ս:

X. ԲԱԶՄԱՊԱՏԿԻՐ ԱՍՏԾՈՒՑ ՔԵԶ ՏՐՎԱԾ ՆԵՐՈՒԺԸ



Երբևէ զգացել եք ձեզ որպես դիտորդ Աստծո Թագավորության մեջ: Միգուցե դուք գիտեք, որ կա ինչ-որ բան, ինչը պետք է անեք, բայց չեք կարողանում վերջնականորեն որոշել, թե ինչ է դա: Մեզնից շատերը ցանկանում են մեծ ազդեցություն թողնել, բայց միգուցե ձեր ներսում կան չպատասխանված հարցեր, օրինակ.

- Ինչպե՞ս համոզված լինեմ, որ բաց չեմ թողնում Աստծո կամքն իմ կյանքում:
- Ի՞նչ դեր են կատարում իմ եզակի պարգևները Աստծո թագավորությունը կառուցելու մեջ:
- Ինչպե՞ս վստահ լինեմ, որ օգտագործում եմ Աստծուց ինձ տրված ներուժը:
- Իմ կոչումը պակա՞ս կարևոր է, եթե ես «ծառայության» մեջ չեմ:
- Ինչպե՞ս հավասարակշռություն պահպանել Աստծո շնորհքի մեջ հանգստանալու և Նրա Թագավորության համար գործելու միջև:
- Ինչպե՞ս վանել վախը և առաջ գնալ, նույնիսկ անորոշության և վտանգի դեպքում:

Այս խորիմաստ գրքում հանրաճանաչ հեղինակ Ջոն Բիվերը հիմնվում է Սուրբ գրքի մանրակրկիտ ուսումնասիրության վրա և օգտագործում է ազդեցիկ պատմություններ, որպեսզի օգնի ձեզ այլ կերպ մտածել ձեր կոչման մասին և հասկանալ, թե ինչու է այն կարևոր Աստծո համար: Ընթերցելով այս գրքի էջերը՝ դուք կսովորեք, թե ինչպես բազմապատկեք Աստծուց ձեզ տրված պարգևները և ինչպես օգտագործեք ձեր ներուժը:

Հասանելի է **MessengerX.com** կայքում

ՊԱՏՎԻ ՎԱՐՁՔԸ

Ոչ մի քրիստոնյա չի ցանկանում սահմանափակել Աստծուն, սակայն շատերս անգիտակցաբար սահմանափակում ենք Նրա գործունեությունը մեր կյանքում, քանի որ անտեսում ենք մի վճռական հոգևոր սկզբունք՝ Պատիվը:

Պատիվն այնպիսի հասկացություն է, որը մեծ մասամբ կորսվել է մեր մշակույթում, բայց, ինչպես կտեսնենք գրքի էջերում, այն առանցքային դեր ունի մեր կյանքի բոլոր ոլորտներն Աստծո թագավորության ազդեցությանը ենթարկելու համար:

«Պատվի վարձքը» գրքում հանրաճանաչ հեղինակ Ջոն Բիվերը ցույց է տալիս, որ, պատասխանելով պատվելու կանչին, դուք ընդունում եք Աստծո արժեհամակարգը և հայտնվում եք այնպիսի դիրքում, որ կարող եք ստանալ այն, ինչ Աստված որոշել է ձեզ համար:

Այս խորաթափանց աստվածաշնչյան սկզբունքները միավորելով դրանք գործնականորեն պատկերող ազդեցիկ պատմությունների հետ՝ այս գիրքը նորովի կներկայացնի ձեզ այս մոռացված առաքինությունը և, ամենակարևորը, ձգտում կառաջացնի, որ ընդգրկեք այն ձեր կյանքի յուրաքանչյուր բնագավառում:

Հասանելի է **MessengerX.com** կայքում

MessengerX

Աշակերտական ընթացք յուրաքանչյուրի համար, ամենուր



- **Անվճար ավելի քան 115 լեզուներով**
- Հասանելի որպես հավելված և առցանց
- Նյութեր՝ նախատեսված ձեր աճի համար
- Հետևե՛ք ձեր դիտումներին և աշակերտական ուղուն

Ստացե՛ք «Messenger»-ի աշակերտական նյութերի ամբողջական դարանը՝ էլեկտրոնային գրքեր, աուդիո գրքեր, կարճամետրաժ ֆիլմեր, վիդեո ուսուցումներ, Աստվածաշնչեր և ավելին. դիտե՛ք, կարդացե՛ք և լսե՛ք ձեր բոլոր սարքերով:



MessengerX.com

Download on the App Store

GET IT ON Google Play

Հասանելի է աշխարհով մեկ «App Store»-ում և «Google Play»-ում

Երբևէ բախվե՞լ եք այն հարցին, թե ինչպես արձագանքեք որևէ ղեկավարի կամ առաջնորդի, երբ համաձայն չեք եղել նրա հետ: Երբևէ մտածե՞լ եք, թե ինչու ընդհանրապես պետք է լսեք նրանց:

Այս վերանայված և թարմացված հրատարակության մեջ հեղինակը հաջորդ սերնդին է ներկայացնում այն պաշտպանական սահմանները, որոնք Աստված տրամադրում է իշխանության ներկայացուցիչների միջոցով: Ջոնը բացահայտում է, թե ինչպես է թշնամին մոլորեցնում մեզ. նա դրդում է հավատալ, որ կարող ենք գտնել մեր ճշմարիտ կոչումը աստվածային իշխանությունից առանձին՝ խեղաթյուրելով Աստծո անմիջական իշխանությունը և Նրա լիազորած իշխանությունը ճանաչելու մեր կարողությունը: Սովորեցնելով մեզ պատշաճ վարվել առաջնորդների հետ՝ Ջոնը ցույց է տալիս, թե ինչպես ենք մենք, ապրելով իշխանության ներքո, ստանում մատակարարում, պաշտպանություն և հույս ապագայի հանդեպ:

«Ծածկոցի տակ» գիրքը կօգնի ձեզ բացահայտել.

- թե ինչպես կարող եք լինել լիովին ճիշտ, սակայն ինչ-որ առումով՝ սխալ,
- անարդարացի վերաբերմունքին արձագանքելու և այն հաղթահարելու աստվածաշնչյան ճանապարհը:

«Ծածկոցի տակ» գիրքը, որը գործնական և կյանք վերափոխող ձեռնարկ է՝ համալրված նոր գլխով, քննարկման հարցերով և հատուկ ընտրված թեմաներով, հայտնում է, թե որքան կարևոր է հպատակվել Աստծո իշխանությանը, և թե ինչպես արձագանքենք մեր կյանքում գտնվող առաջնորդներին:

ՋՈՆ ԲԻՎԵՐԸ միջազգային ճանաչում ունեցող քարոզիչ է և հանրաճանաչ հեղինակ, ով համարձակ և առանց փոխզիջման քարոզում է Աստծո Խոսքը: Ջոնը և կինը՝ Լիզան, հիմնադրել են «Մեսինջեր Ինտերնեյշնլ» ծառայությունը, որի նպատակն է՝ պատրաստել Քրիստոսի հետևորդների, որոնք փոխզիջման չեն գնում և վերափոխում են այս աշխարհը: Երբ Ջոնը տանն է՝ Կոլորադոյում, նա սեղանի քարտային խաղեր է խաղում իր չորս որդիների հետ կամ փորձում է համոզել Լիզային գոլֆ իր հետ:

Անվճար ներբեռնումների և հոսքային հեռարձակման համար այցելե՛ք **MessengerX.com**

MessengerX

MESSENGER INTERNATIONAL
MessengerInternational.org

Այս գիրքը նվեր է Հեղինակից
և ՎԱՃԱՌՔԻ ԵՆԹԱԿԱ ՉԷ

Ցանկանում եք ավելի՞ն: Տրածեք պատվերները